ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՏԵԱՆ

# ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

(1946 - 2001)

9(47.925)
Բ-23

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ

# ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

## (1986–2001)

3283

ԵՐԵՒԱՆ 2002

ՀՏԴ 329+941(479.25)
ԳՄԴ 66.6+63.3(2Հ)
Բ 234

Բ 234 Բահարյան Վահան. Պէյլանի հայրենակցական միութիւն (1986-2001), Երևան:
Հայրենակցական միությունների խորհուրդ, «Բնօրրան» հանդեսի խմբագրություն, 2002 թ., 520 էջ:

Գրքում տրված է Պէյլանի հայրենակցական միության պատմությունը, ստեղծման՝ 1986 թվականից մինչև 2001 թ., նրա գործունեությունը՝ ամերիկահայ համայնքում հայապահպանման, ՀՄՄ-ի կազմում բազում բնագավառներում, Հայաստանի անկախ պետականության կայացման գործերում:

ԳՄԴ 66.6+63.3(2Հ)

ISBN 99930-78-08-5

© Վահան Բահարյան, 2002 թ.



*Ծնվել է 1934 թ. հոկտեմբերի 14-ին Կիլիկիա, Բեյլանի շրջանի Ամանոս լեռան ստորոտում գտնվող Աթըգ գյուղում:*

*1939 թ. ծնողների հետ բնակություն է հաստատել Լիբանանում:*

*1946 թ. ներգաղթել է Խորհրդային Հայաստան: Երևանում ավարտել է Կ. Մարքսի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետը:*

*1978 թ. բնակվում է ԱՄՆ, Լոս Անջելես քաղաքում:*

*ՊՀՄ-ի ատենապետն է եղել 1989-2001 թթ., յոթ տարի ՀՄՄՄ-ի փոխատենապետը՝ 1991 թվից:*

*Կազմակերպական մասնակցություն է բերել Լոս Անջելեսում մշակութային և հայրենանվեր ձեռնարկների, հեղինակ է հրապարակախոսական հարյուրից ավելի հոդվածների և չորս գրքերի:*

## Մեկ խոսք

Հայրենակցականությունը մեր հայրերի եւ մեր պատմությունն է:

Հայրենակցականությունը բնօրրանի մեր հիշողությունն է, վերադարձնողն է մեզ մեր ակունքներին:

Հայրենակցականությունը մեր միտքն ու հայացքը Բնօրրան-Հայրենիք ուղղող ուժն է:

Այս գաղափարները կենսունակ պահողը, մեր գոյապայքարի պատմության վավերականությունը հաստատողը, մեր արդար վրեժխնդրությունը արյան կանչով սերունդներին որպես պարտավորություն փոխանցողը հայրենակցական միություններն են՝ ազգակցին ազգին վերադարձնող հավաքատները:

Այդ հավաքատներից է Լոսանջելըսյան Պեյլանի հայրենակցական միությունը, որի առաջին տասնամյա գործունեությունը հայրենակցական միությունների պատմության մեջ այն իրականացնող հայահատվածին պատվաբեր եւ նախանձաշարժ դրվագ է: Հոգ չէ թե այդ գործունեությունը հարենակից անհատներից եւ խմբերից խլել է նրանց կյանքի քանկ ժամանակները, պատճառել հաճախ դառն պահեր, բայց եւ գծել է նրանց կենսագրականի պայծառ եւ գունեղ պատկերները...:

Պեյլանի հայրենակցական միության երկարամյա ատենապետ Վահան Բահարյանի «Պեյլանի հայրենակցական միութիւնը» Հայրենակցական գրադարանը հարստացնող եւ հայրենակցականության գաղափարին հեղինակի նվիրվածության մասին վկայող գեղեցիկ երեւույթ է:

Ժոզեֆ Ավետիսյան
Հայրենակցական միությունների
խորհրդի ատենապետ

## ՆԱԽԱԲԱՆ

Որոշել էի գրել հուշերս Բեյլանի, նրա շրջակայքի հայկական բնակավայրերի մասին և Պեյլանի[1] Հայրենակցական Միության (այսուհետև՝ ՊՀՄ) պատմությունը, իհարկե, եթե հասցնեի նախքան երկրային կյանքիս հրաժեշտ տալը:

Ո՛չ ոք չգիտի, թե այս աշխարհից երբ կհեռանա: Ուստի, անկախ տարիքից, մարդ մտածում է վաղվա ծրագրերի մասին:

Այս առումով մտածում էի, թե առաջնությունը ո՞ր մեկին տալ: Միտք ունեի առաջինը սկսել հուշերից, մինչև որ բավարար նյութ կհավաքվեր Բեյլանի մասին:

Բայց վերջին տարիների իրադարձությունները վարչության մեջ փոխեցին ծրագրերիս հաջորդականությունը, և որոշեցի առաջինը գրել ՊՀՄ-ի մասին: Ինչո՞ւ: Երկար տարիներ լինելով նրա վարչության ատենապետը, աշխատեցի իմ ամբողջ ուժն ու կարողությունը ներդնել միության ազգօգուտ գործունեության, Սփյուռքում՝ հայապահպանման, միության բարգավաճման, հեղինակության բարձրացման, Հայրենիքում՝ պետականության կայացման նպատակներին: Կարող եմ ասել, որ հաջողվեց ինձ: Լոսանջելեսահայ համայնքում միությունը հետզհետե հայտնի դարձավ, հարգանք վայելեց, վստահեցնում եմ, աշխարհի հայ համայնքներում նրա գոյության մասին իմացան, երբ միության մեկենասության և հեղինակի զավակների աջակցությամբ հրատարակվեց Հայաստանի Գիտությունների Ազգային ակադեմիայի Արևելագիտության Ինստիտուտի նախկին գիտ. աշխատող Ալիշան Պայրամյանի «Ալեքսանդրետի Սանջաքի Հարցը և Միջազգային Դիվանագիտությունը (1936-1939 թթ.)» մենագրությունը, որը գրված էր 1960-ական թվականներին, Խորհրդային Հայաստանում. բայց ինչ-ինչ պատճառներով չէր հրատարակված:

Չնայած հեղինակը քիլիսցի է, գոյություն ունի և Քիլիսի հայրենակցական միություն, ՊՀՄ-ն հրատարակությունը նախա-

---

1.- Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պատմական հայերեն փաստաթղթերում «Բեյլան»ը գրվել է «Պեյլան», որոշվեց միության անվան մեջ «Պեյլան» գրել, ուստի այս գրքում միայն միության անվան հետ է կապված այն, մնացած դեպքերում գրված է «Բեյլան»:

ձեռնեց, որովհետև Բեյլանը և շրջակա բնակավայրերը անբաժան մասն են կազմում Ալեքսանդրետի: Քիլիսի հայրենակցական միությունը նույնիսկ գրքի շնորհանդեսին չմասնակցեց:

Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ., Նիկոլայ Հովհաննիսյանի ներդրած ջանքերի շնորհիվ գիրքը հրատարակվեց Երևանում, 1998 թ. և տարածվեց Սփյուռքում:

Միայն գրքի երրորդ՝ ամբողջ էջի վրա ամփոփված

Գիրքը հրատարակվում է
«Պէյլանի Հայրենակցական Միության» մեկենասությամբ
և հեղինակի պավակների աջակցությամբ

ազգագիրը բավական է միության անունը բարձրացնելու և անհրաժեշտ գնահատականը տալու: Եվ դա իրականություն դարձավ:

Դժբախտաբար միության ոչ բոլոր վարչականներ կարող էին հասկանալ այդ և, առհասարակ, միության գործունեության իմաստը, որի հետևանքով ավելորդ արտահայտություններ եղան գրքի հրատարակման հովանավորման կապակցությամբ:

1990 թ. 15 հայրենակցական միություններով հիմնադրվեց Հայրենակցական միությունների միացյալ մարմինը (այսուհետև՝ ՀՄՄՄ), որի ատենապետը ընտրվեց Գրիգոր Շենյանը, փոխատենապետը՝ ես և վարեցի մինչև ՀՄՄՄ-ից մեր միության հեռանալը:

Դժբախտաբար, այսօր 2001 թ. ՀՄՄՄ-ի կազմում մնացել են 7-8 հայրենակցական միություններ՝ ատենապետ Գրիգոր Շենյանի սխալ ազգային քաղաքականություն վարելու հետևանքով:

ՀՄՄՄ-ին անդամագրված հայրենակցական միությունների ղեկավարների հետ շփումներից պարզ դարձավ, որ ՊՀՄ-ն ամենակայունն է Լոս Անջելեսում, որովհետև վարչության կազմում չկան կուսակցությունների ներկայացուցիչներ, ինչպես մյուս հայրենակցական միությունների վարչություններում: Մտքովս չէր անցնում, որ մի քանի վարչականների պատճառով միությունը կգահավիժի, նամանավանդ՝ բոլոր վարչականներն էլ ազգակցական կապեր ունեին, հաց էին կիսել ու կիսում էին իրար հետ:

Ես աշխատեցի նվիրված, բայց շատ վարչականներ միության ազգային գործունեությունը չափում էին ճաշկերույթ-պարահանդեսին (այսուհետև՝ ճՊ), հոգեճաշին, դաշտահանդեսին մասնակցողների թվով: Ըստ նրանց, այդ և Հայրենիքի մեր հայրենակիցներին որոշ նյութական օգնության բաշխումն է ՊՀՄ-ի վարչության հիմնական գործունեությունը:

Միությունը իր անցած 15 տարիների ընթացքում իրականացրեց ազգային աշխույժ գործունեություն: 2001 թ. մայիսի 7-ին լրացավ ՊՀՄ-ի հիմնադրման 15 տարին, որը չնշվեց նոր վարչու-



թյան կողմից, նույնիսկ չհիշվեց այդ մասին:

Միության անդամները հիմնականում 1946 թ. Հայաստան ներգաղթած, այնուհետև 1970-90 թվականներին Ամերիկայի Կալիֆորնիա նահանգի Լոս Անջելես քաղաքում հաստատված բեյլանցիներ էին, որոնք միության վերաբերյալ իրենց ըմբռնումներով տարբերվում էին սփյուռքահայերից և դժվարություններ էին հարուցում նրա շուրջը համախմբման գործում:

Դժբախտաբար, վարչությունը «ծերացած է» (2001 թ. տվյալներով), ազգային գործունեության նվիրված երիտասարդներ փնտրվում են, բայց չեն գտնվում: Անցած 15 տարիների ընթացքում մեկ հոգի անգամ չդիմեց վարչության կազմում ընդգրկվելու նպատակով, չնայած վարչության հաճախակի հայտարարություններին:

Նվիրվելով միության գործունեությանը, գործեցի արդարամիտ, անաչառ ու մաքուր ձեռքերով՝ երբեք չմտածելով նրա նյութականից օգտվելու մասին, ուստի հանգիստ խղճով եմ գրում այս տողերը, նամանավանդ՝ աշխատում էի, կարիք չունեի միության սենթին: Հաճախ եմ գրպանիցս ծախսել միության գործունեությանը նպաստելու համար, մեքենայի վառելանյութի, հեռախոսի և այլնի:

Ինձ չեմ գովում: Այդ մասին յուրաքանչյուր վարչական կարող է վկայել: Իհարկե վարչությունը մի քանի անգամ որոշ գումար վճարել է ծախսերիս դիմաց:

Արդարացիորեն պիտի նշեմ Գրիգոր Դովլաթյանի անունը, որը, օգտագործելով մեքենան միության գործունեության համար, ոչ մի անգամ չի հիշեցրել վճարել իրեն բենզինի համար:

Մի հաշվետվություն կա արխիվում, որի մասին Գրիգորը ժամանակին ակնարկել էր, բայց ուշադրություն չէի դարձրել: Ըստ Գրիգորի, 1987 թ. Մանվելը իր մեքենայով Փասադենայից Հոլիվուտ միության հոգեճաշի համար միս բերելու համար առաջարկել է 20 դոլարի բենզին լցնել մեքենային: Գրիգորը 10 դոլարի է լցրել՝ ասելով, որ եղած-չեղածը 2-3 կալոն բենզին է ծախսվելու: Այդ մասին Գրիգորի մայիս 3, 1987 թ. ներկայացրած հաշվետվության փաստաթղթի 5-րդ կետում գրված է. «Մանվել Մարաշյանի մեքենան օգտագործելու համար (բենզին) -10 դոլար»:

Իհարկե, երբեք դեմ չեմ եղել վարչականների ծախսերը վճարելուն, որ նրանց իրավունքն է, բայց, երբ իրենց անձնական շահերից ելնելով գումար են ուզում յուրացնել, դա անթույլատրելի է ցանկացածին: Նյութականին վերաբերող, առհասարակ, միության գործունեության հետ կապված բոլոր հարցերը պետք է որոշվեն վարչության նիստերում:

Այս շեշտեցի՝ ընթերցողին որոշ պատկերացում տալու համար,

թե տարբեր վարչականներ ինչպիսի մոտեցում ունեն միության գործունեությանը:

Անկախ բոլոր հանգամանքներից, միության պատմությունը պիտի աշխատեմ ներկայացնել ընթերցողին անաչառ և ազնվորեն:

Մի հանգամանք ևս: Քանի որ հայտնի չէր, ե՞րբ կգրվի միության մասին գիրքը, մի շարք հոդվածներ, որոնք նախապես գրել էի միության գործունեության մասին, տեղ են գտել իմ «Շարունակվող Մեղեդի» գրքում[1]: Այդ հոդվածներն ամփոփվել են նաև սույն գրքում:

Գրքում, հնարավորին չափ, պահպանել եմ ժամանակագրությունը: Երբեմն միության գործունեության հաջորդականությունը միախառնվել է այդ ընթացքում տեղի ունեցած իրադարձություններին:

Գրքում դիմել եմ փաստաթղթը լուսապատճենով ներկայացնելու ձևին: Դա արվել է ասված խոսքին հավատ ստեղծելու նպատակով: Եթե փաստաթղթի բովանդակությունը գրեի միայն, հավանաբար ընթերցողը թերահավատությամբ կմոտենար դրա ճշմարտությանը:

Ձեռքիս տակ ունեցած նյութերի սահմաններում ներկայացրել եմ նաև ՀՄՄՄ-ի գործունեությունը, նախ տրվել է ՊՀՄ-ի վարչության գործունեությունը, ապա՝ ՀՄՄՄ-ի:

Սկսած 1989 թ., միության վերաբերող բոլոր գրությունները գրել եմ ես, վարչության նիստերի արձանագրությունների որոշ մասը նույնպես, քանի որ սկզբնական շրջանում գրագետ վարչական չկար, որ քարտուղարի բացակայության դեպքում փոխարիներ նրան:

Գրքում ուրիշի խոսքը, մեջբերված կամ ուշադրության արժանի նյութերը գրված են տարբեր տառատեսակներով, հիմնականում առանց չակերտների:

Երբեմն պարզաբանումները կրկնվում են այն նկատառումով, որ մտքերը լրացվեն և հայրենակիցը ուղիղ գաղափար կազմի վարչության ընդհանուր գործունության մասին:

Շնորհակալություն հարազատներիս, բարեկամներիս, ընկերներիս, որոնք իրենց խորհուրդներով, նյութերով, և այլ հարցերում օգնեցին ինձ նպաստելով գրքի հրատարակմանը, առանձնապես տեր և տիկին Սարգիս և Մարի Խորշիդյաններին՝ 300 դոլար նվիրաբերելու համար:

Հեղինակ

1. «Շարունակվող Մեղեդի», Երևան, 2001 թ.:



# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած ժողովուրդ որպես ազգ կարող է գոյատևել միայն իր Հայրենիքում:

Այն ազգը, որ թվով քիչ է, մի մասով էլ սփռված է աշխարհով մեկ, սփյուռքացած մասով վաղ թե ուշ կորստյան է դատապարտված, իսկ մայր երկիրը՝ գոյության վտանգի առջև է կանգնած:

Հայաստանի անկախացումից հետո, այսօր այդ իրավիճակը առկա է Հայաստանում: Ըստ լրատվական աղբյուրների, նրա չորս միլիոն բնակչության մոտ մեկ երրորդը արտագաղթել է տարբեր երկրներ, և դեռ արտագաղթը շարունակվում է:

Իհարկե դարեր շարունակ արտագաղթել են Հայաստանից, եթե անցյալում զավթիչների բռնությունների հետևանքով, այսօր արդեն նորանկախացյալ Հայաստանի ապաշնորհ ղեկավարների մեղքով:

Անկախ զարգացումից, հզոր զենք ստեղծելուց, երկիրը պահպանելու ու պաշտպանելու համար մարդկային բանակ է պետք՝ որակյալ հզորությամբ: Այսօր Հայաստանում ծնունդն էլ նախանձելի վիճակում չէ: Ժողովրդի չնչին աճը վտանգների առջև է կանգնեցնում երկիրը, ու նրա լինել չլինելու հարցն է դրվում:

Եզրակացությունը մեկն է. Հայաստանին պետք է կարող ղեկավարություն, որ ապահովի ժողովրդի նվազագույն տնտեսական վիճակը, կանգնեցնի արտագաղթը, վերացնի երկրում անօրինականությունները:

Ինչո՞ւ են ծնվում այս մտածումները, որոնք, կարծես, բոլորովին կապ չունեն այս գրքի վերնագրի հետ: Եթե մի հայացք նետենք մեր սերունդների կյանքին, կերևա այդ կապը:

Այս գիրքը չէր լինի, եթե մենք չլինեինք Սփյուռքում:

***

1915 թ. ցեղասպանությունից հետո հայ ժողովրդի մազապուրծ ազատված մասը, վերադառնալով իր բնօրրանը, վերաշինեց-վերականգնեց պապենական օջախն այն հույսով, որ այնտեղ պիտի շարունակի իր գոյությունը: Սակայն բացառությամբ Կիլիկիայի Ալեքսանդրետի Սանջակի, ամբողջ Կիլիկիան նվիրվեց Թուրքիա-

յին հայերի «սիրելի» բարեկամ «ասպետական» Ֆրանսիայի և Անգլիայի կողմից, որոնց բանակների հետ միասին հայ կամավորները հրաշքներ գործեցին, հավատալով նրանց խոստումներին, թե Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան ինքնուրույնություն պիտի ունենան:

Ալեքսանդրեթի Սանջաքը երկար չմնաց Ֆրանսիայի հովանավորության տակ: 1939 թ. Ֆրանսիան այն նվիրեց Թուրքիային: Ավելի քան 43000[1], այդ թվում Բեյլանի ու նրա շրջակա 15 բնակավայրերի հայությունը հեռացավ բնօրրանից, գումարվեց հայկական Սփյուռքին:

Սփյուռքում հային հայ պահելը շատ դժվար է, մանավանդ քրիստոնյա երկրներում: Այդ բեռը իրենց ուսերին վերցրեցին Հայ Առաքելական եկեղեցին, ավանդական երեք կուսակցությունները և այդ նպատակով ստեղծված կազմակերպությունները, հայրենակցական միությունները:

Վերադառնալով Բեյլանի հայ բնակչության ճակատագրին՝ Սփյուռքում մեկ տասնամյակ ապրելուց հետո, նրա մեծ մասը Սփյուռքի հայրենակիցների հետ համախումբ 1946-48 թթ. ներգաղթեց Խորհրդային Հայաստան՝ այն մեծ հույսով, որ Խորհրդային Միության հզոր բազկով կտիրանա իր բնօրրանին: Երազը չիրականացավ: Միջազգային քաղաքական պայմանները չեչտակի փոխվեցին ԱՄՆ-ում ատոմային ռումբի ստեղծման և ճապոնական Հիրոսիմայի վրա գործադրման հետևանքով:

Հայաստանում բեյլանցիները նվիրվեցին Հայրենիքի բարգավաճմանն ու զարգացմանը:

Հայաստան ներգաղթածները կարիք չունեցան հայրենակցական միությունների՝ հայապահպանման նպատակով: Բայց նրանք մտահոգացան հուշարձաններ կառուցել բնօրրանների բնակավայրերի անուններով, որպեսզի սերունդները երբեք չմոռանան բնօրրանները:

Երևանում, հայրենակից Ռաֆայել Վրթանեսյանի առաջարկով բեյլանցիները լծվեցին 1915 թ. Մեծ Եղեռնում իրենց նահատակներին նվիրված Բեյլանի հուշակոթող (այսուհետև՝ ԲՀԿ) կառուցելու գործին: Կազմվեց 15 հոգուց բաղկացած Հանձնախումբ (այսուհետև՝ ԲՀԿՀ) հետևյալ հայրենակիցներից. Ժիրայր Քյուփելյան՝ նախագահ, Էդուարդ Դովլաթյան՝ քարտուղար, Կարո Վահանյան՝ հուշակոթողի ճարտարապետ, Ավետիք Թեկնեջյան՝ կոնստրուկտոր,

1. Տե՛ս Արիշան Փայլամյան, Ալեքսանդրեթի Սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939 թթ.), Երևան, «Նոյյան Տապան», 1998 թ., էջ 36 (այսուհետև՝ Արիշան Փայլամյան, Ալեքսանդրեթի Սանջաքի հարցը...):



անդամներ՝ Ռաֆայել Վրթանեսյան, Հարություն Բահարյան[1] Ասատուր Բահարյան[2], Անդրանիկ Դովլաթյան[3], Գրիգոր Դովլաթյան, Արտաշես Տոնապետյան[4], Ասատուր Գյոզալյան, Սարգիս Գյոզալյան, Պողոս Ղափլանջյան, Հարություն Հարությունյան և Հարություն Սողոմոնյան:

ԲՀԿՀ-ն մեծ եռանդով սկսեց ԲՀԿ-ի կառուցման աշխատանքները: Հանգանակություն սկսվեց և շարունակվեց մինչև կոթողի կառուցման ավարտը:

Հանգանակության մասնակցեցին նաև Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում բնակվող բեյլանցիները՝ նախաձեռնությամբ Մաթևոս Տեր-Հարությունյանի: Այդ նպատակով ընտրվում են պատասխանատուներ աթըզցիներից՝ Մաթևոս Տեր-Հարությունյան, Սովուգ օլուգցիներից՝ Տիգրան Սարաֆյան և բեյլանցիներից՝ Ժիրայր Զյորեքչյան: Աթըզցիների հանձնախումբը՝ Մաթևոս Տեր-Հարությունյան, Սարգիս Խորշիդյան, Պետրոս Քեչիշյան, մեծ հաջողությամբ իրականացնում է դրամահավաքը աթըզցիներից, և Երևան՝ հուշարձանի հանձնախմբին է ուղարկում ժամանակի գնահատմամբ զգալի մի գումար՝ մոտ 2400 ռուբլի (1 դոլարը 67 կոպեկի հաշվով):

1972 թ. տեղի ունեցավ ԲՀԿ-ի հիմնադրումը, իսկ 1975 թ. հոկտեմբեր 12-ին, կիրակի օրը՝ բացումը: Հուշարձանի շուրջը հավաքված էր հոծ բազմություն: Ամենամյա այդ օրը դարձավ ուխտի օր: Սեպտեմբերի երկրորդ կիրակիին հուշարձանի մոտ մատաղ էր բաժանվում ժողովրդին:

ԲՀԿ-ն յուրահատուկ մի շինություն է՝ հենված եռանկյունաձև երեք կամարների վրա, ունի 12 մետր բարձրություն, գագաթը նմանակերտ է հայկական պատմական անառիկ բերդերի: Ճակատային մասում փորագրված երկու արծիվները խորհրդանշում են մեր հերոսներին: Այն իր մեջ ամփոփում է նաև հազարամյա մի խաչքար՝ նվիրված երջանկահիշատակ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինի կողմից: ԲՀԿ-ն լավագույններից է Հայաստանում:

Ժիրայր Քյուփելյանի մահվան կապակցությամբ մի գրություն նկատեցի արխիվում՝ գրված Մարտիրոս Էքշիյանի կողմից

1. Եղբայրս
2. Կնքահայրս-հորս հորեղբոր որդու տղան:
3. Կարապետ հորեղբորս աղջկա՝ Նվարդի ամուսինը. Ժիրայր Քյուփելյանի Լոս Անջելես տեղափոխվելուց հետո՝ Հանձնախմբի նախագահ:
4. Որպես որբ, նրան որդեգրել են ծնողներս և պսակել, որի հարսանիքում մայրս թմբուկ խփելիս ցավերն է բռնել, և այդ գիշեր ծնվել եմ ես:

(հավանաբար 1988 թ.), որից մի հատվածը ներկայացնում եմ հայրենակիցներիս:

Անուններ կան, որոնց անշահախնդիր, ապգօգուտ գործունեությունը արժանի է երախտագիտական խոսքի: Ժիրայր Քյուփելյանի գնահատելի աշխատանքը հանդիսացավ Հայրենիքում Բեյլանի հուշարձանի կառուցումը այդ նպատակի համար ստեղծված Հանձնախմբի հետ, որի նախագահն էր: Նա մեծ պատասխանատվությամբ ձեռնամուխ եղավ շինարարական կապ- մակերպչական աշխատանքներին, որոնք այդ օրերին կապված էին շինա- րարական նյութ հայթայթելու և հանգանակություն կատարելու դժվարու- թյունների հետ:

Գնահատելով Ժիրայրի աշխատանքը՝ հարկ եմ համարում նաև նշել, որ Հանձնախմբի անդամներից յուրաքանչյուրը օգտա- կար եղավ կոթողի կառուցման աշխատաքներին: Երանի թե բոլորի գործունեության մասին գրվեր, քանի որ շատերի աշխատանքները չերևացին: Օրինակ. հանգուցյալ Սարգիս Գյոզալյանը, որը եղբորս Հարություն Բահարյանի քենակալն էր (եղբորս կինը Սարգիս Գյոզալյանի կնոջ՝ Վիկտորիայի հորաքրոջ աղջիկն է), երբ խոսք էր լինում Հուշարձանի մասին, միշտ կրկնում էր, որ եղբորս հետ են բարեկարգել շրջակայքը, վերջնական տեսքի բերել բացումից առաջ: Աշխատեցին շատերը, նույնիսկ, հիմնարկային աշխատանք- քից հետո կամ բացակայելով հիմնական աշխատանքից:

Հետևաբար, նշելով Ժիրայրի նվիրվածությունը, Հանձնա- խմբի բոլոր անդամներին պետք է հայտնել բեյլանցիների երախ- տագիտությունը:





Բեյլանի և շրջակայքի քարտեզը:




*Բեյլանի հուշակոթողի հանձնախումբը:*





*Բեյլանի հուշակոթողի վերաբացումը:*



Բեյլանի հուշարձանի բացումը:



# Ա. ՊԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

Բեյլանի հուշարձանը Հայաստանում դարձել էր բեյլանցիների Սրբատեղին և ամեն տարվա սեպտեմբերի առաջին կիրակին հուշարձանի մոտ հավաքվում էր հոծ բազմություն: Բաժանվում էր նահատակների հիշատակին նվիրված մատաղը: Ժողովուրդը, այդ օրը հատկապես, իր նվիրատվություններով մասնակցում էր Հուշարձանի բարեկարգման աշխատանքներին:

Բեյլանցիների մտքով չէր անցնում, որ մյուս հայրենակիցների նման մի օր իրենք կլքեն Հայրենիքը:

Սկսված արտագաղթից հետո երկար ժամանակ շարունակվում էր այդ սովորությունը, քանի դեռ ողջ էին կամ Հայաստանից չէին արտագաղթել ԲՀԿՀ-ի անդամները:

Հուշարձանը ծառայեց բեյլանցիների համախմբման, իրար ավելի մոտիկից ճանաչելու, նոր սերնդի չփման ու բեյլանցիի ավանդույթներով ընտանիքներ կազմելու համար:

1985 թ. հոկտեմբերի 12-ին ԲՀԿՀ-ի կողմից մի նամակ էր ուղարկված Լոս Անջելեսի բեյլանցիներին, որն ավետում էր.

Սիրելի բեյլանցիներ, քույրեր, եղբայրներ, քաջ գիտեք, որ Հայաստանում ունեք Հուշակոթող Եղեռնում զոհվածների հիշատակին: Ամեն մի բեյլանցի, աշխարհի որ կողմն էլ լինի, պետք է հարգի իր հարազատների հիշատակը, որոնք զոհվեցին Եղեռնում...:

Եւ Հուշարձանի բարեկարգման համար խնդրվում էր նյութական օգնություն: Ստորագրել էին Հանձնախմբի բոլոր անդամները. նախագահ՝ Անդրանիկ Դովլաթյան, անդամներ՝ Աստուր Գյոզալյան, Հարություն Հարությունյան, Մարտիրոս Գյոզալյան, Խսկենդեր Քորտեկյան և Սողոմոն Հարությունյան:

ԱՄՆ-ի Լոս Անջելես քաղաքում հաստատված ԲՀԿՀ-ի նախկին անդամներ Գրիգոր Դովլաթյանը և Արմենակ Հեքիմյանը, նամակի խնդրանքին ընդառաջելով, հուշարձանի շրջապատը ցանկապատելու համար հանգանակություն կազմակերպեցին Լոս անջելեսում:

Արժանի են գովաբանման այս երկու նվիրյալները, որոնք որոշ հայրենակիցների հայհոյանքների տարափի ներքո նույնիսկ շարունակեցին այդ աշխատանքը 1985-86 թթ., հավաքելով 2170 դոլար, նվիրատվություններից՝ 1285 դոլար, ընդհանուր գումարը եղավ 3455 դոլար: Այս աշխատանքին սկզբում մասնակցեց նաև Մանվել Մարաշյանը, բայց եռյակի ստացած առաջին թուք ու մուրից հետո, նա հրաժարվեց գործից:

3283
БИБЛИОТЕКА

Հանգանակության զուգահեռ, չմոռանալով հուշարձանի մոտ մատաղի սովորությունը, հանգուցյալ Մանվել Բոյաջյանի առաջարկով Լոս Անջելեսում որոշվեց 1986 թ. ապրիլին կազմակերպել հոգեհանգիստ-հոգեճաշ՝ նվիրված ինչպես բեյլանցի, այնպես էլ 1915 թ. Մեծ Եղեռնի բոլոր հայ նահատակների հիշատակին: Այդ հարցով Գրիգորը եկավ մոտս, և իրեն օգնեցի հոգեճաշի ժամանակ իր ելույթի տեքստը պատրաստելու:

Հոգեճաշի ծախսերին կամավոր մասնակցեցին. Ռոնզ մարկետի (Rons Super Market) սեփականատեր Գրիգոր Ասատրյանը, Հակոբ Մուշոյանը, Նուբար Մխսի-Գևորգյանը, Միսակ Պողոսյանը, Հարություն Դովլաթյանը և այլք:

Հոգեհանգիստը տեղի ունեցավ ապրիլ 203 1986 թ. էջմիածնական թեմի՝ Հոլիվուդի Սուրբ Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցում, իսկ հոգեճաշը՝ եկեղեցու սրահում (1201 Vine st.), բեյլանցիների հոծ բազմությամբ:

Այս ձեռնարկից երկար ժամանակ էր անցել: Արդեն ՊՀՄ-ի վարչությունն էր կազմակերպում միջոցառումները: Մի առիթով Զատիկի տղայի՝ Գրիգոր Գրիգորյանի (մանկական ընկերս է) հետ եղանք իր մորաքրոջ տղաների՝ Հովսեփ և Սարգիս Ֆարթուլյանների տանը: Ընդհանրապես նրանք չէին մասնակցում միության միջոցառումներին: Առիթ էր իմանալու, թե ինչո՞ւ չեն մասնակցում: Պարզվեց, որ վերոնշյալ հոգեճաշի ժամանակ՝ հոգեհանգստից հետո նրանք ընտանիքներով ուղղվում են հոգեճաշի սրահը, և դուռը հսկող Մանվել Մարաշլյանը նրանց ներս չի թողնում՝ ասելով. «Դուք բեյլանցի չեք»: Նրանք որպես ֆարթուլի հեռացան ընդմիշտ՝ իրենց վիրավորված զգալով, իսկ Ֆարթուլը գյուղը ընդգրկված է ՊՀՄ-ի պատկերանիշում (Logo):

Մարդկանց վիրավորանք հասցնելը շատ հեշտ է, սակայն հետո սիրաշահելն է շատ դժվար: Հաճախ չի հաջողվում վիրավորված մարդու նախկին արժանապատվությունը և հեղինակությունը վերականգնել:

Հավաքված 3455 դոլարից 2100 դոլարը ուղարկվեց ԲՀԿՀ-ին, հոգեգանգիստ-հոգեճաշի ծախսերը (հայտարարություններ, ծանուցումներ, մանր-մունր այլ ծախսեր) կազմեցին 462.68 դոլար: Մնաց 892.32 դոլար, որին ավելացավ հոգեճաշում նվիրատվություններից հավաքվածը, և ընդհանուր գումարը հասավ 1455 դոլար:

Ստացվեց ԲՀԿՀ-ի շնորհակալական հետևյալ երկտողը՝ գրված Անդրանիկ Դովլաթյանի կողմից.



Գրիգոր Դովլաթյանին,

... Ստացա նամակներդ, կարդալով պարունակությունը շատ գոհ մնացինք քեզանից և Արմենակից, որ այդքան կոհողություն արեցիք: Ստացանք ուղարկած հանգանակությունը լրիվ և մոտ օրեն քեզ նամակով ստացական կուղարկեմ: Այսօր ռեշոտկաների (ցանկապատի ճաղերի Վ. Բ.) կացազը (պատվերը Վ. Բ.) տվինք ու լրիվ վերջանում է և մնում է մեջի բարելավումը:

Եղբայրդ՝ Անդրանիկ Դովլաթյան:

Երկտողը գրված է ծոցատետրի փոքրիկ էջի վրա, և նշված է, որ հուշարձանի 150 նկար էլ ուղարկված է Լոս Անջելես (ստացականը տե՛ս հավելված էջ 403):

Հոգեհանգիստ-հոգեճաշից հետո մեծ աշխուժություն առաջացավ ժողովրդի մեջ: Գրիգոր Դովլաթյանի և Արմենակ Հեքիմյանի կողմից կազմվեց ցուցակ, որն ընդգրկում էր 28 անուն՝ բեյլանցիների տարբեր գերդաստաններից, որոնք էլ հրավիրվեցին հատուկ հավաքույթի՝ քննարկելու ՊՀՄ հիմնադրելու հարցը:

Հավաքույթը տեղի ունեցավ 1986 թ. մայիսի 7-ին Հոլիվուդ փողոցի վրա գտնվող «Նայիրյան Հարսանյաց Սրահ»ում, որը ձրի տրամադրեցին նրա տերերը՝ Երվանդ Հովսեփյանը և Վարուժան Նիկողոսյանը:

## ՀՐԱՎԻՐՅԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

1. Աղազարյան Խաչիկ Աբելի
2. Աղազարյան Մաթևոս Իսկենդերի
3. Ագլոյան Մուկուչ Հակոբի
4. Ավետիքյան Կարապետ Գևորգի*
5. Ավեսյան Հակոբ Պետրոսի
6. Առաքելյան Առաքել Պետրոսի*
7. Բահարյան Վահան Խաչատուրի*
8. Գասպարյան Հակոբ Արմենակի
9. Գևորգյան Վահան Պողոսիթ
10. Գյոզալյան Սարգիս Խաչատուրի*
11. Գյոզալյան Հովիկ Սարգսիթ
12. Գյոզալյան Հակոբ Հարությունի
13. Գևորգյան Րաֆֆի Մովսեսի
14. Քյուփելյան Մանուկ Ժիրայրի
15. Դովլաթյան Գրիգոր Մարտիրոսի*
16. Դովլաթյան Հարություն Մովսեսի*
17. Էքշիյան Մարտիրոս Սարգսի*
18. Էքշիյան Սահակ Աբրահամի
19. Թերջանյան Գևորգ Էդուարդի*
20. Թոգաճյան Սարգիս Հակոբի

21. Հեքիմյան Արմենակ Միհրանի*
22. Հովսեփյան Երվանդ Հիսուսի*
23. Ճինպաչյան Սարգիս Սարգսի
24. Մարաշյան Մանվել Հակոբի*
25. Մելքիսեթյան Նորայր Մելքիսեթի*
26. Մխսի-Գևորգյան Նուբար Նազարեթի*
27. Պալյան Զարեհ Միլիտոսի*
28. Ֆոդուլյան Հարություն Գևորգի*

Հավաքույթին ներկա էին 17 հոգի (*-ով նշածները): Քննարկման նյութ դարձան օրակարգի հետևյալ հարցերը.

1. Հայրենակցական միության հիմնադրումը:
2. Միության անվանումը:
3. Վարչության ընտրություն:
4. Միության ծրագիր–կանոնագրի (այսուհետև՝ ԾԿ) մշակումը:
5. Եղած 1455 դոլարը հետագայում բանկ դրվեց միության անունով (անունը որոշելուց հետո)[1]:

Առաջին հարցի քննարկումը երկար տևեց: Միության անհրաժեշտության, նրա ձևի և բովանդակության վերաբերյալ հարցերը, առաջարկությունները քննարկվում էին լրջությամբ և հաճախ բուռն վիճաբանությունների առիթ ստեղծում: Ի վերջո հաղթանակեց միություն ունենալու տրամադրությունը՝ հատկապես ԱՄՆ-ի նման մի երկրում: Որոշվեց միությունը հիմնադրել որպես հայրենակցական միություն (այսուհետև՝ ՀՄ), իսկ անունը պիտի որոշեր ընտրվելիք վարչությունը:

Գրիգոր Դովլաթյանը առաջարկեց նորաստեղծ վարչության կազմը, որն ինձ և ներկաներից շատերի համար անակնկալ էր: Ովքե՞ր էին կազմել այդ ցուցակը: Ենթադրվում է, որ Նորայրի և Նուբարի մասնակցությամբ է կազմվել: Նորայրը հոդված էր գրել տեղի ունեցած հոգեհաշի մասին՝ «Վերապրողներ կ'ոգեկոչեն անմահները[2]»: Հոգեհաշը համընկնում էր Մեծ Եղեռնի 71-րդ տարելիցի հետ, և հոդվածում, Բեյլանի հուշարձանի նկարի հետ միասին, մտորումներ էր արվում նահատակների հիշատակի մասին, նշվում էր, որ Մեծ եղեռնից վերապրող 71 տարեցներ վառեցին մոմերը հայ նահատակների հիշատակին: Անդրադարձ կար նաև կոտորածից հետո հայ ժողովրդի անցած դժվարին տարիների ու վերածննդի, ինքնության պահպանման, գոյատևման ու բարգավաճման, հայի բարեմասնությունների, Թուրքի վայրագությունների մասին:

1.- Գրիգորը 892 դոլար 32 սենթը ստացականով հանձնեց նոր ստեղծված վարչությանը 1986 թ. սեպտեմբեր 26-ին:

2.- Տե՛ս «Հայ Կեանք» շաբաթաթերթ թիվ 31, Մայիս 9, 1986, էջ 33:



7 հոգուց առաջարկված վարչության կազմը բաց քվեարկությամբ ընդունվեց մեծամասնության կողմից: Ահա այն.

1. Նորայր Մելքիսեթի Մելքիսեթյան՝ ատենապետ:
2. Զարեհ Միլիտոսի Պալյան՝ փոխատենապետ:
3. Վահան Խաչատուրի Բահարյան՝ առաջին քարտուղար:
4. Մարտիրոս Սարգսի Էքշիյան՝ երկրորդ քարտուղար:
5. Նուբար Նազարեթի Մխսի–Գևորգյան՝ գանձապահ:
6. Գևորգ Եդուարդի Թերջանյան՝ գեղարվեստական մասի պատասխանատու:
7. Հարություն Գևորգի Ֆոդուլյան՝ գեղարվեստական մասի պատասխանատու:

Միության ստեղծմանը մասնակցող 17 ժողովականները անվանվեցին Հիմնադիր անդամներ» (էջ 20-21, *-ով նշվածները):

## ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ ԵՎ ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

Պետք է նշել կարևոր մի հանգամանք: Հիմնադիր անդամները միութենական գործունեության փորձ չունեինք, որի հետևանքով էլ 17-ի փոխարեն միայն 7-ը ընտրվեցին վարչության կազմում:

Միության հետագա գործունեությունը ցույց տվեց, որ թույլ էր տրվել մեծ սխալ: Վարչությունն իր շուրջը պետք է համախմբեր Բեյլանցի բոլոր գերդաստաններն ու խավերը, որոնց ներկայացուցիչները պարտադիր պետք է ընդգրկվեին նրա կազմում: Ջնայած հետագայում այս հարցը որոշ չափով կարգավորվեց, բայց անտեսված հայրենակիցներից շատերն ընդմիշտ հեռացան:

Մի հստակեցում ևս. վարչության ընտրված անդամները, բնականորեն, միայն Բեյլանից չէին, այլ՝ նրա շրջակա բնակավայրերից ևս: Ահա այստեղ էլ նրա անվան հետ կապված բարդություն առաջացավ, որին կանդրադառնանք ավելի ուշ:

ՊՀՄ-ն պաշտոնապես հիմնադրվեց Լոս Անջելեսում 1986 թ. մայիսի 7-ին, իսկ նրա հիմնադրման մասին հայկական մամուլին հայտարարություն տրվեց հունիսի 17-ին:

Նորընտիր վարչությունը ձեռնամուխ եղավ ակտիվ գործունեության: Նախ պետք էր ունենալ միության անունը, ԾԿ-ն, պատկերանիշը (logo), առանց որոնց հնարավոր չէր միությունը օրինականացնել նախատեսված օրենքով: Այս ուղղությամբ վարչականների աշխատանքը տվեց իր արդյունքը:

Վարչությունը միության Պատվո նախագահուհի ընտրեց նյույորքաբնակ տիկին Մարիձա Սողանալյանին: Նորայրի նրան ուղարկած մայիս 31 1986 թվակիր նամակում գրված էր.

Վարչութիւնս իր նիստին մէջ միաձայնութեամբ ընտրեց ձեզ Պէյլանի

Հայրենակցական Միութեան Պատուո Նախագահութիւն, նկատի ունենալով, որ դուք ներկայ պէյլանցիներու ամենատարեցն էք և ամենարժանին:

Վարչությունն այս ձևով ուզում էր միության գործունեության վրա ուշադրությունը հրավիրել նրա որդու՝ Սարգիս Սողանալյանի՝ միջազգային ռազմամթերքի հայտնի վաճառականի:

Այն ժամանակ շատերս անձամբ չէինք ճանաչում տիկին Մարիձային և որդուն՝ Սարգիս Սողանալյանին:

Նամակում գրված էր նաև, որ «կը ծրագրենք մասնաւոր առիթով մը, եթէ դուք կամիք, ձեզ պատուել իբր 1986 տարուայ «Պատուոյ Մայրը»:

Հետագա նիստերում վարչությունը սկսեց քննարկել ԾԿ-ի և պատկերանիշի հարցերը: Միաժամանակ Մարտիրոս Էքշիյանը ստանձնեց գծել Բեյլանի և նրա շրջակայքի քարտեզը, ցույց տալով միության մեջ ընդգրկվելիք հայկական բնակավայրերը: Պարզվեց, որ Բեյլանի շրջակայքում եղել են 14 հայկական բնակավայրեր. Աթըխ (Աթըգ), Ծիգմէլի, Ֆարթըսլը, Գըըրգ Խան, Տէրէ Պախչա, Մէզկիթ Էօնիւ, Սօվուգ Օլուգ, Պալլը Ղասթալ, Իսկէնտէրուն (Ալեքսանդրետ, որը հետագայում դարձավ հայտնի նավահանգիստ), Ղանլը Տէրէ, Ներկիզլիք, Կէօզէլլի, Սօղանճը, Ջաթախ, որոնք ընդգրկվեցին պատկերանիշի մեջ (անունները գրված են ըստ պատկերանիշում եղած հաջորդականության և ուղղագրության՝ մեսրոպյան): Մարտիրոս Էքշիյանենց գյուղը՝ Հաճի Մուսլուն մոռացված է: Պատկերանիշի ստեղծման գործում հիմնական ներդրում ունեն՝ Նորայր Մելքիսեթյանը, Գևորգ Թերջանյանը և ես: Գևորգ Թերջանյանի մտահղացումն էր շրջանակաձև տեսքը՝ շառավիղների ուղղությամբ ցույց տալով բնակավայրերի անունները:

Որպեսզի ընթերցողը գաղափար կազմի այդ բնակավայրերի բնակչության մասին՝ նշենք, որ ամենամեծ բնակչություն ունեցող բնակավայրերն էին. Իսկենդերունը, Գըըրգ Խանը, Սօվուգ Օլուգը, Ներգիզլիքը, Աթըգը (ամռանը նրա բնակչությունը հասնում էր շուրջ 500-ի), իսկ կային գյուղեր, որոնք երեք-չորս ընտանիք ունեին. Ջաթախը, Պալլը Ղասթալըն, Սօղանճըն, Հաճի Մուսլուն:

Քննարկեցինք միության անվան հարցը: 14 բնակավայրերի անունները չէինք կարող ընդգրկել: Նկատի ունենալով, որ Բեյլանը վերոհիշյալ բնակավայրերի մեծ մասի կենտրոնն էր, իսկ բոլոր բնակավայրերը ընդգրկվել էին պատկերանիշի մեջ (բացի մեկից), վարչությունը հարմար գտավ միության անունը կնքել՝ «ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ»: Միության անվան հարցում նկատի առնվեց նաև դրա արտասանության դյուրությունը, կառավարական գերատեսչություններում գրանցելու, օրինականացնելու հանգամանքը ևայլն: Բեյլանի անվան ուղղագրությունն էլ փոխ-



վեց, նկատի ունենալով նրա պատմական փաստաթղթերում գրված ձևը՝ «Պէյլան»:

Միության անվան շուրջ դժգոհություններ արտահայտեցին հատկապես Սօվուգ օլուգցիները: Նրանք, պատճառաբանելով, թե իրենց գյուղի անունը չկա միության անվան մեջ և իրենք բեյլանցի չեն, հիմնական մասով չէին մասնակցում միության միջոցառումներին:

Այդ խոսակցությունները դեռ Երևանում ՊՀԿՀ-ի ներսում հասցրել էին նրան, որ Սարգիս Գյոզալյանը բոլոր Սօվուգ օլուգցիներին համոզել էր չմասնակցել նոր ստեղծված միության գործունեությանը և միջոցառումներին: Բայց հետագայում, երբ նա դարձավ միության վարչության անդամ, բոլոր Սօվուգ օլուգցիները նեղացան նրանից և ընդհանրապես անտեսեցին միության միջոցառումները, եթե չհաշվենք Սարգսի որոշ հարազատների մասնակցությունը: Այս մանրամասնությունները հետագայում իմացա, երբ մի առիթով հյուր եղա Սօվուգ օլուգցի մի ընտանիքում[1]: Առիթից օգտվելով հարցրեցի, թե իրենց ընտանիքը և ընդհանրապես, Սօվուգ օլուգցիները ինչո՞ւ չեն մասնակցում միության միջոցառումներին: Նրանք պատասխանեցին.

Սարգիս Գյոզալյանը համոզեց բոլորիս, որ չմասնակցենք, հետո էլ ինքը մտավ վարչության մեջ: Թող գա մեր բոլորի առջև ներողություն խնդրի, այն ժամանակ սիրով կմասնակցենք:

Գրիգորն էլ ասաց այդ մասին: Բայց Սարգիսը ներողություն խնդրող չէր, ուստի այդ մասին մտածելն իսկ ավելորդ էր:

Կազմվեց հայրենակիցների անվանացանկը, որը 1986 թ. մայիսի տվյալներով մոտ 250 ընտանիք էր ընդգրկում: Այսօր, երբ այս տողերը գրվում են, հավանաբար նրանց թիվը 500-ից ավելի է, որի հաշվառումը, դժբախտաբար չկարողացավ իրականացնել վարչությունը, չնայած, որ այդ նպատակի համար, նույնիսկ, հատուկ «Անդամակցության դիմումնագիր»ի ձև էր մշակված Նորայր Մելքիսեթյանի կողմից:

ԾԿ-ի քննարկման հարցը ավելի լուրջ էր:

Ընտրված առաջին վարչության ատենապետ Նորայր Մելքիսեթյանը չէր աշխատում, ուստի հնարավորություն ուներ զբաղվելու նորաստեղծ միության հարցերով: Վարչության մյուս անդամները աշխատում էին և միայն ազատ ժամերին կամ օրերին կարող էին զբաղվել վարչության գործերով, իհարկե եթե ցանկանային:

Ատենապետը հունիս 24, 1986 թվակիր նամակով ԾԿ-ի նա-

1.-Իմ հարաբերությունները լավ են եղել բոլոր բնակավայրերի հայրենակիցների հետ և հարգանք ունեցել նրանց մոտ:

ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Հիմնուած՝ Մայիս 7, 1986
Լոս Անճելըս, Գալիֆ., Ա.Մ.Ն.

Founded May 7, 1986
Los Angeles, Calif., U.S.A.

BEYLAN COMPATRIOTIC UNION

*Պէյլանի հայրենակցական միության պատկերանիշը (logo):*

*խագիծը ուղարկեց վարչության բոլոր անդամներին՝ ուսումնասիրելու և իրենց կարծիքներն ու առաջարկությունները ներկայացնելու հուլիս 14-ին կայանալիք վարչության նիստում (այսուհետև՝ ՎՆ) քննարկելու համար: Ես նախագծի օրինակի վրա արդեն նշած իմ առաջարկություններով ներկայացա ՎՆ-ին, որը տեղի էր ունենում ատենապետի քրոջ տանը: Պարզվեց, որ հիմնականում միայն ես եմ աշխատանք տարել, և իմ վերամշակած նախագիծը հիմք ծառայեց ԾԿ-ի քննարկման համար: Ընթացքում՝ հոդված 6-ում, իմ կողմից ավելացված հետևյալ երկու կետերը ուսումնասիրության ունեցան Նուբար Մխսի-Գևորգյանի, Զարեհ Պալյանի և Մարտիրոս Էքշիյանի վրա.*



*1. Կապ պահպանել Հայրենիքի ԲՀԿՀ-ի հետ և անհրաժեշտության դեպքում օգնել նրան հուշակոթողի հարցերում:*

*2. Կապ պահպանել Մայր Հայրենիքի հետ, եթե հնարավոր է:*

*Այս հարցերը երկար բանավեճերի դուռ բացին, հաճախ վիրավորանքների:*

*Առաջադրված հարցերը հիմնավորում էի այն իմաստով, որ մեր միության հայրենակիցները՝ բեյլանցիները 99%-ով Հայաստանից են ներգաղթած Լոս Անջելես, իրենց նվիրած լումայով ու աշխատանքով է կառուցված Հայաստանում ԲՀԿ-ն: Չի կարելի խաչ քաշել այդ բոլորի վրա, մանավանդ, որ Բեյլանի և շրջակա բնակավայրերի հայերը ինչ-որ չափով բարեկամական կապեր ունեն: Եվ ամենակարևորը հայ ժողովրդի գոյությունը Սփյուռքում պայմանավորված է Հայրենիքի գոյությամբ: Հետևաբար, Հայրենիքի հետ մշակութային կապը կարևոր անհրաժեշտություն է:*

*Այդ կապերը ամեն կերպ մերժող և այդ հարցով տհաճություններ առեղծող Նուբար Մխսի-Գևորգյանը, ատենապետ Նորայր Մելքիսեթյանի հետ նամակ է ստորագրել՝ ուղղված Հայաստանի ԲՀԿՀ-ին, որը չէր քննարկված ՎՆ-ում: Եվ նամակը փոխանակ քարտուղարը ստորագրի ատենապետի հետ, գանձապահն է ստորագրել, որը ԾԿ-ի կոպիտ խախտում է: Նամակը ինչո՞ւ է առանց վարչության գիտության ուղարկվել գաղտնիք է մնում: Այստեղ հատկանշականը այն է, որ Նուբարը հակասում է ինքն իրեն՝ մի կողմից պնդելով, որ ԲՀԿՀ-ի հետ պետք չէ կապ պահպանել, մյուս կողմից նրան ուղղված նամակ է ստորագրում (տե՛ս բնագիրը հավելված էջ 404):*

*Հետևաբար Նուբարը անիմաստ վիճաբանություններ է հրահրել վերոհիշյալ հարցերի շուրջ՝ առանց պատասխանատվություն զգալու կամ հասկանալու դրանց լրջությունը և կարևորությունը:*

*Արխիվային փաստաթղթերից պարզվեց, որ նա հաճախ է ստորագրել նամակներ քարտուղարի փոխարեն, նույնիսկ, վարչության անդամներին ուղղված գրություններ: Ավելին: Ըստ արխիվային փաստաթղթերի, Նորայրն ու Նուբարը ձգտել են առանձին առնչություն ունենալ մեր հայրենակից Ավագ քահանա Սարգիս Անդրեասյանի հետ, որի համար իրենց ստորագրությամբ նամակ են ուղարկել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական Ս. Աթոռի ԱՄՆ-ի Արևմտյան շրջանի Առաջնորդ Արք. Տաթև Սարգսյանին: Նրանց մոտ հետագայում շարունակվեց այդ միտումը, որ ՊՀՄ-ն դրվի նշյալ առաջնորդարանի հովանավորության տակ: Սակայն դա հնարավոր չէր, որովհետև, ըստ ԾԿ-ի, միությունը ո՛չ քաղաքական և ո՛չ էլ հարանվանական բնույթ ունի, մանավանդ, որ նշված*

առաջնորդարանը պատկանում էր ՀՅԴ-ի կուսակցության:

Հետագա գործունեության ընթացքում միությունը տարբերություն չդրեց, իր միջոցառումները իրագործելիս դիմեց և՛ էջմիածնական, և՛ կիլիկիո եկեղեցիներին, նրանց սրահները օգտագործելու նպատակով: Իր համեստ նյութական միջոցներով ՊՀՄ-ն չէր կարող վճարել Կիլիկիո Թեմի Ալեքսանդրեա փողոցի վրա գտնվող եկեղեցու պահանջած գումարը, իսկ էջմիածնական Թեմի Վայն փողոցի վրա գտնվող Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցին (Վարդան ավագ քահանա Թադևոսյանի ղեկավարությամբ) առաջարկեց ձրի ժողովի և հոգեհացի սրահ և մի սենյակ էլ հատ-կացրեց որպես պահեստ, որը օգտագործվում է միության կողմից մինչև այսօր:

Նշված վիճաբանությունները պատճառ դարձան 1986 թ. ՎՆ-երի արձանագրությունների բացակայության: Ունենալով երկու քարտուղար (Մարտիրոս Էքշիյանը և տողերիս հեղինակը) ոչ մի արձանագրություն չկա, բացի Նորայրի կողմից գրված մի քանիսի: Պատճա՞ռը: Մթնոլորտը այնքան լարված էր, որ տրամադրություն չէր լինում արձանագրություն կազմելու, չնայած, ես ամբողջ ԾԿ-ն վերամշակեցի մեծ խանդավառությամբ, բայց վիճաբանությունները կտրեցին եռանդս, և այսօր միության մասին գրելիս շատ հարցեր, բնականորեն, մոռացված են կամ եղած ճշտությամբ չեն հիշվում: Այնուամենայնիվ, որոշ կարևոր հարցեր երբեք չմոռացվեցին, և դրանց մասին լուսաբանությունները աստիճանաբար շարունակվելու են, ինչպես՝ ԲՀԿՀ-ի և Հայրենիքի հետ կապերի հաստատման ու ատենապետին թոշակ նշանակելու հարցերը:

Ընթերցում եմ գրառումներիցս որոշ մասեր՝

1986 թ. մայիսի 7-ին ստեղծված ՊՀՄ-ի վարչությունը համերաշխորեն լծվեց գործի: Ամենաաշխատատար գործը եղավ ԾԿ-ի մշակումը, որի նախագիծը քննարկվեց ինչպես Հիմնադիրների ժողովում, այնպես էլ ՎՆ-ում: Վերջնական վերամշակումը հավելումներով (Նախաբան, Գործող հանձնախմբեր, ուղղումներ, սրբագրումներ այլն) ներկայացրի ՎՆ-ի քննարկմանը:

Սկզբնական շրջանում ՎՆ-երը տեղի էին ունենում Նորայրի քրոջ տանը և պետք է սկսվեին ժամը 8-ին, բայց ժամը 9-ից շուտ չէին սկսվում: Այդ նիստերին, առանց բացակայության, հիմնականում մասնակցում էին 4 վարչական՝ Նորայրը, ես, Մարտիրոսը, Նուբարը, վերջինս գալիս էր ժամը 8:30-ից հետո, Զարեհը միշտ ուշանում էր, հաճախ չէր գալիս, հաճախ էլ շուտ էր գնում, Գևորգը նույնպես կանոնավոր չէր հաճախում, իսկ Հարությունը ընդհանրապես հրաժարվել էր վարչությունից:

ԾԿ-ն քննարկվեց նիստին ներկա բոլոր և վարչականներով: Հոդված 8-ի «Միության նպատակը» վերնագրի տակ գրված էր.

դ) Բարեկամական կապերի հաստատում մյուս հայրենակցական միությունների



հետ հայ գաղութի միասնությունը ամրապնդելու նպատակով, ինչպես նաև Մայր Հայրենիքի հետ (եթե հնարավոր է):

Հոդված 1-ի «Միության գործունեությունը» վերնագրի տակ գրված էր.

գ) Կապ պահպանել Մայր Հայրենիքի ԲՀԿՀ-ի հետ և աջակցել հուշարձան-կոթողի պահպանման և կատարելագործման աշխատանքներին:

Այս երկու հարցերը նորից վիճաբանության նյութ դարձան, չնայած՝ արդեն ընդունված էին վարչության նախորդ նիստերում:

Զարեհ Պալյանը, Նուբար Միսի-Գևորգյանը, Մարտիրոս Էքշիյանը բացարձակապես դեմ եղան այս հարցերին և առաջարկեցին հանել ԾԿ-ից, պատճառաբանելով, որ իրենք չեն ուզում ՊԱԿ-ի (Պետական Անվտանգության Կոմիտե) գործակալ դառնալ: Նորայր Մելքիսեթյանը ձեռնպահ մնաց, իսկ Գևորգ Թերջանյանը շփոթության մեջ էր ընկել (նա և Նորայրը սփյուռքահայեր էին և հայրենի իրականությանը անծանոթ) և, հավատալով չափազանցված «հեքիաթներին», միացավ նրանց, և ես մենակ մնացի:

Այսպիսով այդ կետերը դուրս մնացին ԾԿ-ից: Վարչությունը կատարեց մեծ սխալ, եթե նկատի ունենանք նրա անդամների կապվածությունը ԲՀԿ-ի հետ, որը խորհրդանշում էր 1915 թ. մեր նահատակների հիշատակը:

Վարչության կողմից ընդունված սույն ԾԿ-ի նախագիծը որոշվեց ներկայացնել Ընդհանուր անդամական ժողովի հաստատմանը, որը նախատեսված էր մայիս 17, 1987 թ.:

Հոդվածների նպատակն էր կապ պահպանել Երևանի Արտասահմանյան մշակութային կապի կոմիտեի հետ և միության հետագա գործունեության ընթացքում, անհրաժեշտության դեպքում հրավիրել հայրենի գրողներ, արվեստագետներ այլն, հայապահպանման գործին սատարելու նպատակով: Իսկ վերոհիշյալ վարչականները գտնում էին, որ հրավիրվող բոլոր անձերը ՊԱԿս-ի մարդիկ կլինեն և իրենց կդարձնեն ՊԱԿ-ի գործակալներ, իսկ Նուբարն ավելի առաջ գնաց՝ հայտարարելով. «Մենք Հայրենիք չունե՛նք»:

Երբ առաջարկեցի օգնել ԲՀԿՀ-ին՝ հուշարձանին կից թանգարան կառուցելու նպատակով, Մարտիրոսը բորբոքվեց՝ ասելով. «ՊԱԿ-ի համա՞ր պիտի կառուցենք թանգարանը, թանգարանն էլ, հուշարձանն էլ ՊԱԿ-ինն են, մենք այստեղ կկառուցենք թանգարան»:

Հաջորդ օրը Նորայրի հետ այդ մասին խոսելիս, նա վրդովված ասաց. «Եղբայր, ես կ'ուզեմ իմ Հայրենիքը երթալ և կ'ուզեմ, որ այնտեղ ինծի պատշաճ դիմավորեն որպէս ՊՀՄ-ի վարչութեան անդամ, եթե կապ չ'ըլլայ, ինչպէ՞ս երթամ»: Ես պատասխանեցի. «Նորայր, որպես վարչության ատենապետ, դու իրավունք չունեիր ձեռնպահ մնալու, ինչո՞ւ չմիացար ինձ և կողմ չքվեարկեցիր»: «Չէի ուզեր, որ անհամութիւն ստեղծուի» ... պատասխանեց նա:

Ինչպես հաճախ եմ նշել, մի անգամ ևս կրկնեմ այստեղ՝ «Նուբար, Զարեհ և Մարտիրոս. Հայրենիքը վարչակարգ չէ, Հայրենիքը ԿԳԲ չէ, Հայրենիքը հասարակական սիստեմ չէ: Հայրենիքը դարերից ի վեր հայի արյունով խառնված մեր հողն է, մեր հուշարձանները, մեր ջուրը, մեր կապույտ երկինքը, մեր Արարատը, մեր բնությունը՝ իր ամբողջ լեռնաշխարհով, որոնց գոյությամբ հայը հարատևում է: Եթե դուք մինչև հիմա չեք կարողանում ըմբռնել այս իրողությունը և Հայրենիքը տարբերել մյուս երևույթներից, ապա դուք չեք կարող Հայրենիք ունենալ, և եթե որևէ անհատ իր Հայրենիքին օգուտ չտա, ուրիշին երբեք չի կարող տալ: Փաստեր ե՞ք ուզում, նայեք մեր պատմությանը, եթե, իհարկե, ծանոթ եք դրան: Այսօր ամբողջ

Սփյուռքը հակված է դեպի Հայրենիքը, և գոյատևման պայքարը շարունակվում է: Այժ, Նուբար, մենք Հայրենիք ունենք, և դու պետք է այդ օր անես ականջիդ, և ոչ թե հայտարարես՝ «Մենք Հայրենիք չունենք»: Այդպիսի գաղափարով դու ինչպե՞ս կարող ես ՀՄ-ի մեջ ազգային գործունեություն իրագործել: Եթե մեր Հայրենիքը ճանաչող օտարներ ձեզ հարցնեն նրա մասին, ի՞նչ պատասխան պիտի տաք: Մի բան լավ իմացեք. Հայրենիքը շատ փոթորիկներ է տեսել դարերից ի վեր, կանգուն է մնացել, կանգուն է և կանգուն էլ պիտի մնա, որովհետև հայը պաշտել է իր Հայրենիքը որպես սրբություն, նվիրվել է նրան և կյանքը չի խնայել նրա ապատության ու հարատևության համար: Եվ երբ այսօր ամբողջ աշխարհի հայությունը հպարտանում է մեր Հայրենիքով, դուք ինչպե՞ս կարող եք ուրանալ այն:

Այսօր սփյուռքահայ կազմակերպությունները օգնելով Հայրենիքին, օգնում են ժողովրդին և ոչ թե՝ ՊԱԿ-ին: Այսօր Ալեք Մանուկյանը Էջմիածնում թանգարան է կառուցել մեր սրբությունների պահպանման և հետագա սերունդներին հասցնելու համար»:

Շոշափենք մի ուրիշ հարց: Նորայր Մելքիսեթյանը, ստանձնելով ատենապետի պաշտոնը, ակտիվ գործունեություն սկսեց նոր կազմավորվող միության համար, մանավանդ որ, ինչպես նշել ենք, որևէ տեղ չէր աշխատում: Անհրաժեշտության դեպքում, մեքենան և հեռախոսը օգտագործում էր միության համար և հաճախ գանգատվում էր, որ իր սիգարեթի, մեքենայի բենզինի և հեռախոսի դրամը աղջիկն է տալիս: Երբ մի քանի անգամ այդ մասին խոսք եղավ ՎՆ-երում, առաջարկեցի՝ Նորայրին հատկացնել նշված ծախսերը միության դրամից: Նորայրը չուզեց՝ ասելով, որ շուտով վերընտրություն կլինի, և ով ընտրվի նոր ատենապետ, թող նրան հատկացվի: Բայց հարցը բոլորովին ուրիշ ընթացք ստացավ վերընտրությունից երեք շաբաթ առաջ կայացած (երեքշաբթի, ապրիլ 21, 1987 թ.) հերթական ՎՆ-ում, որին ներկա էին վարչության 8 անդամներ՝ Նորայր Մելքիսեթյան, Զարեհ Պալյան, Վահան Բահարյան, Նուբար Մխսի-Գևորգյան, Սարգիս Ճինպաշյան, Գրիգոր Դովլաթյան, Սարգիս Գյուզելյան, Մանվել Մարաշյան: Բացակա էին՝ Մարտիրոս Էքշիյան, Գևորգ Թերջանյան, Արմենակ Հեքիմյան, Սարգիս Խորշիդյան: Հյուր էին՝ տիկիններ՝ Ռեպեկա Գասպարյան և Պերճուհի Ճինպաշյան, և օրիորդ Լուսիկ Քեշեշյան: Ըստ արձանագրության՝ օրակարգը.

1. Տեղեկատվություն Պեյլանի նորակազմ ՀՄ-ի հիմնադրության մասին Հալեպում-Սիրիա:

2. Ապրիլ 24-ի համահավաքի մասնակցություն:

3. ՀՀ՝ մայիս 33, 1987 թ.:

4. Տեղեկատվություն:

5. Այցելություններ:

6. Այլ և այլ:

Ըստ եղած արձանագրությունների վիճակագրության, Զարեհ Պալյանը, Հարություն Ֆոդուլյանը և Գևորգ Թերջանյանը հաճախ էին բացակայում վարչության նիստերից:

Սույն նիստի արձանագրության 6-րդ կետում, գրված է. «Ի բացակայութիւն Պրն. Նորայր Մելքիսեթեանի, ժողովը սերտած է անոր ծառայասիրութիւնը, նուիրումը և անխոնջ աշխատանքները՝ առաջարկուած է իրեն, իբր երթեւեկի գործածած փոխադրութի, հեռաձայնային հաղորդակցութեանց ծախսերուն յատկացնել ամսական 300 (երեք հարիւր), դոլար որ յետագային վերատեսութեան պիտի ենթարկուի և եթէ միութեան եկամուտը աւելնայ, այդ գումարը բարձրացնել սերտուի»:



Անկեղծությունը մարդու հոգու հայելին է և իր նկատմամբ հարգանքի ավելացում: Իսկ տվյալ դեպքում Նորայր Մելքիսեթյանի՝ իր ձեռքով գրված այս տողերը հակասում են իր վերոհիշյալ հայտարարությանը:

Իրականությունն այն է, որ ՎՆ-ում հարցերի քննարկման ժամանակ, առաջին անգամ լինելով, Նորայրը, հանկարծ ներողություն խնդրեց 10 րոպեով բացակայելու՝ սիգարեթ գնելու պատրվակով, որի համար միայն 3 րոպե էր պետք, որովհետև կրպակը մոտ էր: Նշեցի, որ սիգարեթ գնելու համար 5 րոպեն էլ շատ է...: Արձագանք չեղավ: Նորայրի դուրս գալուց հետո ընթացիկ հարցերը մոռացվեցին, և նորից շոշափվեց ծախսերի համար նրան վճարելու հարցը: Կրկնեցի իմ նախկին առաջարկը՝ առայժմ յուրաքանչյուր ամսվա ծախսը վճարել նրան, քանի որ բանկում միության ունեցած փողը քիչ է, և բարում նպատակներ կան իրագործելու: Այս հարցը վիճաբանության առիթ տվեց: Ըստ իմ ենթադրության, և վստահ եմ, որ հարցը նախօրոք քննարկվել ու որոշվել էր Նորայր Մելքիսեթյանի, Զարեհ Պալյանի, Նուբար Մխսի-Գևորգյանի, հանգուցյալ Ռեպեկա Գասպարյանի միջև և ներկայացվել ՎՆ-ին: Զարեհը ձեռքը սեղանին խփելով սկսեց գոռգոռալ, թե այդ փողը պետք է տրվի Նորայրին: Սարգիս Գյուզելյանը ասաց, որ ինքը երկու ձեռքով կողմ է. ոչ միայն 300 դոլար տալ Նորայրին, այլ նաև նրա արձանը կանգնեցնել: Մի խոսքով նիստի 11 ներկաներից, Նորայրը դրսում լինելով, 10 հոգի (հյուրերն էլ միասին) քվեարկեցին: Միայն ես դեմ քվեարկեցի: Այս ձևով հաստատվեց Նորայրին ամեն ամիս 300 դոլար թոշակ տալ, որը տարին 3600 դոլար է անում և բավական գումար էր այդ ժամանակվա համար:

## ԱՌԱՋԻՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Նկատի ունենալով տիկին Մարիամ Սողանալյանին Պատվո նախագահուհի ընտրելու հանգամանքը, վարչությունը նրա ամուսնուն՝ Սարգիս Սողանալյանին նամակ ուղարկեց, խնդրելով հովանավորել վարչության սույն առաջին ՃՊ-ն: Միևնույն ժամանակ ՎՆ-ում քննարկվեց միության պատկերանիշով պարանոցի ոսկե զարդեղեն պատրաստելու առաջարկությունը, որի պատասխանատվությունը իր վրա վերցրեց Նուբար Մխսի-Գևորգյանը: Որոշ ժամանակ անց, վարչության հերթական նիստը իմ տանը գումարելիս, նա բերել էր այդ զարդեղենը՝ տիկնության մեդալը (տե՛ս ընագիրը հավելված էջ 405), որը բոլոր վարչականներն էլ հավանեցին, ըստ Նուբարի, արժեքը մոտ 1500 դոլար էր: Վարչությունը որոշեց վճարել գումարը:

Քննարկվեցին ՃՊ-ին վերաբերող կազմակերպչական հարցեր, այդ թվում՝ ԲՀԿ-ի և միության պատկերանիշի նկարների մեծացման: Վերջին հարցով զբաղվել էր Գրիգոր Դովլաթյանը: Նա տեղեկացրեց վարչությանը, որ յուրաքանչյուր նկարի մեծացման համար պահանջում են 80-90 դոլար, իսկ գրելու համար՝ մոտ 30 դոլար, ընդամենը՝ 120 դոլար: Իսկ Նորայրը 450 դոլար էր վճարել մեծացնելու համար, առանց վարչության համաձայնության: Այս հարցը բավական տհաճություն առաջացրեց վարչության մեջ:



Ավետիսյան սրահում ՃՊ-ի ժամանակ: Ձախից աջ՝ Արմենակ Հեքիմյան, Մարտիրոս Էջչիյան, Զարեհ Պալյան, Վահան Գեորգյան, Մանվել Մարաշյան, Ավագ քահ. Տեր Սարգիս Անդրեասյան, Գրիգոր Դովլաթյան (նստած), Նուբար Միխի-Գեորգյան, Վահան Բահարյան, Գեորգ Թերջանյան և Նորայր Մելքիսեթյան։

իմ առաջարկով որոշվեց միության գործարքները կատարել նվա-զագույն դեպքում երկու վարչականներով, որպեսզի նման թյուրի-մացություններից խուսափենք և կասկածամտության տեղիք չտանք։ Նկարների մեծացման համար այդքան դրամ վճարելը, կամ ՃՊ-ի գրքույկները 500 օրինակով՝ հատը 4 դոլարով պատվիրելը, որոնց համար հարկով (tax-ով) միասին վճարվեց 2130 դոլար, գաղտնիք մնաց։ Տոմսի արժեքը որոշվեց 22 դոլար, վաճառվեց 415 տոմս։ Հրավիրվածների հետ միասին ներկաների թիվը 500 հոգի էր, ճաշի գինը՝ 13 դոլար։

ՃՊ-ն տեղի ունեցավ դեկտեմբեր 13, 1986 թ. Ֆերահյան վար-ժարանի Ավետիսյան սրահում (5300 White Oak Ave., Encino, CA)։

Սա ՊՀՄ-ի առաջին ՃՊ-ն էր, և ոգևորությունը շատ մեծ էր թե՛ վարչականների, թե՛ ժողովրդի մոտ։ Դժբախտաբար, միջո-



ցառման հանդիսավարության հարցը չէր լուծված՝ ով ցանկանում, բեմ էր բարձրանում։

Վարչականների մի մասն առիթն օգտագործում էր իր գոր-ծարքների համար։ Օր. Ս. Ճինպաշյանը շենքերի առուծախով էր զբաղվում (Real State), և ով տուն գնի, որպես նվիրատվություն, 500 դոլար զեղչ էր անելու Escrow-ից (տուն գնելու նախնական ստուգման ծախսեր), որը փաստորեն ծանուցում էր իր գործի համար։ Որոշ մարդիկ այսպիսի ակնկալիքներով ինչպես մտան, այնպես էլ դուրս եկան վարչությունից։ Նվիրատվությունների գումարը եղավ 10315 դոլար, ՃՊ-ի ընդհանուր գումարը կազմեց 28932 դոլար, իսկ ծախսը՝ 15588 դոլար, մաքուր եկամուտը՝ 13344 դոլար, որը բանկում եղած գումարի հետ կազմեց 14799 դոլար։

ՃՊ-ն անցավ մեծ խանդավառությամբ։ Մարիձա և Սարգիս Սողա-նալյանները չկարողացան ներկա լինել և, բնականաբար, վերոնշյալ նվերն էլ մնաց հաջորդ տարվան։

ՃՊ-ի մասին հոդվածներ եղան «Նոր կեանք»[1] շաբաթաթեր-թում, «Փարոս» երկշաբաթաթերթում և այլ թերթերում, որոնք գովեստով են նշում ՊՀՄ-ի առաջին ՃՊ-ի և նրա հաջողության մասին։ Իրոք, մեծ իրադարձություն էր Լոս Անջելեսում դեռ նոր համախմբվող բեյլանցիների համար։ Ահա այս ձևով սկսեց իր գործունեությունը նոր ստեղծված ՊՀՄ-ն։

ՃՊ-ի ծանուցման գրքույկից որոշ նյութեր մեջբերենք։

## ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԵՅԼԱՆԻ ՄԱՍԻՆ

Հյուսիսից հարավ ձգվող Ամանոս լեռնաշղթան Իսկենդերունի մոտ երկու մասի է բաժանվում մի երկար կիրճով, որը ծանոթ է «Սուրիայի դռները» անունով։ Այս կիրճի մեջ, Իսկենդերունից 15 կիլոմետր դեպի արևելք, ծովի մակերևույթից 450 մետր բարձրության վրա է գտնվում Բեյլանը, որը Իսկենդերունից դեպի Գըրըզ Խան և Հալեպ երկարող ճանապարհի վրա բաժանված է երկու մասի՝ հյուսիսային մասում ապրում են հայերը, իսկ հարավայինում՝ թուրքերը։ Բեյլանի հյուսիսային մասում Ամանոս լեռնա-շղթայի Տավ գագաթի ստորոտում է գտնվում հայկական Աթըգ գյուղը։

Օսմանները Բեյլանը գրավում են 1520 թ.։ Նույն թվից սկսվում է նրա կառուցումը որպես վարչական և առևտրական կենտրոն, որը ավարտվում է 1556 թ.։

Բեյլանը վարչական կենտրոն է եղել բազմաթիվ թուրքական և 15 հայկական գյուղերի։

Բեյլանը եղել է Կիլիկիայի և Հալեպի, Մարաշի, Այնթապի, Անտիոքի ու նրանց շրջակա բնակավայրերի թե՛ ճամփորդական և թե՛ առևտրական կամուրջը՝ դեպի եվրոպական երկրներ և իսլամ ու քրիստոնյա ուխտավայրեր։

ԺԹ դարում, երբ Իսկենդերունը օգտագործվում է որպես նավահա-նգիստ, քաղաքը սկսում է շենանալ։ Բեյլանի, շրջակա գյուղերի, Մուսա Դաղի,

1. Տե՛ս թիվ 4, 15 Յունուար, 1987, էջ 6։

Քեսաբի, Դյորթ Եոլի և շատ ուրիշ բնակավայրերի բնակչության որոշ մասը հաստատվում է Իսկենդերունում, և Բեյլանը կորցնում է թե՛ իր բնակչության մեծ մասը և թե՛ կարևորությունը որպես վարչական կենտրոն:

Ըստ Ռաֆայել Վրթանեսյանի հուշերի, 1890 թվից հետո Բեյլանում եղել է 1200 հայ և 2090 թուրք ընտանիքներ, հայկական 3 եկեղեցի՝ լուսավորչական, կաթոլիկ, բողոքական, թուրքական 4 մզկիթ, հայկական 3 և թուրքական 4 դպրոցներ, հայ բժիշկ, 4 դայակ, 1 դեղատուն, բաղնիք, 3 խումարանոց, 13 սրճարան, թեյարան, 3 հյուրանոց, 7 քարվանսարայ (խան), 5 ջրաղաց (քարով), 5 փուռ, 5 մսագործ, հրուշակեղենի խանութ, 27 նպարատուն, մեղվաբույծ, 6 սափրիչ, դերձակ, 7 գյուղական կոշիկի արհեստանոց, 4 եվրոպական կոշիկի խանութ, 4 դարբին, թիթեղագործ, 4 ատաղձագործ, 1 կավագործ (ճերեճի), կլայեկագործ (ղալայճի), ջուլհակ, թաղիքի (քեչեի) արհեստանոց, 7 կաշիի արհեստանոց, 6 պայտար (նալբանդ), 5 որմնադիր, շերամաբույծ և 4 ոսկերչատուն: Բեյլանի ռուպը (պեքմեզ-խաղողից եփված թանձր մածուկ) Կիլիկիայի լավագույն ռուպն է որակված:

«Մեր խոսքը» վերնագրի տակ գրված է ՊՀՄ-ի հետագա ծրագրերի մասին՝ հիմնականում նշանակետ ունենալով հայապահպանման գործընթացը: «ՊՀՄ-ի հիմնադիրները» վերնագրի տակ ՊՀՄ-ի 17 հիմնադիրների լուսանկարներն են, հետո՝ վարչության կազմը, հետո՝ Մեծ եղեռնից վերապրողների «Մեր իրավիրյալ տարեցները» ցանկը.

Աղավնի և Մարի Աղապարյաններ, Մայրիկ Ավետիքյան, Նվարդ Ավեսյան, տեր և տիկին Հակոբ և Նվարդ Գասպարյաններ, Մարտիրոս Զատինյան, Աբրահամ Էքշիյան, Մարթա Թորոսյան, Հարություն Կարմիրյան, Նվարդ Գյոզալյան, Կլատիս Մելքիսեթյան, տեր և տիկին Ռուբեն և Հռիփսիմե Մելքիսեթյան, Մարիամ Միսիր-Գևորգյան, Լյուտվիկ Շամլյան, Արմենուհի Շաքլյան, Զարեհ Հ. Պալյան, Սալենի Պալյան, Հռիփսիմե և Մարի Բերբերյաններ, Միսակ Պողոսյան, տեր և տիկին Կարապետ և Վիկտորիա Բոյաջյան, Եղիսաբեթ Սարաֆյան, Տիգրանուհի Սեֆայան, Լուսյա Թաշչյան, Ներսես Քեշիշյան, Մարի Գևորգյան:

Հիշյալ ցանկից այսօր շատերը չկան: Նրանք, որպես բեյլանցի, իրենց գոյության ամենադժվար պահերին օգնեցին իրար՝ որպես մեկ ընտանիքի անդամներ: Կցանկանայինք, որ նրանց սերունդն էլ այդպես լիներ: Դժբախտաբար, նոր սերնդից շատերի մոտ այդ սրբությունը պակասում է, քայքայվում են բեյլանցու նահապետական սովորությունները, սրտի անաղարտությունը և խնքնությունը: Բեյլանցիները տարրաժանվում ու հեռանում են իրարից: Բեյլանցին պետք է դիմադրի, վերականգնի իր արժանապատվությունն ու հարգանքը:

Առանձին էջերի վրա տրված են բեյլանցի ակնառու հոգևորականներ Ներսես Արք. Պոզապալյանի (ծնված Գըրըգ Խան) և Բարձ. Տ. Տաճատ Ս. Արք. Ուրֆալյանի (ծնված Բեյլան) լուսանկարները:

«Մեր հերոս մարտիկներէն» վերնագրի տակ հիշվում են Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Հայկական կամավորական լեգեոնին մասնակցած բեյլանցիներից մի քանիսը. Հովհաննես Պողոսյան՝ հետագայում Բեյլանի քահանան, Հակոբ Բահարյան, Պողոս Փալասյան, Կարապետ Թաշչյան, Հովհաննես Խանճյան, Արամ Ղազարյան, Մանուկ, Միսակ և Հովհաննես Պողոսյաններ (երեք եղբայրներ), Կարապետ Հակոբի Բոյաջյան, Պողոս Բոյաջյան, Մարտիրոս Պողոսի Դովլաթյան, Մովսես Հակոբի Դովլաթյան, Սարգիս Ասատուրի Դովլաթյան, Սարգիս Ասատուրի Քեսապլյան[1]:

Ըստ բանկի 12-22-86 թ. տվյալների, միության ունեցած գումարը 6009 դոլար և 55 սենթ է:



1.- Անունների ցանկը համալրված է իմ «Աքսորյալի Գողգոթան» գրքից: Տե՛ս Երևան, 2001 թ. «Զանգակ-97», էջ 38:

## Բ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1987 Թ.

*1987 թ. Նոր Տարվա բացիկում Մարիա Սողանալյանը գրում է.*

*Սիրելիներ, շատ շնորհալ եմ բոլորէդ, որ անարժան անձս արժանի տեսած և վիս յառաջացած տարիքիս ձեզի նախագահուհի ընտրած էք:Երանի թէ երիտասարդ ըլլայի և ձեզի հետ միասին ես ալ աշխատէի: ... Սիրով և շնորհակալութեամբ ստացայ մաս մը ձեր գրութիւններէն, որուն համար իմ խորին շնորհակալութիւնները կը յայտնեմ ձեր բոլորին: Սիրով կը շնորհաւորեմ ձեր Նոր Տարին և Սուրբ Ծնունդը, մաղթելով ձեզ երկար և բարգաւաճ տարիներ:*

*Ձեզ հարգող պէյլանցի Քիւփէլեան ընտանիքէն՝ Մարիա Սողանալեան:*

***Նա մնաց միության Պատվավոր նախագահուհին..., չնայած տարբեր ուղղություններով փչող քամիներին:***

***02-24-87 թ. ՎՆ-ում հիմնադիրներից վարչության մեջ ընդունվեցին. Արմենակ Հեքիմյան, Գրիգոր Դովլաթյան, Սարգիս Գյոզալյան, Մանվել Մարաշյան, ինչպես նաև Սարգիս Խորշիդյան և Սարգիս Ճինպաշյան՝ մինչև առաջիկա մայիսին կայանալիք անդամական ժողովը, որտեղ պիտի կատարվեր վարչության վերընտրությունը:***

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ-ՀՈԳԵՃԱՇ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

***Վարչության կազմակերպած հաջորդ ձեռնարկը եղավ 1915 թ. բեյլանցի և բոլոր հայ նահատակների հիշատակին նվիրված հոգեհանգիստ-հոգեճաշը մայիս 3, 1987 թ.: Հոգեհանգիստը տեղի ունեցավ Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցում*** *(1201 N. Vine St., Hollywood)*, ***իսկ հոգեճաշը՝ Նաիրյան Սրահում (5625 Hollywood Blvd., Hollywood): Հոգեճաշին մասնակցող մոտ 150 ներկաների կրծքերին հոգեհանգիստը խորհրդանշող կրծքանշաններ կային հետևյալ բովանդակությամբ.*** *«Հոգեհանգիստ Մեծ եղեռնի՝ Պէյլանի և գաւառներու նահատակներուն»:*

***Արարողությունը նկարագրել է Նորայր Մելքիսեթյանը.***

*Լուսինէ Զաքարեանի «Սուրբ Սուրբ»ը սրահը կը պարուրէր խորհրդաւոր մթնոլորտով:*

*Տպաւորիչ էր բեմին վրայ կազմած եռայարկանի խորանը՝ սև լաթով ծածկուած: Առաջակողմին ամրացուած էր Պէյլանի Սբ. Սարգիս եկեղեցւոյ հաղորդութեան մասունքներէն երկու կտորներ՝ թուագրեալ 1900-ին:*

*Առաջին յարկին վրայ պետեղուած էր Մեծ Եղեռնը խորհրդանշող 72-ամեակի 72 մոմակալներ, շրջափակուած ձիւնասպիտակ ջուշաններով: Երկրորդ յարկին վրայ պետեղուած էին երկու մոմակալներ 7-ական մոմերով*





*Մեծ եղեռնի հիշատակին նվիրված հոգեհանգստի մասնակիցները:*

և մէկ մոմակալ՝ Պէյլանն ու իր շրջակայ 14 գիւղերն ու շրջակայ քաղաքները պատկերացնող: Խորանին ետեւը կը տեսնուէր հսկայ պաստառ մը հետեւեալ վերտառութեամբ. «Պէյլանի նորակազմ հայրենակցական միութիւնը կ'ոգեկոչէ Մեծ Եղեռնի 1,5 միլիոն նահատակները» ու անոր երկու կողմերին պատէն կախված՝ Հայրենիքի մէջ կառուցուած Յուշարձան-կոթողի և միութեան կերպի նկարները:

Վարչության ատենապետ Նորայր Մելքիսեթեան խորանին վրայ կետեղուած խնկամանի խունկը վառելէ վերջ, վառեց նաև Պէյլանը և 14 գիւղերը ներկայացնող 15 մոմերը, որմէ հետոյ խնդրեց տիկ. Ալիս Իփճեանէն վառելու 7-ամյակը խորհրդանշող 72 մոմերէն առաջինը՝ փոխարինելով իր հօրաքոյրը՝ տիկ. Մարիձա Սողանալեանը, Պատուոյ նախագահուհին Պէյլանի հայրենակցական միութեան: Վարչութեան անդամները և հիմնադիրները ներկայ եղող տարեցները առաջնորդեցին դեպի խորան՝ վառելու մնացեալ մոմերը...:

Օր. Արփի Ճինպաշեան ասմունքեց Մատթէոս Զարիֆեանի «Ծառը»: Խմբովին և յոտնկայս երգուեցաւ «Կիլիկիա» երգը, առաջնորդութեամբ տիկ. Անի Գրիգորեան-Դեմիրճեանի: Կարապետ եղբայր Գնալյեան մատուցեց աղոթքը և օրհնեց հոգեճաշը: Սրտաբուխ նուիրատուութիւններ եղան ննջեցեալներու հոգւոյն և յիշատակին:

**Վարչութեան որոշմամբ հոգեճաշի գլխավոր բանախոսը ես էի:**

Սիրելի հայրենակիցներ,

Այս օրերին Հայրենիքի, թե Սփյուռքի հայությունը հիշատակում են Մեծ Եղեռնի տարելիցը: 72 տարի առաջ, 1915 թ. Երիտթուրքերը որոշեցին աշխարհի երեսից բնաջնջել հայ ժողովուրդը, որը դարերի իր մշակույթով բարիքներ էր բերում համայն հայության, այդ թվում՝ և թուրք ժողովրդին՝ մինչև Երիտթուրքերի արյունարբու նպատակների իրագործման շրջանը, որը սև բիծ թողեց Թուրքիայի և անբուժելի վերքեր ու հիշողություն Հայաստանի պատմության մեջ: Սարսափելի պայմաններում նահատակվեց մեկուկես միլիոն հայ: Երիտթուրքերի կառավարության նպատակն էր ոչնչացնել հայերին և, տիրելով նրանց հողերին ու ունեցվածքին, ընդմիշտ լուծել Հայկական հարցը: Սակայն նրա նպատակները չիրականացան: Ճիշտ է, նա տեր դարձավ հայկական հողերին, բայց հայը գոյատևեց և 1918 թ. Սարդարապատի ճակատամարտում էլ պարտության մատնեց թուրքական 10000-նոց բանակը:

1941-1945 թթ. Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նորից վտանգ կախվեց հայ ժողովրդի գլխին: Թուրքիան անհագ գայլի նման սպասում էր Ստալինգրադի գրավմանը Գերմանիայի կողմից, որպեսզի լրացնի 1915 թ. իր կիսատ թողած գործը հայերի նկատմամբ: Հայկական Թամանյան դիվիզիան մտավ Բեռլին, և հայ մարտիկները դհոլով ու զուռնայով քոչարի պարեցին Ռայխստագի առջև, որը հոյակապորեն նկարահանվել ու պատմության է հանձնվել «Յոթ երգ Հայաստանի մասին» փաստագրական շարժանկարում: Այս մեկը ոչ թե թուրքերի, այլ Հիտլերի մտքովն անգամ չէր անցնի:

Այսօր վերհիշելով Մեծ Եղեռնի նահատակների հիշատակը, աշխատենք պահպանել մեր ինքնությունը օտար ափերում և շարունակենք պայքարը մեր արդար իրավունքների համար՝ Հայաստան-Սփյուռք միասնությամբ:

Այսօրվա հավաքույթը այս սրահում միաժամանակ թելադրանք է նոր սերունդին, որպեսզի նա շարունակի հայ ժողովրդի արդար իրավունքների համար սկսված պայքարը և հասցնի այն հաղթական ավարտին:

Այդ հաղթանակի համար առաջին հերթին պետք է ունենալ քաղաքագետ-դիվանագետներ, որոնք Հայկական հարցը կարողանան ներկայացնել միջազգային ատյաններին:

Ազալով հանդերձ Մեծ Եղեռնը, պայքարի նոր ուղիներ պետք է որոնենք մեր նպատակների իրագործման համար:

Այսօր այս սրահում ուրախ ենք նորից տեսնելու Եղեռնից վերապրողներին, որոնք 72 տարի առաջ իրենց կաշվի վրա զգացին դաժան եղեռնագործությունը:

Մեծ Եղեռնից մազապուրծ հայ ժողովրդի մի մասը սփռվեց աշխարհով մեկ՝ կորացնելով եղած Սփյուռքը և ստեղծելով նորը: Որ երկրում էլ հաստատվեց, այդ երկրի ժողովրդի հետ հայը ստեղծեց ու ստեղծում է բարիքներ համայն մարդկության բարօրության համար:

Այսօր հայ ժողովուրդը հպարտ է ԱՄՆ-ի ամենամեծ նահանգներից մեկի՝ Կալիֆորնիայի նահանգապետ Ճորճ Դոյքմեճյանով, աշխարհահռչակ գրող Վիլյամ Սարոյանով, հայրենի գիտնական՝ Վիկտոր Համբարձումյանով, երգահան՝ Արամ Խաչատրյանով, քաղաքագետ՝ Անաստաս Միկոյանով, ավիակոնստրուկտոր՝ Արտեմ Միկոյանով, Երկրորդ համաշխարհային պատերազմի հերոսներ՝ Նվեր Սաֆարյանով, Հովհաննես Բաղրամյանով, ծովակալ Իսակովով, շարքային Նելսոն Ստեփանյանով, նույն պատերազմում բարձր կոչման արժանացած գեներալներով, Մեծ եղեռնի պատմական վկայությունները հավերժացնող գրող և դիվանագետ՝ Ջոն Կիրակոսյանով, պատմաբան Ռիչարդ Հովհաննեսյանով և ուրիշներով, որոնք Մեծ Եղեռնի սերունդներից գոյատևած հայ ժողովրդի արժանի զավակներն են:

Այսօր մենք գոյություն ունենք, կանք և պիտի հարատևենք, քանի որ մեր նշանաբանն է՝ ապրել հանուն մարդկության բարօրության:

Այսօր ԱՄՆ-ի համալսարաններում ստեղծվում են հայկական ամբիոններ՝ Մեծ Եղեռնի իրականությունը ներկայացնելու համար ամերիկյան, ինչպես նաև աշխարհի ժողովուրդներին, որպեսզի մի նոր եղեռն չկրկնվի մարդկության համար աշխարհի որևէ անկյունում:

Թուրքական կառավարությունը որքան էլ աշխատի կեղծել պատմությունը, վաղ, թե ուշ արդարությունը պիտի հաղթանակի:

Հավերժ հանգստություն Մեծ Եղեռնի նահատակներին, թող նրանց հիշատակը անմար մնա:

Կեցցե՛ն Մեծ Եղեռնից վերապրողները, որոնց սերունդն ենք մենք: Կեցցե՛ մեր Հայրենիքը: Կեցցե՛ հայ ժողովուրդը:

## ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

**Վարչության գործունեությունը շարունակվում էր: Առաջին նիստերը գումարվում էին Նորայրի քրոջ տանը, և ԾԿ-ի կետերի շուրջ ստեղծված վիճաբանությունները շատ տհաճություններ էին պատճառում նրա հարազատներին, որոնք համբերությամբ տանում էին դրանք: Այդ ընտանիքը արժանի է գովասանքի: Այնուհետև նիստերը սկսեցինք գումարել «Home Saving» բանկի սրահում:**

**Վարչությունը որոշեց ընդհանուր անդամական ժողով գումարել և վերընտրություն կատարել 1987 թ. մայիսի 17-ին:**

**Ժողովը կայացավ Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցու**

սրահում, որտեղ բացի վարչականներից և Նուբարի ու Նորայրի ազգականներից (ցուցակը արխիվում է) ուրիշ մարդ չկար: Ներկաների թիվը վարչականների հետ միասին 34 հոգի էր:

Միության մեկ տարվա գործունեության մասին հաշվետվությամբ ելույթ ունեցա ես:

Նուբար Մխսի-Գևորգյանը հաշվետվություն ներկայացրեց միության մեկ տարվա եկամուտների ու ծախսերի մասին: Միությունը բանկում ուներ 13163, 65 դոլար: ԾԿ-ն հաստատվեց:

Տեղի ունեցավ վարչակազմի վերընտրություն: Ընտրվելու էր 11 հոգի: Առաջարկեցի 14 հոգու թեկնածություն, որպեսզի եթե չընտրվողներ լինեն, նորից ընտրություն չկատարվի. Նորայր Մելքիսեթյան, Նուբար Մխսի-Գևորգյան, Վահան Բահարյան, Մարտիրոս Էքշիյան, Գևորգ Թերջանյան, Սարգիս Ճինպաշյան, Սարգիս Գյոզալյան, Արմենակ Հեքիմյան, Գրիգոր Դովլաթյան, Մանվել Մարաշյան, Վահան Գևորգյան, Սարգիս Խորշիդյան, Հարություն Դովլաթյան, Հովսեփ Թերջանյան:

Ընտրությունը կատարվեց փակ գաղտնի քվեարկությամբ 34 հոգու մասնակցությամբ: Արդյունքում 3 թեկնածուներ դուրս մնացին վարչությունից: Սարգիս Խորշիդյանը և Հովսեփ Թերջանյանը ոչ մի «կողմ» չստացան, իսկ Վահան Բահարյանը ստացավ 13 «կողմ» ձայն: Բացի Վահան Գևորգյանից, վարչության անդամներից ոչ մեկը չխոսեց, թե ինչո՞ւ անգրագետները ընտրվեցին, իսկ Վահան Բահարյանը դուրս մնաց վարչությունից:

Շնորհավորեցի նորակազմ վարչությանը, հաջողություն մաղթեցի՝ նշելով, որ մի օր արդարությունը կպարզվի: Արմենակ Հեքիմյանը հետագայում միշտ հիշեցնում էր այդ խոսքը, քանի որ արդարությունը, իրոք, հաղթանակեց:

Ըստ Նորայրի գրության,1987 թ. մայիսի 19-ին, երեքշաբթի օրվա ՎՆ-ում կատարվել է պաշտոնների վերաբաշխում.

1. Նորայր Մելքիսեթյան՝ Ատենապետ:
2. Հարություն Դովլաթյան՝ փոխատենապետ:
3. Նուբար Մխսի-Գևորգյան՝ գանձապահ:
4. Գրիգոր Դովլաթյան՝ հաշվապահ:
5. Մարտիրոս Էքշիյան՝ քարտուղար:
6. Սարգիս Ճինպաշյան՝ փոխքարտուղար:
7. Գևորգ Թերջանյան՝ գեղարվեստ. պատասխանատու:
8. Մանվել Մարաշյան, Վահան Գևորգյան, Արմենակ Հեքիմյան և Սարգիս Գյոզալյան՝ խորհրդականներ:

Իրականում, ահա, թե ինչ պատահեց: Վարչության մեջ մեր ունեցած վիճաբանությունները անմիջապես մոռանում էի նիստից



հետո: Դրանք անձնական նպատակներ չէին հետապնդում, այլ վարչության արդյունավետ ու հաջող գործունեության համար էին արվում: Բայց, երբ ընդհանուր անդամական ժողովին ներկա եղողներին տեսա, կանխազգացի, որ մեծ սխալ եմ գործել՝ բանի տեղ չդնելով դրանք և, հատկապես, Նուբար Մխսի-Գևորգյանի անպատասխանատու հայտարարությունը, թե ինձ վարչությունից կհանի: Նա միշտ կրկնում էր. «Կա՛մ ես, կա՛մ դու ...»: Բանի տեղ չէի դնում: Չգիտեի, որ նա այդքան սև սիրտ ունի:

Ես չափազանց մեծ ձգտում և էներգիա ունեի ազգային գործունեությամբ զբաղվելու համար, որի ապացույցն է նաև միության ԾԿ-ի գրելը, որի համար աշխատանքից հետո գիշերները նստում աշխատում էի մինչև ժամը 1-2-ը:

Ընդհանուր անդամական ժողովը սարսափելի հարվածեց ինձ: Խիստ վիրավորված հեռացա ժողովասրահից: Անկեղծ ասած, այդ տհաճ երևույթը ճնշել էր ինքնասիրությունս: Շաբաթներ հանգիստ չէի կարողանում քնել: փնտրում էի հանցանքս: Վերջապես մի օր նստեցի ու գրառեցի որոշ մտքեր այդ ժողովի մասին՝ «Անդամական ժողով, թե՞ խեղկատակություն» վերնագրով:

Ժողովը, իրոք, խեղկատակություն էր: Դերակատարների (Նուբար, Նորայր) վերաբերմունքը իմ նկատմամբ «վրեժ լուծել» էր նշանակում, հայրենասիրական գործին վնասատու արարք:

Չնայած մինչ այդ էլ Նորայրը անընդունելի անձնավորություն էր (պատկերանիշի և հուշարձանի նկարները մեծացնելու և այլ հարցերով), այս ժողովում ամբողջականորեն պարզեց դեմքը, Նուբարի մասին՝ չարժե խոսել:

Մի բան հստակացավ: Նուբարը, Ջարեհին համախոհ ունենալով, Նորայրին գործիք էր դարձրել, իսկ վերջինս երկու լարի վրա էր խաղում: Ամենակարևորը այն է, որ մեկ տարվա համատեղ աշխատանքի ընթացքում ես լավ ճանաչեցի նրանց:

Այս ձևով վերջ գտավ մեկ տարվա բուռն ազգային գործունեությունս ՊՀՄ-ի վարչության մեջ: Այնուհետև հաշտվեցի կյանքիս մեջ տեղի ունեցած այդ փոփոխության հետ:

Բայց կյանքը հարուստ է անակնկալներով...:

Նորայրը որպես ատենապետ ամեն ամիս ստանում էր իր 300 դոլարը ՊՀՄ-ի բանկում ունեցած հաշվից, որը ժողովրդի նվիրած դրամն էր միությանը ազգային նպատակների համար: Դրամը վերցնում էր կրեդիտ քարտով (կտրոնները միության արխիվում են) իր և հարազատների մեքենաներին բենզին լցնելու: Սրանով հանդերձ, Նորայրը նվիրված աշխատեց միության հիմնադրման համար, որն առավել գնահատելի կլիներ, եթե աններելի արարքներ

թույլ չտար ընդհանրապես:

Նորակազմ վարչության գործունեության մասին գրվում է արխիվային նյութերի տվյալների և վարչականների կողմից տրված փաստական տեղեկությունների հիման վրա:

Իր մեկ տարվա գործունեության ընթացքում Նորայր Մելքիսեթյանը կասկածելի տպավորություն թողեց վարչականների մեծ մասի վրա: Այդ է վկայում նորընտիր վարչության երեքշաբթի, մայիս 19, 1987 թ. առաջին նիստի արձանագրության 6-րդ կետը.

6. Վարչության բոլոր անդամների համաձայնությամբ որոշվեց հետևյալ օրինաչափությունը. այսուհետև միության կարիքների համար դրամարկղից (բանկայից) դրամ ստանալու համար (նախապես վավերացված վարչական նիստում) չեքի վրա պետք է լինի 3 (երեք) ստորագրություն՝ ատենապետի, քարտուղարի և գանձապահի: Այլ ստորագրություններ համարվում են ապօրինի: Բացառություն են կազմում հատուկ դեպքերը, ինչպիսին են հիվանդության, քաղաքից բացակայության և այլ նման պատճառներ:

Հայրենիքին նվիրվելը և ազգային գործունեության մեջ մխրճվելը դյուրին չէ: Երբ այդ «ախտը» մտավ մեջդ, դառնում ես անբուժելի հիվանդ, կյանքդ, հոգիդ, մի խոսքով, նվիրում ես: Այդպիսիներին «խենթ» են անվանում: Ճիշտ է: Եթե մարդ խենթ չլինի, տուն-տեղ, ընտանիք, գործ թողած, կկպնի՞ դրան:

Այդ նվիրաբերումով կառուցվեց ԲՀԿ-ն Հայաստանում, մարդիկ շարունակեցին իրենց նվիրվածությունը ԲՀԿ-ին և Հայրենիքին: Պատմության մեջ միայուն է Հայրենիքը, որի համար մեր նախնիք պայքարել են դարեր շարունակ: Պատկերացրեք, թե որքան դժվար է այն ձեռք բերվել: Հայրենիքի անկախության պահպանումը ազգի պարտականությունն է:

Այս մտորումները առաջացան, երբ կարդացի Երևանից ուղարկված ԲՀԿՀ-ի նախագահ Անդրանիկ Դովլաթյանի ապրիլ 1, 1987 թ. նամակը Գրիգոր Դովլաթյանին հասցեագրված:

Անդրանիկը, որպես զբոսաշրջիկ, Երևանից գնացել է Հալեպ, հանդիպել 40-50 տարի առաջ բաժանված բարեկամներին և, երբ այցելել է Թարթուս նավահանգիստը, հին հիշողություններ է արթնացել մեջը, թե ինչպես 1939 թ., մեր բնօրրան Սանջաքից բռնագաղթելով, հայ ժողովուրդը 20-25 օր մնաց Թարթուսի ձիթենիների ու թզենիների տակ, հետո շարունակեց իր ճանապարհը դեպի Բեյրութ, ապա Սուր (Tir)՝ օտարանալով իր Հայրենիքից:

Հալեպում նա պատմում է Հայաստանում ԲՀԿ-ի կառուցման, Լոս Անջելեսում Արմենակ Հեքիմյանի և Գրիգոր Դովլաթյանի կատարած հանգամանկության, ՊՀՄ-ի ստեղծման ու նրա գործունեության և ԲՀԿ-ի բարեկարգման աշխատանքներին իր նյութականով մասնակցելու մասին: Այս կերպ նա ոգևորում է հայրենա-



կիցներին, որոնք հավաքվում, ժողով են գումարում ու որոշում են Հալեպում ստեղծել ՊՀՄ, որի մասին Անդրանիկը տեղյակ չէ, որովհետև հաջորդ ժողովը նշանակված թվականից առաջ ինքը վերադառնում է Երևան: Նա լավատեսորեն էր տրամադրված Հայրենիքի նկատմամբ.

...Հույսով ենք, որ շատ-շատ լավ պետք է լինի մեր Հայրենիքը մոտ օրեն, և աշխարհի ամենից լավ երկիրը՝ ապրելու համար:

Նա ականատես է եղել Հալեպից 400 ընտանիքի ցուցակագրման՝ Հայաստան տեղափոխվելու համար, և մեծ ուրախություն էր ապրում դրանով, իսկ մյուս կողմից «ապերախտներ» էր անվանում Հայրենիքից հեռացողներին՝ ... Այս ժողովուրդը չի սթրվի ու միշտ ջատին վազելով, քիչն էլ կկորցնի: ... Մարդիկ նյութապաշտ են դարձել, և նրանց Ամերիկայի հետ Կանադան էլ տան, չեն կշտանա:

Նա արտահայտում էր իր սրտի մորմոքը: ԲՀԿՀ-ից հուշարձանի նկարով տպագրված հրավիրատոմս էր ուղարկվել ՊՀՄ-ի վարչության անդամներին առանձին-առանձին.

ու

ՀՐԱՎԻՐԱՏՈՄՍ

Հարգելի ընկ. (վարչության անդամի անուն-ազգանունը),

Հրավիրում ենք Ձեզ մասնակցելու Կիլիկիայի Բեյլան քաղաքի և նրա գավառների 1909-15 թթ. հայ նահատակների հիշատակը հավերժացնող ավանդական հավաքին:

Արարողությունը տեղի կունենա Էջմիածնի շրջանի Ոսկեհատ ավանում, հուշարձան-կոթողի մոտ 1987 թ. սեպտեմբերի 6-ին, ժամը 1-ին:

Արարողության կարգադիր հանձնաժողով:

ԲՀԿՀ-ն երկու նամակներ է ուղարկել միության անունով:

Առաջին նամակը, թվագրված է օգոստոս 20, 1987 թ., որի մեջ նա, նշելով Մարտիրոս Գյոզալյանի աշխատանքը ի նպաստ հուշարձանի՝ ջրավազանի կառուցում և հուշարձանի տարածքի բարեկարգում, խնդրում է ՊՀՄ-ի վարչությանը նրան ընդունել վարչության մեջ: Երկրորդով՝ թվագրված հոկտեմբեր 13, 1987 թ., վարչությունից խնդրում է նյութական օգնություն՝ հուշարձանի 200 մետր ճանապարհը ասֆալտապատելու և շրջակայքի կանաչապատման (նոր ծառեր տնկելու) համար:

Վերոհիշյալ նամակները մի անգամ ևս ցույց են տալիս, որ ՊՀՄ-ն սերտ կապեր ուներ Հայաստանի ԲՀԿՀ-ի հետ, ի հեճուկս Նուբար Մխսի-Գևորգյանի, Զարեհ Պալյանի և Մարտիրոս Էքշիյանի, որոնց միջոցով Հայաստանի հայրենակիցների հետ հարաբերություն ստեղծելու մասին կետերը հանված էին ԾԿ-ից, և կատարվածը փաստորեն ԾԿ-ի խախտում էր:

Շահավետությունից ելնելով ընթերցողի ուշադրությանն ենք

հանձնում սույն թվականին «Հայրենիքի Ձայն» շաբաթաթերթում լույս տեսած վաստակավոր լրագրողուհի Մելրանուհի Գեղամյանի «Բեյլանցիների հավաք» հոդվածը:

## ԲԵՅԼԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՎԱՔ

Խմբագրությունում հրավեր ստացվեց սեպտեմբերի առաջին կիրակի օրը մասնակցել Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում կայանալիք բեյլանցիների հավաքին:

Խոստացա գնալ: Սիրում եմ մասնակցել հայրենակիցների հավաքներին, սիրում եմ նայել ծննդավայրի հուշերով ու կարոտով միավորված, մեծ ընտանիք հիշեցնող խմբերին, երկարամյա մտերիմների պես ողջագուրվող տարեց ու երիտասարդ մարդկանց... Եվ հետո, նման հավաքներում միշտ կարող ես հայտնություններ անել, հանդիպել մարդկանց, որոնցից յուրաքանչյուրի ճակատագիրը մի ստվարածավալ վեպի նյութ կարող է լինել: Բեյլանցիների մեջ էլ կարող են հանդիպել նմանները. չէ՞, որ Բեյլանն էլ, որը գտնվում էր պատմական Անտիոքը Կիլիկիային կապող ճանապարհին՝ Ալեքսանդրետ քաղաքի մոտ, կիսեց նույն ճակատագիրը, ինչ հարևան Ադանան, Այնթապը, Մարաշը... Քաղաքը և նրա շրջակա մոտ յոթ-ութ հայաբնակ գյուղերը քանիցս ենթարկվեցին կոտորածի ու բռնագաղթի:

Գրավոր աղբյուրները տեղեկացնում են, որ 20-րդ դարի սկզբին Բեյլանն ուներ ավելի քան 1500 հայ բնակիչ: 1909, ապա 1915 թվականների հայկական ջարդերից հետո այն ամբողջովին ամայացավ: Հրաշքով փրկվածները ապաստան գտան Հալեպում, Բեյրութում և այլուր: Սակայն 1920 թվականից հետո, երբ Ալեքսանդրետի գավառը մտցվեց Ֆրանսիայի խնամակալության ներքո գտնվող Սիրիայի կազմի մեջ, բեյլանցիները շտապեցին վերադառնալ իրենց գեղեցիկ, բյուրակն հայրենիքը: Բայց նրանց բաժին էր ընկել կրկնակի ողբերգություն: 1939-ին Թուրքիան կրկին կավթեց Ալեքսանդրետի գավառը, և տեղի շուրջ 40000 հայեր, որոնց թվում և բեյլանցիները, հարկադրված էին դարձյալ գաղթել Սիրիա և Լիբանան...

1946 թ. բազմաթիվ բեյլանցիներ հայրենադարձվեցին Սովետական Հայաստան և հաստատվեցին նրա պանայան շրջաններում ու գյուղերում: 15-20 ընտանիքներ էլ տեղավորվեցին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում...

***

Աշնան առաջին կիրակին անձրևոտ սկսվեց... Ոսկեհատ գյուղի ծայրին գտնվող գեղեցիկ, ընդարձակ պուրակը դեռ մարդաշատ չէր, ցեղասպանությանը զոհ գնացած բեյլանցիների հիշատակին կանգնեցված հուշարձանը դեռ ծանրաբեռ չէր ծաղիկներով...

– Մի՞թե անձրևը կխանգարի, – մտահոգվեց տարեց բեյլանցիներից մեկը:

– Չէ՛, ի՞նչ ես ասում, – առարկեց մյուսը, – անձրևն ի՞նչ է, որ վախեցնի բեյլանցիներին:

Այո, անձրևը չէր կարող խանգարել. մարդկանց համար այդ օրը նվիրական էր դարձել. սպասում են, նախապատրաստվում, ծննդավայրի համեղ կերակուրներ պատրաստում: Պիտի ուտեն միասին, ուրախանան, հիշողություններ կիսեն, նոր հանդիպումներ ծրագրեն... Այդպես է 1975-ից՝ բեյլանցիների առաջին հավաքից ի վեր:



– Այո, առաջին հավաքը 1975 թվականին էր, – վերհիշում է հավաքի նախաձեռնողներից մեկը՝ Անդրանիկ Դովլաթյանը: – Մեր հայրենակից Ռաֆայել Վրթանեսյանը առաջարկեց հայրենիքում հուշարձան-կոթող կանգնեցնել եղեռնին զոհ գնացած բեյլանցիների հիշատակին: Անմիջապես ոգևորվեցինք, հանձնախումբ կազմեցինք՝ Ժիրայր Քյուփելյանի գլխավորությամբ: Դիմեցինք մեր հայրենակից ճարտարապետ Կարո Վահանյանին, նա սիրով համաձայնեց ստանձնել հուշարձանը նախագծելու աշխատանքը: Էջմիածնի շրջանի ղեկավարությունն էլ ընդառաջեց մեր խնդրանքին և այս տարածքը հատկացրեց հուշարձանի համար:

Գեղեցիկ մտահղացված կարմրատուֆ հուշարձանը բացվեց 1975 թ. սեպտեմբերին: Ամեն բեյլանցի մի ծառ տնկեց հուշարձանի տարածքում: Հիմա ծառերը մեծացել են, նախկին չոր, ամայի տարածքը վեր է ածվել գեղեցիկ կանաչ գոտու[1]:

– Այս ամենը մեր ձեռքերով ենք ստեղծել, – կրույցին միանում է մի այլ բեյլանցի՝ Ասատուր Գյոզալյանը, – Սփյուռքում ապրող մեր հայրենակիցներն էլ շատ օգնեցին: Նրանց աջակցությամբ կարողացանք ցանկապատել հուշակոթողի տարածքը, ջրավազանը կառուցեցինք: Բայց անելիքներ դեռ շատ ունենք, ուզում ենք, որ ամեն ինչը տեղին լինի:

Մինչ նրանք պատմում էին արածների ու ապագա ծրագրերի մասին, պուրակը մարդաշատ էր դարձել, ու դեռ շարունակում էին գալ նորանոր խմբեր՝ ամենափոքրիկներով և տարեցներով, հարսներով ու փեսաներով... Զրուցակիցներս հեռվից ներկայացնում էին. Քեշիշյաններն են, Բահարյանները, Հարությունյանները, Վրթանեսյանները, Քյուփելյանները...

Եվ հուշարձանը ծածկվեց հայաստանյան բազմերանգ ծաղիկներով... Հավաքի մասնակիցները սիրով լսեցին Ասատուր Գյոզալյանին և Անդրանիկ Դովլաթյանին, հետո պուրակը լցվեց խոսք ու զրույցով, երգ ու ծիծաղով, արտասանություններով, հարազատ Բեյլանի չխամրող հիշողությունները հոգում պահած, ջարդի ու գաղթի մղձավանջը ապրած Սողոմոն Հարությունյանի պատմություններով (նա հենց այն մարդկանցից է, որի կյանքը իսկապես ստվարածավալ վեպի նյութ կարող է լինել), փոքրիկների ճիչ ու աղաղակներով:

Ի՜նչ լավ, բարի ավանդույթ եք հիմնել, սիրելի բեյլանցիներ, մուսալեռցիներ, եդեսացիներ, վանեցիներ, հաճընցիներ, կեսարացիներ, քեսաբցիներ...

Այո, աշնան առաջին կիրակին ամպամած ու անձրևոտ սկսվեց, բայց այն լուսավոր ու տաքուկ թվաց ծննդավայրի հուշերով ու կարոտով միավորված մարդկանց ջերմությունից, օջախների վրա եփ եկող ազգային կերակուրների բույրերից, մարդկային հարազատության և ազգային անմահության զգացումներից...

Հոդվածը կարդալուց հետո սիրտս մղկտաց: Հայրենիք ներգաղթել, ծաղկեցնել, հուշարձան կառուցել, հույս ու հավատքով, երջանիկ ապրելու երազանքով սնվել, Հայրենիքը հզորացնելու ու հայի երազանքները իրականացնելու, բնօրրանները վերադարձնելու վեհ գաղափարով կոփվել, Հայրենիքին, որպես սրբության, փարել, հայի ոգով թրծվել և բոլոր ուժերը ներդնել նոր սերունդին

---

1. 1999 թ. Հայաստան-Սփյուռք համաժողովին մասնակցելիս, այցելեցի հուշարձանը, որտեղ ոչ մի կանաչ ծառ, նույնիսկ, չոր կոճղ չէր մնացել (Վ. Բ.):

ես այդ ոգով թրծելու, և հանկարծ ամեն ինչ փուլ գա և Հայրենիքը լքելով, նորից ցիրուցան լինես դեպի օտար ափեր ու գոյության վերջ տաս ուծացումով...: Սա ի՞նչ ճակատագիր է, Տե՛ր Աստված: Մի՞թե հայն իրավունք չունի իր Հայրենիքում հանգիստ ապրելու: Անկախության հետ միասին դժբախտությունն էլ գրկելով և հոծ բազմությամբ արտագաղթելով Հայրենիքի գոյության հարցն էլ հարցականի տակ դրեց: Տե՛ր Աստված, 1700 տարի հավատքդ չալակած և դրա հետևանքով բազմաթիվ գողգոթաներ կրած հային՝ քո հավատքն առաջին ընդունողին, մի՞թե չես կարող փրկել այս փորձանքից ...:

Հետագա տարիներին հուշարձան այցելելու աշխուժությունը աստիճանաբար մարեց բեյլանցիների մեծ մասի արտագաղթով ԱՄՆ: Քիչ բեյլանցիներ մնացին Երևանում, որոնք՝ զրկված ապրուստի և երթևեկության միջոցներից, դժվարանում են այցելել Երևան-էջմիածին գլխավոր մայրուղուց շատ հեռու գտնվող հուշարձան, ուր առանց մեքենայի հնարավոր չէ գնալ, նույնիսկ Ոսկեհատով (նախկին չորրորդ Սովխոզ):

Արտագաղթը ցավալի իրականություն է ոչ միայն բեյլանցիների, այլ՝ համայն հայության համար, քանի որ մարդիկ Հայրենիքում չեն կարողանում նվազագույն չափով ապահովել իրենց ընտանիքի օրական անհրաժեշտ ապրուստը:

Այս տողերը գրելիս (6-06-01) անդրադարձա հայրենի մամուլի վերջին ժամանակների արձագանքներին, որ Հայաստանից արտագաղթել՝ ժամանակավոր հեռացել է շուրջ երկու միլիոն մարդ, իսկ երեկ հեռուստատեսային լուրերով հայտարարվեց, որ Ռուսաստան է արտագաղթել մեկ միլիոն հայ: Եթե, նույնիսկ, ժամանակավոր է այդ արտագաղթը, միևնույնն է, նրանց մեծ մասը չի վերադառնա Հայաստան, որովհետև, երբ արդեն արմատ է գցել այնտեղ ու իր տնտեսական վիճակը որոշ չափով բարելավել, հազիվ ստեղծած իր բարիքները, տունն ու տեղը չի քանդի..., իսկ Ամերիկա արտագաղթածների հարցը՝ կլուծի սպիտակ ջարդը...:

Ի միջի այլոց, Մարտիրոս Էքշիյանը որպես ՊՀՄ-ի վարչության քարտուղար, արձանագրությունները կազմելիս, երբեմն մտորումներ, կարծիքներ ու անհանգստություն է հայտնել որոշ հարցերի շուրջ, որպեսզի հայրենակիցը գաղափար կազմի, թե, ընդհանրապես, ինչպես է աշխատել ու գոյատևել ՊՀՄ-ն:

Այս առումով հունիս 2, 1987 թ. կայացած ՎՆ-ի օրակարգի երկու (3 և 5 կետերի) հարցեր հետաքրքրեցին ինձ.

3. Անդամակցություն:
5. Միության ներքին առանցքային հարցեր:

Որոշվել է.

3. Որոշվեց անդամակցության սկզբնակետը համարել 1987 թ. մայիսի



17-ը (վերընտրական ընդհանուր ժողովի օրը) և ..., համաձայն կանոնադրության, միության անդամ կհանդիսանա այն անձը, որը պաշտոնապես կներկայացնի դիմումնագիր՝ անդամավճարով հանդերձ:

6. Միության ներքին կառույցը: Այս հարցը առաջ քաշվեց Մարտիրոս Էքշիյանի կողմից: Այն անմիջապես առնչված է արձանագրության որոշման -րդ կետի հետ և էությունը հետևյալն է. միությունը, փաստորեն, առանց անդամների գոյություն ունեցավ և գործեց ամբողջ մեկ տարի՝ մշակելով միության ԾԿ-ն, գումարելով ժողովներ և, վերջապես, ուներ իր վարչական կազմը: Ուրեմն, պարզվում է, որ միությունը գոյություն ունի առանց միության անդամների, որը հակասում է ամեն տեսակի օրինաչափության: Ինչպե՞ս կապակցել այս իրողությունը իրականության հետ: Հարցը (ըստ ինձ) մնաց առանց սպառիչ պատասխանի:

Մարտիրոսի հարցը տեղին է: Փորձենք պարզաբանել:

Միությունը ստեղծվեց մայիս 7, 1986 թ., վարչությունը պատրաստեց ԾԿ-ն և իր գործունեությունը սկսեց իրականացնել դրանով (չնայած դեռ հաստատված չէր) մինչև վերընտրության ընդհանուր ժողովը, որի կայացումն էլ դրանով էր պայմանավորված: Հետևաբար, ըստ 3-րդ կետի, եթե անձը ըստ կանոնադրության միության անդամ պիտի դառնա, ապա սխալ է անդամակցության սկզբնակետը համարել մայիս 17, 1987 թ., այն պետք է լինի մայիս 7, 1986 թ.:

6-րդ կետի հարցադրումը, թե միությունը առանց անդամների մեկ տարի գոյություն ունեցավ, նույնպես ճիշտ չէ: ՊՀՄ-ն անդամների առանց անդամակցության գոյություն ունեցավ և մինչև հիմա էլ այդպես է շարունակվում: Անդամակցությունը, հատկապես, մեր՝ ՊՀՄ-ի համար, դժվարագույն լուծվող հարցերից մեկն է, որովհետև նրա անդամները հիմնականում Հայաստանից են արտագաղթել, և «անդամակցություն» բառը խրտնեցնում է նրանց, քանի որ նրանք պարտավորվում են վարչության կողմից հաստատված որոշ անդամավճար վճարել միության, որին սովոր չեն: Բայց միության եկամուտները մինչև այսօր էլ այդ ոչ-անդամակցած անդամների նվիրատվություններով է գոյանում: Հետևաբար, տվյալ դեպքում միությանը անդամակցությունը ձևական բնույթ է կրում: Բացի այդ, անդամակցությունը իրականացնելու համար կազմակերպչական հսկայական աշխատանք է պահանջվում՝ նամակներ, ծրարներ, ծանուցումներ, և այլ՝ անդամներին հետաքրքրող հարցերի վերաբերյալ գրություններ պատրաստել և հեռաղականորեն ուղարկել նրանց (հեռախոսային և այլ ընկերությունների նման), որից հետո կարելի է շատ նյութական միջոցներ ստանալ և ավելի ակտիվ գործունեություն իրագործել: Իսկ այս բոլորի համար առաջին հերթին միությունը պետք է ունենա գրասենյակ իր անհրաժեշտ սարքերով՝ հեռախոս, համակարգիչ

և գրագետ վարչականներ, որոնք ի վիճակի լինեն այդ ուղղությամբ աշխատանքներ կատարել: Ահա՝ ինչու մինչև հիմա էլ միությունը գոյատևում է ոչ-անդամակցած անդամներով:

Հոկտեմբեր 5, 1987 թ. վՆ-ում օրակարգի երկու հարցեր վիճաբանության և տհաճության մթնոլորտ են ստեղծել.

1. Դաշտագնացության ժամանակ տեղի ունեցած դեպքերի քննարկում:

2. Վայնի Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցուն նվիրատվություն:

Որոշման մեջ կարդում ենք.

2. Վայնի եկեղեցուն նախատեսված 1000 դոլարի առաջարկությունը անվերջ և անլուծելի վիճաբանություններ առաջ բերեց: Ի վերջո քվեարկությամբ՝ մեկ ձայնի առավելությամբ առաջարկը դրական լուծում ստացավ:

Արձանագրության «Մանրթագրության» մեջ Մ. Էքշիյանը գրել է իր պարզաբանումներն ու իրեն անհանգստացնող մտքերը.

Դաշտագնացության ընթացքին եղած ծախսերի և եկամուտի տարբերության (պակասորդի) մասին խոսելիս, ժողովում եղան իրար վիրավորող և անվայել արտահայտություններ Արմենակ Հեքիմյանի, Նորայր Մելքիսեթյանի և մասամբ Գրիգոր Դովլաթյանի միջև: Նուբար Միսի-Գևորգյան խիստ վիրավորված համարեց իրեն: 1000 դոլարի նվիրատվության դեմ էի ես (Մ. Էքշիյան):

1000 դոլարի հարցը Մարտիրոսը վերագրում է երկու հոգու, որոնց առաջարկով և քմահաճույքի պարտադրմամբ վարչությունը հապճեպ ընդունել է որոշում, փոխանակ այն լուրջ քննարկելու և հաջորդ ժողովին որոշում կայացնելու, ինչպես ընդունված է վարչության մեջ: Նաև հիմնավորված չէ, թե ինչո՞ւ էր տրվում այդ օգնությունը, երբ, ըստ Մ. Էքշիյանի, նրա կարիքը նույնիսկ չի ունեցել Վայնի Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցին: Այնուհետև նա գրում է, որ Հարություն Դովլաթյանը անվայել արարքներ է թույլ տվել իր նկատմամբ, իր տեսակետների առիթով: 1000 դոլարի նվիրատվության կողմ են քվեարկել՝ Գրիգոր Դովլաթյանը, Նորայր Մելքիսեթյանը, «անգիտակցաբար (կուրորեն) նրանց հարող» Արմենակ Հեքիմյանը, Սարգիս Գյոզալյանը և Հարություն Դովլաթյանը, դեմ՝ Մարտիրոս Էքշիյանը, Սարգիս Ճինպաչյանը, Մանվել Մարաշյանը և Նուբար Միսի-Գևորգյանը:

Հոկտեմբեր 15, 1987 թ. վՆ-ում քննարկվել է Բեյրութի դպրոցներին նյութապես օգնելու հարցը ըստ «Նոր Կեանք»ում[1] լույս տեսած հայտարարության: 2000 դոլար միության ֆոնդից, և 100-ական դոլար որոշ վարչականներ են տվել, ընդհանուր գումարը հասցնելով 2600 դոլարի, որին դեմ է եղել Մ. Էքշիյանը:

Հոկտեմբեր 18, 1987 թ. վՆ-ում Գրիգոր Դովլաթյանը «շատ խիստ նկատողություն» է անում Նորայր Մելքիսեթյանին, միության

1.- Տե՛ս Թիվ 46, Հոկտ. 8, 1987 թ. էջ 16:



դրամները ինքնագլուխ ծախսելու համար, որի առիթը եղել է Սարգիս և Շըրլի Սողանալյանների նկարների և հուշատախտակի համար Նորայրի կողմից ծախսված 500 դոլարը, ինչը չէր համաձայնեցված վարչության կողմից ընտրված հանձնախմբի (Ն. Մելքիսեթյան, Գ. Դովլաթյան և Ս. Ճինպաչյան) հետ: Ս. Ճինպաչյանի առաջարկությամբ որոշվել է հետագայում այդպիսի արարք թույլ տվողներից գանձել դրամը:

1987 թ. միության գործունեության տարեշրջանը փակվում է դեկտեմբեր 24-ին տեղի ունեցած ճՊ-ով՝ Մոնթեբելլոյի Բաղրամյան սրահում, հովանավորությամբ Տաթև Արք. Սարգիսյանի, նախագահությամբ տեր և տիկին Սարգիս և Շըրլի Սողանալյանների, պատվո նախագահուհի՝ տիկին Մարիձա Սողանալյանի և շուրջ 550 հոգու ներկայությամբ:

1988 թ. հունվարի 14-ին «Նոր Կեանք»ում[1] լույս տեսած «Պէյլանի Հայրենակցական Միության ճաշկերույթը» հոդվածում նշված է, որ Սարգիս Սողանալյանը ՊՀՄ-ին խոստացել է 100000 դոլար ի նպաստ նրա համար գնվելիք սրահի ֆոնդին: Տեր և տիկին Սողանալյաններին նվիրվել է հուշատախտակ: Տիկին Մարիձա Սողանալյանին նվիրվել է «... ոսկեայ խորհրդանշան մը (շղթայով միասին), որ կը ներկայացնէր Պէյլանի 14 գյուղերը»:

Ըստ բանկի 12-22-87 թ. տվյալների, միության ունեցած գումարը 3854 դոլար և 22 սենթ է:

1.- Տե՛ս Թիվ 4, Յունուար 14, 1988:



Սարգիս Սողանալյանը շնորհավորում է ՃՊ-ի վարչականներին:



## Գ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1988 Թ.

01-04-88 թ. ՎՆ-ի արձանագրությունից պարզվում է, որ Նորայր Մելքոնյանը Palm Spring-ում հանդիպել է Սարգիս Սողանալյանի հետ: Նա Նորայրին հայտնել է, որ բացի «... խոստացած 100000 դոլարից, պատրաստ է միության հատկացնել հավելյալ գումարներ ըստ կարիքի և անհրաժեշտության»:

Բացի այդ, նա վարչության անդամներին հրավիրել է Մայամի, Ս. Կարապետ վանքի օծման արարողությանը ներկա գտնվելու, ապահովելով նրանց ճանապարհածախսը և կեցության ծախսերը, որը ուրախացրել է վարչականներին:

Վարչությունը որոշում է որոշ ծրագրեր պատրաստել Սարգիս Սողանալյանին ներկայացնելու համար, այդ թվում՝ միությանը կենտրոնով ապահովելու: Իսկ Վահան Գևորգյանին հանձնարարվում է նախապատրաստել ՃՊ-ի լուսանկարների ալբոմը, Մայամիում ազգային բարերարին նվիրելու համար:

1988 թ. մայիսի 3-ի գրություններով Հարություն Դովլաթյանը և Սարգիս Ճինպաշյանը, պատճառաբանելով աշխատանքով իրենց ծանրաբեռնվածությունը, հրաժարվում են վարչության մեջ ունեցած իրենց պարտականություններից և հեռանում են:

1988 թ. Նորայր Մելքոնյանի Մայամիից գրած մի գրությունից երևում է, որ նա սույն թվի հունվարից սկսել է աշխատել Սարգիս Սողանալյանի մոտ որպես նրա գրասենյակի հայկական գործերի կառավարիչ և, եթե որևէ առիթով վերադարձել է Լոս Անջելես, մասնակցել է միության վարչության նիստերին և այլ գործունեությանը:

Փաստորեն վարչությունը առանց առենապետի շարունակել է իր գործունեությունը, հիմնականում, կազմակերպելով 1915 թ. նահատակների հիշատակին հոգեհանգիստ-հոգեճաշ, դաշտահանդես և նախաճաշ ՃՊ: Վերջինս նախատեսված էր ուրբաթ, դեկտեմբեր 23, 1988 թ., սակայն 1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած ահռելի երկրաշարժի պատճառով այն չեղյալ է հայտարարվում:

Այս ձևով է վերջանում միության 1988 թ. գործունեությունը:

Ըստ բանկի 12-27-88 թ. տվյալների, միության ունեցած գումարը 3462 դոլար և 15 սենթ է:

## Դ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 1989 Թ.

1989 թ. ապրիլյան մի երեկո ինձ այցելեցին Գրիգոր Դովլաթյանը և Արմենակ Հեքիմյանը, որոնց չէի տեսել 1987 թ. մայիսի 17-ի վերընտրությունից հետո: Նրանք եկել էին 4-07-89 թ. ՎՆ-ում իրենց հանձնարարված պարտականությունը կատարելու: Գրիգորը տեղակացրեց, որ մեկուկես տարի է ինչ ոչ ատենապետ ունեն, ոչ էլ ատենապետի տեղակալ. «Անկազմակերպ խումբ է, և աշխատանքները շատ են դժվարանում», նույնիսկ, «Tax Return»-ը չի ուղարկված[1], ուստի որոշել են դիմել ինձ, որ վարչության ատենապետությունը ստանձնեմ: Վարչության գործունեության մասին հարց ու փորձից հետո պատասխանեցի, որ կստանձնեմ, եթե.

ա. Նուբար Մխսի-Գևորգյանը, Նորայր Մելքիսեթյանը և Մարտիրոս Էքշիյանը վարչության մեջ չլինեն,

բ. վարչությունը համաձայն է վերանայելու ԾԿ-ն:

Պարզվեց, որ Նորայրը արդեն չկա, Մայամիում է, Նուբարը հեռացել է վարչությունից, իսկ Մարտիրոսը բարեել և ասել է, որ ինքը կխոսի հետը: Ընդունեցին նաև ԾԿ-ն վերանայել: Համաձայնվեցի, որ նոր վարչությունը վերընտրելուց հետո, առաջինը պետք է քննարկվեն ԾԿ-ի որոշ կետեր, որոնք չեն համապատասխանում վարչության գործունեությանը: Այս հարցը առաջնային է:

Համաձայնությունը կայացվեց: 4-14-89 թ. ՎՆ-ում վարչությունը համալրվեց նոր անդամներով: Պաշտոնները վերաբաշխվեցին: Վարչության մեջ մնացել էին 6 անդամներ՝ Մարտիրոս Էքշիյանը, Գրիգոր Դովլաթյանը, Արմենակ Հեքիմյանը, Վահան Գևորգյանը, Մանվել Մարաշյանը և Սարգիս Գյոզալյանը: Հրավիրված էին՝ Վահան Բահարյան, Սարգիս Խորշիդյան, Աշոտ Տեր-Ստեփանյան և Մարտիրոս Գյոզալյան: Քվեարկությամբ բոլորն էլ ընտրվեցին: Մարտիրոս Գյոզալյանը, լինելով Սարգիս Գյոզալյանի եղբայրը, ըստ ԾԿ-ի՝ չէր կարող լինել վարչության անդամ, որին դեմ քվեարկեց Մարտիրոս Էքշիյանը: Վարչականներն էին բերել Մարտիրոս Գյոզալյանին, իմանալով հանդերձ, որ նա չի կարող ընդգրկվել, ըստ կանոնադրության, վարչության կազմում: Հետագայում նա ինքը հեռացավ վարչությունից:

Վերընտրված վարչության կազմը հետևյալն էր:

---

1.- Սույն թվականից սկսած մինչև վարչությունից դուրս գալս (2001 թ.) այն ես եմ հաշվել:



1. Վահան Բահարյան՝ ատենապետ:
2. Գրիգոր Դովլաթյան՝ փոխատենապետ և հաշվապահ:
3. Մարտիրոս Էքշիյան՝ առաջին քարտուղար:
4. Աշոտ Տեր-Ստեփանյան՝ երկրորդ քարտուղար:
5. Արմենակ Հեքիմյան՝ գանձապահ:
6. Մանվել Մարաշյան՝ Գեղ. մասի պատասխանատու:
7. Վահան Գևորգյան՝ խորհրդական:
8. Սարգիս Խորշիդյան՝ խորհրդական:
9. Սարգիս Գյոզալյան՝ խորհրդական:
10. Մարտիրոս Գյոզելյան՝ խորհրդական:

Վարչության անդամների թիվը պետք է լիներ կենտ, ուստի որոշվեց չուտափույթ թեկնածու գտնել: Այնուհետև քննարկման նյութ դարձավ ԾԿ-ն:

Ելնելով անցած տարիների փորձից և վերջին տարիների իրադարձություններից, ՊՀՄ-ի վարչությունը քննարկեց ԾԿ-ի մեջ առաջարկված ներքոհիշյալ փոփոխությունները և միաձայն ընդունեց դրանք:

### ԾՐԱԳԻՐ-ԿԱՆՈՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածական- ԾԿ-ն ենթակա է փոփոխման՝ կախված տվյալ ժամանակաշրջանի պայմաններից և հանգամանքներից, ինչպես նաև վարչության փորձից:

2. Հոդված 42- ՊՀՄ-ն հիմնադրված է հիմնադիր ժողովի 17 անդամների կողմից, որոնք ներկայացնում են ՊՀՄ-ի հայրենակիցների բոլորը խավերն ու բնակավայրերը:

3. Հոդված 6- ՊՀՄ-ի ժամանակավոր հասցեն է.
7310 Kester ave., # 101
Van Nuys, CA 91405

4. Հոդված 8ա- Հայապահպանումը Սփյուռքում (Լոս Անջելեսում և շրջակայքում, ինչպես նաև հնարավորության սահմաններում ԱՄՆ-ում):

5. Հոդված 8ե- Բարեկամական կապերի հաստատում մյուս հայրենակցական միությունների հետ՝ հայ գաղութի միասնությունը ամրապնդելու նպատակով, նաև Մայր Հայրենիքի հետ:

6. Հոդված 12ա- Յուրաքանչյուր տարվա ապրիլ 24-ի առթիվ (ապրիլ 24-ին մոտիկ որևէ կիրակի) կազմակերպել հոգեհանգստյան պատարագ և հոգեճաշ, ոգեկոչելու Մեծ եղեռնում, ինչպես նաև 1988 թ. փետրվարին Սումգայիթում և 1989 թ. Բաքվում նահատակված հայրենակիցների, և 1988 թ. դեկտեմբերի երկրաշարժից զոհվածների հիշատակները:

7. Միության կառուցվածքը.

1. Ընդհանուր անդամական ժողով,

ա. Միության ընդհանուր անդամական ժողովը գումարել 1-5 տարին մեկ անգամ անհրաժեշտության դեպքում կախված տվյալ ժամանակաշրջանի պայմաններից ու հանգամանքներից:

դ. Միության վարչության կողմից վերամշակված ԾԿ-ն ընդունել որպես

ուղեցույց միության հետագա գործունեության համար:

խ. Եթե վարչությունում իր գործունեության ժամանակ չնախատեսված վիճակ է ստեղծվում (վարչության ատենապետը, տեղակալը կամ անդամներից ոմանք հրաժարվում կամ տեղափոխվում են ուրիշ աշխատանքի, կամ չնախատեսված պատճառներով հեռացվում են վարչությունից), վարչության լուծարքից խուսափելու համար, նրա մնացած անդամները վարչության արտակարգ նիստ են հրավիրում և վերականգնում նրա հավասարակշռությունը, դուրս եկած անդամների փոխարեն ընտրելով նորերը:

8.3. Վարչության հերթական նիստերը: Ավելացված է, - Վարչությունում դրված հարցերի համար քվեարկում են միմիայն վարչության անդամները: Հրավիրված հյուրերին իրավունք է տրվում հայտնելու իրենց կարծիքը, բայց քվեարկելու իրավունք չի տրվում:

9. 5. Պատժական միջոցներ: Ավելացված է.

դ. Վարչությունն իրավունք ունի իր և հանձնախմբերի կազմերից հեռացնելու այն անդամներին, որոնք խախտում են ԾԿ-ի օրենքները առանց հարգելի պատճառի և առանց վարչության տեղեկացնելու բացակայում են նրա իրար հաջորդող 3 նիստերից կամ 6 նիստերի՝ 4-ից, առանց իրար հաջորդող և նրանց փոխարինել նոր անդամներով՝ վարչության միաձայն որոշումով:

10.6. Վարչություն: Ավելացված է.

թ. Հասարակական գործիչ:

**Ըստ բանկի 6-22-87 թ. տվյալների, միության ունեցած գումարը 12622 դոլար և 48 սենթ է:**

**Ըստ բանկի 04-26-89 թ. տվյալների, միության ունեցած գումարը 3509 դոլար և 49 սենթ է:**

Փաստորեն, երկու տարվա ընթացքում, միության բանկում ունեցած դրամը փոխանակ ավելանա, մնացել է մեկ քառորդը:

Ապրիլի 23-ին վարչությունը կազմակերպեց հոգեհանգստհոգեճաշ Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցում և նրա սրահում: Հոգեճաշի ժամանակ վերապրողները վառեցին մոմեր:

Ելույթ ունենալով, չեշտեցի այս տարվա յուրահատուկ հիշատակության տարի լինելու հանգամանքը հայ ժողովրդի համար, որովհետև Մեծ եղեռնի վերքերը չսպիացած, նոր Եղեռն տեղի ունեցավ հայ ժողովրդի նկատմամբ Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում (Գանձակ), այնուհետև, բնության սարսափելի աղետը Հայաստանում՝ Սպիտակի երկրաշարժը հայ ժողովրդից խլեց տասնյակ հազարավոր զոհեր և քարուքանդ արեց մեր երկրի ծաղկուն քաղաքները՝ Սպիտակը, Լենինականը (Գյումրի), նրանց շրջանները և մասամբ՝ Կիրովականը (Վանաձոր):

Փաստերը ցույց տվեցին, որ Թուրքը երբեք չի բարեկրթվի,



Նրա էության մեջ բարեհնչում է կոտորելու, ավերելու մարմաջը:

Այսօր Հայրենիքում ծանր դրություն է: Մենք պետք է շարունակենք օգնությունը, որպեսզի նա կարողանա վերականգնել Հայաստանի քայքայված տնտեսությունը:

Ներկաների կողմից եղան նվիրատվություններ միությանը՝ իրենց նահատակների հիշատակին:

Այս միջոցառումը մի անգամ ևս կոփեց ներկաների ոգին՝ հարատևելու և իրենց լուման չխնայելու Հայ դատի իրավունքների արդար լուծման պայքարում:

Միջոցառման մասին լույս տեսավ Մարտիրոս Էքշիյանի հոդվածը, ինչպես նաև վերընտրված վարչության կազմի մասին՝ հայտարարությունը մամուլում[1]:

Միության կազմակերպած դաշտահանդեսը տեղի ունեցավ շաբաթ, սեպտեմբեր 3-ին՝ Նորթ Հոլիվուդի Մակնոլիա զբոսայգում: Ներկա էին հայտնի արվեստագետներ՝ Աննա Նշանյանը ամուսնու հետ, Հարություն Ֆոդուլյանը ընտանիքով ու ծնողներով, ելույթների համար Լոս Անջելեսում գտնվող հայրենի արվեստագետներ՝ ռեժիսոր Ներսես Հովհաննեսյանը, անվանի դերասաններ Ռաֆայել Քոթանջյանը և Աշոտ Ղազարյանը, որոնց հայրենասիրական ելույթներն էլ ավելի աշխուժացրեցին դաշտահանդեսի մթնոլորտը՝ ստեղծելով իսկական տոնական օր:

Դաշտահանդեսի մասին հոդված լույս տեսավ մամուլում:

ՃՊ-ն նշանակված էր դեկտեմբերի 16-ին Եփրեմյան սրահում, որի եկամուտը պիտի հատկացվեր Հայաստանի 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից տուժածների ֆոնդին: ՃՊ-ի հովանավորներն էին Սարգիս և Շըրլի ու Մարիձա Սողանալյանները, իսկ նախագահողը՝ Կարո Սողանալյանը:

ՃՊ-ն տեղի ունեցավ 235 հայրենակիցների ներկայությամբ: Տեր և տիկին Սարգիս և Շըրլի ու Կարո Սողանալյանները չէին կարողացել գալ՝ անհետաձգելի գործերի հետևանքով, իսկ Պատվավոր նախագահուհի Մարիձա Սողանալյանը ներկա էր: Ներկա էին նաև մի խումբ արվեստագետներ՝ Կարպ Խաչվանքյան, Մելանիա Աբովյան, Հարություն Ֆոդուլյան, Շավարշ Մանուկյան (վարչությունը ընդառաջեց Մանվել Մարաշյանի ցանկությանը՝ հրավիրելով Կարպ Խաչվանքյանին, Մելանիա Աբովյանին՝ երկու հոգի և Շավարշ Մանուկյանին՝ երկու հոգի, ընդամենը հինգ, որ ոչ մի ՀՄ չէր անում):

---

1. Տե՛ս «Հայ կյանք» թիվ 34, Յունիս 2, 1989, էջ 31, ինչպես նաև «Նոր Օր», Ուրբաթ, Յունիս 2, 1989:




Դաշտահանդեսում: Ձախից աջ. նստած՝ Վահան Բահարյան, Հարություն Ֆողուլյան, Ռաֆայել Քոթանջյան, Ներսես Հովհաննեսյան և Անոան՝ Հայաստանի աղետյալ շրջանից: կանգնած ձախից՝ Մարտիրոս Էքչիյան:

Ներկաները մեծ խանդավառությամբ ընդունեցին Մարիձա Սողանալյանին և արվեստագետներին:

Մեջբերվում են որոշ հատվածներ ճԳ–ի մասին, «Նոր Օր Եռօրեայ»ում՝ լույս տեսած Վարուժան Գրաճյանի հոդվածից.

Յարութիւն Ֆոդուլեան իր ողջոյնի խօսքին մէջ յատկապէս ըսաւ, - Որքան որ կը ջանանք քայլ պահել արդիականացումի հետ, պէտք չէ մոռնանք մեր նախապետական սովորութիւնները: Այսօր Ս. Յակոբի տօնն է, - յիշեցուց ան, եւ հրաւիրեց բոլոր Յակոբները ոտքի կանգնիլ, եւ առաջարկեց ներկաներուն՝ հաւաքականօրէն շնորհաւորել կանոնք ծափողջյուններով:

Խօսեցաւ Պէյլանի Հայրենակցական Միության ատենապետ Պրն. Վահան Պահարեան, - Դժուար է այս օրերուն ուրախանալ ու կուսարձանալ երկրաշարժի տարելիցին, ու մանաւանդ Արցախի եւ Հայաստանի վերջին օրերու իրադարձութիւններուն ազդեցութեան տակ: Մեր կամքը աննկուն պէտք է ըլլայ, սակայն, եւ ամէն հայ հնարաւորութիւններու իր սահմաններուն մէջ պէտք է օգնէ Հայաստանին, աւելի ուժեղ ու միասնական հայրենիք մը կերտելու համար: Այսօր, հայկական պահանջատիրական հարցը մէջտեղ դրուած է ոչ թէ մասնակիօրէն, այլ իր ամբողջութեամբ, քանի որ Հայաստանի կառավարութիւնը քննարկման նիւթ դարձուցած է նաեւ մեր ձեռքէն ապօրինի կերպով խլուած Կարսի, Արտահանի, Վանի և հայկական մնացեալ հողերու հարցը: Կեցցէ՛ մեր երիտասարդ սերունդը, որ իր ուսերուն վրայ է առած վերջին տարիներու դժվարութիւնները, ցուցաբերելով աննկուն կամք

1. Տե՛ս Ուրբաթ, Յունուար 5, 1990, էջ 8:



պայքարելու եւ յաղթելու համար:

Տիկ. Մարիձա Սօղանալեան իր սրտի խօսքը արտասանեց. ուրախ եմ տեսնելով բոլորդ հայրենիքի կողքին, եւ իմանալով, որ ճաշկերոյթի հասոյթը պիտի յատկացուի մեր աղէտեալ քաղաքներու վերաշինութեան: Ձեզի համար ալ տղաս՝ Սարգիսը ջօջափելի նուիրատուութեամբ սրահ-հաւաքավայր մը կառուցանել պիտի տայ:

ՊՀՄ-ն օրուան հասոյթէն 1000 դոլար նուիրեց Հայաստանի օգնութեան՝ Medical Outreach-ի միջոցաւ:

Այստեղ երկու դեպքեր արժանի են հիշատակության.

1. Սարգիս Սողանալյանը մոր հետ ուղարկել էր նախորդ պարահանդեսում միությանը խոստացած 100000 դոլարի չեքը: Երբ տիկին Մարիձան վերջացրեց իր խոսքը և պատրաստվում էր չեքը նվիրել միությանը, Գրիգոր Դովլաթյանը վազելով գնաց նրա մոտ, որպեսզի չեքը հանձնվի իրեն:

2. Սողանալյան ընտանիքին նախատեսված լուսանկարի ալբոմը Մարիձային նվիրեցին Վահան և Ալիս Գևորգյանները:

Երկու դեպքում էլ, անկախ այն բանից, թե ե՞րբ և ո՞ւմ ատենապետության ժամանակ է կատարվել նվիրատվությունը կամ պատրաստվել լուսանկարների ալբոմը, քաղաքակրթված երկրներում գործում է մի տարրական, պարզ օրենք և «պատշաճություն» խոսքը, որ յուրաքանչյուր պաշտոն ունեցող անձ պետք է իմանա դրանք և իր պարտականությունները ըստ այնմ կատարի: Կարծեմ, հարցը պարզ է, որ ատենապետի ներկայության դեպքում, բացի նրանից ոչ մեկը իրավունք չուներ չեք ստանալու կամ ալբոմ նվիրելու՝ ո՛չ Գրիգորը, ո՛չ էլ Գևորգյանները: Սա տգիտությունից է առաջ գալիս: Մյուս կողմից, լուսանկարների ալբոմը պատրաստելու դրամը՝ 400 դոլար, վճարված էր Վահան Գևորգյանին վարչության կողմից 5-03-88 թվի # 207 չեքով, հետևաբար այդ ալբոմը տրված պիտի լիներ վարչությանը և Մայր Մարիձային պետք է հանձներ ատենապետը:

Այսպիսի մոտեցումները բերում են փոխադարձ անհարգանքի, որի հետևանքները լավ բան չեն խոստանում:

Առածն ասում է՝ ճշմարտությունը աստղի գլուխը ծակ է լինում: Իմ ամբողջ գործունեության ընթացքում ասելով ճշմարտությունը շատ հակառակորդներ վաստակեցի, բայց, այնուամենայնիվ, երբեք չեմ ափսոսում՝ զգալով հանդերձ, որ ինձ նոր դժվարություններ են սպասում այդ հարցում: Բայց գրքի առաջաբանում խոստացա անաչառ լինել և աշխատում եմ խոստումս պահել, անկախ նրանից, թե ով ինչպիսի հարաբերություն կունենա հետս գիրքը կարդալուց հետո:

ճԳ-ից հետո վարչությունը որոշեց պատվել Մայր Մարիձա-



Հուշանկարչություն։ Ձախից աջ. առաջին շարք. նստած՝ Արմենակ Հեքիմյան, Ռեպեկա Գասպարյան, Մարիձա Սողանալյան, Վիկտորիա Գյոզալյան։
երկրորդ շարք՝ Վահան Բահարյան, Մարտիրոս Էքշիյան, Ալիս և Վահան Գևորգյաններ, Սարգիս Գյոզալյան։

յին բեյլանցու ավանդույթով՝ տան պայմաններում։ Վարչականներով հավաքվեցինք Վահան և Ալիս Գևորգյանների տանը (Canoga Park) և մեր համեստ սեղանով՝ բեյլանցու ավանդական ճաշերով պատվեցինք Մայր Մարիձային։ Հաճելի հանդիպում էր՝ լավ հիշողություններով։

Մայր Մարիձային ուղեկցեցինք դեպի օդանավակայան։

1990 թ. Նոր Տարվա և Ս. Ծննդի առթիվ վարչությունը շնորհավորական բացիկ ստացավ Մայր Մարիձայից, որտեղ նա իր շնորհակալություններն էր հայտնում Լոս Անջելեսում իրեն տրված հարգանքի ու պատվելու համար։

Ըստ բանկի 12-26-89 թ. տվյալների, միության ունեցած գումարը 7177 դոլար և 94 սենթ է։



## Ե. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1990 Թ.

Նորից վերադառնանք ՃՊ-ին։ Տիկին Մարիձայի հետ եկել էր նաև Սարգիս Սողանալյանի աշխատողներից մեկը՝ Թոնի անունով, որը հավանաբար մամային ուղեկցելով հանդերձ, ունեցել էր նաև հատուկ առաջադրանք բերված չեքի կապակցությամբ։ Նա խնդրեց չեքը չմանրել մինչև Մայամիից չզանգահարեն ու չասեն այդ մասին։ Այդ պահին սկսեցի կասկածել, որ մենք դժվար թե ստանանք այդ չեքի գումարը։ Հարցը քննարկվեց ՎՆ-ում։ Վարչականների մեջ ընդվզում առաջացավ։ Արմենակ Հեքիմյանը առաջարկեց չեքը դնել միության բանկի հաշվի մեջ, Սարգիս Գյոզալյանը առաջարկեց թերթում հոդված գրել և խայտառակել Սարգիս Սողանալյանին, և այլ ոչ-պիտանի առաջարկներ։ Իհարկե, յուրաքանչյուրն արտահայտում էր միտքը ըստ իր հասկացողության սահմանի։ Սակայն տրամաբանական ելք առաջարկող չեղավ, միայն մտածում էին վատություն անելու մասին, կարծեք, թե դրանով նշված դրամը պիտի մտներ միության քսակը։ Բացատրեցի և համոզեցի նրանց, որ եթե չեքը բանկ դնենք, ապա մի քանի դոլար տուգանելու են Սարգիս Սողանալյանին՝ բանկում իր հաշվում տվյալ գումարը չունենալու համար, կամ թերթում խայտառակելով նրան, միությունը ի՞նչ պիտի շահի, ավելի լավ է չեքը ետ ուղարկել նրան, և հարցը փակված համարել։ Առաջարկն ընդունվեց։ Չեքի հետ նամակ ուղարկեցի Սարգիս Սողանալյանին՝ թվագրված 3-31-90 թ., որի չեքին վերաբերող մասը մեջբերում եմ.

... Վարչությանը ուրախացրեց նաև ձեր ուղարկած 100000 դոլար չեքի հայտարարությունը ՃՊ-ի ժամանակ։ ՃՊ-ի հաջորդ օրը (կիրակի), երբ ուղեկցում էինք մամային դեպի Մայամի, օդանավակայանում Թոնին ասաց, որ չեքը չմանրենք, մինչև որ ինքը չզանգահարի Մայամիից ու չասի այդ մասին։ Այս հարցը մեզ մի քիչ անհանգստացրեց, որովհետև մամուլը, հեռուստատեսության ծրագրերը և ժողովուրդն իմացան այդ մասին։ ...

Հասկանալով և մտնելով քո կացության մեջ, որ ներկայումս հնարավորություններդ չեն ներում վերոհիշյալ գումարը փոխանցել մեր միության հասցեով, վարչությունը որոշեց չեքը ետ վերադարձնել քեզ։

Սիրելի Սարգիս վարչությունը շատ շնորհակալ է քեզանից, որ միշտ հետաքրքրվում ես միությունով և ուզում ես քո հնարավորության սահմաններում օգնել նրան (տե՛ս բնագիրը հավելված էջ 403)։

Քանի որ Մայր Մարիձան հաճախ էր անհանգստացնում տղային, որպեսզի խոստումը կատարի ՊՀՄ-ի նկատմամբ, ենթադրում եմ, որ Սարգիսն էլ մորը չնեղացնելու համար, նրա հետ ուղարկել էր տվյալ չեքը, որի մասին մենք ոչինչ չասացինք

Մարիձայլին: Առայժմ այս ձևով «ազատվեցինք» չեքի գլխացավանքից և հանգիստ շունչ քաշեցինք...: Չնայած չեքը ուղարկեցինք ետ, մեր հայրենակիցները չէին հավատում և կարծում էին, որ վարչությունը թաքցնում է իրականությունը նրանցից:

Ի միջի այլոց որոշ հայրենակիցներ, կասկածելով մեր գործունեության վրա, հաճախ ասում էին. «Եթե որևէ շահ չունեք, ինչո՞ւ եք մնում վարչության մեջ ու ձրի աշխատում»: Նրանք ամեն ինչ դրամի հետ էին կապում: Նշենք, որ վարչության մեջ իմ ատենապետության ընթացքում վարչության դրամը օգտագործելու կամ ծախսելու հարցում ոչ մի տարակուսանք չի եղել, հատկապես, իմ նկատմամբ: Սկսած 1990 թվից մինչև իմ վարչությունից դուրս գալը, չեքերը ստորագրել ենք սկզբում երեք հոգով՝ Արմենակ Հեքիմյանը, Գրիգոր Դովլաթյանը և ես, իսկ Արմենակ Հեքիմյանի հեռանալուց հետո՝ Գրիգորը և ես: Բանկը չէր վճարում, եթե ստորագրություններից մեկը պակաս էր չեքի վրա:

Վարչությունը այնքան մեծ վստահություն ուներ իմ նկատմամբ, որ Գրիգորի ստորագրությամբ մոտս երեքից հինգ չեք էր լինում միշտ, և երբեք չեմ չարաշահել իմ նկատմամբ եղած վստահությունը: Այդ մասին կարող են վկայել իրենք՝ վարչականները:

Անհրաժեշտ է այստեղ նշել, որ վարչությունն իր կապը շարունակեց Սարգիս Սողանալյանի ընտանիքի և անձամբ նրա հետ:

1990 թ. իր մահկանացուն կնքեց Կանադայի Թեմի բեյլանցի առաջնորդը: ՊՀՄ-ի վարչությունը ցավակցություն հայտնեց[1].

Պէյլանի հայրենակցական միության վարչությունը իր խորազգաց ցավակցություններն է հայտնում Կանադայի թեմի հայերին իր հայրենակից՝ Կանադայի Հայոց բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն Արք. Քեշիշյանի (ծնված Բեյլան) վաղաժամ մահվան առթիվ:

Այս ընթացքում վարչությունը սկսեց աշխատանք տանել Տիկնանց հանձնախումբ ստեղծելու ուղղությամբ, որին ընդառաջեցին՝ մայր ու աղջիկ Մարի և Անի Դեմիրճյանները, Արմիկ Դովլաթյանը, Սեդա Կվրյանը և ուրիշներ:

Մեծ Եղեռնի 75-րդ տարելիցի առթիվ ապրիլ 29-ին տեղի ունեցավ վարչության կազմակերպած հոգեհանգիստ-հոգեճաշը: Հոգեհանգստյան արարողությունից հետո սեղանները օրհնվեցին հոգևոր հայրերի կողմից ժրաջան Ավագ քահանա Վարդան Տեր Թաթևոսյանի գլխավորությամբ, վերապրողների մասնակցությամբ մոմավառություն կատարվեց: Մարի Դեմիրճյանը երգեց «Սուրբ-Սուրբ»ը: Իմ բացման խոսքից հետո ելույթ ունեցավ Մարտիրոս Էքշիյանը «1915 թ. Մեծ Եղեռնը» թեմայով, ներկաների

1. Տե՛ս «Նոր Կեանք» Թիվ 18, Ապրիլ 19, 1990:





1990 թ. հոգեճաշի ժամանակ. Ձախից աջ՝ Կարապետ և Վիկտորիա Բոյաջյաններ, Վահան Բահարյան, Մելքոն և Սոնիա Արսլանյաններ, Զարեհ Գալյան, Պերճուհի Ցեմենիճյան (Զարեհի քույրը), Վիկտորիա Գյոզելյան:

մասնակցությամբ երգվեց «Կիլիկիա» հայրենաբաղձ երգը: Ամունքով հանդես եկավ Մարի Թերջանյանը: Ներկաները հոգեկան մեծ բավականություն ստացան և նվիրատվություններ կատարեցին միությանը, իրենց ննջեցյալների հիշատակին:

Ընդհանրապես, արձանագրությունների մեջ որոշ նյութեր կամ հիշատակություններ բացակայում են, բայց իմ կողմից գրված որոշ գրություններ պահպանված են արխիվում: Այսպես, Մանվել Մարաշլյանի առաջարկին ընդառաջելով, 8-10-90 ՎՆ-ի որոշման համաձայն, հետևյալ գրությունը գրեցի.

Հարգելի Լուսինե Զաքարյան և Խորեն Բալյան

ՊՀՄ-ի վարչությունը ողջունում է ձեզ Լոս Անջելես ժամանելու առթիվ և առողջություն ու հաջողություններ է ցանկանում:

Լոս Անջելեսում վարչությունը սատարում է ազգապահպանման գործին:

Այս կապակցությամբ նա կազմակերպում է դաշտահանդես **1990 թ.** սեպտեմբերի **2-ին N. Hollywood-ի Magnolia Park-ում:**

Նիստում քննարկելով դաշտահանդեսի կազմակերպչական հարցերը, վարչությունը որոշում ընդունեց, որի համաձայն դուք՝ տեր և տիկին ընտրված եք այդ օրվա Պատվո հյուրեր: Ուրախ կլինենք այդ օրը ձեզ տեսնել մեր հայրենակիցների մեջ, որ կքաջալերի ինչպես վարչության ձեռնարկը, այնպես էլ դաշտահանդեսին ներկա մեր հայրենակիցներին: Դաշտահանդեսում ձեր ներկայությունը ապահովելու համար վարչության անունից երաշխավորված է Մանվել Մարաշյանը:

Ի տեսություն շուտով:

*Հարգանքներով՝*
*Ատենապետ՝ Վահան Բահարյան:*
*Քարտուղար՝ Մարտիրոս Էքշիյան:*

***Նրանք ներկա չեղան դաշտահանդեսին:***

## ***100000 ԴՈԼԱՐԻ ՁԵՔԻ ԹՆՋՈՒԿԸ***

***Անկախ վարչականների դժգոհությունից չարունակում էր վարչության կապերը Սողանալյանների հետ:***

***Վարչությունը, կազմված լինելով մեծ մասամբ կիսագրագետ և անգրագետ անդամներից, մեծ դժվարությունների առաջ էր կանգնեցնում նրա գործունեությունը որևէ հարցի քննարկման ժամանակ: Անկարելի էր խուսափել վիճաբանություններից, երբ նշված անդամներից մեկն ու մեկի առաջարկը չէր ընդունվում վարչության կողմից: Այդպես եղավ նշված չեքը ետ ուղարկելու հարցի քննարկման ժամանակ, երբ ամեն մեկը ուզում էր հարված հասցնել այն մարդուն, որը քանի-քանի 100000 դոլարի օգնություն է հասցրել Հայրենիք երկրաշարժի ժամանակ, Լոս Անջելեսում իր նյութական օգնության շնորհիվ կառուցվել են «Հարո Սողանալյան», «Մարիցա Սողանալյան» սրահները, տպագրվել գրքեր և օգնել այլ ասպարեզների:***

***Շատ հավանական է, որ ՎՆ-ից ինֆորմացիայի դուրս հոսելու արդյունքն էր նաև Գրիգոր Դովլաթյանի բերած նամակը, որը նրան էր տվել Նորայր Մելքիսեթյանը: Այն մեջբերվում է.***

*Օգոստոս 8, 1990*

*Պատվարժան վարչութիւն*
*Պէյլանի Հայրենակցական Միութեան*
*Լոս Անջելըս:*

*Կիրակի, Յուլիս 29-ին, Պրն. Սարգիս Սողանալեանի հետ հեռաձայնային խոսակցութեան հետեւանքով անմիջապէս կապ պահեցի ձեր Պրն. Գրիգոր Տօէվլէթեանի հետ, որպէսզի շտապ վարչութեան ժողովի կարգադրութիւն մը ըլլայ ի պաշտօնապէս յայտնել ձեզի Պրն. Սողանալեանի յայտարարութիւնը հետեւեալ մանրամասնութիւններով.*

*ա. Պրն. Սողանալեան յայտնեց, թէ յուսալից է Օգոստոս ամսու վերջերը կարողանալ յարգել իր **100000** տոլարի խոստումը Պէյլանի Հայրենակցական Միութեան, առավել տոկոսի բարդումը յապաղումի ժամանակամիջոցին:*

*բ. Պրն. Սողանալեան փափաք յայտնեց, որ միութեան տարեկան ՃՊ-ը տեղի ունենա Դեկտեմբեր ամսու **20**-ի եւ **24**-ի միջեւ, իր նախագահութեամբ, որու ներկայ պիտի ըլլայ ինք ընտանիքով եւ տիկ. Մարիձան, դուստրը, փեսան եւ թոռնիկները ու պաւակը Կարոն: Այս նամակիս թուականով որեւէ լուր մը չըստացա վարչութեան անդամներէն. ուստի հետեւեալ եզրակացութեան յանգելու իրաւունքը կառնեմ.*

*1. Պէյլանի Հայրենակցական Միութեան ներկա վարչութիւնը անկաշմակերպ է:*

*2. վարչութեան անդամներու միջեւ անհամաձայնութիւն գոյութիւն ունի:*

*3. հեռատեսութեան չգոյութիւն՝ իբր մարմին:*

*ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՐՈՇՈՒՄ*

*Այս պարագաներու դրութեան պատճառով, ես ինքս պիտի թելադրեմ Պրն. Սողանալեանին, որպէսզի իր խոստումը չի փոխանցէ ներկայ վարչութեան գոյութեան նստաշրջանին, այլ այդ գումարը փոխանցէ իմ եւ Պրն. Նուպար Միսիր-Գէորգեանի անուան, կոր պիտի ներդրուի դրամատուն մը՝ Պէյլանի Հայրենակցական Միութեան անուան, անձեռնմխելի, ու փոխանցուի Պէյլանի Հայրենակցական Միութեան անուան, միայն ու միայն, երբ նոր վարչութիւն մը ընտրուի Ընդհանուր Անդամական ժողովի մը միջոցաւ:*

*Այս նամակիս նպատակն է կայն ատենագրութեան յանձնել, որպէսզի յետագային ըսի ըսաւի տեղ չի տրուի:*

*Ձերդ՝ Նորայր Մելքիսեթեան (ստորագրութիւն)*
*Copy: Պրն. Սարգիս Սողանալեան*
*Մայամի, Ֆլօրիտա:*

***Այս նամակին պատասխան նամակ պատրաստեցի, հասցեագրված Սարգիս Սողանալյանին: Երկու նամակներն էլ քննարկվեցին 09-07-90 թ. ՎՆ-ում և որոշվեց ուղարկել բարերարին: Նույնանման մի նամակ էլ ուղարկվեց տիկ. Մարիձա Սողանալյանին:***

***Սարգիս Սողանալյանին գրված նամակի այս հարցի հետ առնչվող մասերը մեջբերվում են.***

***Mr. Sarkis Soghanalian***
***C/O Pan Aviation Inc., P. O. Box 522816***
***Miami, Florida 33152***

*Սիրելի Սարգիս*

*... Այս նամակով վարչությունն ուզում է պարզել նաև շատ կարևոր մի հարց, որը կապված է ձեր և ՊՀՄ-ի վարչության հեղինակության հետ: Վարչությունը **1990** թ. օգոստոս **8** թվակիր մի նամակ ստացավ Նորայր Մելքիսեթյանից, որի պատճեն ևս ուղարկվում է սույն նամակի հետ ձեզ, [illegible] **1990** թ. օգոստոսի **10**-ի ՎՆ-ում կայացված որոշման:*

*Վարչությունը հայտնում է, որ թե՛ Նորայր Մելքիսեթյանը և թե՛ Նուբար Միսիր-Գեորգյանը ՊՀՄ-ի վարչության անդամներ չեն, ուստի ոչ մի լիազորություն չունեն վարչության անունից խոսելու և վարչությանը իրենց կամքը թելադրելու: Վարչության կարծիքը ձեզ ուղարկված է **11-22-89** թվակիր նամակով:*

*Նկատի ունենալով Նորայր Մելքիսեթյանի նամակը, վարչությունը խնդրում է ձեզ լուսաբանել նրա ճշտության խնդիրը և նամակով տեղյակ պահել ՊՀՄ-ի վարչությանը:*

*Այնուհետև վարչությունը խնդրում է.*

*1. ՊՀՄ-ի վարչության ուղղված որևէ գրություն հասցեագրել ատենապետի անունով կամ հաղորդել նրան հեռախոսով:*

*2. Ժողովուրդը երբեք այնքան չի գնահատել վարչության և նրա [illegible] իր ստեղծման օրից, ինչպես այսօր է գնահատում, [illegible], վարչությունը ամուր հիմքերի վրա է:*

*3. ՊՀՄ-ի վարչությունը երբեք այնքան կազմակերպված ու միասնա-*

կան չի եղել, որքան այսօր է, և նրա հեղինակությունը վարկաբեկելու որևէ փորձ տհաճ հետևանքներ կունենա այդ փորձը կազմակերպողների համար:

4. ՊՀՄ-ի վարչությունը երբեք թույլ չի տա, որ իրեն վերաբերող հարցերը իրեն հաղորդվեն վարչության նկատմամբ ոչ-հարգալից վերաբերմունք ունեցող անհատների կամ կրպարտիչների միջոցով, որոնց հեղինակությունը ընկած է վարչության և ժողովրդի մոտ:

Հիմնվելով վերոհիշյալների վրա վարչությունը մեկ անգամ ևս խնդրում է ձեզ հաստատել Նորայր Մելքիսեթյանի նամակի ճշտությունը..., որպեսզի վարչությունն իր պարտականությունները ճիշտ կատարի:

Նամակին կցված է Նորայր Մելքիսեթյանի նամակի պատճեն մեկ օրինակով՝ 3 թերթի վրա, գրված 1990 թ. օգոստ. 8-ին:

Հարգանքներով՝ ՊՀՄ-ի վարչություն:

Ատենապետ՝ (ստորագրություն) Վահան Բահարյան:

Քարտուղար՝ (ստորագրություն) Մարտիրոս Էքշիյան:

Վարչությունը չստացավ այս նամակի պատասխանը:

Դաշտահանդեսը տեղի ունեցավ 1990 թ. սեպտեմբերի 2-ի կիրակի օրը Նորթ Հոլիվուդի Մագնոլիա զբոսայգում, որը մեծ հաջողություն ունեցավ: Հայրենակիցների հոծ բազմություն հավաքվեց: Այս առիթ է, որ բարեկամները մի անգամ ևս հանդիպեն իրար և ծանոթանան ու նոր բարեկամություններ ստեղծեն: Արդեն հավաքույթի հիմնական նպատակն էլ այն է, որ հայրենակիցները համախմբվելով շարունակեն իրենց հայկական սովորությունները, իրար հետ շփումները: Այդ բոլորին նպաստում է նաև նվագախումբը իր հայկական ուրախ ու կրակոտ պարային եղանակներով: Կազմակերպված խաղերը, երգը, ամունքը, վիճակահանությունը ավելի են քաջալերում ներկաներին, որոնք դաշտից հեռանալուց հետո անհամբեր սպասում են հաջորդ տարվա դաշտահանդեսին: Ոգևորված հայրենակիցները նվիրատվություններ կատարեցին միությանը 500 դոլար ընդհանուր գումարով: Բայց կարևորը նրանց ներկայությունն էր, որպեսզի նոր սերունդը չմոռանա իր նախնիների բնօրրանը և հայ մնա այս օտար ափերում մինչև որ լուսավոր ճամփա բացվի դեպի Հայրենիք:

Վարչությունն ընդառաջեց Կիլիկյան Թեմի Հայոց Առաջնորդարանի սեպտեմբեր 17,1990 թվակիր նամակին, և ատենապետը ներկա եղավ «Նորակազմ դասագրքերի պատրաստության» նվիրված ժողովին Կարապետյան սրահում՝ 1614 N. Alexandria, Holliwood, Ca 90027: Մինչ այդ, ստեղծված հանձնախումբը արդեն հավաքել էր 48 342 դոլար: Դասագրքերի պատրաստման 5 տարվա նախագիծ էր նախատեսված 4,0 միլիոն դոլար ֆոնդով:

Մեծ ուրախությամբ մասնակցեցի այդ ժողովին, որովհետև խոսքը մեր մատաղ սերնդի հայեցի դաստիարակության մասին էր: Ժողովում նշվեց, որ միայն նոր դասագրքերի ստեղծումը





1990 թ. դաշտահանդեսում: Ձախից աջ՝ Վահան Գևորգյան, Վահան Բահարյան, Տեր Վարդան քհն. Տյուլկերյան, Դոկտ. Գևորգ Խրլոպյան, Նուբար Միսի-Գևորգյան, Նորայր Մելքիսեթյան:

բավական չէ այդ նպատակը իրագործելու համար, այլ նաև պետք է ունենալ որակավոր մանկավարժներ, որոնց պակասը զգացվում է հայկական դպրոցներում: Դժբախտաբար, Հայաստանից եկած և երկար տարիների փորձառություն ունեցող ուսուցիչներին տեղ չտվին և հիմա էլ չեն տալիս այդ դպրոցներում, որի տակ թաքնված է դպրոցների ղեկավարների հովանավորած անգրագետ ուսուցիչները դպրոցներում պահելու հանգամանքը, ինչպես նաև ատելությունը արևելահայերենի նկատմամբ...: Ինչ որ է, այդ գործընթացը շարունակվելու է անկախ հանգամանքներից, մինչև լեզվի հարցի լուծումը, իսկ տուժողը լինելու է հայ նոր սերունդը իր խղճուկ հայագիտությամբ: Այսքանով բավարարվենք այս հարցի մասին, միայն ավելացնենք, որ 10-24-90 թ. ՎՆ-ում որոշվեց 300 դոլարով (չեք #140, 10-24-90 թ.) մասնակցել նշված ֆոնդին: Այս ընթացքում վարչության անդամ դարձավ նաև Գևորգ Գազչյանը:

ԾՊ-ն նախատեսված էր Եփրեմյան սրահում: Ծրագիրը փոխվեց, երբ Սարգիս Սողանալյանը զանգեց և ցանկություն հայտնեց հովանավորել այն՝ խնդրելով մեծ սրահ վարձել: Չնայած կանխավճար տրված էր Եփրեմյան սրահին, ուրախացա, որ հեռատեսությունս պսակվեց հաջողությամբ: Վարչականներն էլ ուրախացան՝ մոռանալով իրենց դժգոհությունը բարերարի հանդեպ: Վարձվեց Փասադենայի Հայ կենտրոնը (Շաբաթ, Դեկտ. 22,1990 թ. համար):

*Նկատի ունենալով միասնական հայրենակցական գործունեության կարևորությունը՝ վարչությունը որոշեց ՃՊ-ին հրավիրել ՀՄՄՄ-ի մեջ մտնող բոլոր ՀՄ-ներին, մամուլին ու հեռուստատեսությանը, ինչպես միշտ, Եղեռնից վերապրող բեկյանցիներին։*

*Վկայեմ, որ ոչ մի ՀՄ-վ այսպիսի չուայլություն չի դիմում։ Մեր վարչությունը սույն որոշումով ուզում էր օրինակ հանդիսանալ միությունններին, որպեսզի սերտ հարաբերություններ ստեղծվեն ի նպաստ ՀՄՄՄ-ի ազգային գործունեության արդյունավետության։ Հետագայում այս հարցը բազմիցս քննարկման նյութ դարձրեցի ՀՄՄՄ-ի նիստերում, բայց ոչ մի անդամ էլ չհամաձայնվեց բոլոր ՀՄ-ներին հրավիրելու իրենց ՃՊ-ին։*

*ՃՊ-ն տեղի ունեցավ ավելի քան 250 հայրենակիցներով։ Ներկա էին՝ Այնթապի, Զեյթունի, Հաճընի, Ուրֆայի, Քիլիսի, Մարաշի ՀՄ-ները, «Նոր կեանք», «Նոր Օր», «Ասպարեզ» թերթերը և «Հայ Թելեժամ»ը երկուական ներկայացուցիչներով։*

*Մեր վաչության դժվար հարցերից մեկը ՃՊ-ի սեղանների բաժանման հարցն էր, որի համար վիճաբանություններ էին լինում։ Մեկ-երկու սեղան ունեցողը ուզում էր զբաղեցնել սրահի լավագույն տեղը, իսկ երեք և ավելի սեղան ունեցողին մնում էր ծայրամասերը։ Իմ ջանքերով հետագայում մտցվեց սեղանները վիճակահանությամբ բաշխելու կարգը։ Սույն ձեռնարկի ժամանակ ես բոլորին բաժանեցի սեղանները և իմ վեց սեղանով մնացի ծայրամասերի սեղանների հույսին, հազիվ ապահովեցի երկու սեղան հարմար տեղից։ Որոշ ժամանակ անց տեսա, որ սեղաններիցս մեկը ընտանիքով զբաղեցրել է Սարգիս Գյոզելյանը։ Իմ խնդրանքն իզուր էր, նա չազատեց սեղանը։ Զուգեցի վեճի տեղիք տալ, տհաճ երևույթ էր։*

*Ինչպես նշվեց վերևում, շաբաթ օրը առավոտյան արդեն սրահում էի։ Կեսօրվա մոտ զանգեց Սարգիս Սողանալյանը՝ Studio City-ի «Sheraton» հյուրանոցից։ Վարչությունը որոշել էր նրան լիմուզինով բերել ՃՊ-ի սրահ։ Գրիգոր Դովլաթյանի հետ գնացինք հյուրանոց։ Առաջին անգամ էի տեսնում նրան ու տղային՝ Կարոյին։ Ծանոթացա։ Մեզ հյուրասիրեց վիսկիով։ Պայմանավորվեցինք երեկոյան ժամը 7-ին հանդիպել և միասին գնալ սրահ։ Նա ասաց, որ երկար չի կարող մնալ, ժամը 9:30-ին հեռախոսային խոսակցություն ունի։ Ցանկացած ժամանակը, պատրաստ էինք նրան հյուրանոց բերելու։ Այնուհետև, նա ինձ տվեց թղթադրամների մի տրցակ՝ 10000 դոլար՝ նշելով, որ սա ՃՊ-ի ընթացիկ ծախսերի համար է։ Շնորհակալություն հայտնելով մենք դուրս եկանք։ Առանց տուգելու Դրամների տրցակը հանձնեցի Գրիգորին, որ հաջորդ օրը բանկ դնի։*



*Երեկոյան պայմանավորված ժամին նրանց՝ հայր ու որդի վերցրեցի հյուրանոցից և լիմուզինով շարժվեցինք դեպի ՃՊ-ի սրահը։ Այդ ընթացքում խոսեցինք միության գործունեության, կատարած աշխատանքների, ծրագրերի, սեփական սրահ ունենալու և այլ հարցերի մասին։*

*Լիմուզինի մեջ եղած խոսակցությունից մի հարց ես հանձնում եմ ընթերցողի ուշադրությանը։ Սողանալյանը գովեց Նորայրին՝ նշելով, որ լավ տղա է ու խնդրեց նորից ընդունել նրան վարչության մեջ։ Զնայած, որ նոր էի ծանոթացել հետը, կտրուկ մերժեցի, փաստեր բերելով վարչության գործունեությունից իր առենապետության ժամանակ, հիշեցի նաև նրա ամսական ստացած 300 դոլար թոշակը, և վարչությունից դուրս գալուց հետո միության դրամական հաշվի մեջ մնացած չնչին գումարը, որ կեղծիքով զբաղվող և վարչականների բնութագրությամբ խարդախ մարդը չի կարող լինել վարչության մեջ։ Մենք արդեն հասել էինք սրահ, և բնականորեն, մեր խոսակցությունն ընդհատվեց։*

*Մեջբերում եմ ՃՊ-ի ծանուցման գրքույկում վարչության անունից գրված առաջաբանը.*

ԵՐԱԶԱՆՔ, ԹԵ՞ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ,
ԱՆԿՈՒՄ, ԹԵ՞ ՎԵՐԵԼՔ, ԼԻՆԵԼ, ԹԵ՞ ՉԼԻՆԵԼ

*Սիրելի հայրենակիցներ, ՊՀՄ-ի վարչությունը ողջունում է ձեզ, բարի գալուստ ու լավ ժամանց է ցանկանում բոլորիդ և շնորհակալություն է հայտնում այսօրվա ձեռնարկը քաջալերելու համար։ Մի փոքրիկ հետադարձ հայացք այս առումով։*

***1946-47 թթ.*** *Հայրենիք ներգաղթածների որևէ մեկի մտքովն անգամ չէր անցնի, որ տարիներ հետո ինքփինքը պիտի գտնի ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի Լոս Անջելես քաղաքում որպես մշտական ապրող և իր հետ բերի նաև Հայաստանի բնիկ ժողովրդի մի մասին։ Արտագաղթի մի մասնիկն էր կազմում նաև Կիլիկիայի Սանջաքի՝ այդ թվում Բեյլանի ու շրջակա գյուղերի բնակչությունը, որը* ***1946-47 թթ.*** *ներգաղթել էր Հայրենիք։*

*Հայրենիքում ապրելը ամեն մի սփյուռքահայի երազանքն է, որը մասամբ իրականացավ* ***1946-47 թթ.*** *ոչ ժամանակին կատարված ներգաղթով։ Վերջինս շատ ծանր հետևանքներ ունեցավ ներգաղթածների վրա, որոնք ապրեցին այդ Հայրենիքում իրենց ամբողջ գոյության ընթացքում։ Սակայն երազն իրականացավ, Հայրենիքը վերականգնվեց, վերաշինվեց, գյուղ Երևանը դարձավ ժամանակակից եւրոպական տիպի քաղաք։ Եվ, հանկարծ, այն ունեցավ անսպասելի արտագաղթը, որը ժողովրդի ներսում տարիների ընթացքում կուտակված տառապանքի պոռթկումն էր, և, դժբախտաբար, հեռացողների մեծ մասը Հայրենիքից շատ հեռու էին գնում Ամերիկա։ Հայրենիքը տուժեց, որովհետև բոլոր ասպարեզների լավագույն մասնագետների հոծ մասը լքեցին Հայրենիքը, իրենց հանդեպ եղած «լավ» վերաբերմունքի հետևանքով, և մեծ մասը հաստատվեցին Լոս Անջելեսում։ Սկզբնական շրջանում նրանք մեծ նեղություն կրեցին, մանավանդ, որ ծանոթ չէին*

այս երկրի օրենքներին ու սովորություններին և լեզու չգիտեին: Կորցնելով տուն-տեղը, հայրական օջախը, որը երբևէ հույս չուներ վերականգնելու, ժողովուրդը, կարծես թե ընկել էր հուսահատության գիրկը:

Նա ինչ-որ ձևով պետք էր ինքնին պարտադրեր այս երկրին՝ ընդունելու իր գոյությունը: Սակայն միայն այդ չէր: Հայ ժողովրդի համար այս երկրում շատ ավելի խորթ էր այլասերվածության ձևերը, և յուրաքանչյուրը վախենում էր իր երեխայի ապագայի համար, թե ինչպե՞ս նրան հայ պահի:

Ահա այս ժամանակ էլ արդեն գոյություն ունեցող և նոր ստեղծվող ՀՄ-ները սկսեցին իրենց շուրջը հավաքել ժողովրդին, և նրանց գոյության ընթացքում, եղան տվյալ շրջանի իրենց հայրենակիցներին հուսադրող ու քաջալերող կազմակերպությունները:

Այս ձևով ստեղծվեց նաև ՊՀՄ-ն 1986 թ. մայիսի 7-ին, որի հիմնական նպատակն է հայապահպանումն ու Հայրենիքին օգնելը, մինչև որ բարգավաճի այն և հնարավորություններ ստեղծի պանդուխտ զավակներին ընդունելու իր գիրկը:

Խորհրդային Միությունում վերակառուցման (պերեստրոյկայի) հետևանքով Հայաստանում դեպքերն այնքան արագ հաջորդեցին մեկը մյուսին, որ փորձված քաղաքական գործիչներն իսկ չէին կարող նախատեսել: Արցախի հարցը, Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբատի (Գանձակի) ցեղասպանության դեպքերը, ինչպես նաև երկրաշարժը Հայաստանում, Հայրենիքի լինել-չլինելու հարցը դրին: Այս բոլոր հարցերի լուծումը ընկնում էր նոր ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ուսերի վրա, որի խորհրդարանի նորընտիր նախագահն էր Լևոն Տեր-Պետրոսյանը:

Սփյուռքահայերը օգնության ձեռք մեկնեցին Հայրենիքին, որոնցից մեկն էլ Սարգիս Սողանալյանն էր, որի բարերարությունը հայտնի է Լոս Անջելեսում, և որն իր օդանավերով օգնություն հասցրեց Հայրենիքի երկրաշարժից տուժածներին:

Հիմա է ժամանակը, որ Սփյուռքը օգնի Հայրենիքի վերելքի, նրա տնտեսական ու քաղաքական դիրքերի հզորացման գործընթացին:

Պետք է բոլոր հնարավորությունները օգտագործել օգնելու համար Հայրենիքին: ՊՀՄ-ի այսօրվա ՃՊ-ն հանդիսանում է այդ նպատակի համար ընտրված միջոցառումներից մեկը:

**ՃՊ-ում ելույթիս ժամանակ նշեցի Սարգիս Սողանալյանի կատարած բարերարությունների և անցած ժամանակաշրջանում միության կատարած գործունեության մասին: Հակառակ որոշ կազմակերպությունների, վարչությունը միշտ քաջալերել է երեխաների ներկայությունը մեր միջոցառումներում: Նրանց ներկայությունը ուրախացրեց բարերարին: Նա մոտեցավ բոլոր սեղաններին և, ոգևորվելով ներկա մթնոլորտից, 125000 դոլար խոստացավ միության սրահ գնելու նպատակով որպես կանխավճար: Նա շատ գոհ մնաց ՃՊ-ից և սրահից հեռացավ առավոտյան ժամը 2:30-ին: Van Nuys-ի շրջանում պիտի գնվեր մի «Super Market» և վերածվեր Մարիամ Սողանալյանի անվան սրահի:**

**12-26-90 թ. ՎՆ-ում ՃՊ-ի հաշվետվության հետ քննարկվեցին Վաչե Արք. Հովսեփյանի ծննդյան 60-ամյակին մասնակցելու**





1990 թ. ճաշկերույթ-պարահանդեսում: Առաջին շարքում նստած. ձախից աջ՝ Մարտիրոս Էքշիյան, Վահան Բահարյան, Սարգիս Սողանալյան, Կարո Սողանալյան: Երկրորդ շարքում կանգնած. ձախից աջ՝ Արմենակ Հեքիմյան, Գրիգոր Դովլաթյան, Սարգիս Ճինպաշյան, Պողոս Մելքոնյան, Գրիգոր Շենյան, Տիգրան Գալուստյան ...:

**հրավերը և Սարգիս Սողանալյանին այցելելու հարցը՝ Palm Spring: Վարչությունը որոշեց, որ սրբազանի ծննդյան 60-ամյակին մասնակցենք ես և Գրիգոր Դովլաթյանը: Այդ առիթով եկեղեցուն նվիրվեց 100 դոլար:**

**Սույն նիստում Աշոտ Տեր-Ստեփանյանը հրաժարվեց (բանավոր) վարչության աշխատանքներին մասնակցելուց՝ պատճառաբանելով իր խիստ զբաղվածությունը:**

**ՃՊ-ի ժամանակ Սարգիս Սողանալյանը տվեց ինձ իր Palm Spring-ի հեռախոսի համարը և խնդրեց զանգահարել: ՃՊ-ից հետո զանգահարեցի և պայմանավորվեցինք վարչությունով այցելել նրան: Այդ պահին Գրիգոր Շենյանը զանգահարեց և ասաց, որ Սարգիս Սողանալյանին է զանգահարում, բայց ասում են տանը չէ, գնացել է Լաս Վեգաս: «Ղազաթաճիների» խորամանկություններին և մութ գործերին անտեղյակ միամտորեն ասացի, որ նոր խոսեցի հետը, տանն է: Քիչ հետո զանգ եկավ ինձ՝ բարերարից դիտողություն ստացա, որ ուրիշներին ասում են ինքը տանը չէ, իսկ ես ասում եմ՝ տանն է: Պարզվեց, որ Սարգիս Սողանալյանը 50000 դոլար է խոստացել Շենյանին՝ Լևոն Շանթի թատերգությունները երկու հատորով հրատարակելու համար (մոտավորապես 1800 էջ**



«Palm Sprng»ում: Վարչության անդամները Սարգիս Սողանալյանի ընտանիքի հետ: Աջից չորրորդը CBS հեռուստակայանի ռեժիսոր Lowell Bergman՝ Սարգիս Սողանալյանի ամենալավ ընկերներից մեկը: Հեռախոսով շնորհավորում եմ Մայր Մարիցա Սողանալյանի Նոր Տարին:

և կաշեկազմ)[1] և իբր թե 5000 դոլարը դեռ պարտք է: Բարեբարը ասաց, որ գումարը լրիվ վճարել է:

Palm Spring գնալը նախատեսված էր ուրբաթ, դեկտեմբեր 28, 1990 թ.: Ցանկություն հայտնեցին Գրիգոր Դովլաթյանը, Արմենակ Հեքիմյանը, Սարգիս Խորշիդյանը, Մանվել Մարաշյանը, Սարգիս Գյոզալյանը և Գևորգ Գազճյանը: Մարտիրոս էքշիյանը տխուր առիթ ուներ, չեկավ: Որոշ ուտելիքներ գնեցինք, հատկապես չիք քյոֆթեի միս, պաստուրմա, մի չիչ հայկական կոնյակ, լավաշ: Չիք քյոֆտեն պատրաստելու համար վարչությունը խնդրեց Մանվելին, որ կնոջը՝ Մաքրուհուն էլ բերի: Նշված օրը երկու մեքենաներով շարժվեցինք դեպի Palm Spring: Վարչականներին ոչինչ չասացի վերոհիշյալ տհաճ դեպքի մասին, բայց մտածում էի, թե բարերարը ինչպե՞ս կընդունի մեզ:

Palm Spring հասանք ժամը մոտ 2:30-ին: Բարերարը տանը չէր, կինը՝ Շըրլին ընդունեց մեզ և սպասեցինք մինչև ամուսնու գալը: Մաքրուհին շատ լավ էր պատրաստել չիք քյոֆտեն: Կերանք, խմեցինք, միության ապագա ծրագրերի մասին խոսեցինք: Գրիգորը կոնյակը մոռացել էր տանը և մի քանի անգամ ասաց

1.- Տե՛ս «Նոր կեանք», թիվ 40, Սեպտ. 10, 1998 թ., էջ 3:



այդ մասին Սողանալյանին, չնայած վերջինս մի անգամ նրան պատասխանեց, որ հայկական կոնյակի տեսակներն ունի, եթե ուզում է թող խմի: Նոր Տարվա առիթով ես սուրճ հյուրասիրելու լատունից պատրաստված հայկական սինի նվիրեցի Շըրլիին, իսկ ամուսնուն՝ Հայաստանի զինանշանը դունավոր՝ մետաղի վրա: Լոս Անջելես վերադարձանք ուշ գիշերին:

Ըստ բանկի 12-26-90 թ. տվյալների, միության ունեցած գումարը 11 406 դոլար և 42 սենթ է:

## ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՄԱՐՄՆԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Վարչությունը հունիս 19, 1990 թվակիր մի նամակ ստացավ Մարաշի ՀՄ-ից, որով՝

Մարաշի Հայրենակցական Միութեան Լոս Անճելեսի մասնաճիւղին վարչութեան փափաքն է, որ ըլլայ մեր երկրորդ հանդիպումը ՀԱՄԱՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ խորհրդակցական ժողով մը գումարել:

Ուստի կը հրավիրենք ձեր վարչութեան դիւանը Յուլիս 17-ին երեքշաբթի երեկոեան ժամը 8-ին Փասատինայի միութեանս կեդրոնին մէջ...:

Առաջին հավաքույթը կայացել էր նույն թվականի մայիսի 25-ին, որի համար Մարաշի ՀՄ-ի վարչության անդամ Տիգրան Գալուստյանը նամակ էր տվել Վահան Գևորգյանին, որպեսզի հանձնի ՊՀՄ-ի վարչությանը: Մի օր Վահանի կինը զանգահարեց և ասաց այդ մասին, ավելացնելով, որ ժողովին պետք է ներկայանան տեր և տիկին, և ինչ-որ բաներ, որ հիմա չեմ հիշում, բայց նպատակն այն էր, որ չմասնակցենք ժողովին: Այդպես էլ նամակը չտվին ինձ, և մեր միությունը զրկվեց այդ ժողովին մասնակցելուց: Բայց պատճառը չիմացա: Միգուցե Վահանն էլ ընկել էր Նուբար Մխսի-Գևորգյանի ազդեցության տակ և երևի այդ պատճառով էլ հեռացավ վարչությունից:

Վարչության որոշման համաձայն հուլիս 17-ին Սարգիս Խորշիդյանը, Գրիգոր Դովլաթյանը և ես մասնակցեցինք այդ երկրորդ ժողովին (463 Martelo Ave., Pasadena, CA 91107): Ինչ-որ այստեղ գրում եմ հիշողությանս արդյունքն է, փաստացի ոչ մի գրություն չի պահվել մոտս այդ ժողովի մասին:

Նախօրյակին պատրաստեցի որոշ հարցեր տվյալ ժողովին ներկայացնելու համար՝ նկատի ունենալով ստեղծել հայրենակցականների միասնական մի մարմին, որի մասին մեքենայի մեջ տեղեկություններ էի տալիս Սարգիս Խորշիդյանին: Նա ապրում էր Canoga Park-ում, իսկ ես՝ Van Nuys-ում՝ իր ճամփու վրա, և

համար էր մեզ միասին գնալ։ Հետագայում վարչությունը մեր երկուսին երաշխավորեց մասնակցելու ՀՄՄՄ-ի նիստերին։

Ժողովի ժամանակ պարզվեց, որ հենց այդ նպատակով էլ հավաքվել ենք, որ ստեղծենք հայրենակցական միացյալ մի մարմին։ Ժողովը երկար տևեց։ Մանրամասնությունները չեմ հիշում։ Շատ հավանական է, որ արձանագրությունները Մարաշի ՀՄ-ի արխիվումն են։ Միայն նշեմ, որ այդ օրը միությունը ստեղծվեց որպես ՀՄՄՄ, որն ընդգրկում էր 15 ՀՄ-ներ՝ Այնթապի, Զեյթունի, Էվերեկ-Ֆենեսեի ուսումնասիրաց միության, Կեսարիա և Շրջ.-ի, Հաճընի, Համավասպուրականի, Մարաշի, Մուսա Լեռան, Ցողամթի և Շրջ.-ի, Ուրֆայի, Զորք-Մարզպանի, Պէյլանի, Տարոն-Տուրուբերանի, Տիգրանակերտի և Քիլիսի։ «Նոր կեանք»-ի խմբագիր Գրիգոր Շենյանը ընտրվեց ՀՄՄՄ-ի ատենապետ, իսկ նրա աշխատանքներին պետք է մասնակցեր յուրաքանչյուր միությունից երկուական ներկայացուցիչ՝ մեկը վճռական, իսկ մյուսը՝ խորհրդակցական ձայնով։ ՄԿ-ն գրելու համար ընտրվեց հանձնախումբ՝ Գրիգոր Շենյան, Վահան Բահարյան և Տիգրան Գալուստյան կազմով։ Հանձնախմբի անդամներս պայմանավորվեցինք յուրաքանչյուրս ՄԿ-ի նախագիծ պատրաստել և որոշված օրը ներկայանալ քննարկման՝ «Նոր կեանք»-ի խմբագրատանը։ Այնտեղ պարզվեց, որ միայն ես եմ նախագիծ գրել, որն էլ հիմք ընդունեցինք և կազմեցինք ժամանակավոր մի ՄԿ։ Վերջինս ՊՀՄ-ի 10-24-90 թ. վՆ-ում քննարկվեց և ընդունվեց միաձայն։

ՀՄՄՄ-ի նիստում Գրիգոր Շենյանը իմ թեկնածությունը առաջարկեց նրա փոխատենապետի պաշտոնում, որն ընդունվեց միաձայն։ ՀՄՄՄ-ն լծվեց անունը օրինականացնելու և նպատակները իրականացնելու աշխատանքներին։

ՄԿ-ի կարևոր կետերից մեկն այն է, որ ՀՄՄՄ-ն չի կրկնելու ՀՄ-ների կողմից իրագործվող ձեռնարկները։ Նա ոչ-շահութաբեր, չեզոք կազմակերպություն է և չի հարում կուսակցություններին, հարանվանություններին, բայց գործակցում է բոլորի հետ հանուն հայ ժողովրդի ազգային շահերի։

ՀՄՄՄ-ն իր առաջին ձեռնարկը կատարեց կիրակի, ապրիլ 14, 1991 թ. Փասադինայի «Sexon» սրահում որպես «ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԽՄԲՐԱՏԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ ՓԱՌԱՏՕՆ, ի նպաստ Հայաստանի և Լիբանանի առողջապահական և կրթական կարիքներուն»։



## Զ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1991 Թ.

12-22-90 թ. ՃՊ-ի մասին գրած հոդվածում[1] Մելքոն Արսլանյանը գովասանքով է արտահայտվում ձեռնարկի հաջողության և բարերար Սարգիս Սողանալյանի ու տղայի՝ Կարոյի մասին, բերելով նաև փաստացի տվյալներ նրանց բարերարությունից։

Ըստ Կարոյի, Մայամիում ունեն «Pan aviation» ընկերությունը, երեք փոխադրական օդանավ, 20 աշխատող։ 1988 թ. երկրաշարժի ժամանակ Սարգիս Սողանալյանը 3 ամսվա ընթացքում 15 թռիչք է կազմակերպել դեպի Հայաստան։ Յուրաքանչյուր թռիչքի ծախսը կազմել է 100000 դոլարից ավելի։ Այնտեղ նշված է նաև նրա նվիրատվությունը ՊՀՄ-ին։

1991 թ. հունվարի 9-ի դիմումով Մարտիրոս Էքշիյանը խնդրում էր իրեն ազատել վարչության մեջ ունեցած քարտուղարի պարտականությունից, «անձնականի հետ առնչվող մի շարք խոչընդոտների հետևանքով»։ Դիմումը քննարկվեց փետրվարի 1-ի վՆ-ում։ Ըստ որոշման, դիմումի վրա գրեցի.

Սույն թվի փետրվար 1-ի նիստում, քննարկելով Մարտիրոս Էքշիյանի դիմումը և շեշտելով նրա բարեխիղճ ու նվիրված աշխատանքը, վարչությունը որոշեց նրան թողնել վարչության մեջ, քիչ անհանգստացնել, մինչև որ նորից սկսի մասնակցել նրա աշխատանքներին, որը և ընդունվեց նրա կողմից։

Սույն նիստում օրակարգի նյութ դարձրեցի նաև գրածս նամակի և «Մարդահամարի թերթիկ»-ի (տե՛ս բնագիրը հավելված էջ 406) նախագծերը և ՄԿ-ի որոշ մասեր, որոնք նամակի հետ պետք է ուղարկվեին հայրենակիցներին՝ տեղեկություններ հաղորդելու վարչության գործունեության մասին։ Նպատակս էր.

ա. Ժողովրդին ընդհանուր տեղեկություններ տալ բեյլանցիների մասին։

բ. Հայրենակիցներին առաջարկել անդամակցել և նյութապես նեցուկ կանգնել միությանը։

գ. Ճշտել Լոս Անջելեսում բնակվող բեյլանցիների թվաքանակը, որը շատ կարևոր էր վիճակագրության համար։

Առաջարկը ընդունվեց վարչության կողմից։ Զիջելով այս աշխատանքի կազմակերպչական դժվարությունների մասին՝ այդ իրականացնելու համար, առաջին հերթին, անհրաժեշտ էր ունենալ հայրենակիցների լրիվ ցուցակը, իրենց հասցեներով և հեռախոսի համարներով։ Վարչության որոշումով անդամները

1. Տե՛ս «Նոր կեանք», թիվ 3, Յունուար 8, 1991։

պարտավորվեցին չուտափույթ կերպով հավաքել իրենց ազգականների, բարեկամների, ծանոթների հասցեները մինչև նյութերի տպագրվելը։ Հունիսին արդեն նյութերը տպագրված էին, բայց վարչականների անփույթ վերաբերմունքի հետևանքով հասցեները չհավաքվեցին։ Եթե վարչականները անգրագետ էին և ինձ չէին կարող օգնել գրագրության հարցում, ապա նրանք կարող էին հասցեները հավաքել, բայց հաջորդ ձեռնարկների կազմակերպման հարցերն էլ մեջտեղ գալով, հասցեների հավաքը չիրականացավ։ Չնայած այդ ընթացքում բարերարների ու ազգայինների ցուցակ էի պատրաստել, նրանց ևս նամակ ուղարկելու համար։

Ահա այսպես. նորից կրկնենք, որ կազմակերպության մեջ կամավոր սկզբունքով աշխատելը չի նշանակում ըստ կամքի աշխատել, ուզածն անել, չուզածը չանել։ Պետք է զգալ պարտավորություն և պատասխանատվություն գործի նկատմամբ, որպեսզի վարչության ծրագրած նպատակները իրագործվեն։ Հենց այս հողի վրա էլ ՎՆ-ում՝ շատ դեպքերում, հանձնարարված պարտականությունների կատարման շուրջ վիճաբանություն ստեղծելով, որոշ վարչականներ խուսափում ու չէին կատարում իրենց հանձնարարված պարտականությունները, և այդ վիճաբանությունները, անձնականի վերածելով, վարչությանը հեռացնում էին իր ծրագրային-նպատակային գործունեությունից։

Ընթերցողին ենք ներկայացնում վերոհիշյալ նամակը.

Հայ ժողովուրդը դառը ճակատագիր է ունեցել: Այդ տեսակետից նրա պատմությունը խոսուն է: Նա տեսել է շատ արհավիրքներ, բաժան-բաժան է եղել, դարձել է Սփյուռք և այնտեղ մի ստվար մասը ձուլվելով, հատկապես քրիստոնյա երկրներում, կորցրել է ազգությունը որպես հայ:

1896 թ. Կիլիկիայի կոտորածներին զոհ գնաց 300000, 1909 թ. Ադանայի կոտորածին՝ 30000, 1915 թ. Մեծ Եղեռնին՝ մեկուկես միլիոն հայ: Իրենց բնօրրանի մի բուռ մնացած հայերը ստիպվեցին ցրվել աշխարհով մեկ, էլ ավելի շեշտելով Սփյուռքի գոյությունը: Նրանցից միայն մի փոքրիկ մասնիկը վերադարձավ իր երկիրը, նորից շենացրեց ու ծաղկեցրեց այն, ինչպես՝ դարերի ընթացքում:

Վերադարձավ նաև Սանջաքի, այդ թվում Բեյլան քաղաքի և շրջակա գյուղերի հայության ջարդից ազատված մասը, որը նույնպես վերակառուցեց իր բույնը Ֆրանսիայի հովանավորության ներքո և 1939 թ., ստիպված թողնելով իր վերջին մի կտոր պապենական հողը «որպես վերջին մոհիկան», նրա հետ հեռացավ Լիբանան, մի մասն էլ՝ Սիրիա:

Լիբանանում և Սիրիայում հաստատված բեյլանցիները օգնեցին ՀԲԸՄ-ին իրենց խնայած նյութական նեղ միջոցներից: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նրանք նյութապես օգնեցին նաև մեր Հայրենիքին, «Սասունցի Դավիթ» հրասայլերի ստեղծման գործում, իրենց լուման ներդնելով ֆաշիստական Գերմանիայի ջախջախման գործում:

1946-47 թթ. բեյլանցիների մեծ մասը ներգաղթեց Խորհրդային



Հայաստան և այլևս հնարավորություն չունեցավ օգնելու ՀԲԸՄ-ին, քանի որ առաջին՝ ինքը կարիք ուներ օգնության, երկրորդ՝ ուզենար էլ չէր կարող օգնել խորհրդային օրենքների պայմաններում:

Լիբանանում ծագած քաղաքացիական պատերազմը քայքայեց նրա հայկական ամենածաղկուն համայնքը, և իրենց անվտանգությունը ապահովելու նպատակով հայերի մեծ մասը արտագաղթեց դեպի այլ երկրներ, հիմնականում Ամերիկա՝ Կալիֆորնիայի Լոս Անջելես քաղաքը: Այստեղ եկան նաև Հայաստանից արտագաղթած հայերի մի հոծ բազմություն, որոնց թվում բեյլանցիների մեծ մասը: Այսօր Լոս Անջելեսում բեյլանցիների թիվը հաշվվում է մոտ 300 ընտանիք:

Մերձավոր արևելքում հայերի ձուլվելու վտանգը մուսուլմանների հետ մեծ չէր, իսկ ԱՄՆ-ում անխուսափելի է, քանի որ երկիրը քրիստոնեական դավանանք ունի:

Ամերիկայում հայերի ձուլումը կանխելու նպատակով, գոյություն ունեցող ՀՄ-ներին ավելացան նորերը, և աշխուժացավ նրանց գործունեությունը:

1986 թ. ստեղծվեց ՊՀՄ-ն, որն աշխատում է ամեն կերպ օգտակար լինել իր ժողովրդին, բայց միջոցները չեն ներում: Չնայած դրան, որպես օգնություն, իր ունեցած համեստ միջոցներից, Կիլիկյան թեմի միջոցով 1987 թ. նա 2600 դոլար նվիրեց Բեյրութի հայկական դպրոցներին, որից 600 դոլարը վարչականները իրենց գրպանից նվիրեցին, 1000 դոլար՝ Էջմիածնական թեմի Հոլիվուտի Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցու վերանորոգման համար, 1988 թ. 1000 դոլար՝ Հայաստանի երկրաշարժի տուժածներին, 1989 թ. 1000 դոլար՝ Medical Outreach For Armenians, Inc.-ին, Հայաստանի համար բժշկական գործիքներ գնելու նպատակով, 1990 թ. 300 դոլար՝ հայերեն լեզվի, գրականության և հայոց պատմության նորակազմ դասագրքերի պատրաստության հրատարակության ֆոնդին՝ Լոս Անջելեսի ազգային վարժարանների կրթական և հայեցի դաստիարակության մակարդակը բարձրացնելու նպատակով: Այս բոլորով հանդերձ նա չի մոռանում օգնելու նաև Հայրենիքին

Համեստ նյութականի պատճառով վարչությունը չի կարողանում իրականացնել ԾԿ-ով նախատեսված ծրագրերը, ինչպես օրինակ՝ սաներ ունենալ դպրոցներում և համալսարաններում, ունենալ ձրի շաբաթօրյա կամ կիրակնօրյա դպրոց սկզբնական շրջանի համար, հետագայում այն ձրի ամենօրյա դպրոցի վերածելու նպատակով և այլն: Նույնիսկ մի անկյուն չունենք, ավելի լավ կազմակերպելու համար միության աշխատանքները:

Այսօր հայապահպանման գործը ավելի մտահոգիչ է դառնում, որովհետև Լոս Անջելեսում լույս տեսած տեղեկագրերի համաձայն մոտ 7000 հայ աշակերտներ սովորում են հայկական դպրոցներում, իսկ մոտ 21000 հայ աշակերտներ՝ ամերիկյան դպրոցներում. սա ավելի է ստիպում մեզ մտածելու հայկական նոր դպրոցներ ունենալու մասին:

Ահա այս նպատակներից ելնելով վարչությունը դիմում է ձեզ խնդրելով անդամագրվել միության, նյութապես օգնել նրան ձեր հնարավորության սահմաններում, ինչպես նաև ուղիներ ցույց տալ նրան նյութական միջոցներով ապահովելու համար: Առանց հայապահպանման, առանց նոր սերնդի հայեցի դաստիարակության հայ դատի պաշտպանությունը հնարավոր չէ:

Նախօրոք ընդունեցեք մեր շնորհակալությունները:

Հարգանքներով՝ ՊՀՄՎ:

Ատենապետ՝ ( ստորագրություն) ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ:

Քարտուղար՝ (ստորագրություն) ԳԵՎՈՐԳ ԳԱԶՋՅԱՆ:

Հայրենակիցներին ուղարկվելիք ԾԿ-ից կատարված քաղվածքը իր մեջ ընդգրկում էր.

ՊՀՄ-ի ԾԿ-ն կազմված է գոյություն ունեցող ՀՄ-ների ԾԿ-ի և փորձերի հիման վրա: Այն վերամշակված և հաստատված է ՊՀՄ-ի վարչության կողմից 1989 թ. ապրիլի 14-ին, նկատի ունենալով Բեյլանի և իր շրջակա բնակավայրերի բնակչության կենցաղային յուրահատկությունները և հասարակական-քաղաքական կառուցվածքը:

Ըստ ԾԿ-ի ՊՀՄ-ն չեզոք կազմակերպություն է, ինչպես նշված է դրա «Հոդված 8»ում և հիմնական նպատակն է պայքարել Սփյուռքում, հատկապես, Լոս Անջելեսում և շրջակայքում, ինչպես նաև հնարավորության սահմաններում ԱՄՆ-ում հայապահպանման համար, որից էլ բխում է իր բազմակողմանի գործունեությունը Հայրենիքից հեռու այս օտար ափերում:

Այս նպատակից ելնելով ՊՀՄ-ի գոյությունը կապված է միայն Սփյուռքի հետ և մշակված ԾԿ-ն լրիվ համապատասխանում է նրա գործունեությանը:

ԾԿ-ն ենթակա է փոփոխման տվյալ ժամանակաշրջանի պայմանների և հանգամանքների համաձայն:

ՀՈԴՎԱԾ 1. ԱՆՎԱՆՈՒՄԸ:

Նկատի ունենալով Բեյլանի՝ որպես իր շրջակա 14 հիմնական բնակավայրերի վարչական կենտրոն լինելու հանգամանքը, ինչպես նաև «Բեյլանի բարբառը», որով խոսել են այդ բնակավայրերի հայ բնակչությունը, որոշվեց միությունը անվանել «ՊԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ», հետագայում ՊՀՄ:

ՀՈԴՎԱԾ 2. ԿԱԶՄԸ:

ՊՀՄ-ն բաղկացած է Բեյլանի և հետևյալ 14 հիմնական բնակավայրերի հայրենակիցներից. Աթըխ, Գըրըզ Խան, Իսկէնդէրուն (հետագայում քաղաքնավահանգիստ), Գյուէյլի, Ղանլը Դէրէ, Ճիլմելի, Մէկկիթ Էօնիւ, Ներգիվլիք, Չաթախ, Բայլը Ղաաթալ, Սօղանձը, Սօվուգ Օլուգ, Դէրէ Բաhչա և Ֆարթըլը:

ՀՈԴՎԱԾ 3. ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ:

ՊՀՄ-ն հիմնադրված է 1986 թ. մայիսի 7-ին ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի Լոս Անջելես քաղաքում և քաղաքապետարանում գրանցված է 1986 թ. օգոստոսի 11-ին թիվ 86058190 համարի տակ, իսկ 1989 թ. մայիսի 12-ին վերագրանցված է թիվ 89039113 համարի տակ:

ՀՈԴՎԱԾ 4. ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ:

ՊՀՄ-ն հիմնադրված է Հիմնադիր ժողովի 17 անդամների կողմից, որոնք ներկայացնում են ՊՀՄ-ի հայրենակիցների բոլոր խավերն ու բնակավայրերը: Հիմնադիր անդամներն են (ըստ այբբենական կարգի).

Առաքելյան Առաքել, Ավետիքյան Կարապետ, Բահարյան Վահան, Գևորգյան Վահան, Գյուլայան Սարգիս, Դովլաթյան Գրիգոր, Դովլաթյան Հարություն, Էքշիյան Մարտիրոս, Թերջանյան Գևորգ, Հեքիմյան Արմենակ, Հովսեփյան Երվանդ, Մարաշյան Մանվել, Մելքիսեթյան Նորայր, Միսիրգևորգյան Նուբար, Նիկողոսյան Վարուժան, Պալյան Զարեհ, Ֆոդուլյան Հարություն:

ՀՈԴՎԱԾ 5. ԿՆԻՔԸ:

ՊՀՄ-ի կնիքն ունի «ՊԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» մակագրությունը՝ Բեյլանի և շրջակա 14 հիմնական բնակավայրերի անուններով:

ՀՈԴՎԱԾ 6. ՀԱՍՑԵՆ:



ՊՀՄ-ի ժամանակավոր հասցեն է.
**7310 KESTER AVE., #101**
**VAN NUYS, CA 91405**

ՀՈԴՎԱԾ 7. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:

ՊՀՄ-ն ոչ-քաղաքական, ոչ-կուսակցական, ոչ-հարանվանական (կրոնական տարբեր դավանանքների), ընկերային, հայապահպանմանը նպաստող, հայրենակիցներին օգտակար հանդիսանալու հեռանկարներ ունեցող ոչ-շահաբեր կազմակերպություն է (**non-profit organization**) և **IRS**-ում գրանցված է 1987 թ. հունվարի 5-ին հետևյալ համարի տակ. 95-4078383: Միությունում բացարձակապես արգելվում է անձնական հետաքրքրությունների չարաշահումը:

ՀՈԴՎԱԾ 8. ՆՊԱՏԱԿԸ:

ՊՀՄ-ի հիմնական նպատակն է.

ա. հայապահպանումը Սփյուռքում Լոս Անջելեսում և շրջակայքում, ինչպես նաև ԱՄՆ-ում, հնարավորության սահմաններում:

բ. ազգականական, բարեկամական և հայրենակցական կապերի հաստատում բոլոր հայրենակիցների հետ, որտեղ էլ որ բնակություն հաստատած լինեն նրանք, հնարավորության սահմաններում:

գ. ջատագովել և կորավից կանգնել հայապահպանման գործին՝ եկեղեցական, կրթական, մշակութային, գեղարվեստական, մարզական և այլ ասպարեզներում:

դ. Նյութական օժանդակություն (նպաստ կամ կրթաթոշակ) հատկացնել առաջավոր սովորողներին, առաջնությունը տալով նրանց, ովքեր կհետևեն ընկերային, հայագիտական և մարդասիրական ուղղություններին համալսարաններում:

ե. բարեկամական կապերի հաստատում մյուս ՀՄ-ների հետ, հայ գաղութի միասնությունը ամրապնդելու նպատակով, ինչպես նաև Մայր Հայրենիքի հետ:

ՀՈԴՎԱԾ 9. ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ:

ա. միության անդամ կարող են լինել բոլոր հայրենակիցները, նրանց զավակները, թոռները և խնամիները, որոնք մշտական բնակություն են հաստատել ԱՄՆ-ում:

բ. երկրագնդի բոլոր մայր ցամաքների հայրենակիցները նույնպես կարող են լինել միության անդամ, միաժամանակ իրենց նպաստը բերելով նրան:

ՀՈԴՎԱԾ 10. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Միության անդամ չեն կարող լինել նրանք, որոնք դատված են տվյալ երկրի օրենքները չհարգելու հետևանքով կամ ալկահոլ, խաղամոլ և թմրեցուցիչների մոլի օգտագործողներ են:

Վարչության անդամ չեն կարող լինել նույն ընտանիքից երկու հոգի՝ եղբայրներ, քույրեր, հայր կամ մայր և զավակներ և այլն, ինչպես նաև մոտիկ ազգականներ՝ հորեղբոր կամ մորեղբոր կամ մորաքրոջ զավակներ և այլն:

Ինչպես նշվեց, վարչականների այս գործի լրջությունը չհասկանալու հետևանքով ծրագիրը չիրականացավ:

«**Palm Spring**»ում ըստ պայմանավորվածության Սարգիս Սողոմոնյանի հետ, հունվարի 8-ից հետո մի քանի անգամ զանգահարեցի նրան, որպեսզի հանդիպենք և սրահի հարցը քննարկենք: Զանգերին պատասխան չստանալով նամակ գրեցի նրան, նշելով

նաև խոստացված 125 000 դոլարը միության հանձնելու հարցը, սրահ գնելու նպատակով: Ոչ մի պատասխան չստացա:

Մարտի 8-ի ՎՆ-ում Գևորգ Գազջյանը նշանակվեց երկրորդ քարտուղար: Սույն նիստում վարչությունը որոշեց ապրիլ 28-ին նախատեսված հոգեճաշի ժամանակ կատարել նաև հաշվետվություն և վարչության վերընտրություն:

Նահատակների հիշատակին նվիրված հոգեհանգիստ-հոգեճաշը տեղի ունեցավ Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցում և նրա սրահում, որտեղ մոմավառությունից հետո ասմունքեցին Մարի Թերջանյանը և Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան թատրոնի Դերասան Գրիգոր Օզարյանը: Հայրենակիցների կողմից նվիրատվություններ եղան միությանը:

Ատենապետը հաշվետվություն տվեց վարչության անցած տարվա գործունեության մասին, և տեղի ունեցավ վարչության վերընտրություն, որի համար 7 թեկնածուներով լրացված թերթիկները բաժանվեցին ներկա 138 հոգուն: Կազմվեց Հաշվիչ հանձնախումբ. Զարուհի Հեքիմյան՝ նախագահ, անդամներ՝ Վիկտորիա Գյոզալյան, Մարտիրոս Գյոզալյան, Մարի Դեմիրճյան, Մարի Թերջանյան: Ըստ Հաշվիչ հանձնախմբի, քվեարկության մասնակցել են 109 մարդ: Թեկնածուներին դեմ քվեարկողների թիվը.

1. Վահան Բահարյան՝ 2:
2. Սարգիս Խորշիդյան՝ 5:
3. Գրիգոր Դովլաթյան՝ 2:
4. Սարգիս Գյոզելյան՝ 30:
5. Արմենակ Հեքիմյան՝ 3:
6. Գևորգ Գազջյան՝ 4:
7. Մանվել Մարաշյան՝ 12:

Հետևաբար բոլոր թեկնածուներն էլ ընտրվեցին վարչության կազմում և կատարվեց պաշտոնների բաշխում.

1. Վահան Բահարյան՝ ատենապետ:
2. Գրիգոր Դովլաթյան՝ փոխատենապետ:
3. Գևորգ Գազջյան՝ քարտուղար:
4. Արմենակ Հեքիմյան՝ գանձապահ:
5. Մանվել Մարաշյան՝ գեղ. մասի պատասխանատու:
6. Սարգիս Խորշիդյան՝ խորհրդական:
7. Սարգիս Գյոզալյան՝ խորհրդական:

Այդ մասին հաղորդագրություն եղավ «Նոր կեանք»ում[1]:

Մայիս 6, 1991 թ. ՎՆ-ում քննարկվեց Տիկնանց հանձնախումբ

1. Տե՛ս թիվ 23, Մայիս 23, 1991:



ստեղծելու հարցը և որոշվեց այդ նպատակով հաջորդ նիստին հրավիրել մի խումբ անձանց:

Սույն նիստում քննարկվեցին նաև Անի Դեմիրճյանի համերգին մասնակցելու և միությանը կից մանկական գեղարվեստական խումբ ստեղծելու հարցերը: Անիի համերգին մասնակցեցին (կիրակի, հունիսի 2-ին) Վահան Բահարյան, Գրիգոր Դովլաթյան, Սարգիս Խորշիդյան, Մանվել Մարաշյան՝ երկուական և Արմենակ Հեքիմյան՝ մեկ հոգիով:

Մայիս 16, 1991 թ. ՎՆ-ից բացակա էր Գևորգ Գազջյանը:

Հրավիրվածներից ներկա էին. Սյուզի Հեքիմյան, Մարի Դեմիրճյան, Անի Գրիգորյան, Վիկտորիա Գյոզելյան, Սեդա Կվրյան, Տիգրանուհի Սաղրյան և Զարուհի Հեքիմյան:

Վարչությունը ստեղծեց իրեն կից Տիկնանց հանձնախումբ, որը հետագայում համալրվելու էր նոր անդամներով, ատենապետուհի նշանակեց Սյուզի Հեքիմյանին և հանձնարարեց նրան հաջորդ նիստին ներկայացնել հանձնախմբի անդամների պաշտոնները և գործունեության ծրագիր:

Ստեղծվեց նաև մանկական գեղարվեստական խումբ (երգ, պար, ասմունք), որի ղեկավարությունը հանձն առան Անի Գրիգորյանն ու Սեդա Կվրյանը, բայց այդ ժամանակ չասացին, որ դրա համար պետք է վճարվեն: Հայտարարություն տրվեց «Նոր կեանք»ում: Չնայած մեր ջանքերին, այս հարցը դրական արդյունք չտվեց: Հետագայում պարզվեց, որ այդ նպատակի իրականացումը դրամի գումարի հետ է կապված, որը վարչությունը չուներ (պետք է վարձվեին ասմունքի, երգի ու պարի լավ մասնագետներ):

7-31-91 թ. ՎՆ-ում, Սյուզիի ելույթից հետո, վարչությունը նպատակահարմար գտավ առայժմ միայն ատենապետուհու պաշտոնով շարունակել Տիկնանց միության գործունեությունը:

ՊՀՄ-ի դաշտահանդեսը տեղի ունեցավ կիրակի, սեպտեմբեր 1, 1991 թ. Նորթ Հոլիվուդի Մագնոլիա զբոսայգում և մեծ հաջողություն ունեցավ: Տիկնանց հանձնախումբը թխվածքեղենի տեսակներով ճոխացրեց դաշտահանդեսը: «Նոր կեանք»ում[1] լույս տեսած հոդվածում Մ. Ա. գրում էր.

Բացումը կը կատարեն 90-ը անց երեք տարեցներ՝ Էքշիեան Աբրահամ, Բոյաճեան Կարապետ եւ Գարամուսայեան Պօղոս: Եւ այսպէս պարեցին ամբողջ յետմիջօրէին մինչեւ որ մութը կոխեց:

Երևանից նոր եկած, ասմունքող Ժաննա Խտրյանի հետ ծանոթացել էի: Հրավիրեցի դաշտահանդես, ասմունքեց հայրենասիրական գործեր, ավելի աշխուժացնելով ուրախ մթնոլորտը:

1. Տե՛ս թիվ 39, Սեպտ. 12, 1991:

Դաշտահանդեսին ներկա էր Կարո Խանճյանը (Ռեբեկա Գասպարյանի եղբայրը) Ժնևից, որը 500 դոլար նվիրեց միությանը: Կարևորը երիտասարդության ներկայությունն էր, որը շարունակում է իր ավագ սերնդի սովորությունները՝ պահպանելով ինքնությունը այս օտար ափերում:

Դաշտահանդեսի հաշվետվության նիստին Սյուզին չէր եկել: Նա ուղարկել էր թխվածքեղենի և խաղալիքների վաճառքից գոյացած գումարը՝ 836 դոլար: Հետագայում նա ընդհանրապես հրաժարվեց մասնակցել վարչության գործունեությանը: Այն ժամանակ նա պատճառը չասաց: Այս տողերը գրելիս (հունիս 2001 թ.) զանգահարեցի նրան և նորից հետաքրքրվեցի այս հարցով: Պարզվեց, որ դաշտահանդեսում Մարի Դեմիրճյանի հետ խնդիրներ են ունեցել և ըստ Սյուզիի, վերջինս, վիրավորել է իրեն, որի պատճառով էլ հեռացել է: Սա իհարկե, վարչականի համար ներելի պատճառ չէ, քանի որ ինքն այդ հարցը պետք է ներկայացներ վարչության նիստի քննարկմանը: Որոշ ժամանակ անց, Տիկնանց հանձնախմբի մյուս անդամներն էլ հեռացան:

Շաբաթ, սեպտեմբեր 28, 1991 թ., վարչականները մասնակցեցին Աշոտ Տեր-Ստեփանյանի երեխաների ծնունդին:

1991 թ. հոկտեմբերի 16-ին համաժողովրդական ընտրությամբ անկախ Հայաստանի առաջին նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Այդ առթիվ վարչությունը շնորհավորական հեռագիր ուղարկեց (տե՛ս բնագիրը հավելված էջ 407), որը տպագրվեց նաև «Նոր Կեանք[1]»ում:

Ըստ 1991 թ. հոկտեմբեր 31-ին «California Courier»ում լույս տեսած հոդվածի, Սարգիս Սողանալյանը մեղադրվում է 1983 թ. Իրաքին 103 ուղղաթիռներ և 2 հրթիռներ վաճառելիս, Ամերիկայի ֆեդերալ օրենքները խախտելու ու մաքսանենգության մեջ և արգելափակվում է: Այս կապակցությամբ Նորայր Մելքիսեթյանը զանգահարեց ինձ: Նամակ գրեցի միության անունից, իսկ նա թարգմանեց անգլերենի և ուղարկեցինք (նամակի բնագիրը տե՛ս հավելված էջ 408)՝ նեցուկ կանգնելով ազգային բարերարին: Նամակի թարգմանությունը ներկայացնում ենք ընթերցողին.

ՊՀՄ-ի հայրենակիցների 413 ընտանիքների անունից վարչությունը գրում է ձեզ արտահայտելով իր դժգոհությունը, որ Սարգիս Սողանալյանը լինելով մեր միության ցկյանս նախագահուհու որդին ամենահարգված և սիրված բարերարն է հայ համայնքում, որը վերցված է ֆեդերալ կալանքի, և դատավորը խուսափում է նրան ազատ արձակել երաշխավորությամբ, մինչև նրա դատաքննությունը՝ դեկտեմբեր 20, 1991 թ.:

1. Տե՛ս թիվ 1, Դեկ. 19, 1991:





1991 թ. դաշտահանդեսում: Ձախից աջ՝ Կարո Խանջյան, Վահան Բահարյան, Ռեբեկա Գասպարյան:

Սարգիս Սողանալյանին գիտե մեր հայրենակիցներից համարյա յուրաքանչյուրը, որը վայելել է նրա բարոյական ու նյութական աջակցությունը միության ցանկացած միջոցառմանը՝ լինի մշակութային, ուսումնական, թե մարդասիրական նպատակներով:

Մենք ցանկանում ենք, որ դուք դատական իշխանություններին խնդրեք ազատ արձակել Սարգիս Սողանալյանին, որովհետև մենք համոզված ենք, որ նա անմեղ է, և իրեն վերագրված մեղադրանքները անհիմն են:

Արդար կլինի նրան թույլտրել միանալու իր ընտանիքին, որպեսզի հոգ տանի մորը, կնոջը, տղային, աղջկան, եղբայրներին, քրոջը, թոռնիկներին, եղբորորդիներին, քեռորդիներին:

Այս կապակցությամբ դեկտեմբեր 22, 1991 թվագրված շնորհակալական բացիկում Շըրլի Սողանալյանը գրում է.

Dear Mr. Baharian

Please accept our gratitude for your letter on behalf of Sarkis. It is a great comfort to have so many people in the Armenian Community expressing their care and concern for his welfare.

All of these letters have made an impression on the Judge. We are hopping for the good news of his release soon.

We are deeply grateful to you for what you have done.

Shirley Soghanalian

Երկտողի թարգմանությունը.

Հարգարժան պրն. Բահարյան

Սարգսի անունից խնդրում եմ ընդունել մեր երախտագիտությունը

ձեր նամակի համար: Մեծ մխիթարություն է հայկական համայնքում ունենալ այնքան շատ մարդիկ, որոնք հոգատարություն են ցուցաբերում և հետաքրքրվում են նրա բարեկեցությամբ:

Այս բոլոր նամակները մեծ տպավորություն թողեցին Դատավորի վրա: Մենք հույս ունենք նրա շուտով ապաքինման լավ լուրերի:

Մենք խորապես երախտապարտ ենք ձեզ ձեր արածի համար:

Երկտողը հպարտությամբ պատճառեց ինձ, քանի որ դա միաժամանակ ՊՀՄ-ի հեղինակությունն էր:

Հայաստանի անկախության նվիրված ճՊ-ն տեղի ունեցավ շաբաթ, դեկտեմբեր 21, 1991 թ. Եփրեմյան սրահում: Մասնակիցների թիվը 200-ի շուրջ էր, իսկ վաճառված էր 179 տոմս, մնացածները հրավիրյալներ էին մամուլից, հեռուստատեսությունից, ՀՄ-ներից, արվեստագետներ և եղեռնից վերապրող բեյլանցի տարեցներ:

Մեջբերվում է ճՊ-ի գրքույկի գրությունը.

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՆԿԱԽ

Հայ ժողովրդի երազանքները իրականացան: Երբեմնի Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, որը գոյատևեց 70 տարի, փլուզվելով իր տեղը զիջեց անկախ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ:

Խորհրդային Միության քայքայման ընթացքում Հայաստանում ստեղծված «Ղարաբաղ Կոմիտե»ն ճիշտ ուղիով ընթացավ, և 1991 թ. սեպտեմբեր 21-ին ընդհանուր ժողովրդական քվեարկությամբ Հայաստանը դարձավ անկախ Հանրապետություն, իսկ նույն թվի հոկտեմբերի 16-ի նախագահական ընտրություններում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը դարձավ նրա առաջին նախագահը, իր վրա վերցնելով չափազանց ծանր պարտականություն՝ ժողովրդին փրկել նեղ դրությունից, վերականգնել Հայաստանի քայքայված տնտեսությունը, քաղաքականապես ապահովել Հայաստանի Հանրապետության տեղը ազգերի միջազգային ընտանիքում:

Հայաստանի անկախ Հանրապետության այսօրվա տնտեսական վիճակը շատ ծանր է: Ուտելիքի գները այնքան բարձր են շուկայում, որ ժողովուրդը ի վիճակի չէ իր աշխատավարձով բավարարել կարիքները շուկայից, չաշխատողների դրությունը, բնականորեն, ավելի ծանր է, իսկ պետական խանութները դատարկ են: Մյուս կողմից Ադրբեջանի Հանրապետության ստեղծած շրջափակումը ծանր կացության է մատնել Հայաստանի տնտեսությունը, էլեկտրականությունը, գազը չեն բավարարում:

Այսօր Հայրենիքի ժողովուրդն օգնության կարիք ունի դաժան ձմեռն անցկացնելու համար: Ամեն մի հայի պարտքն է լուման ներդնելու այդ օգնության, հատկապես այսօր, որպեսզի սատարենք Հայրենիքի ժողովրդին կարգավորելու իր կյանքը, վերականգնելու Հայաստանի քայքայված տնտեսությունը և կերտելու նոր Հայրենիք, որն իր գիրկն ընդունի օտար ափերում տառապող զավակներին:

Վարչությունը կոչ է անում բոլորին, օգնել հայրենի ժողովրդին լուսավոր ապագա կերտելու, որը, հույսով ենք կիրականանա մոտակա տարիներին հանձին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի:



ՀՄՄՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սփյուռքում հայը եռուն գործունեություն է ունենում տվյալ երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում, որը, բնականորեն, նպաստում է նաև հայապահպանման գործընթացին: Նկատի ունենալով հայ համայնքի ազգային շահերը՝ երեքշաբթի, մարտ 5, 1991 թ. ՀՄՄՄ-ը հանդիպում ունեցավ Գլենդել քաղաքի քաղաքապետ Լերի Զարյանի հետ: Նեցուկ կանգնելով նրա թեկնածությանը՝ կոչ արեց հայ համայնքին քվեարկել նրա օգտին ապրիլի 2-ին տեղի ունենալիք քաղաքապետարանի ընտրություններում:

ՀՄՄՄ-ի առաջին ձեռնարկը՝ «Ազգային և Էստրադային Երգերի Փառատոն»ը տեղի ունեցավ Փասադենայի քոլեջի «Sexon» սրահում 1991 թ. ապրիլի 14-ին, երեկոյան ժամը 7-ին՝ հովանավորությամբ ազգային բարերար տեր և տիկին Վահան և Անուշ Շամլյանների, ի նպաստ Հայաստանի և Լիբանանի առողջապահական և կրթական կարիքներին: Հանդիսավարն էր Գրիգոր Շենյանը:

Ելույթ ունեցան անվանի արվեստագետներ Մանվել Մենենկիչյան, Հարութ Փամբուքչյան, Նարինե Հարությունյան, Անիթա Մաթթա, Հովիկ Գրիգորյան, Գևին Ջորջ Մուրադյան, Լևոն Քաթրջյան և Անդրե Դանիք: Բոլորն էլ սիրահոժար բերին իրենց մասնակցությունը ձեռնարկին:

Իր բացման խոսքում Շենյանը նշեց ՀՄՄՄ-ի դերի ու գործունեության մասին հայ համայնքի կյանքում:

Փառատոնն անցավ բարձր մակարդակով: «Նոր Կեանք»-ում[1] Մելքոն Արսլանյանիստորագրությամբ լույս տեսած հոդվածում կարդում ենք.

... Քաղաքապետ Լէրի Զարեան ... յուշատախտակով մը պարգեւատրեց բարերար Վահան Շամլեանը:

Շատ հայկական էր Լէրի Զարեանի ներբողականը ուղղուած բարերարին. «... Վահան Շամլեան առատօրէն տուաւ հայ պատանիին դաստիարակութեան համար, առանց հատուածական նկատառումներու: Կլէնտէյլ քաղաքը հպարտ է Վահան Շամլեանով»:

... Մինչև այն ատեն, որ ՀՄ-ները օգտակար ներդրում ունին ազգային կեանքին մէջ, մենք կը ծափահարենք անոնց գործունէութիւնը:

ՀՄՄՄ-ի ատենապետ Գրիգոր Շէնեան և տիկինը՝ Արշօ, գնահատանքի եւ շնորհակալութեան յուշատախտակ մը յանձնեցին Շամլեաններուն:

Իր ելույթում Վահան Շամլյանը գովաբանեց ՀՄՄՄ-ի ստեղծումը՝ նրա ազգային գործունեությունը տեսնելով հայ համայնքի ավելի սերտ համախմբման, հայապահպանման, Հայրենիքին օգնու-

1. Տե՛ս թիվ 19, Ապրիլ 25, 1991, էջ 11:

թյան գործում: Այդ գործունեությունը սատարելու համար ՀՄՄՄ-ին նվիրեց 10000 դոլար: Նա մասնավորապես ասաց.

Երկար տարիներու իմ հայրենասէր հայու մտածումը և ցանկութիւնը եղած է տեսնել բոլոր հայերը միացեալ, մէկ հայրենիք և մէկ ժողովուրդ կարգախօսով, ուրեմն ինծի համար այսօրուայ ձեռնարկը իմաստալից է ... որովհետեւ ան կազմակերպուած է բոլոր հայրենակցական միութիւններու համագործակցութեամբը, առանց քաղաքական, հատուածական ... բաժանումներու: ... Միութիւնը զօրութիւն է: Մեր ոյժն ու ապագան կախեալ են մեր հաւաքական վճռականութենէն, իրարու հետ, իրարմով, իրարու համար, մտածելով, ձգնելով, որպէսզի գրկենք հպարտության ճամբան, ըսելով կեցցէ հայ ժողովուրդը և կեցցեն բոլոր անոնք, որոնք անշահախնդրօրէն լծուած են մեր ազգին և հայրենիքին ծառայութեան սրբազան գործին:

Փառատոնից անմիջապես հետո ՀՄՄՄ-ն և հյուրերը հավաքվեցին Մարաշի ՀՄ-ի սրահում (Փասադենա) և նշեցին փառատոնի հաջողությունը՝ յուրաքանչյուրն իր սրտի խոսքն ասելով, որ ուղեկցվում էր երգով և ասմունքով:

1991-1993 թթ. Հայաստանի անկախ Հանրապետության և հայրենի ժողովրդի համար եղան դժվարին տարիներ այն աստիճանի, որ մարդիկ, նույնիսկ, տարիներով իրենց համար դժվարությամբ ստեղծած սրբության՝ գրադարանի գրքերն էին վառում, իսկ ապրուստի ահռելի դժվարությունների մասին, արտահայտելու խոսք չենք գտնում:

ՀՄՄՄ-ի նիստում քննարկվեց 10000 դոլարը բաժանելու հարցը: Առաջարկվեց նշված գումարը հավասար բաժանել Հայաստանի և Բեյրութի հայկական դպրոցների համար: Նկատի ունենալով Հայրենիքի վերոնշյալ դժվարին պայմանները, առարկեցի այդ առաջարկի դեմ: Որոշվեց 6000 դոլարը հատկացնել Հայաստանին, 4000 դոլարը՝ Բեյրութի հայկական դպրոցներին:

Պատեհ առիթ ստեղծվեց ՀՄՄՄ-ի անդամների միջոցով գումարները տեղ հասցնելու: Գրիգոր Շենյանը գնում էր Հայաստան, իսկ Այնթապի ՀՄ-ի ատենապետ Ճեք Ապաճյանը՝ Բեյրութ: Բեյրութ ուղարկվելիք գումարը պետք է բաժանվեր հայկական դպրոցներին ըստ կարիքի, սա պարզ էր: Իսկ Հայաստան ուղարկվելիք գումարի հարցը պարզ չէր, թե ի՞նչ ձևով նպատակին պիտի հասներ, որ, իրոք, օգնած լինեինք հայրենի ժողովրդին: Հարցը քննարկվեց ՀՄՄՄ-ի նիստում: Քանի որ վարչականների մեծ մասը մասամբ էր տեղյակ այդ օրերում Հայրենիքում տեղի ունեցող իրադարձություններին, և չէին կարողանում որոշել, թե գումարը ի՞նչ նպատակի հատկացնել: Որոշվեց լուծումը թողնել Շենյանին՝ Երևանում ծանոթանալ պայմանների հետ, կողմնորոշվել և հատկացնել բարեսիրական նպատակների համար:





Հանդիպում Լերի Զարյանի հետ: Ձախից աջ՝ Ա. շարք. Հարություն Զոպանյան (Հաճըն), Վահան Բահարյան (Պէյլան), Գևորգ Աստուրյան (Մարաշ): Բ. շարք. Տիգրան Գալուստյան (Մարաշ), Գրիգոր Շենյան (Քիլիս), Հակոբ Գլըճյան (Ուրֆա), Լերի Զարյան, Գուրգեն Պետրոսյան (Համավասպուրական), Սարգիս Խորշիդյան (Պէյլան), Ժագ Ապաճյան (Այնթապ):

Նկարում բացակայում են Զեյթունի, Էվերեկ-Ֆենեսեի, Մուսա Լեռան և Տիգրանակերտի ներկայացուցիչները:

ՀՄՄՄ-ի նիստում Շենյանը հայտարարեց, որ գումարը տրված է Երևանի «Մուշեղ Իշխանի անվան դպրոց»-ի տնօրինությանը: Նրան տրված է հետևյալ գրությունը.

Լոս Անջելեսի ՀՄՄՄ-ի ատենապետ հարգարժան
պրն. Գրիգոր Շենյան-Գլենդեյլ, ԱՄՆ.

Հարգելի պրն. Գ. Շենյան

Ս/թ. հոկտեմբերի 1-ին մեծ շնորհակալությամբ և երախտագիտությամբ ստացանք ձեր ղեկավարած Հայրենակցական միությունների միացյալ մարմնի կողմից նվիրաբերած 200000 (երկու հարյուր հազար) ռուբլու չեքը՝ մեր Մուշեղ Իշխան վարժարանի բանկային հաշվեցույցի վրա:

Վերոհիշյալ գումարը կծախսվի վարժարանի նոր շենքի՝ Մուշեղ Իշխան թանգարան-սրահի պետքերը հոգալու համար: Սրահի մուտքի մոտ կպետեղվի հուշատախտակ, հետևյալ մակագրությամբ.

ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ՍՐԱՀ
ԲԱՐԵՐԱՐՈՒԹՅԱՄԲ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻԱՑՅԱԼ ՄԱՐՄՆԻ



Վահան Շամլյանը ՀՄՄՄ-ի անդամների հետ: Ձախից աջ. առաջին շարք՝ Հակոբ Գլըճյան, Սարգիս Խորշիդյան, Վահան Շամլյան, Անուշ Շամլյան, Գրիգոր Շենյան և Տիգրան Գալուստյան: երկրորդ շարք՝ Մհեր Պապյան, Վահան Բահարյան, ... Պողոս Մելքոնյան, Գևորգ Աստուրյան, Ճեք Ապաճյան և Հայկազուն Բասարճյան:

Արդ, թույլ տվեք վերստին մեր վարժարանի ուսուցչական և աշակերտական կազմի կողմից հայտնել մեր խորին երախտագիտությունը:
Հայրենական ողջույններով և հարգանքով՝

ՏՆՕՐԷՆՈՒՀԻ՝ ՓՈԽՏՆՕՐԷՆ՝
Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ա. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
(ստորագրություն) (ստորագրություն)
(կնիք)

ՀՄՄՄ-ի նույն նիստում Բեյրութից վերադարձած Ճեք Ապաճյանը հայտարարեց, որ Բեյրութի դպրոցները բոլորովին կարիք չունեին ՀՄՄՄ-ի ուղարկած դրամին, նրանց դրությունը լավ էր: Բայց, իհարկե, գումարը տրված էր:

Որոշ Վարչականներ համաձայն չէին Երևանում գումարը դպրոցին հատկացվելուն և իրենց դժգոհությունը արտահայտեցին այդ կապակցությամբ, որ դրամը դպրոցին նվիրելու ժամանակը չէր, երբ գոյատևման պայքար է գնում այնտեղ:

Գրիգոր Շենյանն ասաց, որ եթե վարչականները համաձայն





Ապրիլ 24, 1991 թ.: Վահան Բահարյան (ձախում) և Պողոս Մելքոնյան Մոնթոբելլոյի հուշարձանի մոտ ՀՄՄՄ-ի կողմից ծաղկեպսակ են զետեղում 1915 թ. նահատակների հիշատակին:

չեն իր ընդունած որոշման հետ, ինքը գրպանից կտա դպրոցին այդ գումարը: Բայց ինչպե՞ս կարելի էր փոխել տրված գրությունը կամ դպրոցի ղեկավարությանը հայտնել, որ ՀՄՄՄ-ն համաձայն չէ Շենյանի որոշման հետ: Չէ՞ որ դա կապված էր ՀՄՄՄ-ի հեղինակության հետ: Հետևաբար, հարցը լուծված համարվեց:

Հինգշաբթի, հունիս 20, 1991 թ. Թարզանայի «Ճաչարան Միհրան»ում ՀՄՄՄ-ն հանդիպում ունեցավ հայրենի անվանի արձակագիր Ստեփան Ալաջաջյանի հետ, նրան ծանոթացրեց գործունեության ծրագրերի հետ: Ստեղծվեց ջերմ մթնոլորտ, հուշեր պատմվեցին Հալեպից և Հայաստանից: Նշվեց գրողի ծառայությունը հայ ժողովրդին իր ունեցած գրական ժառանգությամբ, ինչպիսիք են. «Եղեգները ձխոնարհվեցին» և «Զայրացած վերք»՝ Մեծ Եղեռնի ու տարագրության մասին և բազմաթիվ այլ հատորներ: Նրա ստեղծագործություններից շատերը թարգմանված են անգլերեն, ֆրանսերեն և այլ բազմաթիվ լեզուներով:

Մի քանի խոսք այս հանդիպման մասին: Միգուցե ընթերցողին տարօրինակ թվա, բայց այսպիսի հանդիպումները ավելի են իմաստավորվում, երբ ջերմ մթնոլորտ է ստեղծվում, որի դրդիչը,

իհարկե, նաև խմիչքն է։ Օդում շիշը մեր վրա նստեց՝ ըստ վարչականների, 60 թե 70 դոլար, որի թանկության պատճառով, այդպես էլ սեղանի շուրջը չորսից-հինգ ժամ նստածները, բնականորեն, մեկ բաժակից էլ պակաս օղիով «լրիվ չբացվեցին» և կաշկանդված վիճակ ստեղծվեց։ Ինչ խոսք, որ հիշատակի արժանի հանդիպում էր, բայց տեղի ընտրությունը սխալ էր։ Այն ավելի արդյունավետ կլիներ, եթե ՀՄՄՄ-ի անդամներից մեկի տանը կազմակերպվեր ու հայավարի հյուրընկալեինք մեծ գրողին։ Երբ այս մասին խոսեցի Գրիգոր Շենյանի հետ, նա նկատեց, թե ինչո՞ւ չուտ չասացի։ Ես տեղյակ էլ չէի հարցի այդպիսի «կազմակերպվածությունից», որը հաճախ կատարվում է մի հոգու կողմից, առանց լրջության։ Համենայն դեպս այդ օրը մասնակցողների հիշողության մեջ մնաց արժանահիշատակ տարեթիվ։



## Է. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1992 Թ.

1992 թ. փետրվարին տեղի ունեցած «Medical Outreach Karabagh Fond»ին ՊՀՄ-ն մասնակցեց 500 դոլարով, 100-ական էլ նվիրեցին Վահան Բահարյանը, Գրիգոր Դովլաթյանը, Արմենակ Հեքիմյանը, Սարգիս Խորշիդյանը և Սարգիս Գյոզալյանը՝ միության նվիրած գումարը հասցնելով 1000 դոլարի։

Սարգիս Սողանալյանի դատաքննությունը շարունակվում էր։ Հոդված գրեցի «Ի Պաշտպանություն Ազգային Բարերար Սարգիս Սողանալյանի։ Մեծ Քաղաքացին, Մեծ Բարերարը, Մեծ Ազգայինը» խորագրով (տե՛ս բնագիրը հավելված էջ 410-411), որը լույս տեսավ «Նոր Կեանք» շաբաթաթերթում[1], «Նոր Օր»ում[2] և այլ թերթերում։

Ըստ պայմանավորվածության, Նորայր Մելքիսեթյանը հոդվածը թարգմանեց անգլերենի և նամակի հետ ուղարկեցինք Սարգիս Սողանալյանի փաստաբան Սոնետին (տե՛ս բնագիրը հավելված էջ 409)։ Հոդվածը մեջբերվում է.

Կյանքում քիչ մարդկանց է ճակատագիրը ժպտում առանց արգելքների բարձրանալու կյանքի աստիճաններով և իր արժանի տեղը գրավելու հասարակության մեջ: Նաև քիչ անհատներին է վիճակվում իրենց քրտնաջան աշխատանքի շնորհիվ հասնել նույն բարձունքների, դառնալ հասարակության մի մասնիկը, ձուլվելով նրա հետ, ապրելով նրա կյանքով, նրա հոգսերով, նրա ուրախությամբ ու տխրությամբ և արժանանալով նրա համակրանքին, հարգանքին ու պատվին:

Ահա այս երկրորդ մարդկանց շարքին է պատկանում հայ ժողովրդի պավակ Սարգիս Սողանալյանը, որը վերջերս ամբաստանվեց ամերիկյան բարձրագույն ատյանների կողմից:

Իմ կարծիքով, յուրաքանչյուր երկրում պետության օրենքները այնքան ճկուն են գրված, որ միշտ անհատ մարդն է մեղավոր պետության առջև՝ անկախ նրա անմեղությունից: Այս կետը ես չեշտում եմ, որովհետև նույն միտքը արտահայտել էր իր ժամանակին Նապոլյոն Բոնապարտը: Երբ կազմվեց կայսերական սահմանադրությունը, կարդալով նախագիծը, նա վերադարձրեց այն հանձնաժողովին, շեշտելով ու պահանջելով, որ այն կազմվի այնպես, որ ճկուն լինի, և պետությունը կարողանա այդ օգտագործել միշտ իր շահերի պաշտպանության համար:

Եւ ինչո՞ւ համար Սարգիս Սողանալյանը պետք է լիներ ամբաստանվողը: Մի քիչ ետ գնալով վերհիշենք դեպքերը:

Երբ սկսվեց Իրաք-Իրան պատերազմը, ԱՄՆ-ի շահերը պահանջում էին, որ Իրանը լինի պարտվող կողմը: Իսկ Սարգիս Սողանալյանը լավ բարեկամն էր Իրաքի նախագահ Սադդամ Հյուսեյնի, որը բնականաբար

---

1. Տե՛ս թիվ 16, Ապրիլ 2, 1992։
2. Տե՛ս, Ապրիլ 18, 1992։

չէր վրիպելու կառավարության աչքից: Եւ ահա ԱՄՆ-ի կառավարությունը մեծ լիազորություններ տվեց (օրենքի սահմաններում անշուշտ) ռազմամթերքի վաճառական Սարգիս Սողանալյանին, որպեսզի իր հնարավորությունները օգտագործելով նա կարողանա զենք ու զինամթերք մատակարարել Իրաքին: Եւ այդպես էլ եղավ: Հիշում եմ նույնիսկ մի հեռուստատեսային հարցազրույց (երևի շատերը նույնպես կհիշեն) կարծեմ 2-րդ հեռուստածրագրից էր, որի ընթացքում հարց տրվեց Սարգիս Սողանալյանին, թե որքա՞ն զենք ու զինամթերք է վաճառել և ի՞նչ շահաբաժին ունի. նա պատասխանեց, որ վաճառել է մեկ միլիարդ դոլարի զենք և զինամթերք, որի 10%-ն է միայն իրենը:

Երբ մի քանի տարի առաջ բարձրացավ «Իրան-Քոնթրա» հարցը, երկար տևեց դրա քննարկումը և մեղավորներին ի հայտ բերելը: Երբ սկսվեց Պարսից Ծոցի պատերազմը, և դաշնակիցները տոնեցին իրենց հաղթանակը Իրաքի դեմ, ահա այն ժամանակ Սարգիս Սողանալյանը հայտնվեց հակառակ բևեռում և «Իրան-Քոնթրա» հարցի մեղավորների փոխարեն ինքն ամբաստանվեց, և բոլոր հարցերը փակվեցին:

Անձնական ծանոթությունը Սարգիս Սողանալյանի հետ եղավ **1990 թ.** դեկտեմբերին, երբ նա հովանավորեց մեր՝ ԴՀՄ-ի վարչության կազմակերպած ՃՊ-ն: Մի խոսակցության ընթացքում, երբ խոսք բացվեց զենքի առևտրի մասին, նա ասաց, որ ոչ մի զենք չի ծախել որևէ մեկին առանց հաստատված իրավաբանական փաստաթղթերի՝ համապատասխան գերատեսչությունների կողմից: Նա շատ պգայուն մարդ է, զգացի ՃՊ-ի ժամանակ:

Հանդիպեցի նրան հյուրանոցում, և երբ պատրաստվում էինք ուղևորվել ՃՊ-ի սրահը, նա ասաց, որ շատ չպիտի կարողանա մնալ, որովհետև ժամը **9:30**-ին հեռախոսային խոսակցություն ունի և պետք է հյուրանոցում լինի: Ասացի, որ երբ ցանկանա, մենք պատրաստ ենք իրեն հասցնելու հյուրանոց: Գնացինք սրահ: Ժողովրդի ոգևորությանը սահման չկար: Երեխաների բազմությունը և պարելը տեսնելով՝ նա շատ ուրախացավ, մի տեսակ կարծեք ինքնիրեն ասելով, որ մեր երեխաները հայ են մեծանում: Իմ ելույթից հետո, երբ մոտեցա նրան, նա ասաց, որ շատ հուզված է, քանի որ Հայրենիքի հոգսերը միշտ առաջին գծի վրա են ձեզ մոտ ևս, ինչպես ամենուր:

Նա մոտեցավ համարյա բոլոր սեղաններին և տեսնելով երիտասարդների ու երեխաների հայ ոգով դաստիարակության միջոցառումները (հիարկե լսելով նաև նրանց մասին) շատ հուզվեց և որպեսզի շարունակվեն դրանք **10000** դոլար կանխիկ նվիրելուց հետո, **125000** դոլարի էլ խոստում կատարեց ԴՀՄ-ին, որը, դժբախտաբար, չիրականացավ հաջորդող ձախորդ օրերի հետևանքով: Նա ՃՊ-ի սրահից հեռացավ առավոտյան ժամը **2:30**-ին՝ ասելով, որ միջավայրը շատ հուզիչ էր: Նա մեծ բավականություն էր ստացել:

Սարգիս Սողանալյանը, իրոք, բարերար է և իր ազգի մարդը. այն մարդը, որ երբեք տարբերություն չի դնում տարբեր կուսակցությունների ու միությունների միջև: Երբ անում է իր նվիրատվությունները, այս կետը ավելի ևս է բարձրացնում նրա արժեքը, հարգանքն ու պատիվը որպես հայ մարդու, որպես բարերարի ու ազգասերի:

Նա մեծ օգնություն հասցրեց Հայաստանին **1988 թ.** երկրաշարժի ժամանակ, իր օդանավերն ու նրանց անձնակազմերը տրամադրեց այդ գործին:

Ուստի, ժամանակն է, որ բոլորս բարձրացնենք մեր ձայները, օգնենք դատապաշտպան Նիլ Սոնեթին, որպեսզի Սարգիս Սողանալյանը նորից վերադառնա իր տեղը և շարունակի ազգային ու բարեսիրական իր գործունեությունը՝ հանուն մեր ազգի պահպանման ու գոյատևման:



**Վարչությունը միշտ կապ էր պահպանում Հայաստանի ԲՀԿՀ-ի հետ: Որոշեց հանգանակություն կազմակերպել Հայաստանի հայրենակիցներին օգնելու նպատակով, նկատի ունենալով Հայաստանում տիրող անմխիթար վիճակը՝ անգործությունը, երկրաշարժը, Արցախում շարունակվող պատերազմը և Անդրանիկ Դովլաթյանին խնդրեց՝ ուղարկել բեյլանցիների ցուցակը:**

**Վարչությունը հունվար 8, 1992 թվակիր մի նամակ ստացավ Անդրանիկ Դովլաթյանից կարիքավոր հայրենակիցների ցուցակի հետ: Նամակի կարևոր մասերը մեջբերվում են, որպեսզի ընթերցողը կարողանա ըմբռնել այդ ծանր օրերում Հայաստանի հայրենակիցների հոգեբանությունը.**

Պէյլանի հայրենակցական միության հարգարժան նախագահ պրն. Վահան Բահարյան ու հարգելի վարչության անդամներ:

Ընդառաջելով ձեր փափաքին ... ուղարկում եմ (պահանջված) ցուցակը: Սարսափելի սղություն սկսվեց: Մի քանի խոսք ամենօրյա օգտագործվող մթերքների մասին. մեկ կիլոգրամ հացը արժե **3** ռուբլի, որ **50** կոպեկ էր, մեկ կիլոգրամ յուղը՝ **300** ռուբլի, մեկ կիլոգրամ միսը՝ **60-70** ռուբլի, իսկ Ռուսաստանում մինչև **200** ռուբլի, որ մարդու հավատալը չի գալիս, կարտոֆիլը (գետնախնձորը) **7** ռուբլի, շաքարը ձեռքի վրա՝ **20** ռուբլի և այսպես շարունակաբար, կոշիկը, որ **30-50** ռուբլի էր, հիմա **500-600** ռուբլի է: Ահա այսպես: Սիրելիներ, այս կարդալով մի կարծեք, որ Հայ ազգը հուսահատ է, այլ համբերատար՝ գալիք օրվա համար: Այսօր Հայաստանը նոր հիմքեր դրեց և շատ ամուր է: ... Հայաստանը մի քանի տարի հետո շատ լավ կլինի, այս երկու տարին է դժվարը: Լևոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, որ տարին **3,5** տոննա ոսկի և **8-12** տոննա արծաթ պետք է ձուլվի, ... սեփական խանութներ են բացում, հուսով ենք, որ ապագան լավ կլինի:

Սիրելի Վահան և վարչության անդամներ, ձեր մարդասիրությունը մեծ, չնորհալի գործ է, ապրե՛ք. տրված փողերի դիմաց ստացական կուղարկենք, որպեսզի ... խոսակցության առիթ չտրվի: Այս նեղ օրերն էլ կանցնի, հայ ազգը աշխարհում ամենատոկուն և ամենահամբերատար ազգն է:

Ձեր բարի գործի համար ի սրտե կհամբուրեմ վարչության բոլոր անդամների ճակատները և կցանկանամ ձեզ քաջառողջություն:

Չմոռանաք նաև հուշարձանի բարենորոգման մասին, ծառերը չորանում են, պետք է հեռացվեն և նորերը տնկվեն, բայց մոտ **200** դոլարի կարիք կա գտնելու հարցը լուծելու համար: Այս հուշարձանը բոլոր բեյլանցիների պատիվն է, ուշ թե կանուխ ամբողջ հայությունը պետք է վերադառնա ազատ ու անկախ Հայաստան, որ **600** տարիներ չուներ իր անկախությունը: Ճիշտ է փոքր է իր տարածքով, ինչպես Բելգիան էլ հազիվ Հայաստանի չափ է, բայց **12-13** միլիոն բնակչություն ունի, այս հողամասը կարող է ավելի շատ բնակչություն կերակրել: Ես լավատես եմ, կգա ժամանակը և մեր նախնիների երազածը կլինի՝ դրախտավայր Հայաստան:

Շնորհավորում եմ ձեր Նոր Տարին և Սուրբ Ծնունդը: Աստծո օրհնությունը ձեր վրա լինի:

Բեյլանի հուշարձանի հանձնախմբի նախագահ՝
Անդրանիկ Դովլաթյան:

01-29-92 թ. ՎՆ-ում նամակը կարդացի և վարչականներին հայտնեցի, որ օգնությունը Հայաստանում միայն բեյլանցի հայրենակիցներով պետք չէ սահմանափակվի: Ցուցակում ընդգրկված 19 ընտանիքը քիչ է, պետք է նկատի ունենալ 60-70 ընտանիք:

Սույն նիստում ամփոփվեց նաև հանգանակության արդյունքը, որը բավարար չէր, 3 վարչականներ՝ Գևորգ Գաջջյանը, Մանվել Մարաշյանը և Սարգիս Գյոզալյանը ոչ մի սենթ չէին հավաքել:

Պարզաբանելով ստացված նամակը և խոսելով հանգանակության մասին, մի քիչ խիստ արտահայտվեցի՝ շեշտելով, եթե մեր միությունը չի օգնում իր ժողովրդին այս նեղ օրերին, ինչի՞ է ծառայում նրա գոյությունը, նրա համա՞ր, որ մենք ցույց տանք ՊՀՄ-ի վարչության անդամներ ենք ու դրանով պարծենանք ամենուրեք: Որոշվեց հանգանակությունը շարունակել:

2-21-92 թ. ՎՆ-ում ամփոփվեց հանգանակության արդյունքը.

1. Վահան Բահարյան՝ 965 դոլար:
2. Գրիգոր Դովլաթյան՝ 438 դոլար:
3. Գևորգ Գաջջյան՝ 10 դոլար:
4. Արմենակ Հեքիմյան՝ 160 դոլար:
5. Մանվել Մարաշյան՝ 0 դոլար:
6. Սարգիս Խորշիդյան՝ 90 դոլար:
7. Սարգիս Գյոլեյան՝ 321 դոլար:

Հավաքվել էր ընդամենը 1984 դոլար:

Վարչությունը շնորհակալություն հայտնեց այն հայրենակիցներին, որոնք մասնակցեցին հանգանակությանը:

Գևորգ Գաջջյանը 10 դոլար «հանգանակեց», նիստի ժամանակ գրպանից տալով դժկամորեն, Սարգիս Գյոզալյանը կատարեց իր պարտականությունը՝ ազդվելով նախորդ նիստում հնչած մեղմ հանդիմանությունից, այն վերաբերում էր բոլոր վարչականներին: Հայաստանի հայրենակիցներին նյութական օգնություն հասցնելու ամենավառ և առաջին ջատագովներից Մանվել Մարաշյանը մեկ սենթ անգամ չհավաքեց:

Որոշվեց Հայաստանին հատկացնել 4000 դոլար.

1. Հայկական հյուպատոսարանի հիմնադրման ֆոնդին (Վաշինգտոն)՝ 1000 դոլար (չեք #209, 4-21-92):
2. Medical Outreach Karabagh Fund-ին՝ 500 դոլար (չեք #208, 3-08-92):
3. Ժողովրդին բաժանելու համար՝ 2000 դոլար (չեք #215,6-22-92):
4. Որբանոցի համար՝ 500 դոլար:

Այս ընթացքում միությունը նյութապես օգնեց նաև Լոս Անջելեսի Արշակ Տիգրանյան վարժարանի և այլ նպատակների համար:

Մարտ 19-92 թվակիր նամակով Մայր Մարիամ Սողանալյանը



100 դոլար էր նվիրել միության «ի հիշատակ նորեկ հանգուցյալ Ռուբինա Խանջյանի քառասունքի» առիթով և Ս. Զատկի առթիվ շնորհավորական բացիկ էր ուղարկել վարչությանը:

ԲՀԿՀ-ի նախկին անդամներից Հարություն Հարությունյանը (որը մասնակցում էր վարչության նիստերին, բայց դեռ անդամ չէր) Երևան էր գնալու:

4-17-92 թ. ՎՆ-ում որոշվեց դրամը ուղարկել նրա հետ և բաժանել ժողովրդին վարչության կողմից կազմված հետևյալ հանձնախմբի միջոցով.

1. Անդրանիկ Դովլաթյան՝ նախագահ:
2. Տեր Հակոբ Կեպենյան՝ տեղակալ (Գ. Դովլաթյանի առաջարկով):
3. Խաչատուր Բահարյան՝ քարտուղար:
4. Հարություն Հարությունյան՝ գանձապահ:

Տեր Հակոբ Կեպենյանը, ապրելով Լենինականում, չէր կարող մասնակցել դրա աշխատանքներին: Նա փոխարինվեց Գյոզալյան Ասատուրով: Նկատի ունենալով տվյալ ժամանակում տիրող իրավիճակը Հայաստանում՝ գողություն, ավազակություն, դոլարը ծախսելու դժվարություններ, վարչությունը ընդունելի համարեց հայրենակիցների առաջարկը՝ ռուբլի բաժանել դոլարի համապատասխան արժեքով: Իսկ որբանոցի համար նախատեսված գումարը չիմանալով ում հատկացնել, հանձնարարվեց Հարություն Հարությունյանին, որպեսզի հարցը տեղում լուծի, որը այդպես էլ չլուծվեց և օգնությունը չիրականացավ:

4-21-92 թ. ՎՆ-ում 1000 դոլար նվիրելու կապակցությամբ վարչությունը նամակ ուղարկեց Վաշինգտոնում Հայաստանի հյուպատոսարանին (լուսապատճեն տե՛ս հավելված էջ 412): Նույն նիստի որոշման համաձայն ցավակցական հեռագիր ուղարկվեց Արցախի նախագահ Արթուր Մկրտչյանի մահվան առթիվ (տե՛ս բնագիրը հավելված էջ 413: Հյուպատոսարանի մայիս 15, 1992 թվակիր շնորհակալական նամակի բնագիրը տե՛ս հավելված էջ 414):

Վարչության կազմակերպած հոգեհանգիստ-հոգեճաշը տեղի ունեցավ ապրիլ 26, 1992 թ. Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցում և նրա սրահում հայրենակիցների և հյուրերի մասնակցությամբ, մի անգամ ևս նշվեց հայ անմեղ նահատակների հիշատակը: Ելույթում նշեցի.

... Այսօր ահա նորից հավաքված ենք այս սրահում, ինչպես ամեն տարի, նշելու համար հայ ժողովրդի 1915 թ., Սումգայիթի, Բաքվի, Կիրովաբադի, երկրաշարժի զոհերի և Արցախի մարտերում ընկած հերոսամարտիկների հիշատակը:

Այսօր միայն ողբով չէ, որ նշում ենք այս բոլորը, այլ ապրելով հաստատում ենք հայ ժողովրդի հարատևելու կամքը:



1992 թ. հոգեճաշի ժամանակ: Ձախից աջ՝ Ասատուր Բահարյան, Նուբար Մխսի-Գեորգյան, Գրիգոր Դովլաթյան, Մանվել Մարաշյան, Մարտիրոս Էքչիյան, Արմենակ Հեքիմյան, Հովհաննես Քեշիշյան, Սարգիս Գյոզալյան, Վահան Բահարյան: Նստած՝ ժամանակցող տիկինները:

... Արցախի ազատամարտիկները իրենց կամքն են թելադրում Ադրբեջանին, նրան կամաց-կամաց հեռացնելով Արցախից, և հեռու չէ այն օրը, որ Շուշին ևս ազատագրվի...:

... Այսօր Արցախը կարիքն ունի Սփյուռքի հայրենակիցների օգնության, և բոլորս էլ պարտավոր ենք օգնելու նրան, եթե ուզում ենք գոյատևեն Արցախն ու Հայաստանի անկախ Հանրապետությունը:

... Մենք հավատում ենք հայ ժողովրդի հաղթանակին, հույսով ենք, որ մեր Հայրենիքը շուտով կգտնի ինքն իրեն և իր արժանի տեղը կգրավի ազգերի միջազգային ընտանիքում:

**Այս առթիվ իր հոդվածում[1] Մելքոն Արսլանյանը գրում է.**

Ս. Յովաննու Կարապետ եկեղեցւոյ սրահին ենք ներկայ ըլլալու Պէյլանի Հայրենակցական միութեան կազմակերպած հոգեհանգստեան պաշտօնին ... եւ հոգեճաշին՝ նուիրուած Մեծ եղեռնի եւ մեր օրերու նահատակներուն, որոնք ինկան թուրքերու եւ ազերիներու վայրագութեան պատճառով: Հոգեճաշը սկսաւ Վարդան Քհնյ. Թաղեւոսեանի աղօթքով: Խօսք առին՝ ատենապետ Վահան Բահարեան եւ վարչական Գրիգոր Տէօվլէթեան: Արտասանեցին Սեդա Գիրբեան եւ դուստրը Մելանիա: Ներկաները հիւրասիրուեցան աւանդական հերիսայով[2], որուն պատրաստութեան համար շարք մը նուիրեալներ ամբողջ գիշեր արթուն մնացած էին: Նուիրատուութիւններէն գոյացաւ շուրջ 1000 տոլար:

Պէյլանի Հայրենակցականը գաղութիս գործունեայ միութիւններէն է: Միայն այս տարի 4500 տոլար յատկացուցին կարեւոր նպատակներու համար.

1. Տե՛ս «Նոր կեանք», թիվ 21, Մայիս 7, 1992:

2. Հարիսան պատրաստեց Պետրոս Բեբեքյանը իր նահատակների հիշատակին: Նա պատրաստել էր նաև միության առաջին հոգեհանգիստ-հոգեճաշի ճաշերը 1986 թ., երբ որպես գրասաշրջիկ գտնվում էր Լոս Անջելեսում:



2000 տոլար հայրենակիցներու օգնութեան համար, 1000 տոլար՝ Հայաստանի դիւանագիտական ծախսերուն, 1000 տոլար՝ Արցախի կարիքներուն ...: Գնահատելի ոգի...:

**Հայաստանի հայրենակիցներին օգնելու հարցով Անդրանիկ Դովլաթյանին ուղարկեցի 5-02-92 թվակիր նամակը.**

Սիրելի Անդրանիկ եղբայր և հարազատներ,

... հույսով եմ, որ բոլորդ էլ հանգիստ եք, չհաշված ձեր նեղությունները այս ձմեռվա ընթացքում, նկատի չունենալով, որ արդեն նեղություն է ամենուրեք և Երևանի մեջ հատկապես:

Ստացա հունվար 8, 1992 թվակիր նամակդ և օգնության ցուցակը, շատ շնորհակալ եմ: Այն քննարկեցինք վարչության նիստում: Որոշ փոփոխություններով այս նամակի հետ կստանաս: Որպեսզի ավելի արդարամիտ լինի օգնության բաժանումը, որը 2000 դոլար է կամ մոտ 200000 ռուբլի՝ այսօրվա սակագնով, վարչությունը որոշեց ստեղծել հանձնախումբ (վերոնշյալը):

Վարչության որոշման համաձայն խնդրում եմ.

1. 2000 դոլարի փոխանակումը կատարել տվյալ օրվա սակագնով այն ժամանակ միայն, երբ պատրաստ եք բաժանելու:

2. Գրիգոր Դովլաթյանը կազմում է ցուցակը, որտեղ ընդգրկված է մոտ 26 ընտանիք: Մինչև փողը փոխանակելը ճշտել դրանց անձերի ընդհանուր թիվը: Որոշվեց յուրաքանչյուր անձին հատկացնել մոտ 1000 ռուբլի: Սա պայմանական գումար է: Քանի որ դուք ավելի լավ գիտեք այնտեղի դրությունը, վարչությունը իրավունք է վերապահում ձեզ ընդունելու կամ փոփոխելու այդ գումարը ըստ առկա պայմանների: Հիմնական պայմանը պետք է լինի օգնություն ստացող անձերի թիվը, հետևաբար նախքան փողը բաժանելը անհրաժեշտ է կազմել օգնություն ստացողների լրիվ ցուցակը, որն էլ ցույց կտա, թե ինչ գումար հատկացնել յուրաքանչյուրին: Նկատի ունենալ նաև երեխա ունեցողներին: Մի զույգ երկու երեխային կարելի է հաշվել մեկ հոգի, իսկ մեկ երեխային՝ մի հոգուց քիչ: Այս բոլորը՝ մեր ակնոցներով: Ընտրությունը թողնում ենք ձեզ այն պայմանով, որ բոլորը գոհ լինեն ձեր մոտեցումից և դժգոհություններ չառաջանան:

3. Ցուցակները կազմելիս ընդգրկել այլ քաղաքներ ևս. Աշտարակ, Էջմիածին, Լենինական և այլն, որտեղ հայրենակիցներ կան և 10 ընտանիքի սահմաններում կամ մոտ 20-25 հոգի էլ՝ ոչ-բեյլանցիներ: Մեր նպատակն է օգնել բոլորին առանց խտրության, բնականորեն, առաջնայինը տալով բեյլանցիներին: Ուստի որտեղ էլ խոսակցություններ լինեն, պետք է ասել, որ միության կողմից ուղարկված օգնությունը Հայաստանի բոլոր հայրենակիցների համար է, առանց շեշտելու՝ բեյլանցիներին: Խնդրում եմ ցուցակներում ընդգրկել «ամենակարիքավորներին», այստեղ ճիշտ հասկանալով այս բառի գործածությունը, քանի որ այսօր Հայաստանի ամբողջ ժողովուրդն է կարիքի մեջ:

Ես Գրիգորին բացատրել եմ ինչպես կազմել ցուցակը, բայց այստեղ էլ նշեմ, որ այն պետք է ընդգրկի անուն ազգանուն, անձերի քանակը, որտեղից է, երեխաների թիվը, հասցե և ստորագրություն: Ամփոփենք.

1. Ցուցակը լրացնել 170-180 անձերի համար: 20-30 անձի համար տեղ ունենալ, խուսափելու համար պատահարներից:

2. Որոշել հատկացվելիք գումարը, ելնելով ցուցակից և նկատի ունենալով 20-30 անձ ավելի:

3. դրամի փոխանակումից անմիջապես հետո այն բաժանել: Մնացած

հարցերը, այդ թվում և ապահովության՝ լուծել տեղում:
Վարչությունը ցավում է, որ ձմեռը չկարողացավ հասցնել նշված գումարը չնախատեսված պատճառներով, որից հիմնականը ձրի տեղ ապահովելն էր Հայկական ֆոնդի օդանավում:
Չնայած նշվածը մեծ գումար չէ, բայց այս նեղ պայմաններում որոշակի օգնություն է հայրենակիցներին:
Այստեղ էլ պայմանները շատ լավ չեն հիմա: Գործազրկություն է, գործարանները փակվում են, երբ աշխատանքի ենք գնում, չգիտենք կաչխատենք, թե ...: Այնպես, որ բեյլանցիների տնտեսական վիճակն էլ նախանձելի չէ այստեղ: Տվյալ գումարն էլ 10-20 դոլարներով ենք հավաքել: Եթե վարչությունը որոշ գումար ունենար, ավելիով կօգներ:
Բացի այս բոլորից, այսօր հայ ժողովրդի լինել-չլինելու հարցն է դրված և ինչպես ամբողջ Սփյուռքը, մեր միությունն էլ աշխատում է օգնել հիմնական նպատակների համար՝ կանգուն պահելու մեր Հայրենիքը: Այդ նպատակով վերջերս միությունն Արցախին նվիրեց 1000 դոլար, որից 500-ը միության անդամներն իրենց գրպաններից նվիրեցին, Հայաստանի հյուպատոսարանների հիմնական ֆոնդին նվիրեց 1000 դոլար: Այս բոլորը միայն մի նպատակի համար՝ պահպանել Հայրենիքը և ապատ ապրել:
Գալով հուշարձանի հարցերին, մենք ևս մտահոգված ենք, որպեսզի այն պահպանվի, ինչպես որ պետք է և քանի որ մինչև հիմա ի վիճակի չեղանք օգնելու, նկատի ունենալով նաև ձմեռվա պայմանները, հավանական է, որ մոտ ժամանակներս որոշ միջոցներ ձեռնարկենք այդ նպատակի համար: Որպեսզի ավելի իրական լինի այս հարցի լուծումը, խնդրում եմ մի անգամ ևս ուղարկել ինքնարժեքը, որպեսզի հնարավոր լինի այն իրականացնել:
Վերջացնելով նամակս, որը ձեզ կհանձնի Հարությունը (եղբորդ՝ Սուրենի աներձագը), նորից խնդրում եմ, որ հանձնախումբը Երևանով չսահմանափակվի և շատ կգույշ ու աչալուրջ լինի փողի բաժանման հարցում, նույնիսկ չենթարկվի հարազատների ճնշումներին ու չշեղվի ուղիղ ճանապարհից: Վարչությունը որոշեց, որ այստեղ հարազատներ ունեցողներին, որոնք օգնում են Հայաստանի իրենց հարազատներին, փող չպիտի բաժանել, բայց բացառությունները նկատի պետք է ունենալ:
Մեր ժողովուրդը թող ամուր փակի այդ հողին, որքան էլ այսօր դժվար է այդ: Երբեք չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր ազգ միայն իր երկրում կարող է հանգիստ ապրել:
Աստված հայ ժողովրդին կամք է տվել և դրանով նա պետք է հաղթահարի բոլոր դժվարությունները, ստեղծելով իր համար բարգավաճ Հայրենիք, որտեղ վերջիվերջո պիտի հավաքվեն իր բոլոր զավակները, ջնջելով «Սփյուռք» բառը մեր բառարանից:
Թող կեցցե՛ն մեր քաջարի ազատամարտիկները:
Օդային համբույրներ բոլորիդ և թանկագին բարևներ հարցնողներին:
Սիրով՝ ատենապետ՝ Վահան Բահարյան

**6-22-92 թ. ՎՆ-ում քննարկվեց ՀՀԿՀ-ի առաջարկով կատարված և միության հասցեով ուղարկված «Կիլիկիա» ընկերության (նախագահ՝ Խաչատուր Բահարյան[1]) նախահաշիվը՝ (տե՛ս բնագիրը հավելված էջ 415-416) ջրհան կայանի միջոցով արտեզյան ջրով**

---

1. Եղբորս՝ Հարությունի տղան:



**ապահովելու հուշարձանի տարածքը: Նախահաշիվը կազմում էր 5000 դոլար[1]: ՎՆ-ի արձանագրությունում իմ ձեռքով գրված է (երբ քարտուղարը բացակայում է, ուրիշ գրագետ անդամ չկա, որ գրի).**
... Ներկա պայմաններում վարչությունը ի վիճակի չէ վճարելու և ... եթե, նույնիսկ այդ գումարը ունենա, նախընտրելի է այն նորից բաժանել Հայաստանի հայրենակիցներին այս նեղ օրերը անցկացնելու համար, քան ջրհան կայան կառուցելու: Ծառերը կարելի է նորից տնկել ու աճեցնել, բայց մարդկանց հնարավոր չէ ետ բերել»:

**Սույն նիստում Հարություն Հարությունյանը հայրենակիցներին բաժանված փողի հաշվետվությունը տվեց: Վարչությունը բավարար համարեց այդ ուղղությամբ տարված աշխատանքը: Հասավ նաև Օգնություն ստացողների ցուցակը (տե՛ս բնագիրը հավելված էջ 419-423) և Անդրանիկ Դովլաթյանի նամակը:**
**4-26-92 թվագրված նամակում Անդրանիկը գրում էր.**
Պեյլանի հայրենակցական միության նախագահ, Մեծարգո պրն. Վահան Բահարյան և հարգելի վարչության անդամներ,
Բեյլանի ժողովուրդը շնորհակալություն է հայտնում ձեր բարի գործի առթիվ, որ նրան ձեռք մեկնեցիք ամենանեղ օրերում: ... Փողի փոխանակումը կատարեցինք օրվա ամենաբարձր սակագնով՝ մեկ դոլարը 115 ռուբլով և ստացվեց 230000 ռուբլի, որի բաժանումը տևեց մոտ 10 օր: Օգնություն ստացողներ եղան նաև Սպիտակից և Երևանից ոչ-բեյլանցիներ: Մի քանի ընտանիքներ երկու հոգի էին և այնքան խեղճ էին, որ երեք հոգու փող տվինք:
Հայաստանը անկախացավ, բայց բազմաթիվ դժվարությունների առջև կանգնեց. Արցախի չորս տարվա շարունակվող պատերազմը, Ադրբեջանից մոտ 350000 հայ փախստականները, որոնց սնունդով ապահովել ու պատսպարել է պետք, Հայաստանի շրջափակումը, երկրաշարժը: Այս դժվարին խնդիրները լուծում են պահանջում: Պատերազմի դաշտում մեր առյուծասիրտ երիտասարդները իրենց կյանքն են զոհում, մյուս կողմից մարդիկ արտագաղթելով իրենց կաշին են փրկում: Այսօր աշխարհը հիացած է մի խումբ հայերով, որոնք հրաշք են գործում Արցախում:
Մեր հզոր բանակը հրասայլերով և այլ ռազմական ուժերով տողանց կատարեց մայիսի 28-ին Հանրապետական հրապարակում: Ժողովրդի աչքերից արցունքներ էին հոսում: Հայի 600 տարվա երազը իրականացավ:
Սիրելի հայրենակիցներ ձեր բարի գործը հավիտյան պիտի հիշեն Հայրենիքում: Իրոք շատ նեղ օրեր են: Ամեն ինչ կրկնակի թանկացավ. հացի կիլոգրամը 6 ռուբլի է, պանիրի՝ 150 ռուբլի, շաքարի՝ 110 ռուբլի և այլն, գործազրկություն է, գործարանների 30%-ը չի աշխատում, 20 օր է գազ չկա, ատոմակայանը չի աշխատում, ժողովրդի 80%-ը չքավորության մեջ է, բայց նա ամեն ինչ տանում է իր Հայրենիքի սիրուն: Բոլորովին չեք կզա, որ Հայաստանը նեղ օրեր է անցկացնում, ո՞ւմ մտքով կանցներ, որ պողպատի կամք ունի այս ազգը ...:
Բարևներս վարչության բոլոր անդամներին և ժողովուրդին, որ իր

---

1. Եթե նույնիսկ ջրի հարցը լուծվեր, ո՞վ էր տերություն անելու հուշարձանին: Երբ 1999 թ. այցելեցի, այն դարձել էր մի ամայի տափաստան:

լուման չխնայեց օգնելու համար իր հայրենակիցներին:

...Հուշարձանի ջրի մասին, որ նախատեսված է մոտ 120 մետր խորությունից հանել, Խաչիկը մանրամասն ձեվ կներկայացնի ծախսերը, որ այսօրվա գներով շատ պեղչով է. ինք այդ հիմնարկի պետն է: Ամեն ինչ սուղ է: Երկու տարի առաջ կրկնակի էժան կլիներ ...:

Հ. Գ.—ի մեջ նա առաջարկում է Հարություն Հարությունյանին ընդունել վարչության կազմում, նշելով, որ ակտիվ աշխատող է, լավ լեզու ունի, լավ հանգամանություն կանի:

Հայրենակիցներին նյութական օգնության բաժանման լավ աշխատանքի համար վարչության անունից 7-02-92 թվակիր շնորհակալական նամակ ուղարկեցի Անդրանիկ Դովլաթյանին (տե՛ս բնագիրը հավելված 417-418):

7-24-92 թ. նիստում վարչությունը համալրվեց երկու նոր անդամներով՝ Սեդա Կվրյանով և Հարություն Հարությունյանով, որոնք մեկ տարի է մասնակցում էին նրա աշխատանքներին:

Սույն նիստում քննարկվեցին դաշտահանդեսի կազմակերպման հարցը և IAM[1] ամսագրից ստացված նամակը, ուր նշվում էր, որ ամսագիրը շուտով հայերեն լեզվով էլ պիտի հրատարակվի, և մեր միությունից տվյալներ էր խնդրում իր գործունեության մասին, ամսագրում տպելու համար: Վարչությունը որոշեց ուղարկել պահանջված տվյալները: 12 էջանոց գրությունը համապատասխան նկարներով արդեն պատրաստ էր ուղարկելու 8-15-92 թ., բայց ամսագրի հայերեն հրատարակությունը չեղյալ էր հայտարարվել: Գրությունը միության գործունեության մասին էր, որն արդեն ընդգրկված է սույն գրքում:

8-25-92 թվակիր մի նամակ ուղարկվեց Սարգիս Սողանալյանին, որի բովանդակությունը նախօրոք համաձայնեցված էր ՊՀՄ-ի վարչության և ՀՄՄՄ-ի հետ: Այդ նամակից ներկայացնում եմ որոշ մասեր.

... ՊՀՄ-ի վարչության և ՀՄՄՄ-ի անդամներով մենք ուզում էինք այցելել ձեզ, բայց ըստ մեր ստացած տեղեկությունների, որոնք ուրախացրեցին մեզ, դուք ավելի շուտ պիտի լինեիք մեզ մոտ: Բայց ժամանակն անցնում է և ոչ մի նորություն չկա, ուստի ուզում ենք այցելել քեզ, երբ հարմար է: Խնդրում եմ ինձ տեղյակ պահել այդ մասին: Այսօրվա դրությամբ ազգային կյանքը վերուվայրումներ է ապրում դաշնակցական որոշ ղեկավարների՝ Մարուխյանի և իր խմբի ոչ-հեռատես քաղաքականության հետևանքով...: Մեզ այսօր միասնություն է պետք հոգալու մեր ազգային հարցերը՝ սկսած Հայրենիքից, վերջացրած Սփյուռքով..., որպեսզի մեր նպաստը բերենք Հայրենիքի վերակառուցման և ամրապնդման աշխատանքներին: Հակառակ այս իրողության, այսօր դաշնակցական մի խումբ ղեկավարներ աշխատում են հակառակ ուղղությամբ: Մինչև ե՞րբ...:

1. International Armenian Magazin.



... Մենք պատրաստ ենք քեզ օգնելու, ինչով որ կարող ենք:

... Վարչությունը շարունակում է հայապահպանման և Հայրենիքին օգնելու գործունեությունը...: Հույսով ենք շուտով հանդիպել: ...:

Եթե ազգային գործունեությանը քեզ ամբողջովին նվիրես և նրա մեջ փնտրես անձնական շահեր, անունդ կվարքաբեկես և արդյունքի չես հասնի: Ազգային գործունեությունը որքան ազգի բարօրության համար է, քո անձի համար անշնորհակալ գործ է: Որքան էլ նվիրված աշխատես և գովաբանվես, կգա մի ժամանակ, որ դու դրա դիմաց կստանաս երախտամոռությունը ոչ միայն քո «հավատարիմ» ընկերների: Սա հասարակության մեջ օրինաչափ երևույթ է, բայց երբ «օրենքով» կառավարում են տգետները, միջավայրում գործելը դառնում է անհնարին:

8-25-92 թվակիր մի շնորհակալական նամակ էլ ուղարկեցի Կարո Խանճյանին, միությանը 500 դոլար նվիրելու առիթով: Լոս Անջելեսում վարչությունը պատվեց նրան հյուրասիրությամբ, Մանվել Մարաշլյանի տղայի՝ Մուշեղի տանը: Ըստ ՎՆ-ի որոշման՝ ծախսի գումարը պետք է վճարեին վարչության անդամները, բայց Մուշեղը վճարեց:

Վարչության կազմակերպած դաշտահանդեսը տեղի ունեցավ 1992 թ. սեպտեմբերի մեկին Նորթ Հոլիվուդի Մագնոլիա զբոսայգում: Հայրենակիցները մի անգամ ևս հանդիպեցին իրար, կիսեցին իրենց ունեցած ուրախություններն ու տխրությունները, նոր ծանոթություններ ստեղծեցին՝ փորձելով պահպանել իրենց երեխաների հայ մնալու և հայ ընտանիք կազմելու ապագան:

Դաշտահանդեսի հաշվետվության նիստում վարչությունը քննարկեց ձՊ-ի, միության բանկի հաշվից առանց տոկոսների Լոս Անջելեսի հայրենակիցներին պարտքով դրամ տալու, որպեսզի իրենց գործերը բարելավեն, Հայաստանի հայրենակիցներին օգնելու և այլ հարցեր, և ընդունեց համապատասխան որոշումներ: ձՊ-ի հարցը մի քանի ժողովներում քննարկելուց հետո, նկատի ունենալով, որ բոլոր հարմար սրահները վարձված են, վարչությունը որոշեց այն հետաձգել հաջորդ տարվան:

Պարտք տրված դրամները պետք է միության վերադարձվեին պարտքատերի նշած ժամկետի համաձայն, որի համար ձևական պայմանագիր էր գրվում միության նամականիշի վրա (առանց նոտարի հաստատման, որն ուժ չուներ): Որոշ ժամանակ հետո վարչությունը զգաց, որ գլխացավանքի մեջ է ընկել: Պարտքատերերը ոչ միայն ժամանակին չէին վերադարձնում դրամը, այլ տհաճ խոսակցությունների հետևանքով խայտառակվում էր նաև նրանց երաշխավորող վարչականը, որը մի կերպ հագիվ էր «պո-

կում» տրված դրամը: Այս քայլով վարչությունը մի ուրիշ նպատակ էլ էր հետապնդում՝ միության միջոցառումներին չմասնակցող հայրենակիցներին մոտեցնել և կապել իրեն: Բայց դրամը ստացողները չէին էլ մոտենում միության: Քանի որ տրված դրամը վերադարձնելու հարցը դժվարացավ, որոշ ժամանակ անց վարչությունը որոշեց այլևս ոչ մեկին չօգնել:

Տարին փակվեց Նոր տարվա կապակցությամբ Վաշինգտոնում Հայաստանի հյուպատոսարանից, Մարիձա և Ջոհրապ Սողանալյաններից և ուրիշներից ստացված շնորհավորական բացիկներով:

Մայր Մարիձա և Ջոհրապ Սողանալյանները գրում էին.

Սիրելի և յարգելի ատենապետ
Տիար Վահան Բահարեան

Ձեր և Պէյլանի Հայրենակցական Միութեան հանդէպ մեր ունեցած սէրը և անմոռանալի յիշատակները միշտ վառ կը մնան մեր մէջ...: Չենք կարող մոռնալ մեր հարազատ պէյլանցիները և յուսանք օր մը բոլորս միատեղ մեր հայրենական և քաղաքացիական պզացումներով մեր միութեան պօրավիգ կանգնիլ:

Ձեզմէ հապարավոր մղոններով թէև հեռու, սակայն սրտով շատ մօտ կ'զգանք պմեպ: Տարիները ևս բոլորուելով մեր ետին, ահա յուսանք, որ գալիքը, Նոր Տարին ըլլայ միշտ բարգաւաճ և միութեան տարի մը մեր բոլորին և բարեմաղթենք ձեզի և մեր սիրելի պէյլանցիներուն առողջութիւն, երջանկութիւն և յաջողութիւն:

Շնորհաւորելով Նոր Տարին և Սուրբ Ծնունդը.

Նենէ Մարիձա և Ջոհրապ Սողանալեան:

Ըստ բանկի 12-24-91 թ. տվյալների, միության ունեցած գումարը 12767 դոլար և 06 սենթ է:

## ՀՄՄՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1987 թ. ՊՀՄ-ի վարչության «վերընտրությունից»[1] հետո իմ կապերը խզված էին Նորայր Մելքիսեթյանի, Նուբար Մխսի-Գեորգյանի և Զարեհ Պալյանի հետ: Կյանքում երբեք քեն չեմ պահել որևէ մեկի հետ և չեմ կարողանում ըմբռնել, թե ազգային հարցեր լուծելիս որոշ մարդիկ ինչպե՞ս են իրագործում այդ: Հնարավոր է, որ որոշ հարցերի մասին վիճեմ ՎՆ-ում, բայց նիստը վերջանալուց հետո կմոռանամ ամեն ինչ: Բոլորս աշխատում ենք մի նպատակի համար, և յուրաքանչյուր հարցի քննարկման ժամանակ պետք է ճիշտ որոշում ընդունել:

Աշնանային մի օր Նուբարի հետ հանդիպեցինք, թե որտե՞ղ և ի՞նչ պայմաններում չեմ հիշում: Նա խոսեց մեկ դոլարով հանգանակություն կատարելու մասին Հայաստանին և Արցախին օգնելու նպատակով և միտքը ավարտեց հարցնելով, թե, արդյո՞ք կարող եմ ՀՄՄՄ-ի միջոցով կազմակերպել այդ գործը: Բայց ինչո՞ւ ՀՄՄՄ-ի միջոցով հարցիս՝ պատասխանեց, որ ուրիշ կազմակերպություններին և կուսակցություններին չի վստահում, իսկ ինձ վստահում է և հույս ունի, որ կարող եմ այդ գործը գլուխ բերել: Մտածելով, որ երևի նա զգացել է անցյալում գործած չարությունը իմ նկատմամբ և հիմա մաքուր սրտով է մոտենում, ընդառաջեցի նրան, ՀՄՄՄ-ի հետ պայմանավորվեցի, և նրա հաջորդ նիստում նա ներկայացրեց իր ծրագրերը քննարկման: ՀՄՄՄ-ն որոշեց իրագործել մեկ դոլար հանգանակության ծրագիրը: Այդ կապակցությամբ ընթերցողին եմ ներկայացնում գրածս հոդվածը[2]:

## ՀՄՄՄ-Ի ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Սիրելի հայրենակիցներ, այսօր մեր Հայրենիքը չափազանց դժվար կացության մեջ է և՛ տնտեսապես, և՛ քաղաքականապես և կարիքն ունի Սփյուռքի հայրենակիցների օգնության, մինչև որ վիճակը բարելավվի, որը հիմնականում կախված է նրա շրջափակման վերացումից և պատերազմին վերջ տալով խաղաղություն ապահովելուց:

Այսօր Հայրենիքում ժողովուրդը չափազանց դժվար ձմեռ է անցկացնում առանց լույսի, առանց գազի, առանց վառելիքի, առանց հացի և ուտելիքի նվազագույնը ունենալու:

Մեր սրբազան պարտքն է օգնել Հայրենիքին, որպեսզի որոշ չափով թեթևանա ժողովրդի վիճակը, և Արցախում ամրացնելով նրա պաշտպանությունը, հնարավոր լինի պահել այն՝ ժողովրդի հետ: Եթե այսօր այդ մասին չմտածենք, ապա վաղը ուշ կլինի, և մեր ուշացածափսոսանքը այլևս չի փրկի նրան, հետևաբար ժամանակը հիմա է օգնելու:

Այստեղ մենք չենք զգում նշված դժվարությունները, իսկ շատերը միգուցե չեն էլ կարողանում պատկերացնել այն: Հազարներ ենք ծախսում մեր խնճույքների ու հաճույքների համար, և սեղանների ուտելիքների երեք քառորդը թափվում է այն ժամանակ, երբ Հայրենիքում մի կտոր հաց գնելու համար ժամերով հերթ են կանգնում և հետո էլ ձեռնունայն տուն են վերադառնում: Հետևաբար, մեր ուրախություններում և խնճույքներում մի պատառ հաց ուտելու ժամանակ հիշենք, որ Հայրենիքում մեր հայրենակիցները կարոտ են դրան և նրանց էլ մի փոքր բաժին հանենք մեր ունեցածից:

Մեր ժողովրդի մի ստվար մասը հաճախ գնում է Լաս Վեգաս և իր հաճույքի համար հարյուրներ է ծախսում, եթե ոչ հազարներ: Այստեղ էլ նրանք թող հիշեն Հայրենիքի կարոտյալներին և այդ ծախսերի մի չնչին տոկոսն էլ նվիրեն նրան:

Հաճախ, երբ խոսվում է հանգանակության կամ նվիրատվության մասին Հայրենիքի կարիքավորների համար, շատերը հրաժարվում են պատճառաբանելով, որ իրենք օգնում են իրենց հարազատներին: Սիրելի հայրենակից, քո հարազատները բախտավոր են, որ այստեղ քեզ ունեն, և դու օգնում ես

1. Ջակերտների մեջ է, որովհետև անօրինական ընտրություն էր:

2. Տե՛ս «Նոր կյանք», թիվ 1, Դեկտ. 17, 1992:

**ՄԱՍՆԱԿՑԵՑԷՔ**

**ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄՆԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆ- ԱՐՑԱԽ ՄԷԿ ՏՈԼԱՐ ՖՈՆՏԻՆ**

**(ձեր ուրախ թէ տխուր առիթներուն նուիրաբերեցէք)**

ՀԵՌԱՁԱՅՆԵԼ

**Նուպար Միսիգէորգեանին**

**(213) 461-9451 - (818) 507-1437 (գիշերը)**

**Վահան Բահարեանին**

**(818) 997-8845**

կոչ:

*նրանց, իսկ այստեղ հարազատներ չունեցողներին չօգնե՞նք և թողնե՞նք, որ նրանք թշվառության մեջ մնան կամ սոված մեռնեն: Ո՛չ, երբ օգնում ենք ձեր հարազատներին, պետք է մի փոքր բաժին էլ մյուսներին հանել: Դժբախտաբար ոչ բոլորս ենք օգնում Հայրենիքին: Շատերն էլ պատճառաբանում են, որ իրենց ստացածը իրենց չի հերիքում, հազիվ են ծայրը-ծայրին հասցնում, և այդ նույն մարդիկ հարյուրներ են ծախսում Լաս Վեգասներում, ինչպես նշեցինք: Ոչ մեկս չենք աղքատանա կամ սեղանից ուտելիք չի պակասի, եթե ամեն անգամ գնումներ կատարելիս մի քանի դոլար պակաս ծախսենք և այդ մի քանի դոլարը Հայրենիքին նվիրենք:*

*Նկատի ունենալով վերոնշյալները և դեղագործ Նուբար Միսիր-Գևորգյանի առաջարկը՝ ... ՀՄՄՄ-ն նոր ծրագիր մշակեց Հայրենիքին շարունակական օգնության: Նպատակն է օգնել Հայրենիքին և հատկապես Արցախին, որպեսզի ժողովուրդը կառչած մնա արմատներին, պաշտպանի իր հողը ..., ... չհայաթափվի և չարժանանա Նախիջևանի ճակատագրին ...:*

*Արցախի ժողովուրդը լավատես է, ունի մեծ կամքի ուժ և հավատում է իր հաղթանակին, հետևաբար օգնությունը չպետք է ուշացնել:*

*Հանգանակությունը կատարվում է տեղի ունեցող ձեռնարկների ժամանակ (հարսանիք, ՃՊ, նշանդրեք, ծննդյան տարեդարձ, անվանակոչություն, ինչպես նաև տխուր առիթներով՝ փոխան ծաղկեպսակի և այլն), և յուրաքանչյուրը մասնակցում է նվազագույնը մեկ դոլարով: Ձեռնարկը կազմակերպողը, կատարելով հանգանակությունը, հավաքված գումարը փոխանցում է ՀՄՄՄ-ի ներկայացուցչին: Ձեռնարկը կազմակերպողի և հավաքված գումարի մասին հաղորդագրություն կլինի հայկական մամուլում:*

*Այս նպատակով ՀՄՄՄ-ի կից կազմված է հատուկ հանձնախումբ՝ ատենապետությամբ Նուբար Միսիր-Գևորգյանի, իսկ ՀՄՄՄ-ի կողմից պատասխանատուներ են նշանակված ԴՀՄ-ի վարչության ատենապետ և ՀՄՄՄ-ի փոխատենապետ՝ Վահան Բահարյանը և Էվերեկ-Ֆենեսեի ուսումնասիրաց միությանյան փոխատենապետ, ՀՄՄՄ-ի վարչության անդամ Միհր Դալյանը ...:*

***Ահա այս ձևով սկսվեց «Հայաստան-Արցախ մեկ դոլար ֆոնդ»ի հանգանակությունը, որի մասին «Նոր կեանք»ում ամեն շաբաթ իմ կողմից «Հաղորդագրություն» էր տրվում կազմակերպված միջոցառումների և հավաքված գումարների մասին: Ինքս առաջարկեցի, որ Նուբարը լինի կազմված հանձնախմբի ատենապետը, բոլորովին չմտածելով աշխատանքի այն ծանրաբեռնվածության մասին, որն ընկնելու էր իմ ուսերին, քանի որ այդ թղթակցությունները և դրանց հետ կապված այլ կազմակերպչական բոլոր հարցերը ես էի լուծում, այսինքն, ինչպես միշտ, հանձնախումբը ձևական բնույթ էր կրում: Եվ եթե նկատի ունենանք իմ միութենական և ազգային մնացած գործունեությունները, միայն այն ժամանակ կարելի է պատկերացնել իմ աննախանձելի վիճակը: Երբեք չեմ բողոքել իմ ծանրաբեռնվածությունից: Թեև աշխատում էի ապրուստս հոգալու համար, շատ ժամանակ նստում էի գիշերվա մինչև ուշ ժամերը, որպեսզի այդ բոլորը հասցնեմ:***

***«Նոր կեանք»ում պարբերաբար լույս տեսավ նաև հայրենակիցներին ուղղված կոչ:***

***Նորայր Մելքիսեթյանի ստորագրությամբ լույս տեսավ հետևյալ հոդվածը[1].***

*ՇՆՈՐՀԱԻՈՐԱՆՔ՝ ՍԱՐԳԻՍ ՍՈՂԱՆԱԼԵԱՆԷՆ*

*Ազգային բարերար եւ հայ ժողովուրդի սիրելի բարեկամ Սարգիս Սողանալեան, որ անարդարօրէն եւ առանց փաստի արգելափակման ենթարկուած է 1991-ի Հոկտեմբերէն ի վեր, ԱՄՆ-ի նախագահ Ճորճ Պուշի կողմէ նշանակուած դատաւորի մը կողմէ, իբր յանցապարտ՝ Իրան-Իրաք պատերազմի ընթացքին Իրաքին պատերազմական կազմածներ ծախած ըլլալու յանցանքով, այս Չորեքշաբթի, 16 Դեկտեմբեր 1992-ին, ստորագրեալիս հետ հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին խնդրեց, որպէսզի մամուլի միջոցաւ իր բարի մաղթանքները փոխանցեմ բոլոր հայ կուսակցութեանց, միութիւններուն և կազմակերպութեանց, Նոր Տարուայ եւ Սուրբ Ծնունդի առիթներով:*

*Այս առթիւ Սարգիս Սողանալեան կը փափաքի հրապարակաւ իր երախտագիտութիւնը յայտնել Յորդանանի Հիւսէյն թագաւորին որ իր որդին՝ գահաժառանգ իշխան Ապտալլան մասնաւոր առաքելութեամբ Մայամի առաքած է Դեկտեմբեր 6, 1992-ին, Սարգիսին այցելելու եւ իր հօր բարեմաղթութիւնները ներկայացնելու անոր:*

*Այս անկուզական անձին ապատագրման համար յօրաւիգ կանգնինք եւ ազգովին աղօթարար ըլլանք:*



---

*1. Տե՛ս «Նոր կեանք», թիվ 3, Դեկտ. 31, 1992:*

## Ը. ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1993 Թ.

Հայաստանի հայրենակիցների անմխիթար վիճակը ճնշող ազդեցություն թողեց ողջ հայ ժողովրդի վրա։ Սփյուռքը սկսեց ուղիներ որոնել նրան օգնելու համար։

Սովը մարդու առաջին թշնամին է։ Ո՞վ էր կարծում՝ անկախացած Հայաստանում այնպիսի վիճակ կստեղծվի, որ մարդիկ աշխատանք չունենան, լույսից ու գազից զրկված լինեն, ժամերով հերթ կանգնեն ու չկարողանան մի հաց գնել իրենց գոյությունը քարշ տալու համար։ Եվ անկախությունը գրկաբաց դիմավորող Հայրենիքի ժողովուրդը անկախ Հայաստանում երանի տա խորհրդային շրջանին։

Ինչպես անկախության հաջորդող տարիները, 1993 թ. ևս Հայրենիքի համար եղավ փորձության տարի։ Շրջափակման, Մեծամորի ատոմակայանի և Նաիրիտի արտադրության փակման հետևանքով Հայաստանը տնտեսապես անդամալուծվեց։ Ազերիների կողմից Վրաստանի տարածքում հաճախակի դարձած գազամուղի խողովակների և երկաթուղու կամուրջների պայթեցումները, ավելի էին վատթարացնում ժողովրդի առանց այն էլ անմխիթար վիճակը։ Լույսի, գազի, վառելիքի չգոյությունը և դաժան ձմեռը ժողովրդին հասցրել էին վհատության։ Ելք չունենալով՝ նա կտրում էր տասնյակ տարիներից իր իսկ ձեռքով աճեցրած Երևանի շրջակայքի փարթամ ու գեղեցիկ անտառների ու պարտեզների ծառերը, Հայը առաջին անգամ «քանդում էր» իր ձեռքով շենացվածը։ Դա՞ռը ճակատագիր ...։

Բայց գոյատևել էր պետք։ Ժողովուրդը չէր կարող կանգ առնել անկախության կես ճանապարհին։

Արցախում անկախության պատերազմ էր մղվում, ազատամարտիկները քաջաբար էին կատարում իրենց պարտականությունները՝ ազերի ելուզակներին դուրս քշելով հայկական հողերից։ Այդ պատերազմում հեղվում էր ազատության ճանապարհին հերոսաբար ընկնող հայ երիտասարդների արյունը։

Ժողովուրդը, ազատամարտիկները կարիք ունեին ուտելիքի, զինամթերքի, դեղորայքի, զինվորական հանդերձանքի, էլեկտրոնային սարքերի և այլն, որպեսզի կարողանային դիմակայել թշնամուն, հաղթանակի հասնել։

01-08-93 թ. ՎՆ-ում որոշվեց կազմակերպել ՃՊ և եկամուտը հատկացնել Հայրենիքի կարիքավոր ընտանիքներին։ Նույն նիստում որոշվեց հրատարակել նաև Բեյլանի մասին օրացույց։ Հանձ-





1993թ.։ Հագուստեղենը փաթեթավորելիս։

նարարվեց Մանվել Մարաշլյանին, որ հաջորդ նիստին հրատարակելու ծրագիր ներկայացնի։ Բայց չիրագործվեց, որովհետև Մանվելը միայն ճարտար խոսող էր, բայց երբեք կատարող։

01-18-93 թ. ՎՆ-ում որոշվեց ՃՊ-ն իրագործել սույն թվականի մարտի 20-ին՝ տոմսի գինը 30 դոլար սահմանելով։ Այս նիստում նորից շոշափվեց կարգապահության հարցը։ Վարչականների մի մասը չէր գիտակցում հարցերի քննարկման լրջությունը և միայն կատարող էր։

Հայաստանի ժողովրդի այս դժվար պահերին Սփյուռքը աշխուժացրեց իր գործունեությունը։ Ընդառաջելով ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանատան հաղորդագրությանը, որն հնչեց հայկական հեռուստածրագրով կիրակի, հունվար 24, 1993 թ. Վաչե Արք. Հովսեփյանի կողմից, սկսվեց հագուստեղեն հավաքելու և հայրենի ժողովրդին հասցնելու արշավը։ ԱՄՆ-ն իր օգնությունը, չզլացավ և հատկացրեց կոնտեյներներ և փոխադրանավ։

Դեղորայքով և բժշկական սարքավորումներով Արցախին օգնողների շարքերում իր աշխույժ գործունեությամբ աչքի ընկավ Լոս Անջելեսի «Medical Outreach for Armenia, Inc.» կազմակերպությունը, ղեկավարությամբ տեր և տիկին Վարդգես և Մերի Նաճարյանների, որոնց կազմակերպած թելեթոններին իր ակտիվ և նյութական մասնակցությունը բերեց ՊՀՄ-ն։

Սփյուռքի հիմնական օգնությունը Ձմեռ-93 ծրագրին եղավ



1993 թ. Թելեթոնից մի տեսարան:

այն 7 միլիոն դոլարի հանգանակությունը Թելեթոնի միջոցով, որը եռապատկեց հայտնի բարերար Քըրք Գիրգորյանի «Լինսա»ի (Lincy) հաստատությունը և հասցրեց 21 միլիոնի՝ Հայրենիքը 1993-94 տարվա ձմռանը վառելիքով ապահովելու համար: Այս ծրագրին իր բաժինը բերեց նաև ՊՀՄ-ն:

01-29-93 թ. վարչության արտակարգ նիստում որոշվեց ակտիվորեն մասնակցել ապրանքահավաքման (հիմնականում՝ հագուստեղենի) արշավին: Հավաքված ապրանքը տեղավորել խավաքարտե (կարտոնե) տուփերի մեջ և ՊՀՄ-ի պատկերանիշով հանձնել Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցու ղեկավարությանը:

Ապրանքարշավը հաջող էր և վարչությունը 100 արկղ հագուստեղեն ուղարկեց Էջմիածնի կաթողիկոսարանի անունով:

Հակառակ որոշ վարչականների ոչ գործունյա, անտարբեր վերաբերմունքին, Հայրենիքի կարիքավորներին օգնելու համար նախատեսված այս ճՊ-ն մեծ հաջողություն ունեցավ, և վարչությունը 5000 դոլար եկամուտից 3000-ը հատկացրեց նրանց: Բաժանելու համար ստեղծվեց հատուկ հանձնախումբ.

1. Դովլաթյան Անդրանիկ՝ նախագահ, Երևան:
2. Բահարյան Խաչատուր՝ քարտուղար, Երևան:
3. Դովլաթյան Գրիգոր՝ հաշվապահ, Լոս Անջելես:
4. Գյոզալյան Աստուր՝ անդամ, Երևան:





1993 թ. մարտի 20-ի ճՊ-ում հյուրերի սեղանը: Ձախից աջ՝ Սոնա Արսլանյան, Հովսեփ Աստուրյան, Մարտիրոս Վարդանյան, տեր և տիկին Սարգի Մուրադյան, Վահան Բահարյան:

5. Հարությունյան Հարություն՝ գանձապահ, Լոս Անջելես:

Հանձնախումբը դրամի բաշխումը իրացրեց ցուցակով (տե՛ս բնագիրը հավելված էջ 425-437): 212 ընտանիքի կամ 632 անձի բաժանված է 3157000 ռուբլի կամ 3000 դոլար՝ յուրաքանչյուրին 5000 ռուբլու հաշվով, այդ թվում նաև հիվանդանոցում գտնվող մի շարք ազատամարտիկների («ՖԵԴԱՅԻ» բարեգործական կազմակերպության նամակի բնագիրը տե՛ս հավելված էջ 438):

Այս առիթով բազմաթիվ շնորհակալական նամակներ են ուղարկված վարչությանը, որոնցից մի քանիսը ներկայացնում ենք «ՆԱՄԱԿԱՆԻ» վերնագրի տակ:

Սույն ճՊ-ի ժամանակ ծանոթացա Արա Պետրոսյանի հետ և հրավիրեցի մասնակցելու վարչության նիստերին, ծանոթանալու վարչականների և նրա գործունեության հետ: Սիրով ընդունեց առաջարկը:

## ՆԱՄԱԿԱՆԻ

Երևանի բնակիչ Գյոզալյան Աստուրից:

Ամերիկայի մեր սովորուգցիներին, որոնք չեն մասնակցում ՊՀՄ-ի հանգանակությանը, շեշտը դնելով, որ մենք բեյլանցի չենք: Քանի որ Հայաստանը գտնվում է սոցիալական ծանր վիճակում, խնդրում ենք՝ դուք էլ մասնակցեք այդ օգնության գումարներին, քանի որ այդ չնչին գումար-



*1993 թ. մարտի 20-ի ճՊ-ից մի տեսարան:*

*ները մեծ օգնություն կլինեն Հայրենիքում ապրող ծերերին ու երեխաներին: ՊՀՄ-ի կողմից ուղարկված գումարներից ավելի շատ ստանում են սովորուլցցիները: Մեզ համար մեծ պատիվ (ամոթ-Վ. Բ.) է ձեր չմասնակցելը: Այստեղ հասած գումարները կոպեկ առ կոպեկ հասել են նպատակին, ցուցակով կարող եք ստուգել ու տեսնել, որ սովոլուցցիները ավելի շատ են ստացել, քան թե բեյլանցիները: Ուստի խնդրում ենք հարգեք հայրենակիցներին և պասսիվ մի մնաք այդ գործին մասնակցելուց:*

*... ուղարկում ենք ձեզ մեր հարգանքները, ցանկանալով առողջություն և հաջողություն: Հուսով ենք՝ չեք մերժի մեր խնդրանքը:*

*Ջերմ բարևներով՝ ձեզ հարգող մի խումբ սովոլուցցիներ՝*

*Գյուպալյան Ասատուր. Մալաթիա 10 փ. տ. 15 (ստորագրություն):*
*Գյուպալյան Ասատուր. Կիլիկիա փ. տ. 54 (ստորագր.):*
*Գյուպալյան Պետրոս Գևորգի. Ճիվանի փ. տ. 40 (ստորագր.):*
*Գյուպալյան Աքաբի. Բարեկամության 2-րդ շենք բն. 42 (ստորագր.):*
*Այվազյան Շնորհիկ. Վշտունու փ. տ. 28 (ստորագր.):*
*Ֆողույաններ. Բարեկամության 2-րդ նրբ. բն. 30 (ստորագր.):*

***

*Լոս Անջելեսի Բեյլանի հայրենակցական միության բոլոր աշխատակիցներին հղում եմ իմ համեստ ողջույնը և երախտագիտությունը: Հայ ազգի փշոտ ճանապարհը նորից է արյունոտվել, և ավնիվ պայքար է մղվում հայ ընտանիքի գոյատևման համար:*

*Եղբայրական օգնությունն ինձ շատ ցնցեց: Ես իմ երախտագիտությունն եմ հայտնում Ձեր միությանը և Լոս Անջելեսի համայն հայությանը: Բայց կա նաև մի նուրբ հարց: Աշխարհը մեզ՝ բոլորիս անջատել է իրարից, բայց մենք ոչ միայն չենք մոռանում մեր մեծ ընտանիքը, այլ ապացուցում ենք համայն մարդկությանը, որ մեզ ոչ մի արհավիրք և յաթաղան չի կարող և ի վիճակի չէ վերացնել աշխարհի երեսից:*

*Սիրելի քույրեր և եղբայրներ. իմ երակներում Մուսա լեռնցիի արյուն է հոսում: Ես ընտանիքով ծանրաբեռնված լինելով՝ ընդունեցի Ձեր համեստ օգնությունը և իմ ընտանիքի անունից հոգաչափ շնորհակալ եմ Ձեր կազմակերպությունից և Լոս Անջելեսում գտնվող բոլոր բեյլանահայ բնակչությունից: Մեր պապերի լեզվով ասած՝ Աստված Ձեզ ուժ ու կարողություն տա, բոլորիդ ճանապարհը կանաչ լինի:*

*Ձեր համեստ օգնությունն ընդունեց երևանաբնակ Պողոս Կարապետի Գեբելչյանը:*

***

*Ամերիկայում գտնվող իմ շատ հարգելի երկրացի բարեկամներ, այս փոքրիկ երկտողով ուզում եմ սրտիս խորքից շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր, գտնվելով, թեկուզ, Ամերիկայում, չեն մոռացել Հայաստանում ապրող հայերին և քրտինքով վաստակած գումարի ինչ որ մաս ուղարկում են մեզ: Ով, թեկուզ մեկ դոլար է դրել, թող Աստված իրեն հազարը պարգևի:*

*Սիրելի հայրենակիցներ, իրոք, ապրում ենք ծանր օրեր: Ինչո՞ւ չլիներ աշխատանք: Եվ դա դեռ բավական չէ: Հեքիաթային թանկություն: Ձեր ուղարկած օգնության համար խոսքեր չեմ գտնում, որպեսզի շնորհակալությունս հայտնեմ՝ նախ կազմակերպողներից, ապա գումարը բարեխղճորեն տեղ հասցնողներից ու արդար ձևով բաժանողներից:*

*Ձեզանից կրկին անգամ շնորհակալություն եմ հայտնում և բոլորիդ կարոտալի համբույրներս ուղարկում:*

*Ձեզ չմոռացող, Նվեր բաջիի մեծ թոռնիկը՝*
*Նավելի Աղավարյան:*

***

*Ամերիկայի Բեյլանի հայրենակցական միությանը:*

*Հարգելի հայրենակիցներ, այս երկտողով գալիս ենք հայտնելու մեր խորին շնորհակալությունը և երախտագիտությունը Ձեր մարդասիրական օգնության համար, որը ճիշտ ժամանակին հասավ մեզ, մեր շատ վատ դրության մեջ:*

*Առանց մեր ասելու դուք քաջ գիտեք, թե ինչ պայմանների մեջ ենք հիմա: Գրեթե բան չմնաց ուտելու: Խանութների թռիչքային թանկությունները ահավոր են, և հնարավոր չէ մոտենալ:*

*Սակայն արտասահմանի որոշ բարեկամներ մեզ չեն մոռացել և մարդասիրական օգնության Ձեռք մեկնեցին: Աստված էլ Ձեզ հասնի, Ձեր մեկը բյուր անի և Ձեր աշխատանքը հարատև լինի:*

*Պատերազմը և շրջափակումը մեզ շատ վնասների հասցրեց: Ժողովուրդը մեծ նեղության մեջ է և, իրոք, օգնության կարիք ունի:*

*Ես ամբողջ ձմեռ չեմ աշխատել և չեմ աշխատում, որովհետև աշխատանք չկա: Միայն տղաս չի հասցնում կնոջ, երեխայի և մեր ընտանիքի կարիքները հոգալ: Ես ծանր հիվանդացա և հիմա թոշակառու եմ: Ընտանիքս բազմանդամ է: Թանկագին բարեկամներ հույսով ենք, որ մեր բարեկամական հարաբերությունները կշարունակվեն:*

*Հարգանքներով՝ Բոյաջյան Նազարեթ Սարգսի:*
*Ներքին Ձեյթուն, II փ. Տ. 19, Երևան 37: Հեռ. 25-05-66:*

***

*Լոս Անջելեսի Բեյլանի հայրենակցական միության:*

*Սիրելի հայրենակիցներ, ստացանք ձեր բարեսիրական օգնության մեր երկու ընտանիքներին հասանելիք բաժինը, որի համար խորին երախտագիտություն ենք հայտնում:*

*Մեզ համար նյութականից առավել թանկ է ձեր բարոյական աջակցությունը: Հայաստանի համար դժվարին այս ժամանակներում հիշել և ցանկացել եք օգնության ձեռք մեկնել մեզ: Միաժամանակ մենք հասկանում ենք, որ բարեսիրական այս ձեռնարկի մեջ ամփոփվում է նաև Հայրենիքի հանդեպ ունեցած ձեր ուշադրությունը, մտահոգությունները, ինչպես և չխամրող հոգեկան կապը:*

*Կրկին անգամ շնորհակալություն ենք հայտնում և մաղթում ենք, որ Հայաստանը որքան կարելի է շուտ դուրս գա այս ճգնաժամից, որպեսզի Հայրենիքն՝ ինքը կարողանա թիկունք ու աջակից դառնալ աշխարհով սփռված իր զավակներին:*

*Հարգանքներով՝ Արմենակ և Երվանդ Բոյաջյաններ:*

***

*Լոս Անջելեսի Բեյլանի հայրենակցական միության:*

*Բնակվում եմ Երևանում: Հիվանդ և ծայրահեղ կարիքի մեջ եմ: Կրիտիկական այս ժամանակներում ձեր կողմից ինձ ցուցաբերած օգնության շնորհիվ կյանքի կոչվեցի, որի համար հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը: Տա Աստված, որ աճի ու բարգավաճի մեր Բեյլանի հայրենակցական միությունը:*

*Սառա Հովհաննեսի Քեշեշյան: Երևան, Նոր Արեշ 29-րդ փ. Տ. 27:*
***19-05-93 թ.:***

***

***18-5-93** Երևան,*

*Լոս Անջելեսի Բեյլանի հայրենակցական միությանը:*

*Եմ՝ հայ ազգի զավակ ազատամարտիկ (ֆեդայի) Քոչարյան Ռոմիկ Մարտիրոսի, ծնվել եմ Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղում: **1991** թ. Շահումյանի շրջանի Ղարա Չինար գյուղի պաշտպանության ժամանակ վիրավորվել եմ:*

*Իմ երախտագիտության խոսքն եմ ուղղում Բեյլանի հայրենակցական միությանը և բոլոր ամերիկահայ բեյլանցիներին, որ այս ծանր, դժվարին ու ձախորդ օրերին օգնության ձեռք են մեկնել Հայաստանում ապրող կարիքավոր հայ ժողովրդին:*

*Խորապես պզացված եմ Գրիգորի ու Սուրենի ազգասիրության համար, որ առանց խտրության բեյլանցի է, թե ոչ, իրենց օգնությունը հասցրեցին, մանավանդ, Արցախում կռվող ազատամարտիկներին:*

*Աստված բոլորիդ կորություն ու առողջություն տա:*

*Սիրով և երախտագիտությամբ՝ Ռոմիկ Քոչարյան:*

***

*Լոս Անջելեսի Բեյլանի հայրենակցական միության վարչության*

*Ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել այս օգնության համար, որ վարչության անդամները բարեխղճորեն և անշահախնդիր ձևով բաժանում են կարիքավոր և բազմաչարչար մեր ժողովրդին:*



*Սպիտակի երկրաշարժից տուժված եմ[1], այստեղ չունեմ ոչ մի հարազատ: Ինձ համար այս օգնությունը երկնքից թափվող մանանայի պես էր: Շատ շնորհակալ եմ: Աստված Ձեզ ուժ ու կարողություն տա:*

*Մխիթար Հովակիմյան: **20-05-93** թ.*

***

*Լոս Անջելեսի Պեյլանի հայրենակցական միության*

*Երևանի Աջափնյակի Հալաբյան փող. 19 շենքի 9 տան բնակիչ Բոյաջյան Ստեփանից*

*Շնորհակալագիր*

*Ես իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Պեյլանի հայրենակցական միությանը այս մարդասիրական օգնության համար: Ի սրտե ցանկանում եմ, որ սա վերջին օգնությունը լինի, և այսուհետև մենք մեր աշխատասիրությամբ հաղթահարենք այս դժվարությունները և ի վիճակի լինենք ուրիշներին օգնելու: Ձեր բոլոր նվիրատուներին ցանկանում եմ երկար կյանք և գործերին հաջողություն:*

*Ձեզ սրտանց հարգող՝ Ստեփան Բոյաջյան, 28 մայիս 1993 թ.:*

***

***Հոգեհանգիստ-հոգեճաշը տեղի ունեցավ Ս. Հովհաննու կաթոլիկ Մայր եկեղեցում և նրա սրահում: Այս առթիվ գրեցի հետևյալ հոդվածը[2]:***

## ՀՈՒՇԱՏՈՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ԵՂԵՌՆԻՆ

*1993 թ. ապրիլի 25-ին ԴՀՄ-ի վարչությունը կազմակերպեց «Մեծ Եղեռնի նահատակների հիշատակին:*

*Սեղանօրհնեքից հետո հոտնկայս մեկ րոպե լռությամբ հարգվեց նահատակների հիշատակը, որից հետո ներկաների մասնակցությամբ կատարվեց «Կիլիկիա» երգը: Տասնամյա Միլենա Հայրիյանը ինչպես միշտ, այս անգամ ևս ջերմացրեց մթնոլորտը, պզացմունքային և մեծ ավյունով արտասանած Հրաչյա Հովհաննիսյանի «Ես քե՛զ եմ սիրում, սիրուն Հայրենիք»ով: Շնորհալի դերասան Գրիգոր Օզարյանը ջերմորեն ողջունեց վարչությանը իրեն համար ավանդույթ դարձրած հուշատոնի համար, որից հետո իր բարձր կատարողական արվեստով կատարեց Պարույր Սևակի «Անլռելի Զանգակատուն»ից մի հատված, արժանանալով ներկաների հիացմունքին ու բարձր գնահատականին: Բեյլանում ծնված Նուբար Գրքաշարյան երգեց երկու երգ: Հուշատոնը ջերմ շունչ ստացավ շնորհիվ հանդիսավար, շնորհալի արվեստագետ Սեդա Կվրյանի: Եղան նվիրատվություններ ննջեցյալների հիշատակին:*

*Վարչությունը խորին շնորհակալություն է հայտնում Գաբրիել Աղազարյան քեթըրինկին, Վիկտորիա և Սարգիս Գյոզալյաններին, Պետրոս Բեբեքյանին, Մանվել և Մաքրուհի Մարաշյաններին՝ հոգեճաշին իրենց*

---

*1.- Ինչպես նշել ենք, վարչության անդամների մի մասը կարծում էր, որ միայն բեյլանցիներին ենք օգնելու: Բացատրեցի, որ հիմնականում բեյլանցիներին ենք օգնելու, բայց պետք է օգնենք նաև մյուս հայրենակիցներին և հատուկ զգուշացրեցի Գրիգորին, որ որևէ տեղ չասվի, թե բեյլանցիներին ենք օգնում միայն: Այդքանից հետո, այդպիսի դեպքեր եղել են:*

*2.- Տե՛ս «Նոր Կեանք», Թիվ 23, Մայիս 20, 1993, էջ 47:*

օգնության համար, ինչպես նաև անմիջական օգնողներին, նվիրատուներին և մասնակիցներին:

Հուշատոնը մի անգամ ևս ապացուցեց հայ ժողովրդի աննկուն կամքը իր նախատակների հիշատակի նկատմամբ և պահանջատիրական իրավունքներին տեր կանգնելու գործում:

## ԱՏԵՆԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Սիրելի հայրենակիցներ, այս տարի Մայր Հայրենիքի հետ միասին ամբողջ Սփյուռքը նշում է **1915 թ.** Մեծ Եղեռնի 78-ամյակը: Դժբախտաբար 20-րդ դարի շեմին կատարված ցեղասպանությունը հայերի նկատմամբ կրկնվեց նաև 20-րդ դարի վերջում Ադրբեջանում **1988 թ.** Սումգայիթում, **1989 թ.** Բաքվում և Կիրովաբադում (Գանձակում), ինչպես նաև Արցախում: Հետևաբար այսօրվա հուշատոնը նվիրված է ինչպես **1915 թ.**, այնպես էլ Ադրբեջանում տեղի ունեցած եղեռնին, նաև Արցախում զոհված ազատամարտիկների ու **1988 թ.** երկրաշարժի զոհերի հիշատակին:

20-րդ դարի առաջին ցեղասպանությունը հայերի նկատմամբ չպգաստացրեց աշխարհի հզոր պետություններին, որի հետևանքով կատարվեց հրեաների հոլոքոստը նացիստական Գերմանիայի կողմից Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Սակայն հրեաները ունենալով ուժեղ թիկունք հանձին ԱՄՆ-ի, կարողացան և՛ հատուցում ստանալ, և՛ ստեղծել այսօրվա Իսրայելի պետությունը, որը հզոր ուժ է Մերձավոր Արևելքում: **1915 թ.** Եղեռնից հետո, անցած տարիներին հայ ժողովուրդը որոշ չափով սփոփել էր իր վերքերը, երբ Ադրբեջանում սկսվեց մի նոր եղեռն հայերի նկատմամբ՝ ավելի կատարելագործված ձևով: Հայերը չունեին պաշտպան, չնայած, որ Խորհրդային Հայաստանը որպես պետություն գտնվում էր հզոր Խորհրդային Միության կազմում: Ընդհակառակը, Խորհրդային Միության զորքերը Գորբաչովի թույլտվությամբ օգնում էին Ադրբեջանում ցեղասպանություն իրագործող ոմանականներին:

Հայրենիքի անկախանալուց հետո, այսօր Հայրենիք-Սփյուռք կապը ուժեղանում է, և Հայրենիքը կարողանում է դիմակայել այն դժվարություններին, որոնք արհեստականորեն ստեղծում է Ադրբեջանը՝ շրջափակումով, գազամուղի խողովակները և երկաթուղու գծերը պայթեցնելով, որպեսզի ծնկի բերի Հայաստանը և հայաթափի Արցախը: Մենք բոլորս էլ գիտենք, թե ինչպիսի դաժան ձմեռներ անցկացրեց հայ ժողովուրդը Երևանի մեջ վերջին երկու տարիներին՝ հանուն Արցախի գոյատևման: Եվ Արցախը արդարացրեց իր վրա դրված հույսերը: Նա ուժեղացրեց անկախության համար մղվող պայքարը: Գրավելով Շուշին և բանալով Լաչինի մարդասիրական միջանցքը դեպի Հայաստան, ազատամարտիկները ապահովեցին իրենց թիկունքը և օգնության ճանապարհը: Հաջորդ քայլով մաքրեցին Հայաստանի և Արցախի միջև ընկած շերտը, որը ժամանակին ստեղծվել էր Ստալինի ճիվաղային ծրագրով, որպես Կարմիր Քրդստան, մեկուսացնելով Արցախը Հայաստանից, որի տարածությունը **4000** քո. կմ է: Ներկայումս Հայաստանն ու Արցախը փաստորեն միացած են տարածությամբ: Չնայած Հայաստանի և Արցախի տնտեսական աննախանձելի վիճակին, ռազմական տեսակետից նրանք հզոր ուժ են ներկայացնում իրենցից, որը ապացուցեց վերոնշված շերտի՝ Քելբաջարի գրավումը:

Ադրբեջանի ախորժակը մեծ է: Նա ձգտում է Մեղրիի շրջանը կտրել Հայաստանից և միացնել Նախիջևանի ու Ադրբեջանի հետ: Արցախի ազատա-






1993 թ. հոգեհանգստի խորանը: Արտասանում է Միլենա Հայրիյանը:

մարտիկները հասկանալով թշնամու նպատակները անցել են հակահարձակման՝ Ֆիզուլիի տարածքում չեզոքացնելու ադրբեջանական ուժերի ակտիվացման կենտրոնները և ապահովելու Մեղրիի շրջանի անվտանգությունը:

Շատ հավանական է, որ ազատամարտիկների վերջին հաղթանակները ստիպեն Ադրբեջանին նստելու կլոր սեղանի շուրջը ոչ թե Հայաստանի, այլ Արցախի ներկայացուցիչների հետ, Կովկասի այդ շրջանում խաղաղություն հաստատելու համար:

Մի հարց ևս պարզ է, որ Արցախը երբեք չի կարող գոյատևել Ադրբեջանի կազմում: Փաստորեն Ադրբեջանը կորցրել է Արցախը և Թուրքիայի հետ ճիգեր է գործադրում փրկելու այն:

Այսօր Հայրենիքը և Սփյուռքը, նշելով նախատակների հիշատակը, միասնական ուժերով կերտում են նոր Հայրենիք փայլուն ապագայով, գոյատևելու կամքով՝ որպես պատասխան թուրք ցեղասպաններին:

***

**5-07-93 թ. դիմումով վարչության գանձապահ Արմենակ Հեքիմյանը «երկարատև հիվանդության պատճառով խնդրում» էր իրեն ազատել զբաղեցրած պաշտոնից: Ի հարգանք հիշատակին մի քանի տող գրում եմ նրա մասին:**

**Արմենակ Հեքիմյանը ԲՀԿՀ-ի անդամ էր Հայաստանում, իսկ Լոս Անջելեսում Գրիգորի հետ եղավ առաջին հանգանակություն կատարողը հուշարձանի բարեկարգման աշխատանքների համար: ԲՀՄ-ի հիմնադիր անդամներից էր, վարչության մեջ որպես**

գանձապահ աշխատեց ազնվորեն, ուղիղ ու մաքուր։ Վարչության նիստում վարչականի սխալը կամ թերությունը ասելը, թեկուզ մոտիկ ընկերոջը, չէր կապում նրա՝ իր անձնական հարաբերությունների հետ։ Երբ խոսք էր լինում գրելու հարցում ինձ օգնելու մասին, նա ասում էր. «Մեր վարչականները գրագիտություն չունեն, որ օգնեն՝ մե՛կը գրիչով, մե՛կը բրիչով»։

Նա հաճախ էր հիշում 1987 թ. մայիսի 17-ի վարչության վերընտրության «ընդհանուր անդամական ժողովը» և հիշեցնում իմ խոսքերը նոր ընտրված վարչության անդամներին շնորհավորելիս։ Ես հաջողություններ էի ցանկացել և հայտնել կարծիքս, որ արդարությունը չի կորչի, մի օր կհայտնվի։

Նրա մաքուր աշխատելու օրինակ է ինձ պատմած հետևյալ դեպքը։ 1987 թ., երբ ես վարչության մեջ չէի, գանձապահի պաշտոնը շարունակում էր կատարել Նուբար Մխսի-Գևորգյանը։ Արմենակը մեղադրում է Նուբարին և Նորայրին, որ ֆինանսական հարցում մաքուր չեն աշխատում (Արմենակն ու Նուբարը ազգականներ են)։ Վիճելիս Նուբարը բորբոքվում, ջղայնանում և Արմենակին մայր է հայհոյում։ Արմենակը ասում է, որ մայրս թաղված է գերեզմանոցի այս ինչ տեղամասում ...։ Հաջորդ օրը առավոտ նա գնում է Նուբարի մոտ՝ դեղատուն և ասում. «Պապա ինձ խարչլըք (ծախսելու դրամ – Վ. Բ.) տուր»։ Նուբարը հանկարծակիի եկած, շվարած երեսին է նայում, թե այս մարդը խենթացել է, ի՞նչ պապա, ի՞նչ խարչլըք։ Արմենակը շարունակում է. «Բա երեկ մորս չհայհոյեցի՞ր, ուրեմն հայրս ես ...»։ Ահա այսպիսի հումոր էլ ուներ նա։ Որպես քեսաբցու սերունդ ուներ նաև ջղայնություն։ Երբեմն էլ թույլ էր տալիս արտահայտություններ՝ վիրավորելով դիմացինին։ Նա ավելի գրագետ էր, քան Գրիգորը, Մանվելն ու Հարությունը, բայց այս չորս հոգու մեջ մի վատ սովորույթ կար. նրանք միշտ թուրքերեն էին խոսում իրար հետ։ Վերջիններս մինչև հիմա շարունակում են այդ սովորությունը։ Հաճախ եմ զգուշացրել նրանց, որ նախ՝ հայերեն խոսեն և երկրորդ՝ նիստի ժամանակ չխոսեն։ Նույնիսկ, ստիպված իրարից հեռու էի նստեցնում, որպեսզի չխանգարեն և մասնակցեն նիստում դրված հարցերի քննարկմանը։

Պետք է նկատի ունենալ՝ 100 տոկոսանոց սուրբ մարդ գոյություն չունի։ Եթե մարդու թերությունները հանդուրժելի են շրջապատի համար, նա լավ մարդ է հարաբերական իմաստով։

Մարդ պետք է մտածի, թե իր հեռանալուց հետո ի՞նչ անուն է թողնելու այս աշխարհում, աշխատի միշտ ազնիվ ու բարի լինել կյանքում, հնարավորության չափով ազնվորեն վերաբերվել



շրջապատին և մաքրություն ունենալ։ Մարդն ինքն է ստեղծում հարգանքն իր հանդեպ։

Հայաստանի հայրենակիցներին բաժանված դրամի առթիվ լույս տեսավ Մելքոն Արսլանյանի հոդվածը[1], որի կարևոր մասերը ներկայացնում ենք ընթերցողին։

## ՊՀՄ-Ի ԱԶԳԱՍԻՐԱԿԱՆ ԱՐԱՐՔԸ

Շաբաթ, 26 Յունիս, 1993։ Խմբագրատանս մէջ հանդիպում կ'ունենանք ՊՀՄ-ի ատենապետ՝ Վահան Պահարեանի հետ։ Բարի լուր ունի հաղորդելիք։ Պէյլանցիները շուրջ **3000** տոլար տարած են Հայաստան եւ բաժնած շուրջ **200** կարօտեալ ընտանիքներու։ Լոս Անճելիսի պէյլանցիները մեծամասնութեամբ Հայաստանէն արտագաղթած են։

**1939**-ին, Ֆրանսացիները Սուրիոյ Սանճագ նահանգը թուրքերին տուին զիրենք սիրաշահելու համար։ Չուզեցին որ Գերմանիոյ յարի **1914**-ի պէս։

Պէյլանցիները լքեցին իրենց բնաշխարհը և հաստատուեցան Լիբանան, Սուր քաղաքի մերձակա խոպան հողամասի մը վրայ։ Դժուար եղաւ կեանքը վերսկսիլ։

**1946**-ին ներգաղթ է։ Պէյլանցիները մեծամասնութեամբ Հայաստան գացին։ Այսօր Լոս Անճելըս կը բնակին շուրջ **400** ընտանիք։

Հայրենակցական միութիւնը զորաւոր է։ Տարեկան կ'ունենան՝ մէկ ճաշկերոյթ-պարահանդէս, մէկ դաշտագնացութիւն, եւ Եղեռնի զոհերու յիշատակին հոգեհանգիստ-հոգեճաշ։

Պէյլանցիները մտահոգ են հայրենիքի առօրեայով, բայց չեն գոհանար այդքանով։ Կ'աշխատին գործնականապէս օգտակար ըլլալ։

Այս տարուան ճաշկերոյթ-պարահանդէսին ամբողջ եկամուտը որոշեցին հայրենի կարօտեալ ընտանիքներուն և ազատամարտիկներուն տրամադրել։ Շեշտակի ճիգով կրցան **3000** տոլար հանգանակել։ ...

**3000** տոլարը վերածուեցաւ **3000000** ռուբլիի։ **200** ընտանիք, թիւով **600** հոգի, իւրաքանչիւրն ստացաւ **5000** ռուբլի։

Մենք անձնապէս ստացականները տեսանք և կարդացինք քանի մը շնորհակալական գրութիւններ։

«Նոր Կեանք» այս բարի լուրը կը փոխանցէ մեծ գնահատանքով։ Կը մաղթենք որ ուրիշ հայրենակցական միութիւններ եւս ձեռնարկեն նման բարեգործութիւններու։

Վարչությունը պատրաստվում էր իր հաջորդ հիմնական միջոցառումներին՝ դաշտահանդեսին և ԾՊ–ին։

Այս ընթացքում, մի օր Մանվել Մարաշլյանը հայտնեց, որ Ալիս Կապլանջյանը (բեյլանցու զավակ) երկու տարի է ինչ Լոս Անջելեսում է, ուզում է մշակութային երեկո կազմակերպել և մեր միությունը հովանավորի։

Ուրախությամբ ընդառաջեցի առաջարկին, նկատի ունենալով մշակույթի կարևորությունը հայ կյանքում և այն, որ նա, որպես բեյլանցու սերունդ, կմասնակցի նաև միության գործու-

1.- Տե՛ս «Նոր Կեանք», թիվ 31, Հուլիս 15, 1993, էջ 18։

նեությանը վարչության մեջ։ Պայմանավորված ժամին Մանվելի հետ այցելեցինք Ալիսին։ Ծանոթացա նրա, ամուսնու, երկու դուստրերի և հետագայում նաև մոր հետ։ Քննարկեցինք միջոցառման հարցը։ Ալիսը ընդհանուր տեղեկություններ տվեց։ Զգացի, որ ծանոթ է կազմակերպչական հարցերին, հետաքրքրվել է դրանցով՝ դիմելով տարբեր կազմակերպություններին, որոնցից գոհացուցիչ պատասխան չի ստացել։ Առավել համոզվեցի այդ բանում, երբ առաջարկեց միջոցառման եկամուտի 30 տոկոսը հատկացնել միությանը, եթե նա հովանավորի այն։

Պարզ էր, որ նրա միջոցառումը հովանավորել ցանկացողները չնչին գումար էին առաջարկել նրան՝ պահելով գայլաբաժինը։ Հավատում եմ մարդկանց և չեմ մտածում, որ շատերը նյութական շահի համար են համոզում քեզ, իբր դժվար կացության մեջ են։ Հետո իմացա, որ Ալիսի ամուսինը ոսկերչական գործատեղի ունի։ Այդ մասին նրանք չասացին, ոչ էլ Մանվելը։

Նրանք արդեն ունեին միջոցառման թեման՝ Վահան Տերյանի կյանքը «Միթե վերջին պոետն եմ ես ...»։

Չնայած վարչությունը կարիք ուներ մեծ գումարների Հայաստանի հայրենակիցներին օգնելու համար, հրաժարվեցի տոկոսներից՝ ավելացնելով, որ առայժմ իրենք իրենց գտնեն, մենք կհովանավորենք միջոցառումը, եթե այն հաջողություն ունենա ու եկամուտ գոյանա, ինչ էլ միությանը տան, ուրախ կլինենք։

Մանվելը չէր սպասում այդպիսի պատասխանի։ Զարմացած՝ Ալիսին ասաց. «Տեսա՞ր ինչ մեծ բարեհոգություն արեց Վահանը»։ Կազմակերպչական աշխատանքների համար առաջարկեցի նաև միության ֆոնդից նյութապես օգնել նրանց, միջոցառումից գոյացած եկամուտից ետ վերադարձնելու պայմանով։ Իհարկե, խոսակցությունը նախնական պայմանավորվածություն էր։ Այն պետք է քննարկվեր ՎՆ-ում։ Բայց վստահ էի, որ կհաստատվեր, քանի որ բոլոր բեյլանցիները իրար ճանաչում են և բարեկամական կապեր ունեն։

Այս ձևով աշխատում էի ՊՀՄ-ի վարչության ազգային գործունեությանը ծանոթացնել Լոս Անջելեսի հայ համայնքին։ Դեռ ուրիշ ձեռնարկների իրագործման էլ էի մասնակցում. մի խոսքով բազմազան գործունեություն էի ծավալել մեր միության անունը հայտնի դարձնելու և համայնքում հեղինակություն ստեղծելու համար։ Այս նպատակով նաև հաճախ հոդվածներ էի գրում և ստորագրում որպես ՊՀՄ-ի վարչության ատենապետ։ Տարիներ հետո, մի անգամ, երբ այցելեցի Արա Պետրոսյանին իր տանը, այնտեղ էր նաև Մանվելը։ Միության տարբեր հարցեր քննար-



կելիս, Արան կարծեք դիտողություն արեց՝ ասելով, թե ինչո՞ւ եմ գրած հոդվածներիս տակը ստորագրում որպես ՊՀՄ-ի վարչության ատենապետ։ Անմիջապես հասկացա, որ դա Մանվելի հետ իր զրույցի ազդեցության արդյունքն է։ Զարմանալին այն էր, որ Արան, լինելով կրթված ու զարգացած, ենթարկվում էր Մանվելի քմահաճույքներին։ Ո՛չ պարզաբանումներ պահանջեցի, ո՛չ էլ պարզաբանեցի։ Պատասխանեցի, որ եթե վարչությունը դեմ լինի այդ արարքիս, այսուհետև միայն իմ անունը կգրեմ։

7-08-93 և 7-18-93 թվակիր երկու նամակ ստացա ՀԲԸՄ-ի Ալեք Մանուկյան կենտրոնից (2495 E. Mountain St., Pasadena, Ca 91104)։ ՀԲԸՄ-ի Գլենդելի հանձնախումբը (ատենապետուհի Սոնա Եագուպյան) սույն թվի հոկտեմբերի 9-ին կազմակերպում էր հայ ձեռարվեստին նվիրված ցերեկույթ և հայկական տարազների ցուցահանդես տիկին Անուշ Շամլյանի հովանավորությամբ ու առաջարկում էր, որ մեր միությունն էլ մասնակցի ցուցահանդեսին բեյլանցիների ավանդական ձեռագործներով։

Տերյանին նվիրված և ձեռարվեստի միջոցառումների հարցերը քննարկվեցին վարչության 8-06-93 թ. և հետագա նիստերում։

Դաշտահանդեսի (սեպտեմբեր 5, 1993 թ. Magnolia Park), կազմակերպման զուգահեռ, վարչությունը որոշեց բեյլանցիների «դեմքն» էլ ցույց տալ և պարզերես դուրս գալ ձեռագործներին նվիրված ցուցահանդեսից։ Այդ նպատակով 9-08-93 թ. ՎՆ-ում որոշվեց ցուցահանդեսին ներկայացնելու համար հայրենակիցներից հավաքել լավագույն ձեռագործները։ Սեդա Կվրյանի հետ հավաքված ձեռագործները տարանք Սոնա Եագուպյանի բնակարանը։ Այդ նիստում որոշվեց նաև Վահան Տերյանի պոեզիայի ներկայացման համար բեմադրողներին հատկացնել 3000 դոլար, որը վերադարձվելու էր տոմսերը վաճառվելուց հետո։ Օգնել նաև տոմսերի իրացման ու ծանուցումներ հավաքելու գործում, որը և վարչությունը կատարեց հաջողությամբ։

Վարչությունը որոշեց, որ ցուցադրման ժամանակ ձեռագործները ներկայացնեն Սեդա Կվրյանը և Ալիս Կապլանջյանը, որոնք մեծ հաճույքով համաձայնվեցին։ Նաև իրենց տանը Ալիսը ցույց տվեց երկու ձեռագործ սովորական շրջանակով և ասաց, որ եթե ձեռագործների վաճառք պիտի լինի, սրանց շրջանակները պետք է փոխվեն։ Պատասխանեցի՝ եթե ուզում եք, փոխեք և տանենք։

Այս ընթացքում տեր և տիկին Սարգիս և Վիկտորիա Գյոզալյանները վարչությունը հրավիրեցին իրենց ամուսնության 50-ամյակին՝ սեպտեմբեր 23-ին։ Այդ առթիվ վարչությունը հուշա-

տախտակ նվիրեց ամոլին հետևյալ գրությամբ.

Այս հուշատախտակը նվիրվում է Սարգիս Խաչատուրի Գյոզալյանին ի գնահատանք նրա քրտնաջան ու նվիրված աշխատանքի ինչպես Բեյլանի հուշարձանի կառուցման գործում Հայաստանում, այնպես էլ ՊՀՄ-ի վարչության կազմում որպես խորհրդատուի՝ Լոս անջելեսում, ինչպես նաև իր և տիկնոջ՝ Վիկտորիա Աբելի Գյոզալյանի ամուսնության 50-ամյակի առթիվ:

ՊՀՄ-ի վարչություն, Լոս Անջելես, 9-23-93 թ.:

**Վարչության շնորհավորական քարտում գրված էր.**

Սիրելի Սարգիս և Վիկտորիա,

ՊՀՄ-ի վարչության անունից և անձամբ շնորհավորում եմ ձեր ամուսնության 50-ամյակը, մաղթելով ձեզ քաջառողջություն, երջանկություն և հաջողություններ ձեր երեխաների, թոռների ու բոլոր հարազատների հետ: Շատ քչերն են ունենում այսպիսի բախտավորություն, և այսօր մենք շատ ուրախ ենք, որ նրանցից մեկն եք դուք: Եթե հետադարձ մի հայացք գցենք ամուսնության ձեր անցած 50 տարիներին, ապա պիտի գտնենք ամուսնական բերկրանք, ընտանեկան երջանկություն և հոգսեր, հաջողություններ և անհաջողություններ: Այսօր այս սրահում արժևորվում է ձեր 50 տարվա վաստակը, որը մեծ է նաև հայրենասիրական գործերի մեջ, որի վառ ապացույցն է ձեր նվիրյալ աշխատանքը Հայաստանում ԲՀԿ-ի կառուցման գործում:

Այսօր դուք ունեք նոր սերունդ, որը դաստիարակված հայրենասիրական ոգով, շարունակում է ձեր գործը ...:

Մի անգամ ևս շնորհավորելով ձեր 50-ամյակը, ցանկանում եմ ձեր բոլոր իղձերի իրականացում:

Հարգանքներով՝ ատենապետ Վահան Բահարյան, 9-23-93 թ.:

**Հուշատախտակը հոբելյարներին հանձնելիս կրկնվեց տարօրինակ դեպքը, երբ Գրիգորը, մոռանալով ամեն պատշաճություն, ինքը հանձնեց այն՝ զարմացած թողնելով ինձ ...: Ո՜րքա՜ն ցուցամոլություն ...:**

***

Ցուցահանդեսը առավոտյան ժամը 10:30-ին էր, իսկ տարազների ցուցադրությունը՝ 12-ին: Միության անունից ներկայացնում էինք 50 անուն ձեռագործ: Ցուցադրության համար ձեռագործներ էին հատկացրել Ավետիսյան Անահիտը, Բահարյան Արաքսին, Բահարյան Վահանը, Գազչյան Գևորգը, Գյոզալյան Սարգիսը, Հարությունյան Եղիսաբեթը, Կալյանջյան Ալիսը, Մարաշյան Մանվելը և Կվրյան Սեդան: Առավոտյան Ալիսին վերցրեցի տնից ու գնացինք սրահ: Նա բերել էր նաև վերոնշյալ երկու ձեռագործները, նոր շրջանակներով: Ալիսի հետ դասավորեցինք ձեռագործները մեր միության հատկացված սեղանի վրա: Տարածքը փոքր լինելու հետևանքով դրանք դարսվեցին իրար վրա: Որոշ ժամանակ անց եկավ նաև Մանվելը: Սեդան չեկավ: Սրահում հանդիպեցի Մելքոն Արսլանյանին: Նա առաջարկեց ճաշարան գնալ: Ընդունեցի առաջարկը:

Մինչ Մելքոնի հետ նստած էինք ճաշասեղանի շուրջը, Մանվելը եկավ և հայտնեց, որ ձեռագործների ցուցադրության սենյակը փակել են, և Ալիսի հետ դրսում են մնացել: Խնդրել է Ալիսին, որ միասին ներս գան, չի եկել: Ըստ Մանվելի, Ալիսը զանգահարել է ամուսնուն, որ գա իրեն տանի, բայց չի կարողացել կապվել հետը: Ես չգիտեի, որ ձեռագործների ցուցադրման սենյակը փակելու են: Փաստի առաջ էի կանգնած: Մանվելի հետ դուրս եկանք: Ալիսին տեսնողը չէր ճանաչի՝ վրդովված, սիգարեթը իրար հետևից ծխում էր, և դեմքից ատելություն էր հորդում: Ներողություն խնդրեցի թյուրիմացության համար և նրան հրավիրեցի ճաշելու: Չեկավ: Մանվելն ինձ առաջարկեց նրան տուն տանել: Ես չէի կարող բացակայել միջոցառումից, որովհետև հոդված պիտի գրեի դրա մասին: Ալիսին չկարողացա համոզել ճաշարան գնալու: Համառությունը բռնել էր: Արդյոք ի՞նչը առիթ տվեց նրան այդ քայլին դիմելու, երբ անկեղծորեն ուզեցի հարթել ստեղծված թյուրիմացությունը: Ի՞նչ պատահեց, որ իրեն այդքան վիրավորված զգաց: Մանվելը տուն տարավ նրան և վերադարձավ: Միջոցառումը ավարտվելուց հետո Մանվելի հետ ձեռագործները հավաքեցինք և գնացինք տուն:

«Միթե վերջին պոետն եմ ես» ներկայացման համար վարչության անդամները տոմս վաճառեցին և ծանուցում հավաքեցին: ՊՀՄ-ի վարչության ՃՊ-ն դեկտեմբերի 31-ին էր, իսկ ներկայացումը՝ նոյեմբեր 13-ին: Փաստորեն, մեր ՃՊ-ի ծանուցագրքին նախատեսված ծանուցումները հավաքեցինք ներկայացման ծանուցագրքի համար, ուստի ՃՊ-ի ծանուցագրքի համար չէինք կարող ծանուցողներից երկրորդ անգամ ծանուցում խնդրել: Նույնիսկ, ընկերոջս՝ ոսկերիչ Գևորգ Կաչարյանին խնդրեցի, որ ներկայացման ծանուցագրքի համար ծանուցումներ հավաքի ոսկերիչներից:

Միայն Մանվելը և ես՝ յուրաքանչյուրս 1000 դոլարի տոմս ծախեցինք, ծանուցում հավաքեցինք: Մանվելը չահագրգռված էր: Տղան՝ Մուշեղը մասնակցում էր ներկայացմանը, իսկ ե՞ս ...:

Ներկայացման ծանուցումների գումարը եղավ 3200 դոլար, իսկ միության ՃՊ-ի ծանուցումներինը՝ ընդամենը 1400 դոլար: Ահա այս ձևով օգնեց վարչությունը Ալիսին:

Ձեռագործների ցուցահանդեսից հետո Ալիսը և ամուսինը վերաբերմունք ճշտեցին իմ նկատմամբ: Ես, դա համարելով ժամանակավոր երևույթ, շարունակեցի սատար կանգնել նրանց միջոցառմանը՝ չմտածելով նրանց սրտում կուտակված մաղձի մասին: Այդքան օգնելուց հետո, դեռ Ալեքսանդրը պահանջում էր միության անունից ծանուցում տալ ծանուցագրքի համար:



Ձեռագործներից նմուշներ։

Ներկայացման ծանուցագրքի առաջին էջում տպվեց իմ «Երկու խոսքը» (տե՛ս բնագիրը հավելված էջ 439)։

Մինչև ներկայացումը, ըստ նախօրոք իմ պայմանավորվածության, Ալիսի և ամուսնու հետ «Նոր կեանք»ի խմբագրատանը հանդիպում ունեցանք Թղթակից Մելքոն Արսլանյանի հետ, որը Թերթի[1] էջերում ներկայացրեց նրանց, նշելով ներկայացման օրը և կոչով հորդորեց մշակութասեր հասարակությանը, դպրոցների աշակերտներին ներկա լինել կարևոր իրադարձությանը։

Հոդվածը կարդալուց հետո նրանք դժգոհեցին, որ Թղթակիցն իրենց լավ չի ներկայացրել, չարժանկարներում իրենց խաղացած դերերի մասին չի գրել և այլն, և այլն, մինչդեռ հանդիպման ժամանակ նրանք չեշտեցին, որ «բազմաթիվ» ֆիլմերում են խաղացել, բայց մի որևէ ֆիլմի անուն չհիշատակեցին։ Ալեքսանդրը վերջացրեց այս բոլորը՝ ասելով. «Այս էլ հոդվա՞ծ է, որ գրել է»։ Այս խոսքով հատուցվեց իմ աշխատանքը։

Ներկայացումը հաջող էր, և քառյակը լավ եկամուտ ունեցավ։ Ըստ Մանվելի պատմածի, ներկայացումի ավարտից հետո մասնակիցները հավաքվել են նրա տղայի՝ Մուշեղի տանը և նշել են։ Ալիսը և ամուսինը ավելորդ խոսել իմ մասին, բայց Մանվելն իբր նրանց լռեցրել է։ Ալիսի մայրը նույնպես ամոթանք է տվել՝

1.- Տե՛ս «Նոր կեանք» Թիվ 48, Նոյեմբեր 11, 1993, էջ 13։



ասելով. «Ամոթ չէ՞ր, որ Վահանին չկանչեցիք»։ Ես պիտի ավելացնեմ նաև, որ ամոթ էր, որ վարչությունը չկանչեցին, երբ իր նյութականով, տոմսեր վաճառելով, ծանուցումներ հավաքելով, այլ հարցեր լուծելով՝ աշխատեց ներկայացման հաջողության համար։

Ահա այսպիսի չնորհակալություն ստացա նրանցից, եկամուտի 30%-ն էլ նվիրեցի՝ միամտորեն հավատալով նրանց խեղճության մասին Մանվելի հեքիաթին։ Պարզվեց, որ ոսկերչական գործատեղի ունեն։ Ո՞ւր մնաց պատիվը։ Ես միշտ աշխատել եմ ազնվորեն օգտակար լինել բոլորին, եթե կարողացել եմ։

Գրածս հոդվածը[1].

## «ՄԻԹԵ ՎԵՐՋԻՆ ՊՈԵՏՆ ԵՄ ԵՍ...»

1993 թ. նոյեմբերի 13-ը որպես հուշ երկար կմնա մեր մշակութասեր հանդիսատեսի հիշողության մեջ: Նա այդ օրը ըմբոշխնեց մեր արժանավոր բանաստեղծներից մեկի՝ Վահան Տերյանի կյանքին նվիրված ներկայացումը, որը տեղի ունեցավ Գլենդելի **United Community Church** եկեղեցում: Սրահը լեցուն էր: Ներկայացումը տևեց մոտ մեկ ու կես ժամ առանց ընդմիջման:

Մոռանալ, մոռանալ ամեն ինչ, ամենին մոռանալ
Չսիրել, չխորհել, չափսոսալ հեռանալ...

Վահան Տերյանը իր յուրահատուկ տեղն ունի հայ բանաստեղծների շարքում: Նրա քնարական, քնքույշ ու մելամաղձոտ ստեղծագործություններից շատերը վերածված են երգերի, որոնք սիրված են մեր ժողովրդի կողմից և հնչում են ամենուրեք: Սույն ներկայացումը պոետի ամփոփ կենսագրականն էր, որ մատուցեց հանդիսատեսին Նունե Ավետիսյան, Ալիս Կապլանջյան, Գրիգոր Օգարյան և Ալեքսանդր Խաչատրյան դերասանական քառյակը:

Աշնան մշուշում շշուկ ու շրշուն,
բարդիներն բաց պատուհանիս տակ

Իրոք աշուն էր, բայց սրահում ներկայացման ամբողջ ընթացքում ոչ մի շշուկ չեղավ, եթե բացառենք ծափահարությունները՝ մերթ ընդ մերթ սրահի քար լռությունը խզող՝ ի պատիվ դերասանական քառյակի:

Թատերական ներկայացումը հովանավորող ՊՀՄ-ի անունից շնորհավորում եմ մեր սիրելի քառյակին, որը տքնաջան աշխատելով կարճ ժամանակամիջոցում կարողացավ պատրաստել և ժողովրդին մատուցել իր տեսակի մեջ յուրահատուկ մի ներկայացում, որն իր բնույթով տարբերվում էր մինչ այդ եղած մշակութային ձեռնարկներից:

Թատերգության հեղինակն է Սուրեն Հարությունյանը, բեմադրության՝ Ալեքսանդր Խաչատրյանը, երաժշտության՝ Արամ Նազարյանը, նկարչական ձևավորումը՝ **«Key Art Award Winner»** Սահակ Էքշիյանի: Դերասանական խաղը լավ էր համադրված երաժշտության և լույսերի ներդաշնակության հետ: Համարյա բեմ չկար, բայց կարծեք թե ներկայացումը շահեց հենց դրանից՝ իր անբեմական խորհրդավորությամբ: «Հայաստան» հեռուստատեսության «Նարե» պարախմբի (գեղ. ղեկ. Մարիամ Նիկողոսյան) համակրելի պարու-

1.- Տե՛ս «Փարոս», Դեկտեմբեր 1, 1993, էջ 11։

*հինների, թատերգության պուգահեռ ներկայացրած տեսարաններն էլ ավելի իմաստավորեցին ներկայացումը:*

*Այստեղ ուզում եմ խոսել ավելի կարևոր մի հարցի մասին, թատերգությունը վերլուծելու ու գնահատելու աշխատանքները թողնելով արվեստագետներին և քննադատներին:*

*Թատերգությունը յուրահատուկ էր իր էությամբ, ո՛չ թատրոն էր և ո՛չ էլ ասմունքի երեկո: Դա իրոք պոետիկ ներկայացում էր, որի նորամուծությունը հանդիսատեսը արժևորեց: Եթե յուրաքանչյուր հայ պոետ մեկ ու կես ժամով ծանոթացվի մեր ժողովրդին, ապա դա կլինի հայապահպանման գործընթացի ամենամեծ ներդրումներից մեկը մեր ազգային ու մշակութային գործունեության մեջ: Ըստ մեկ այսպիսի ներկայացումներին հայկական դպրոցների համապատասխան դասարանների աշակերտների և երիտասարդության ներկայությունը պարտադիր է, ազգայինը ամուր հիմքերի վրա դնելու և նրանց ամուր կապերով կապելու համար: Բացի այդ մեր երիտասարդության ուսերի վրա է ընկնում հաջորդ սերունդները հայ պահելու ամբողջ պատասխանատվությունն ու ծանրությունը:*

*Վարձքդ ի կատար սիրելի քառյակ և շնորհակալություն քեզ սիրելի ՀԱՅ մշակութասեր հանդիսատես, որ քո ներկայությամբ և գնահատականով քաջալերեցիր մեր արվեստագետներին:*

*Հանդիսատեսը սրահից հեռացավ մի քիչ տերյանացած՝ նորից վերադառնալու պայմանով:*

*Այսօր Տերյան, վաղը Մեծարենց, Իսահակյան, Դուրյան, Թումանյան, Սևակ, Չարենց...*

*Ազգը իր մշակույթով է գոյատևում և վայ այն ազգին, որի մշակույթը կխամրի՝ պատճառ դառնալով իր իսկ կործանման:*

*Կանաչ լույս ՀԱՅ մշակույթին՝ ի հարատևություն մեր ազգին:*

***Տվյալ ժամանակաշրջանում վարչության գործունեությունը բուռն էր բազմապիսի ծրագրերով: 11-18-93 թ. ՎՆ-ում քննարկվեցին կարգապահության, ՃՊ-ի, Սարգիս Սողանալյանի հետ հանդիպման, Նոյեմբեր 24-ի թելեթոնին մասնակցելու, Ձմեռ-94 ծրագիրը՝ Հայաստանին օգնելու և Վահան Տերյանի «Միթե վերջին պոետն եմ ես» ներկայացման հաշվետվությունը:***

***Նույն նիստի արձանագրության մեջ կարդում ենք.*** *Հաջորդ հարցը Տերյանի «Միթե վերջին պոետն եմ ես» ներկայացման մասին էր: Վարչության անդամները ջերմ արտահայտվեցին ներկայացման վերաբերյալ: Նույն ջերմությամբ ու շնորհակալությամբ արտահայտվեցին ներկայացման հեղինակ Ալեքսանդր Խաչատրյանը և դերասանուհի Ալիս Կապլանջյանը:*

***Այս է արձանագրության մեջ գրվածը: Երևի Սեդան խուսափել է գրել մանրամասնությունները, որոնք որոշ տհաճություն ունեն: Իրոք, նրանք շնորհակալություն հայտնեցին վարչականներին և անձամբ Մանվել Մարաշլյանին, բայց իմ անունը չհիշեցին, երբ հիմնականում ես էի ղեկավարում ու կարգավորում բոլոր աշխատանքները, քաջալերում վարչականները իրենց կարելին անելու ներկայացման հաջողության համար: Դեռ ծանուցումների համար էլ վարչության կողմից տրված որոշ գումարներ չվերադարձ-***





*«Միթե վերջին պոետն եմ ես» ներկայացման՝ խումբ: Ձախից աջ՝ Վահան Բահարյան, Ալեքսանդր Խաչատրյան, Ալիս Կապլանջյան և Գրիգոր Օզարյան:*

***վեցին, եկամուտից էլ մի սենթ չտվեցին, երբ համաձայն էին վճարելու 30%: Այդքանից հետո էլ առաջարկեցի ներկայացումը կրկնել դպրոցականների համար տոմսերի զեղչված գներով: Ջեքերի հետ կապված որոշ հարցեր մնացին: Անտեսելով նրանց վերաբերմունքը, մի անգամ ևս ներողություն խնդրեցի ձեռագործների ցուցահանդեսում եղած թյուրիմացության համար, իհարկե պարտավոր չէի, բայց աշխատում էի մեր կապերը չխզել: Առաջարկեցի շաբաթ կամ կիրակի օրը հանդիպել և նշված հարցերը լուծել: Ալիսը կոպիտ ձևով արձագանքեց.*** *«Մենք ո՛չ շաբաթ օրն ենք տանը, ո՛չ էլ կիրակի օրը ...»:*

***Այդ օրվանից վերջակետ դրի նրանց հետ իմ հարաբերություններին: Արժանապատվություն ունեցողը կարո՞ղ է հանդուրժել այսպիսի արհամարհանքը: Իմ առաջարկով, նա պիտի ասմունքեր Սարգիս Սողանալյանի մեծարանքի երեկոյին, որպեսզի համայնքը ճանաչի իրեն, ժողովրդականություն ձեռք բերի: Կարող էի չեղյալ անել այդ, բայց մեծահոգաբար թողեցի, որ հասկանա մարդկությունը, բայց ....:***

***Ինչպես առաջարկել էի, հետագայում ներկայացումը կրկնվեց դպրոցականների համար, բայց ուրիշ միության հովանավորությամբ: Մեզ չհիշեցին մինչև այն ժամանակ, երբ նորից մեր***

միութեան կարիքը զգացին ...:

Նոյն նիստում որոշվեց Զմեռ–94 ծրագրին նվիրել 200, իսկ թելեթոնին՝ 300 դոլար: Վերջինս կազմակերպվեց Medical Outreach for Armenians, Inc.-ի կողմից, 1993 թ. նոյեմբերի 24-ին (գիշերվա ժամը 12-ին սկսեց և տևեց 12 ժամ), որի աշխատանքներին մասնակցեց նաև մեր միութիւնը: Թելեթոնի մասին հոդված[1] գրեցի և ելույթ ունեցա, որի կարևոր մասերը մեջբերում եմ:

ԱՐՑԱԽ

Սիրելի հայրենակիցներ, այսօր Արցախն ավելի քան երբեք կարիքն ունի Սփյուռքի օգնության, որպեսզի սկսած գործը պատվով ավարտի:

Եկեք հիշենք Սումգայիթը, Բաքուն, Կիրովաբադը (Գանձակը), երկրաշարժը, որը կարծես թե լրացնում էր առաջիններին, վերջին հարվածը տալու հայ ժողովրդին, երբ նա սկսել էր իր անկախ պետականություն ստեղծելու պայքարը, իսկ Արցախը խորհրդային կորքերի և ազերիների միացյալ ուժերով դարձել էր արյան լիճ: Սա 1988 թվականին էր: Մոսկվայում Հայաստանի և Արցախի ղեկավարության ջանքերը Արցախում նորմալ կյանք ստեղծելու նպատակով դեմ առան Գորբաչովի պողպատյա խոփին: Աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը ալեհեր հասակում և պատվիրակության մյուս անդամները արհամարհվեցին նրա կողմից, որի պատճառով հացադուլի դիմեցին: Երկրաշարժից հետո Գորբաչովը Լենինականում (Գյումրի) մատ թափ տվեց հայ ժողովրդի վրա՝ ասելով, որ ձեր հալին էլ չեք նայում, դեռ Ղարաբաղ եք ուզում, երբ փլատակների տակից դուրս եկած ՀԱՅ մարդու առաջին հարցը՝ եղավ Արցախը:

Հայն իր հողի ու ջրի, հուշարձանների ու եկեղեցիների անբաժան մասնիկն է, իր սեգ լեռների պես հպարտ ու ամուր է, որը և ուժ է տալիս նրան Հայրենիքի սրբությունը ամեն ինչից վեր դասելու ու կառչած մնալու իր սուրբ հողին՝ արյան գնով պաշտպանելով այն:

Չհավատալով Գորբաչովի խոստումներին, Արցախի ժողովուրդը մի մարդու նման կանգնեց թշնամու դեմ ու պաշտպանեց իր սրբազան հողն ու ընտանիքը, սակայն ոչ առանց կռիերի: Ազատությունն ու անկախությունն առանց կռիերի ոչ մեկ ազգի ոսկե սկուտեղի վրա չի հրամցվում, նա պետք է իր ուժերով իրագործի այդ, որը և կատարում են հիմա Արցախի ազատամարտիկները:

Ադրբեջանը իր թուրք եղբոր հետ շրջափակեց Հայաստանն ու Արցախը, որպեսզի ծնկի բերի հայ ժողովրդին: Սակայն այդ էլ չօգնեց: Այսօր ազատամարտիկները հաղթանակներ են տանում շրջափակած Ադրբեջանի դեմ հրաշքներ գործելով: ...

Ըստ օտարերկրյա լրատվական գործակալությունների, Արցախի կանոնավոր բանակը գրավել է Ադրբեջանի 1/6 մասը: Սակայն նրանք կամ պատմությունը լավ չեն սերտել, կամ էլ իրենց կույր են ձևացնում չտեսնելու համար այդ հողերի հայկական լինելը, որի ակնառու վկաներն են մեր պատմությունը, մեր անհամար խոսուն հուշարձանները, խաչքարերն ու եկեղեցիները այդ հողերի վրա, որոնց մի մասը բարեբախտաբար դեռ

1.- Տե՛ս Վահան Բահարյան, Շարունակվող Մեղեդի, Արցախ, Սփյուռք, telethon... Երևան, 2001, «Զանգակ–97», էջ 46:



կանգուն են: ...

Սիրելի հայրենակիցներ, այսօր մեր մեջ չկա մեկը, որ անհամբեր չսպասի, թե մի ժամից մյուսը ի՞նչ ուրախ լուր է գալու Արցախից: Սփյուռքը Հայրենիքի հետ մի բռունցք կապված կանգնած է նրա մեջքին: Եկեք փաստով ապացուցենք այն՝ շարունակելով մեր առօրյա հացից բաժին հանել նրան: ...

Չմոռանանք, որ օգնությունը այսօր է պետք, վաղը ուշ կլինի: Օգնենք, եթե ուզում ենք ունենալ կանգուն, ազատ, անկախ ու հզոր Հայրենիք և հավատացած ենք, որ երբ Հայրենիքը վերականգնվի, կհատուցի Սփյուռքին և հովանի կլինի նրա գոյության իր բոլոր հնարավորություններով: ...

Շնորհակալություն բոլորիդ, բոլորիդ, որ նեցուկ եք կանգնում նրանց, ովքեր ապագայում պիտի կերտեն մեր երազած Հայրենիքը:

## ՍԱՐԳԻՍ ՍՈՂԱՆԱԼՅԱՆ

Նախորդ էջերում որոշ տեղեկութիւններ արձանագրեցինք Սարգիս Սողանալյանի մասին:

Քանի որ նրա հարաբերութիւնները ՊՀՄ-ի վարչութեան հետ զուտ միութենական և ազգային գործունեութիւն էր (ոչ-առևտրական), ուստի ՊՀՄ-ի վարչութեան նրա հետ առնչվող բոլոր դեպքերն ու իրադարձութիւնները ընդգրկվում են այս գրքում:

«Նոր Կեանք»ում[1] լոյս տեսավ Ս. Սողանալյանի մասին հոդվածս՝ «Մեծ մարդը և մեծ բարերարը»:

ՄԵԾ ՄԱՐԴԸ ԵՎ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐԸ

Հեռուստացույցով դիտում եմ երկու տեսաերիզներ՝ մեկը 2-րդ՝ KCBS հեռուստաալիքի բեմադրիչ և քաղաքական մեկնաբան Lowell Bergman-ի հարցազրույցն է Սարգիս Սողանալյանի հետ 01-20-91 թ. «Մարդը, որ զինեց Իրաքը» վերնագրով, իսկ մյուսը նույն բեմադրիչի քաղաքական մեկնաբանությունն է նրա արգելափակումից հետո 5-17-92 թ.:

Հարցազրույցը բավական հարուստ է իր բովանդակությամբ և ցույց է տալիս հայ մարդու դերը գերպետությունների քաղաքական կյանքում, որոշ դեպքերում նույնիսկ նրանց ճակատագրի որոշման հարցում, ինչպես Իրաքի ճակատագիրը Իրաք-Իրան պատերազմի ժամանակ:

Մենք՝ հայերս հպարտացանք դիտելով այդ հարցազրույցը, որը դիտեց նաև Ամերիկայի ողջ ժողովուրդը:

Հարցազրույցի հիմնական նյութը հանդիսանում է Իրաքին ռազմական տեխնիկա հայթայթելը Սարգիս Սողանալյանի կողմից՝ սկսած 1980 թ., ամերիկյան կառավարության թույլտվությամբ, երբ Իրաքը պատերազմում էր Իրանի հետ, և Ամերիկայի շահերը այդպես էին պահանջում: Նա հայթայթել է ոչ միայն ռազմական տեխնիկա, այլ նաև 280 միլիոն դոլարի զինվորական համազգեստ: Վերջին գործարքը 300 ուղղաթիռների վաճառքն էր Իրաքին, որի համար ամերիկյան կառավարությունը երաշխիքներ պահանջեց Իրաքից, որ նա դրանք կօգտագործի միայն քաղաքացիական նպատակներով: Այս գործարքների հետ կապ ունեին կառավարության մեջ բարձր պաշտոն-

1. Տե՛ս Թիվ 48, Նոյեմբեր 11, 1993, էջ 36:

ներ զբաղեցնող մի խումբ մարդիկ, որոնցից մեկը՝ գեներալ **Jack Bernet**-ը ամենաակտիվ օգնողներից էր այդ գործում, աշխատում էր Սպիտակ Տանը, երբ հայազգի Սարգիս Սողանալյանը ամբաստանվում էր Իրաքին ուղղաթիռներ վաճառելու գործում, որոնք հեշտությամբ կարող էին ռազմականի ձևափոխվել: Ահա այս մասին էր խոսում երկրորդ տեսաժապավենի խոսնակը:

Երբ ԱՄՆ-Իրաք հարաբերությունը սրվեց, միայն Սարգիս Սողանալյանը կանչվեց պատասխանատվության և դաշնակցային դատարանի որոշմամբ ենթարկվեց **6** տարվա ազատազրկման: Իսկ ինչո՞ւ պատասխանատվության չկանչվեցին մնացած գործող անձինք, որովհետև նրանց մեջքը ամուր էր (Ամերիկայում խտրություն չկա...):

Մեկնաբանի այն հարցին, թե «Նախկին բարեկամը այսօր թշնամի է, իսկ վաղը կարո՞ղ է նորից բարեկամ դառնալ», Սողանալյանը պատասխանեց. «Ո՞վ գիտե, մի՞գուցե»: Ոչ-ոք չգիտի, թե վաղվա օրը ի՛նչ կբերի, ում կբարեկամացնի և ում կթշնամացնի ...:

Այստեղ հարկ է նշել, որ **Lowell Bergman**-ը Սարգիս Սողանալյանի լավ բարեկամներից է, որի հետ ծանոթացանք **Palm Spring**-ում:

Մեր ժողովրդի անունից շնորհակալություն եմ հայտնում նրան, որ հայ գործարար մարդուն ներկայացրեց ամերիկյան հեռուստացույցով, մոտ մեկ ժամ հարցազրույց ունենալով նրա հետ:

Նշենք նաև, որ որոշ կազմակերպություններ և անհատներ նեցուկ չկանգնեցին Սարգիս Սողանալյանին, երբ անհրաժեշտ էր այդ նրան:

Եթե գնահատելու լինենք նրա ծառայությունները մեր ժողովրդին, բավական է նշել Լոս Անջելեսում «Կարո Սողանալյան» կենտրոնը, «Մարիձա Սողանալյան» սրահը և **1988** թ. Հայաստանին սեփական օդանավերով հասցրած հսկայական օգնությունը, որով կատարեց հայրենասիրական պարտքը Հայրենիքի հանդեպ: Ահա ՄԵԾ ՄԱՐԴԸ և ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐԸ:

Այսօր բոլորս էլ ուրախ ենք, որ արդարությունը հաղթանակեց, և ազգային բարերար Սարգիս Սողանալյանը **2** տարուց հետո ազատ է: Ցանկանանք նրան քաջառողջություն և հաջողություններ, որպեսզի շարունակի իր հայրենասիրական և ազգասիրական գործունեությունը ի բարօրություն Հայրենիքի և Սփյուռքի:

Եկեք պատվով դիմավորենք նրան Լոս Անջելես ժամանելիս և անհրաժեշտ հարգանքը մատուցենք որպես բոլորի կողմից հարգված ՀԱՅ ՄԱՐԴՈՒ:

**Հավատարիմ մնալով հոդվածի վերջին պարբերությանը՝ ՊՀՄ-ի վարչության համաձայնությամբ նախաձեռնեցի կազմակերպել մեծարանքի երեկո, որի ծախսերը հանձն առավ մեր միությունը: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ ես ձեռնարկեցի այդ գործը և ո՛չ՝ Սփյուռքի այն կազմակերպություններն ու անհատները, որոնց մեծ նյութական օգնություն է ցույց տվել բարերարը՝ դպրոցի, կենտրոնի, սրահի, գրքերի հրատարակության և այլ ասպարեզերում: Կանխազգացումս թելադրում էր, որ սփյուռքյան ոչ մի կուսակցություն կամ կազմակերպություն իր ուսերի վրա չի վերցնի այդ ծանր գործը և՛ կազմակերպչական, և՛ նյութական տեսակետից, անկախ նրանից, որ բարերարը օգնել է նրանցից շատերին: Ուզում էի, որ նրա հարգանքն ու պատիվը միշտ բարձր մնա մեր համայնքում, հայության մեջ, և, ինչու չէ, նաև հզոր**



**Ամերիկայում: Ահա, թե ինչու ե՛ս ձեռնարկեցի այդ գործը: ՊՀՄ-ի վարչականները բացի նյութականի հարցը լուծելուց, ուրիշ ոչ մի աշխատանք չտարան այս ուղղությամբ:**

**Այս հարցում իմ հիմնական աշխատանքային ընկերը եղավ Նորայր Մելքիսեթյանը, որի հետ այցելեցինք բարերարին Palm Spring-ի իր տանը, ծրագիրը կազմեցինք, կենսագրական տվյալները վերցրեցի կենսագրությունը գրելու համար: Մեծարանքի երեկոյի օրը որոշեցինք նոյեմբեր 30, 1993 թ. MGM սրահում, որից հետո վերադարձանք Լոս Անջելես: Մասնակիցների ցուցակները կազմեց Նորայրը, քանի որ նա ավելի լավ գիտեր Լոս Անջելեսի համայնքում բարերարի բարեկամներին, ազգականներին ու ծանոթներին, իսկ ես օգնում էի նրան աշխատանքից հետո ու շաբաթ և կիրակի օրերը:**

**Մի օր Նորայրը հայտնեց, որ մեծարանքի երեկոյի ծախսերին մասնակցելու ցանկություն ունեն նաև ինքը, դոկտ. Ժագոյ Օրֆալին, Նուբար Մխսի-Գևորգյանը, Կարո Արմենյանը (հետագայում ծախսերի համար կազմված ցուցակում ընդգրկված էր նաև Սիգար Գոգոյի անունը, որը նախօրոք չկար), իսկ երբ այս հարցի մասին խոսեցի ՀՄՄՄ-ի նիստում, ծախսերին մասնակցելու ցանկություն հայտնեցին նաև ՀՄՄՄ-ն, Հաճընի ՀՄ-ն և Գրիգոր Շենյանը: Մեծարանքի երեկոն մեծ հաջողություն ունեցավ:**

**Մեծարանքի երեկոյի ընթացքում ունեցա հեռուստատեսային հեպազրույց: Եթեր սփռվեց նույն երեկո «Armenia today» հեռուստատեսային ծրագրով.**

Այսօր հավաքված ենք Գլենդելի գեղեցիկ **MGM** սրահում մեծարելու համար ազգային բարերար Սարգիս Սողանալյանին: Նա երկու ամիս առաջ ազատված է արգելափակումից, արդարացվելով ԱՄՆ-ի կառավարության կողմից: Այս առթիվ նախագահ Բիլ Քլինթոնը նրան շնորհավորական հեռագիր է հղել, շնորհակալություն է հայտնել նաև ԱՄՆ-ին ցուցաբերած հատուկ ծառայությունների համար: Նրանց հանդիպման ընթացքում քննարկվել են Ամերիկային և Հայաստանին վերաբերող հարցեր:

**Մեծարանքի երեկոյում ներկայացրեցի բարերարի կենսագրականը[1], որը կարծում եմ կհետաքրքրի հայրենակիցներին:**

## ՍԱՐԳԻՍ ՍՈՂԱՆԱԼՅԱՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐԸ

Սարգիս Սողանալյանը աշխարհի զինամթերքի հայտնի վաճառականներից է: Նրա հետ կլոր սեղանի շուրջը հաճախ են քննարկվել տարբեր երկրներին զինամթերք մատակարարելու հարցեր: Իհարկե, այս հարցերում մեծ դեր են խաղացել զինամթերք ծախող գերպետությունները և տվյալ դեպքում ԱՄՆ, քանի որ Սարգիս Սողանալյանը իր ռազմամթերքի վաճա-

1. Տե՛ս «Նոր կեանք» թիվ 1, Դեկտեմբեր 16 1993, էջ 16:



*Սարգիս Սողանալյանը Palm Spring-ի իր տան մեջ:*

ռականի լայնածավալ գործունեությունը սկսել է Ամերիկայում: Եթե մեկը փորձի գրել նրա մանրամասն կենսագրականը, դա կլինի չափազանց հետաքրքիր մի գիրք, որը ի հայտ կբերի նրա գործունեության անտեսանելի ծալքերը:

Սարգիս Սողանալյանը ծնվել է **1932 թ.** փետրվարի 6-ին, Կիլիկիայում Սանջաքի Իսկենդերուն քաղաքում:

Հայրը՝ Սողանալյան Կարապետ, բնիկ հաճընցի, զբաղվել է վաճառականությամբ՝ հիմնականում ֆրանսիական բանակին մատակարարել է



անտառանյութ: **1923-24 թթ.**, երբ ջարդից ազատված ժողովուրդը դեռ շարունակում էր վերադառնալ Սուրիայից, Տեր Զորից և այլ վայրերից դեպի Բեյլան և նրա շրջակա գյուղերը, նա առաջին մարդն է եղել, որ Սովուգ Օլուգ ջուր է հասցրել խողովակներով և այլ բնագավառներում օգնել է հայրենակիցներին, սիրվել, հարգվել է նրանց կողմից իր բարերարության ու ազնվության համար:

Մայրը՝ տիկին Մարիամ Սողանալյանը՝ մեր Մարիամ նենեն, բնիկ Բեյլանցի՝ Նազարեթ Քյուփելյանի աղջիկն է: Նազարեթ Քյուփելյան, Սանջակի ֆրանսիական հովանավորության ժամանակ հողամասային տարածքների վկայագրերի գրասենյակի տնօրենն էր (թափու մյուդյուրյու), որը շատ մեծ օգնություն է ցույց տվել հայերին այս ասպարեզում: Հետևաբար, բարերարությունը Սողանալյան գերդաստանի ժառանգությունն է եղել:

Նա իր նախնական կրթությունը ստացել է Իսկենդերունի հայկական վարժարանում:

**1937 թ.** ապրիլ 24-ին մահանում է հայրը, թողնելով երեք որբ տղաներ և մեկ աղջիկ: **1939 թ.**, երբ Ֆրանսիան Սանջակը հանձնեց Թուրքիային և մի բուռ հայ ժողովուրդին էլ հետը տարավ Լիբանան, մեր վերջին փոքրիկ բնօրրանն էլ ընդմիշտ կորցրեցինք հանձին մեր «սիրելի բարեկամ» Ֆրանսիային: Հաջորդ տարին՝ **1940 թ.** Սողանալյան ընտանիքը նույնպես լքում է Իսկենդերունը և տեղափոխվում է Բէյրութ: Այս նույն թվին, մեծ եղբայրը՝ Զոհրապ, Կիլիկիայի թեմի կաթողիկոս Սարաջյանի միջոցով իրեն Անթիլիաս է տեղավորում ուսանելու համար: Մի քանի օր մնալուց հետո, նա փախչում է այնտեղից: Երբ Հարցրեցի, թե ինչո՞ւ փախար, պատասխանեց. «Ճաշը աղվոր չէր, ամեն օր չորբա կուտային: Աղեկ որ փախա, թե չէ ես ալ ազգին վրա բեռ պիտի ըլլայի»: Մայրը նրան տանում է Էշրեֆիեյի Հայ Կաթողիկե Սուրբ Գրիգոր քոլեջը, որը չորս տարի հետո ավարտում է ու տարիքը մեծացնելով **1945 թ.** ուզում է մտնել ֆրանսիական բանակ: Բայց իրեն ընդունում են որպես մեխանիկ և սկսում է բանակի կրահապատ ինքնաշարժերի ու հրասայլերի վերանորոգման գործով զբաղվել: Շնորհիվ իր բնատուր տաղանդին և աշխատասիրության, նա շահում է բանակի ղեկավարների համակրանքն ու վստահությունը: **1946 թ.**, ֆրանսիական բանակի հեռանալուց հետո Լիբանանից, նա շարունակում է նորոգել նրանից մնացած հրասայլեր ու ինքնաշարժեր և վաճառել սիրիական կառավարությանը: Սա իր առաջին քայլն էր գործարար աշխարհում, որից հետո սկսում է իր ապագա գործունեությունը զինամթերքի առուծախի գործընթացում:

Լիբանանի մեջ նա այնքան է սիրվում իր արաբ բարեկամներից և հատկապես հայերից, որ ով ինչ դժվարություն է ունենում, դիմում է նրան:

**1954 թ.** Քամիլ Շամունի նախագահ ընտրվելու ժամանակ նա ծանոթանում ու բարեկամանում է նրա հետ: Այդ բարեկամությունը երկար է տևում: Նույնիսկ Սողանալյանի Մայամի տեղափոխվելուց հետո, Շամուն մի քանի անգամ այցելում է իրեն:

**1958 թ.** ծանոթանում է Լիբանանի կառավարության հայ երեսփոխան Տիգրան Թոսպատի հետ ու միասին սկսում են իրենց բուռն գործունեությունը Լիբանանում: Տիգրան Թոսպատն ու Սարգիս Սողանալյանը միակ անձերն են եղել, որ **1958 թ.** Շամունի կողքին պայքարել են Աբտել Նասերի դեմ, հանուն ամերիկյան դեմոկրատիայի:

Նույն **1958 թ.**, մի պատահական առիթով Սարգիս Սողանալյանը հանդիպում է իր այսօրվա կողակցին: Նա իր մոտոցիկլետը կանգնեցնելով ճանա-

պարիի եպրին, մոտենում է երկու անծանոթ պարմանուհիների, օգնելու նրանց փչացած ինքնաշարժը կարգի բերելու և ծանոթանում է նրանց հետ: Նրանցից մեկը՝ օր. Շըրլին, հետագայում դառնում է իր կողակիցը, պարգևելով նրան երկու զավակ՝ Կարո և Մեյո: Սարգսի և Շըրլիի պսակադրությունը կատարվում է Անթիլիասի վանքում, 1958 թ. հունիսի 4-ին: Փեսացուն՝ մեր սիրելի Սարգիս եղբայրը, պսակադրությունից ուշանում է ուղիղ 45 րոպե, սպասեցնելով նաև իրեն պսակող՝ այժմ Պարսկաստանի թեմի առաջնորդ Արտակ Արք. Մանուկյանին:

1958 թ. Լիբանանի ներքին խռովություններից հետո, Սողանալյան ընտանիքը տեղափոխվում է Ամերիկա, Նյու Յորք նահանգի **Binghamton** քաղաքը: Այստեղ 1959 թ. իրենց ընտանիքի աջակցությամբ վերակազմավորվում է հայկական եկեղեցին և տիկ. Շըրլիի ջանքերով նրան կից բացվում է նաև հայկական կիրակնօրյա դպրոց: Այնուհետև այստեղ սկսվում է Սողանալյանի եռանդուն գործունեությունը: Այդ առիթով նա անընդհատ գտնվում է ճանապարհորդության մեջ, չնայած, որ դեռ ամերիկյան հպատակ չէր. 1964 թ.՝ Գերմանիա, 1966 թ.՝ վերադարձ Բեյրութ, 1967 թ.՝ նորից Ամերիկա, Ֆրանսիա, Բրազիլիա, Արգենտինա, Շվեյցարիա, Իրաք, Հորդանան և այլն, որոնց կառավարությունները նրան իրավունք էին վերապահել առանց արտոնագրի ու ստուգվելու մուտք ու ելք գործել իրենց երկրները:

1971 թ. վերադառնալով Լիբանան, հարում է ներկա քրիստոնեական շարժման, նախագահներ Շամունի, Ֆրանջիեյի և Ճեմայիլի պահանջներով զբաղվում է Լիբանանի բանակի գաղտնի զինվորական շարժման խնդիրներով՝ մարզելով նրան նոր զենքերի օգտագործման ստրատեգիայով և 1975 թ., երբ բանակը լուծվում է, քրիստոնյա միությունները պատրաստ էին իրենց հայրենիքը պաշտպանելու: Մարզումները շարունակվում են մինչև 1978 թ.:

1979 թ., երբ Ամիրալ Մասերա Արգենտինայում տապալում է Պերոնի կառավարությունը, նոր կառավարության զինվորական կարիքների և զենքերի նորոգման պատասխանատվությունը վստահվում է Սարգիս Սողանալյանին: Ֆոլկլենդի խնդրի ժամանակ իր ծրագրած նախագծով, Ֆրանսիայից բերված հատուկ հրթիռներով ընկղմվում է անգլիական հուչակավոր «Շեֆֆիլդ» ռազմանավը: 1981 թ. վերադառնում է Մայամի, որտեղ արդեն 1978 թ. ուներ երկու բեռնատար օդանավ:

Բայց իրեն դեռ մի առաքելություն էր սպասում առջևում, որ իր անունը ամբողջ աշխարհով պիտի տարածեր և գերպետությունների ամենօրյա քննարկման նյութը դարձներ: Դա Իրաքն էր: Իրաքի նախագահ Հասան Պաքըրի թելադրանքով, նրա այն ժամանակվա գաղտնի սպասարկության պետ Սադդամ Հյուսեյնը, 1981 թ. դեկտեմբերին, Սարգիս Սողանալյանին հրավիրում է Իրաք: 1982 թ. հունվարին նա արդեն այնտեղ էր և ստանձնում է բանակի բոլոր զենքերի ձևափոխման (մոդեռնիզացիայի) ղեկավարի պատասխանատվությունը, ամերիկյան կառավարության և անձամբ նախագահ Ռեյգանի հովանավորությամբ, որը շարունակվում է մինչև 1988 թ.: Այս թվականից հետո դեպքերի ընթացքն արդեն ձեզ ծանոթ է:

Այսօր բոլորս էլ ուրախ ենք, որ արդարությունը հաղթեց, և նա մեզ հետ է: Ցանկանանք նրան ընտանիքի հետ առողջություն, հաջողություն, որպեսզի շարունակի իր հայրենասիրական և ազգային գործունեությունը:

**Այս առթիվ գրեցի նաև մի հոդված, որը բերում եմ համառոտաբար:**



## ՍԱՐԳԻՍ ՍՈՂԱՆԱԼՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵԿՈ[1]

Սարգիս Սողանալյանին նվիրված մեծարանքի երեկոն իրականացավ նախաձեռնությամբ և կազմակերպությամբ ՊՀՄ-ի (ատենապետ՝ Վահան Բահարյան) ու Նորայր Մելքիսեթյանի գործակցությամբ: Հիմնական կազմակերպչական աշխատանքները կատարեցինք երկուսով: ՊՀՄ-ն որոշել էր հոգալ մեծարանքի երեկոյի բոլոր ծախսերը: Գիտակցելով մեծարվողի հայ համայնքին մատուցած ծառայությունները, նյութական ծախսերին մասնակցելու սիրահոժար ցանկություն հայտնեցին նաև ... (**Նախորդ էջերում նշված կազմակերպությունները և անհատները**):

Մեծարանքի երեկոյի նպատակն էր մեծարել նրան և արժանիորեն գնահատել հայ ժողովրդին մատուցած ծառայությունները: Այդ էր վկայում նաև նրա շնորհակալական խոսքի մեջ արտահայտված հետևյալ միտքը. «Եթէ ես շատ արու զաւակներ ունենայի, բոլորին ալ հայրենիք և Ղարաբաղ կը տանէի, որպէսզի տեսնէին այդ ժողովրդի հերոսական պայքարը և իրենց կարելին ընէին օգնելու համար անոնց: Բայց ես մէկ զաւակ ունիմ, կինք տարի և ան աւելի հայացաւ ու հետս միասին այժմ կմտածէ, ծրագիրներ կը կազմէ օգնելու համար մեր Հայրենիքին»:

Մեծարանքի երեկոն տեղի ունեցավ 1993 թ. նոյեմբերի 30-ին, **MGM** սրահում, **119 S. Kenwood St., Glendale**, մասնակցությամբ մոտ 200 հոգու՝ հայ համայնքի բոլոր խավերի ներկայացուցիչներից:

Նրա ունեցած հարգանքի մասին է վկայում նաև այն, որ հայազգի ֆիլմ-բեմադրիչ Գրիգոր Օհանյան (**Mike Conners**), հեռավոր Սիեթլից (Վաշինգտոնի նահանգ) ներկա եղավ երեկոյին, ժամանակավորապես դադարեցնելով իր ֆիլմի նկարահանումները (չնայած, որ բոլոր դերասաններին վճարում էր): Ներկա էին նաև. Գլենդելի քաղաքապետ Լերի Զարյանը, որն իր ելույթում դրվատեց մեծարվողի նվիրվածությունը իր ազգին, վաղեմի ընկեր, Լիբանանի կառավարության մեջ նախկին հայ երեսփոխան Տիգրան Թոսպատը, բարերարներ տեր և տիկին Լևոն և Զարուհի Ղուկասյանները, հայրենի գրող՝ խորհրդարանի երեսփոխան և Զանգվածային լրատվության մշտական հանձնախմբի նախագահ Մերուժան Տեր-Գուլանյանը, որն անդրադարձավ 1988 թ. երկրաշարժի ժամանակ Սողանալյանի հայրենիքին կատարած օգնության, այլ բարերարներ, լրատվական գործակալության, ավանդական ազգային երեք կուսակցությունների, միությունների և համայնքի ներկայացուցիչներ:

Երեկոյի հանդիսավարն էր Գրիգոր Շենյանը, որը գնահատանքի խոսք ուղղեց մեծարվողին նրա կատարած բարերարությունների համար:

Նորայր Մելքիսեթյանը, ներկայացրեց մեծարվողին որպես Արարատի գագաթի անաղարտ ձյունի պես մաքուր, որն ընդգրկում է իր մեջ ծիածանի բոլոր գույները:

Շնորհավորական հեռագիր ստացվեց Վաշինգտոնի հայ եկեղեցիների ներկայացուցիչ Բաբկեն Եպս. Վարժապետյանից: ...

ՊՀՄ-ի կողմից մեծարվողին հուշատախտակ հանձնեցի ի գնահատանք նրա անգնահատելի ծառայությունների, որտեղ գրված էր.

«Այս հուշատախտակը նվիրվում է ազգային բարերար, մեծ

1. Տե՛ս Վահան Բահարյան, Շարունակվող Մեղեդի, Սարգիս Սողանալյան: Ազգային բարերարը, Երևան, 2001, «Զանգակ-97», էջ 46, նաև՝ «Նոր կեանք» թիվ 52, Դեկտեմբեր 9, 1993, էջ 4:

հայրենասեր, սիրելի Սարգիս Սողանալյանին իր անգնահատելի ծառայությունների համար ինչպես հայապահպանման գործին, այնպես էլ մեր հայրենիքին՝ հատկապես 1988 թ. երկրաշարժի ժամանակ: Մաղթում ենք իրեն քաջառողջություն և հաջողություններ իր ալգօգուտ գործունեության մեջ ի բարօրություն մեր ժողովրդի և մեր հայրենիքի պետականության՝ անկախ Հայաստանի Հանրապետության.

Վեհ Արարատի պես կանգուն,
Սուրբ հուշարձանի պես խոսուն,
Մեր լեզվի պես հաստատուն,
Ունենանք սեր, միություն:

Պէյլանի հայրենակցական միության վարչություն»

Այո, սիրելի հայրենակիցներ, եթե ունենանք սեր և միություն, կդյուրանա մեր նպատակների և երազների իրագործումը:

Շնորհակալական խոսքով հանդես եկավ մեծ բարերարը: Հուզված էր: Նա շեշտեց, որ վերջին երկու տարիներին հարկադրված, ոչնչով չկարողացավ օգնել իր ժողովրդին ու հատկապես Հայրենիքին և Արցախին, որտեղ հայ երիտասարդները իրենց արյունն են թափում մեր ազգի գոյատևման համար: Դա իր ամենամեծ վիշտն է և հիմա քանի որ ազատ է, պիտի աշխատի ավելին անել, որպեսզի իր պարտքը կատարած լինի Հայրենիքի հանդեպ:

Հայրենի տաղանդավոր դերասանուհի Ալիս Կապլանջյանը ասմունքով Վահագն Դավթյանից և Վահան Տերյանից, գերեց ներկաներին:

Երեկոն խանդավառեց երգիչ՝ Լևոն Գաթըջյանը սիրահոժար, ի պատիվ մեծարյալին: Նա իր «Հայաստան» նվագախմբի հետ ժողովրդին ներկայացրեց մի շարք հայրենասիրական երգեր: Հովիկ Գրիգորյան իր երգերով ավելի աշխուժացրեց երեկոն ի պատիվ մեծարվողի:

Կազմակերպիչների անունից խորին շնորհակալություն արվեստագետներին, որոնք իրենց արվեստով մեծարեցին հարգանքի արժանի հայ ազգի բարերարին:

Ամենամեծ շնորհակալությունը ներկաներին, որոնք իրենց մասնակցությամբ գնահատեցին բարերարին:

Երեկոն ցույց տվեց, որ հզոր Հայրենիք ու Սփյուռք ստեղծելը կախված է մեր միասնական գործունեությունից. «Գեղը կանգնի, գերան կկոտրի»:

**Երբեք չեմ մոռանա մեծարանքի այդ երեկոն, որից հետո մեր հարաբերությունները ավելի սերտացան:**

**Երեկոյից հետո նրանց ընտանյոք ուղեկցեցի «Red Lion» հյուրանոց և երբ հրաժեշտ էինք տալիս իրար, նա համբուրեց ճակատս և ասաց.** «Վահան, անչափ շնորհակալ եմ քեզմէ: Մինչև հիմա ինծի ոչ մէկը այսպէս պատիւ չէր տուած, շատ յուզուած եմ: Շատ-շատ շնորհակալ եմ և երբեք չեմ մոռնար ատիկա»: **Տիկինը՝ Շըրլին և տղան՝ Կարոն նույնպես շնորհակալություն հայտնեցին համբուրելով ինձ:**

**Հուզված էի: Պատասխանեցի, որ իմ ազգային պարտականությունը կատարեցի, որ չարժե դրա համար շնորհակալություն**





Palm Spring-ում Սողանալյանի կենսագրությունը գրելու ժամանակ:

**հայտնել, և մենք բաժանվեցինք:**

**Իրականում նախաձեռնելով մեծարանքի երեկոյի կազմակերպումը, նպատակ ունեի մեր ժողովրդի մեջ պահպանել նրա բարձր հեղինակությունը, որը միգուցե որոշ չափով նսեմացել էր նրա արգելափակման ժամանակընթացքում, իր բացակայության ժամանակ, առիթ տալով նաև տարբեր ասեկոսեների:**

**1994 թ. Նոր Տարվա առթիվ ուղարկած շնորհավորական բացիկում Մայր Մարիձա Սողանալյանը գրում է.**

Շատ սիրելի և հարգելի միութեան անդամներ իմ խորին շնորհակալութիւններս ձեր բոլորին, որ այս աշխատանքը յանձն առիք իմ սիրելի զաւակը հարգելու համար: Հարգանքներս ձեզի և բոլոր կուսակցութիւններուն ու թղթակիցներուն:

Սիրով՝ Մարիձա Սողանալեան:

**Իսկ Սողանալյանի ընտանիքի անձամբ ինձ ուղարկած շնորհավորական բացիկում գրված էր.**

***Our most humble gratitude to you for all you have done.***

***Saekus, Shirley + Garo Soghanalian.***

**Հայերեն՝**

Մեր համեստագույն երախտագիտությունը քեզ ամեն ինչի համար, որ արեցիր:

**Խոսք, որն արժանի է ուշադրության իր խորը իմաստով մեծարանքի երեկոյի կազմակերպման կապակցությամբ: Շոյված եմ միայն նրա համար, որ աշխատանքս գնահատվեց:**

**Այնուհետև վարչությունը ձեռնամուխ եղավ ՃՊ-ի կազմա-**



*Սողանալյաններին հուշատախտակ հանձնելիս:*

կերպչական աշխատանքներին, որը կայացավ դեկտեմբեր 31-ին և նվիրված էր «Ձմեռ-94» ծրագրին՝ օգնելու Հայաստանին:

Ձնայած ճՊ-ն ունեցավ հաջողություն, բայց վարչականները բավական դժվարություններ քաշեցին, որովհետև դրամ խնայելու նպատակով, ինչպես, Հայաստանի հայրենակիցներին օգնելու համար, մի սրահ վարձեցինք 250 դոլարով, սակայն սեղան ու աթոռ չկար, այդ բոլորը բերինք Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցու սրահից: Մեքենաները կայանելու (parking) հետ էլ որոշ թյուրիմացություններ եղան, որոնք հարթվեցին հետագայում:

ճՊ-ն հովանավորում էին Սարգիս և Շըրլի Սողանալյանները և խոստացել էին ներկա լինել, բայց չեկան:

Հաջորդ օրը առավոտ մեկը զանգահարեց և խռպոտ ձայնով ներողություն խնդրեց, որ չի կարողացել հիվանդության պատճառով մասնակցել ճՊ-ին: Ձճանաչեցի, առողջություն ցանկացա՝ ասելով, որ եթե հիվանդ եք, պարզ է, որ չէիք կարող ներկա լինել:

Լսափողը դնելուց անմիջապես հետո զգացի, որ զանգահարողը Սարգիս Սողանալյանն էր և զանգահարեցի նրան հանգստվելու համար: Պարզվեց, որ ինքն էր և կոկորդի վիճակը այնքան վատ էր, որ չէր կարողանում խոսել: Առողջություն ցանկացա:

Ելույթս ճՊ-ում ներկայացվում է որոշ կրճատումներով:

... Մեր հյուրերն են տեր և տիկին << արվեստի վաստակավոր գործիչ Գևորգ Աբաջյանը, ժողովրդական դերասանուհի Վարդուհի Վարդերեսյանը և համայնքում սիրված դերասան Գրիգոր Օգարյանը իր կնոջ հետ: ...





*Սողանալյանի կենսագրականը կարդալիս:*

ՊՀՄ-ի յուրաքանչյուր ճՊ-ի ժամանակ վարչությունը հաշվետվություն է ներկայացնում անցած տարվա իր կատարած գործունեության մասին, և սրանք ենք այսօր ևս ներկայացնելու այդ ձեզ: ...

Այս տարի միությունը Հայաստանի կարիքավոր ընտանիքների 600 հոգուն բաժանել է 3300 դոլար, այդ թվում 32 ազատամարտիկների Օրթոպեդիկ հիվանդանոցում: Այս մասին արձագանքեց «Նոր Կեանք»ը[1]: Ունենք օգնություն ստացողների ցուցակը, շնորհակալական նամակներ և տեսաերիզ: Վարչությունը որոշեց չցուցադրել տեսաերիզը՝ նկատի ունենալով, որ ազատամարտիկները արյուն են թափում այնտեղ, իսկ մենք, 5-10 դոլար տալով նրանց, ասում ենք՝ շնորհակալություն հայտնեք, որ ցուցադրենք

1. Տե՛ս թիվ 31, Հուլիս 15, 1993, էջ 18, «Պեյլանի Հայրենակցական միության բարեգործական արարքը»:

մեր տված օգնությունը: Մենք պետք է խոնարհվենք նրանց առջև, որ իրենց արյան գնով պաշտպանում են Հայրենիքը: Թելեթոնի միջոցով ամեն տարի միությունը Արցախին նվիրում է **500-1000** դոլար, այս տարի Հայաստանի կարիքավոր ընտանիքներին օգնելու պատճառով նվիրեց **300** դոլար:

Սույն թվականին վարչությունը կազմակերպեց և հովանավորեց Վահան Տերյանի «Միթե վերջին պոետն եմ ես» պոետիկ ներկայացումը, որը մեղ հաջողություն ունեցավ:

Վարչությունը կազմակերպեց նաև ազգային մեծ բարերար Սարգիս Սողանալյանին նվիրված մեծարանքի երեկոն, որը բացառիկ էր իր տեսակի մեջ այն առումով, որ մասնակցում էին համայնքի բոլոր խավերի ներկայացուցիչներն անխտիր:

Մեր միությունն արձագանքում է այն բոլոր իրադարձություններին, որոնք կապված են հայ ժողովրդի ճակատագրի հետ Սփյուռքում և, հատկապես, Հայրենիքում: Նա օգնում է «Հայաստան» հիմնադրամին, այս տարի մասնակցեց նաև թելեթոնի կազմակերպչական աշխատանքներին: Ահա այսօր էլ նա արձանգաքում է «Ձմեռ-94» ծրագրին այս Ամանորի ճՊ-ով, որի եկամուտը պիտի հատկացվի նրան:

Այսօր 5 տարիներ շրջափակման մեջ գտնվող մեր ժողովրդի լինել-չլինելու հարցն է դրված: Միայն մեր միասնությունը կարող է ամրացնել պետության հիմքերը: Սփյուռքը միահամուր ուժերով պետք է օգնի հայրենի ժողովրդին ձմեռն ավելի մեղմ անցկացնելու համար: Ահա այս նպատակին է նվիրված նաև այսօրվա ձեռնարկը: Եթե ուզում ենք ունենալ՝ հզոր Հայրենիք և գոյատևել որպես ազգ, ապա պետք է օգնենք նրանց՝ մեր հացը կիսելով նրանց հետ, ուստի կոչ եմ անում բոլորիդ, որ չխնայեք ձեր սրտաբուխ նվերները այս նպատակի համար Նոր Տարվա առթիվ:

Այս տարվա Արցախին նվիրված նոյեմբեր **24**-ի թելեթոնին ժողովուրդը մասնակցեց մեկ մարդու նման, յուրաքանչյուրը նվիրելով, հիմնականում **20-40** դոլար, հավաքվեց ավելի քան **550000** դոլար: Սա նշանակում է, որ միասնական ոգով նա սատար կանգնեց Արցախին, ապահովելու համար նրա վաղվա հաղթանակը և ստիպելու թշնամուն ընդունելու խաղաղությունը, որն այնքան անհրաժեշտ է մեր ժողովրդին:

Փա՜ռք մեր կռված ազատամարտիկներին:

Թող կեցցե՛ Սփյուռք-Հայրենիք անքակտելի կապը, որը մեր ժողովրդի լուսավոր ապագա կերտելու երաշխիքն է:

**1994** թ. թող խաղաղություն բերի մեր Հայրենիքին և Արցախին:

Այս ճՊ-ով փակվեց վարչության 1993 թ. գործունեությունը:

01-12-94 թ. նիստում դեկտեմբեր 31,1993 թ. ճՊ-ի հաշվետվությունն էր, միության եկամուտը 2839 դոլար էր:

Ըստ բանկի 12-20-93 թ. տվյալների, միության ունեցած գումարը 8412 դոլար և 52 սենթ է:



## ՀՄՄՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՄՄՄ-ի կազմակերպած «Հայաստան-Արցախ մեկ դոլար» ֆոնդի արշավը շարունակվում էր աշխուժորեն: Հիմնականում արձագանքում էին հայաստանահայերը, սփյուռքահայերի շատ քիչ հայրենակիցներ էին մասնակցում: Համենայնդեպս այն հաջողությամբ ընթանում էր:

1993 թ. հունվարի 17-ին Նուբար Մխսի-Գևորգյանի հետ ելույթ ունեցանք «Հայկական ժամ» հեռուստատեսությամբ: Համայնքին բացատրեցինք ֆոնդի նպատակն ու կարևորությունը:

Հայաստանի ու Արցախի կարիքները շատ էին:

ՀՄՄՄ-ի կազմակերպած երգի ու պարի երեկոն նվիրված էր Արցախին, որը տեղի ունեցավ մարտի 28-ին Գլենդելի Հայ Մքուլի սրահում, որը մեծ հաջողություն ունեցավ:

Հայտագրի երկրորդ մասը նվիրված էր երգիչ-դերասան Մանվել Մենենկիչյանի 35-ամյա գործունեությանը: Մանվելը սիրված արվեստագետներից է և այդ օրը ներկաներին, կարծեք, հաշվետվություն տվեց իր գործունեության վերաբերյալ: Հիշարժան երեկո էր:

Այս առթիվ լույս տեսած «Հայ երգի ու պարի երեկույթ» հոդվածը[1] վերջանում էր այսպես.

Մանվուէլ շնորհակալութիւն յայտնելէ ետք կազմակերպիչ մարմնին ու ներկաներուն, մեկնաբանեց «Արարատը մեր լեռն է» երգը, իբրեւ պսակումը ստեղծուած խանդավառութեան:

Վարձքը կատար Միացեալ Մարմնին, շնորհակալութիւն յայտագրին մասնակցող արուեստագէտներուն, նորանոր յաջողութիւններ Մանուէլին, որոնց բոլորն ալ իրենց սիրայօժար մասնակցութիւնը բերին յօգուտ Ղարաբաղին:

Այս առթիվ մեջբերենք Մանվելին ուղղված մի նամակ.

Յարգարժան Ժողովրդական Արուեստագէտ Մանուէլ Մենենկիչեան
Լոս Անճելըս, Գալիֆորնիա

Սիրելի Մանուէլ,

Անհուն ուրախութեամբ տեղեկացանք թէ Կիրակի Մարտ 28-ին, 1993, Լոս Անճելըսի մէջ հաստատուած ՀՄՄՄ-ն պիտի նշէ հայ երգն ու պարը մեր ազգին ... ներկայացնելու ձեր ասպարեզի 35-րդ արդար յոբելեանը:

Իսկապէս այդ թուականներուն էր, երբ լիբանանահայութիւնը մասնաւորաբար թրքախօսութենէ կը տառապէր, դուք եկաք ձեր հայեցի երաժշտութեամբ ու բառերով վերափոխելու այդ բոլորը եւ ամբողջ մղելու, որ հայերէն երգէ եւ հայաբար ուրախանայ: Ձեզի հետեւեցան շատեր թէ Լիբանանի և թէ Միջին Արեւելքի հայաշատ միւս գաղութներուն մէջ:

Ձեր ֆիլմարուեստը, ինչպէս նաև երաժշտութեան միջոցով հայապահպանման ճիգերը Պուէնոս Այրէսէն մինչև Երեւան իրենց դրական արդիւնք-

1. Տե՛ս «Նոր կեանք» թիվ 18, Ապրիլ 15, 1993, էջ 10:



*Հայ երգի-պարի երեկոյի ավարտին։ Մանվելը շրջապատված ՀՄՄՄ-ի անդամներով։*

ները տուած են արդէն։ «Հայ ապրինք» եւ «Մնանք Հայ» նախադասութիւնները երիտասարդութեան շրթունքներուն վրայ է ամենուրեք։

Այս ուրախալի առիթով ջերմագին շնորհաւորութիւններ, նորանոր յաջողութիւններ եւ ... վարձքդ կատար։

3-26-93 ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Պոսթոն ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐՈՒ ՄԱՐՄԻՆ

**Մի փոքրիկ հատված մի ուրիշ նամակից.**

... Ու մենք իրար փնտռեցինք ու գտանք՝ կոչելով «Արարատը մեր լեռն է»։ Արդարեւ, իրաւ հայուն համար չկայ աւելի կապդուրիչ ողջոյն քան ամէնօրեայ հաստատումը թէ այո, Արարատը մեր լեռն է։

Այսօր, քու յոբելեանիդ առիթով ի՞նչ կրնամ ըսել, որ ըլլայ աւելի իմաստալից ու բազմաբովանդակ ու միեւնոյն ատէն ցոլացնէ քու վաստակդ՝ քան դարձեալ մեր ողջոյնի պարզ ու խորունկ ուխտը, - Այո, սիրելի Մանուէլ, Արարատի փառքը քուկդ է այսօր, եւ այո, դարձեալ ու միշտ ԱՐԱՐԱՏԸ ՄԵՐ ԼԵՌՆ Է։

3-26-93 Տիթրոյթ Սիրով ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

**Հերթական նիստում ՀՄՄՄ-ն քննարկեց Գրիգոր Շենյանի առաջարկը՝ ազգային բարերար Վահան Շամլյանին ՀՄՄՄ-ի մնայուն նախագահ ընտրելու վերաբերյալ։ Առաջարկը ընդունվեց, ապրիլ 20, 1993 թվակիր նամակով նա հրավիրվեց և ներկա եղավ մայիս 4, 1993 թ. ՀՄՄՄ-ի նիստին։**

**Նկատի ունենալով այդ երկու դեպքերի՝ նամակի և նրա ՀՄՄՄ-ի նիստին ներկա լինելու կարևորությունը, այստեղ ամբողջությամբ մեջբերվում են նամակը և այդ նիստի մասին եղած**



հոդվածը «Նոր Կեանք»ի[1] առաջին էջում.

Կլէնտէյլ, 20 Ապրիլ, 1993

Մեծայարգ Ազգային Բարերար՝
Տիար Վահան Շամլեան
Ֆրէզնօ,

Ձեզի յայտնի է, որ Գալիֆորնիոյ ՀՄՄՄ-ը 1991-ի Յուլիսի 3-էն ի վեր լծուած է ազգօգուտ աշխատանքի, նպատակ ունենալով օգտակար հանդիսանալ հայ ուսանողներու, հայ համայնքի մշակութային եւ ընկերային կարիքներուն, Մայր Հայրենիքին եւ մանաւանդ այս օրերու հիմնահարց հանդիսացող՝ հերոսական Արցախին։

Միութեանս գերագոյն նպատակներէն մէկն է նաեւ սատարել միասնականութեան ստեղծման մեր ժողովուրդի բոլոր հատուածներուն միջեւ, որպէս ձեռք ձեռքի, սիրտ սրտի աշխատինք եւ ջանանք մեղմացնել մեր ազգին ու հայրենիքին առջեւ ցցուող դժուարութիւններն ու խոչնդոտները։

Մենք կը հաւատանք, որ այս նպատակները կը համընկնին Ձեր ապրումներուն հետ, որովհետեւ տարիներէ ի վեր դուք եւս կը հետապնդէք միեւնոյն իդէալները։

Այդ բոլորին փաստը դուք տուած էք բազմաթիւ անգամներ, բազմաթիւ ձեւերով, ըլլայ նիւթապէս, ըլլայ բարոյապէս. ըլլայ առաջնորդող գրութիւններով կամ բանաւոր արտայայտութիւններով։

Մեր իրականութեան մէջ յստակ իրողութիւն է, որ Ձեզի համար միասնականութիւնն ու ազգին ցաւերը ամոքելը ամէնօրեայ ապրում ու սեւեռում դարձած են եւ յարատեւօրէն յետապնդուող երազ։

Յարգելի Պրն. Շամլեան,

Մեր եւ Ձեր սերը, մտահոգութիւններն ու ապրումները դէպի ազգն ու հայրենիքը, դէպի միասնականութիւնը, ՀՄՄ Մարմինիս համոզումով, բացարձակապէս նոյնն են։ Որով, քաջալերուած այս իրականութենէն, որ մեր եւ Ձեր հանրօգուտ աշխատանքներու եւ նպատակներու նոյնութիւնն է, ներկայ գրութեամբ կ'առաջարկենք Ձեզի, որ բարեհաճիք ընդունիլ եւ ստանձնել ՀՄՄ Մարմինի Մնայուն նախագահութիւնը։

Հայրենակցական Միութիւններու միացեալ վարչութիւնը միաձայնութեամբ ընդունած է այս որոշումը եւ պատիւ կը սեպէ Ձեզի պէս անկախ, անկողմնակալ եւ առողջ մտածողութեամբ անձնաւորութիւն մը իր ղեկավարութեան գլուխը ունենալ։

Համոզումն ունինք, որ դուք Ձեր ջերմ սրտով, անշահախնդիր հայրենասիրութեամբ, կեանքի լայն փորձառութիւններովն ու ներդրումներովը, առաջարկուած այս պաշտօնին մէջ պիտի բազմապատկէք մեր բոլորին աշխատանքն ու նպատակներուն արդիւնաւէտութիւնը, բանալով նոր հորիզոններ։

Յիշեալ ստորագելիներուն հետ Ձեր նիւթական եւ բարոյական հզօր կարելիութիւնները, եւ մեր՝ հայրենակցական միութիւններու գիտակից շարքերը Ձեզի հետ ներդաշնակ ու ազգօգուտ գործունէութեամբ, վստահ ենք որ նոր աշխուժութիւն եւ նախանձելի գործունէութեանց իրականութիւն մը պիտի ստեղծէ գաղութիս մէջ, յօգուտ համայնքին եւ հայրենիքին եւ, ինչու չէ, նաեւ այլ գաղութներու մէջ։

---

1. Տե՛ս թիվ 23, Մայիս 20, 1993։

Այս հեռանկարով եւ ալգօգուտ գործունէութիւններու համոզումով, ՀՄՄ Մարմինս կը յուսայ որ պիտի ընդառաջէք իր այս խնդրանքին:

Կանխայայտ շնորհակալութեամբ՝

Հայրենակցական Միութիւններու Միացեալ Մարմին

Ատենադպիր՝ — Ատենապետ՝

ԿԱՐՊԻՍ ՍՎԱՃԵԱՆ — ԳՐԻԳՈՐ ՇԷՆԵԱՆ

## ՎԱՀԱՆ ՇԱՄԼԵԱՆ
## ՀՄՄՄ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՈՒԵՑԱՒ

Երեքշաբթի, 4 Մայիսի երեկոն, ՀՄՄՄ-ին համար պատմական օր մը հանդիսացաւ:

Արդարեւ, Հայաստանի եւ Սփիւռքի ազգային կեանքով հետաքրքիր հայերուն ծանօթ անուն մըն է Ազգային Բարերար Վահան Շամլեան ամոլը:

Բացի Վահան եւ Անոյշ Շամլեանի անունով Կլէնտէյլի ազգային վարժարանէն, Շամլեանները բարերարութեանց երկար շարք մը ունին կանաչան կազմակերպութեանց նկատմամբ:

Ընդառաջելով ՀՄՄՄ-ի նամակ-առաջարկին, Վահան Շամլեան 4 Մայիսի երեկոյեան ներկայ եղաւ ՀՄՄՄ-ի ժողովին, որուն ընթացքին ժողովականները միաձայնութեամբ մնայուն նախագահ ընտրեցին ազգային սիրուած ու մեծապէս յարգուած բարերարը:

Նորընտիր նախագահը իր շնորհակալական խօսքին մէջ ընդգծեց, թէ ինք նիւթապէս եւ բարոյապէս զօրավիգ պիտի կանգնի ՀՄՄՄ-ի հայապահպանման եւ Հայաստանին օգնելու ծրագիրներուն, գործնական քայլեր պիտի առնէ միասնականութեան եւ համագործակցութեան բնագաւառներէն ներս, պիտի աշխատի իրագործել՝ Համազգային Մարմին ունենալու հայութեան տենչերն ու իղձերը:

Աւելին, Շամլեան ըսաւ թէ հետագային ՀՄՄՄ-ը պիտի ունենայ իր կեդրոնը՝ ձեռնարկներու եւ ԾՊ-ներու շքեղ սրահով, ժողովասենեակներով, ջանալով երիտասարդութեան հրապուրիչ դարձնելու այդ կեդրոնը: Տակաւին. ազգային եւ գեղարուեստական բարձրորակ ձեռնարկներ պիտի իրագործուին:

Հուսկ՝ նորընտիր նախագահը ըսաւ, թէ կրթաթոշակ պիտի տրուի այն երիտասարդներուն, որոնք կ'ուզեն մասնագիտանալ քաղաքական, դիւանագիտական եւ լրագրական մարզերէն ներս:

Որպէս վերջաբան, Շամլեան եզրակացուց, թէ շաղկապում եւ սերտ կապեր պիտի ըլլան Հայաստանի թէ Սփիւռքի գաղութներու Հայրենակցական Միութեանց հետ, ի փառս ամբողջական հայութեան՝ ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի:

Վերջնագոյն խօսք՝

Անշուշտ, այս բոլորը կարելի է իրագործել ձեր բոլորին տքնաջան աշխատանքով: Զօրաւոր Սփիւռք մը պիտի օժանդակէ զօրաւոր հայրենիք մը ունենալու:

Յանուն ՀՄՄՄ-ի՝

ԿԱՐՊԻՍ ՍՎԱՃԵԱՆ — ԳՐԻԳՈՐ ՇԷՆԵԱՆ

(Ատենադպիր) — (Ատենապետ)

Նամակը և հոդվածը շատ լուրջ մտքեր են արտահայտում: Լուրջ պատասխանատվություն է ստանձնել ՀՄՄՄ-ի նորընտիր նախագահ՝ Վահան Շամլյանը: Մինչ այդ, նրան ճանաչում էի





5-04-93: «Նոր կյանքի» խմբագրատան մեջ Վահան Շամլյանին ցկյանս նախագահ ընտրելու ժամանակ: Ձախից աջ. առաջին շարք՝ Գևորգ Աստուրյան, Նուբար Միսքի-Գևորգյան, Վահան Բահարյան, Գրիգոր Շենյան, Գալուստ Քրիստինյան, Վահան Շամլյան, Երվանդ Պապայան: Երկրորդ շարք՝ Արսեն Բակկալյան, Գևորգ Ղաչարյան, Հովհաննես Թաշչյան, Մհեր Պապյան և Կարպիս Սվաճյան:

«Նոր կեանք»ում տպված նրա մի քանի հոդվածներով: Որքան հիշում եմ հիմա, դաշնակցական կուսակցության հետ նրա հարաբերությունների մասին էին, որին համակրել և օգնել էր: Հիմա խզվել էր այդ կապը: Հետևաբար, անհրաժեշտ էր գտնել մի նոր կազմակերպություն, հեղինակությունը պահելու համար համայնքում: Առիթից օգտվելով՝ Գրիգոր Շենյանը ՀՄՄՄ-ով լրացրեց այդ բացը: Այն ժամանակ բոլորովին տեղեկություն չունեի այս ելևէջների մասին: Իմ կարծիքով, Շենյանը, որպես ՀՄՄՄ-ի ատենապետ, չըջահայաց չգտնվեց այս հարցում՝ լավ ճանաչելով Լոս Անջելեսի սփյուռքյան ՀՄ-ների վարչակազմերին: Հետևանքը եղավ այն, որ Շամլյանի ՀՄՄՄ-ի նախագահ ընտրվելուց հետո որոշ ՀՄ-ներ հեռացան նրանից առանց չչուկի: Հեռացման պատճառները, հետագայում պարզվեց ինձ համար: Սկզբնական շրջանում չէի իմանում ՀՄ-ների վարչակազմերի ներքին կառուցվածքը, որ նրանց բոլորի մեջ կան տարբեր կուսակցությունների պատկանողներ, համակիրներ: Հանդիպումից հետո ՀՄՄՄ-ի նիստերին սկսեցին չմասնակցել Համավասպուրականի, Տարոն-Տու-

րուբերանի, Տիգրանակերտի և Մուսա լեռան ՀՄ-ները:

Լոս Անջելեսում ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին դիմավորելու ժամանակ հանդիպեցի նշված միությունններից մեկի ատենապետին, որի անունը այսօր չեմ հիշում, առիթից օգտվելով հարցրեցի՝ ՀՄՄՄ-ից իրենց միության հեռանալու պատճառների մասին: Նա պատասխանեց, որ Վահան Շամլյանի հետ հանդիպման ժամանակ, նրա ելույթը դուր չի եկել իրենց ...: Հետևաբար, մինչ Շամլյանի հետ հանդիպումը, Շենյանը այս հարցը պետք է լուծած լիներ նրա հետ, որպեսզի անցգույշ արտահայտություններ չլինեին ՀՄՄՄ նիստում: ՀՄՄՄ-ի վարչության բոլոր նիստերում, տարիներով չոչափվեց Վահան Շամլյանի խոստացած կենտրոնն ունենալու երազանքը, որն այդպես էլ չիրականացավ: Հարցը այն էր, որ մեր առաջարկած շենքերը նա չէր ուզում գնել, որոնցից մեկն էր՝ Colorado և Glendale փողոցների հատման կետում գտնվող ներկի խանութը, որը հոյակապ կենտրոն կարող էր լինել՝ իր երկու սրահներով և բազմաթիվ սենյակներով: Այն հետագայում դարձավ Jons Market: Նա ուզում էր հողամաս գնել, առևտրական կենտրոն կառուցել, որի տարածքում էլ՝ ՀՄՄՄ-ին խոստացված կենտրոնը: Գրիգոր Շենյանը, ունենալով «Նոր Կեանք»-ի խմբագրատան շենքը որպես սեփականություն, Նոր Սերունդ մշակութային միության գրավեցրած երկրորդ հարկը վերանորոգել է, և ըստ ինձ հասած տեղեկությունների՝ վերածել ՀՄՄՄ-ի կենտրոնի[1] 100 հոգիանոց սրահով, որի բացումը կատարվեց հինգշաբթի, դեկտեմբեր 23, 1999 թ.: Նա դրա համար Վահան Շամլյանից և Վաչե Մանուկյանից ամեն ամիս 1200-ական դոլարի չուրջ վարձ է ստանում...: Սրանով գուցե կենտրոն գնելու հա՞րցն էլ լուծվեց...: Համենայնդեպս, այսօր, տրված խոստումից 11 տարի հետո, երբ այս տողերը գրվում են, չհաշվենք նշված «կենտրոն»-ը, ապա հողվածում թվարկված համարյա ոչ մի խոստում չի կատարվել ...:

Մնայն նշենք, որ ՀՄՄՄ-ն չպետք է օգտագործել այլ նպատակներով՝ չահագործելով նրա անունը և շեղելով նրան իր բուն ծրագրի առաքելությունից ...:

Ապրիլ 24-ին, Մեծ Եղեռնի 78-րդ տարելիցին, ՀՄՄՄ-ի անունից ծաղկեպսակ դրվեց Մոնթեբելլոյի նահատակների հուշարձանին:

ՀՄՄՄ-ի նիստում ընդունված որոշման համաձայն, պատրաստեցի «Ծրագիր-կանոնագիր»-ի (որը այդպես էլ մնաց թղթի վրա), շնորհակալագրերի ու պատվոգրերի նախագծերը արևելա-

1. Տե՛ս «Հայրենակցական Միութիւններու Միացեալ Մարմնի Կեդրոնի բացումը»,-«Մասիս», Շաբաթ, Հունվար 1, 2000, էջ 26:





1993: Տիգրան Գալուստյան (ձախից) և Վահան Բահարյան ապրիլի 24-ին ՀՄՄՄ-ի կողմից ծաղկեպսակ են դնում Մոնթեբելլոյի հուշարձանին՝ Մեծ եղեռնի նահատակների հիշատակին:

հայերեն՝ մեկ դոլար ֆոնդի նվիրատուներին հանձնելու համար և ներկայացրեցի նիստի քննարկմանը: Որոշվեց երկու ուղղագրությամբ գրել դրանք: Այս հարցը հաճախ էր առաջանում: Ջնայած քարտուղար կար, բայց ՀՄՄՄ-ի գրագրությունները հիմնականում ես էի պատրաստում, բացի նիստերի արձանագրություններից, և երբ ներկայացնում էի քննարկման, ուղղագրությունը փոխում էին: Ուստի հաճախ էի ընդվզում՝ ոչ թե ուղղագրությունը փոխելու, այլ նրա համար, որ եթե նյութը արևմտահայերենով էր պետք գրել, ապա՝ հանձնարարվելու էր համապատասխան վարչականին, և ոչ թե իմ գրածը արևմտահայերենի փոխել: Ստեղծվում էր պատրաստի նյութը, մնում էր միայն ուղղագրությունը փոխել: Փաստորեն չահագործում էին: Վարչականներից մեկը մի անգամ նույնիսկ զավեշտորեն արտահայտվեց, որ արևելահայերեն գրվածը պետք է թարգմանել արևմտահայերենի ...:

Տպագրության հանձնվեցին «Պատվոգիր»-ը (տե՛ս բնագիրը հավելված էջ 440) և «Շնորհակալագիր»-ը (տե՛ս բնագիրը հավելված էջ 441) արևելահայերեն և արևմտահայերեն, չորս գույներով ու 1000-ական օրինակ: Միաժամանակ 4-23-93 թ. առաջարկ ներկայացրեցի վարչությանը.

1. ՀՄՄՄ-ի մայիսի 4-ի նիստից հետո լրացնել նվիրատու-

ներին տրվելիք «Պատվոգիր»երը և «Շնորհակալագիր»երը:

2. Նշանակել հավաքույթի օր, «Պատվոգիր»երը և «Շնորհակալագիր»երը հանձնելու համար նվիրատուներին, որտեղ նկատի ունենալ նաև հյուրասիրություն (սուրճ, խմորեղեն ևայլն):

3. Հեռուստատեսությամբ ելույթ ունենալ այդ առթիվ:

4. Աշխատել վարչության նիստին հրավիրել երգիչներին, որոնք կամավոր ելույթ ունենան նշված օրը:

5. «Շնորհակալագիր» հանձնել հավաքույթների այն նվիրատուներին, որոնք ֆոնդին նվիրել են կամ կնվիրեն 50-500 դոլար, իսկ 500-1000 դոլարի դեպքում՝ «Պատվոգիր» հանձնել:

6. «Շնորհակալագիր» հանձնել 50-250 դոլար նվիրող անհատներին, 250-500 դոլարի դեպքում՝ «Պատվոգիր» հանձնել:

7. 1000 դոլար և ավելի նվիրողներին ընտրել ՀՄՄՄ-ի Պատվավոր անդամ:

8-12-93 թ. տվյալներով ֆոնդի գումարն էր 9 870 դոլար:

ՀՄՄՄ-ի կողմից հաստատվեց իմ ներկայացրած առաջարկը, և հանձնախումբը պատրաստեց ցուցակները:

ՀՄՄՄ-ի հաջորդ նիստում որոշվելու էր նաև սրահը և մասնակցող երգիչները: Նախատեսված էր հրավիրել հետևյալ երգիչներին. Հարութ Փամբուքչյան, Լևոն Քաթրջյան, Րաֆֆի, Մաքսիմ, Ջիմմիկ Կաֆյան, Փոլ Պաղդատլյան, Հովիկ Գրիգորյան, Սահակ Սիսլյան, Արա Շահրազյան, Աստուր Բաղդասարյան, Ջորջ Բաղդոյան, Հարութ Հակոբյան և Եղիա Սանասարյան:

Զնայած երգիչների մեծ մասին չէի ճանաչում, կարողացա տեղյակ պահել նրանցից 8-ին ներկա լինելու համար ՀՄՄՄ-ի նիստին, բայց միայն 2-3 երգիչ ներկայացավ: Երբ Գրիգոր Շենյանին խնդրեցի, որ օգնի նրանց ներկայությունը ապահովելու, քանի որ ինքը բոլորին լավ է ճանաչում, նա հանգիստ պատասխանեց, որ, եթե կանչի, ապա պարտական կլինի նրանց և հետագայում ստիպված կլինի ձրի ծանուցումներ տպել նրանց համար իր թերթի՝ «Նոր կեանք»ի էջերում: Այսպես ձգձգելով այս հարցը՝ հավաքույթ չկարողացանք կազմակերպել, ես ի վիճակի չէի, իսկ ՀՄՄՄ-ի ատենապետն ու անդամները չօգնեցին: Այսպես սառեցվեց գործը, թեև ամեն ինչ պատրաստ էր, և հավաքվել էր մոտ 10000 դոլար:

ՀՄՄՄ-ի հրավերով, 1993 թ. հուլիս 1-ին Երևանից Լոս Անջելես ժամանեց սրտաբան, Հայաստանի Մուսա Լեռ հայրենակցական միության ատենապետ Կամո Տեր-Պետրոսյանը՝ Հայաստանի Հանրապետության Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կրտսեր եղբայրը: Օդանավակայանում նրան դիմավորեցին ՀՄՄՄ-ի վար-





1993: Օդանավակայանում՝ Կամո Տեր-Պետրոսյանին դիմավորելիս: Ձախից աջ՝ Արա պետրոսյան, Սարգիս Խորշիդյան, Վահան Բահարյան, Կամո Տեր-Պետրոսյան, Գրիգոր Շենյան և Կայծակ Ջեյթլյան:

չականներ, հարազատներ, որից հետո բոլորս միասին շարժվեցինք դեպի աներձագի՝ Արա Պետրոսյանի բնակարանը: Բակում բացված սեղանների առջև բարի գալուստի ջերմ խոսքեր ասվեցին:

Հուլիսի 10-ին ՀՄՄՄ-ի մեջ մտնող ՀՄ-ների վարչականները հանդիպում ունեցան Կամո Տեր-Պետրոսյանի հետ «Նոր Սերունդ»ի սրահում: Երկուշաբթի, հուլիս 12-ի երեկոյան ժամը 7:30-ին Գլենդելում կայացավ նրա ամուսնքի երեկոն՝ United Community Church, 333 E. Colorado St.: Մուտքը ազատ էր: Նրա ելույթի ծրագրում էին Դուրյան, Մեծարենց, Սիամանթո, Վարուժան, Ռուբեն Սևակ, Վահան Թեքեյան և Շահան Շահնուր:

Ցուրաքանչյուր ամուսնք ուղեկցվում էր չընդհատվող ծափահարություններով: Երեկոյի ձայնաերիզն էլ պատրաստվեց և բաժանվեց ՀՄՄՄ-ի անդամներին: Իսկ ինչպե՞ս գնահատվեց Կամո Տեր-Պետրոսյանը ՀՄՄՄ-ի կողմից: Ո՛չ հուշատախտակ տրվեց, ո՛չ էլ պարգև: Չեմ հիշում, մենք այդ հարցը ինչպե՞ս էինք քննարկել ՀՄՄՄ-ի նիստում[1] և ինչ որոշում էինք կայացրել:

---

1. ՀՄՄՄ-ի նիստերի մի քանի արձանագրություններ կան իմ մոտ: Զնայած ՀՄՄՄ-ի կողմից որոշված էր, որ նիստերի արձանագրություններ բաժանվեն անդամներին, բայց այդ չիրականացավ:

## Թ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1994 Թ.

ՊՀՄ-ի այս տարվա գործունեությունը նույնպես սկսվեց բազմաբնույթ ծրագրերով: Նա հովանավորեց «Երգիծանք» թատրոնի ներկայացումները, կազմակերպեց գրող Նշան Շահենի «Փշուր-փշուր մանկություն» գրքի գինեձոնը, մասնակցեց Արցախին օգնելու նվիրված միջոցառումներին և այլն:

Հունվար 14 թվականի մի նամակ ստացա «Նավասարդ» ամսագրի խմբագիր Արմեն Տոնոյանից: Ըստ նրա խնդրանքի, սա հեռակա հարցազրույց էր, որը մաս էր կազմում «Ասպարեզի զրույցները Հայրենակցական Միություններու հետ» շարքին: Հարցազրույցում պահանջվում էր նաև վարչության խմբանկարը: Որոշեցինք վարչականներով հավաքվել Գլենդելում, Գյոզալյան Սարգսի տանը:

Պատրաստ էինք նկարվելու, երբ զգացի, որ առանց պատշաճ հագնվելու եմ եկել: Վիկտորյան Սարգսի կոստյումներից մի հատ տվեց, հագա ու նկարվեցինք, որի պատճառով նկարն էլ լավ չստացվեց: Երբեմն այսպես էլ է պատահում, ի՞նչ կարող ես անել ...: Հոդվածը[1] ուղարկեցի անհրաժեշտ նկարներով: Այն մեջբերվում է.

ԺԱ. ՊԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Պէյլանի Հայրենակցական Միութեան ատենապետ Վահան Բահարեանի հետ հանդիպելով ստացանք գոհացուցիչ տեղեկութիւններ Միութեան գործունէութեան մասին:

ՀԱՐՑՈՒՄ - Դր. Բահարեան, կխնդրենք որ մեր ընթերցողներուն ընդհանուր ծանօթութիւններ տաք ձեր Միութեան մասին:

ՊԱՏԱՍԽԱՆ - Պէյլանի Հայրենակցական Միութեան անունից իմ շնորհակալութիւնները Արմէն Տօնոյեանին, որ ձեռնարկել է այսպիսի շահաւէտ մի հարցազրոյցի «Ասպարէզ»ի էջերում ներկայացնելու հայրենակցական միութիւնները:

Պէյլանի Հայրենակցական Միութեան գոյութիւնը կապուած է Լոս Անճելըսի հետ, որտեղ եւ ստեղծուեց միութիւնը:

Պէյլանը իր շրջակայ հայկական գիւղերով մտնում է Կիլիկիայի «Սանճագ»ի մէջ, որտեղից 1939 թ. վերջին մի բուռ հայ ժողովուրդը մեր «բարեկամ» Ֆրանսիայի կառավարութեան միջոցով արտագաղթեց դէպի Լիբանան, վերջին մի կտոր հայկական հողն էլ առանց արյուն թափելու նուիրելով մեր թշնամու՝ Թուրքիային:

1946 թ. համարեա բոլոր պէյլանցիները ներգաղթեցին Հայաստան եւ իրենց գործօն աշխատանքով նպաստեցին մեր հայրենիքի վարգացմանն ու բարգաւաճմանը բոլոր բնագավառներում:

---

1. Հոդվածը լույս տեսավ Արմեն Տոնոյանի ստորագրությամբ, տե՛ս «Ասպարեզ», Երեքշաբթի, 1 Մարտ 1994 թ., էջ 6:



Հայրենադարձները քաջալերուելով այս գործընթացից, որպէսզի երբեք չմոռանան իրենց նախնիների երկիրը, սկսեցին կառուցել յուշակոթողներ իրենց ապրած բնակավայրերի անուններով՝ Մուսա Լերան, Այնթապի, Հաճընի, Պէյլանի եւայլն, որոնք որպես վկաներ մեր ապագայ սերունդներին երբեք մոռացնել պիտի չտային մեր բնօրրանների՝ Արեւմտեան Հայաստանի և Կիլիկիայի կորուստը եւ պահանջատիրութիւնը պիտի շարունակուէր եւ պիտի շարունակուի մինչեւ որ նպաստաւոր պայմաններ ստեղծուեն:

Հ - Որքան գիտենք Հայաստանի մէջ նաեւ յուշարձան մը կառուցել յաջողած էք:

Պ - Այո, Պէյլանի և շրջակայ գիւղերի հայութիւնը միասնաբար իրականացրին Պէյլանի յուշարձանի կառուցումը, որի պաշտօնական բացումը կատարուեց 1975 թ.: Յուշարձան-կոթողը կառուցուեց մեր ժողովրդի՝ այսինքն պէյլանցիների հանգանակած գումարներով, 5 տարուայ ընթացքում՝ 1970-1975 թթ. եւ նա դարձաւ ուխտատեղի, որտեղ ամէն տարուայ Սեպտեմբեր ամսին մատաղ է բաժանւում ժողովրդին. այս ծեսը շարունակւում է չնայած որ շատ քիչ պէյլանցիներ մնացին այնտեղ:

Հ - Լոս Անճելըսի մէջ ինչպէ՞ս կազմուեցաւ ձեր Միութիւնը:

Պ - Քաղաքական պայմանների բերումով 1980-ական թուականներին պէյլանցիները արտագաղթեցին հիմնականում դէպի Լոս Անճելըս, որտեղ բաւական դժուար օրեր ապրեցին, քանի որ Խորհրդային Միութիւնից դուրս գալուց ոչ մի սենթ չէին թողնում հետները բերել: Այս դժուարին պայմաններում շարունակուեց հանգանակութիւնը յուշարձանի աշխատանքները աւարտելու համար, նուիրեալներ Գրիգոր Դովլաթեանի եւ Արմենակ Հեքիմեանի միջոցով: Ահա այս ժամանակ էլ կգացուեց համախմբման անհրաժեշտութիւնը եւ 1986 թ. Մայիսի 7-ին, 17 հոգուց բաղկացած հիմնադիրների մարմնի միջոցով հիմնադրուեց Պէյլանի Հայրենակցական Միութիւնը, հետեւեալ կազմով. Նորայր Մելքիսէթեան՝ ատենապետ, Զարեհ Պալեան՝ փոխ ատենապետ, Վահան Բահարեան՝ առաջին քարտուղար, Մարտիրոս Էքշիեան՝ երկրորդ քարտուղար, Նուպար Միսի-Գէւորգեան՝ գանձապահ, Գէւորգ Թերջանեան եւ Յարութիւն Ֆոտուլեան՝ գեղարուեստական մասի պատասխանատու:

Միութիւնը ստեղծուեց առանց հիմնադրամի, բայց մեծ հաւատքով ու յոյսով նուիրուած վարչականներ աշխատեցին ամրապնդել նրա հիմքը եւ այսօր 8 տարի յետո մենք իրաւունք ունենք հպարտանալու միութեան յաջողութիւններով:

Հ - Այս Վերջին տարեշրջանին որո՞նք են նորակազմ Վարչութեան անդամները:

Պ - Այս տարեշրջանի մեր Վարչութիւնը հետեւեալ կազմը կը ներկայացնէ. Վահան Բահարեան՝ ատենապետ, Գրիգոր Դովլաթեան՝ փոխ ատենապետ-գանձապահ, Սեդա Կվրեան՝ առաջին քարտուղար, Գէւորգ Գայշեան՝ երկրորդ քարտուղար, Մանուէլ Մարաշեան՝ գեղարուեստական պատասխանատու, Սարգիս Գիւլեյեան, Սարգիս Խորշիդեան, Յարութիւն Յարութիւնեան եւ Սարգիս Կապուտեան՝ խորհրդականներ:

Հ - Ծրագիր-կանոնագիր ունիք, բնականաբար, քանի որ այսպիսի մտածուած առաջադրութեամբ գործի լծուած էք:

Պ - Հիմնադրուած Վարչութիւնը բնական է, որ չէր կարող գործունէութիւն ունենալ առանց ուղեցոյցի եւ այդ նպատակով Վարչութեան հիմնադրման հետ միասին սկսուեց ծրագիր-կանոնագրի մշակումը (օգտագործուեցին նաեւ գոյութիւն ունեցող Հայրենակցական Միութիւնների ծրագիր-

կանոնագրերը), որը տեւեց բաւական երկար եւ ստեղծուեց մի կուռ ծրագիր-կանոնագիր, որ եւ հիմքը կայմեց մեր ապագայ գործունէութեան: Վարչութեան ամբողջ գործունէութիւնը իրագործուում է նրանով, առանց շեղման:

Պէյլանի Հայրենակցական Միութիւնը անկախ, ոչ-շահութաբեր կազմակերպութիւն է, օրենքով գրանցուած է **IRS**-ում եւ հիմնական նպատակն է.

ա. Հայապահպանումը Սփիւռքում- Լոս Անճելըսում եւ շրջակայքում, իսկ հնարաւորութեան սահմաններում նաև ԱՄՆ-ում.

բ. Ազգականական, բարեկամական եւ հայրենակցական կապերի հաստատում բոլոր հայրենակիցների հետ.

գ. Զատագովել եւ յօրավիգ կանգնել հայապահպանման գործին՝ եկեղեցական, կրթական, մշակութային, գեղարուեստական եւ այլ ասպարեզներում.

դ. Նիւթական օժանդակութիւն ցոյց տալ առաջաւոր սովորողներին, առաջնութիւնը տալով նրանց, ովքեր կհետեւեն հայագիտական եւ մարդասիրական ուղղութիւններին համալսարանում.

ե. Սերտ կապերի հաստատում հայրենիքի հետ, ինչպէս նաեւ բարեկամական կապերի հաստատում միւս հայրենակցական միութիւնների, այլ կազմակերպութիւնների հետ, հայ գաղութի միասնութիւնը ամրապնդելու նպատակով:

Միութեան գործունէութիւնը կատարւում է այս նպատակների հիման վրայ:

Հ - Կրնա՞ք նաեւ կարգ մը տեղեկութիւններ տալ ձեր գործունէութեան մասին:

Պ - **1.** Իւրաքանչիւր տարուայ Ապրիլի **24**-ի առիթով կազմակերպել հոգեհանգիստ-հոգեճաշ ոգեկոչելու համար Մեծ Եղեռնում, ինչպէս նաեւ **1988** թ. Փետրուարին Սումգայիթում եւ **1989** թ. Պաքուում նահատակուած հայրենակիցների եւ Արցախում ու **1988** թ. Դեկտեմբերի երկրաշարժից զոհուածների յիշատակները.

**2.** Տարուայ մէջ գոնէ մէկ անգամ կազմակերպել ճաշկերոյթ-պարահանդէս.

**3.** Տարուայ մէջ գոնէ մէկ անգամ կազմակերպել դաշտագնացութիւն.

**4.** Կազմակերպել դասախօսութիւններ, գրական-գեղարուեստական երեկոներ եւ այլ ձեռնարկներ, հնարաւորութիւններից ելնելով:

Վերոյիշեալ գործունէութիւնները անխափան իրագործուում են Միութեան կողմից, բացի դասախօսութիւններից, որոնց համար առայժմ պայմաններ չունենք: Բայց դրա փոխարէն մեր Միութիւնը հովանաւորում է մշակութային ձեռնարկներ, որոնցից առաջինը եղաւ Վահան Տէրեանի կեանքին նուիրուած «Միթէ վերջին պոէտն եմ ես» պոէտիկ ներկայացումը, որը մեծ յաջողութիւն ունեցաւ: Այժմ նա հովանաւորում է մի թատերական երգիծական ներկայացում «Գնա՞նք, թէ մնանք»: Նախատեսուած է Մարտ ամսին:

Միութիւնը արձագանգում է գաղութում տեղի ունեցող իրադարձութիւններին՝ կապուած հայապահպանման եւ հայրենիքին օգնելու հետ:

Միութեան հիմնական եկամուտները գալիս են ձեռնարկներից եւ նուիրատուութիւններից, որոնք մեծ գումարներ չեն կազմում: Չնայած դրան Միութիւնը անցած տարիներին **3000** տոլարով օգնել է Պէյրութի հայկական դպրոցներին, **300** տոլար նուիրել է Լոս Անճելըսում հայկական դպրոցների համար հայերէն լեզուի, գրականութեան եւ հայոց պատմութեան նորակազմ դասագրքերի պատրաստութեան հրատարակութեան ֆոնտին, **1000** տոլար նուիրել է Ս. Հովհաննու Կարապետ եկեղեցու վերանորոգման համար,





Ձախից աջ. Նստած՝ Վաչան Բաչարյան, Սեդա Կվրյան և Գրիգոր Դովլաթյան: Կանգնած՝ Հարություն Հարությունյան, Սարգիս Խորշիդյան, Սարգիս Գյոզալյան, Սարգիս Կապուտյան, Գևորգ Գազջյան և Մանվել Մարաշլյան:

**1000** տոլար նուիրել է **Medical Outreach for Armenians**-ին Արցախի համար եւ ամէն տարի իր նուիրատուութիւնները կատարում է այդ կազմակերպութեան թելեթոնի առթիւ եւ հանդիսանում է թելեթոնի կազմակերպման յանձնախմբի անդամ:

Միութիւնը **1000** տոլար նուիրել է Հայաստան Հիմնադրամին, **1990** թ. Վարչութեան անդամների միջոցով **2000** տոլար բաժանուել է Հայաստանում կարիքաւոր ընտանիքներին, իսկ **1993** թ. **3500** տոլար է բաժանուել այդ նպատակով, այդ թւում եւ **32** ազատամարտիկների, որոնք վիրավոր վիճակում գտնուում էին Երեւանի Օրթոպեդիկ հիվանդանոցում եւ այդ կապակցութեամբ ունենք մեր միութեան ուղղուած շնորհակալական նամակ Հայաստանի Հանրապետութեան «Ֆիդայի» բարեգործական կազմակերպութեան կողմից:

Պէյլանի Հայրենակցական Միութեան անդամները (մօտ **400** ընտանիք կայ Լոս Անճելըսում) լինելով հիմնականում Հայաստանից, սերտ կապուած են հայրենիքի հետ եւ իրենց միութեան միջոցով անում են ամէն ինչ, որպէսզի իրենց օգտակար լուման ներդնեն հայրենիքի վերականգնման գործին:

Վերջացնելով այս ակնարկը աւելացնենք, որ եթէ Սփիւռքի կազմակերպութիւնները աշխատեն իրենց նուազագոյն օգնութիւնը բերել հայրենիքին, այն ժամանակ մենք կը հասնենք մեր նպատակին եւ կ'ունենանք քաղաքականապէս ու տնտեսապէս հզօր հայրենիք, որը իր ինքնուրոյն տեղը կ'ունենայ ազգերի միջազգային ընտանիքում եւ կ'պահովի իր ժողովրդի խաղաղ ու ստեղծագործ աշխատանքը, շարունակելու իր երթը պատմութեան արահետներով որպէս յաւիտենականութիւն:

**Ուրբաթ, մարտ 25, 1994 թ. Փասադենայի Աղաջանյան սրա-**

հում տեղի ունեցավ ճաշկերույթ ի նպաստ Արցախի՝ կազմակերպությամբ Արևմտյան Թեմի առաջնորդարանի: Արք. Վաչե Հովսեփյանի հետ ներկա էր նաև Արցախի քաջարի առաջնորդ Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը:

Ճաշկերույթին ակտիվ մասնակցություն բերեց նաև ՊՀՄ-ն իր վարչականներով և 500 դոլարի նվիրատվությամբ (չեք #334, 3-25-94): ՀՄՄՄ-ի կողմից Արցախին նվիրվեց «Հայաստան-Արցախ մեկ դոլար ֆոնդ»ով հավաքված 10000 դոլարը, սակայն այդ գումարը չփոխանցվեց և մինչև հիմա էլ մնում է ՀՄՄՄ-ի բանկային հաշվի մեջ:

«Երգիծանք» թատրոնի ներկայացումները հովանավորելու հարցը կապված է իմ և Հովհաննես Ղուկասյանի ծանոթության հետ՝ «Հայաստանցիների միություն»[1] ստեղծելու հանգամանքով, որտեղ ծանոթացա գրող Նշան Շահենի ու Արմեն Մանդակունյանի հետ և մեր մեջ սերտ հարաբերություններ հաստատվեցին:

Հովհաննես Ղուկասյանը ինձ ծանոթացրեց իր խնամու՝ բեմադրիչ Կարպիս Ֆեսչյանի հետ: Մտադրվում էր երգիծական բեմադրություն պատրաստել: Կարպիսը առաջարկեց, որպեսզի ՊՀՄ-ն հովանավորի ներկայացումները և եկամուտի 30%-ը հատկացվի միությանը, ինչպես Ալիս Կապլանջյանն էր առաջարկել ժամանակին: Բոստոնից նա ընտանիքով նոր էր տեղափոխվել Լոս Անջելես և դժվարություններ էր դիմագրավում: Նույն երկխոսությունը կատարվեց այստեղ, ինչպես Ալիս Կապլանջյանի հետ. միության անունից խոստացա հովանավորել ներկայացումները առանց եկամուտից բաժին պահանջելու, բայց եթե եկամուտ ունենան, միության մի որոշ գումար հատկացնեն: Մեծ ուրախությամբ համաձայնվեցին և շնորհակալություն հայտնեցին ինձ:

Հարցը քննարկվեց 2-21-94 թ. վարչության նիստում և միաձայն ընդունվեց:

ՊՀՄ-ն հովանավորեց «Երգիծանք» թատրոնի ներկայացումը՝ «Գնա՞նք, թե՞ մնանք»ը:

Ներկայացումը տեղի ունեցավ մարտի 5,6,12 և 13-ին Roosevelt Jr. High School-ում (1017 Glendale ave., Glendale) և մեծ հաջողություն ունեցավ:

Ներկայացման ավարտից հետո Կարպիս Ֆեսչյանը բոլոր դերասաններին-դերասանուհիներին և ինձ հրավիրեց իր տունը:

1. Իմ նախաձեռնությամբ փորձեցի ստեղծել սույն միությունը, որպեսզի Հայաստանից եկած հայերը համախմբվեն նրա շուրջը: Նպատակս էր՝ այնուհետև աշխատել միասնություն ստեղծել համայնքում, սակայն չնախատեսված հանգամանքները և մութ ուժերը կասեցրեցին այդ գործընթացը:



ձոխ սեղան էր բացված: Հաճելի մթնոլորտում թատերախմբի անդամներին նա դրամներով ծրարներ բաժանեց, «մոռացության» տալով մեր միությունը: Հետո երբ նրան հիշեցրեցի այդ մասին, վատ վիճակի մեջ ընկավ և մի քանի օր հետո 200 դոլար տվեց, ներողություն խնդրելով ու ասելով, որ հետագայում կհատուցի, բայց հետո միությունը ոչինչ չստացավ:

«Երգիծանք» թատրոնի հաջորդ ներկայացումը՝ Սիմոն Էքմեքճյանի «Կնիկ կփնտրեմ»ը ոգևորություն չառաջացրեց: Իսկ Հովհաննես Ղուկասյանի և Կարպիս Ֆեսչյանի «Վա՛յ մեզ, էս ո՞ւր ենք ընկել»ը հաջողություն ունեցավ:

«Երգիծանք» թատրոնը հետագայում բեմադրեց նաև «Քաջ Նազար»ը, որի համար դիմեց ՊՀՄ-ի վարչության, որպեսզի հովանավորության հետ նա ստանձնի նաև բեմադրության ծախսերը, բայց միության առաջարկած պայմանները չընդունեց, և վերջ գտավ այդ գործակցությունը, իսկ «Երգիծանք»ն էլ իր դռները փակեց նշված ներկայացումից հետո: «Գնա՞նք, թե՞ մնանք» և «Վա՛յ մեզ, էս ո՞ւր ենք ընկել» բեմադրությունների մասին գրեցի հետևյալ հոդվածները:

### ԳՆԱ՞ՆՔ, ԹԵ՞ ՄՆԱՆՔ[1]

Լոս Անջելեսի հայ համայնքի մշակութային կյանքը մի նոր թատրոնով ևս հարստացավ, որի անունն է «Երգիծանք»: Այսօր Լոս Անջելեսի հայ համայնքը ապրում է մշակութային գործուն կյանքով, սակայն զգացվում է երգիծանքի պակասը, որի միջոցով մեր ժողովուրդը միշտ արտահայտել է իր զգացմունքներն ու վշտերը, հոգսերն ու ուրախությունները: Երգիծանք՝ և՛ ծիծաղ, և՛ վիշտ, և՛ հոգեկան ապրումներ, և՛ ազգային հոգսեր: Բարի մուտք Լոս Անջելեսի մշակութային կյանքի մեջ նորաստեղծ «Երգիծանք»ին:

Թատրոնը ստեղծվեց բեմադրիչ Կարպիս Ֆեսչյանի ջանքերով, որին օգնում էր դերասան Հովհաննես Ղուկասյանը: Առաջին ներկայացումը ընտրված էր «Գնա՞նք, թե՞ մնանք» հրապարակախոսական երգիծանքը երկու մասից: Ներկայացումները հովանավորեց ՊՀՄ-ն: Սա մշակութային երկրորդ միջոցառումն է, որ հովանավորում է նա (առաջինը՝ Վահան Տերյանի «Միթե վերջին պոետն եմ ես» պոետիկ ներկայացումն էր 1993 թ. նոյեմբերին): Վարչությունը շատ ուրախ է, որ կարողանում է օգնել մեր հայրենակիցներին ոտքի կանգնելու այստեղի դժվար պայմաններում:

«Գնա՞նք, թե՞ մնանք»ը ժամանակակից թեմա է: Մեր ժողովրդի համար այդ հարցը միշտ եղել է, կա և դեռ պիտի լինի, մինչև որ հայրենի կառավարությունը խաղաղության ճանապարհի վրա անհրաժեշտ պայմաններ ստեղծի հայ ժողովրդին հավաքելու իր Հայրենիքում: Ո՞ր ընտանիքում չի բարձրացել այս հարցը: 1946-47 թթ. Հայաստան ներգաղթած, Եգիպտոսից Կանադա կամ Լիբանանից ԱՄՆ արտագաղթած ամեն մի հայ ընտանիքում

1.- Տե՛ս Վահան Բահարյան, Շարունակվող Մեղեդի, Երևան, 2001, «Զանգակ-97», էջ 334, նաև «Նոր Օր Եռօրեայ», Շաբաթ, Ապրիլ 2, 1994, էջ 11:

այս եղել է ամենակարևոր հարցը, որովհետև ծիծեռնակի նման ամեն տեղ բույն շինելով, դեռ չվայելած այն, մի հարվածով քանդել և հեռացել է օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով: Ամեն անգամ ընտանիքի առջև դրվել է այս հարցը՝ ի՞նչ անենք, լավ մտածենք, «Գնա՞նք, թե՞ մնանք», որովհետև կառուցելով տաս-քսան տարում, մի օրվա մեջ քանդում ենք այն և հեռանում Աստված էլ չգիտի, թե ո՞ր երկրի «դրախտը»...:

Ներկայացումը կրկնվեց չորս անգամ, որը յուրահատուկ դեպք էր Լոս Անջելեսի կյանքում և չորս անգամ էլ 538 տեղանոց դահլիճում տեղ գցելու տեղ չկար: Սա խոսուն փաստ է նրա հաջողության և մեր ժողովրդի ծարավին՝ հանդեպ նման ներկայացումները:

Նյութը՝ Հայաստանից մի ընտանիքի ԱՄՆ արտագաղթելու մասին է, և քանի դեռ նա չի ստացել թույլտվությունը՝ «վիզան», խաղաղ ապրում է: Իսկ երբ ստանում է այն, ահա այն ժամանակ էլ խանգարվում է նրա հանգիստը: Սկսվում են հոգեկան ապրումներն ու բոլոր մոռացված հարցերի վերարծարծումները: Արդյունքում, չնայած որ այնքան մեծ ձգտում ունեին Ամերիկա գնալու, տատանվում են ու ընտանիքի մայրը, որ ոչ մի բանի առջև կանգ չէր առնում գնալու համար, հարցնում է. «Ի՞նչ եք ասում հիմա, գնա՞նք, թե՞ մնանք»:

Այն բոլորից հետո, որ հայրենադարձը տեսավ իր հայրենիքում (կասկած, անվստահություն, վիրավորանք, աքսոր դեպի Սիբիր, վախ, ստորացում և այլն) և որոշեց արտագաղթել, այդպես էլ չարտագաղթեց: Հաղթեց հայրենասիրությունը, Հայրենիքին կապվածությունը:

Գլխավոր հերոսները՝ Սարգիս և Եղիսաբեթ Դեմիրճյանները (դեր. Հովհաննես Ղուկասյան և Անժելա Ֆեսչյան) իրենց տարերքի մեջ են, հիշում են վախից մոռացված տառապանքների շղթան և իրենց բողոքն են արտահայտում խորհրդային կարգերի դեմ:

Գլխավոր հերոսուհի Եղիսաբեթը այնքան էր դառնացած Սիբիրում իր հարազատների մի մասի կորուստից, որ որոշել էր անպայման հեռանալ Հայրենիքից դեպի Ամերիկա, քանի դեռ ճամփաները բաց էին. «Վե՛րջ, վիզանիս եկած է, պիտի երթա՛նք: Չես ուզեր նե... աղջիկս կառնեմ, կերթամ», բայց...:

Հիշատակելի է Սարգիս-Սերգեյ՝ Սերգեյ Բարսեղյան-բուսաբան պրոֆեսոր (դեր. Վրեժ Հակոբյան) երկխոսությունը: Սարգիսը «թափում» է իր դառնությունները Արևմտյան Հայաստանը, Նախիջևանը կորցնելու և Սումգայիթի ցեղասպանության վերաբերյալ, իսկ Սերգեյը որպես բնիկ հայաստանցի արտահայտվում է ազգային հոգսերի մասին. «Ի՞նչ է, ձեզ թվում է, մենք չե՞նք վախենում մեր վաղվա համար...: Վերջապես պատերազմ ենք տեսել: Միթե՞ դա քիչ է»: Բայց Սարգիսը դառնացած պատասխանում է. «Այո, քիչ է... որովհետև դուք չեք գիտեր ինչ կնշանակե կասկածյալ ըլլալը: Այս երկրի մեջ առաջին իսկ օրվանից կասկածելի ենք և այդպես էլ մնացել ենք»:

Պիեսը համեմված է դառնություն, վիշտ ու հոգսեր արտահայտող հումորով, որն էլ նրա հաջողության բանալին է: Նապիկը (դեր. Համիկ Մուսայելյան) մի պարզ հարևանուհի, բայց մի քիչ խորամանկ, իր «ժետաքրքրություններով», իր ճկուն խաղով և բեմական խոսքով ժողովրդին զամված պահեց բեմին:

Օֆելիան (դեր. Էլենա Ալեքսանդրյան) Սերգեյի կինը (ռուս) մարմնավորում էր ռուս կնոջ տիպիկ բնավորությունը. «Ամուսինս պաշտվում է Բայկալի բնության պաշտպանությամբ...»: Նա իր դերի մեջ է որպես ռուս






«Գնա՞նք, թե՞ մնանք» ներկայացման ծանուցման յուսապատճէն:

«արխատոլրատ»:

Փոստատար Արմենակը (դեր. Վիգեն Հարությունյան), իրոք, հանդիսատեսին և՛ ուրախանալու, և՛ տխրելու շատ առիթներ պատճառեց:

Օրիորդ Ալիս (դեր. Մարիամ Հակոբյան) անգլերենի ուսուցչուհի, որը իր անկաշկանդ խաղով բավական զվարճություն պատճառեց հանդիսատեսին:

Արամայիս (դեր. Տիգրան Ղազարյան) հրշեջ ծառայության տեսուչ: Իր անգրագիտությամբ և կաշառակերությամբ խորհրդային շրջանի պաշտոնյայի տիպիկ ներկայացուցիչ է:

Վերակառուցումից ոգևորված ու Ազատության հրապարակով ապրող երիտասարդ սերունդի ներկայացուցիչներն են Մելինե Դեմիրճյան (դեր. Լուսինե Ֆեսչյան) և Աշոտ Բարսեղյան (դեր. Հովհաննես Ֆեսչյան) սիրահարված զույգը, որն ապրում է հայրենիքի առօրյա ազգային կյանքով՝ առանց մտածելու Ամերիկա գնալու մասին:

Չնայած որոշ թերություններին, «Գնա՞նք, թե՞ մնանք»-ը հաջող ներկայացում էր: Բարի երթ ցանկանանք «Երգիծանք»-ին:

## «ՎԱ՜Յ ՄԵԶ, ԷՍ ՈՒ՞Ր ԵՆՔ ԸՆԿԵԼ»[1]
## «ԵՐԳԻԾԱՆՔ» ԹԱՏՐՈՆԻ ՆՈՐ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՊՀՄ-ի հովանավորությամբ հանդես եկող «Երգիծանք» թատրոնը մեծ հաջողությամբ ավարտեց իր **1994** թվականի տարեշրջանը: Այն իր խաղացանկով, ասելիքի այժմեականությամբ և ընտրած ժանրով արժանացավ հանդիսականի ջերմ ընդունելության:

Երգիծանքը եղել է հայ թատրոնին ուժ տվող այն երևույթը, որը երբեք չի լռել նույնիսկ ստալինյան դաժան տարիներին և իր խոսքը հասցրել է մեր ժողովրդին ու շարունակում է այդ, անգամ այս դժվարին օրերին:

«Գնա՞նք, թե՞ մնանք» և «Վա՜յ մեզ, էս ո՞ւր ենք ընկել» պիեսների հեղինակներ՝ Հովհաննես Ղուկասյանը և Կարպիս Ֆեսչյանը մեզ ծանոթ անուններ են, որոնք իրենց համարձակ խոսքով արտահայտում են հայ համայնքի հոգսերն ու հայրենիքի հանդեպ հայ մարդու մտահոգությունները: «Վա՜յ մեզ, էս ո՞ւր ենք ընկել» ներկայացումը բեմադրվեց **1994** թ. նոյեմբերի **20**-ին, **27**-ին և դեկտեմբերի **11**-ին:

Շտապ օգնության շչակներ և հիվանդանոց, որտեղ նույն հիվանդասենյակում հանդիպում են երկու հայի բեկորներ՝ Պողոսը՝ Հայաստանից, Պետրոսը՝ Պարսկաստանից: Ամբողջ բեմադրության ընթացքում գործողությունները կատարվում են միևնույն հիվանդասենյակում: Երկու հիվանդների ցավերն ու հոգսերը նույնն են՝ սկսած Մեծ եղեռնից, որ մեր ժողովրդին սփռեց աշխարհով մեկ, վերջացրած՝ անկախություն ստացած մեր հայրենիքով և Արցախով: Պողոսն ապրում է Ամերիկայում, իսկ որդիներից մեկն ազատամարտիկ է Արցախում:

Գլխավոր գործող անձերը Պողոսն ու Պետրոսն են, որոնց շուրջ հյուսվում ու զարգանում են բոլորին հուզող Հայրենիքի հոգսերը: Գործողությունները համեմված են սուր երգիծանքով ու հումորով, որտեղ գլխավոր հերոսները՝ Պողոսը (դեր. Հովհաննես Ղուկասյան) և Պետրոսը (դեր. Վիգեն Հարությունյան) աշխատում են իրենց տեսանկյունով գտնել այն ուղին, որը կկայունացնի Հայրենիքը և կամրապնդի նրա դիրքերը: Երկու դերասաններն

1.-Տե՛ս Վահան Բահարյան,– Շարունակվող Մեղեդի, Երևան, 2001, «Զանգակ-97», էջ 348, նաև «Նոր Հայաստան», Երեքշ., Յունուար 10, 1995:



էլ կարողանում են վարպետորեն մեկնաբանել իրենց կերպարները: Այդ է վկայում հանդիսատեսի լարված կապվածությունը բեմին:

Հովհաննես Ղուկասյանի Պողոսը տարիքն առած, կյանքում թրծված, մանավանդ ստալինյան ժամանակաշրջանում ապրած, մտածում է իր որդիների մասին, որոնցից մեկը կռվում է Արցախում, իսկ մյուսը սովորում է Բոստոնում և շուտով կպաշտպանի իր թեզն ու կաշխատի: Երկու դեպքում էլ մտահոգություններ՝ մի կտոր հաց ուտելիս մի դեպքում հիշում է զինվոր որդուն, «...պատառը կուլ չի գնում», իսկ մյուս դեպքում կասկածով է ապրում, որ Բոստոնում սովորող որդին օգուտ չի տալու Հայրենիքին: Ապրելով Հայրենիքից հեռու, Պողոսը այնուամենայնիվ մնացել է նրա անքակտելի մի մասնիկը և ապրում է նրա հոգսերով. «... Է՜, ուր է, եթե մեր կուսակցություններն էլ իրար հետ լեզու գտնեին, թե չէ, ամեն մեկն իր էշն է քշում, երկիրն էլ ձեռքից գնում է...»:

Պիեսի գլխավոր ասելիքը Սփյուռքում՝ տվյալ դեպքում Լոս Անջելեսում արմատացած հայության խնդիրն է, որտեղ ամեն մի երկրից գաղթած հայ, մի պիտակ է կպցրել մյուսին, մոռանալով, որ իրենք մի ազգի մասնիկներն են: Պողոսը ընդվզում է և պոռթկում. (...Սուտ է: Այսպիսի բան չկա: Չեմ հասկանում, ո՞վ է հնարել այդ մեքենան, որ ամեն տեսակի հայ է արտադրում: Է՛լ պարսկահայ, է՛լ ֆրանսահայ, է՛լ ամերիկահայ»: Նա ցանկանում է վերացնել տարբեր երկրներում ապրող մեր ժողովրդի միջև եղած խրամը, որպեսզի կարողանանք ուժ դառնալ և հասնել մեր նպատակներին: Նա նաև հոգատար հայր է: Ուզում է իր տղային ամուսնացնել համեստ ու հոգատար բուժքրոջ (նըրսի) հետ, որի արմատները Սասունից են, չնայած՝ ծնվել է Բեյրութում: Խոսելով այսօրվա մեր Հայրենիքի մասին, նա իրավացիորեն և անկեղծորեն արտահայտում է իր կարծիքը. «Եթե ինձ ընտրեք թագավոր, ես չեմ կարող երկիրը կարճ ժամանակամիջոցում դրախտավայր դարձնել: Մեր ապագան լուսավոր է, բայց դժվարին, առայժմ պետք է դիմանալ ազգովին: Ետդարձի ճանապարհ չկա... Փառք ու պատիվ մեր զոհված անմահներին...»: Այո՛, նա ասում է ճշմարտությունը: Այսօր Հայրենիքի դժվարությունները կարելի է հաղթահարել միայն ու միայն միացյալ ուժերով: Սփյուռքն իր կուսակցություններով ու կազմակերպություններով պետք է ամուր նեցուկ կանգնի Հայրենիքին:

Վիգեն Հարությունյանի Պետրոսը, լինելով միամիտ, բարեսիրտ և հայրենասեր անձնավորություն, այնուհանդերձ, չի կարող Պողոս լինել, որն ապրելով խորհրդային հասարակարգում, թրծվել է կյանքի դաժան պայմաններում: Պետրոսի բերանով խոսում է մի ամբողջ Սփյուռք, Հայրենիքի կարոտի, նրա գիրկը դառնալու և այն միասնական ուժերով ծաղկեցնելու ցանկություն: Նա չի հանդուրժում Հայրենիքի նկատմամբ քայքայիչ վերաբերմունք: «Բայց ամեն մեկը կարծում է՝ ինքը ժողովուրդ է ու նրա անունից է խոսում... Մենք, էլ առաջվանը չենք: Ամեն մեկի դուդուկի տակ չենք պարի»: Նա մտահոգված է Հայրենիքի դժվարություններով. «Մի երազանք ունեի... Երկիրս ազատ տեսնել, գնալ էնտեղ ու մեռնել: Ի՞նչ ասեմ Աստված մեզնից խռովել է... Ասում են վիճակը ծանր է՝ շատ ծանր...»: Նա չտեսած իր Հայրենիքը, ապրում է նրա առօրյա կյանքով և երբեք հույսը չի կտրում: Այո՛, հենց այդ հույսն ու կամքը, սերն ու հավատքն է, որ մեր ժողովրդին չի սասանել: Նա ապրել է, ապրում է և պիտի ապրի...:

Երկու հայի բեկորներ, երկու հոգատար անձեր, իրար սիրելով, մռթմռթոցով, իրար չհանդուրժող, բայց իրար հուսադրող, մեկը մյուսի ցավով

տառապող ընկերներ են Պողոսն ու Պետրոսը: Իր ցավը մոռանալով, Պետրոսը հուսադրում է Պողոսին. «Մենակ դուն չես: Դիմացիր: Լավ է, տղաք դեռ կռվում է, ուրիշները չկան...: Առանց հայրենիքի, առանց հիշողության ազգ կլինի՞: Դու կարո՞ղ ես խաչքարերը մոռանալ, ես կարո՞ղ եմ իմ խալիները մոռանալ... Մեկն ու մեկը կարո՞ղ է իր անցյալը մոռանալ... Մենք կմեռնենք, եթե մեր երգը լռի, եթե մեր խաչքարը փշրվի, եթե Եղեռնը մոռանանք»:

Երկու արհեստավոր՝ Պողոսը քարտաշ. իր ամբողջ կյանքում խաչքար է տաշել, Պետրոսը՝ գորգագործ: Երկու սիմվոլիկ արհեստներ, որոնք ամփոփում են իրենց մեջ հայ ժողովրդի աշխատասիրությունը և նրա սրբությամբ ստեղծված արհեստ-արվեստների ժառանգականությունը, որոնք հարստությունն են մեր ազգի:

Երկու դերակատարներն էլ փայլուն խաղով, մերթ տխրեցնելով, մերթ ուրախացնելով, հասել են իրենց նպատակին:

Դա է պատճառը, որ նրանք բարձր գնահատականի արժանացան հանդիսատեսի կողմից: Պիեսի հաջողության գրավականն է նաև հերոսների ընտրած լեզուն: Մեկը խոսում է հայաստանյան հայերենով, իսկ մյուսը՝ պարսկահայերենով, սակայն պահպանված է հավասարակշռությունը, և դա էլ ավելի նպաստեց պիեսի հաջողությանը:

Անժելա Ֆեսչյանի Շուշանը և Քարոլին Աղախանյանի Հիլդան, լրացնում են իրենց ամուսինների կերպարները: Երկար տարիների կյանքի փորձը էլ ավելի է մտերմացրել ամուսիններին, որոնց հոգատարությունը իրար նկատմամբ հասնում է ծիծաղելիության: Մեկը իր ամուսնուն դոլմա է բերում, մյուսը՝ ավանդական փլավ... Այդ բարի, սիրով առլեցուն կանայք հաճախ են իրենց վիշտը քողարկում ժպիտի տակ, էլ ավելի չծանրացնելու համար ամուսինների վիճակը:

Երկուսն էլ սիրող մայրեր են: Դեպքի բերումով ծանոթանալով հիվանդանոցում, դառնում են մտերիմներ և երկուսի ցավն էլ իրենց ընտանիքներն են ու Հայրենիքը: Շուշան. «Ախր ինչի՞ մեր երկրում էլ խաղաղություն չիներ..., որ բոլորս գլուխ գլխի հավաքվեինք»: Հիլդա. «Ընտեղի ժողովուրդը ինչպե՞ս ա դիմանում, պարմանում եմ: Կռիվը՝ մի կողմից, սովը՝ մյուս կողմից»:

Լուսինե Ֆեսչյանի երիտասարդ բուժքույրը իր համեստությամբ, մարդկային վերաբերմունքով և կեցվածքով ավնվականի տիպար է և ամենահաջող կերպարներից մեկը: Բեմադրիչ Ֆեսչյանը իրավամբ, պիեսի ամփոփիչ խոսքերը դրել է երիտասարդ աղջկա շուրթերին. «... Ալ բավական է, հայաստանցի, իրանահայ, բեյրութահայ... Բոլորս էլ հայ ենք, հայ...»:

Արշավիր Ղարիբյանի բժիշկը, որը ծնվել է օտար ափերում Ամերիկայում, դարձել է բժիշկ, ամերիկյան բնավորության տիպար է և ձգտում է ավելի լավ տիրապետել և կարգացնել «քիչ հայերեն գիտեմ»ը, որպեսզի կարողանա ավելի շատ օգտակար լինել հայ համայնքին և հայրենիքին, որի սերը միշտ կա սրտում, թեկուզ «ամերիկացի է»:

Պարգև Սարգսյանի «Գրքով մարդը» աշխարհում ամեն ինչ կորցրած, տառապանքների տակ կքած, «միլիոն» հիվանդությունների տեր, երբեք չի հուսահատվում և լավատես է: Սակայն կյանքի դժվարությունները նրան հանել են հավասարակշռությունից, խոսում է և ասում, թե ում խոսքերն էին իր ասածները, որովհետև շատերն են ուրիշների խոսքերը վերագրում իրենց: Եվ նրա շուրթերով հնչած Սարոյանի խոսքերը՝ «Ես ոչ մեկի անունը չեմ տալիս, բայց ինչ որ մի տեղ, ինչ որ մի բան սխալ է» խոսքերը վերջակետում են ներկայացումը: Հաջողված կերպար է:





Մի պատկեր «Վա՜յ մեզ, էս ո՞ւր ենք ընկել» ներկայացումից: Ձախից աջ՝ Պողոս, Շուշան, Հիլդա, Պետրոս:

Կարպիս Ֆեսչյանի թագավորը (գիժ առաջին) և Հովհաննես Ֆեսչյանի սպարապետը (գիժ երկրորդ) ներկա ժամանակների աբսուրդներ են, որոնք կարծում են, որ կարող են մի խելացի ժողովուրդ իրենց ետևից տանել: Հաջողված կերպարներ են, ինչպես նաև քչախոս իսկիչ՝ Իշխան Խոսրովյանը:

Բեմադրիչ Կարպիս Ֆեսչյանը ստեղծել է մի ներկայացում, որը արժանի է գովասանքի: Ներկայացման ձևավորումն ու ընտրված երաժշտությունը նույնպես կատարվել են բեմադրիչի կողմից և նպաստում են ներկայացման հաջողությանը: Կարպիս Ֆեսչյանը իր այս բեմադրությամբ մեկ անգամ ևս թարմություն բերեց և ասելիքի՝ այժմեականություն: ...

Վարձքդ կատար «Երգիծանք», որ հանդիսատեսին ներարկում ես քո հումորը, առանց որի կյանքն ինչ որ բանով պակաս կլիներ:

**Վարչությյան նույն 4-13-94 թ. նիստում քննարկվեց նաև հոգեհաչի հարցը և այն հետաձգվեց՝ նկատի ունենալով Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցու 1994 թ. հունվարի 17-ի երկրաշարժի հասցրած վնասից հետո վերանորոգման մեջ լինելը, որտեղ վարչությյունը իրականացնում էր հոգեհանգիստ-հոգեհացը: Նույն ՎՆ-ում որոշվեց կազմակերպել գրող Նշան Շահենի «Փշուր-փշուր մանկությյուն» գրքի գինեձոնը, որի համար հեղինակը նախօրոք**

գիմել էր ինձ: Այս ժամանակընթացքում վարչության առաջին քարտուղարն էր Գևորգ Գազջյանը, որի կազմած արձանագրությունները գոհացուցիչ չեն, որքան էլ որոշ դեպքերում լրացումներ եմ կատարել, պարզ ասած, նա չէր գիտակցում իր կատարածի կարևորությունը, որ գրում է ՊՀՄ-ի պատմությունը:

Նշան Շահենը առաջարկեց, որպեսզի մեր միությունը հովանավորի գրքի գինեձոնը: Խորհուրդ տվի. ավելի լավ կլինի, եթե այն հովանավորի Գրողների միությունը, որի նախագահն էր Թորգոմ Փոստաճյանը: Պարզվեց, որ գրքից պարբերաբար հատվածներ են տպվել «Հայ կեանք» շաբաթաթերթում, հետևաբար «Նոր կեանք»ի խմբագիր Գրիգոր Շենյանը, որպես գրողների միության անդամ կարգելակի այդ գործը: Խոստացա զբաղվել այդ հարցով: Նախօրոք խոսելով Գրիգոր Շենյանի հետ, ՊՀՄ-ի անունից նամակ գրեցի Գրողների միության և հարցը կարգադրեցի: Մեր միությունը և «Փարոս» երկշաբաթաթերթը հանդես եկան որպես գինեձոնի կազմակերպիչներ: Գինեձոնը նախատեսված էր մայիս 19, 1994 թ.: ՊՀՄ-ի վարչության անդամների ներկայությունը ապահովելը հանձնարարվեց Գևորգ Գազջյանին: ՊՀՄ-ի կողմից գինեձոնում ներկայացրեցի գրողի կենսագրականը[1]: Գինեձոնին ներկա էր միայն Մանվել Մարաշլյանը կնոջ հետ:

Գինեձոնի հաջորդ օրը 5-20-94 թ. տեղի ունեցած վՆ-ում բարձր գնահատվեց մեր մասնակցությունը, բայց ո՞ւմ, երկու հոգո՞ւ ...:

Վարչության նույն նիստում քննարկվեցին նաև.

ա. Արցախի բանակին օգնելու համար Արբատում տեղի ունենալիք ճաշկերույթին միության մասնակցության հարցը:

բ. Անահիտ Իշխանյանի կողմից կազմակերպված Հովհաննես Թումանյանի ծննդյան 125-ամյակին նվիրված երեկոյին մասնակցելու հարցը:

գ. Մանվել Մարաշլյանի սույն թվի հունիսին կազմակերպելիք արվեստագետներին նվիրված լուսանկարչական ցուցահանդեսը հովանավորելու հարցը:

Միությունը տոմսեր իրացնելով օգնեց Անահիտ Իշխանյանին: Միջոցառումը անցավ բարձր մակարդակով, որից հետո հարցազրույց ունեցա նրա հետ[2]:

Մանվելի լուսանկարչական ցուցահանդեսի հարցը մինչև

1. Տե՛ս Վահան Բահարյան, Շարունակվող Մեղեդի, Երևան, 2001 թ., «Զանգակ-97», Նշան Շահեն, էջ 251:

2. Տե՛ս Վահան Բահարյան, Շարունակվող Մեղեդի, Երևան, 2001 թ., «Զանգակ-97», Հարցազրույց Անահիտ Իշխանյանի հետ, էջ 286:



վարչության նիստը քննարկել ենք մի քանի անգամ միասին: Ափսոս շատ մանրամասնություններ չեմ հիշում, բայց որոշ հարցեր չեմ մոռացել: Մի հեռախոսազրույցի ժամանակ նա ինձ առաջարկում էր մեր միության հետ ինչ-որ մեկը հովանավորի միջոցառումը, և նրա անունը գրվի ծանուցման մեջ: Նույնիսկ թելադրեց հրավիրատոմսի բովանդակությունը: Մերժեցի նրա առաջարկը՝ ասելով, որ եթե ինքն ուզում է, թող ուրիշը հովանավորի, բայց ո՛չ մեր միության հետ, իսկ եթե մեր միությունը պիտի հովանավորի, ուրիշ որևէ մեկը չի կարող լինել նրա հետ: Այս կտրուկ պատասխանից հետո նա վերջ տվեց իր առաջարկներին և ընդունեց միության հովանավորությունը, որը և հաստատվեց վարչության նիստում:

Քանի որ ցուցահանդեսը հովանավորում էր ՊՀՄ-ն, բնականաբար հանգամանորեն գրեցի այս հոդվածը[1]:

### ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Ցուցահանդես այցելած հայաստանահայերի մոտ անցած տասնյակ տարիների հուշեր արթնեցին, երբ խաղաղ պայմաններում մեր մշակույթն ու արվեստը մեծ քայլերով գնում էին դեպի զարգացում:

Ցուցահանդեսը տեղի ունեցավ չորեքշաբթի հունիս 15, 1994 թ. **1146 N. Alexandria Ave., Hollywood**, Մարիա Սողանալյան սրահում մի քանի ժամով (երեկոյան ժամը 7:30-11:00) և լավ տպավորություն թողեց այցելուների վրա: Այն նախաձեռնությունն էր ՊՀՄ-ի վարչության գեղարվեստական բաժնի պատասխանատու Մանվել Մարաշյանի և, բնականորեն, հովանավորեց ՊՀՄ-ն, որն այս ձեռնարկով հարստացրեց իր հովանավորած և կազմակերպած այդպիսի ձեռնարկների թիվը:

Այս ցուցահանդեսը սիրող-լուսանկարիչ Մանվել Մարաշյանի տարիներ շարունակ արվեստագետներին լուսանկարելու արդյունքն էր:

... Բացման խոսքով հանդես եկա ես, սրտի խոսքով՝ Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ Գևորգ Աբաջյանը, իսկ ժապավենը կտրելու պատիվը վստահվեց Հայաստանի ժողովրդական արտիստուհի Վարդուհի Վարդերեսյանին, որն իր շնորհակալությունն ու գոհունակությունը հայտնեց այս առթիվ՝ շեշտելով, որ իր կյանքում առաջին անգամն է այսպիսի պատվի արժանանում:

Եղավ նաև գեղարվեստական բաժին և հյուրասիրություն, որոնք նույնպես նպաստեցին ձեռնարկի հաջողությանը:

Գեղարվեստական բաժնում օպերային երգիչ Գևորգ Հունանյանը ներկայացրեց «Կիլիկիա» և «Մոկաց Միրզա» երգերը իր յուրահատուկ կատարումով: Այնուհետև ելույթ ունեցան տեր և տիկին Ավետիս և Սիլվա Օհանյանները (դաշնամուր և ֆիսհարմոն) կատարելով Սայաթ Նովայի «Աշխարհումս ախ չիմ քաշի», «Սոխակ» ժողովրդական մեղեդին և Հ[illegible]ինյանի «Տոնական»ը, իսկ դաշնամուրը չլռեց մինչև վերջ տիկին Սիլվա Օհանյանի և օր. Լուսինե Կվրյանի կատարմամբ: Ձեռնարկի եկամուտը պիտի

1. Տե՛ս «Նոր Հայաստան», Հինգշաբթի, Յունիս 23, 1994:

հատկացվի Երևանի Համո Բեկնազարյանի անվան կինոստուդիային (ծախված լուսանկարների եկամուտ կամ նվիրատվություն):

Ցուցահանդեսին ներկա էր Երևանի Հակոբ Պարոնյանի անվան Երաժշտական Կոմեդիայի թատրոնի դերասանական խումբը, տնօրեն՝ Երվանդ Ղազանչյանի գլխավորությամբ:

ՊՀՄ-ն շնորհակալություն է հայտնում ցուցահանդեսի կազմակերպչական աշխատանքներին մասնակցող՝ դերասան Հարություն Ֆողույյանին, վարչության անդամներ՝ Սեդա Կվրյանին և Գևորգ Գալչյանին, լուսանկարների տակերը գրող և լուսանկարող՝ Գրիգոր Գոնդուրաչյանին, բոլոր արվեստագետներին և արվեստասերներին, որոնք իրենց ներկայությամբ նպաստեցին ձեռնարկի հաջողությանը և քաջալերեցին նրա հեղինակին ու միությանը, որն իր ջանքերը չի խնայում հայապահպանման գործում:

## ԲԱՑՄԱՆ ԽՈՍՔ

Սիրելի հայրենակիցներ, հարգելի հյուրեր, սիրելի արվեստագետներ, ՊՀՄ-ի վարչության անունից շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ, որ հարգելով մեր հրավերը, այսօր ներկա եք այս լուսանկարչական ցուցահանդեսին, որը բոլորիս մոտ հիշողություններ է արթնացնում մեր արվեստագետների հիանալի ելույթների մասին ամենուր, որոնք ապրեցին, ապրում են և պիտի ապրեն ժողովրդի հետ միասին, նրան պարգևելով և՛ խինդ, և՛ ծիծաղ, և՛ հայրենասիրություն, և՛ միասնություն և ամենակարևորը՝ ապրելու հույս, որովհետև մշակույթ չունեցող ազգը չի կարող հարատևել:

Շնորհակալություն Հայաստանի ժողովրդական արտիստուհի Վարդուհի Վարդերեսյանին և արվեստի վաստակավոր գործիչ Գևորգ Աբաջյանին, որոնք այսօր ներկա են այս ձեռնարկին:

Շնորհակալություն Երևանի Հակոբ Պարոնյանի անվան Երաժշտական Կոմեդիայի թատրոնի դերասանական խմբին, տնօրեն՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Երվանդ Ղազանչյան, ՀՀ ժողովրդական դերասան Կարպ Խանչվանքյան, ՀՀ ժողովրդական դերասաններ Մելինե Համամջյան, Սվետլանա Գրիգորյան և Ստեփան Հարությունյան, որ իր հետ բերել է Հայրենիքի բույրը և ապագայի հույսը սփյուռքահայերին, որ մենք լինենք միասին և միասնական ճակատով դիմագրավելով դժվարությունները կերտենք մեր Հայրենիքը, որպեսզի հայ ժողովուրդը շարունակի ստեղծագործ աշխատանքը, ապրելով խաղաղության մեջ և ապագա սերունդներին թողնելով իր ժառանգությունը:

Այս լուսանկարչական ցուցահանդեսը պետք է կազմակերպվեր մեկ տարի հետո, որովհետև, չնայած ներկայացված լուսանկարների բազմազանությանը, այն պետք է ամբողջացվեր սփյուռքահայ արվեստագետների (հատկապես Լոս Անջելեսի) լուսանկարներով, սակայն նկատի ունենալով հայրենի արվեստագետների ներկայությունը Լոս Անջելեսում, որոշվեց առիթը օգտագործել և այն կազմակերպել: Այս կապակցությամբ վարչությունը իր ներողամտությունն է խնդրում սփյուռքահայ արվեստագետներից:

Մանվել Մարաշյանը երկար տարիների աշխատանքով ստեղծած իր լուսանկարները այսօր ներկայացնում է մեր մշակութասերներին, նրանց թողնելով գնահատականը:

ՊՀՄ-ն հովանավորում է այս ձեռնարկը, գիտակցելով մշակույթի դերը, հատկապես Սփյուռքի հայապահպանման գործում, և սա առաջին ձեռնարկը չէ. նա հովանավորել է Վահան Տերյանի «Միթե վերջին պոետն եմ ես...»



պոետիկ, «Երգիծանք» թատրոնի «Գնա՞նք, թե՞ մնանք» ներկայացումները, կազմակերպել է գրող Նշան Շահենի «Փշուր-փշուր մանկություն» գրքի գինեձոնը և ահա այսօր հովանավորում է իր վարչականի ներկայացրած արվեստագետների լուսանկարների ցուցահանդեսը, որի համար հպարտ է և պիտի շարունակի իր մշակութային գործունեությունը, որպեսզի հնարավորին չափով երկարաձգվի հայապահպանումը, մինչև որ հնարավորություններ ստեղծվեն ընդմիշտ վերադառնալու հայրենի տուն:

Շնորհակալություն բոլորիդ և ուրախ վայելում:

**Մայր Մարիամ Սողանալյանից ստացված Հուլիս 22, 1994 Թվակիր նամակը ներկայացնում եմ ընթերցողին առանց մեկնաբանության.**

1994 Յուլիս 22, Բրնկհամտոն, Նիւ Յորք

Շատ սիրելի և հարգելի Պէյլանի Հայրենակցական Միութեան նախագահ, յարգարժան Վահան Պահարեան, նախ և առաջ ձեր և բոլոր հայրենակիցներուն անգին որպեսութիւնը կը հարցնեմ, յուսամ բոլորդ ալ ուրախ և հանգիստ էք, իսկ մեզ ալ հարցնելու ըլլաք, փառք տիրոջ այժմ հանգիստ ենք և կարոտով կբարեւենք ձեր բոլորին:

Յարգելի տղաս Վահան, շնորհակալութեամբ ստացած եմ քու բոլոր գողտրիկ գրութիւններդ, շատ կը գնահատեմ քեզի և կը հիանամ, որ ամեն ձեր ձեռնարկներուն պէս կը հրաւիրեք և տեղյակ կը պահեք: Նոյնպէս «Նոր Կեանք»ի մէջ ուշի-ուշով կը հետեւիմ ձեր ձեռնարկներու մասին գրուած գրութիւններուն և կարդալով ուրախ կ'ըլլամ, որ քեզի պէս կարող նախագահ մը ունինք իբրեւ պէյլանցիներուն պատիւ բերող ... Երբ թերթերը ստանամ, առաջին անգամ «Նոր Կեանք»ը կը նայիմ, թէ այս անգամ պէյլանցիները ինչ ձեռնարկ ունին: Կարդալով Արմէն Տոնօյեանի հարցերուն քու պատասխանները հիացայ, Վահան Տէրեանին մասին ... , անցեալները Սիլվա Կապուտիկեանի մասին գրութիւնդ, քեզի շատ շնորհակալութիւն կը յայտնէր դեսպան Ռուբէն Շուգարեանը, շատ ցաւ կզացի, որ այդ գրութիւնդ չի կարդացի, այդ թերթին թիւը ձեռքըս չանցաւ: Այդ կինը կատարեալ նախանձ մըն է ..., ժամանակին Պարոյր Սեւակի ետեւէն կիյնար, մինչև գլուխը չի կերաւ չի հանգստացաւ, բանաստեղծին գրութիւնը միշտ կը կարդայի: Ես և Զօհրապը իր մահուան շատ ցաւ կզացինք: Այդ կինը ինչ կ'ուզէ նախագահէն: Ինք կըռ պօլշեւիկ մըն է, իր հին գլուխը չի փոխեր:

Շատ-շատ յարգելի Վահան, ուրախ և հպարտ եմ ես իմ պէյլանցիներէս: Թէեւ Հայրենիք գացիք, բաւական նեղութիւններ քաշեցիք, բայց Հայրենիքը ձեզի լաւ ուսում տուաւ և ուրախ եմ, որ դուք ձեր ջանքերով կորսուած Պէյլանը ողջցուցիք և այսօր ձեզմով կը բարձրանայ, ապրի՛ք:

Յարգելի նախագահ, անցեալ օր ձեզմէ նամակ մը ստացայ, թե Մարիամ Սողանալեան սրահին մէջ լուսանկարչական ձեռնարկ մը պիտի ընեք եղեր: Շատ ուրախացա, քանի որ առաջին անգամ ըլլալով իմ անունս հիշվեց սրահի հետ որպէս Մարիամ Սողանալեան սրահ: Այդ սրահի մեջ ժողով, հոգեճաշ և այլ ձեռնարկներ կ'ընեն, միայն կը հիշեն որպէս Սողանալեան սրահ: Շատ շնորհկալ եմ ձեզմէ անունս հիշելու համար: Երբ շենքը կը շինուէր ես ու Շըրլին երեք անգամ այցելեցինք, Տաթև Սրբազանը և տնօրենը ներկայ էին, այն ատեն միշտ անունս կը յիշուէր, իսկ յետոյ մոռցուեցաւ: Կխնդրեմ, որ եթէ այդ սրահով բաւելիք ձեռնարկ մը ունենաք, իմ անունով Տաթեւ

Սրբազանէն պահանջեցէք, թող ձեզի տրամադրէ այդ սենեակը, սիրով գործածեցէք:

Սիրելի տղաս Վահան, կաղօթեմ, որ Աստուած ձեզի երկար կեանք տայ և պէյլանցիներու վրայէն ջուքդ պակաս չ'ընէ, յուսամ օր մը բոլոր միութիւններէն ամէնաբարձրը դուք կ'ըլլաք, որովհետև բոլորդ սիրով կ'աշխատիք:

Յարգելի Վահան, օր մը առիթը չ'ունեցայ քեզի հարցնելու, թէ մամա ունի՞ս, թէ ոչ, միայն հարցուցի ամուսնացա՞ծ ես, ըսիր ոչ: Դուն իմ Զօհրապիս պէս ես, նա էլ ամուսնացած չէ: Սիրելի Վահան, թերևս գրութիւնս չես կրնար կարդալ, ներողամիտ կ'ըլլաս, որովհետև աչքի գործողութիւն պիտի ունենամ:

Իմ սիրալիր յարգանքներս և համբոյրներս քեզի և ընտանեկան պարագաներուդ:

Ձեզ միշտ յարգող՝ մայր Մարիձա Սողանալեան:

ՊՀՄ-ն, լուծելով դաշտահանդեսի (կիրակի, սեպտեմբեր 4, 1904 թ.) և ՃՊ-ի (շաբաթ, դեկտեմբեր 17, 1994 թ.) օրացույցը, օգոստոս 14-19-ին ակտիվորեն մասնակցեց ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին նվիրված միջոցառումներին Լոս Անջելեսում, ուր ժամանեց նա Սպիտակ Տանը օգոստոսի 9-ին սկսած ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնի և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպումներից հետո:

Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ընդունելության կազմակերպիչ հանձնախումբը բաղկացած էր լոսանջելեսահայ 40 կազմակերպություններից, որոնց մեջ էին նաև ավանդական երեք կուսակցությունները և ՀՄՄՄ-ն, որի ներկայացուցիչը ես էի:

Նախագահին դիմավորելու համար հրավիրատոմսեր բաժանվեցին: Օգոստոս 14-ին կեսօրվա ժամը 12-ին Ալեք Մանուկյանի անձնական օդանավով Լևոն Տեր-Պետրոսյանը ժամանեց Լոս Անջելեսի գլխավոր օդանավակայանը: ՊՀՄ-ի կողմից դիմավորողների թիվը 12 էր, իսկ նույն օրվա երեկոյան ժամը 6-ին Convention Center-ում նրա հետ հանդիպմանը՝ 15:

Նրա պատվին կազմակերպված ճաշկերույթը տեղի ունեցավ The Beverly Hilton հյուրանոցի սրահում, որին մասնակցեցին շուրջ 3000 հոգի: Կալիֆորնիայի նահանգից ներկա էին բազմաթիվ բարձրաստիճան հյուրեր, հյուպատոսներ և այլ պաշտոնական անձինք[1]: Ճաշկերույթի ժամանակ բոլոր ելույթ ունեցողներն էլ բարձր գնահատեցին Լևոն Տեր-Պետրոսյանի անձնավորությունը և նրա գործունեությունը նորանկախ Հայաստանի պետականության կայացման գործում: Նա հրաժեշտ տվեց հանձնախմբին ու Լոս Անջելեսին օգոստոսի 19-ին:

1. Նրա այցելության առթիվ գրված երկու հոդվածներս՝ «Բարի գալուստ նախագահին», և «Նախագահը Ամերիկայում: վերլուծական ակնարկ», տե՛ս Շարունակվող Մեղեդի, Երևան, 2001 թ. «Զանգակ-97», էջ 51 և 53:



1994 թ. օգոստոս 18-ին, հինգշաբթի օրը, Երևանի ժամանակով առավոտյան ժամը 7:15-ին Երևանի Հայրապետական իր բնակարանում վախճանվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսը: Հայոց պատմության մեջ նա եղավ հայ ժողովրդի լավագույն ռահվիրաներից մեկը և արժանացավ «Շինարար» կոչման (այս առթիվ ՊՀՄ-ի վարչության ուղարկած հեռագիրը տե՛ս հավելված էջ 442):

Սեպտեմբերի 4-ին կազմակերպված դաշտահանդեսը մեծ հաջողությամբ անցավ: Աշխատում էինք դաշտահանդեսներում երգիչ ու նվագախումբ ունենալ, քանի որ այն ավելի աշխույժ էր անցնում: Անկախ նրա հաջողությունից, հաշվետվության ժամանակ քննարկվեցին տեղ գտած թերությունները:

Իմ ատենապետության ժամանակ մշակութային գործունեությունը եղավ ՊՀՄ-ի վարչության ծրագրերի անբաժանելի մասը: ՊՀՄ-ի վարչությունը ակտիվ մասնակցություն բերեց սույն թվի սեպտեմբերի 9-ի Վահրամ Հաճյանի «Կյանքս գլխիս փորձանք դարձավ» հեղինակային համերգին[1]:

ՊՀՄ-ի վարչության հիմնական մտահոգությունը հայրենի ժողովրդի աննախանձելի վիճակն էր, որի համար նա շարունակում էր հանգանակությունը Լոս Անջելեսի իր հայրենակիցներից: 9-06-94 վՆ-ում որոշվեց Հայաստանի հայրենակիցներին հատկացնել 4000 դոլար օգնություն, որը իրականացնելու էին Գրիգոր Դովլաթյանը և Հարություն Հարությունյանը, որոնք մեկնելու էին Երևան սեպտեմբերի 12-ին: Այսպիսով, առանց միության հաշվին ճանապարհածախսի, իրականացվելու էր օգնության բաժանումը տվյալ նիստում նախատեսված 5 դոլարով՝ անձի գլուխ:

Սեպտեմբեր 24, 1994 թ. «Եղեռնի 80-ամյակի ոգեկոչման մարմին»ի կողմից միության ուղղված հատուկ նամակի հիման վրա (տե՛ս բնագիրը հավելված էջ 443) ՊՀՄ-ի վարչությունը իր մասնակցությունը բերեց նրա աշխատանքներին:

Սույն նիստում որոշվեց նաև ճաշի սեղանի շուրջ հանդիպում կազմակերպել Սարգիս Սողանալյանի հետ, որը տեղի ունեցավ Սարգիս Գյոզալյանի տանը՝ ջերմ մթնոլորտում:

Հոկտեմբերի 9, 1994 թվակիր նամակով ՀՅԴ-ի Արևմտյան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեն ՊՀՄ-ին հրավիրեց իր նոր կենտրոնի բացման հանդիսության, որը տեղի ունեցավ կիրակի, հոկտեմբեր 23, 1994 թ., 104 N. Belmont St., Glendale:

1. Այդ մասին հոդվածս՝ «Կյանքի ելևէջներով: Կյանքը գլխիս փորձանք դարձավ», տե՛ս Շարունակվող Մեղեդի, Երևան, 2001 թ., «Զանգակ-97», էջ 342:

Հայը սովոր է ծաղկեցնել բոլոր այն վայրերը, որտեղ ոտք է դնում: Այս առիթը առավել ևս ուրախալի է, որովհետև հայկական կազմակերպության, տվյալ դեպքում ՀՅԴ-ի սեփականությունն է այն և պետք է ծառայի հարազատ ժողովրդին: Մեր միության կողմից մասնակցեցի այդ հանդիսությանը: Այցելուները ծանոթացան շենքի հարմարությունների հետ, մամլո ասուլիսով փակվեց հանդիսությունը:

11-25-94 ՎՆ-ում քննարկվեց ԾՊ-ի հարցը, ինչպես նաև նկատի ունենալով Արա Պետրոսյանի 6-ամսյա աշխատանքային գործունեությունը վարչության մեջ, նա միաձայն ընդունվեց որպես հիմնական անդամ և այնուհետև ընտրվեց քարտուղար:

Դեկտեմբերի առաջին օրերին, մի երեկո հեռախոսը զանգեց: Ալիս Կապլանջյանն էր: Զարմացա, մինչև հիմա էլ ականջներիս մեջ զնգում են իր արհամարհական խոսքերը. «Ո՛չ շաբաթ օրն ենք տանը, ո՛չ էլ կիրակի օրը»՝ երբ ուզում էի այցելել՝ լուծելու համար միջոցառման վերաբերյալ դրամական հարցերը: Անցել էր մեկ տարուց ավելի: Նրանք (ամուսիններով) ո՛չ մեր միջոցառումներին էին մասնակցել, ո՛չ էլ ուրիշ առիթով էինք հանդիպել: Քաղաքավարի լսեցի առաջարկը: Նա սկսեց խոսքերի հեղեղով գովաբանել մեր միությունը և վերջապես հայտնեց զանգահարելու նպատակը, թե, նոր ներկայացում են պատրաստում Վարդուհի Վարդերեսյանի հետ՝ «Ծառերը կանգնած են մահանում» և, չնայած համայնքում շատ միություններ կան, բայց որպես բեյլանցու զավակ, հիշելով նաև հորը, ուզում է, որ այն հովանավորի մեր միությունը: Խոստացա նրա առաջարկը քննարկել վարչության նիստում:

12-12-94 թ. ՎՆ-ում լուսաբանեցի հարցը՝ հիշեցնելով, թե ինչպես, երբ ՊՀՄ-ն հովանավորեց «Միթե վերջին պոետն եմ ես ...» ներկայացումը, Ալիսն ու ամուսինը՝ Ալեքսը պատշաճ վերաբերմունք չունեցան վարչության նկատմամբ և տեղի ունեցած տհաճ երևույթների համառոտագրությունը ներկայացրեցի վարչության քննարկմանը: Բոլոր վարչականները հայտնեցին իրենց կարծիքները: Դժբախտաբար, Գևորգ Գազջյանը ոչ մեկի ելույթը չի արձանագրել, միայն քվեարկության արդյունքներն է գրանցել: Աշխատեցի գրանցել նրանց ելույթները արձանագրությունը խմբագրելիս, բայց միայն Արա Պետրոսյանի խոսքը ավելացրեցի.

Եթե Ալիսը չի հարգել և պատշաճություն չի ցուցաբերել վարչության նկատմամբ, չի մասնակցել վարչության միջոցառումներին և հեռու մնալով նրանից, այսօր է հիշել նրա գոյության մասին, ես դեմ եմ այդպիսիներին հովանավորելու:





ՀՅԴ-ն Արևմտյան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեի նոր կենտրոնը:

Հարցի քննարկմանը ներկա էին վարչության 9 անդամներից 8-ը: Միջոցառումը հովանավորելու «դեմ» քվեարկեցին 5-ը՝ Արա Պետրոսյան, Սարգիս Գյոզալյան, Սարգիս Խորշիդյան, Գրիգոր Դովլաթյան և Վահան Բահարյան, 2-ը՝ Մանվել Մարաշյանը և Գևորգ Գազջյանը «կողմ», մեկը՝ Հարություն Հարությունյանը ձեռնպահ մնաց: Ըստ իմ ենթադրության, վերջին 3 վարչականները հարցը «կապեցին» Ալիսի հետ իրենց մոտիկ հարաբերություններին:

Առաջարկեցի գրածս ձևակերպել որպես նամակ և ուղարկել նրան, բայց, որպեսզի մթնոլորտը չթեժանա, որոշվեց հեռախոսով հայտնել որոշումը, որը հանձն առավ Գևորգ Գազջյանը:

**Medical Outreach for Armenians., Inc.**-ի կազմակերպած թելեթոնին, որը տեղի ունեցավ նոյեմբեր 24,1994 թ., ՊՀՄ-ն նվիրեց

500 դոլար (չեք #349, 11-24-94 թ.)։ Այս առթիվ թելեթոնի ժամանակ հետևյալ ելույթը ունեցա.

Սիրելի հայրենակիցներ, այս տարվա թելեթոնը յուրահատուկ է այն իմաստով, որ **Medical Outreach**-ի հետ մասնակցում են **6** միություններ, որոնք գիտակցելով պահի լրջությունը, Հայրենիքին օգնելու նպատակով ստեղծեցին կուռ միասնություն ու լծվեցին այս ազգօգուտ գործին։ Ի տարբերություն ամեն տարվա Արցախի կարիքներին նվիրված թելեթոնի, այս տարվա թելեթոնը նվիրված է Հայաստանի և Արցախի հիվանդանոցների արդիականացման, նրանց անհրաժեշտ վիրահատական և այլ բժշկական գործիքներով ու դեղորայքով ապահովելու համար։

Սա, ինքնին հուշում է արդեն այն մասին, որ այսօր ոչ միայն արցախցին է պաշտպանում իր հողը, այլ նրա հետ՝ հայաստանցին ևս, հետևաբար հարյուրավոր վիրավոր ապատամարտիկներին լավագույն բժշկական օգնությունը հասցնելու համար մենք պետք է ձեզ հետ միասին անենք մեր կարելին, որպեսզի նրանք միշտ լինեն պատնեշի վրա Հայրենիքի և Արցախի անկախությունը ապահովելու գործում։

Հայաստանի և Արցախի հիվանդանոցներում նորմալ պայմաններ ստեղծելով՝ ապատամարտիկներին ավելի քաջալերած ու ոգևորած կլինենք, որոնք հիվանդանոց կմտնեն՝ վստահ լինելով, որ շուտով կվերադառնան իրենց պաշտպանական դիրքերը։ Նրանք իրենց կյանքն են կոխում այնտեղ, իսկ յուրաքանչյուրիս պարտքն է չխնայել մեր նյութականը նրանց հաջողության գործում։

Այսօր ռազմաճակատներում անդորր է տիրում, բայց նրանք այդ օգտագործում են ուժեղացնելով իրենց ռազմաճակատները նորանոր պենքերով, չհրաժարվելով Արցախի հարցը պենքով լուծելու մտադրությունից։ Հետևաբար մենք միշտ պատրաստ պետք է լինենք նրանց ջախջախիչ հարված հասցնելու համար, իսկ այդ կարելի է իրականացնել միայն հզոր բանակ և հզոր թիկունք ունենալու դեպքում, իսկ վերջինիս ամենակարևոր մասերից մեկը հիվանդանոցների նորմալ աշխատանքն է։ Մենք շնորհակալ ենք բոլորից, որ ամեն տարի մի մարդու նման արձագանքում եք մեր կոչին։ Շատ հավանական է, որ մոտակա տարիները վճռականորեն ընդմիշտ վերջ տրվի պատերազմին։

Հետևաբար, եկեք մի անգամ ևս ցույց տանք աշխարհին և Հայրենիքին, որ մենք միասնական, ամուր թելերով կապված ու կանգնած ենք նրա կողքին՝ հանուն մեր վեհ նպատակների իրականացման, ուստի մի վայրկյան իսկ մի տատանվեք մասնակցելու թելեթոնին ձեր նվիրատվություններով։

Մենք բոլորս հպարտ ենք անկախ Հայրենիքով և միշտ նրա հետ պիտի լինենք մինչև որ հավաքվենք նրա շուրջը՝ իրականացած տեսնելով մեր պահանջատիրության վարդագույն երազները։

Թո՛ղ կեցցեն մեր ժողովրդի փառապանծ զավակները, որոնք մեր սեգ ժայրերի ու սարերի վեհ արծիվների նման հսկում են Հայրենիքի ու Արցախի ապահովությանն ու գոյատևմանը, և մոտ է այն օրը, որ մեր երազներից մեկը՝ Արցախը ազատ տեսնելը իրականանա։

Նորից շնորհակալություն բոլորիդ ձեր անկեղծ օգնության համար Հայրենիքին ու Արցախին։

**Սողանալյան ընտանիքի հարազատներից Մանուշակ Քյուփելյանի մահվան կապակցությամբ ՊՀՄ-ի վարչությունը ցա-**



**վակցություն հայտնեց հարազատներին։**

**Սեպտեմբեր 22, 1994 թվակիր նամակ ստացա Մայր Մարիձա Սողանալյանից, որը 9-05-94 թ. նրան իմ գրած նամակի (տե՛ս հավելված էջ 444-445) պատասխանն էր։ Ընդհանուր տեղեկություններից հետո Մարիձա նենեն գրում էր, որ տղան՝ Սարգիսը, հարցնում է, թե ե՞րբ է լինելու միության ՃՊ-ն և խնդրում էր կապվել նրա հետ Մայամիի իր տան հեռախոսով։ Չնայած նրա համար դժվար էր դեկտեմբերի 17-ին մասնակցել ՃՊ-ին, բայց նա մասնակցեց։**

**Ս. Սողանալյանը դեկտեմբերի 24-ից մինչև Նոր Տարվա սկիզբները չի աշխատում։ Այդ օրերը նա անցկացնում է իր հարազատների և մտերիմների հետ։**

**Իմ խոսքը ՃՊ-ի ժամանակ.**

Սիրելի հայրենակիցներ, այսօրվա ՃՊ-ն հովանավորում է Կարո Սողանալյանը, իսկ նախագահում են տեր և տիկին Սարգիս և Շըրլի Սողանալյանները, պատվո նախագահուհին է տիկին Մարիձա Սողանալյանը։

Մեր համայնքին ու Հայրենիքին քաջ հայտնի է Սողանալյանների օգնությունը, և իզուր չէ, որ մենք հպարտանում ենք նրանցով՝ որպես ազգային բարերարների։ Չնախատեսված հանգամանքների բերումով ՃՊ-ին ներկա է միայն Սարգիս Սողանալյանն իր մի խումբ բարեկամներով, տեր և տիկին՝ Հերի Տիրամիրյան, Սեպուհ Քեմանճյան, Վարդիվար Շնորհավորյան, Հակոբ Շնորհավորյան։ Այսօր այստեղ ներկա են նաև հայրենի արվեստագետներ Վարդուհի Վարդերեսյանը և Գևորգ Աբաջյանը, Հայհեռուստաժամի տնօրեններ տեր և տիկին Սարգի և Քեթի Մուրադյան, Չորք-Մարզպանի ՀՄ-ի ատենապետ տեր և տիկին Նուպար և Մարո Հակոբյան, Հաճնի ՀՄ-ի ատենապետ տեր և տիկին Հարություն և Շաքե Չոպանյան։

ՃՊ-ին հրավիրված են նաև **1915** թ. Մեծ եղեռնից վերապրողներ, որոնց տարիքները **80-100**-ի շեմին են. տեր և տիկին՝ Հակոբ և Նվարդ Գասպարյան, Կարապետ և Վիկտորիա Բոյաջյան, Աբրահամ և Վերթայիմ Էքշիյան, տիկին Նվեր Ալպայան, տիկին Լուսյա Թաշչյան, տիկին Եղիսաբեթ Կվրյան, պրն. Երվանդ Տեր-Հարությունյան, տիկին Մարիամ Մկրտչյան։

Բոլորդ էլ բարով եք եկել, և ուրախ ենք, որ միշտ կողքից եք կանգնում միությանը՝ հավատալով նրա ազգօգուտ գործունեությանը։

Մեր միության հիմնական նպատակն է պայքարել հանուն հայապահպանման և օգնել Հայրենիքի պետականության կայացմանը։

Այսօր մենք հպարտ ենք, որ աշխարհի ամենահարուստ գրապահաններից մեկը՝ Մատենադարանը գտնվում է Երևանում և պատմության շատ հետազոտողներ օգտվում են դրա հազարավոր ձեռագրերից։ Հետևաբար պետք է օգնենք Հայրենիքին, որպեսզի ամուր պահենք անկախությունը, որից և կախված է մեր անգնահատելի արժեքների պահպանումը։ Ձեր նվիրատվությունների միջոցով է, որ մեր միությունը կարողանում է օգնության իր բաժինը բերել Հայրենիքին։

Յուրաքանչյուր տարվա ՃՊ-ն մեր վարչության հաշվետվությունն է տվյալ տարվա համար, ուստի ձեզ ներկայացնում եմ այդ ամփոփ կերպով։

**1994** թ. միությունը նվիրել է.

1. Ձմեռ-94 ծրագրին **(Armenian Fund)**– 300 դոլար։

2. Արցախի Սրբական Պարգև Մարտիրոսյանին (**W. D. Armenian Church Fund**)– 500 դոլար:

3. Թելեթոնին (**Medical Outreach for Armenians, Inc.**) – 500 դոլար:

5. Հայաստանի կարիքավոր հայրենակիցներին մեր վարչականների միջոցով անձամբ բաժանվել է 5200 դոլար:

Այսպիսով այս տարվա ընդհանուր օգնությունը մեր Հայրենիքին ու ժողովրդին կազմում է 6700 դոլար, իսկ միության երեք տարվա օգնությունը կարիքավոր ընտանիքներին կազմում է 10500 դոլար, որը մեր միության համար պատկառելի գումար է, եթե նկատի ունենանք նրա ֆինանսական աննախանձելի վիճակը:

Վերոնշյալ օգնությունները ձեր միջոցով է եղել, ուստի վարչության անունից շնորհակալություն հայտնելով ձեզ, միաժամանակ կոչ եմ անում չդադարեցնել օգնությունը Հայրենիքին, նկատի ունենալով նրա ներկա դժվարին պայմանները:

Ինչպես տեսնում եք, գումարների կզալի մասը հատկացվել է Արցախին, որի հարցը հանդիսանում է Հայրենիքի հիմնահարցերից մեկը: Արցախում մեր ժողովուրդը չունի ամենաէական կենցաղային պայմանները՝ ջուր և էներգիա չկա, չկան բարվոք ճանապարհներ Արցախի բնակավայրերը իրար հետ և Արցախը Հայաստանի հետ կապող, մի հանգամանք, որը պահանջում է լուծում:

Ըստ ՀՀ փոխնախագահ Գագիկ Հարությունյանի, 1995 թ. «ՀԱՅԱՍՏԱՆ» հիմնադրամի ֆոնդի երկուերրորդ մասը նախատեսված է Արցախի վերակառուցման ծրագրին:

Այսօր ուրախանալով Արցախի հաջողություններով, նրա հաղթական երթով, ավելի ակտիվորեն պետք է մասնակցել նրա պետականության ամրապնդմանը և վերակառուցման աշխատանքներին՝ շարունակաբար: Եւ այդ նպատակները կարող ենք իրականացնել միայն այն դեպքում, երբ մշտական միասնական օգնություն ցույց տանք Հայրենիքին՝ անդամագրվելով «ՀԱՅԱՍՏԱՆ» հիմնադրամին և վճարելով ամսական 5, 10, 20, 100, 1 000 և ավելի, որքան կարող ենք:

Միությունն ակտիվորեն մասնակցում է նաև համայնքի մշակութային կյանքին: Այս տարի կազմակերպեց գրող Նշան Շահենի «Փշուր-փշուր մանկություն» գրքի գինեձոնը, հովանավորում է «Երգիծանք» թատրոնի ներկայացումները՝ օգնելով մեր արվեստագետներին և սատար կանգնելով հայապահպանման գործունեությանը:

Վերջում ուզում եմ մէկ անգամ ևս շեշտել, որ առանց հզոր Հայրենիքի Սփյուռքը չի կարող գոյատևել, ուստի մեր նշանաբանը պետք է լինի նեցուկ մնալ Հայրենիքի անկախ պետականությանը՝ ի բարօրություն հայ ժողովրդի:

***ՃՊ-ի մասին գրեցի հետեւյալ հոդվածը.***

## ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՃՊ-Ն

ՊՀՄ-ի ՃՊ-ն տեղի ունեցավ 1994 թ. դեկտեմբերի 17-ին Վեն Նայսի Ս. Պետրոս եկեղեցու Կարագյոզյան սրահում: ...

Հանդիսավարն էր շնորհալի արվեստագետ, վարչության քարտուղար Սեդա Կվրյանը, որի բարի գալուստի խոսքից հետո սկսվեց խրախճանքը «Մեր Հայրենիք»ով բոլորի մասնակցությամբ: Այնուհետև հայկական երաժըշտության հնչյունների տակ ծայր բռնեցին հայկական պարերը:

Զմռռացվեց Ս. Հակոբը: Առենապետի ելույթից հետո, Հակոբները իրա-





*Բարերարը շրջապատված վարչականներով: Ձախից աջ՝ Մանվել Մարաշլյան, Սարգիս Գյոզալյան, Հարութիւն Հարութիւնյան, Սեդա Կվըյան, Սարգիս Սողանալյան, Վահան Բահարյան, Գրիգոր Դովլաթյան, Սարգիս Խոըշիդյան և Արա Պետրոսյան:*

վիրվեցին իրենց պատվի համար պատվիրված տորթը կտրելու՝ ստանալով նաև օրհնությունը Երևանից ՃՊ-ին մասնակցող հոգևորական Հակոբ Թոփոսյանի: 250 հոգու համար նախատեսված տորթը միության էր նվիրել **Flour de cafe**-ի սեփականատեր Եվնիկ Թամայյանը, իսկ բեմը զարդարող տոնածառը՝ **Artinian Christmas** հաստատությունը: Վարչությունը շնորհակալություն է հայտնում նրանց, իրենց սրտաբուխ նվիրատվությունների համար:

Մթնոլորտը ջերմացրին տաս տարեկան Եղիսաբեթ Հարությունյանը և 11 տարեկան Միլենա Հայրիյանը հայրենասիրական բանաստեղծություններով, ինչպես նաև հայրենի արվեստագետ Վարդուհի Վարդերեսյանը:

Մեծ եղեռնից վերապրողներին վարչության կողմից նվիրվեցին գեղեցիկ օրացույցներ:

Այս խանդավառ մթնոլորտում ՃՊ-ի նախագահ, ազգային մեծ բարերար Սարգիս Սողանալյանը 150000 դոլարի խոստում կատարեց որպես կանխավճար սրահի գնման համար, որպեսզի ՊՀՄ-ն հաջորդ տարի ՃՊ-ն կատարի իր նոր սեփական սրահում: Այս ջերմ մթնոլորտից ոգևորվելով, **Aleco** հաստատության սեփականատեր տեր և տիկին Հերի Տիրամիրյանները խոստացան նոր սրահը կահավորել անհրաժեշտ սեղաններով և աթոռներով: Մեծ բարերարի բարեկամներից մեկը, որը չուզեց իր անունը գրվի, խոստացավ սրահի խոհանոցը ապահովել անհրաժեշտ սարքավորումներով: Մայր Մարիձա Սողանալյանը հանձն առավ վճարել սույն օրվա ՃՊ-ի ծախսերը: Նվիրատվություններ եղան:

Այնուհետև ազգային բարերարը քաջալերելով և գնահատելով արվեստագետ Գևորգ Աբաջյանի բերած նպաստը հայ արվեստին, նրա նոր տպագրված «Գյումրիի թատրոնի մարդիկ» գրքից 100 օրինակ նվիրեց Գյումրիին:

Վարչությունը իր խորին շնորհակալությունն է հայտնում ազգային բարերար Սարգիս Սողանալյանին և գերդաստանին իր իշխանավայել նվիրատվության համար, ինչպես նաև Տիրամիրյանին և ոմն բարեկամին իրենց սրտաբուխ նվիրատվությունների համար:

Հանձին Սարգիս Սողանալյանի՝ մենք բարձր ենք գնահատում բոլոր ազգային բարերարներին ու նվիրատուներին, որոնք, լավ գիտակցելով ազգային արժեքների արժեվորումը, հայապահպանման դժվարին պայքարը, իրենց նյութական միջոցները չեն խնայում մեր ժողովրդին օգնելու համար այդ վսեմ նպատակների իրականացման համար:

«Միրեյի Վ. Պահարեան, ներփակ կը ղրկեմ 25 տոլարի վկայագիր մը (չնչին նուէր) մօրս յիշատակին: Սողանալեանի մայրը իմ մօրս ազգականն է: Կը շնորհաւորեմ ձեր ձեռնարկը եւ կատարեալ յաջողութիւն կը մաղթեմ: Կինս՝ Նուարդն ալ կը բարեւէ ջերմապէս ձեզ, հայրենակցական միութեան բոլոր անդամներուն ու Սողանալեան ընտանիքը:

... Յաջողութեան մաղթանքներով՝ Սարգիս Պալեան'»:

Ներկաները գոհ հեռացան սրահից, եկող՝ 1995 թ. ՃՊ-ին ներկա լինելու հույսով ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ՍՐԱՀՈՒՄ:

Վարչությունը շնորհակալություն է հայտնում Գաբրիել (Gaby) քեյթըրինկին իր մատչելի գներով համեղ ճաշերի համար, իսկ ես շնորհակալություն եմ հայտնում վարչականներին, որոնք աշխատեցին, որպեսզի բարձր մակարդակով անցնի ՃՊ-ն: Վարձքերնիդ կատար[2]:

**Դեկտեմբերի 19-ի ՎՆ-ում հաշվետվություն տրվեց, ըստ որի՝ միության մաքուր եկամուտը ՃՊ-ից 1348 դոլար 57 սենթ էր:**

**Ըստ բանկի 12-19-94 թ. տվյալների, միության ունեցած գումարը 4951 դոլար և 75 սենթ է:**

1. Ողջույնի խոսքը ասացել էր Մոնրեալից:
2. Տե՛ս «Նոր Հայաստան», Զորեք., Դեկտ. 28, 1994:



## ՀՄՄՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՄՄՄ-ի 02-01-94 թ. նիստում քննարկվեց և որոշվեց Մեծ Եղեռնի հուշատոնը նախատեսել ապրիլի 23-ին Գլենդելի United Community Church-ում: ՀՄՄՄ-ի կենտրոնի հարցով՝ որոշվեց, որ Գրիգոր Շենյանը Վահան Շամլյանին ցույց տա Եփրեմյան սրահը:

ՀՄՄՄ-ի 3-01-94 նիստում քննարկվեց հուշատոնին ելույթ ունեցողների, «Հայաստան-Արցախ մեկ դոլար ֆոնդ»-ի հարցերը և այլ մանրամասներ: Հավաքվել էր 8979 դոլար: Որոշվեց ՀՄՄՄ-ի բանկային հաշվից այդ գումարը հասցնել 10000 դոլարի և ծրագրեր կազմել Արցախի որբերին օգնելու համար:

Ինչպես նշել ենք նախորդ էջերում, մարտի 25-ին տեղի ունեցած Արցախին նվիրված ճաշկերույթի ժամանակ այդ 10000 դոլարը նվիրվեց Արցախին, բայց դրա ծախսման նպատակակետը պիտի պարզվեր Գրիգոր Շենյան-Վաչե Արք. Հովսեփյան հանդիպումից հետո: Հարցը այդպես էլ չլուծվեց և մինչև օրս այդ գումարը գտնվում է ՀՄՄՄ-ի բանկային հաշվի մեջ:

ՀՄՄՄ-ի 4-05-94 թ. նիստում Մարտիրոս Իսկենդերյանը ցանկություն հայտնեց իր տանը հյուրասիրել հուշատոնի հայտագրին մասնակցողներին և կազմակերպիչ հանձնախմբին (ՀՄՄՄ): Առաջարկն ընդունվեց:

Հուշատոնին ելույթ ունեցան. Սիլվա Կապուտիկյան՝ ողջույնի խոսքով[1], Լերի Զարյան՝ խոսք, Հակոբ Կարապենց՝ «Հայ մշակույթի կորուստը», Տիգրան Ռսկունի՝ «Մեր քաղաքական կորուստը», Վահան Շամլյան՝ փակման խոսք:

Ելույթ ունեցան արվեստագետներ՝ Էլիզ Թաշչյան, Մելանիա Արոյան, Շաքե Թումանյան և Արփինե Փեհլիվանյան:

Հուշատոնը բավականություն պատճառեց ներկաներին և մի անգամ ևս ամրապնդեց նրանց պահանջատիրական ոգին:

Հուշատոնից հետո Մարտիրոս Իսկենդերյանի տանը շարունակվեց այդ ոգու ամրացումը, պատգամ թողնելով նոր սերունդին, որ Հայ դատի պայքարը նրա ուսերին է ծանրանում:

Արցախի ազատամարտիկներին կապի միջոցներով ապահո-

1. Սիլվա Կապուտիկյանը Լոս Անջելեսում էր գտնվում Թեքեյան մշակութային միության հրավերով՝ իր 75-ամյա հոբելյանը նշելու կապակցությամբ: Ապրիլի 15-ին իր հոբելյանին նվիրված երեկոյին նա հիասթափեցրեց ներկաներին, որոնց մի մասը դժգոհության արտահայտություններով հեռացավ հանդիսասրահից: Այդ կապակցությամբ գրեցի «Բաց նամակ Սիլվա Կապուտիկյանին» հոդվածը, որը տպագրվեց Մասիս և Նոր Հայաստան թերթերում: Տե՛ս Վահան Բահարյան, Շարունակվող Մեղեդի, Երևան, 2001 թ., «Զանգակ-97», էջ 274:

վելու համար, Լոս Անջելեսում մի քանի կազմակերպությունների ջանքերով ստեղծվեց Հանձնախումբ՝ United Karabagh Fund - Միացյալ Ղարաբաղ ֆոնդ:

Հանձնախմբին մասնակցում էին հինգ միություններ՝ Հայրիկ, Հայրենիք, ՀՄՄՄ, Վահագն մշակութային միություն, և Medical Outreach for Armenians, Inc.: ՀՄՄՄ-ի ներկայացուցիչն այդ հանձնախմբում ես էի:

Հանձնախմբի նպատակն էր ստեղծել 100000 դոլար, ձեռք բերել անհրաժեշտ կապի սարքեր և դրանք հասցնել Ղարաբաղի քաջարի մարտիկներին: Կազմակերպվեց ճաշկերույթ՝ կոչելով Արցախյան երեկո: Ճաշկերույթը տեղի ունեցավ Արբատ ռեստորանում: Տոմսի գինը որոշվեց 75 դոլար:

Այդ նպատակի համար նվիրատվություններ կատարեցին ըստ ծանուցման գրքի տվյալների՝ ՀՄՄՄ-ն՝ 500 դոլար, Պէյլանի, Քիլիսի, Այնթապի և Զորք-Մարզպանի ՀՄ-ները՝ 200-ական դոլար: Մարտիրոս Խսկենդերյանը ծանուցման գրքի վերջին էջի համար վճարեց 1000 դոլար:

Ճաշկերույթի ծախսը հոգաց Արբատի տնօրենությունը: Ճաշկերույթի ծանուցման գրքում տպվեց Հանձնախմբի «Մեր Խոսքը», որից բերում եմ մի հատված միայն.

... Արպաթ՝ Ոսկեայ պալատ շքեղ ճաշարանի տնօրէնութիւնը, սոյն երեկոն ամբողջութեամբ նուիրելով Արցախին, համագործակցութեան առիթ ստեղծեց գաղութիս ծանօթ 6 միութիւններուս (6-րդը՝ Անդրանիկ Հարութիւնեան միութիւնը հետո միացաւ-Վ. Բ.), որը գնահատելի երեւոյթ է ու փայլուն սկիզբ՝ ապագայ գործունէութեանց:

Մինչև օրս, Արցախին նուիրուած սփիւռքահայութեան ջանքերը, աւա՜ղ, կը մնան տկար ու անշուք, հակառակ հարուստ ու անսահման կարելիութեանց: Գուցէ մեր միասնականութիւնը, դրական ու խղճամիտ նուիրումը վարակիչ կը դառնան նաեւ այլ միութիւններու, եւ մեր համագործակցութիւնը աւելի հաւատք եւ վստահութիւն կը ներշնչէ մեր գաղութէն ներս: ...

Ներէ՜ր մեզ, սիրելի Արցախ, որ մենք գաղթաշխարհի քո եղբայրներդ ու քոյրերը, մեր հայրենասիրութիւնը ցոյց կու տանք մեր փոխարինելի լումաներով, իսկ դու՝ քո պաւակներու Աստուածատուր, ամենաթանկագին եւ անփոխարինելի կեանքով:

Իհարկե, Հանձնախմբի այս պատգամը պիտի մնա պատգամ այն կազմակերպությունների համար, որոնք հետագայում չարունակեցին մասնակցել նման միջոցառումներին:

ՀՄՄՄ-ում առաջացող ղժգոհությունը՝ կապված Վահան Շամլյանի կողմից խոստացված ՀՄՄՄ-ի կենտրոնը չունենալու, Վահան Շամլյանի ՀՄՄՄ-ի ցկյանս նախագահ ընտրվելու առթիվ իր ելույթի հետևանքով մի քանի ՀՄ-ների հեռանալու, հատկապես Տիգրանակերտի ՀՄ-ի ՀՄՄՄ-ից պաշտոնական նամակով հրա-



ժարվելու հետ լուրջ մտահոգություն ծնեց: ՀՄՄՄ-ի հունիս 7, 1994 թ. նիստում քննարկվեց Տիգրանակերտի նամակը և որոշվեց պատշաճ պատասխան գրել:

ՀՄՄՄ-ից ՀՄ-ների հեռացման կապակցությամբ «Ասպարեզ» օրաթերթում[1] «Օրը Օրին» սյունակում լույս տեսավ նրա խմբագիր՝ Ժան Գոսպգյանի «Իր առաքելութեան անյարիր» հոդվածը, որի մեջ նշվում էր, որ ՀՄՄՄ-ից դուրս են եկել հինգվեց ՀՄ-ներ.

... ՀՄՄՄ-ն դուրս եկող բոլոր ՀՄ-ներն ալ հիմնականին մէջ կը շեշտեն, որ ՀՄՄՄ-ն այսուհետեւ չի ներակայացներ տեղայ ՀՄ-ի եւ թէ ՀՄՄՄ-ն դուրս եկած է իր սկզբնական նպատակների ծիրէն:

Այս կացութեան դէմ յանդիման բնական է մտածել, որ երբ ՀՄՄՄ-ի մասնակից ՀՄ-ներու շուրջ կէսը, եթէ ոչ կէսէն աւելին կը հեռանա իրմէ, ապա ի՞նչ տրամաբանութեամբ այս միութիւնը կը շարունակէ գոյատեւել:

ՀՄ-ները արժէք են հայութեան համար այնքան ժամանակ, որ սոյն միութիւնները կպահպանեն մեր երկրի պատմական տարբեր շրջաններու ժողովրդային սովորութիւնները, բարբառները, մշակոյթը, պատմութիւնը եւ հատկապէս մեր նախնեաց ծննդավայրը վերադառնալու իղձը:

Եթէ բոլոր ՀՄ-ներու մէկտեղումով այս շատ յստակ առաքելութիւնը պիտի չիրականացուի եւ ընդհակառակն պիտի դրուին կացութեան մը առջեւ, որ գաղութես ներս պիտի գործէ մշակութային, ընկերային եւ բարեսիրական նպատակներով քաղաքականացուած նոր կազմակերպութիւն մը, ապա դուրս եկող ՀՄ-ները ամէն իրաւունք ունին յայտնելու, որ ՀՄՄՄ-ն չի կրնար իրենց անունով հրապարակ գալ:

... Շատ հաւանաբար տակաւին պէտքը ունինք աւելին, բայց վստահաբար պէտք չունինք իր առաքելութեանը անյարիր գործունէութեան մէջ գտնուող կազմակերպութիւններու:

Ժամանակին այս հոդվածին պատասխանեց ՀՄՄՄ-ի ատենադպիր՝ Սարգիս Մաճառյանը «Անյարիր առաքելութեան» Ոլորտէն դէպի Միասնականութեան Ակունքները»[2] հոդվածով մոտ երեք էջի վրա ամենայն մանրամասնությամբ: Ես ուզում եմ անցնող տարիների հայացքով հայտնել իմ մտորումները Ժան Գոսպգյանի հոդվածի առթիվ, որից մեջբերեցինք կարևոր պարբերություններ:

Սփյուռքյան բոլոր ՀՄ-ների մեջ տարբեր կուսակցականներ կան, և որոշ ՀՄ-ներ ղեկավարվում են համապատասխան կուսակցության կողմից, որի ներկայացուցչությունը տվյալ ՀՄ-ի վարչության մեջ թվական ուժ է ներկայացնում: ՀՄՄՄ-ից հեռացած վեց ՀՄ-ների՝ «Զեյթուն»-ի, «Մուսա Լեռ»-ի, «Ուրֆա»-ի, «Վան-Վասպուրական»-ի, «Տարոն-Տուրուբերան»-ի և «Տիգրանակերտ»-ի վարչություններում, ըստ իմ ունեցած տեղեկությունների, գլխավոր ուժ էին ներկայացնում ՀՅԴ-ի շարքային կամ համակրող

1. Տե՛ս «Ասպարեզ», թիվ 9841, Հինգշաբթի, Սեպտ. 15, 1994, էջ 1:
2. Տե՛ս «Նոր Կեանք» թիվ 42, Սեպտ. 29, թիվ 43, Հոկտ. 6, 1994, էջ 2:

անդամները: Բավական քաջատեղյակ լինելով ՀՄՄ-ի ներսում տեղի ունեցող անցուդարձերին՝ նրա փոխատենապետը լինելով, նշեմ, որ միությունները նաև տարբեր հանգամանքներով էլ հեռացան ՀՄՄ-ից: Այսպես. «Մուսա Լեռ», «Վան-Վասպուրական», «Տարոն-Տուրուբերան» և «Տիգրանակերտ» ՀՄ-ները հազվադեպ էին մասնակցում ՀՄՄ-ի աշխատանքներին, և նրանց քաղաքականացվածությունը ի հայտ եկավ Վահան Շամլյանի ՀՄՄ-ի ցկյանս նախագահ ընտրվելուց ու նրա անդրանիկ ելույթից հետո: Լոս Անջելեսում ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին դիմավորելիս հանդիպեցի այդ միություններից մեկի ատենապետին և առիթից օգտվելով հարցրեցի իրենց միության հեռանալու պատճառը: Ըստ նրա՝ Վահան Շամլյանի ելույթը դուր չի եկել իրենց: «Ուրֆա»ի ՀՄ-ի հեռացումը տեղի ունեցավ ատենապետի Բեյրութ տեղափոխվելուց հետո, երբ նոր ատենապետ դարձավ ՀՅԴ-ի համակիրը կամ շարքայինը, իսկ «Զեյթուն»ի ՀՄ-ի հեռանալը, կարծում եմ, որոշ անձնական հարցերի հետ էր կապված՝ Գրիգոր Շենյանի և այն ժամանակվա նրա ատենապետ Պողոս Մելքոնյանի միջև, չնայած վերջինս ՀՅԴ-ի շարքային էր:

ՀՄՄ-ի կազմավորումը երբեք էլ դաշնակցության կուսակցության «արտովը» չէր: Եւ եթե հնարավորություն ունենար կչեզոքացներ թեև ոչ-քաղաքական, բայց իրեն մրցակից թվացող ՀՄՄ-ի երևան գալը, ինչպես պատահեց «Հայաստանցիների միության» ստեղծմանը դեպքում. ՀՅԴ-ն իր գործակալներից մեկին խցկեց նախաձեռնողների մեջ, և նախաձեռնողները հաջորդ իսկ նիստից տարբեր պատճառաբանություններով սկսեցին հրաժարվել մասնակցելու միության ստեղծման գաղափարից: Ինձ համար հայտնի էր գործադրվող միջոցը:

Եթե ՀՄՄ-ի 15 ՀՄ-ներից վեցը դուրս եկան նրա կազմից, դա դեռ նրանց «կէսը» կամ «կէսէն աւելին» չէ, ինչպես նշում է Ժան Գուսագյանը: Նա, լավ հասկանալով իր խոսքի իմաստը, թերթի միջոցով քարոզչական աշխատանք էր կատարում՝ նսեմացնելու, անդամալուծելու ՀՄՄ-ի գործունեությունը:

Այո, ՀՄ-ների առաքելությունը իրենց բնօրրանի հայրենակիցներին հայ պահելն է Սփյուռքում՝ բնօրրանի սովորություններով և կարոտախտով, որպեսզի նոր սերունդը օտար ափերում չմոռանա իր նախնիների երկիրը, նրա մեջ չմեռնի ազգային ոգին և Հայ դատը նպատակին հասցնի:

ՀՄ-ները, ըստ իրենց ԾԿ-ի, քաղաքական կուսակցություններ չեն, չեն հարում նրանց կամ հարանվանական բնույթ չունեն, բայց լինելով հայի ազգային ոգին ձևավորող, ազգային դիմագիծը



պահպանող, պահանջատիրության հարցերում ընթացող հասարակական-քաղաքական ելևէջներում իրենց ակտիվությունը դրսևորող կազմակերպություններ, մրցակից են մնում ավանդական կուսակցություններին՝ վտանգելով կուսակցությունների համայնքում ունեցած հեգեմոնիան:

Կուսակցությունների ղեկավարների դերը պետք է լինի ոչ թե ստիպել ՀՄ-ներին՝ հեռանալ ՀՄՄ-ի շարքերից, այլ պետք է օգնեն հզորացնել համայնքում ընդհանուր հավաքական ուժը հանուն հայ ժողովրդի գոյության:

Հետևաբար, մինչև վերոհիշյալ հոդվածի գրված թվականը ՀՄՄ-ն կատարում է պարտականությունը իր «առաքելութեանը յարիր», եթե նրան չխանգարեն դրսից:

Միջհայրենակցական կապերը աշխուժացնելու նպատակով որոշվեց կազմակերպել փոխադարձ ճանաչման ճաշկերույթ-հանդիպում ՀՄ-ների վարչականների և նրանց կանանց մասնակցությամբ ուրբաթ, հուլիս 8, 1994 թ. Մարաշի ՀՄ-ի կենտրոնում (Փասադենա): Մարտիրոս Իսկենդերյանը ստանձնեց օրվա բոլոր ծախսերը: Միջոցառմանը մասնակցեցին 10 ՀՄ-ներ՝ Այնթապի, Էվերեկ-Ֆենեսեի, Կեսարիայի և շրջ., Հաճընի, Մարաշի, Ուրֆայի, Զորք-Մարզպանի, Պէյլանի, Քիլիսի և Յոզղաթի: Մասնակիցների թիվը 160 հոգի էր: Միջոցառումն ուներ պատշաճ հայտագիր և գեղարվեստական բաժին, անցավ բարձր մակարդակով, որի մասին հոդված[1] ներկայացնում եմ ընթերցողին:

ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ՁԵՌՆԱՐԿ
ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՄԱՐՄԻՆ

ՀՄՄ-ն ստեղծվեց 1991 թ., Մարաշի ՀՄ-ի (ՄՀՄ) նախաձեռնությամբ իր սրահում մեծ խանդավառություն առաջացնելով ՀՄ-ների մոտ: Միությունները մոտենալով իրար, ամուր կապեր ստեղծեցին: Առաջին հերթին պատրաստվեց ԾԿ-ն, որը և հանդիսացավ նրա հետագա հաջողությունների գրավականը: ՀՄՄ-ն սկսեց կորացնել ՀՄ-ների միասնության ոգին: ՀՄՄ-ի հիմնական նպատակն է սատարել հայապահպանման գործունեությանը և լինել Հայրենիքի կողքին, օգնել նրա անկախ պետականության ամրապնդմանը:

1994 թ. հուլիսի 8-ին, ուրբաթ օրը ՀՄՄ-ի կազմակերպությամբ տեղի ունեցավ ՀՄ-ների վարչությունների փոխադարձ ճանաչման ճաշկերույթ-հանդիպում նորից ՄՀՄ-ի սրահում: Ճաշկերույթի բոլոր ծախսերը ստանձնեցին «Զանգու Չիքըն» հաստատության տեր՝ տեր և տիկին Մարտիրոս և Ռիտա Իսկենդերյանները:

Նախատեսված 10 ՀՄ-ից բացակա էր Յոզղաթի ՀՄ-ն:

Երեկոն խանդավառեցին շնորհալի արվեստագետներ՝ ջութակահար

1.- Տե՛ս «Նոր Կեանք», թիվ 33, Հուլիս 28, 1994:

Միհրան Շիրինյանը և դաշնակահար Չարլին: Նույնիսկ, երեկոն ավարտվելուց հետո ժողովուրդը կես ժամ էլ վայելեց նրանց հայրենաշունչ ու ոգեշունչ երաժշտությունը:

Շնորհակալության արժանի է լուսանկարիչ Վահե Արթինյանը, որն այդ օրվա ձեռնարկի լուսանկարները նվիրեց ՀՄՄ-ին:

Հանդիսության բացումը կատարեց ՀՄՄ-ի ատենապետ Գրիգոր Շենյանը: Նա ներկաներին բարի գալուստ մաղթելուց հետո նշեց, թե ՀՄՄ-ն այս ձեռնարկը կազմակերպեց հայրենակցականների միջև կապերը ավելի կորացնելու, փոխադարձաբար իրար լավ ճանաչելու և լավագույն գործակցության մթնոլորտ ստեղծելու նպատակով: Այնուհետև նա ասաց.

«Ինչպէս մեր ԾԿ-ն կը շեշտէ, ՀՄՄ-ն երբեք միջամուխ չըլլար բաղկացուցիչ միութեանց ներքին գործերուն կամ ծրագիրներուն, այլ կատարեալ ապատութեան եւ անկախ գործունէութեան հիմունքներով կը տնօրինէ իր գործունէութիւնը: Իւրաքանչիւր միութիւն ազատ է իր տարեկան պարահանդէսը, դաշտագնացութիւնը կամ մշակութային գործունէութիւնը յառաջ տանելու իր յարմար դատած եղանակով: Եւ եթէ ՀՄՄ-ի օժանդակութեան պէտք ունի եւ դիմէ այդ ուղղութեամբ, զոհացում կը ստանայ իր ակնկալութեան:

Մենք լրջօրէն փարած ենք մեր գործին եւ մեր միութեան ցկեանս նախագահ, ազգային բարերար Վահան Շամլեանի նիւթական եւ բարոյական զօրակցութեամբ, կը հաւատանք որ շինիչ ու դրական ծրագիրներ պիտի իրագործենք յառաջիկային:

Կ'ուզեմ յանուն ՀՄՄ-ի շնորհակալութիւն յայտնել «Զանգու Չիքըն» հաստատութեան սեփականատէր՝ տէր և տիկին Մարտիրոս եւ Ռիթա Իսկէնտէրեաններուն, որոնք ստանձնեցին այս երեկոյին բոլոր ծախսերը: Շնորհակալութիւն Մ<Մ-եան վարչութեան, որ ձրիօրէն տրամադրեց այս սրահը: Շնորհակալութիւն նաեւ ձեզ, որ ընդառաջեցիք մեր հրաւէրին եւ ձեր ներկայութեամբ քաջալերեցիք փոխադարձ ճանաչման այս երեկոն:

Այժմ կը հրաւիրեմ Սարգիս Մաճառեանը, որպես հանդիսավար վարելու յայտագիրը»:

### ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆԻ ԽՕՍՔԸ

Յարգելի ներկաներ, բարի եկած էք ՀՄՄ-ին կողմէ կազմակերպուած փոխադարձ ճանաչման առաջին խրախճանք-հանդիպումին: Այս երեկոյին նպատակն է, ինչպէս անունն ալ կը հաստատէ, փոխադարձաբար իրարու ծանօթանալ, սերտ ու գործնական կապ ստեղծել տարբեր միութիւններու վարչութիւններուն միջեւ: Որովհետեւ կը հաւատանք, որ փոխադարձ ճանաչմամբ աւելի կը հասկնանք իրար, մօտէն տեղեակ կ'ըլլանք իրարու նպատակներուն, նկրտումներուն եւ միասնական գործակցութեան համար աւելի առողջ, գործնական ու դրական մթնօլորտ կը ստեղծենք: Եթէ իրար լաւ չճանչնանք, չենք կրնար լաւ գործակցիլ եւ լաւ արդիւնք տալ:

Կը նայիմ այս սրահին եւ պատմական Հայաստանի ոչ-ամբողջական, բայց հարազատ մանրանկարը կը տեսնեմ: Հոս են Հաճընը, Ուրֆան, Այնթապը, Մարաշը, Կեսարիան, Քիլիսը, Տէօրթեոլը, Պէյլանը եւ Էվէրէկ-Ֆէնէսէն. բանաւոր բացակայ՝ Եոզկաթը: Տեր Աստուած, օր մը պատկերը ամբողջանար մեր մյուս հայրենակցականներով եւ ձեռք-ձեռքի տուած, հեռու ամէն ձեւի յոռի ազդեցութիւններէ ու ջլատիչ նախապաշարումներէ, քալէինք յառաջ՝ մեր ազգին ու Հայրենիքին ծառայութեան նուիրական ճամբուն վրայ: Մանաւանդ, այս օրերուն հերոսական Ղարաբաղին ապաւէն ու բալասան դառնալու եւ «ներկա՛յ» պատասխանելու անհրաժեշտ կցօնութեամբ ու թափով:

Ինչպէս գիտեք, ՀՄ-ները ազգին ու Հայրենիքին ծառայելու ճամբուն վրայ իրենց դասն ու ներշնչումը կստանան իրենց ծննդավայրի հայրենի բնօրրանի հողէն, պատմութենէն, աւանդոյթներէն. այնտեղ ապրած մեր պապերու «հին-հին դարուս հիշատակներէն», հերոսական մաքառումներէն եւ տոհմիկ բարքերէն: Ցեղին լաւագոյն առաքինութիւնները խտացնող, անոր արմատներէն եկող այդ աւիշը մեկ անսասան կ'առաջնորդէ եւ գործի կը մղէ յանուն մեր գոյութեան ամրապնդման, յօգուտ հայ ժողովուրդին, ի փառս Մայր Հայաստանին:

Այս հաւատքով պինուած, պիտի շարունակենք մեր գործունէու-թիւնը, Վարդանանց պէս վճռելով. «Այս հաւատքէն ոչ ոք կրնայ շեղել մեկ ...»:

Յարգելի ներկաներ, ՀՄՄ-ն ես կը նմանցնեմ, անշուշտ համեմատութեան համեստ չափանիշերով, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ), որուն հովանիին տակ մեծ ու պզտիկ ազգերը կը ջանան աշխարհի գործերը կարգի դնել: Ճիշտ է, ամէն ինչ անսխալ ու սահուն չ'ընթանար ՄԱԿ-ի դրօշին տակ, սակայն, այսպէս թե այնպէս, դրական շատ բաներ կը կատարէ ան՝ վառ պահելով յոյսի ջահը լաւագոյն վաղուան մը հասնելու ուղղութեամբ: Մենք ալ, որպէս ՀՄՄ, կը ջանանք մեր «փոքր ածու»ին մէջ դրական, շինարար դեր մը կատարել, մեր չափերով ներդրում մը կատարելով մեր ժողովուրդի ու Հայրենիքի վերելքին:

Եկեք իրար լաւ ճանչնանք, լաւ հասկնանք. մեր հոգիներէն վանենք ժխտական կեցվածքները, ներշնչումները, ձեռք-ձեռքի, սիրտ-սիրտի աշխատինք, բարձրանանք ու բարձրացնենք: Շնորհակալութիւն:

**Այնուհետև Սարգիս Մաճառյանը խոսքը տվեց ՀՄՄ-ի փոխատենապետ Վահան Բահարյանին:**

### ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Սիրելի հայրենակիցներ, սիրելի բարեկամներ, նախ ՀՄՄ-ի անունից շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ, որ հարգելով և գիտակցելով այսօրվա փոխադարձ ճանաչման ճաշկերույթ-հավաքույթի կարևորությունը, ներկա եղաք: Սա արդեն ցույց է տալիս, որ ՀՄՄ-ն կուռ ու միասնական է: Առանց միասնության մենք չենք կարող պայքարել հայապահպանման համար եւ ոչ էլ Հայրենիքին օգնել:

Այսօրվա այս հավաքույթը առիթ է ընձայել, որ ՀՄՄ-ն հանդես գա ընդհանուր հաշվետվությամբ՝ անցած երեք տարիների գործունեության ու մոտակա ծրագրերի մասին:

Իր գոյության կարճ ժամանակամիջոցում ՀՄՄ-ն կազմակերպեց «Ազգային և էստրադային երգերի փառատոն» ի նպաստ Հայաստանի ու Լիբանանի առողջապահական ու կրթական կարիքներին, մասնակցությամբ համայնքին հայտնի արվեստագետներ՝ Լևոն Գաթրճյանի, Հովիկ Գրիգորյանի, Մանվել Մենենկիչյանի, Անիտա Մատտայի, Գեվըն Ջորջի, Նարինե Հարությունյանի, Անդրե Տանիքի, Հարութ Փամբուքչյանի եւ Ժագ Գոճյանի: Ձեռնարկը հովանավորեց ազգային բարերար Վահան Շամլյանը, որը **10 000** դոլար նվիրեց ՀՄՄ-ին: Ստացված եկամուտից **4000** դոլարը հատկացվեց Լիբանանի դպրոցներին, իսկ **6000**-ը՝ Երևանի մեջ Մուշեղ Իշխանի անվան դպրոցի թանգարանի-սրահի շինարարության համար, որը կոչվեց ՀՄՄ-ի անունով:



Ձախից աջ. առաջին շարք՝ Խաչատուր Աբովյան, Հակոբ Կակոսյան, Գալուստ Քրիստինյան, Նուպար Հակոբյան, Գրիգոր Շենյան, Գոգո Ավագյան և Մարտիրոս Իսկենդերյան։ երկրորդ շարք՝ Սարգիս Խորշիդյան, Տիգրան Գալուստյան, Վահան Բահարյան, Սարգիս Մաճառյան, Մհեր Պալյան և Արսեն Պաքալյան։

Երկրորդ ձեռնարկը նվիրված էր երգիչ-դերասան Մանվել Մենենկիչյանի երաժշտական գործունեության 35-ամյակին։ Ձեռնարկը հովանավորող Վահան Շամլյանը հանգամանքների բերումով չկարողացավ ներկա լինել միջոցառմանը, սակայն մի քանի օր հետո Kix ճաշարանում ՀՄՄ-ի հետ հանդիպման ժամանակ, բանալով իր «սրտի գաղտնիքը», խոստացավ ՀՄՄ-ին ապահովել կենտրոնով, որպեսզի նա էլ ավելի ակտիվորեն շարունակի իր հայապահպանման և Հայրենիքին օգնելու գործունեությունը։ ՀՄՄ-ն իր վարչության նիստում, քննարկելով Վահան Շամլյանի նվիրվածությունը և ՀՄՄ-ին օգնելու ձգտումը, միաձայն նրան ընտրեց ՀՄՄ-ի ցկյանս նախագահ։

Վահան Շամլյանը իր խոսքի տերն է, այժմ փնտրտուքի մեջ է, աշխատում է հնարավորինս արագ լուծել կենտրոնի հարցը։ Ցանկանանք քաջառողջություն և հաջողություններ իր առաքելության մեջ։

Հաջորդ ձեռնարկն էր Կամո Տեր-Պետրոսյանի ասմունքի երեկոն, որը Հայրենիքի և Սփյուռքի միասնության սիմվոլն էր և, ինչպես գիտեք, այդ օրը Լոս Անջելեսի մշակութասեր ժողովուրդը մեծ գոհունակությամբ հեռացավ սրահից։

Հաջորդ ձեռնարկը Մեծ Եղեռնի ոգեկոչման ապրիլյան միջոցառումն էր, որին բանախոսելու հատուկ հրավիրված էին Հակոբ Կարապենցը և



Տիգրան Ոսկունին։ Առաջինը ներկայացրեց հայ ժողովրդի մշակութային կորուստը, իսկ երկրորդը՝ քաղաքական կորուստը։ Ոգեկոչման երեկոն լայն արձագանք գտավ համայնքում։

Բացի նշված ձեռնարկներից, ՀՄՄ-ն իր աջակցությունն է բերել **Medical Outreach for Armenians**-ի կողմից Արցախին նվիրված թելեթոնին, մասնակցել է Արցախի Առաջնորդ Պարգև Սրբազանին նվիրված ճաշկերույթին և Արցախին է նվիրել **10000** դոլար «Հայաստան-Արցախ մեկ դոլար ֆոնդ»ից։ Վերջերս «Հայրենիք», «Հայրիկ», **«Medical Outreach for Armenians»**, «Վահագն մշակութային միություն», «Անդրանիկ Հարությունյան» միությունների գործակցությամբ, Արցախի համար **100000** դոլար գոյացնելու նպատակով Արբատ ռեստորանում կազմակերպված ճաշկերույթին ՀՄՄ-ն գնահատելի մասնակցություն ունեցավ։ Գրիգոր Շենյանի խնդրանքով յոնդոնաբնակ ազգային բարերար Վաչե Մանուկյանը **20000** դոլար նվիրեց այդ նպատակով։

ՀՄՄ-ի հաջորդ ձեռնարկը հոկտեմբերին է, որը նվիրված է լինելու շնորհալի և վաստակավոր արվեստագետներից Արփինե Փեհլիվանյանի 40 տարվա հոբելյանական գործունեությանը[1]։

Շնորհակալություն, հաջողություններ ՀՄՄ-ին՝ առաքելության մեջ։

## ԵՐՎԱՆԴ ՊԱՊԱՅԱՆԻ ԽՈՍՔԸ (Այնթապ)

Հայ Այնթապցիներու Միութեան անունով կը շնորհաւորեմ ՀՄՄ-ի որքան հաճելի, նոյնքան օգտակար այս հանդիպումը։ Կը շնորհաւորեմ նաեւ Դր. Մարտիրոս Իսկէնտէրեանը, որ այս ձեռանարկին իր հովանաւորութեամբ նոր յաւելում մը կը կատարէ իր բազմաթիւ ազգասիրական բարի գործերուն վրայ։ Կը շնորհաւորեմ նոյնպէս Միացեալ Մարմնի ատենապետ Դր. Գրիգոր Շենեանը, որ հիմնուած օրէն սկսեալ ճիգ չի խնայեր անոր յառաջդիմութեան համար։ Միացեալ Մարմինը սփիւռքահայ մեր կեանքին մէջ բացառիկ երեւոյթ է այն իմաստով, որ նախընթաց չունի։ Ան կը հանդիսանայ արտահայտութիւնը հայ ժողովուրդի միասնականութեան։ Մեծ բանաստեղծին բառերով՝ մեր փրկութիւնը մեր հաւաքական ոյժին մէջ է, եւ ահա Միացեալ Մարմինը մանրանկարն է այդ հաւաքական ոյժին։ Ամէն հայ կը ցանկայ, որ համայգային դառնայ այդ հաւաքական ոյժը։

Հայ Այնթապցիներու Միութիւնը միշտ պատրաստ է իր աջակցութիւնը բերելու Միացեալ Մարմնի ազգօգուտ գործունէութեան։ Յաջողութեան լաւագոյն մաղթանքներ։

## ԱՐԱՄ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆԻ ԽՈՍՔԸ (ԷՎԵՐԷԿ)

Յարգելի հայրենակիցներ, ներեցէք որ ես քիչ մը պիտի շեղիմ նիւթէն։ Էվէրէկ-Ֆէնէսէ Միութիւնը հայրենակցական չի կոչուիր, այլ Ուսումնասիրաց։

Երկու միութիւններ կը հաստատուին Պոլսոյ մէջ 1879-ին՝ Էվէրէկ-Մեսրոպեան եւ Ֆէնէսէ-Ռուբինեաց Ուսումնասիրաց Միութիւններ անուան տակ, նպատակ ունենալով բարձրացնել այդ քաղաքներուն դպրոցական մակարդակը, Պոլսէն ուղարկելով որակեալ ուսուցիչներ եւ տնօրէններ։

1956 թ. այս երկու միութիւնները կը միանան Ամերիկայի մէջ եւ կը կազմեն Էվէրէկ-Ֆէնէսէ Ուսումնասիրաց Միութիւնը։

Միութեան հիմնական նպատակն է դրամական օժանդակութիւն տալ

---

1. Ձեռնարկը չկայացավ արվեստագետի հրաժարման պատճառով։

հայրենակիցներու պաւակներուն, որոնք կը յաճախեն ամէնօրեայ հայկական վարժարան եւ համալսարան:

Միութիւնը ունի չորս մասնաճիւղեր՝ Նիւ Եորք, Տիթրոյթ, Լոս Անճելըս եւ Պէյրութ:

Պատգամաւորական ժողով մը կը գումարուի 3 տարին մէկ, ուր կ'որոշուի 3 տարուայ պիւտճէն: Կեդրոնական վարչութիւնը, որ այժմ կը գտնուի Տիթրոյթի մէջ, կը կատարէ Պատգ. Ժողովի որոշումները, ցուցմունքներ տալով մասնաճիւղերուն: Հետեւաբար, Լոս Անջելըսի մասնաճիւղը չի կրնար ինքնակամ կերպով որոշումներ ընդունիլ, յատկապէս, երբ հարցը կը հասնի նիւթականին:

Այդ իսկ պատճառով Լոս Անճելըսի մասնաճիւղը համաձայնութիւնը պէտք է հայցէ Պատգ. Ժողովին, որը տեղի պիտի ունենայ 1995-ի Սեպտեմբերին Տիթրոյթի մէջ, որպէսզի Լոս Անճելըսի մասնաճիւղը պաշտօնապէս անդամագրուի ՀՄՄՄ-ին:

ՀՄՄՄ-ի յաջող գործունէութիւնը այս վերջին 3 տարուան ընթացքին ապացոյց է, որ յղացուած գաղափարները իրագործուած են: Ուստի, ցանկալի պիտի ըլլար, որ այս Միութիւնը տարածուէր Ամերիկայի միւս հայաշատ քաղաքներուն մէջ եւս, կազմելով՝ Հայրենակցական Համաամերիկեան Միացեալ Մարմին մը: Շնորհակալութիւն:

### ՋՈՐՋ ԽՏՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ ( ԿԵՍԱՐԻԱ)

Սիրելի հայրենակիցներ եւ ներկաներ, Կեսարիոյ ՀՄՎ-եան կողմէ շնորհակալութիւն կը յայտնեմ Ձեզ այս գիշերուայ հաւաքոյթին համար:

Մեր Միութիւնը կը գնահատէ Միացեալ Մարմնի այս ջինիշ գաղափարը, որուն նպատակն է ՀՄ-ներու վարչութեան անդամները իրար ծանօթացնել: Թէպէտ քիչ մը ուշ յղացուած, բայց մենք կը հաւատանք «երբեք ուշ չէ» ասացուածքին (Never too late):

Մենք արդէն ունինք երկու ներկայացուցիչներ ՀՄՄՄ-ի մէջ, եւ մեր վարչութիւնը կորավիգ կը կանգնի ռեւէ ապգօգուտ ձեռնարկի ներկայիս կամ ապագային: Շնորհակալութիւն ուշադրութեան համար:

### ՀԱԿՈԲ ԿԱԿՈՍՅԱՆ (ՀԱՃԸՆ)

Յարգելի ներկաներ, Հաճնոյ Հայրենակցական Միութեան վարչութեան անունով կ'ողջունեմ Ձեզ բոլորդ՝ փոխադարձ ծանօթացումի այս բարենպաստ հանդիպումին, որ կը պարզէ գեղեցիկ պատկերը համագործակցութեան: Ինչպէս գիտեք, այսօրուայ հաւաքոյթին հրաւէրը տրուեցաւ Միացեալ Մարմնին կողմէ, սրահը տրամադրեց ՄՀՄ-ը, իսկ հպարտ ենք յայտնելու որ մեր հայրենակից՝ տէր եւ տիկին Մարտիրոս Իսկէնտէրեան, պահելով աւանդը իրենց հօր՝ ողբ. հայրենակից Վարդգէս Իսկէնտէրեանին, ստանձնած են հոգալ լրիւ ծախքը այսօրուայ ընթրիք-հաւաքոյթին:

Արդարեւ, հաւաքական կեանքի մէջ որքան հաճելի է միասնական կեցվածքն ու համագործակցութիւնը՝ յօգուտ ազգային ընդհանրական շահերուն: Հայ իրականութենէն ներս, իւրաքանչիւր միութիւն մեր տոհմիկ աւանդութեանց պահպանումով ու ազգաշէն ծառայութեամբ ինքնին ներդրում մըն է ի նպաստ մեր գոյամարտին: Իսկ միութիւններու համագործակցութիւնը կ'ամրապնդէ մեր գոյութիւնը եւ բռունցք դառնալով կը կորացնէ մեր պայքարի ուժականութիւնը:

Մեր ազգային կեանքէն ներս՝ ՀՄՄՄ-ն (որ յաճախ շփոթուած է «Միութեան» հետ) մէկ կենդանի օրինակն է ցանկալի այն միասնութեան, որ դարերէ ի վեր վերածուած է մղձաւանջի: Ազգին հանդէպ սէրը՝ հերոսութիւն է, որ կ'ենթադրէ ինքնամոռաց նուիրում, կոհողութիւն եւ մինչեւ իսկ կեանքի ընծայաբերում, որ կը կիրարկուի լուռ եւ անշշուկ, առանց փողի եւ թմբուկի, առանց մենապաշտական եւ մենատիրական միտումներու:

Գոյապայքարի եւ ինքնահաստատումի այս պատմական օրերուն մէջ բոլորին մտածումներուն եւ գործունէութեան կեդրոնական առանցքը պէտք է հանդիսանայ հայ ազգն ու Հայաստանը: Մեր բոլոր յաջողութիւններուն արդիւնքն ու պատիւը պէտք է երթայ միայն ու միայն հայ ժողովուրդին:

Թող ՀՄ-ներու միասնականութիւնը վարակիչ դառնայ եւ մեր բոլոր կամակերպութիւնները պայքարին հաւաքական միացեալ, ներդաշնակ աշխատանքով՝ յօգուտ հայ ժողովուրդին եւ նորանկախ Մայր Հայաստանին: Կեցցէ՛ հայ ժողովուրդը:

***Այնուհետև Հակոբ Կակոսյան ներկաներին ողջունեց «Գետակի վրա» և «Կենաց երգ» երգերով, որոնք հոյակապ կատարվեցին և ներկաների կողմից ընդունվեցին բուռն ծափահարություններով:***

### ՏԻԳՐԱՆ ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ ԽՈՍՔԸ (ՄԱՐԱՇ)

Բոլորիդ բարի գալուստ եմ ցանկանում այսօր, այս փոխադարձ ճանաչման ճաշկերույթ-հանդիպումին: ՄՀՄ-ն հանդիսանում է մոտ 70 տարվա միություն և այսօր կարողացանք ունենալ այս փոքրիկ սրահը, որը անհրաժեշտության դեպքում կարող ենք տրամադրել ազգային շահերի համար՝ առանց որևէ ակնկալության: Մեր միությունը հպարտ է այսօր, որ ինքը հղացավ ՀՄ-ների միացման գաղափարը հանուն ազգային և ընդհանուր շահերի ու այսօր, ՀՄՄՄ-ի ստեղծվելուց հետո, մենք տեսնում ենք այդ միացման արդյունքները:

Մեր միությունը միշտ կողքին է ու նեցուկ պիտի կանգնի ՀՄՄՄ-ին իր նպատակների իրականացման ճանապարհին:

Ես կոչ եմ անում բոլոր միություններին, որպեսզի մաս կազմեն այս մարմնին, որովհետև ես հավատում եմ, որ մեր լիակատար հաջողությունը պայմանավորված է միասնությամբ: Բոլորդ բարի եք եկել և բարի վայելում:

### ԳՈԳՈ ԱՎԱԳՅԱՆ (ՈՒՐՖԱ)

Ուրֆայի ՀՄ-ն 'կը քաջալերէ եւ կը շնորհաւորէ այս միութիւնը: Յուսանք ապագային նոր միութիւններ կը ծնին կամ լոյս աշխարհ կու գան այս միութեան նման: Եթէ հայ ժողովուրդը միութիւններ չունենար, այսօր մենք Հայրենիք չէինք ունենար: Կմաղթեմ նման եւ աւելի յաջող ձեռնարկներ՝ միկունք կանգնելու համար Հայրենիքին և Սփիւռքին:

### ՆՈՒՊԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ (ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ)

Սիրելի հայրենակիցներ, Չորք-Մարզպանի (Տէօրթ-Եոլի) ՀՄ-ի վարչութեան անունով շնորհակալութիւն կը հայտնեմ ՀՄՄՄ-ին՝ ՀՄ-ներու վարչականները իրարու ծանօթացնելու այս գեղեցիկ երեկոյթը կազմակերպած ըլլալուն համար:

ՀՄ-ներու միջեւ աւելի սերտ գործակցութիւն ապահովելու յառաջադրութեամբ, այսքան մեծ թիւով վարչականներ իրարու քով բերելը ՀՄՄՄ-ի համար հոյակապ աշխատանք մըն է և արժանի ամէն գնահատանքի: Իսկ

հոս հաւաքուած բազմաթիւ ՀՄ-ներու վարչականներու ներկայութիւնը իրենց տիկիններով, կը հաստատէ ու կ'ապացուցանէ իւրաքանչիւրին կամքն ու հաւատքը՝ հաւաքաբար ծառայելու եւ նուիրուելու ազգային եւ հայկական մեր կարիքներուն, բախտորոշ այս օրերուն:

Աքանչելի ներուժ և կարելիութիւններ ունեցող մարմին մըն է այս եւ ան պէտք ունի մեզմէ իւրաքանչիւրի անձնական եւ հաւաքական նեցուկին:

Չորք-Մարզպանի ՀՄ-ն կը հաւատայ, որ ՀՄՄՄ-ն կոչումն ունի ի մի հաւաքելու ՀՄ- ները եւ միասնաբար ու համերաշխութեամբ համագործութային աշխատանք տանելու, եղբայրական ձեռք երկարելու Հայաստանին ու Արցախին: Վերջին 3 տարիներու բարձրորակ ձեռնարկները կը հաստատեն մեր ըսածները:

Մենք ոչ միայն ՀՄՄՄ-ի կողմէ որեւէ ոտնձգութիւն կամ խաչաձեւում չենք գտներ մեր ՀՄ-եան ծրագիրներուն ու գործունէութեանց նկատմամբ, այլ քաջ համոզուած ենք, որ բոլոր ՀՄ-ները միասնաբար, հաւաքական եւ հետեւողական հետապնդումով մեծ ծրագիրներ կրնան յաջողցնել ի փառս մեր ազգին եւ Հայրենիքին: Միասնաբար աշխատելով ու զօրակցելով նաեւ աւելի կը զօրացնենք մեզմէ իւրաքանչիւրին դիրքը:

ՀՄՄՄ-ն սքանչելի հաւաքական ոյժ մըն է եւ կարելիութիւններու կծիկ. անոր ծափահարելի գործունէութիւնը արժանի է ամէն քաջալերանքի ու գնահատանքի: Բարի եկած էք եւ բարի վայելում:

**Մարո Հակոբյան ապրումով արտասանեց Վահան Թեքեյանի «Բարձրացիր» բանաստեղծությունը:**

ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՊԷՅԼԱՆ)

Սիրելի հայրենակիցներ, թույլ տվեք ՊՀՄ-ի վարչության անունից իմ շնորհավորանքի խոսքն ուղղել ՀՄՄՄ-ին այս աննախընթաց երեկոյի կազմակերպման և ներկաների մասնակցության կապակցությամբ, որը նվիրված է բոլոր ՀՄ-ների մերձեցմանը, որոնց նպատակն է սատար կանգնել Հայրենիքին այս ծանր և դժվարին օրերին, ինչպես նաև Սփյուռքի և Հայրենիքի մոտեցման, միասնական ճակատով հաղթահարելու համար մեր առջև եղած դժվարությունները: Իմ կարծիքով սա ամենալավ և ամենաբարի գործն է, որ կատարում է ՀՄՄՄ-ն: Այս երեկոն ուզում եմ ողջունել Հովհաննես Թումանյանի «Թմբկաբերդի առումը» պոեմի նախերգանքով և ժամանակակից ինքնուս գրողներից մեկի «Ձօն Հայաստանի» բանաստեղծությունով:

**Արա Պետրոսյանի պաթոսով կատարած ասմունքը ավելի ոգևորեց սրահի աշխույժ մթնոլորտը:**

ՍԵԴԱ ԿՎՐՅԱՆ (ՊԷՅԼԱՆ)

Ես շնորհավորում և ողջունում եմ ՀՄՄՄ-ի այս հրաշալի ձեռնարկը, որը, կարծում եմ, առաջինը լինելով, վերջինը չի լինի: Որքան էլ մեր ժողովներում ատենապետից լսում էինք ՀՄՄՄ-ի ընթացիկ աշխատանքների ու ծրագրերի մասին՝ այլ բան է լսելը, մեկ այլ բան է անմիջական շփվելը: Երբ իսկապես, կողքիդ պգում ես բարեկամ միությունների անմիջական ներկայությունը, հասկանում ես, որ մենակ չես, ասել է, թե միասնական ես, ուրեմն ուժեղ ես:

Օրհնյալ լինի ՀՄՄՄ-ն իր գոյությամբ և իր օրինակելի գործունեությամբ: Երիցս օրհնյալ լինի մեր չքնաղ Հայոց Աշխարհը և Սփյուռքը, որ օտար հողում, օտար երկնի տակ մշտապես նեցուկ է կանգնում մեր անուշ Հայրենիքին:

**Իր խոսքից հետո Սեդա Կվրյանը արտասանեց Հրաչյա Հովհաննիսյանի «Ես քեզ սիրում եմ, սիրուն Հայրենիք» բանաստեղծությունը և Մկրտիչ Կորյունից մի առակ՝ «Դիպլոմը», որոնք ներկաների կողմից ընդունվեցին բուռն ծափահարություններով, աշխուժություն ստեղծելով սրահում:**

ՀԵՐՄԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ (ՔԻԼԻՍ)

Ես կ'ուզեմ հաղորդել Քիլիսի ՀՄ-եան ատենապետ Հայկազուն Գասպարճեանի ողջոյնները, վառ մաղթանքներն ու զօրակցութիւնը այս երեկոյի առթիւ նրա մասնակիցներին, եւ որպեսզի կրկնած չըլլամ ելոյթ ունեցողներուն, կ'ուզեմ իմ ելոյթս վերջացնել Վահան Թէքէեանի «Յաջուեյարդար» բանաստեղծութեամբ:

**Հերմինե Սահակյանի ասմունքը արժանացավ ներկաների բարձր գնահատականին:**

**Վերջում կարելի է ավելացնել, որ հավաքույթը իր նպատակին ծառայեց, և ավելի ամրապնդվեց միասնությունը ՀՄ-ների միջև հանձին ՀՄՄՄ-ի, ու այդ անխախտ միասնությունով էլ ՀՄՄՄ-ն պիտի իրագործի իր նպատակներն ու ծրագրերը թե՛ Հայրենիքին օգնելու և թե՛ Սփյուռքի հայապահպանման գործում:**

***

**Նկատի ունենալով, որ 1995 թ. նշվելու է Մեծ Եղեռնի 80-րդ տարելիցը, և ոչ մի կազմակերպություն չի նախաձեռնում, օրակարգի նյութ դարձրեցի հարցը ՀՄՄՄ-ի նիստում, առաջարկելով, որ ՀՄՄՄ-ն լինի նախաձեռնողը: Հարցը դրական լուծում ստացավ, և իմ կողմից նախապատրաստվեց նամակի նախագիծ, որոշ փոփոխություններով արևմտահայերենի վերածվեց և օգոստոս 14 թվագրությամբ ուղարկվեց Լոս Անջելեսի եկեղեցական թեմերին, երեք ավանդական կուսակցություններին և բոլոր կազմակերպություններին (նամակը տե՛ս հավելված էջ 446):**

**Վարչության մի նիստում որոշվեց դիմել «Հայաստան» հիմնադրամի Լոս Անջելեսի մասնաճյուղի ղեկավարությանը, որպեսզի ՀՄՄՄ-ն անմիջականորեն մասնակցի նրա Լոս Անջելեսի հանձնախմբի աշխատանքներին որպես լիիրավ անդամ (այդ առթիվ գրած նամակս տե՛ս հավելված էջ 447-448):**

**Այս նպատակով ՀՄՄՄ-ն հանդիպում ունենացավ հիմնադրամի պաշտոնատար անձանց հետ, նրանց Լոս Անջելեսում գտնվելու ժամանակ: Այդպիսի մի հանդիպում էլ կայացել էր Գագիկ Հարությունյանի և Մանուշակ Պետրոսյանի հետ 1994 թ.**



*Ձախից աջ՝ Մանուշակ Պետրոսյան՝ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի գործադիր տնօրենուհի, Վարդգես և Մերի Նաջարյաններ՝ Medical Outreach For Armenians Inc., Գագիկ Հարությունյան՝ ՀՀ և «Հայաստան» Հիմնադրամի նախագահի տեղակալ, Գրիգոր Շենյան՝ ՀՄՄՄ-ի ատենապետ, Վահան Բահարյան՝ ՀՄՄՄ-ի փոխատենապետ:*

դեկտեմբերի 10-ին «Հայաստան» հիմնադրամի Գլենդելի գրասենյակում, որտեղ արծարծվել էր Medical Outreach-ի և ՀՄՄՄ-ի լիիրավ անդամ դառնալու հարցը:

Լոսանջելեսահայ համայնքը այսօր Սփյուռքի ամենամեծ գաղթօջախն է: Հոգսաշատ է և անհասկացողություններով լի: Որոշ կազմակերպությունների իրար հանդեպ անհանդուրժողությունը փեղկում է համայնքը, խանգարում նրա միասնությանը ազգային գործունեության իրականացման հարցերում:

Այսպիսի մի տհաճ երևույթ տեղի ունեցավ ՀՅԴ-ի և Medical Outreach for Armenians կազմակերպության միջև, երբ վերջինս հայտարարեց իր հերթական՝ նոյեմբեր 24-ին կայացնելիք 5-րդ թելեթոնի մասին, որի կազմակերպչական հանձնախմբում էր նաև ՀՄՄՄ-ն: Ջխորանալով եղած տհաճ երևույթների մանրամասնությունների մեջ՝ նշենք, որ ՀՅԴ-ն գտնում էր, որ միայն ինքը իրավունք ունի Ղարաբաղի համար թելեթոն կազմակերպելու, որպես հաստատում բերելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանի նամակը (տե՛ս բնագիրը հավելված էջ 449):



*Այս առթիվ թելեթոնի կազմակերպիչ հանձնախումբը հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ, որը լույս տեսավ հայկական մամուլում նոյեմբերի 11-ին[1]:*

ՕԳՆԵՆՔ ԱՐՑԱԽԻՆ՝ ՆՈՅՆԻՍԿ ... ԱՌԱՆՑ ԼԻԱԶՕՐԱԳՐԻ

**Medical Outreach**-ի եւ հայկական վեց այլ կազմակերպութեանց միացեալ ուժերով եւ միասնական ջանքերով կազմակերպուած եւ Նոյեմբեր 24-ին, Գոհաբանութեան Օրը տեղի ունենալիք թելեթոնին ծանուցումը ղրկուեցաւ հայկական մամուլին, որպէսզի ժողովուրդը տեղեակ ըլլայ Հայաստանի եւ Արցախի հիւանդանոցների վիճակի բարելաւման, կանոնք բժշկական սարքաւորումներով օժտելու եւ վիրաւոր ազատամարտիկներու բուժման ի նպաստ կատարուելիք թելեթոն-դրամահաւաքէն:

Հայկական մամուլը սիրով ընդառաջեց ծանուցումին տեղ տալու մեր դիմումին, բացի «Ասպարէզ» օրաթերթէն, որ ծանուցումին տեղ տալու համար պայման դրաւ ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան իշխանութիւններու կողմէ տրուած լիազօրագիր մը, որով թելեթոնը կազմակերպողները իրաւունք ունեցած ըլլան նման գործ կատարելու, աւելցնելով նաեւ որ լրիւ էջի մը համար պէտք է վճարուի 400 դոլար, այն ալ՝ կանխիկ:

Ծանօթ է որ վերջերս «Ասպարէզ» օրաթերթին մէջ, յաջորդական թիւերով լոյս տեսաւ եւ «Հորիզոն» հեռատեսիլէն ալ յայտարարուեցաւ այն լիազօրութիւնը, կոր ԼՂՀ-ի իշխանութիւնները կու տային ՀՅԴ-Արցախ ֆոնտին, յանուն իրենց դրամահաւաք կատարելու:

Հետաքրքրական է գիտնալ թէ յանուն իշխանութեանց դրամահաւաք կատարելը եւ այդ իշխանութեանց ղեկավարած երկրի հիւանդանոցներուն, բժշկական կարիքներուն եւ վիրաւոր ազատամարտիկներուն բուժման համար կատարուելիք հանգանակութիւնը իրարու նորի՞կ երեւոյթներ կամ իրողութիւններ են: Արդեօք ԼՂՀ-ի իշխանութիւնները պիտի մերժէ՞ին իրենց հողատարածքին վրայ գտնուող հիւանդանոցներու վիճակը բարելաւելու եւ դեղորայքով ու բժշկական սարքաւորումներով օժտելու միտող օգնութիւն մը սփիւռքի հայ կանգուածներէն:

Այդ երբէ՞ն ի վեր մեր քոյրերուն ու եղբայրներուն, Արցախի ռազմաճակատներուն վրայ իրենց կեանքը պատարագող ու վիրաւոր ինկող մեր ազատամարտիկներուն օգնութեան ձեռք երկարելը, բժշկական եւ այլ մարզերու մէջ օժանդակելը մենաշնորհ դարձած է այս կամ այն կազմակերպութեան: Ի դէպ, պէտք չէ մոռնալ, որ ԼՂՀ-ի իշխանութիւններու՝ ՀՅԴ-Արցախ ֆոնտին տուած լիազօրագիրը կը ճշդեր, թէ ֆոնտը իրաւունք ունի յանուն իշխանութեանց դրամահաւաք կատարելու, սակայն չէր արգիլեր, որ այլ կազմակերպութիւններ իրենց միջոցներով օգնութիւն հասցնեն ԼՂՀ-եան ծով կարիքներուն համար:

Հարկ է յիշել որ **Medical Outreach**-ը իր գոյութեան 10 տարիներու ընթացքին 18 միլիոն տոլար արժողութեամբ օժանդակութիւն հասցուցած է Հայաստանի եւ Արցախի կարիքներուն համար: Միայն այս տարի տուած է 2875000 տոլարի օժանդակութիւն: Գոհաբանութեան Օրը տեղի ունենալիք թելեթոնը 5-րդն է: Այլ խօսքով, երբ **Medical Outreach**-ը Արցախի համար թելեթոն կը կազմակերպէր, ՀՅԴ-Արցախ ֆոնտը գոյութիւն իսկ չունէր:

---

1. Տե՛ս «Նոր Հայաստան», Ուրբաթ, Նոյեմբեր 11, 1994, թիվ 214:

*Եվրակացութիւն: «Ասպարէզ» օրաթերթը, անոր ետին կանգնած կուսակցութեան վերին մարմինը եւ անոր հովանաւորած ՀՅԴ-Արցախ ֆոնտը ո՛չ մէկ իրաւունք ունին մերժելու Հայաստանի եւ Արցախի բժշկական կարիքներուն ի նպաստ կազմակերպուած ձեռնարկի մը ծանուցումը եւ դատախազի սքեմ հագած՝ լիազօրագիր պահանջելու:*

*Անտեղի կը գտնենք խօսիլ նման լիազօրագիր ձեռք ձգելու պարագաներուն մասին, որովհետեւ միակ տուժողը պիտի ըլլար Ղարաբաղի մեր հերոս ժողովուրդը:*

***MEDICAL OUTREACH FOR ARMENIANS**, ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ, ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ, ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ, «ՎԱՀԱԳՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ, «ՀԱՅՐԻԿ» ՄԻՈՒԹԻՒՆ, **MAK FOUNDATION**:*

*ՀՄՄՄ-ն հանդես եկավ կոչով[1] (տե՛ս հավելված էջ 450):*

*Ամենացավալին այն է, որ մի բուռ լինելով հանդերձ, միաբան չենք, որովհետև միշտ ձգտում ենք անձնական փառասիրության և կուսակցական նպատակների ու ծրագրերի իրագործման՝ ոչ ճշմարիտ ճանապարհով:*

*Հաճախ կարդում կամ լսում ենք, որ դաժան զոհողություններով լեցուն մեր պատմությունն է մեզ այդպես դաստիարակել: Զնայած չափազանցված է, բայց, եթե նույնիսկ այդպես ընդունենք, գոնե մարդկային քաղաքակրթության առաջընթացի 21-րդ դարո՞ւմ էլ նկատի պիտի չունենանք մեր Հայրենիքի հզորացումը, որպես ազգ գոյատևելու համար ու չմիավորվե՞նք հանուն նրա հարատևության: Արդյոք ե՞րբ պետք է «հասկանան» այս պարզ ճշմարտությունը հայ կուսակցությունների ղեկավարները և անհատները, որոնք պատասխանատու են հայ ժողովրդի ճակատագրի համար, – իհարկե, եթե զգում են այդ:*

*Թելեթոնը հաջողություն ունեցավ, հավաքվեց 510000 դոլար:*

1. Տե՛ս «Նոր կեանք», թիվ 50, Նոյեմբեր 24, 1994:



## Ժ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1995 Թ.

*Շարունակեցինք փնտրել միության համար սրահի հարմար շենք:*

*Eagle Rock-ում ասորական մի եկեղեցի կար, որի համար արդեն առաջարկ էր եղել, բայց առաջարկողները հաստատ չէին գնելու հարցում, հետևաբար միության կողմից էլ առաջարկ եղավ այն հաշվով, որ եթե նրանք հրաժարվեն, միությունը կգնի: Շենքի գինը նայում էր 700-800 հազար դոլարի, որի մոտ 200000 դոլարը վերանորոգման ծախս էր: Սակայն մեզ բախտ չվիճակվեց գնել այն: Առաջարկողները գնեցին: Այնուհետև էլ չարունակվեց փնտրտուքը, որոշ ժամանակից հետո էլ Սարգիս Սողանալյանը իր աշխատանքային գրասենյակը տեղափոխեց Փարիզ և սրահի գնման հարցը ջուրն ընկավ, քանի որ, նույնիսկ սրահ էլ գտնեինք, դժվար էր իր միջոցով ձևակերպելու գործընթացը իրականացնել:*

*Բարբարը հետաքրքրվեց մեր միության կարգավիճակի հարցով, որպես ոչ շահութաբեր կազմակերպություն, համոզվելու համար, որ տված գումարը կարող է հանել իր՝ պետության վճարելիք հարկերից, այսինքն՝ Tax deductable է: Վստահ էի, որ միության կարգավիճակի հարցը լուծել է առաջին ատենապետ Նորայր Մելքիսեթյանը, այնուամենայնիվ մտածեցի մի անգամ ևս ստուգել այդ: Երբ ստուգեցի IRS-ի (Internal Revenue Services-հարկերով զբաղվող պետական կազմակերպություն) մեր միության տված կարգավիճակը, պարզվեց, որ միության նվիրատուները չեն կարող այդ գումարը հանել իրենց վճարելիք հարկային գումարից: Այս ևս մի հոգս էր սրահ գնելու ճանապարհին, մեծ տհաճություններ կառաջացներ բարբարի և միության միջև, իհարկե, եթե գնումը հաջողվեր: Վերջ գտավ սրահի ծրագիրը:*

*Հետագայում զբաղվեցի միության կարգավիճակը փոխելու հարցով, որպեսզի տրված նվիրատվությունները Tax deductable լինեն: Փաստաբանը խոստացավ այդ գործը անել առանց վճարվելու: Մոտ 1200-1300 դոլարի ծախս կլիներ, որի մի մասն էլ եռ կստանար միությունը: Անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը պատրաստեցի և հանձնեցի փաստաբանին, վստահ լինելով, որ վարչությունը իր համաձայնությունը կտա: Սակայն վարչականների մի մասին չկարողացա հասկացնել և, հատկապես Գրիգորը չէր համաձայնվում նշված դրամը վճարել: Ասում էին, որ մինչև հիմա ոնց որ եղել է, այդպես էլ թող մնա: Չէին հասկանում, որ դա օրենքի խախտում է:*

Այդ գործը կարող էի հասցնել մինչև վերջ, բայց հետագա իրադարձությունները հեղաշրջեցին ամեն ինչ, երբ վարչության մեջ ներքին հարցեր առաջացան, և վարչությունը ազգօգուտ գործունեությունը թողած, սկսեց զբաղվել դրանցով:

Պարզաբանենք 1994 թ. դեկտեմբերի 17-ի ճՊ-ի հետ կապված մի քանի հարցեր:

Ինչպես նշվեց նախորդ էջերում, սույն ճՊ-ին ներկա էին նաև հայրենի արվեստագետներ՝ տեր և տիկին Գևորգ Արաջյանը և Վարդուհի Վարդերեսյանը: Նրանք երկար ժամանակ Լոս Անջելեսում էին և նույնիսկ 1993 թ. դեկտեմբերի 31-ին՝ Ամանորի առթիվ ՊՀՄ-ի վարչության կազմակերպած ճՊ-ի հյուրերն էին, և այդ առթիվ միության վարչության կողմից՝ նրանց նվիրվեց նաև մեկական ձեռքի ժամացույց: Լոս Անջելեսում նրանց մասնակցությամբ կազմակերպվեցին նաև միջոցառումներ, որոնց ակտիվորեն մասնակցեց նաև ՊՀՄ-ն:

Գիտե՛ք, կյանքում մարդիկ կան, որոնք հաշվենկատ են, ինչպես ժողովուրդն է ասում, իրենց գործը գիտեն և միշտ նպատակադրված են լինում:

1994 թ. դեկտեմբերի 17-ի ճՊ-ին նրանց հրավիրատոմս չտրվեց: Ճաշկերույթի ժամանակ նրանք Սարգիս Սողանալյանին նվիրեցին Գևորգ Արաջյանի նոր տպագրված «Գյումրիի թատրոնի մարդիկ» գիրքը, և նրանց առաջարկով բարերարը այդ գրքից 100 օրինակ նվիրեց Գյումրիին;

Անկեղծ ասած, մտածում էի, որ մի գիրք էլ ինձ կնվիրեն որպես միության ատենապետի, թեկուզ նկատի ունենալով պահի պատշաճությունը, մանավանդ, որ ՊՀՄ-ն իր սիրալիր վերաբերմունքը ցույց տվել էր նրանց: Բայց այդ տեղի չունեցավ:

ՃՊ-ից մի քանի օր հետո Մանվելը հայտնեց, որ նշված գրքի գինեձոնն են անելու «Անուշ» ռեստորանում, տոմսը արժե 30 դոլար, և գինեձոնի ժամանակ յուրաքանչյուրին մի գիրք է նվիրվելու:

Միամտորեն մտածեցի, որ միգուցե ինձ գիրք չտվին, որ հրավիրեն գինեձոնի. այդ դեպքում 50 դոլար կնվիրեմ նրանց: Բայց իրադարձությունները ուրիշ ընթացք ստացան: Նրանց հետ հիմնական կապը Մանվելն էր, նա էլ պատմեց եղելությունը: Ըստ նրան, իրեն հրավիրատոմս են տվել գինեձոնի համար: Նա հարցրել է, թե մեր միության նախագահին (ատենապետի փոխարեն նա միշտ օգտագործում էր նախագահ բառը) էլ չե՞ք տալիս, ասել են՝ ոչ: Մանվելը իբր հրաժարվել է հրավիրատոմսից, առաջարկել է իր փոխարեն նախագահին տան, մերժել են: Ենթադրեցի՝



դա կապված է կամ «Ծառերը կանգնած են մահանում» ներկայացման հովանավորությունը մերժելու, կամ իրենց երկրորդ անգամ հրավիրատոմս չտալու հետ վերոհիշյալ ճՊ-ին ....:

Անցան օրեր: Վարդուհի Վարդերեսյանը հեռաձայնեց: Բարերարի խոստացած գումարը մինչև հիմա չէին ստացել և խնդրում էր իմ միջամտությունը: Նշեցի, որ այդ հարցով զբաղվող կա, բայց խոստացա և հաջորդ օրերին խոսեցի Սարգիս Սողանալյանի հետ: Նրա պատասխանը միանշանակ էր. «Վահա՛ն, դու քուկին գործերը թողած ադով մի զբաղուիր: Նորայրին յանձնարարուած է հարցը, եւ նա կը կարգադրէ...»: Շնորհակալություն հայտնեցի և պատասխանը փոխանցեցի Վարդուհուն: Նա դժգոհեց ու նորից պնդեց՝ զբաղվել: Բացատրեցի, որ իմ կամքը չեմ կարող թելադրել բարերարին: Նա բազմիցս զանգահարեց, դրական պատասխան չստանալով, լռեց: Գրքի հետագա ճակատագիրն ինձ հայտնի չէ:

Մարտի 14-ին վարչության անդամներով՝ Գրիգոր Դովլաթյան, Սեդա Կվրյան, Սարգիս Խորչիդյան, Հարություն Հարությունյան, Արա Պետրոսյան և տողերիս հեղինակը մասնակցեցինք Արա Պետրոսյանի տատիկի 100-ամյակին: Հոբելյարը՝ Արմենուհի Պետրոսյանը, Մեծ եղեռնից մազապուրծ հայ պարմանուհին, որպես ուսուցչուհի իր ամբողջ կյանքը նվիրել է հետեղեռնյա սերնդի դաստիարակությանը (նրան ուղղված խոսքս տե՛ս հավելված էջ 451): Նա մահացավ 102 տարեկանում:



Արմենուհի Պետրոսյան:

Սփյուռքում յուրաքանչյուր միության կարևոր նպատակներից է հայապահպանությունը, այդ ուղղությամբ է մտածում նաև հայ ընտանիքը՝ մեծ ջանքեր գործադրելով երեխաներին հայեցի դաստիարակություն ու կրթություն ապահովելու ճանապարհին, անկախ նրանից, որքան են նրանք տիրապետում հայերենին:

ՊՀՄ-ի վարչության հարաբերությունները շարունակվում էին Սողանալյան գերդաստանի հետ: Մարտ 18, 1995 թվակիր մի նամակ ստացա Սարգիս Սողանալյանի քրոջից՝ Անայիս Հարտից (Harts): Հիշյալ կարևոր հարցով անհանգստացած ինձ էր դիմում.

*Հարգելի Պրն. Պահարյան,*

*Հաճեցէք ներփակ գտնել պատկիս՝ Մելինտայի Հայ եղեռնի գրութիւնը: Մօրս փափաքն էր ձեզի օրինակ մը ուղարկել: Մելինտան 21 տարեկան է, իմ պզտիկ դուստրս կ՚ըլլայ և այս տարուայ Մայիս 14-ին պիտի շրջանաւարտ ըլլայ Ohio Wesleyan University-էն, որ Delawere Ohio է:*

*Այս գրութիւնը մեզի մեծ անակնկալ մը եղաւ, երբ Մելինտան հռաձայնեց և գիտնալ ուզեց եթէ մեծ մաման ջարդի վերապրողներէն եղած էր: Իրեն ըսի, թէ իր մեծ հայրը (Կարապետ Սողանալեանը) եղած էր միակ ապրողը 1920-ի Հաճնոյ ջարդէն և լման Սողանալեան ընտանիքը ջարդուած է, և ինք Սողանալեան և Քիւբէլեան ընտանիքներու երրորդ սերունդն է: Անշուշտ մայրս է պատճառը, որ բոլորս ալ հայ հոգիով մեծցած ու պաշարուած ենք՝ մինչեւ իր թոռները: Ատոր համար է, որ կը փափաքիմ իմ երկու աղջիկներս ալ հայ մնան, որչափ որ հայրերնին հայ չէ:*

*Յուսամ դուք և Պէյլանի Հայրենակցական Միութիւնը լաւ վիճակի մէջ էք, և միութիւնը լաւ վիճակով կ՚ընթանայ:*

*Ես նպատակ ունիմ Յունիս 17-ի Շաբաթ օրը Սարօ Նաճարեանի հարսանիքին ներկայ գտնուիլ: Մայրս հանգիստ է, բարեւներ կ՚ուղղէ ... և հայրենակիցներուն:*

*Ջերմ հարգանքներով՝ Անայիս:*

Գրությունը վերնագիր չունի: Վրան գրված է Անայիսի դստեր անունը. «Melinda Harts, Senior Ohio Wesleyan University», անգլերեն է և բաղկացած է 15 էջերից՝ փոքրիկ նախաբանով, (տողերը տպված են մեկ ընդ մեջ): 15-րդ էջում գրականության ցանկն է:

Տվյալ նամակով զգում էի ինձ հանձնարարված պարտականությունը, որ Մելինտայի գրությունը պետք է տպագրվի Լոս Անջելեսի Հայ մամուլում, որպեսզի նա ավելի քաջալերվի ու շարունակի ուսումնասիրություններն այդ ուղղությամբ: Գրությունը հանձնեցի մի քանի թերթերի, այդ թվում՝ անգլերեն լույս տեսնող «Armenian Observer» շաբաթաթերթին, որի խմբագիր Օշին Քեշիշյանը Սողանալյան ընտանիքի և անձամբ Անայիսի լավ բարեկամն էր (նամակի մեջ նշված հարսանիքին երեքս միասին էինք): Բայց ոչ մեկ թերթ չտպեց այն:

Ընթերցող բարեկամ, եկ, միասին մտորենք: Հայն ամուսնացել է օտարի հետ, երեխաները հոր ազգությունը պիտի ներկայացնեն, բայց մայրը նրանց հայ է մեծացնում: Ընտանիքի 21 տարեկան պարմանուհին սովորում է ամերիկյան համալսարանում, հայերեն դժվարությամբ է խոսում, իր մեջ ներարկված հայկականությամբ պրպտում է բազմաթիվ գրական աղբյուրներ և Մեծ Եղեռնի մասին գրություն է գրում ու ուղարկում հայկական մամուլին այն ակնկալիքով, որ կտպագրվի ու կքաջալերվի, կշարունակի աշխատել՝ հպարտություն բերելով ընտանիքին:

Հայկական մամուլը, որ միայն ապրիլ 24-ին է հիշում Հայ դատը, տարվա մնացած ժամանակում չի էլ մտածում այդ մասին, արդյոք չէ՞ր կարող արժանին մատուցել լուսավոր երազներով



ապրող հայ պարմանուհուն, չկոտրել այդ երազը նրա մեջ, որպեսզի նա՝ ավելի փարված հայկականությանը, շարունակի իր հայանպաստ գործունեությունը:

Այդ չեղավ: Հայկական մամուլը չտպեց այն: Թևաթափ եղավ պարմանուհին, որ ոգևորությամբ օրեր էր կորցրել այդ գրությունը պատրաստելու համար և սպասում էր մի փոքրիկ կանաչ լույսի, ավելի վստահ շարունակելու իր ճամփան ...: Դե՛, հարգելի ընթերցող, դո՛ւ ի՞նչ կասես:

7-26-95 թ. ՎՆ-ում քննարկվեցին.

ա. Դաշտահանդեսի հարցը: Որոշվեց այսուհետև այն անցկացնել Griffith Park-ում, որտեղ սանիտարական պայմանները շատ ավելի լավ վիճակում էին, քան Magnolia Park-ում:

Այս այգում, առաջին անգամ կազմակերպելով դաշտահանդեսը և որոշ օրենքներին տեղյակ չլինելով, բավական դժվարությունների առջև հայտնվեցինք: Չնայած դաշտահանդեսի համար հատուկ ուղեցույց-քարտեզ էինք պատրաստել և հայտարարության հետ տպագրել, շատերը չէին կարողացել գտնել դաշտահանդեսի տեղը: Նստարաններ ու սեղաններ քիչ կային ընտրված տեղամասում և ամենակարևորը՝ թույլ չտվին գեներատոր օգտագործել երաժշտական գործիքների համար, իսկ այդ տեղամասում հոսանքատար գծեր չկային: Դաշտահանդեսի ժամանակ մենք տեղեկացանք, որ կա հոսանքատար գծերով հատուկ տեղամաս, որը պետք է վարձել: Հաջորդ տարիներին արդեն հաջողությամբ էին անցնում մեր դաշտահանդեսները:

Նկատի ունենալով, որ 1996 թ. լրանում է ՊՀՄ-ի հիմնադրման 10 տարին, վարչությունը որոշեց շուքով դիմավորել տարեդարձը՝ ՃՊ-ն հետաձգելով 1996 թ. սկզբին:

Ըստ բանկի 12-19-95 թ. տվյալների, միության ունեցած գումարը 7327 դոլար և 31 սենթ է:

## ՀՄՄՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Վերջապես տպագրվեց ՀՄՄՄ-ի ԾԿ-ն մեկ քառորդը ներկայացնող 6 սովորական էջի վրա, որը ներկայացնում ենք:

*ԾՐԱԳԻՐ*

*ՀՄՄՄ-ի հիմնական նպատակներէն է.*

*1. Օգնել Լոս Անճելըսի հայ վարժարաններուն նիւթական, կրթական եւ ուսուցչական բարօրութեան: Աշխատանք տանիլ պետական եւ առեւտրական մեծ ընկերութեանց մօտ՝ անոնցմէ ապահովելու նիւթական միջոցներ եւ ծնողներու կրթաթոշակներու կարեւոր մեկ մասը տուրքէ ազատ կացուցանել (Tax Deductible):*

2. Տնտեսապէս ու կրթականօրէն օգնել Հայաստանին:

3. ՀՄՄՄ-ն իրաւունք ունի մշակութային, հասարակական եւ բարեսիրական ձեռնարկներ ու գործարքներ կատարելու բոլոր հայրենակցական միութիւններու անուններով, որոնք մաս կը կազմեն այս Մարմինին՝ եթէ այդ ձեռնարկներն ու գործարքները չեն հակասեր կամ վնաս չեն հասցներ բաղկացուցիչ ՀՄ-ներուն:

4. Ինչպես բոլոր ՀՄ-ները, ՀՄՄՄ-ն եւս չի կրեր քաղաքական, կուսակցական, յարանուանական բնոյթ, այլ հայապահպանման օգտակար հանդիսացող ոչ-շահակցական (non-profit) Մարմին է (հիմնուած 31 Յուլիս 1990-ին):

ԿԱՆՈՆԱԳԻՐ

1. Իւրաքանչիւր ՀՄ իրաւունք ունի մաս կազմելու ՀՄՄՄ-ին երկու (2) ներկայացուցիչով, մէկ (1) քուէով:

2. ՀՄՄՄ-ն միջամուխ պիտի չըլլայ ՀՄ-ներու գործունէութեան:

3. Որեւէ ՀՄ-ի մը վարչութիւնը եթէ հարցեր ունենայ եւ դիմէ ՀՄՄՄ-ին, վերջինս կրնայ իրաւարարի դեր կատարել հարցը լուծելու համար, յանձնախումբի մը միջոցով:

4. Որոնել նիւթական հնարաւորութիւն ստեղծելու հասութաբեր ճամբաներ, Մարմինը նիւթապէս զօրացնելու համար:

5. ՀՄՄՄ-ի ծախսերու իրացումը կը կատարուի Վարչութեան որոշման համաձայն:

6. Դիւանի հաւանութեամբ կարելի է գործածել մինչեւ 500 տոլար կարեւոր ծախսերու համար: Կալուած գնելու պարագային նկատի ունենալ ՀՄՄՄ-ի պիւտճէն եւ ըստ այնմ որոշում կայացնել Վարչութեան մէջ:

7. Միացեալ Մարմնէն հրաժարող միութիւն մը իրաւունք չունի որեւէ գումար պահանջելու ֆոնտէն:

8. Ամէն տարի, Օգոստոսի հերթական ժողովին տարեկան հաշուեկշիռ ներկայացնել, իսկ հաշուեքննութիւն կատարել երեք (3) ամիսը անգամ մը:

9. Տարին երկու (2) անգամ ընդհանուր հաւաքոյթ կազմակերպել վարչութեանց հետ, կիրենք տեղեակ պահելու ու կարծիքի փոխանակումներ ունենալու եւ յեկուցում տալու:

10. ԾԿ-ի մէջ կարելի է փոփոխութիւններ մտցնել 2/3-ի համեմատութեամբ:

ԼՈՒԾՈՒՄ

ՀՄՄՄ-ն կը լուծուի, եթէ Մարմինի անդամներու թիւը 5-էն վար ըլլայ: Այդ պարագային, ՀՄՄՄ-ի ամբողջ ունեցուածքը կը փոխանցուի «Հայաստան» Հայկական Հիմնադրամին:

«Ծրագիր»ի 1-ին, 2-րդ և «Կանոնագիր»ի 4-րդ կետերը մինչև հիմա էլ չիրագործվեցին , նե 2-րդ կետի համար չհաշվենք Երևանի Մուշեղ Իշխանի անվան դպրոցին նվիրված գումարը:

Հայ ժողովրդի համար 1995 թ. կարևորվում էր Մեծ Եղեռնի 80-ամյակով, որի մասին որոշ տեղեկություններ տրվեց ընթերցողին նախորդ էջերում: Այստեղ նաև նշենք, որ ստեղծված հանձնախմբի անդամները չկարողացան լուծել որոշ հիմնական հարցեր, պատճառաբանելով նյութականի պակասը և դիմեցին նրա աշխատանքներին մասնակցող կազմակերպություններին՝ նյութական օգնություն խնդրելով նրանցից, հետագայում վերադարձնելու պայմանով: Հանձնախումբը նկամուտներ էր ակնկալում Մեծ Եղեռնի 80-ամյակի առթիվ պատրաստված հուշանվերների և տպագրված գրքերի իրացումից:

Վարչության որոշման համաձայն ՀՄՄՄ-ն իր բանկում ունեցած ամբողջ գումարը՝ 3 000 դոլար հանձնեց հանձնախմբին: Իմ հարցին՝ «Եթե չվերադարձնեն, գումարը ինչպե՞ս պիտի ետ վերցնենք», Գրիգոր Շենյանը հանգստացրեց ինձ, ասելով՝ «Այդ մասին մի մտածիր, կվերցնենք»: Բայց այդ գումարը չվերադարձվեց մինչև հիմա (2002 թ.), և այլևս չի էլ վերադարձվի:

Հանձնախումբը իր բարձրության վրա չգտնվեց կազմակերպչական հարցերում, որոնք քննարկվեցին ՀՄՄՄ-ի վարչական նիստում, որոշվեց այդ մասին հոդված՝ գրել, որը հանձնարարվեց տողերիս հեղինակին: Ահա այն.

## ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՆ ԱՆՄԱՀ Է
## ԵՂԵՌՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ 80-ԱՄՅԱԿ

Ապրիլ 24: Աշխարհի համայն հայության 1915 թ. մեկուկես միլիոն անմեղ նահատակների հիշատակի օր: Այս ամիսը հայի մոտ ընդվզում է առաջացնում. կարծեք ինքն է մեղավորը հայ ազգի կոտորածի համար: Բայց չէ՞ որ ապրիլը՝ անունը հուշում է, որ կյանք է, ապրել է: Եվ արդյո՞ք ոչ-մի կապ չկա մեր նահատակների և ապրիլյան այդ օրերին ջարդից մազապուրծ ապրիլի տված կյանքով իր գոյությունը շարունակող և հարատևող հայ ժողովրդի միջև: Կապ կա և այդ կապը՝ այդ ապրելու ուժը գարնան, այսօր մեր Հայրենիքին բերեց անկախություն, որի հովանու տակ աշխարհով մեկ սփռված հայերը, իրենց ձայնը լսելի են դարձնում խուլ ձևացած պետություններին: Իսկ այդ գործում նրանց մեծ օգնություն են ցույց տալիս Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները՝ հյուպատոսարանները, իրենց ակտիվ հյուպատոսներով ու աշխույժ անձնակազմերով:

Այսօր Ապրիլի 24-ն է: Հայաստանի մայրաքաղաք Երևանի սրտում նահատակների հիշատակին բարձրացված Մեծ Եղեռնի հուշարձանը միաժամանակ ցույց է տալիս մեր հողերի, մեր պահանջատիրության անժամանցելի լինելը: Առավել ևս մեր ժողովրդի հարատևության սիմվոլն է: Ի հեճուկս Թուրքիայի, հայը, փոխանակ թանգարանային նմուշ դառնալու, դարձավ հզոր պետություն, իր տեղը գրավելով ազգերի միջազգային ընտանիքում: Թուրքիան կարծում էր, որ բնաջնջելով հայ ժողովուրդը և յուրացնելով նրա ունեցվածքը Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում, վերջ պիտի դներ Հայկական հարցին: Նա նույնիսկ չէր էլ կարող երևակայել, որ իր վայրագ, անասնական, անմարդկային արարքներից 80 տարի հետո, հայ ժողովուրդը փյունիկի նման պիտի հառներ՝ ստեղծելով անկախ Հայաստանի Հանրապետություն: Երևանում Մեծ Եղեռնի 80-ամյակը նշվեց ակադեմիական մակարդակով, որտեղ աշխարհի տարբեր երկրների ներկայացուցիչները և թուրք անհատներ դատապարտեցին հայկական ցեղասպանությունը և հանձին նրան՝ ամեն մի ցեղասպանություն, որ կատարվում է մարդկության

---

1.- Տե՛ս Վահան Բահարյան, Շարունակվող Մեղեդի, Երևան, 2001, «Զանգակ-97», էջ 62, ինչպես նաև՝ «Նոր Կեանք» թիվ 22, Մայիս 11, 1995 էջ 20:

նկատմամբ: Մեծ Եղեռնի հուշարձանի մոտ կատարվեց նահատակներին նվիրված թանգարանի բացումը, որը այսուհետև բոլոր հուշարձան այցելողներին պիտի փաստի դրա իրականությունը իր իսկ՝ Թուրքիայի անժխտելի փաստաթղթերով, որոնք պարզորոշ ցույց են տալիս հայկական ջարդի կանխամտածված կազմակերպումը նրա կողմից:

**1965 թ.** Մեծ Եղեռնի հիսնամյակի առթիվ, Խորհրդային Միության գոյության ամբողջ ժամանակաշրջանում նրա աքցանի մեջ եղած խորհրդային հանրապետություններից Հայաստանի մայրաքաղաք Երևանում կատարվեց այնքա՜ն երկար սպասված հրաշքը: Հայ ժողովուրդը, մոռանալով բռնապետության ճիրաններում իրագործվող դաժան պատիժներն ու սարսափները, հատկապես ազգային հարցերի շոշափման դեպքում, որոշեց Մեծ Եղեռնին նվիրված հոյակապ հուշահամալիր կառուցել մայրաքաղաք Երևանի սրտում, գեղեցիկ մի բարձունքում Ծիծեռնակաբերդում: Նա միաժամանակ ողողեց Երևանի պողոտաներն ու փողոցները ցույցերով՝ պահանջելով սարսափազդու Կրեմլից իր իրավունքների պաշտպանությունը, Թուրքիայից՝ վերադարձնելու հայ ժողովրդի բռնագրավված հողերը, հատուցելու մեկուկես միլիոն նահատակների արյան, նրանցից հափշտակված ունեցվածքի, ավերված հայկական բնակավայրերի ու հուշարձանների և մշակույթի ոչնչացված օջախների համար: Այս բոլորի համար հայ ժողովուրդը պարտական էր այն ժամանակվա Հայաստանի Կոմկուսի կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար, լուսահոգի Յագով Զարոբյանին: Նա, տեսնելով իր ժողովրդի ընդվզումը, թույլ տվեց անել անհնարինը խորհրդային խիստ ռեժիմի պայմաններում, տարածելով մեր ԴԱՏԸ աշխարհով մեկ, հիշեցնել այն՝ հիշողությունից կույր աշխարհը ղեկավարող հսկաներին:

Նրա գործունեությունը այսքանով չսահմանափակվեց: Նա նաև Արցախը և Նախիջևանը Հայաստանին վերամիացնելու հարցը դրեց Կրեմլի առջև: Կազմվեցին երեք հանձնախմբեր՝ Հայաստանից, Ադրբեջանից և Խորհրդային Միությունից, որոնք պիտի քննարկեին հնարավոր ուղիները խաղաղ ճանապարհով դրանք վերամիացնելու Մայր Հայրենիքին: Վերոհիշյալ երկու հարցերը պատճառ դարձան նրան պաշտոնից հեռացնելուն, և չիրականացավ Արցախի և Նախիջևանի վերամիավորումը Հայաստանին:

**1965 թ.** ապրիլին, Մեծ Եղեռնի 50-ամյակի առիթով, Երևանում տեղի ունեցող իրադարձությունները չէին կարող վրիպել սփյուռքահայերի ուշադրությունից: Սփյուռքի այն գաղթօջախներում, որտեղ պետությունները բարյացակամ էին ու հասկացողություն էին ցուցաբերում հայ ժողովրդի եղեռնի նկատմամբ, հայերի կողմից սկսեցին կառուցվել Մեծ Եղեռնին նվիրված հուշարձաններ: Հայ ժողովուրդը, մեծ կարոտով ապրելով, այդ թվականից սկսեց ավելի համախմբված և կազմակերպված ձևով ներկայացնել իր պահանջատիրության հարցը, ամեն տարի հավաքվելով եղեռնի հուշարձանների շուրջը, երդվելով և պատգամելով նոր սերունդներին՝ չմոռանալ հայ ԴԱՏԸ, հարցը բարձրացնել միջազգային քաղաքական շրջանակներում բոլոր պետությունների մոտ, որպես անժամանցելի հարց:

Այսօր ապրիլի 24-ն է: Մեր երազների իրականացման ճանապարհին ենք: Հպարտ ենք, որ աշխարհի հզոր պետություններից Ռուսաստանը իր Դումայում առաջինն ընդունեց հայկական ցեղասպանությունը որպես գոյություն ունեցող իրողություն և դատապարտեց Թուրքիային:

Շատ հավանական է, որ հայկական ցեղասպանությունը շուտով կընդունվի Հունաստանի, Կիպրոսի, Բուլղարիայի, Ֆրանսիայի և այլ պետությունների կողմից: Այն քննարկվում է նաև անգլիական պառլամենտում:



ԱՄՆ-ում, չնայած նախագահ Բիլ Քլինթոնի որոշ դրական արտահայտություններին և մի խումբ կոնգրեսմենների ակտիվ գործունեության, հարցը բախվում է Ամերիկայի շահերի հետ Թուրքիայում: Նկատի ունենանք, որ ինչպիսի իշխանություն էլ լինի Ռուսաստանում, Թուրքիան մնում է ԱՄՆ-ի պատնեշը նրա դեմ և արգելակում է հայկական ցեղասպանության ընդունմանը՝ ԱՄՆ-ի Կոնգրեսում: Մենք պետք է բազմապատկենք մեր ճիգերը՝ սիրաշահելու, համոզելու, հատկապես փոքր պետություններին, որպեսզի ընդունեն ցեղասպանության իրողությունը: Չմոռանանք, որ ՄԱԿ-ն կազմված է մեծամասնությամբ բազմաթիվ փոքր պետություններից, որոնց ձայները կարող են մեծ դեր խաղալ հարցի արդար լուծման ճանապարհին:

Այսօր ապրիլի 24-ն է: Լոս Անջելեսի հայահոծ համայնքում դեռ **1994 թ.** սեպտեմբերին կազմվեց «Եղեռնի 80-ամյակի ոգեկոչման հանձնախումբ»՝ իր Գործադիր մարմնով (13 կազմակերպություններ ներկայացնող), որտեղ առաջին անգամ բացի ազգային երեք կուսակցություններից, ընդգրկվեցին տարբեր հասարակական կազմակերպություններ:

Գործադիր մարմինը ժրաջան աշխատանք տարավ բարձր մակարդակով դիմավորելու համար Մեծ Եղեռնի 80-ամյակը:

ՀՄՄ-ն, հանձնախմբի շրջանակում միությունների ու կազմակերպությունների համագործակցությունը ապահովելով, առաջ տարավ միասնության հարցը:

Բանը նրանում է, որ **1994 թ.** ապրիլի 23-ին ՀՄՄ-ն կազմակերպեց Մեծ Եղեռնին նվիրված հուշ-երեկո պատշաճ ծրագրով: Ելույթ ունեցան Տիգրան Ոսկունին և Հակոբ Կարապենցը: Ձեռնարկը ունեցավ մեծ հաջողություն: Նրա մասին գրվեց «Դեպի Եղեռնի 80-ամյակ» խմբագրական[1] և տողերիս հեղինակի «Մեծ Եղեռնի ոգեկոչումը ՀՄՄ-ի կազմակերպությամբ» հոդվածը[2], որտեղ կոչ էր արվում ազգային կուսակցություններին, եկեղեցական թեմերին, բոլոր կազմակերպություններին և միություններին, միասնական ճիգերով կազմել հատուկ Գերագույն մարմին Մեծ Եղեռնի 80-ամյակը պատշաճորեն նշելու ու այն միջազգայնացնելու համար: Սակայն ոչ մի արձագանք չեղավ այս ուղղությամբ: Այն ժամանակ ՀՄՄ-ն, իր հատուկ վարչական նիստում քննարկելով այդ հարցը, նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը, պատրաստեց հատուկ նամակ և օգոստոս **14, 1994 թ.** հասցեագրեց եկեղեցական թեմերին, ազգային երեք կուսակցություններին, բոլոր միություններին և կազմակերպություններին, որպեսզի Գերագույն մարմինը կազմվի սեպտեմբերին ու աշխատանքները սկսի հոկտեմբերին: ՀՄՄ-ի կողմից այս մասին մամուլում ոչ մի հաղորդագրություն չեղավ: Այդ նամակը ամբողջությամբ մեջբերվում է.

<u>ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ</u>

825 E. COLORADO ST., GLENDALE, CA 91205 TEL.: 818 -240-9996

14 Օգոստոս, 1994

1995 թուականին Հայաստանի եւ Սփիւռքի մէջ հայ ժողովուրդը պիտի նշէ 1915 թ. Մեծ Եղեռնի 80-ամեակը:

---

1. Տե՛ս «Նոր Կեանք» Թիվ 21, Մայիս 5, 1995:
2. Տե՛ս «Փարոս» Հունիս 1, 1994:

Թուրքիոյ կառավարութիւնը եւ անոր կարգին լծուած վարձկան գրիչներ կը շարունակեն անտեսել եւ ուրանալ հայոց դէմ կատարուած ցեղասպանութիւնը, աղաւաղելով եւ նենգափոխելով պատմութիւնը զանազան միջոցառումներով:

Միւս կողմէ, մեծ պետութիւնները մեկնելով իրենց քաղաքական շահերէն, կրաւորական եւ անտեսումի քաղաքականութիւն կը վարեն հայկական ցեղասպանութեան ճանաչման եւ հայ ժողովուրդին արդար հատուցում տալու հարցին նկատմամբ:

Մեկնելով այս զոյգ իրականութիւններէ, հայ ժողովուրդը պէտք է գիտնայ օգտուիլ 1915-ի Մեծ Եղեռնի 80-ամեակի առիթէն համախումբ եւ միասնական աշխատանքով աշխարհը համոզելու, որ ի վերջոյ ընդունի եւ Թուրքիոյ ընդունիլ տայ հայկական ցեղասպանութեան իրողութիւնը, ի հարկին պարտադրելու, որպէսզի Թուրքիա կատարէ անհրաժեշտ հատուցումը հայ ժողովուրդի նկատմամբ:

1915-ի Մեծ Եղեռնի 80-ամեակի նշումին համար ծրագրուած է հրաւիրել ԱՄՆ-ի պետական բարձրաստիճան դէմքեր՝ սկսած նախագահէն մինչեւ ծերակուտականները, Գալիֆորնիոյ նահանգապետէն մինչեւ նահանգային ղեկավար անձնաւորութիւնները, ինչպէս նաեւ միջազգային համբաւ վայելող եւ հայ ժողովուրդի բարեկամներ:

Նման ծրագրի իրականացման համար ՀՄՄՄ-ը կ'առաջարկէ ստեղծել Համազգային Գերագոյն Մարմին մը, բաղկացած՝ հայ յարանուանութեանց հոգեւոր պետերէ, կուսակցութեանց, բարեսիրական, մշակութային, հայրենակցական և մարզական միութիւններու ներկայացուցիչներէ:

Համազգային Գերագոյն Մարմինը աշխատանքները պէտք է սկսի կարելի եղածին չափ շուտ: ՀՄՄՄ-ն կը գտնէ, որ յիշեալ Մարմինը պէտք է կազմուի 1994 թ. Սեպտեմբերին եւ գործի անցնի Հոկտեմբերին իսկ, կարենալ պատրաստելու համար ցեղասպանութեան ոգեկոչման համապարփակ ծրագիրը:

Առ այդ, ՀՄՄՄ-ը կը խնդրէ պաշտօնական նամակով իրեն յայտնել ձեր երկու ներկայացուցիչներուն անունները, որպէսզի ժամ առաջ Գերագոյն Մարմինը գործի անցնի:

ՀՄՄՄ-ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հաւելեալ մանրամասնութիւններու համար կրնաք հեռաձայնել հետեւեալ թիւերուն.

(818) 240-9996/7 Ատենապետ
(818) 997-8845 Փոխատենապետ
(818) 240-2070 Ատենադպիր

Նախագահ՝
ՎԱՀԱՆ ՇԱՄԼԵԱՆ
(Ստորագրութիւն)

Ատենապետ՝ ԳՐԻԳՈՐ ՇԵՆԵԱՆ (Ստորագրութիւն)
Ատենադպիր՝ ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ (Ստորագրութիւն)

Այս նամակը դարձավ մղիչ ուժ: Եւ Եկեղեցական թեմերը 1994 թ. օգոստոսի երկրորդ կեսին հանդես եկան միացյալ հայտարարությամբ՝ Մեծ Եղեռնի 80-ամյակը նշելու համար հանձնախումբ կազմելու առաջարկությամբ, որի իրականացման համար նամակներ էին ուղարկվել բոլոր կազմակերպություններին: Հետևաբար, պատճառը ՀՄՄՄ-ն էր, որ եկեղեցական թեմերի և ազգային երեք կուսակցությունների հետ, հանձնախմբում ընդգրկվեցին նաև համայնքի միություններն ու կազմակերպությունները: ՀՄՄՄ-ն ողջունեց այդ հայտարարությունը, նկատի ունենալով «Լավ է ուշ, քան երբեք» խոսքը և իր ունեցած դերը նրա իրականացման գործում:

Գործադիր մարմինը իր կարելին արեց Եղեռնի 80-ամյակը հաջող կազմակերպելու համար, բայց Մոնթեբելլոյի նահատակների հուշարձանը մեկ պիտի սպասի մինչև եկող տարի՝ Եղեռնի 81-ամյակը, որպեսզի գոնե՛



այդ ժամանակ այցելենք դրան, նշելու համար մեր մեկուկես միլիոն նահատակների հիշատակը:

Մեր ժողովուրդը չաջակցեց Հանձնախմբին ոչ նյութապես և ոչ էլ բարոյապես: Նույնիսկ **Convention Center**-ում տեղի ունեցող հավաքույթին, որ նախատեսնված էր **10000** հոգու համար, բայց հետո նկատի առնվեց **7000**, հավաքվել էր **2500-3000** հոգի, երբ հրավիրված էին Կալիֆորնիայի նահանգապետը, Լոս Անջելեսի քաղաքապետը, բազմաթիվ կառավարական պաշտոնյաներ, տարբեր պետությունների հյուպատոսներ և դիվանագիտական ներկայացուցիչներ: Չմոռանանք, որ մոտ **350000**-անոց հայ համայնք ունենք այստեղ: Այս ձևո՞վ պիտի միջազգայնացնենք մեր դատը: Ո՞րտեղ էր այն ժողովուրդը, որը կոկորդը պատռելով գոռում և մեղադրում էր մեր հայրենիքի անկախ Հանրապետության ղեկավարներին, նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, որ Եղեռնը մոռանում ու ուրանում են: Ո՛չ, հարգելի տիկնայք և պարոնայք, Եղեռնը հայրենիքում՝ Հայաստանում երբեք չի մոռացվի և միայն մեր պետականության միջոցով կստանա իր արդար լուծումը, երբ գա ժամանակը, այսինքն, երբ մեր պետությունը հզորանա: Իսկ մինչ այդ կան բազում հարցեր, որոնք այսօր արգելակում են մեր Հայրենիքի առաջընթացը և պետք է լուծվեն առաջին հերթին: Ուստի, փոխանակ օգտվելու Հայրենիքի այսօրվա վատ տնտեսական ու քաղաքական պայմաններից՝ իշխանություններին վարկաբեկելու և նրա դեմ թակարդներ լարելու, միասնական ճակատով օգնենք Հայաստանին հանուն մեր ժողովրդի ու նրա արդար դատի իրականացման:

Հանձնախմբի ամենամեծ թերությունը եղավ այն, որ հուշարձանի մոտ հավաքույթը չկայացավ: Ոչ մի պատճառաբանություն ընդունելի չէ: Այն պետք էր իրականացնել բոլոր միջոցներով:

Հուշարձաններ կառուցվեցին ամբողջ աշխարհով մեկ, որպեսզի հայը իր ընտանիքով այցելի դրանց ամենուրեք և հատկապես ապրիլի 24-ին՝ իր ղեկավարների հետ, ընտանիքի անդամները, երեխաները, մի խոսքով՝ նոր սերունդները պատկերացնեն Եղեռնը իր ամբողջ էությամբ և նվիրվեն մեր դատի արդար լուծման իրականացման դժվարին, բայց պատվավոր գործին:

Ապրիլի 24-ն է: Առավոտյան պայմանավորված ժամին հուշարձանի մոտ ենք. Լոս Անջելեսում Հայաստանի Գլխավոր հյուպատոս Արմեն Բայբուրթյանը իր կնոջ, օգնական՝ Խաչիկ Խուդիկյանի և հյուպատոսարանի աշխատակազմի հետ, հյուպատոսարանին օգնող հանձնախումբը՝ ատենապետ Բարսեղ Քարթալյանը, անդամներ՝ տեր և տիկ. Արփիար ու Հերմինե Ճանոյանները և ես:

Գլխավոր հյուպատոս Արմեն Բայբուրթյանի գլխավորությամբ հյուպատոսարանի կողմից ծաղկեպսակ կետեղվեց՝ նահատակների հիշատակին: Բարսեղ Քարթալյանը հավաքված մի բուռ մարդկանց ներկայացրեց Գլխավոր հյուպատոսին, որը և իր խոսքը ասաց ներկաներին:

Տարօրինակ էր նաև «միասնական» Գործադիր մարմնի անմիասնական որոշումը այն մասին, որ Լոս Անջելեսում Հայաստանի Գլխավոր հյուպատոսը, Մեծ Եղեռնին նվիրված հուշ երեկոյին՝ **Convention Center**-ում երկրորդ շարքում նստի և ելույթ չունենա: Արդյո՞ք այդ հանձնախումբը համազգային էր, թե՞ կազմված էր մեծամասնությամբ իրենց շահերը հետապնդող խմբավորումներից, որոնք կամ չեն հասկանում, կամ էլ ավելի շուտ չեն ուզում հասկանալ և տեսնել այսօրվա իրականությունը, որ Հայ դատի հարցը իրենք չեն կարող լուծել: Հայ դատի հետապնդման, նրա միջազգայնացման



ՀՀ Գլխավոր հյուպատոս Արմեն Բայբուրթյանը Մոնթեբելլոյի հուշարձանի մոտ նահատակների հիշատակին ծաղկեպսակ դնելիս: Ձախից աջ՝ Բարսեղ Քարթալյան, Արփիար Ջանոյան, Վահան Բահարյան, Հերմինե Ջանոյան, Խաչիկ Խուդիկյան, Իվետա և Արմեն Բայբուրթյաններ իրենց երեխաների հետ:

կենտրոնը գտնվում է Երևանում, և միայն պետականությունը կարող է իրականացնել այն, օգտագործելով իր դիվանագիտական կապերը, իսկ Սփյուռքը մեծ դեր ու կարողություն ունի օգնելու նրան այդ հարցում:

Արդյո՞ք այնտեղ ներկա օտարերկրյա դիվանագետները չզարմացան, որ Հայաստանի Գլխավոր հյուպատոսը ելույթ չի ունենում այս շատ կարևոր ձեռնարկում իր պետության կողմից պահանջատիրության իրավունքով: Առիթը չօգտագործվեց՝ մեր միասնությունը ցույց տալու և ցեղասպանությունը մասսայականացնելու համար ԱՄՆ-ում, իրենց իսկ լրատվական գործակալությունների միջոցով: Ափսո՜ս...

Այս երևույթը ցույց է տալիս, որ հանձնախումբը իրականում արտաքնապես էր միասնական, քանի որ քվեարկությամբ էր ընդունվում ամեն մի որոշում, իսկ քվեարկողների մեծ մասը մեր պետականության հետ չէին:

Մյուս կողմից, ցույցի ժամանակ տհաճ էին թուրքական դեսպանատան առջև կուսակցությունների միջև անհասկացողությունները: Ինչպե՞ս կարելի է թուրքական դեսպանատան առջև պահանջատիրության հարց բարձրացնել, երբ բարձրացնողների մոտ փոխհասկացողություն, համերաշխություն ու միասնություն չկան: Բնական է, որ թշնամին պիտի ուրախանա՝ մեր անհամերաշխության և ապիկարության վրա ծիծաղելով:

Այնքանից հետո կարելի է եզրակացնել, որ հանձնախումբը աշխատում





Մոնթեբելլո: Մեծ Եղեռնի 77-ամյակն է նշվում: Ձախից աջ՝ Լուսինե Զաքարյան, Նորա Արմանի:

էր ներքին լարված մթնոլորտում և չկարողացավ իր դերը մինչև վերջ կատարել, ապահովել 15000 դոլար՝ նահատակների հուշարձանի մոտ հավաքույթ կազմակերպելու համար:

Մի հարց ևս: Այսօր Լոս Անջելեսում ապրում է Հայաստանից եկած մոտ 70-80 հազար հայ: Երբ սփյուռքահայերը ձեռնարկներ են կազմակերպում առանց Հայաստանից եկած արվեստագետների մասնակցության, մեծ հաջողություն չեն ունենում: Հարց է ծագում. չէ՞ր կարելի կազմակերպիչ հանձնախմբի կամ գործադիր մարմնի մեջ ընդգրկել նրանց ներկայացուցիչներին, որպեսզի հավատքն ու վստահությունը իրար հանդեպ ավելի կորանար, և պահանջատիրության հարցը միասնական ոգով արծարծվեր:

Լավ կլիներ նաև **Convention Center**-ի հուշ-երեկոյում, երկարաձգված հայտագրի փոխարեն լիներ գեղարվեստական պատշաճ հայտագիր, առիթը օգտագործելով՝ օտարերկրացի դիվանագետներին և նահանգի ղեկավարությանը ցույց տալ հայ մշակույթի ծաղկումն ու հարատևությունը Մեծ Եղեռնից 80 տարի հետո:

Տուն վերադարձիս մտորումների մեջ էի. ապրիլ 24-ը հայ ժողովրդի Սուրբ օրն է: Ամեն տարի այդ օրը ես չեմ աշխատում, որպեսզի հուշարձան այցելեմ, հարգեմ նահատակների հիշատակը և հայրենակիցների հետ մի ՆՈՐ ՈՒԽՏՈՎ շարունակեմ պահանջատիրական իրավունքների արդար դատը: Ու հանկարծ այնտեղ գտնվող մի քանի տասնյակ մարդիկ աչքիս չեն



*Մեծ եղերնի 80-ամյակի հուշ-երեկոյում ելույթ է ունենում Շաքե Թուխմանյանը:*

երևում, կարծես, հուշարձանը տափաստանում օտարված չենք լինի:

Ապրիլի 24-ն է: Եթե մենք ուզում ենք առաջ ընթանա մեր արդար դատը, անպայման հուշարձան պետք է այցելենք, նոր ուժ ու եռանդ, նոր հավատք կոփենք մեր մեջ, պայքարենք արդարորեն, ապրենք ճշմարտորեն:

Թող արևը միշտ լուսավորի ու ջերմացնի մեր Հայրենիքը, Նրանով ենք մենք կարողանում ապրել ու տոկալ Սփյուռքում: Կրկնենք, որ առանց պետականության Հայ դատի հարցը չի լուծվի: Հետևաբար մեր ամբողջ կարողությամբ օգնելու ենք անկախ Հայաստանի Հանրապետությանը:

Առջևում Մեծ Եղեռնի 81-ամյակն է: Նկատի ունենալով Եղեռնի 80-ամյակի կազմակերպչական թերությունները, ավելի համախմբված դիմավորենք այն` գիտակցելով, որ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՆ ԱՆՄԱՀ Է:





*Գլխավոր հյուպատոս Արմեն Բայբուրթյանի հետ Բևվերլի Հիլզում Հայաստանի նոր բացված հյուպատոսարանում:*

Կարևորվում էր «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի աշխատանքներին ՀՄՄՄ-ի մասնակցելը որպես լիիրավ գործադիր անդամներից մեկը: Հարցը քննարկվեց ՀՄՄՄ-ի նիստում և դրական լուծում ստացավ: Նշենք, որ այդ հարցով նամակ էր գրվել Հիմնադրամի Լոս Անջելեսի մասնաճյուղի ղեկավարությանը: Որոշվեց նոր նամակ գրել Երևան, «Հիմնադրամ»ի տնօրինությանը: Նամակը ուղարկվեց1996 թ. սկզբին:

Նախորդ էջերում խոսել էի արդեն «Medical Outreach»ի 6 կազմակերպությունների հետ 1994 թ. նոյեմբերի 24-ին կազմակերպած թելեթոնի մասին, որին դեմ էր ՀՅԴ-ն: Տհաճություններ տեղի ունեցան, որոնք շարունակվեցին 1995 թ. ևս:

ՊՀՄ-ի վարչությունը հունվար 28, 1995 թվակիր մի նամակ ստացավ ՀՅԴ-ի Արևմտյան Ամերիկայի Կենտրոնական կոմիտեից, որով նա հրավիրվում էր 1995 թ. փետրվարի 6-ին կայանալիք, համայնքի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպման, խորհրդակցելու ՀՀ նախագահի 1994 թ. դեկտեմբերի 28-ի հրամանագրի (Հայաստանում ՀՅԴ-ի գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին) և փետրվար 18-ին «Արցախ Ֆոնդ»ի կողմից կազմակերպվելիք թելեթոնի աշխատանքների մասին: ՊՀՄ-ի վարչության և ՀՄՄՄ-ի կողմից մասնակցեցի այդ խորհրդակցությանը, որտեղ ներկայացվեց նաև «Արցախ Ֆոնդ»ի 1994 թ. թելեթոնի հաշվետվությունը:

1995 թ. փետրվարի 18-ին ՀՅԴ-ի «Արցախ ֆոնդ»ը կազմակերպեց թելեթոն, որին մասնակցեց ամբողջ հայ համայնքը: Անկեղծ լինելու համար, պետք է նշել, որ հայ համայնքում շատերը, հատկապես հայաստանահայերի գերակշռող մասը համաձայն չէին ՀՀ նկատմամբ ՀՅԴ-ի վարած քաղաքականության հետ, բայց, երբ հեռուստացույցով թելեթոնի սրահում նրանք տեսան Արք. Վաչե Հովսեփյանին՝ նստած Կիլիկիայի թեմի առաջնորդի հետ, ոգևորվեցին համայնքում միասնության այդ դրսևորումով՝ «Գեղ կանգնի, գերան կկոտրի», և քսակները բացին նվիրական Արցախին օգնելու համար՝ ապահովելով թելեթոնի հաջողությունը:

Պարզվում է, որ «Medical Outreach»ին ամբաստանելու նյութերը մատակարարվում են Արցախի որոշ ղեկավարների կողմից, նրանց ոչ հեռատես քաղաքականության և անձնական շահերի նպատակով: Մոտս պահպանվել է արցախցի գրող, մտավորական Բակուր Կարապետյանի 1995 թ. հունվարի 13-19-ին «Երկիր Նաիրի»ում տպագրված մի հոդվածը[1], որը խորությամբ լուսաբանում է այդ հարցը:

1 9 9 4 Թ Ե Լ Ե Թ Ո Ն Ի
Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Գ Ո Ւ Մ Ա Ր

**$1,600,000**
**Los Angeles & San Francisco Telethons**

---

Նախագահներու Խորհուրդ (ԴԴԿ)
$ 1,017,000.00

Գերագոյն Խորհուրդ (ԼՂՀ)
$ 44,700.00

Սոցիալական Ապահովման Նախարարութիւն
$ 40,800.00

Շահումեանի շրջան
$ 90,900.00

Հադրութի շրջան
$ 28,340.00

Ասկերանի շրջան
$ 13,469.00

Հրատարակչական
$ 7,000.00

Բժշկական
$ 6,530.00

Քաղաքական (Ներկայացուցչութիւն Երեւան)
$ 5,000.00

Սարքեր և այլեւայլ
$ 20,920.00

Թելեֆոնի և գրասենեակային ծախսեր
$ 195,000.00

Փոխանցուած Ընդհանուր Գումար
$1,469,659.00

*ՀՅԴ-ի «Արցախ» ֆոնդի 1994 թ. թելեթոնի հաշվետվությունը:*

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՆԱՇՆՈՐՀ ՉԷ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԼԵՈՆԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

*Խուսափելով վեճը թշնամանքի վերածելուց, ես որոշել էի իմ դեմ ձեր կատարած և ոչ մի քայլին չպատասխանել: Սակայն «Հնչակ Հայաստանի» 1994 թ. թիվ 93 համարում գրված հոդվածը, այնուամենայնիվ, ստիպեց դրժելու վճիռս և ձեզ ուղղելու այս նամակը: Հենց սկզբից ասեմ, որ հոդվածը լեցուն է իմ հասցեին կրպարտանքներով ու անհիմն մեղադրանքներով: Անշուշտ, այդ քայլը «Ազգ» թերթի 1994 թ. նոյեմբերի 10-ի համարում ամերիկահայ անվանի ոսկրաբան և բարեգործ «Մեդիքըլ Աութրիչ Արմինիանս» (բժշկական օգնություն հայերին) կազմակերպության հիմնադիր նախագահ Վարդգես Նաճարյանի հետ իմ հարցազրույցի պատասխանն է: Լոսանջելեսցի բարե-*

---

1.- Տե՛ս «Նոր Օր Եռօրեայ», Շաբաթ, Մարտ 4, 1995:



*գործը, որը հիմնադրել և ֆինանսավորում էր արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկների ընտանիքների օգնության ֆոնդը, հարցազրույցում դժգոհություն էր հայտնել տեղեկատվության և ուղարկվող տարադրամը ռուբլու կամ դրամի վերածելու գործընթացից: Հենց դա էլ ձեր վայրույթի առիթը եղավ: Նույն օրը դուք ինձ ամեն կերպ համոզում էիք, որ նույն թերթում հերքեմ Վ. Նաճարյանի խոսքերը: «Մեդիքըլ Աութրիչ»ի երևանյան ներկայացուցիչներ Բաբկեն Վարդանյանի և Գուրգեն Մելիքյանի ներկայությամբ սպառնացիք վարկաբեկել, համապատասխան նյութեր ու տեսաժապավեններ ուղարկել Լոս Անջելես՝ ՀՅԴ-ի «Ասպարեզ» թերթին ու «Հորիզոն» հեռուստածրագրին ու դրանով իսկ խանգարել «Մեդիքըլ Աութրիչ»ին և հայկական 6 այլ կազմակերպություններին, հաջող անցկացնելու նոյեմբեր 24-ի հեռուստամարաթոնը: Ես ձեզ համոզում էի, որ Սփյուռքում նոր զրոհումների, նոր վեճերի առիթ ստեղծելու իրավունք չունեք, քանի որ այնտեղ առանց այն էլ շատ են ճեղքերը, իսկ արցախյան գոյամարտը, Հայ դատը, հայոց պետականության ու ազգային շահերը, Ադրբեջանից բռնագաղթած ու ցիրուցան եղած 650 հազար հայերի խեղճ ու կրակ կյանքն ու պահանջատիրական իրավունքը թելադրում են, որ չխորացնենք մեր ներքին ճեղքերը, միավորվենք, ամուր ու միասնական մարմին դառնանք, դիմակորենք մեր թշնամիների հարվածներին: Ես գնահատում եմ նաև ՀՅԴ «Արցախ» հիմնադրամի գործունեությունը, որը ձեռնարկել է պատերազմի հետևանքով ավերված արցախյան գյուղերի վերականգնման գործը: Սակայն այն չպետք է հակադրվի սփյուռքահայության մեկ այլ հատվածի ձեռնարկած Հայաստանում և Արցախում բժշկական ծառայության մակարդակը բարձրացնելու ծրագրին: Ի վերջո, բոլորը չէ որ կարող են իրենց որդուն Լոնդոն բուժման ուղարկել: Հազարավոր հաշմվածներ, վիրավորներ բժշկական ծառայության մակարդակի բարձրացման կարիք ունեն, դրանից է կախված նրանց ճակատագիրը: Նրանց վաղվա օրը:*

*Պարոն Պետրոսյան, հիշեցնեմ, որ ես ընդամենը լոսանջելեսցի բժշկի կրույցը ձայնագրողն էի ու գրավոր տեսքով այն թերթին առաջարկողը ու ես իրավունք չունեի փոխելու հարցի պատասխանները: Անշուշտ, հիշում եք, որ «Ազգ» թերթի խմբագիր Պարոն Հ. Ավետիքյանը ձեզ առաջարկեց ձեր պատասխան կրույցն անցկացնել ինձ հետ: Սակայն դուք անմիջապես մերժեցիք, որովհետև ծրագրել էիք ամեն ինչ ուրիշների միջոցով իրականացնել: Ի վերջո դուք Վ. Նաճարյանի ու «Մեդիքըլ Աութրիչ»ի դեմ հերյուրանքներով ու մեղադրանքներով լեցուն նյութեր ուղարկեցիք ԱՄՆ՝ «Ասպարեզին» ու «Հորիզոն»ին, որոնք անմիջապես, փութաջանորեն տպագրեցին ու հաղորդեցին հեռուստածրագրով՝ նպատակ ունենալով խանգարելու հանգանակությանը: Ինչպես հայտնի է, սակայն, այս նպատակը չիրականացավ: Այն ոչ թե խանգարեց բժշկական բարեգործությանը, այլ տրամադրեց ԱՄՆ-ի, Կանադայի և Հարավային Ամերիկայի ազգի շահերով շահագրգիռ հայությանը նեցուկ կանգնելու «Մեդիքըլ Աութրիչ»ին, որը հավաքեց ռեկորդային գումար: Այս վեճը իսկական հակամարտության վերածվեց և շարունակվում է մինչև օրս էլ: Ո՞րն է պատճառը, ի՞նչ եք ցանկանում նման բաժանարար քայլերով:*

*Ձեր իսկ հորդորանքով ես կանգեցի Լոս Անջելես՝ «Մեդիքըլ Աութրիչ»ի գրասենյակ և խնդրեցի շտապ ուղարկել զոհվածների ընտանիքների օգնության ֆոնդին հատկացված գումարների ցուցակը, որի միջոցով ես հնարավորություն կունենամ ստուգելու ուղարկված ու բաժանված գումարների հարաբերությունը: Սակայն հատուկ ծրագրերի պետվարչության մուտքը, որտեղ աշխատում էիք, հսկող հատուկ ջոկատի ... տղաներն արգելեցին ինձ շենք մտնել, հայտնելով, որ կատարում են ձեր հրահանգը: Այդպես ես զրկվեցի Վ. Նաճարյանի ուղարկած*

թվերը ձեր մոտ գրանցված թվերի հետ համեմատելու հնարավորությունից: Այժմ էլ հիշում եմ, որ այդ թվերի միջև բավական տարբերություն կար:

Բողոքելով հարցազրույցում Վ. Նաճարյանի արտահայտած մտքերի դեմ, ինձ հարցրիք. «Ես ի՞նչ եմ արել քո դեմ, որ ինձ վրա ցեխ ես քսում, խայտառակում...»: Եվ մի՞թե ես ցեխ եմ շպրտում: Ես ուզում եմ, որ արդարությունը ոտնատակ չգնա: Բացի այդ էլ ես չգիտեի, թե դուք ինչ նկատի ունեիք: Գուցե այն, երբ մի անգամ ինձ առաջարկեցիք արցախյան գոյամարտի մասին իմ գրքերի շարքի հրատարակման համար ձեր մեկենասությունը, մի պայմանով սակայն, որ դուք նախապես ընթերցեք ձեռագիրը և կատարեք ձեր ուղղումները: Դուք դժգոհ էիք «Կղզիացած երկիր» խորագրով առաջին հատորից, ակնարկելով, որ դուք ևս ակտիվ գործ եք կատարել շարժման մեջ: Ես ձեր կարծիքն ամենևին չեմ բաժանում, քանի որ դուք միանգամայն հակադիր դիրքերում էիք: Դուք ցանկանում էիք, որ հաջորդող հատորներում գրեմ Բաքվի ղեկավարների հետ ձեր հանդիպումների մասին: Այս հարցում միակողմանի տեղեկատվությունը սխալ կլիներ, ուստի չստացվեց գործարքը, իսկ հաջորդ հատորները դեռևս սպասում են ազնիվ ու անկաշառ հովանավորին: Իսկ թե ինչո՞ւ էիք վերջին տարիներին պատեհ թե անպատեհ առիթներով իմ հասցեին միշտ որևէ արտահայտություն թույլ տալիս, փորձում հեղինակազրկել ինձ, որն իրոք, ստացվում էր, ես ոչ մի կերպ չէի հասկանում: Մի՞թե իրոք ինձ թշնամու տեղ եք դրել:

«Ազգ»ում կրույցի հրապարակումից հետո մեր երեք թե չորս հանդիպումների ժամանակ դուք ձգտում էիք ինձ ջրից չոր դուրս բերել և ամեն ինչ բարդել մեկ այլ մտավորականի՝ հանրաճանաչ գրող, հրապարակախոս, Արցախի խորհրդարանի պատգամավոր Զորի Բալայանի վրա: Ես յոթ տպագրված գրքերի, հարյուրավոր հոդվածների, ֆիլմերի, հեռուստաֆիլմերի հեղինակ եմ ու գրողի իմ ինքնասիրությունը, պատիվը երբեք թույլ չեն տա կամակատար լինել, թեկուզ շատ եմ հարգում իմ գրչակից գործընկերոջը, բարձր գնահատում նրա գործունեությունը: Ինձ պետվարչության շենքի մուտքի արգելքից հետո, ձեր առաջին տեղակալ Էռնեստ Ղևոնդյանի միջոցով հայտնել էիք Զորի Բալայանին, թե, իբր, ես ասել եմ, որ հարցազրույցը հենց Զորիի սարքածն է: Դուք վստահ էիք, որ ես հնարավորություն չեմ ունենա խանգարելու ձեր հերթական սադրանքին:

Դուք ամեն առիթով պնդում էիք, թե կոտված ազատամարտիկների ընտանիքների օգնության ֆոնդի ստեղծումը ձեր անձնական նախաձեռնությունն է: Իսկ մեկուկես տարի առաջ ինձ հետ ձեր հարցազրույցում («Ազատամարտ») այն անվանել էիք «Նաճարյանների ֆոնդ»: Ասեմ, որ ուրիշների ծառայությունը յուրացնելու փորձը ամենևին էլ վայել չէ պետական պաշտոնյային, ազգային գործչին:

Ձեզ վարչապետ նշանակելուց հետո հասկացա, թե ինչու էիք անհանգստացել Վարդգես Նաճարյանի մի աննշան արտահայտությամբ: Վախենում էիք, որ այն կխանգարի ձեր վերընթացին: Ուստի շտապեցիք գործել. ԱՄՆ–ում տապալել «Մեդիքըլ Աութրիչ»-ի ու հայկական 6 այլ կազմակերպությունների մարդասիրական գործը, Հայաստանում ոտնատակ տալ ու ոչնչացնել կրույցը վարող լրագրողին: Եվ ահա չբավարարվելով Է. Ղևոնդյանի «Հայաստանի Հանրապետություն» թերթին տված պատասխան հարցազրույցով, մի նոր որոգայթ լարեցիք: Դա արդեն «Հնչակ Հայաստանի» թերթում զետեղված նյութն էր: Այստեղ ինձ կոչում են «Մոլեռանդ դաշնակցական»: 1937–ի հոտ է փչում: Վիրավորել հարյուր հազարավոր հայորդիների, ազգանվեր մտավորականների՝ ոչ ոք իրավունք չունի: Այնուամենայնիվ, ասեմ, և դուք շատ լավ գիտեք, որ ես ոչ մի,



այդ թվում և ՀՅԴ–ի անդամ չեմ եղել: Դա գրողիս սկզբունքն է, ու ես այն չեմ խախտել: Ճիշտ է, 1988–ից մինչև 1991 թ. համակրել եմ ՀՀՇ–ին, ներկա խորհրդարանի նախընտրական կամպանիային եղել ՀՀՇ–ի թեկնածուն Էջմիածնի շրջանում: Բայց հոդվածում մեղադրվում եմ, թե իբր եղել եմ ՀՅԴ–ի թեկնածու: Իսկ այդ կուսակցությունը նույն ընտրատարածքում իր թեկնածուն ուներ: Իմ նախընտրական կամպանիային կազմակերպված հանրահավաքներին ելույթներով ինձ պաշտպանել են Լևոն Տեր–Պետրոսյանը, Աշոտ Մանուչարյանը, Բորիս Դադամյանը, Աղասի Արշակյանը: Հասկանալի է, դուք հաշվի եք առել այն հանգամանքը, որ «Հնչակ»ում հեշտությամբ կարելի է ցանկացած մարդու դեմ հերյուրանք տպագրել, եթե այն ՀՅԴ կուսակցության դեմ որոշ ուղղվածություն ունենա: Իրոք, որ հնարամիտ քայլ է: Իհարկե, դուք տեղյակ եք Հայաստանում միջկուսակցական պայքարի լարվածությանը, ուստի և նման մի ակնարկով ցանկացել եք մտավորականիս դեմ նոր որոգայթ լարել: «Հնչակ»ում ես մեղադրվում եմ այն բանում, թե իբր ես եմ «ջուր պղտորողը» և Սփյուռքում կրքեր բորբոքողը: Գոնե քաջություն ունեցեք ձեր արածը ուրիշի վրա չբարդել:

Խնդրում եմ չփորձեք իմ այս նամակը դիտել որպես ԼՂՀ նորընծա վարչապետի քննադատության փորձ: Թե չէ հետո էլ կասեք, որ ես դեմ եմ ԼՂՀ իշխանություններին, նրա նորընտիր նախագահին: Ի վերջո, այն, ինչ կատարվում է հիմա Արցախում, մեր երազների իրականացումն է: Այնպես, որ իմ նամակը պարզապես նպատակ ունի սթափեցնել ...:

Դուք վերջերս էլ հայտարարել եք, որ Վարդգես Նաճարյանը Արցախի համար ԱՄՆ–ից ոչինչ չբերի, որովհետև թույլ չեք տա, որ օգնությունն Արցախ մտնի: Մի՞թե իր հայրենիքի շահերով ապրող մարդը այսպես կմտածի: Նախ, այդ բեռները Վարդգես Նաճարյանինը չեն, դրանք հազարավոր սփյուռքահայերի նվիրատվությունն են, որոնց ոչ ոք իրավունք չունի վիրավորելու: Դա մի գրողհրապարակախոսի ՀԾԴՎ շենք մտնելը չէ, որ հեշտությամբ արգելեք: Արցախը ոչ մեկի սեփական կալվածքը չէ, և հայրենասիրությունն էլ որևէ մեկի մենաշնորհը չէ: Այս գոյամարտը ցույց տվեց, որ այն բոլորինն է, այդ թվում և ամերիկահայերինը, այնպես մենք չենք շահի այս ահեղ գոյամարտը:

Պարոն վարչապետ, ես ձեզ կոչ եմ անում այլևս չօգտագործել ձեր պաշտոնական դիրքը արցախցի մտավորականիս ճնշելու, նոր արգելքներ դնելու համար, ընդհանրապես, փորձեք փոխվել, փոխել ձեր վերաբերմունքը նաև «Մեդիքըլ Աութրիչ»-ի, Վարդգես Նաճարյանի նկատմամբ, հարգել ամերիկահայ նվիրատուների թեկուզ համեստ փորձը՝ օգտակար լինելու Արցախին, նրա պայքարին:

**ՊՀՄ–ն, 1995 թ. մայիսի 22 թվակիր նամակով «Medical Outreach»-ից ստացավ 1994–1995 թթ. գործունեության ծրագրը** (տե՛ս հավելված էջ 452):

**Նոյեմբեր 14, 1995 թ. շրջաբերական նամակով ՀՄՄՄ–ն դիմեց բոլոր ՀՄ–ներին, հրավիրելով նրանց դարձյալ միջհայրենակցական կապերը ամրապնդելու նպատակով 1995 թ. դեկտեմբերի 3-ին կայանալիք ճաշկերույթ-խրախճանքին** (նամակի բնագիրը տե՛ս հավելված էջ 453)**: Ձեռնարկին հրավիրված էր նաև Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հյուպատոս Արմեն Բայբուրթյանը իր կնոջ հետ և պաշտոնական այցով Լոս Անջելեսում գտնվող ՀՀ նախագահի խորհրդական՝ Լևոն Զուրաբյանը: Գրեցի հետևյալ հոդվածը:**



Ձախից աջ. նստած՝ Երվանդ Պապայան, Գրիգոր Շենյան, Լևոն Զուրաբյան, Գլխավոր հյուպատոս Արմեն Բայբուրթյան և կինը՝ Իվետան: Կանգնած՝ Ջեք Արաքելյան, Սարգիս Խորշիդյան, Մարտիրոս Իսկենդերյան, Ջորջ Խորյան, Վահան Բահարյան, Նուբար Հակոբյան, Արամ Պուլգուրճյան Կարպիս Սվաճյան, Հակոբ Կակոսյան և Սարգիս Մաճառյան:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՄԱՐՄԻՆԸ
ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԻՄՎՈԼ

1995 թ. դեկտեմբերի 3-ին տեղի ունեցավ ՀՄՄՄ-ի հերթական ճաշկերույթ-հավաքույթը (ՃՀ) ՄՀՄ-յան սրահում (463 N. Martelo, Pasadena):

ՀՄՄՄ-ի անունից նախօրոք շնորհակալություն եմ հայտնում ՄՀՄ-ին, իր սրահը այս ձեռնարկին տրամադրելու համար:

ՃՀ-ն ՀՄՄՄ-ի համար սովորույթ դարձած երևույթ է, հետապնդում է կարևոր նպատակ՝ սերտացնել ՀՄ-ների հարաբերությունները, ստեղծել վարչությունների միջև բարեկամական մթնոլորտ, ակտիվացնել ՀՄՄՄ-ի գործունեությունը, ավելի կազմակերպված օգնել հայրենակիցներին և Հայրենիքին:

ՃՀ-ն հովանավորեց Զանգու Ջիքըն հաստատության հիմնադիր, տեր և տնօրենուհի տիկին Մարգրիտ Իսկենդերյանը, որը հոգաց բոլոր ծախսերը:

ՃՀ-ին հրավիրված էին բոլոր ՀՄ-ները, մամուլը և հեռուստատեսությունը:

Ի հպարտություն և ի պատիվ ՀՄՄՄ-ի, ձեռնարկը ներկայությամբ պատվեցին Գլխավոր հյուպատոսը և այդ օրերում պաշտոնական այցով Լոս Անջելեսում գտնվող ՀՀ նախագահի մամլո քարտուղար Լևոն Զուրաբյանը,

ՄՀՄ-ի Կենտրոնական Վարչության անդամ Արամ Պուլգուրճյանը ողջույնի և բացման խոսքը կատարելուց հետո բեմ հրավիրեց ՀՄՄՄ-ի ատենապետ Գրիգոր Շենյանին: Վերջինս նշեց ՀՄՄՄ-ի կատարած դերը Սփյուռքում և Հայրենիքում, ինչպես նաև ներկայացրեց Գլխավոր հյուպատոս Արմեն Բայբուրթյանին, ՀՀ նախագահի խոսնակ Լևոն Զուրաբյանին՝ բեմ հրավիրելով նրանց: Նրանք իրենց ելույթներում քաջալերեցին հայրենակցականներին, որ ավելի ամրացնեն Սփյուռք-Հայրենիք կապը, միացյալ ուժերով աջակցեն «Հայաստան» հիմնադրամին, իրականացնելու համար Գորիս-Ստեփանակերտ «արյունատար երակը»՝ Արցախը Հայրենիքին ամուր կապող մայր ճանապարհը: Դրն. Լևոն Զուրաբյանը անդրադարձավ նաև Հայրենիքի առաջընթացին, տնտեսական, քաղաքական կյանքին, բազմաթիվ այլ հարցերի::

Ձեռնարկի հանդիսավարն էր ՀՄՄՄ-ի քարտուղար Սարգիս Մաճառյանը, որը բարձր մակարդակով կատարեց պարտականությունը:

ՃՀ-ն դարձավ միասնության, բարեկամության, մշակութային ձեռնարկ, որտեղ մերթ լսվում էր Ադիս Հարմանդյանի հայրենաշունչ երգերը, մերթ գեղեցիկ մի ասմունք, մերթ էլ ՀՄ-ների ներկայացուցիչների ելույթները՝ որոնք համեմվում էին հանդիսավարի սրախոսություններով ու տեղին բնութագրումներով:

Հաճընի ՀՄ-ի վարչական Հակոբ Կակոսյանը բարձր գնահատեց ՀՄՄՄ-ի գործունեությունը և ներկաներին ողջունեց հայերեն և իտալերեն երկու երգերով:

Միսի ՀՄ-ի ատենապետ Հակոբ Օվայանը, հորդորեց հայրենակցական կառույցներին՝ լինել Հայրենիքի և նրա պետականության կողքին:

ԴՀՄ-ի ատենապետ և ՀՄՄՄ-ի փոխատենապետ Վահան Բահարյանը ներկաներին վստահացրեց, որ ՀՄՄՄ-ն իր գործունեությամբ միշտ կորավից է կանգնել և պիտի կանգնի մեր նոր պետականությանը, ջանքեր չպիտի խնայի օգնելու նրա տնտեսության հզորացման՝ ակտիվ մասնակցություն պիտի ունենա «Հայաստան» հիմնադրամի գործունեության:

Հայկական հեռուստատեսության 24 ժամյա ծրագրի խոսնակ Անահիտ Մարտիրոսյանը և ԴՀՄ-ի վարչության անդամ Արա Պետրոսյանը ընտիր ասմունքեցին:

Ադիս Հարմանդյանը թեժացրեց մթնոլորտը ազգային-հայրենասիրական երգերով:

Ժամը 3-ին սկսված ՃՀ-ն ավարտվեց ժամը 10-ին:

Սիրելի հայրենակիցներ, թող արևը միշտ փայլի մեր ազգի ու Հայրենիքի վրա:

Նորանոր հաջողություններ ՀՄՄՄ-ի ազգանվեր գործունեությանը[1]:

**Այս ձեռնարկով ավարտվեց ՀՄՄՄ-ի 1995 թ. գործունեությունը:**

1.- Տե՛ս «Նոր կեանք», Թիվ 3, Դեկտեմբեր 28, 1995:

## ԺԱ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1996 Թ.

Այս տարի միության հիմնադրման 10-ամյակն է: Աշխատեցի, որպեսզի այն մեծ շուքով նշվի: Նկատի ունեի.

ա. Հրավիրել հայտնի արվեստագետների,

բ. Հուշատախտակներ նվիրել վարչականներին,

գ. Պատրաստել կարճ տեսաերիզ, որն արտացոլի միության 10 տարվա առավել աչքի ընկնող գործունեությունը,

դ. Պատրաստել միության 10-ամյակը ազդարարող պաստառ,

ե. Հրավիրել Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոսին:

01-24-96 թ. ՎՆ-ում քննարկվեցին ԾՊ-ի վերաբերյալ կազմակերպչական հարցեր: Հանձնախումբ կազմվեց հետևյալ կազմով. Վահան Բահարյան, Արա Պետրոսյան, Սարգիս Խորշիդյան, Գրիգոր Դովլաթյան, որը փաստացի ձևական բնույթ կրեց, որովհետև Արան աշխատում էր և չէր կարողանում մասնակցել նրա աշխատանքներին, իսկ Սարգիսն ու Գրիգորը հեռու էին վերոհիշյալ հարցերը լուծելու հանգամանքից:

02-26-96 թ. ՎՆ-ում քննարկման ներկայացրեցի առաջարկներս վերոհիշյալ հարցերի վերաբերյալ.

ա. Հուշատախտակ հանձնել հետևյալ վարչականներին (տե՛ս հավելված էջ 454: Ցուցակում 1986-87 թթ. գործունեությունս բաց է թողնված՝ սխալ է թույլ տրված):

Վարչության անդամները համաձայն չէին հուշատախտակ նվիրել Նորայր Մելքիսեթյանին, Նուբար Մխսի-Գևորգյանին և Զարեհ Պալյանին՝ պատճառաբանելով, որ նրանք ժամանակին սրտցավ չմոտեցան վարչության աշխատանքներին, միության գումարները ծախսեցին աջ ու ձախ (բացառությամբ Պալյանի, որը վարչության մեջ չէր)՝ դրամ չթողնելով միության բանկի հաշվում: Ժամանակին վեճեր եղել էին այդ կապակցությամբ՝ երկու խմբի բաժանված, մի կողմից Նուբարի ու Նորայրի և մյուս կողմից՝ Գրիգորի ու Արմենակի միջև:

Միության հեղինակությամբ մտահոգ, համայնքում սասկոսների առիթ չստեղծելու համար համոզեցի նախկին վարչականներին չբացառել, նույնիսկ հաշվի չառա ինձ հասցրած նրանց վիրավորանքները: Բայց Սեդայի նկատմամբ չընդունեցին առաջարկը, պատճառաբանելով, թե նա վարչությանը արհամարհելով է հեռացել: Պատվիրեցի հուշատախտակները և, երբ Մանվելին խնդրեցի բերել դրանք, նա տեղում, ինքնագլուխ ավելացրել էր



Սեդայի անունը: Հարցը նորից քննարկվեց 3-21-96 թ. ՎՆ-ում և վիճաբանությունից հետո դրական լուծում ստացավ:

Այն ժամանակ աշխատում էի, որ ՊՀՄ-ն ոչ մի բիծ չունենա համայնքում և հպարտանում էի մեր վարչության միասնությամբ ու մտքովս էլ չէր անցնում, որ մի օր ստիպված պիտի լինեմ գրել միության անցած տարիների գործունեության բացասական երևույթների մասին:

բ) Հրավիրվելու էին արվեստագետներ. Շաքե Թումանյանը, Աննա Նշանյանը, Գրիգոր Օգարյանը, Անահիտ Մարտիրոսյանը:

գ) Ձեռնարկեցի տեսաերիզի պատրաստման գործը, որը մեկ ամսից շատ ժամանակ խլեց ինձնից, բայց ՊՀՄ-ի 10 տարիների գործունեությունը ամփոփ արտացոլող արժեքավոր տեսաերիզ էր: Ժապավենի մեջ ընդգրկեցի Կիլիկիայի մեր բնօրրանից ու բնությունից որոշ մասեր, որ տրամադրեց Վահան Գևորգյանը:

ՊՀՄ-ի հիմնադրման 10-ամյակին վարչականների անուն-ազգանուններով գեղեցիկ կրծքանշաններ պատվիրեցի մետաղե լատունի վրա (փայլուն) գրված «Միության 10-րդ տարեդարձ» և յուրաքանչյուր վարչականի անուն ազգանունով:

ՊՀՄ-ի 10-ամյակը վերածվեց մշակութային երեկոյի, տոնակատարության, որի մասին գրեցի հոդված: Բայց ես այստեղ ուզում եմ շոշափել մի քանի հարցեր, որոնք անմիջականորեն կապված են տվյալ երեկոյի և թերթում լույս տեսած հոդվածի հետ:

Որպես «տանտեր», մոտեցա բոլոր սեղաններին և բարի գալուստ ցանկացա հյուրերին: Նուբար Մխսի-Գևորգյանի սեղանի մոտ, նրա տղայի՝ Վարդանի ուշադրությունը գրավեց կրծքանշանը: Նա հարգանքով հարցրեց. «Վահան ամո, պապայի համար էլ հնարավո՞ր է պատվիրել մի հատ այդ կրծքանշանից»: Ասացի մեծ սիրով: Դուք կունենաք այդ:

Որպես ատենապետ, հուշատախտակները հանձնեցի ըստ պատկանելիության և շնորհավորեցի բոլորին: Դրանք գեղեցիկ էին և յուրաքանչյուրի համար վճարված էր 50 դոլար: Դրանց մի մասի տերերը՝ Նորայր Մելքիսեթյան, Զարեհ Պալյան, Հարություն Ֆողոսյան, Գևորգ Թերջանյան և Սեդա Կվրյան ներկա չէին:

Նորայրն ու Զարեհը ընդհանրապես չէին մասնակցում ՊՀՄ-ի միջոցառումներին: Հարություն Ֆողոսյանի հուշատախտակը հանձնեցի մամային՝ Վարդուհուն, իսկ Գևորգ Թերջանյանինը՝ կնոջը, Մարիին: Սեդայի կողմից ոչ ոք չէր եկել: Երևի նեղացել էր վարչությունից «իր կամքով հեռանալու» համար:

ԾՊ-ից հետո, մի օր հանդիպեցի Հարություն Ֆողոսյանին:




Միութեան 10-րդ տարեդարձի կրծքանշանը:

Ընկերներ ենք: Խոսք եղավ նչված ՃՊ-ի մասին, ասաց. «Եթե իմանայի հուշատախտակ էիք տալու, կգայի»: Ես Հարություն Ֆոդուլյանին մոռացել էի ընդգրկել ՃՊ-ում ելույթ ունեցող արվեստագետների շարքին: Միգուցե նրա ՃՊ-ին չգալու պատճառը դա էր: Եթե դա էր, ներողություն եմ խնդրում նրանից:

Իսկ Գևորգ Թերջանյանի պարագան այլ էր, կռահեցի, երբ նրա մահվան առթիվ թերթում կենսագրականի կողքին տեսա նկարը՝ երգելիս: Զգիտեի նրա երգիչ լինելը: Նրա նկատմամբ ևս թյուրիմացությունը կրկնվել էր: 10-ամյակի ՃՊ-ին ամբողջ ընտանիքը ներկա էր, իսկ ինքը չկար: Ներող թող լինեն կինը՝ Մարին և եղբայրը՝ Հովսեփը: Նա ազնիվ և հարգանքի արժանի մարդ էր:

Վարչական Գևորգ Գազջյանը չմասնակցեց սույն ՃՊ-ին:

Հուշատախտակները հանձնելիս միայն Գրիգոր Դովլաթյանի մասին մի քանի գնահատական խոսք ասացի իր լավ աշխատանքի համար` զարմանք պատճառելով նրան:

Հուշատախտակ ստացողներից միայն Սարգիս Խորշիդյանի կինը 100 դոլար նվիրեց միությանը:



ՊԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

ՊՀՄ-ի հիմնադրման հոբելյանական ՃՊ-ն տեղի ունեցավ 1996 թ. մարտի 23-ին, շաբաթ օրը, «Ամպրոսիա» շքեղ սրահում, մոտ 300 հայրենակիցների, միությունը հարգող բարեկամների և արվեստագետների ներկայությամբ:

ՃՊ-ն հովանավորում էին համայնքում հայտնի ազգային բարերարներ՝ տեր և տիկին Վահան և Անուշ Շամլյանները:

Հոբելյանական 10-ամյակը նշվեց արժանավայել ու բարձր մակարդակով: Ձեռնարկը վերածվեց մշակութային երեկոյի:

Սրահի պատերը զարդարում էին միության 10 տարվա գործունեությունը ներկայացնող լուսանկարներ: Երեկոյի մասնակիցներից յուրաքանչյուրի կուրծքը զարդարվեց միության կողմից նվիրված մեխակներով:

Հանդիսության բացման արարողությունը խորհրդավոր էր: Բեմի երկու կողմերից դրան մոտեցան 7-10 տարեկան 5-ական երեխաներ (տղա-աղջիկ)՝ ձեռքներին բռնած վառվող մոմեր, որոնցից յուրաքանչյուրը խորհրդանշում էր միության մեկ տարվա գործունեությունը:

Կատարվեցին ԱՄՆ-ի և Հայաստանի օրհներգերը: Տեր Մանուկ քահանա Մարգարյանը օրհնեց սեղանները: Հանդիսավար՝ վարչության անդամ Արա Պետրոսյանը բեմ հրավիրեց ատենապետ Վահան Բահարյանին, որը հակիրճ կերպով ներկայացրեց վարչության 10 տարվա գործունեությունը: Իր սրտի խոսքն ասաց պաշտոնական այցով՝ Հաճընի ՀՄ-ի հրավերով Լոս Անջելեսում գտնվող Հայաստանի Հայրենակցական միությունների խորհրդի (ՀՀՄԽ) ատենապետ Ժոզեֆ Ավետիսյանը:

Ողջույնի ու շնորհավորական խոսքերը հղեցին արվեստագետներ՝ Աննա Նշանյանը, Շաքե Թուխմանյանը, Գրիգոր Օգարյանը, Անահիտ Մարտիրոսյանը և Գեորգի Մինասյանը, որոնք երեկոյի մթնոլորտը ջերմացնելով` պոռնակապարությունը վերածեցին մշակութային երեկոյի, մեծ աշխուժություն ու ոգևորություն առաջացնելով սրահում:

Վարչության անունից և անձամբ խորին շնորհակալություն եմ հայտնում նրանց ու սրահում գտնվող բոլոր արվեստագետներին, որոնք իրենց ներկայությամբ նպաստեցին երեկոյի հաջողությանը:

Հանրահայտ երգչուհի Աննա Նշանյանը փայլուն ելույթով մի անգամ ևս ապացուցեց, որ ինքը միշտ մնում է որպես ժողովրդի անկուգական երգիչուհին՝ Աննա Նշանյանը:

Անկուգական դերասանուհի Շաքե Թուխմանյանը՝ Ֆրեզնոյի հաջող ելույթներից հազիվ հասած Լոս Անջելես, արհամարհելով հոգնածությունը, մասնակցեց պոռնակապարությանը և մնաց որպես բոլորի սիրելի Շաքեն ...:

Վաղեմի բարեկամ Գրիգոր Օգարյանի ջերմ, հուզիչ ու սրտագին խոսքը գնահատում եմ որպես ամենաբարձր հարգանք մեր վարչության և իմ նկատմամբ:

Շնորհակալություն Անահիտ Մարտիրոսյանին, որը հիանալի ասմունքեց` շնորհավորելով միության 10-ամյակը:

Գեորգի Մինասյանի երգերը հիշեցրեցին Հայրենիքի խորհրդային շրջանին մեծ հաջողության հասած երիտասարդ երգչին:

Ստեղծված ջերմ մթնոլորտը ավելի ջերմացրեց «Happy Brothers» նվագախումբը, և խնճույքն ու ուրախությունը տևեց մինչև առավոտյան ժամերը:

Կարճատև մի տեսաժապավեն էր պատրաստված միության 10-ամյա գործունեությանը վերաբերող, որտեղ ընդգրկված էր նաև բեյլանցիների ծննդավայրը




*Վարչության անդամները Մեծ եղեռնից վերապրողների հետ:*
*Ձախից աջ՝ Սարգիս Խորշիդյան, Հարություն Հարությունյան, Վահան Գևորգյան, Գրիգոր Դովլաթյան, Երվանդ Հարությունյան, Ժոզեֆ Ավետիսյան, Նվեր Ազատյան, Լուսյա Թաշչյան, Նվարդ Գասպարյան, Սարգիս Գյոզալյան, Հակոբ Գասպարյան, Վահան Բահարյան, Արա Պետրոսյան:*

*(նյութը տրամադրված էր Վահան Գևորգյանի կողմից):*

*Հուշատախտակներ տրվեցին միության 10 տարվա ընթացքում վարչության ծառայած 13 անդամներին, ի գնահատանք իրենց նվիրված գործունեության. Վահան Բահարյան, Գրիգոր Դովլաթյան, Սեդա Կվրյան, Մանվել Մարաշյան, Սարգիս Խորշիդյան, Գևորգ Թերջանյան, Հարություն Ֆոդուլյան, Մարտիրոս Էքշիյան, Նուբար Միսսի-Գևորգյան, Հարություն Դովլաթյան, Վահան Գևորգյան, Նորայր Մելքիսեթյան և Զարեհ Պալյան:*

*Վիճակահանության համար արժեքավոր նվերներ էին հատկացրել նաև Արփիար Ճանոյանը՝ Վիլյամ Սարոյանի դիմանկարը (գծանկար) և Վիգեն Պերճիկյանի իրավաբանական հաստատությունը՝ մեկ տարվա ծրի 24 ժամյա Հայկական հեռուստատեսության բաժանորդագրություն՝ սարքավորումների տեղադրումով:*

*Այնուհետև տեղի ունեցավ 10-ամյակին նվիրված կարկանդակի կնքահայրի ընտրություն: Այդ պատվին արժանացավ Գևորգ Ֆիլյանը՝ Սարգիս Գյոզալյանի թոռը, որը 200 դոլար նվիրելով միությանը, իրավունք ստացավ կտրելու կարկանդակը և բանալ շամպայնի շիշը:*

*Առաջին անգամ տեղի ունեցավ Բեյլանի բարբառով սահուն խոսողի մրցում, որի հաղթողներն էին Վիկտորիա Գյոզալյանը և Արմենակ Հեքիմյանը, որոնք արժանացան Մանվել Մարաշյանի նվիրած ժամացույցների:*

*ՃՊ-ի հովանավորներ տեր և տիկին Վահան և Անուշ Շամլյանները*






*Մոմավառություն: Բեյլանցիների նոր սերունդը:*

*միությանը նվիրեցին 3000 դոլար: Նվիրատվություններ եղան նաև Քիլիսի, Զորք-Մարկպանի, Հաճընի ՀՄ-ների, Քրաջյան հաստատության և հայրենակիցների կողմից:*

*Վարչությունը իր շնորհակալությունն է հայտնում բոլոր նվիրատուներին, կազմակերպություններին և անհատներին, «Ամպրոսիա» սրահի տնօրինությանը՝ Վահեին և Ալեքսին:*

*Մեր հայրենակիցները օգնում են, վստահ ենք, պիտի շարունակեն օգնել միությանը, որ նա կարողանա ակտիվ մասնակցել օտար ափերում հային հայ պահելու ազնիվ գործին:*

ԱՏԵՆԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

*Սիրելի հայրենակիցներ, հարգելի հյուրեր,*

*Այսօր ԴՀՄ-ի հիմնադրման 10-ամյակն է, հոբելյանական տարի, և վստահ ենք, որ միասին տոնական տրամադրությամբ պիտի նշենք այն:*

*Հոբելյանական այս ՃՊ-ն հովանավորում են գաղութում հայտնի ազգային բարերարներ՝ տեր և տիկին Վահան և Անուշ Շամլյանները: Վահան Շամլյանը նաև ՀՄՄՄ-ի ցկյանս նախագահն է: Նա խոստացել է ՀՄՄՄ-ն օժտել մշակութային կենտրոնով և այժմ փնտրտուքներ են կատարվում այդ ուղղությամբ:*

*Շամլյանների բարերարություններից բավական է նշել Շամլյան դպրոցի անունը և մեկ միլիոն դոլարի նվիրատվությունը «Հայաստան» հիմնադրամին, ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի Լոս Անջելես այցելության ժամանակ:*

Մեր հյուրերն են՝ ՀՀՄԽ-ի ատենապետ Ժոզեֆ Ավետիսյանը, տեր և տիկին՝ Հակոբ Մուրադյանն ու Աննա Նշանյանը (Հայաստանի վաստակավոր երգչուհի), Ժան Նշանյանն ու Շաքե Թուխմանյանը, Զորք-Մարգսանի, Հաճընի և Քիլիսի ՀՄ-ների ներկայացուցիչները, ինչպես նաև բոլորի կողմից սիրված դերասան Գրիգոր Օզարյանը իր տիկնոջ հետ: Ներկա են նաև Հայաստանից արվեստագետներ՝ սիրված երգիչ Գեորգի Մինասյանը, ճանաչված դերասանուհի Գալիա Նովենցը և բեմադրիչ Հակոբ Գազանչյանը:

Հրավիրված են 1915 թ. Մեծ եղեռնից վերապրողներ, որոնք 80-100-ի շեմին են՝ տեր և տիկին՝ Հակոբ և Նվարդ Գասպարյան, Աբրահամ և Վերթոյիմ Էքշիյան, տիկիններ՝ Նվեր Ասատրյան, Լուսյա Թաշչյան, Եղիսաբեթ Կվրյան, պրն. Երվանդ Հարությունյան:

Ինչպես միշտ, այսօր ևս մեր հայրենակիցները նեցուկ կանգնելով միությանը, քաջալերում են նրա 10-ամյա գործունեությունը՝ իր ծրագրերի և նպատակների իրագործման ճանապարհին:

Այսօր նշելով ՊՀՄ-ի 10-ամյակը, վարչությունը շնորհակալություն է հայտնում բոլոր հայրենակիցներին, լինեն նրանք բեյլանցի թե ոչ, որոնք նյութապես նեցուկ կանգնեցին միությանը, և նա կարողացավ շարունակել և՛ ազգապահպանման, և՛ Հայրենիքին ու հայ ժողովրդին օգնելու իր գործունեությունը:

Վարչության առաջին գործը եղավ հոգ տանել Հայաստանում ԲՀԿ-ի մասին, որովհետև մեր ժողովուրդը կառուցելով այդ գեղեցիկ պատմական հուշարձանը, պատգամ թողեց հետագա սերունդներին՝ երբեք չմոռանալ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայկական բռնագրավված հողերը, ինչպես նաև 1915 թ. Մեծ եղեռնի նահատակներին, ու պայքարեն մեր արդար իրավունքների համար:

Այսօր ունենալով Հայաստանի անկախ Հանրապետությունը, համոզված ենք, որ շնորհիվ նրա ջանքերին մեր արդար դատը պիտի հաղթի, եթե ոչ այսօր, ապա վաղը: Դրա համար պետք է կանգուն պահենք հզոր Սփյուռքը՝ նրա օգնությամբ է՛լ ավելի հզորացնելու Հայրենիքը: Այս տեսակետից ՀՄ-ների դրական գործունեությունը անգնահատելի է, հատկապես Սփյուռքում, որովհետև նրանք նվիրված են ազգապահպանման գործին, առանց նյութական ակնկալիքների:

ՊՀՄ-ն յուրահատուկ է այն իմաստով, որ նրա անդամների գերակշռող մասը նախկին հայաստանահայեր են, որոնք մեծ լումա ունեն Հայրենիքի զարգացման գործում և ամուր կապերով կապված են նրա հետ: Նրա ստեղծումը՝ 1980-ականին, մեզ համար աննպաստ պայմաններում առանց աշխատանքի, առանց նյութական բազա ունենալու, իրոք, պարմանալի ու անհավատալի է: Բայց ունեինք մեր ժողովրդի բարոյական աջակցությունը:

Հիմնադիր մարմնի միջոցով 1986 թ. մայիսի 7-ին ստեղծվեց ՊՀՄ-ն: Նա գոյատևում է այսօր և ամենահարգված միություններից մեկն է:

Գործունեության 10 տարվա ընթացքում, միությունը հաճախ է հավաքել հայրենակիցներին միասին՝ ապրելու անցյալի հուշերով ու հիշատակներով և ամրապնդելու միասնությունը: Այս առումով հետաքրքիր է տարիներով իրար չտեսած անհատների հանդիպումը այդ հավաքույթների ժամանակ, որն ավելի է սերտացնում հայրենակիցների հարաբերությունները և երկարաձգում նրանց ուծացումը օտար ափերում:

**(Այնուհետև մեջբերվում է միության 10 տարվա գործունեությունը, որը կրկնություն համարելով, չենք թվարկում):**

Միության ամենաակնառու գործունեություններից մեկն էլ ազգային բարերար Սարգիս Սողանալյանի «Մեծարանքի երեկո»ի կազմակերպումն էր, որը համազգային բնույթ կրեց:



Հայրենիքի դժվար տարիներին միությունը նյութապես օգնեց ժողովրդին: Վարչության կազմած հանձնախմբով, որի մեջ ընդգրկված էին վարչականներ, մոտ 11000 դոլար բաժանվեց Հայաստանի մեր հայրենակիցներին:

Միությունը օգնում է նաև ՀՀ «Հայաստան» հիմնադրամին՝ մասնակցելով «Թելեմարաթոն»ներին և այլ միջոցներով:

Ահա միության գործունեության մոտավոր պատկերը նրա գոյության 10 տարիների ընթացքում:

Միությունը հավատում է իր առաքելությանը և պիտի շարունակի ազգային գործունեությունը ի բարօրություն մեր ժողովրդի և Հայրենիքի: Առանց հզոր Հայրենիքի Սփյուռքը դժվար է պահպանել, հետևաբար Սփյուռքն իր կառույցներով օգնելու է Հայրենիքին՝ իր գոյության երաշխավորին:

Թող կեցցե՛ն Հայաստանի և Արցախի անկախ հանրապետությունները, Հայաստան-Սփյուռք հզոր կապը և նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

ԺՈԶԵՖ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Սիրելի բեյլանցիներ, ՊՀՄ-ի վարչության անդամներ,
մեծահարգ Վահան Բահարյան,

Ողջունում եմ ձեր հայրենակցականի հիմնադրման 10-ամյակը և այդ առթիվ կազմակերպված այս գեղեցիկ պարահանդես-հանդիսությունը:

Տպավորիչ է հասարակական-հայրենակցական այս հիասքանչ դրսևորումը՝ բեյլանցիների համախմբվածության այս նախանձելի պատկերը: Նկատում եմ նաև, որ կազմակերպությանը զորակցել են Հայաստանից եկած, Հայրենիքի սերը իրենց սրտերում փայփայող բեյլանցիները, ձեր նոր սերնդի նորակազմ ընտանիքները:

Բայց ահա այստեղ է, որ արտահայտում եմ իմ հոգու խռովքը: Ավագ բեյլանցիները Հայաստանում առաջինը խմբավորվեցին, վերագտան հայրենակցականի գիտակցությունը և կառուցեցին Մեծ եղեռնի տարիներին նահատակված բեյլացիների հիշատակը հավերժացնող հոյակերտ մի հուշարձան կոթող: Այսօր այն կարիք ունի հոգատարության:

Հետևաբար, ՀՀՄԽ-ն և Լոս Անջելեսի ՊՀՄ-ն համագործակցաբար կվերակազմեն Հայաստանում ՊՀՄ-ն, կհամախմբեն նրա շուրջ բեյլանցիների կարողությունները և կպահպանեն Հայաստանում բեյլանցիների ձեռքբերումները:

Սիրելի Բեյլանի հայրենակիցներ, օգտվելով առիթից ցանկանում եմ ձեր ուշադրությունը հրավիրել Խորհրդի ծրագրերից ամենակարևորներից մեկի՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամին հայրենակցական կառույցների զորավիգ լինելու հարցի վրա:

Հիմնադրամը կոչված է համախմբելու հայության՝ նյութական, բարոյական, մտային ուժերը ներդնելու հայապահպանման ամենամեծ գործին՝ հայոց նորանկախ պետականության ամրակայման, Հայրենիքի տնտեսական հզորացման, արցախյան պատմական նվաճումները պահպանելու և կառուցելու գործին:

Հայրենակցականները Հայաստանում զորավիգ են Հիմնադրամին, վստահ եմ, որ այստեղ ևս հայրենակցականները, ինչպես և դուք, ազգային տուրքի պարտավորությամբ ամենամյա՝ կանոնավորապես կբերեք ձեր մասնակցությունը «Հայաստան» ՀՀ-ին: Ես ողջունում եմ ազնիվ բեյլանցի հայրենակիցներին:

**ԾՊ-ից հետո նամակ գրեցի Վահան Շամլյանին (տե՛ս հավելված էջ 455) նրա կողմից խոստացված գումարը ստանալու նպատակով: Բայց ինչո՞ւ նամակ: Հարցը նրանումն է, որ Վահան Շամլյանը դեռ չէր կարողացել կենտրոնով ապահովել ՀՄՄՄ-ին և այդ հարցի**

կապակցությամբ արդեն դժգոհություններ էին առաջանում ՀՄՄՄ-ում: Դրանից ելք գտնելու համար, ՀՄՄՄ-ն քննարկեց հարցը, որոշեց և առաջարկեց Վահան Շամլյանին, որպեսզի ՀՄՄՄ-ին մինչև կենտրոնով ապահովելը, մի տարի աջակցի նրա մեջ մտնող ՀՄ-ներին՝ նախագահելով կամ հովանավորելով նրանց ճՊ-ները, առաջին դեպքում նվիրելով 5000 դոլար, իսկ երկրորդ դեպքում՝ 3000 դոլար, որը և ընդունվեց նրա կողմից: Նամակը ուղարկելուց հետո միությունը ստացավ խոստացված 3000 դոլարը:

Դեռ մինչև ճՊ-ն, Ժոզեֆ Ավետիսյանի և իմ հանախակի շփումների հետևանքով («Բնօրրան»ի հարցով, որի մասին կգրվի հաջորդ էջերում) մեր հարաբերությունները սերտացան: Առաջարկեց, որ ՊՀՄ-ն անդամակցի ՀՀՄԽ-ին: 03-11-96 թ. ՎՆ-ում հարցը քննարկվեց: Սա վերաբերում էր Սփյուռքի բոլոր ՀՄ-ներին, որ-պեսզի սերտ կապեր ստեղծվեն հայրենակցական կառույցների միջև, վերաճեն տնտեսական համագործակցության՝ ծառայելու Հայրենիքի ու նրա ժողովրդի բարօրության (ՀՀՄԽ-ին անդամակցության դիմումը և արձանագրությունից քաղվածքը տե՛ս հավելված էջ 456-457):

Վարչությունը նաև հյուրասիրեց Ժոզեֆ Ավետիսյանին հայկական սովորույթով՝ Գրիգոր Դովլաթյանի տանը: Այստեղ ավելի հանգամանորեն արծարծվեցին Հայաստանի և Սփյուռքի ՀՄ-ների համագործակցության հարցերը և ընդհանուր ազգային հարցեր, որոնք հիմնականում վերաբերում էին Հայրենիքի պետա-կանության կայացման ու ամրապնդման գործին: Միջոցառումն անցավ բարձր մակարդակով: Ծախսը Գրիգորը արեց:

ՊՀՄ-ի հոբելյանական 10-ամյակի մասին «Բնօրրան»ում[1] գրված հոդվածը վերջանում էր այսպես.

... Ապա վարչության ատենապետ Վահան Բահարյանը իր և վարչության անունից շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաներին և կազմակարպիչներին: - Մեր ժողովուրդը, գիտակցելով իր պարտքը, - ասաց նա, - օգնեց, օգնում է և վստահ ենք, որ պիտի շարունակի օգնել միության, հային հայ պահելու համար այս օտար ափերում և նեցուկ կանգնելով մեր հայրենի պետականությանը, ավելի հզորացնելու այն՝ մեր երազանքների իրականացումը տեսնելու հավատով:

Իսկ ՀՀՄԽ-ն 1996 թ. սեպտեմբերի 2-ի ընդհանուր ժողովի որոշումով իր կազմում անդամագրեց Լոս Անջելեսի Պէյլանի հայրենակցական միությունը իր վարչական նիստի որոշման ու դիմումի հիման վրա[2]:

3-27-96 թ. ՎՆ-ում հաշվետվություն տրվեց միության 10-ամյակին նվիրված ճՊ-ի մասին:

Սույն նիստում քննարկվեցին նաև մի շարք հարցեր և

1.- Տե՛ս ՀՀՄԽ-ի հանդես «բնօրրան», թիվ 1-2 (2-3), 1996, էջ 38-39:
2.- Տե՛ս «Բնօրրան», 3-4 (4-5), 1996, էջ 64:





Ժոզեֆ Ավետիսյանի պատվին բացված սեղանը: Ձախից աջ՝ Սարգիս և Վիկտորիա Գյոզալյան, Մարի և Սարգիս Խորչիդյան, Վահան Բահարյան, Ժոզեֆ Ավետիսյան, Արմիկ և Գրիգոր Դովլաթյան, Խաչատուր Բահարյան, Հարություն և Եղիսաբեթ Հարությունյան:

ընդունվեցին համապատասխան որոշումներ: Այսպես.

ա. Բաժանորդագրվել ՀՀՄԽ-ի «Բնօրրան» հանդեսին եռամսյա՝ տարեկան բաժանորդագրության գինը 25 դոլար: Առաջին բացառիկ օրինակը ձրի տրվեց բոլորին:

բ. ՀՀՄԽ-ին նվիրել 200 դոլար:

գ. Տեղի ունենալիք թելեմարաթոնին նվիրել 1000 դոլար:

դ. Հովանավորել Խորեն Աբրահամյանի մեծարման երեկոն:

4-10-96 թ. ՎՆ-ում քննարկվեց ՊՀՄ-ի՝ ՀՀՄԽ-ին անդամակցության դիմումը, դրան կից 3-11-96 թ. նիստի արձանագրությունից պատրաստված քաղվածքը և ընդունվեց միաձայն:

Նորից քննարկվեց Խորեն Աբրահամյանի մեծարման երեկոյի հարցը: Նախնական որոշումով, վարչության կողմից հուշատախտակ պիտի նվիրվեր նրան: Գրիգոր Օզարյանը 2 հրավիրատոմս էր բերել վարչության համար և, նույնիսկ, ամաչում էր այդ մասին ասելու, քանի որ վարչությունը իրեն հարգելով էր ստանձնել նշված երեկոյի հովանավորությունը: Հարգելով Գրիգոր Օզարյանի հեղինակությունը, որոշվեց նրա միջոցով հայտնել կազմակերպիչներին, որ վարչությունը կմասնակցի երեկոյին միայն այն դեպքում, եթե բոլոր վարչականներին հրավիրատոմսեր հատկացվեն, որը չարվեց, և մենք հրաժարվեցինք մասնակցելուց:

**1915 թ. Մեծ եղեռնի նահատակների, 1988 թ. երկրաշարժի աղետյալների, 1988 թ. Սումգայիթում և 1989 թ. Բաքվում ու Կիրովաբադում, ինչպես նաև հերոսական Արցախում զոհվածների հիշատակին նվիրված հոգեհանգիստ-հոգեճաշը տեղի ունեցավ 1996 թ. ապրիլ 28-ի կիրակի օրը Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցում և նրա Աղազարյան սրահում:**

**Դաշտահանդեսը տեղի ունեցավ 1996 թ. սեպտեմբերի 1-ին, կիրակի օրը Griffith Park-ում, որի մասին գրված հոդվածից մեջբերվում են որոշ հատվածներ[1]:**

*Օրվա հանդիսավարությունը վարեց վարչության անդամ Արա Պետրոսյանը, որը կազմակերպեց նաև ասմունքի, պարերի և խաղերի մրցույթը: Լավագույն կատարողները ստացան մրցանակներ:*

*Հայտնի արվեստագետ Գրիգոր Օզարյանը ավելի ջերմացրեց մթնոլորտը իր հայրենասիրական, հայաշունչ և ոգևորող ասմունքով:*

*Երիտասարդների ներկայությունը դաշտահանդեսում զգալի էր: Սա ապացույց է այն բանի, որ Հայրենիքից հեռու այս օտար ափերում աշխատում ենք պահպանել մեր ընտանեկան սովորություններն ու սրբությունները՝ փոխանցել դրանք նոր սերունդին:*

*Ժողովուրդը հեռացավ դաշտից իր հետ տանելով այդ օրվա վառ հուշերը:*

**Սեպտեմբերի 22-ին Հայաստանում տեղի ունեցած նախագահական ընտրություններից հետո, ՊՀՄ-ի վարչությունը շնորհավորեց վերընտրված նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին** (*տե՛ս հավելված էջ 458-459*):

**Այս տարվա (1996 թ.) հոկտեմբերին Նորայրի մահվան լուրը գուժեց, տխրեցի, որովհետև դեռ ապրելու կյանք ուներ նա: Վարչականներով մասնակցեցինք նրա թաղման արարողությանը և հոգեճաշին, միաժամանակ վարչությունը ցավակցություն հայտնեց նրա հարազատներին թերթի էջերում[2].**

*ՑԱՎԱԿՑԱԿԱՆ*

*Երկարատև հիվանդությունից հետո, 1996 թ. հոկտեմբերի 23-ին, իր մահկանացուն կնքեց Նորայր Մելքիսեթյանը: Նա եղավ նոր ստեղծված Պէյլանի հայրենակցական միության հիմնադիրներից մեկն ու նրա առաջին ատենապետը: Նա ջանքեր չխնայեց նորահիմն միության կազմակերպչական կառույցի ստեղծման գործում:*

*Պէյլանի հայրենակցական միության վարչություն:*

**10-30-96 թ. ՎՆ-ում հերթական ԾՊ-ի օրը որոշվեց դեկտեմբերի 24-ը, իսկ տոմսի արժեքը՝ 35 դոլար, 6-12 տարեկանների համար՝ 20 դոլար, իսկ մինչև 6 տարեկանների մուտքը ձրի:**

**Վարչության 11-25-96 թ. նիստում որոշվեց վարչականներին, նրանց կանանց և Մեծ եղեռնից վերապրողներին**

1. Տե՛ս «Նոր Կեանք», թիվ 43, Հոկտեմբեր 3, 1996, էջ 16:
2. Տե՛ս «Նոր Հայաստան», Երեքշ., Հոկտ, 29, 1996, թիվ 194:



**հրավիրատոմսեր տալ, տոնածառ զարդարել և մինչև 12 տարեկան երեխաներին նվերներ նախատեսել:**

**Մի ուրիշ կարևոր հարց ևս շոշափվեց. Բեյլանի մասին գրվելիք գրքի համար հավաքել անհրաժեշտ տեղեկություններ, հուշեր, ականատեսի վկայություններ, նայլն:**

**Մայր Մարիամ Սողանալյանը Նոր Տարվա առթիվ ուղարկած (12-23-96) շնորհավորական բացիկում գրում էր.**

*Սիրելի Վահան, ուրախութեամբ ստացայ ձեր ղրկած հրաւիրատոմսը եւ անուշ գրութիւնը: Շատ շնորհակալ եմ ձեր բոլոր ազնիւ զգացմունքներէն, որ իմ անարժան անձս արժանի կը տեսնէք այդ բարձր պաշտօնին՝ ցկեանս նախագահութեան: Մեծ սէր ու հարգանք ունիմ ձեր բոլորին եւ միութեան հանդէպ: Վարժքերնիդ կատար: Ձեզի կը մաղթեմ ուրախ ու յաջող տարիներ: Երեկ Սարգիսը թելեֆոն ըրաւ: Իրեն պատմեցի իմ զգացմունքներս ձեզի հանդէպ: «Մայրս,-ըսաւ,-մարախ մի ըներ, ես, երբ ըլլայ, փիրենք կը գոհացնեմ, դուն հանգիստ եղիր…»:*

*Սիրելի Վահան, սրտանց կը շնորհաւորեմ ձեր Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը, մաղթելով ուրախ ու երջանիկ, բարգաւաճ տարի մը ձեզի եւ բոլոր հայրենակիցներուն: Վարձքդ կատար:*

*Քեզ միշտ յիշող՝ Մայր Մարիծա Սողանալեան:*

**Դեկտեմբերի 24-ի ԾՊ-ն տոնական տրամադրությամբ անցավ: Իր շահեկանության համար, այստեղ մեջբերում եմ եկույթից և թերթում լույս տեսած հոդվածից որոշ մասեր:**

*Այսօր հավաքվելով «Ամբրոսիա» գեղեցիկ սրահում, մի ճիգ ևս ենք գործադրում մեր գոյատևումը երկարաձգելու նպատակով օտար ափերում: Ինչպե՞ս պահպանել մեր ինքնությունը, և ի՞նչ է սպասում մեր երեխաներին ապագայում: Ազգային կուսակցությունների, եկեղեցական թեմերի, հասարակական կազմակերպությունների և ՀՄ-ների այսօրվա հոգսերից մեկն ահա սա է: Նրանք աշխատում են բնօրրանի հայկական հնադարյան սովորությունները պահպանել Սփյուռքի յուրաքանչյուր համայնքում:*

*Հայ երեխաների մեծ մասը հաճախում են ամերիկյան դպրոցներ և նրանց 90%-ի մոտ հայի ինքնությունը կորցնելու մտավախություն կա: Ուստի մեր երեխաներին հաճախ պետք է բերենք հայկական հավաքույթների՝ դրանք լինեն ԾՊ-ներ, դաշտահանդեսներ, մշակութային ձեռնարկներ և այլ միջոցառումներ: Ամերիկյան դպրոց գնացող երեխան ոչ միայն հայերեն գրել-կարդալ չի սովորում, այլ նաև դժվարանում է խոսել իր հայերեն լեզուն, հետևաբար, չկարողանալով ուսումնասիրել իր պատմությունն ու մշակույթը, հեռանում է արմատներից: Ահա սա է ամենամեծ հոգսը այսօրվա հայ ընտանիքում:*

*Այս նպատակով է, որ մենք խնդրում և երբեմն էլ «ստիպում» ենք ծնողներին, որ իրենց երեխաներին բերեն մեր միջոցառումներին, որպեսզի նրանք գտնվելով հայկական մթնոլորտում, ապրեն հայկական շնչով, ծանոթանան միմյանց հետ և հայկական բարձր արժանիքներով սուրբ ընտանիք կազմեն:*

*Նոր սերունդին հայկականությամբ դաստիարակելու գործում մեծ դեր են խաղում նաև հայկական ռադիոյի, հեռուստատեսությունների և հատկապես 24 ժամյա հայկական հեռուստատեսության հաղորդումները: Միշտ պետք է հետևել երեխաներին, որ նրանք հայկական հաղորդումներ դիտեն: Մեծ անելիքներ ունեն հայ ընտանիքները, երեխային փոքր տարիքից պետք է վարժեցնեն այդ*

*հաղորդումները դիտելու, հետագայում շատ դժվարություններ կունենան:*

*Այսօր հայկական դպրոցների ղեկավարությունն էլ, կարծեք, չեն ներգրավված այդ գործին: Զգիտեք ինչո՞ւ, հայկական դպրոց հաճախող երեխան թե՛ դպրոցում, թե՛ տանը անգլերեն է խոսում: Հասկանալի է, որ համալսարան ընդունվելու համար անհրաժեշտ է տիրապետել անգլերենին, բայց դա չպետք է լինի մայերենի հաշվին: Աշակերտը անգլերենից շատ հայերեն պետք է սովորի:*

*Այս տարվա դեկտեմբերի 8-ին ՀՄՄՄ-ն մեծարեց 80-ից բարձր տարիք ունեցող կրթական մշակներին, որոնք Մեծ եղեռնից հետո իրենց ջանքերն ու նյութականը չխնայեցին հետեղեռնյա սերունդի դաստիարակության գործին: Այդ առթիվ ՀՄՄՄ-ի կողմից հրավեր ուղարկվեց նաև բոլոր դպրոցներին: Նրանք ոչ արձագանքեցին, ոչ էլ որևէ դպրոցի աշակերտ ներկա գտնվեց միջոցառմանը...:*

*Այս բոլորի կողքին, այսօր սփյուռքահայը նյութապես ու բարոյապես օգնում է Հայրենիքին և «Հայաստան» Հիմնադրամին: Միասնական ջանքերով կարելի է իրագործել մեր նպատակները: Շնորհակալություն:*

*ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍ*

*ՊՀՄ-ի ՃՊ-ն տեղի ունեցավ 1996 թ. դեկտեմբերի 24-ին, ամերիկյան Ծննդյան տոնի (Christmas) օրը, շքեղապարդ «Ամբրոսիա» սրահում:*

*Սրահում տոնական մթնոլորտ էր: Բեյլանցիները հարազատներով ու ազգականներով նորից հավաքվել էին իրար շուրջ, հիշեցնելով մեր Հայրենիքը, մասամբ էլ՝ մեր բնօրրանը, որից զրկվել էին 57 տարիներ առաջ՝ 1939 թ., երբ Ֆրանսիան Կիլիկիայի այդ վերջին մասնիկը՝ Սանջաքը հանձնեց Թուրքիային, հայ ժողովրդին էլ տեղահանեց իր բնօրրանից: Բեյլանցիները կարոտով են հիշում կորուսյալ շեն բնակավայրերը, ծաղկուն այգեստանները, որ ստեղծել էին անսպառ աշխատասիրությամբ:*

*Երևանից որպես հյուր ներկա էր մահապարտների բանակին կամավոր անդամագրված, երիտասարդ արվեստագետ Վահրամ Հարությունյանը, որին ներկաները ընդունեցին ջերմ ծափահարություններով: Նա երգեց «Թռչէի մտքովս տունս» և հուզեց բոլորին, որովհետև այդ երգը Երկրորդ համաշխարհային պատերազմի և Արցախի մեր բյուրավոր երիտասարդ փնվորների կարոտի ու իրենց քաղցր կյանքը ապրելու խոսքն էր իրենց մայրերին, ընտանիքին ու Հայրենիքին: Մենք խոնարհվում ենք նրանց առջև, որ շատերը հերոսի մահով ընկնելով, փրկեցին մեր Հայրենիքը:*

**Ըստ բանկի 12-18-96 թ. տվյալների, միության ունեցած գումարը 16087 դոլար և 13 սենթ է:**

## ՀՄՄՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

***1993 թ. Հայաստանում ակտիվորեն գործող 9 Հայրենակցական միություններ.***

*«Այնթապ», «Զեյթուն», «Եդեսիա», «Մուսալեռ», «Նոր Արաբկիր», «Նոր Կյուրին», «Սեբաստիա», «Վասպուրական» և «Վերածնված Հաճըն»,* ***նկատի ունենալով միության համախմբող ուժը, 1993 թ. օգոստոս 23-ին Երևանում հիմնեցին ՀՀՄԽ-ն: Ատենապետ ընտրվեց Ժոզեֆ Ավետիսյանը:***

***ՀՀՄԽ-ի կանոնադրության «Խորհրդի նպատակներն ու գործելակերպը[1]»*** ***վերնագրի տակ կարդում ենք.***

*7. Խորհրդի նպատակներն են՝*

*ա. համախմբել անդամ ՀՄ-ների ուժերն ու կարողությունները և ապահովել նրանց հայրենակցական, մշակութային, բարեգործական ու տնտեսական գործունեության համար ընդհանուր հասարակական մթնոլորտ.*

*բ. ամրապնդել և ընդլայնել Հայրենիքի և Սփյուռքի ՀՄ-ների փոխհարաբերությունները և նրանց ջանքերը նպատակամղել համազգային խնդիրների լուծմանը, ազգային միաբանության ու Հայաստանի պետականության հզորացմանը:*

*գ. նպաստել հայկական մշակույթի միջազգային արժեքավորման քարոզչական գործունեությանը:*

***Կանոնադրության 12 էջերի վրա տրված է ՀՀՄԽ-ի ԾԿ-ն:***

***Հակիրճ գրվածը, իրականում հսկայական գործունեություն է, որը առաջին հերթին կապված է մեր կորցրած բնօրրանների (Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի) վերաարժեքավորման և դրանց էությունը վերալուսաբանելու հետ՝ հայ ժողովրդի մեջ արթնացնել կորցրած Հայրենիքի հուշերը, փոխանցել այն ապագա սերունդին, վառ պահել պահանջատիրական պայքարի հուրը:***

***Այս առումով, ՀՀՄԽ-ի հանդես «Բնօրրան»ը բացառիկ իրադարձություն է նրա կյանքում, առանց որի, նա չէր կարող իրականացնել իր առջև դրված խնդիրները:***

***Մեծ Եղեռնի 80-ամյակի առթիվ, 1995 թ. լույս տեսավ «Բնօրրան»ի թիվ 1 բացառիկը, որն ընդգրկում էր վերապրողների հուշերի և փաստագրական նյութերի արժեքավոր հավաքածու: Ապրելու կամքով տոգորված հայ ժողովուրդը վերակենդանացնում էր իր հիշողությունը, նորից ու նորից «ՈՉ» ասելու չնախատեսված, բայց ամեն րոպե հնարավոր նոր ցեղասպանություններին:***

***ՀՀՄԽ-ն չհարելով որևէ կուսակցության և հարանվանության, միասնության ոգով իր ուժերը ներդնում է Հայրենի պետականության կայացման գործընթացին:***

***«Բնօրրան»ի բացառիկի[2] երկրորդ էջում տեղ է գտել ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ողջույնի խոսքը.***

*ՀՄ-ների շարժումը ամենաառողջ շարժումներից է: Վեր կանգնելով կուսակցական հակամարտություններից՝ այն ձգտում է աշխարհասփյուռ հայության մեջ վառ պահել փոքր Հայրենիքի հիշատակները, փրկել նրանից մնացած մասունքները և դրանք ներդնել Մեծ Հայրենիքի բարգավաճման գործում:*

***Շանթ Մկրտչյանը ողջունելով «բնօրրան»ի անդրանիկ-բացա-***

---

***1. Տե՛ս «Նոր Հայաստան», Հինգշ., Հուն., 9, 1997, Թիվ 4, էջ 8:***



***1.- Ընդունվել է ՀՀՄԽ-ի ընդհանուր ժողովում 20 փետրվար, 1998 թ.: Գրանցվել է ՀՀ Արդարադատության նախարարության կոլեգիայի 27 փետրվար, 1998 թ. թիվ 8/1-12 որոշմամբ:***

***2. Տե՛ս «Բնօրրան», թիվ 1 (բացառիկ), 6 մարտի 1995 թ., Երևան:***

ռնկը, «Մեծ երազը եղբայրաբար կրող հայեր ենք»[1] հոդվածում գրում է.

Բայց ո՞րտեղ, եթե ոչ բնօրրանում է մարդն առավելագույնս ամբողջ, իր բնության, ցեղի, ընտանիքի շնչառության մեջ:

Այս տեղեկություններով բավարարվելով՝ «Բնօրրան»ի մասին, նշենք, որ 1996 թ. սկզբին Ժոզեֆ Ավետիսյանի Լոս Անջելեսում գտնվելու առաքելությունը կապված էր վերոհիշյալ նպատակների իրականացման հետ: Նա եղել էր Միջին Արևելքի սփյուռքահայ համայնքներում: Իր հետ բերել էր «Բնօրրան»ի թիվ 1 բացառիկը և նպատակն էր, որպեսզի Լոս Անջելեսում ևս բաժանորդագրվեն դրան, որը սերտ փոխհարաբերություն ու համագործակցություն կստեղծեր Հայրենիքի և Սփյուռքի միջև: Բացի այդ, «Բնօրրան»ի գոյությունը պահպանելու համար, որը մեծ ծախսերի հետ էր կապված, բաժանորդագրության գումարով համակարգիչ պիտի գնվեր, որպեսզի հնարավոր լիներ դյուրացնել նրա հրատարակությունը:

Ահա այս առիթով, նրա ՀՄՄՄ-ի հետ հանդիպելիս, ծանոթացանք, և իմ հնարավորության սահմաններում օգնեցի նրան իր հարցերը լուծելիս:

Ժոզեֆ Ավետիսյանի Լոս Անջելես գտնվելու ընթացքում, բացի ՀՀՄԽ-ի և ՀՄՄՄ-ի հետ կապված հարցերից, առիթը օգտագործելով, որոշ կազմակերպությունների ու անհատների հետ քննարկեցինք տարբեր հարցեր, որոնք նպատակաուղղված էին նորանկախ Հայաստանի տնտեսության բարելավմանը:

Նկատի ունենալով, որ դժվար է առանձնացնել բոլոր հարցերը, քանի որ իրար հետ որոշ կապեր ունեն, ուստի այս վերնագրի տակ չարունակում ենք դրանք ներկայացնել ընթերցողին:

1996 թ. Նոր Տարվա առթիվ «Հայաստան» Հիմնադրամը շնորհավորում էր ՀՄՄՄ-ին, միաժամանակ նշելով, որ վերջինս ընդգրկված է նրա մեջ որպես խորհրդատու:

Սա չէր բավարարում ՀՄՄՄ-ին: Նա ուզում էր լիիրավ անդամ դառնալ այդ Մարմնին, ուստի ինձ հանձնարարեց նամակ պատրաստել այդ նպատակով: 01-10-96 թվակիր նամակը ուղարկվեց «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տնօրինությանը (տե՛ս հավելված էջ 460-461):

Ինչպես նշել էինք նախորդ էջերում, Ղարաբաղին նվիրված 1996 թ. մարտի 25-ի ճաշկերույթի ժամանակ ՀՄՄՄ-ն 10000 դոլար նվիրեց Ղարաբաղին, բայց Ղարաբաղի Առաջնորդ Պարգև Մարտիրոսյանը ասաց, որ ՀՄՄՄ-ն՝ ինքը թող որոշի, թե ինչ նպատակի համար պիտի օգտագործվի տվյալ գումարը: Այս

1. Տե՛ս «Հայք» 2.03.1996, չարաթ:



հարցով Գրիգոր Շենյանի հանդիպումը (եթե այն կայացավ...) Սրբազան Վաչե Հովսեփյանի հետ արդյունք չտվեց:

ՀՄՄՄ-ի քննարկմանը հանձնեցի մտահղացումս՝ Ղարաբաղում կառուցել երշիկի փաբրիկա, որտեղ արտադրվի նաև տուփերով մսի պահածո՝ հայկական բանակի համար: Խնդրեցի Ժոզեֆ Ավետիսյանին զբաղվել այս հարցով, եթե հնարավորություն ունենա: Նա հանձն առավ այդ:

Մի ուրիշ հարց էր Հայաստանի լուրերի ուշ հասնելը Լոս Անջելես: Ժոզեֆ Ավետիսյանի հետ «Հայկական 24 ժամյա հեռուստաժամ» այցելության ժամանակ արծարծվեց այս հարցը: Լուրերի պատասխանատու՝ Անահիտ Մարտիրոսյանի հետ պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Ժոզեֆ Ավետիսյանը այդ հարցով կօգնի նրան, որպեսզի Լոս Անջելեսի հայ համայնքը օրըօրին հետևի Հայաստանում կատարվող իրադարձություններին:

Պարսկահայ մի գործարարի՝ Վիգեն Ֆիլիպոսյանի հետ ծանոթացա, որը երկար ժամանակ զբաղվել էր Հայաստանում ջրային հովացուցիչների (Water-cooler) և պատի վառարանների (Wall furnace) արտադրություն կազմակերպելու գործով, որի համար բազմաթիվ անգամներ եղել էր Գերմանիայում և այնտեղից անհրաժեշտ բոլոր մասերը, նյութերն ու տեխնիկական փաստաթղթերը, կատալոկներն ու տեսաերիզներ էր տարել կամ ուղարկել Երևան, ծախսելով շուրջ 20000 դոլար: Ըստ նրան, ամեն ինչ պատրաստ էր արտադրության համար, բայց չէին արտադրում (ավելի ճիշտը. երևի չէին ուզում արտադրել):

Այս հարցը քննարկման նյութ դարձավ Վիգեն Ֆիլիպոսյանի, Կարեն Ալիխանյանի և իմ միջև: Ալիխանյանը հանդիսանում էր Երևանի Երկրորդ մասսիվում գտնվող ՆԻԻ ԷԼԵԿՏՐՈՄԱՇ[1]-ի տնօրենը: Ինստիտուտը նախագծում էր էլեկտրոշարժիչներ (ես աշխատել եմ այնտեղ որպես նախագծող): Ջրային հովացուցիչների արտադրությունը առանց էլեկտրոշարժիչների հնարավոր չէր:

Նախնական քննարկումից հետո մեր առաջարկը վերանայեցինք Ժոզեֆ Ավետիսյանի հետ և որոշեցինք ներկայացնել Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հյուպատոս Արմեն Բայբուրթյանին, այն պաշտոնականացնելու համար: Պայմանավորված օրը մեր խումբը եղավ հյուպատոսի մոտ և նրա հետ քննարկեցինք հարցը: Նա խոստացավ զբաղվել դրանով: Մենք գոհ հեռացանք հյուպատոսարանից:

1.- Էլեկտրամեքենաշինության նախագծա-կոնստրուկտորական և տեխնոլոգիական գիտահետազոտական ինստիտուտ:

Որպեսզի այս հարցը գործնական բնույթ ստանար, կազմեցինք նտապային ծրագիր, ըստ որի աշխատանքները պետք է ընթանային Երևանում (տե՛ս հավելված էջ 462), և մի օրինակ տվի Ժոզեֆ Ավետիսյանին:

Վիգեն Ֆիլիպոսյանից իմ ստացած տեղեկությունների համաձայն, նա շնորհակալական նամակ էր գրել Գլխավոր հյուպատոսին, որն իր ժամանակը տրամադրեց մեզ, միաժամանակ հետաքրքրվելով գործի ընթացքով: Նա ոչ մի պատասխան չէր ստացել: Մի անգամ էլ հանդիպել էր նրան Լոս Անջելեսում Հայաստանի և Կալիֆորնիայի գործարարների հավաքույթում, հիշեցրել այդ մասին: Պատասխանել էր, որ ինքը զբաղվում է այդ հարցով:

Քանի որ Ժոզեֆ Ավետիսյանը աշխատում էր ՀՀ նախագահի աշխատակազմում, խոստացավ զբաղվելու այդ գործով որպես մեր ներկայացուցիչը Հայաստանում: Մարտ 29, 1996 թվակիր նամակով նա հայտնում էր, որ հարցն ընթացքի մեջ է: Հետագայում այն դրական լուծում չստացավ:

Նշված սարքերի արտադրությունը արժեքավոր ներդրում կլիներ նորանկախ Հայաստանի տնտեսության մեջ, որի օգուտներից կարելի է նշել հետևյալները.

ա) նկատի ունենալով, որ ԽՍՀՄ-ում ժամանակին այդպիսի սարքեր համարյա չեն արտադրվել, և դրանց պահանջը մեծ է, չխոսելով նույնիսկ Ռուսաստանի մասին, հատկապես Միջին Ասիայի հանրապետություններում, Հայաստանի համար դա կլիներ եկամուտի զգալի աղբյուր:

բ) շատ աշխատատեղեր կբացվեին, ապահովելով բազմաթիվ ընտանիքների ապրուստը:

Երևի «գայլեր»ը թույլ չտվին, որ այդ գործարանը կառուցեն ուրիշները, որպեսզի իրենք դառնան այդ «յուղոտ պատառի» տերն ու տիրականը, սակայն ...:

Հայաստանյան լուրերի հարցով Ժոզեֆ Ավետիսյանը գրում էր.

Ուղարկում եմ, ինչպես պայմանավորվել ենք, Անահիտին (24 ժամին) Ա կասետը, յուրաքանչյուր 10 օրը մեկ կասետ կուղարկվի, թող փորձեն ամսավճար սահմանել 300 դոլար: Նյութերը բնագրային են, նախագահի լրատվական կենտրոնինն է: Ֆաքսով մշակութային նյութի ցուցակը կուղարկեմ: Անմիջապես թող Անահիտը պատասխանի Բարեգործականի ֆաքսով:

Լոս Անջելեսում Ժոզեֆ Ավետիսյանի հետ միասին քննարկեցինք նաև Հայրենադարձության (Ներգաղթի) 50-ամյակը կազմակերպելու ու նշելու հարցը՝ Երևանում և Լոս Անջելեսում:

1996 թ. հուլիսի 10-ին, երեկոյան ժամը 10-ին Ֆլորիդայում իր մահկանացուն կնքեց ազգային բարերար, ՀԲԸՄ-ի ցկյանս



Պատվո նախագահ, ՀՀ Պատվո քաղաքացի և ազգային հերոս Ալեք Մանուկյանը Այս առիթով ՊՀՄ-ի վարչության կողմից ցավակցական պատրաստեցի և միաժամանակ աշխատեցի, որ ՀՄՄՄ-ի կողմից լինի ցավակցականը: Իմ առաջարկը ընդունվեց և ՀՄՄՄ-ի կողմից թերթում լույս տեսավ այն.

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ

ՀԲԸ Միութեան պատուոյ նախագահի, ազգային բարերար եւ մեծ մարդասէր Ալեք Մանուկեանի մահուան առթիւ մեր խորազգած ցաւակցութիւնները կը յայտնենք Մանուկեան ընտանիքի անդամներուն եւ ՀԲԸ Միութեան Կեդրոնական Վարչութեան:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ[1]

Քանի որ այս ցավակցականը միաժամանակ մեր միության կողմից էր, ՊՀՄ-ի վարչության ցավակցականը չուղարկեցի (լուսապատճեն տե՛ս հավելված էջ 463-464):

Ժոզեֆ Ավետիսյանը ինձ տեղյակ էր պահում որոշ հարցերի մասին, որոնք ընդհանուր հայտարարի բերելով, ՀՄՄՄ-ի կողմից ես 7-14-96 թվակիր նամակը գրեցի նրան: Դրա մեջ արծարծված կարևոր հարցերը ներկայացնում եմ ընթերցողի ուշադրությանը:

Ժոզեֆ ջան, ստացա առաջին երկրորդ ու վերջին լուրը՝ Լաչինում երշիկի ֆաբրիկայի կառուցման վերաբերյալ: Շնորհակալ եմ: Հնարավորության սահմաններում կուզենայի մի ընդհանուր նախահաշիվ ունենալ մոտավոր ծախսերի մասին, հայտնել նաև տեղեկություններ տարածության, էներգիայի, ջրի և այլ հարցերի մասին, որպեսզի Լոս Անջելեսում քննարկենք և, եթե հնարավոր է, սկսենք այդ գործը:

Քեզ հետ միասին պայմանավորվել էինք կազմակերպել նաև հայրենադարձության 50-ամյակը Երևանում և Լոս Անջելեսում: Այս հարցը արծարծեցինք ՀՄՄՄ-ի հունիսի 1-ի նիստում: Այս գրությունով ուզում եմ իմանալ, թե դուք ե՞րբ եք նախատեսնում այդ Երևանում, որպեսզի չխաչաձևվի: Բացի այդ, մեր պայմանավորվածության համաձայն, պիտի խնդրեմ քեզ, որ այդ հարցի վերաբերյալ նյութերը ինձ ուղարկել հնարավերին չափ շուտ, որպեսզի կարողանանք ժամանակին կազմակերպել 50-ամյակը Լոս Անջելեսում: ...

Ընտրությունները թող հաջող ավարտվեն: Չենք կասկածում, Լևոն Տեր-Պետրոսյանին նորից տեսնել նախագահի իր պաշտոնում, որպեսզի նա շարունակի Հայաստանի տնտեսության վերականգնումը ի օգուտ հայրենի ժողովրդի՝ ամրապնդելով աստիճանաբար ստեղծվող քաղաքականապես և տնտեսապես կայուն Հայրենիքի գոյությունը ...:

Նորից վերադառնանք երշիկի ֆաբրիկայի հարցին: Նախքան դրա կառուցման հարցը վերջնականապես որոշելը, ՀՄՄՄ-ի հերթական նիստում քննարկման ներկայացրեցի նրա ֆինանսական ծախսը, քանի որ 10000 դոլարով ֆաբրիկա չես կառուցի: Վարչությունում ինձ քաջալերեցին (հատկապես Գրիգոր Շենյանը), որ նյութական միջոցներ կճարենք: Դրանով չհանգըս-

1. Տե՛ս «Նոր Կեանք», թիվ 33, Հուլիս 18, 1996, էջ 10:

տացա, քանի որ երշիկ արտադրող մեքենաների գները տասնյակ հազարների է հասնում: Ուստի այդ հարցով դիմեցի նաև Մերի Նաճարյանին, որը մեծ փորձ ունի այդ ասպարեզում, քանի որ դեղերի և սարքավորումների ձեռք բերման համար (Հայաստանի և Արցախի համար) նա օգտվում է իր ամերիկյան շրջապատի ծանոթներից: Նա ևս հանգստացրեց ինձ, ասելով, որ մի քիչ օգտագործված մեքենաները կարող ենք էժան գնել: Մտածեցի, որ սա ճիշտ ուղի է, կարևորը սկսելն է, որից հետո ֆաբրիկայի ստացած եկամուտով կարելի է գնել նոր մեքենաներ:

Քաշաթաղի շրջանի ղեկավարությունը ողջունել էր առաջարկությունը և հայտնել իր պատրաստակամությունը: Ժոզեֆ Ավետիսյանը ֆաքսով ինձ ուղարկեց իրեն հասցեագրված հետևյալ նամակը.

Մեծարգո Ժոզեֆ Ավետիսյան

ԼՂՀ նորաստեղծ Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքում (նախկին Լաչին) երշիկի ֆաբրիկայի կառուցման վերաբերյալ Ձեր հարցումին պատասխանում ենք, որ մեր քաղաքում առկա են պահանջվող համապատասխան չափի արտադրական տարածքը, էներգիայի և ջրի մատակարարումը, բանկային, տրանսպորտային համակարգը և այլ անհրաժեշտ բաղադրիչները՝ գործը հաջողությամբ իրականացնելու համար:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ մեր շրջանում կառավարության որոշումով հանված են ավելացված արժեքի հարկը, շահութահարկը, հողի հարկը և գույքահարկը՝ արտադրությունները խթանելու նպատակով:

Կանխավ հայտնում ենք մեր երախտագիտությունը և անհամբեր սպասում Ձեր որոշումներին:

Հարգանքներով՝

Վարչակազմի ղեկավար (ստորագրություն) Ալեքսան Հակոբյան

Իմ տեղեկությունները ՀՄՄՄ-ի մասին չեն կարող ընդգրկել նրա երկար տարիների լրիվ գործունեությունը, քանի որ ձեռքիս տակ գտնվում են միայն մի քանի արձանագրություններ: Չնայած ՀՄՄՄ-ում որոշվեց, որ բոլոր արձանագրությունների պատճենները տրվեն նրա մեջ մտնող ՀՄ-ներին, բայց որոշ ժամանակ անց դադարեց այդ գործը, որը սխալ էր, քանի որ ՀՄՄՄ-ի յուրաքանչյուր նիստում քննարկվող որոշումներին պետք է տեղյակ լինեին նրա անդամ միությունների վարչականները ոչ միայն բանավոր, այլ նաև գրավոր, որը լրիվ հաշվետվություն կլիներ տվյալ վարչությանը և վերջինս գրավոր փաստերով իրազեկ կդառնար ՀՄՄՄ-ի գործունեությանը:

Այդ պատճառով էլ արձանագրություններից դուրս ինչ որ ներկայացնում եմ այստեղ, հիշողությանս վրա է հիմնված, հետևաբար ժամանակագրությունն էլ մոտավոր է նշված հարցե-



րի մասին, ըստ ՀՄՄՄ-ի գործունեության հաջորդականության:

Վերոհիշյալ նամակը ներկայացրեցի ՀՄՄՄ-ին, առաջարկելով, որ լինենք Լոս Անջելեսում երշիկ արտադրող՝ Միքայելյանի ֆաբրիկայում, ծանոթանանք մեքենաներին, խորհրդակցենք ղեկավարության հետ, որպեսզի տեղեկություններ հավաքելով իրագործենք ֆաբրիկայի կառուցումը Արցախում: Քանի որ Հաճընի ՀՄ-ի ատենապետ Մարտիրոս Իսկենդերյանը «Ջանգու Ջիքըն» հաստատության տերն էր, հարցը հանձնարարվեց նրան և ինձ:

Երբ ուզում էի պայմանավորվել նրա հետ գնալու վերոհիշյալ ֆաբրիկան, նա ասաց, որ կարիք չկա գնալու այնտեղ, ինքը գիտի, թե որտեղ են ծախում այդ մեքենաները: Պայմանավորվեցինք կիրակի օրը ժամը 11-ին հանդիպել Գլենդելի Ջանգու Ջիքըն ճաշարանում: Ճիշտ ժամին այնտեղ էի և սպասեցի մինչև նրա գալը՝ ժամը 1-ը: Ներողություն խնդրեց ուշացման համար: Արդյոք ներե՞լի էր այդ արարքը...: Այնուհետև իր մեքենայով գնացինք Van Nuys (որտեղ և ես էի ապրում): Մի խանութ մտանք և նա ցույց տվեց բարակ շերտով երշիկ կտրող (Slicing) գործիքները: Հասկացա, որ նա ծանոթ չէ երշիկի արտադրությանը, բացատրեցի իրեն, որից հետո ասաց, որ ինքը դրանց կատալոկները կպատվիրի, և մենք կուսումնասիրենք: Այսքանով ամեն ինչ ավարտվեց, որովհետև հաճախակի հարցումներիս պատասխանում էր, որ դեռ չի ստացել կատալոկները: Ինքը լինելով ազգասեր և բարերար, այդ հարցի նկատմամբ անտարբեր գտնվեց, իսկ ՀՄՄՄ-ից էլ ոչ ոք չօգնեց ինձ: Այդպիսով իմ այդքան երկար ժամանակվա աշխատանքը ջուրն ընկավ: Բայց Ինչո՞ւ: Որովհետև ՀՄՄՄ-ի վարչականների մեծ մասը մտածում է իր գրպանի, փառասիրության ու ցուցամոլության մասին, իսկ կուշտը սովածի հալից երբեք չի հասկանում: Հիմնականում, ինձ մտահոգում էր այն մտայնությունը, որ երբ գործունեության առաջարկ էի ներկայացնում, անմիջապես ինձ էր հանձնարարվում այն, քանի որ վարչության անդամների հոգսն էլ չէր, որ օգնեին այդ գործին կամ մտածեին դրա մասին: Անում էի ամեն ինչ, նույնիսկ, վարչականների ներկայությունը ես էի ապահովում նիստերին (կարծեք քարտուղար էի): Կամաց-կամաց հասկացա, որ ես ոչ թե ՀՄՄՄ-ի փոխատենապետն եմ, այլ՝ կատարածուն, որից հետո փոխեցի իմ վերաբերմունքը..., բայց արդեն ուշ էր:

ՀՀ անկախության 5-րդ տարեդարձը շուքով տոնելու համար հատուկ հանձնախումբ ստեղծվեց: ՀՄՄՄ-ից մասնակցում էինք Գրիգոր Շենյանը, Մարտիրոս Իսկենդերյանը և ես:

Հանձնախումբը սկսեց ժրաջան աշխատել, բայց ՀՅԴ-ի ներկայացուցիչները անընդհատ խոչընդոտներ էին հարուցում (հիշենք, որ ՀՀ նախագահի հրամանագրով ՀՅԴ-ի գործունեությունը ժամանակավորապես կասեցվել էր Հայաստանում): Տոնակատարությունը տեղի էր ունենալու Հոլիվուդի Փալադիում («Palladium») հանդիսասրահում, բայց աննախատեսելի դեպքերի հետևանքով այն տեղի ունեցավ United Community Church[1]-ում:

1996 թ. սեպտեմբերի 22-ին Լևոն Տեր-Պետրոսյանի Հայաստանի նախագահ վերընտրվելու կապակցությամբ ՀՄՄՄ-ի շնորհավորական նամակը[2] տպագրվեց թերթում[3]:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հայաստանի անկախ Հանրապետությունը ստեղծվելով 5 տարի առաջ, անցավ բազմաթիվ փորձություններից, ժողովուրդը ենթարկվեց զրկանքների: Բայց նա սկզբից ևեթ վստահեց Ձեզ և դուք ընտրվելով առաջին նախագահը Ձեր ուսերի վրա վերցրեցիք ոչ միայն Հայաստանի, այլև Արցախի հոգսերը:

Ձեր կողմից վարվող ճիշտ քաղաքականության շնորհիվ ապահովվեց Հայաստանի և Արցախի անվտանգությունը, միջազգային ասպարեզում Հայաստանը ճանաչվեց որպես դեմոկրատական երկիր, նա հարաբերություններ հաստատեց բազմաթիվ երկրների հետ դիվանագիտական մակարդակով:

Հայրենակցական Միությունների Միացյալ Մարմինը (ՀՄՄՄ) Լոս Անջելեսում միշտ կորավիգ է եղել, է և կլինի մեր նոր պետականության ամրապնդմանը:

Շնորհավորելով Ձեզ, Ձեր նախագահական երկրորդ շրջանի վերընտրության կապակցությամբ, ՀՄՄՄ-ն ցանկանում է հաջողություններ և նոր ավյուն ու եռանդ, ամենակարճ ժամանակամիջոցում լուծելու Հայրենիքի հրատապ հարցերը, հատկապես սոցիալ տնտեսական և այլ հարցեր, որոնք կապված են ժողովրդի վիճակի բարելավման հետ, ինչպես նաև Ձեր ճիգերը բազմապատկել Արցախի հարցի արդար լուծման և Հայաստանի տնտեսության վերականգնման համար:

ՀՄՄՄ-ն նաև կորավիգ է կադրերի փոփոխության, որպեսզի ավելի մարդիկ, գալով կառավարման ղեկի մոտ, ավելի հեշտացնեն Հայրենիքի չլուծված խնդիրների լուծումը:

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՄԱՐՄԻՆ

Նախագահ՝ Վահան Շամլյան

Ատենապետ՝ Գրիգոր Շենյան          Ատենադպիր՝ Սարգիս Մաճառյան

---

1.- Քանի որ այս գրքում քաղաքական հարցերը այնքանով են շոշափվում, որքանով դրանք կապ ունեն ՀՄ-ների գործունեության հետ, ուստի տե՛ս Նահապետ Մելքոնյանի հոդվածը՝ «Հակառակ խափանարարական արարքներու եւ սպառնալիքներու, անկախութեան 5-րդ տարեդարձը տօնակատարուեցաւ չքեղօրէն», «Նոր Կեանք», թիվ 44, Հոկտ. 10, 1996 և ՀՀ անկախության 5-րդ տարեդարձի կազմակերպիչ Հանձնախմբի հոդվածը՝ «Հաղորդագրություն», «Նոր Կեանք», թիվ 1, Դեկտ. 12, 1996:

2.- ՀՄՄՄ-ի նամակները հիմնականում ես էի գրում արևելահայերենով: Եթե անհրաժեշտություն էր զգացվում, այն վերածվում էր արևմտահայերենի:

3.- Տե՛ս «Նոր Կեանք», թիվ 47, Հոկտ. 31, 1996:



Ներգաղթի 50-ամյակի հարցը քննարկվեց ՀՄՄՄ-ի նիստում և որոշվեց չնշել այն, նկատի ունենալով տվյալ ժամանակաշրջանի լարված մթնոլորտը, որը կարող էր տհաճությունների առիթ տալ: Այդ լարվածությունը շարունակվեց նաև հետագայում: Կրթական մշակների մեծարանքից մի քանի օր առաջ մի խումբ «հայրենասերների ջանքերով» Ստալինի, Ֆիդել Կաստրոյի և Լևոն Տեր-Պետրոսյանի նկարները երևացին հայկական խանութների ու տպարանների ցուցափեղկերում, ընդվզում առաջացնելով ամբողջ հայ համայնքում: Այդ արարքի հեղինակները հասկանո՞ւմ էին արդյոք, որ ստորանում էին օտարների աչքին: Հազիվ թե...: Վրեժխնդրությունը երբեք չի եղել խոհեմության բարեկամը, թեկուզ, հարազատի նկատմամբ: Այս առթիվ ահա թե ինչ էր գրում «Նոր Կեանք»ը[1].

ԱԶԳԱՎՆԱՍ ԱՐԱՐՔՆԵՐ

Ուրբաթէն Շաբաթ լուսցող գիշերին (7 Դեկտեմբեր 96), Հոլիվուտի, Կլէնտէյլի եւ Փասատինայի հայկական խմբագրատուներու, միութեանց կեդրոններու եւ վաճառատուներու ցուցափեղկերուն վրայ անոպաներու կողմէ փակցված էին Ֆիտել Գասթրոյի, Ստալինի եւ նախագահ Տէր-Պետրոսյանի նկարները, ընդգծելով, որ «ասոնք ալ բռնի ուժով տիրապետեցին»:

Շրջաններու ոստիկանութիւնները քննութեանց ձեռնարկեցին այս տմարդի արարքներուն հեղինակները երեւան բերելու համար:

Հետագային պիտի տանք յատուկ յանձնախումբին հաղորդագրութիւնը ու այլ մանրամասներ:

ՀՄՄՄ-ի նիստերում քննարկվող նյութերից մեկն էլ հայ կրթական մշակների մեծարանքի հարցն էր: Որոշվեց այն իրագործել դեկտեմբերին 8-ին, որի մասին հաղորդագրություն եղավ թերթում[2] (տե՛ս հավելված էջ 464):

Այս առթիվ լույս ընծայվեց նաև մի գրքույկ նրանց կենսագրականներով: Գրքույկի վերնագիրն էր «ՅԱՐԳԱՆՔ ՀԱՅ ԳԻՐ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՈՒ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿՆԵՐՈՒՆ», որն ընդգրկում էր 15 անուն՝ Այնթապից, Քիլիսից, Զորք Մարզպանից, Պարսկաստանից, Մարաշից, Բեյլանից (ըստ գրքում եղած հաջորդականության):

Գրքույկի երկրորդ էջում «Երկու խօսք» է գրված ՀՄՄՄ-ի կողմից, որը չի քննարկվել նրա նիստում, և վեճի առիթ հանդիսացավ: «Երկու խօսք»ի առաջին պարբերությունը չի համապատասխանում գրքույկում ընդգրկված երախտավորների դասավորման բովանդակությանը: Ահա այն.

1915-ի Եղեռնէն ետք հայ գիր ու գրականութեան եւ կրթութեան ճամբով

---

1.- Տե՛ս «Նոր Կեանք», թիվ 1, Դեկտ. 12, 1996:

2.- Տե՛ս «Նոր Կեանք», թիվ 47, Հոկտ. 31, 1996:

*հայ ժողովուրդի ծառայութեան նուիրուած եւ Գալիֆորնիոյ ՀՄՄ-ին մաս կազմող ՀՄ-ներու անդամ խումբ մը վաստակաւորներուն կենսագրական գծերը կը բովանդակէ այս գրքոյկը:*

*Ըստ այս պարբերության, նշենք, որ պարսկահայերի Իրանահայ միությունը չի մտնում ՀՄՄՄ-ի կազմի մեջ, հետեւաբար նրա ներկայացուցիչները պետք չէ, որ տեղ գտնեին գրքույկի մեջ:*

*Երկրորդ՝ ՀՄՄՄ-ում պետք է քննարկվեր գրքույկում ընդգրկված կրթական մշակների դասավորման հաջորդականությունը և ճիշտ լուծում գտնվեր, որպեսզի երկու հոգի (Գրիգոր Շենյան և Սարգիս Մաճառյան) մոնոպոլիան իրենց ձեռքը վերցնելով, ուզած ձևով դասավորելով նրանց, չնեղացնեին ՀՄ-ներին: Ինչպե՞ս եղավ, որ ՊՀՄ-ն անդամ լինելով ՀՄՄՄ-ին, նրա կրթական մշակները վերջում տեղադրվեցին, իսկ պարսկահայերինը՝ նրանցից առաջ: Ինչպե՞ս եղավ, որ Այնթապի, Քիլիսի և Ջորք Մարզպանի կրթական մշակները հայտնվեցին սկզբում՝ իրար ետևից, որից հետո՝ մնացածները...: Այս հողի վրա, գրքույկը տեսնելուց հետո, իմ առաջին ընդհարումը եղավ Գրիգոր Շենյանի և Սարգիս Մաճառյանի հետ: Նրանք ցուցամոլության ու փառասիրության համար են օգտագործում իրենց պաշտոնները, որը, մեղմ ասած, ներելի չէ, մանավանդ, ՀՄՄՄ-ի նման մի կազմակերպության, որը չեզոք է և նպատակն էլ ժողովրդին համախմբել, միասնություն ստեղծել է:*

*Ինչպես նախորդ էջերում էլ նշեցինք, այսպիսի «մանրունքները», բացթողումները, թերությունները սառեցնում էին ՀՄՄՄ-ն ներկայացնող ՀՄ-ների սերտ հարաբերությունները, և նրանցից շատերը կամաց-կամաց հեռանում էին նրա շարքերից: Փա՞ստ: ՀՄՄՄ-ն ստեղծող 15 ՀՄ-ներից վերոհիշյալ միջոցառման կազմակերպման ժամանակ միայն 8-ն էին մնացել նրա կազմում՝ Այնթապի, Յոզկաթի և Շրջ.-ի, Զեյթունի, Հաճընի, Մարաշի, Ջորք Մարզպանի, Պէյլանի և Քիլիսի: Բայց ո՞ւմ հոգն էր այդ...:*

*Բեյլանցիներից՝ Արմենուհի Պետրոսյանի, տեր և տիկին Հակոբ և Նվարդ Գասպարյանի կենսագրականները գրեցի, որի համար հպարտ եմ:*

*Մեծարանքի միջոցառման կապակցությամբ նամակ ուղարկեցի Ժոզեֆ Ավետիսյանին* (տե՛ս հավելված էջ 465), *որպեսզի ՀՀՄԽ-ի խոսքը հղի մեծարանքի առթիվ:*

*ՀՄՄՄ-ի որոշման համաձայն մեծարանքի երեկոյի հանդիսավարությունը հանձնարարվեց ինձ:*

*Չնայած այդ օրերին տեղի ունեցող բազմաթիվ ձեռնարկների, մեծարանքի երեկոն սկսվեց ավելի քան 500 հանդիսատեսի*



***ներկայությամբ: Նախքան այն սկսելը, հոտնկայս՝ մեկ րոպե լռությամբ հարգանք մատուցվեց 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի զոհերի հիշատակին:***

***Այնուհետև մեծարյալներին մեկ-մեկ հրավիրեցի ներս ըստ տարիքի՝ մեծից փոքրը, առաջնային հարգանքը մատուցելով իգական սերին և ամփոփ տեղեկություն տալով յուրաքանչյուրի մասին: Բոլորի կրծքերը զարդարված էին գույնզգույն վարդերով: Նրանց մուտքը սրահ ընդունվեց հոտնկայս, որոտնդոստ ծափահարություններով:***

ՄԵԾԱՐՅԱԼՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՍՐԱՀ

*1.– Արմենուհի Պետրոսյան՝ ծնվել է 02-14-1895 թ. Այնթապում, 102 տարեկան, եղել է ուսուցչուհի և հասարակական գործիչ:*

*2.– Սայենի Պալյան՝ ծնվել է 1909 թ. Ադանայում, 87 տարեկան, եղել է ուսուցչուհի, ունի հրատարակված գիրք:*

*3.– Լիդիա Բոյաջյան՝ ծնվել է 1910 թ. Մարաշում, 86 տարեկան, եղել է վարժուհի, ունի հրատարակված գիրք:*

*4.– Ալիս Օդաբաշյան՝ ծնվել է 1911 թ., 85 տարեկան, գրող և թարգմանիչ, մի քանի գրքերի հեղինակ:*

*5.– Նվարդ Գասպարյան՝ ծնվել է 1911 թ. Իսկենդերիինում, 85 տարեկան, ամուսինը՝ Հակոբ Գասպարյան՝ ծնվել է 1908 թ. Բեյլանում, 88 տարեկան, երկուսն էլ եղել են մանկավարժներ և հասարակական գործիչներ:*

*6.– Ալեգ Գըլըճյան՝ ծնվել է 12-20-1900 թ. Ջորք Մարզպանում, 95 տարեկան, գրող և ազգային-հասարակական գործիչ:*

*7.– Վեր. Միհրան Քյորօղլյան՝ ծնվել է 8-22-1902 թ. Ջորք-Մարզպանում, 84 տարեկան, եղել է եկեղեցու հովիվ, ունի հրատարակված գիրք:*

*8..– Պետրոս Քաջբերունի՝ ծնվել է 02-14-1910 թ. Աղբակ գավառի Բաշկալե քաղաքում, 86 տարեկան, գրող և հասարակական գործիչ:*

*9.– Խաչիկ Արարատյան՝ ծնվել է 1912 թ. Այնթապում, 84 տարեկան, ասմունքող և գրող:*

*10.– Երվանդ Պապայան՝ ծնվել է 1913 թ. Այնթապում, 83 տարեկան, գրող և ազգային հասարակական գործիչ:*

*11.– Զարեհ Զարգունի՝ ծնվել է 1913 թ. Ջորք Մարզպանում, 83 տարեկան, մանկավարժ և հասարակական, ազգային-քաղաքական գործիչ:*

*12.– Արշավիր Մկրտիչ՝ ծնվել է 1913 թ. Իրանի Յազդ քաղաքում, 83 տարեկան, գրող և ազգային գործիչ:*

*13.– Գևորգ Գառյան՝ ծնվել է Ջորք Մարզպանում: Ծննդյան թիվը հայտնի չէ, 83-85 տարեկան, գրող և ազգային-հասարակական գործիչ:*

*14.– Սարգիս Յափուջյան՝ ծնվել է 1914 թ. Քիլիսում, 82 տարեկան, մանկավարժ և գրող, ունի հրատարակված 6 գիրք:*

*15.– Անդրանիկ Սարյան՝ ծնվել է 4-15-1914 թ. Իրանի Ջալմահալ քաղաքի Սինագուն գյուղում, 82 տարեկան, գրող և ազգային-հասարակական գործիչ, ունի տպագրված 4՝ անտիպ 8 գործեր:*

*16.– Կայծակ Լեփեջյան՝ ծնվել է 1914 թ. Ջորք Մարզպանում, 82 տարեկան, գրող և ազգային-հասարակական գործիչ:*

***Մեծարյալներից բացակա էին՝ Սայենի Պալյանը, Ալեգ Գըլը-***



Հանդիսավարության պահին:

ճյանը և Զարեհ Զարգունը:

Բացման խոսքով հանդես եկավ Գրիգոր Շենյանը: Այնուհետև ես հղեցի իմ ողջույնի խոսքը:

Պատվարժան հայրեր, հարգելի հյուրեր, սիրելի հայրենակիցներ, այսօրվա ձեռնարկը հովանավորում է ազգային բարերար, ՀՍՄՄ-ի ցկյանս նախագահ Վահան Շամլյանը:

ՀՍՄՄ-ն ստեղծվեց 1990 թ. հուլիսի 31-ին, նպատակ ունենալով իր նպաստը բերելու Սփյուռքում՝ հայապահպանման, միասնության և հայրենի անկախ պետականության կայացման գործընթացին:

Նա շարունակում է իր առաքելությունը այդ ուղղությամբ՝ այսօր ձեզ ներկայացնելով 80 և բարձր տարիքի գիր և գրականության ու կրթական ասպարեզում վաստակ ունեցող հայ մշակներին, որոնք 1915 թ. Մեծ Եղեռնից հետո իրենց ուժը, կարողությունը և նյութականը չխնայեցին հայ երեխաներին ու որբերին հայկական, ազգային ոգով դաստիարակելու սուրբ գործին, որպեսզի հայն





Մեծարյալները շրջապատված ՀՄՄՄ-ի անդամներով:

ինքնությունը չկորցնի, գոյատևի, մինչև որ նպաստավոր քաղաքական պայմաններ ստեղծվեն բնօրրանը վերադառնալու:

Այս սերունդի ուսուցանած սաներից շատերն այսօր հասել են նախանձելի դիրքերի և իրենց լուման են ներդնում Հայ դատի արդար լուծման գործին:

Թուրքական ջարդարարների նպատակն էր բնաջնջել հայ ժողովրդին աշխարհի երեսից, որպեսզի ընդմիշտ ազատվեն Հայկական հարցի գլխացավանքից: Բայց նրանք չհասան իրենց նպատակին: Մեծ Եղեռնից մազապուրծ հայերի մի մասը վերադարձան իրենց բնօրրանը, իսկ շատ-շատերը ապաստանեցին օտար երկրներում և հիմնադրելով Սփյուռքը, երբեք չմոռացան Հայ դատը և աշխատում են միջազգային հանրության աջակցությամբ հասնել այդ նպատակին՝ պարտադրել Թուրքիային ընդունելու հայկական ցեղասպանությունն ու հատուցելու հայերին, իր հասցրած վնասի դիմաց: Իսկ դրա իրականացումը կապված է հայրենի հզոր պետականության կողքին հզոր Սփուռք ունենալու հետ: Հետևաբար, յուրաքանչյուր սփյուռքահայի պարտականությունն է, նպաստելով հայկական Սփյուռքի ուժեղացմանը, իր ուժերը նվիրաբերել հայրենի անկախ պետականության հզորացմանը:

Զարդ տեսած մտավորականներից և այստեղ ներկա նրանց ներկայացուցիչներից շատերը գրեցին իրենց հուշերը Մեծ եղեռնի մասին, որպեսզի հետագա սերունդները երբեք չմոռանան այն և չթույլատրեն նոր ցեղասպանություն որևէ ազգի նկատմամբ: Շնորհակալություն:

Մեծարյալների կողմից շնորհակալական խոսք ասաց Երվանդ Պապայանը, որը մանուկ տարիքից եղել է ՀԲԸՄ-ի անդամ և իր ծառայության համար կրկնակի վետերանի վկայական է ստացել: Նա բարձր գնահատեց ձեռնարկը, մեծարյալների կողմից շնորհակալություն հայտնեց ՀՄՄՄ-ին դրա մտահղացման համար և շնորհավորեց նրա հաջողությունը:

Բոլոր ելույթները համեմվում էին գեղարվեստական ճոխ հայտագրով, որին սիրով իրենց մասնակցությունը բերին համայնքի մի խումբ հայտնի արվեստագետներ. Լևոն Քաթրջյաներգ, Գրիգոր Օգարյան՝ ասմունք, Լուսինե Նարգիզյան՝ Դաշնամուր, Աննա Կոմանդյան՝ ջութակ, Քատրին Ասատրյան՝ դաշնամուր, Մարինե Տեր-Ղազարյան՝ երգ, «Նայիրի» երաժշտական դպրոցի ուսանողության երգչախումբը՝ ղեկավարությամբ Սեդրակ Տեր-Ղազարյանի:

Ներկաները մեծ երախտագիտական զգացմունքներով շնորհավորեցին մեծարյալներին:

Մեծարանքի երեկոյի փակումը կատարվեց պահպանիչով Արժ. Տեր Հովսեփ քհն. Հակոբյանի կողմից:

Ներկաները հաճելի և անմոռանալի հուշ տարան իրենց հետ մեծարանքի երեկոյից:



## ԺԲ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1997 Թ.

Սույն թվի փետրվարի 2-ին տեղի ունեցավ Ս. Հովհաննու Կարապետ եկեղեցու 25-ամյակը և Վարդան ավագ քահանա Թադևոսյանի քահանա ձեռնադրության 40-ամյակը: Հրավիրված էր ՊՀՄ-ի վարչությունը ամբողջ կազմով: Այդ առթիվ հուշատախտակ հանձնվեց հոբելյարին, որտեղ գրված էր.

Այս հուշատախտակը տրվում է Ս. Հովհաննու Կարապետ եկեղեցու Ավագ քահանա Տեր Վարդան Թադևոսյանին, քահանա ձեռնադրության 40-ամյակի, եկեղեցու հովվության 20-ամյակին «Պատվակալ քահանա» տիտղոսի շնորհման առթիվ և իր երկարամյա, անբասիր, անսակարկ նվիրվածության ու մատուցած ծառայությունների համար հայ եկեղեցուն և հայ ժողովրդին ինչպես Հայրենիքում, այնպես էլ Լոս Անջելեսում իր քահանայական ամբողջ գործունեության ընթացքում:

Պէյլանի հայրենակցական միության վարչություն

Լոս Անջելես, փետրվար 2, 1997 թ.

Միջոցառման մասին գրածս հոդվածը[1] մեջբերվում է:

### ՄԵԾԱՐՄԱՆ ԵՐԵԿՈ ՆՎԻՐՎԱԾ ՏԵՐ ՎԱՐԴԱՆ Ա. ՔԱՀ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ

Եկեղեցիներ, վանքեր,
Սրբավայրեր անհամար,
Կառուցեցինք անվեհեր,
Մենք մեր հողում անդադար:

Այսպես գոյատևեցինք,
Հասանք քսաներորդ դար
Եվ դեռ պիտի շարունակենք,
Մեր այդ երթը անդադար ...

Հոբելյանական երեկոն անվանված է «Մեծարանքի երեկո և հանդիսավոր ճաշկերույթ՝ նվիրված Ս. Հովհաննու Կարապետ եկեղեցու հիմնադրման 25-րդ տարեդարձին, Տեր Վարդան Ավագ Քահանա Թադևոսյանի քահանա ձեռնադրության 40-ամյակին, հովանավորությամբ Գերշ. Տեր Վաչե Արք. Հովսեփյանի՝ Առաջնորդ Հայց. Առաքելական եկեղեցվո Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի և նախագահությամբ բարերարներ տեր և տիկին Ձեգ և Մարո Գալայճյանների»:

Առաջին գնահատանքը Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա.ի կոնդակն է, որտեղ նշվում է հոբելյարի անսակարկ ծառայությունները հայ եկեղեցուն ու ժողովրդին:

Այնուհետև գնահատանքները՝ Առաջնորդ Սրբազան Վաչե Արք. Հովսեփյանի, եկեղեցու հովիվ՝ Մանուկ քահանա Մարգարյանի, Ծխական խորհրդի, շաբաթօրյա դպրոցի, «Արմենիա» ճատրակի (շախմատի) դպրոցի, «Մտեղծարար ձեռքեր» արվեստի դպրոցի, որոնք արժանիորեն գնահատեցին հոբելյարի ազգային գործունեությունը և ժողովրդականությունը, որ նա ակնվորեն ծառայեց հայ համայնքին իր ամբողջ գործունեության ընթացքում մեծ նվիրվածությամբ:

Հոբելյանական երեկոն տեղի ունեցավ կիրակի, փետրվար 2, 1997 թ.

---

1.- Տե՛ս «Նոր Օր», Չորրքշաբթի, Փետրվար 19, 1997:

*«Arbat Golden Palace» սրահում, որտեղ ներկա էին 600 հրավիրյալներ:*

*Սրահը, ճաշերը, խմիչքեղենը ձրիորեն տրամադրեցին Արբատի սեփականատերերը՝ տեր և տիկին Նշան և Մեգի Բիկյանները՝ իրենց նվիրատվության հետ միասին:*

*Էլիկ Թաշչյան կատարեց ամերիկյան և հայկական օրհներգերը: Սեղանը օրհնեց Գերշ. Տեր Վաչե Արք. Հովսեփյանը: Բացման խոսք ասաց Ծխական խորհրդի ատենապետ Սարգիս Տեր Սարգիսյան: Նա դրվատեց եկեղեցու կատարած գործունեությունը Սրբազանի ու հոբելյարի կողմից շրջապատված Ծխական խորհրդով, օժանդակ և տիկնանց հանձնախմբերով ու նվիրյալ ազգայիններով:*

*Եկեղեցուն իր անսակարկ աջակցությունը ցույց տվեց և շարունակում է ցույց տալ ՊՀՄ-ն: Նա միշտ մասնակցում է նրան օգտակար լինելու և՛ նյութապես, և՛ շինարարական ու այլ աշխատանքներում:*

*Հանդիսավար Օշին Քեշիշյանը ներկայացրեց պատվո սեղանը. հովանավորող՝ Սրբազան Վաչե Հովսեփյան, նախագահողներ՝ տեր և տիկին Ճեգ և Մարո Գալայճյաններ, հոբելյարը՝ Տեր Վարդան Ավագ Քահանա Թադևոսյան, եկեղեցու հովիվ Տեր Մանուկ Մարգարյան, Ծխական խորհրդի ատենապետ տեր և տիկին Սարգիս Տեր Սարգիսյան, Լոս Անջելեսի դատախազ Ջիմի Հան, բարերարներ տեր և տիկին Նազարեթ Գալայճյան, Արսեն Արք. Բերբերյան, Լոս Անջելեսի քաղաքապետի ներկայացուցիչ Չեյսի Քափրըն:*

*Հանդիսավարը ամփոփ կերպով ներկայացրեց Ս. Հովհաննու Կարապետ եկեղեցու 25-ամյակը և Տեր Վարդանի 20 տարվա գործունեությունը՝ օգնություն Հայաստանից եկածներին, կնունք, պսակ, դպրոց, թաղում, հոգեհանգիստ և այլն:*

*Հոբելյարին գնահատագրեր հանձնեցին. Լոս Անջելեսի քաղաքապետի կողմից՝ Չեյսի Քափրըն, եկեղեցու Ծխական խորհրդի կողմից՝ ատենապետ Սարգիս Տեր Սարգիսյան: ՊՀՄ-ի կողմից հուշատախտակ հանձնեց տողերիս հեղինակը՝ որպես նրա ատենապետը:*

*Լոս Անջելեսի դատախազ Ջիմի Հանին ներկայացրեց Սրբազան Վաչե Հովսեփյանը, դրվատելով նրա և ծնողների՝ Քեննեթ Հաների օգնությունը Ս. Հակոբ եկեղեցիին և հայ համայնքին:*

*Եկեղեցու երգչախումբը կատարեց Մակար Եկմալյանի «Ով Հայոց Աշխարհ»-ը: Հենրիկ Միհրանյան կատարեց Մակար Եկմալյանի «Տե՛ր Կեցո» և Սայաթ Նովայի «Թամամ աշխարհ պտուտ էկա» երգերը, իսկ Տաթևիկ Մավյան՝ Էդգար Հովհաննիսյանի «Գիշեր էր» և Արտեմի Այվազյանի «Աղջկա երգը»:*

*Այնուհետև ելույթ ունեցան Արշակ Տիգրանյան վարժարանի աշակերտները: Նրանք արտասանեցին. Փոքրիկն Տիգրան Ալթունյան՝ Վահան Թեքեյանի «Եկեղեցին հայկական», Հովհաննես Թաթևոսյան՝ Սիլվա Կապուտիկյանի «Հայաստան աշխարհ», Օֆելիա Վարդերեսյան՝ Սիլվա Կապուտիկյանի «Մասիսին մոտիկ» բանաստեղծությունները:*

*Ասմունքող Նունե Ավետիսյան կատարեց Պարույր Սևակի «Բարև», «Մենք խուլ ենք կիսով» և Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» ստեղծագործությունները:*

*Ջութակահար Հարություն Գարամանուկյանը դաշնակահար Խաչիկ Քյուրքչյանի ընկերակցությամբ ամբողջ երեկոն ջերմացրեց ժողովրդական և դասական երգերի կատարումով:*





*ՊՀՄՎ-ի կողմից Տեր Վարդանին հուշատախտակ է հանձնում տողերիս հեղինակը: Աջ կողմում Արքեպ. Արսեն Բերբերյանը:*

*Եկեղեցու կողմից գնահատանքի վկայագրեր և հուշանվերներ հանձնվեցին մի խումբ նվիրյալների, այդ թվում ՊՀՄ-ի վարչության անդամներին, որոնք իրենց ջանքերը չեն խնայում եկեղեցուն օգնելու գործում:*

*Սրբազան Վաչե Հովսեփյանը իր ելույթում նշեց այն դժվարությունները, որոնք հաղթահարվեցին և հաջողության հասցրեցին եկեղեցին:*

*Հոբելյարը, իր շնորհակալությունները հայտնեց բոլորին և մեծարանքի երեկոն կազմակերպողներին:*

*Եղան նվիրատվություններ՝ մոտ 35000 դոլար:*

*Թո՛ղ, Սփյուռքում հաստատուն մնան մեր հիմնաքարերը՝ եկեղեցիները և դպրոցները՝ նվիրյալների հետ միասին, որոնք անսակարկ ծառայում են մեր ժողովրդին:*

***Մտահոգված էի վարչության կազմը երիտասարդացնելու հարցով, մանավանդ, որ նա «ծերանում» էր, ամենաերիտասարդ անդամի տարիքը համարյա 55 էր: 02-21-97 ՎՆ-ում հարցը քննարկվեց և որոշվեց հաջորդ նիստին թեկնածուներ ունենալ:***

***4-07-97 ՎՆ-ում այլ հարցերի հետ քննարկվեց նաև Թորոս Քիպըրտճյանի «Մի տհաճ երևույթի առիթով» հոդվածը[1] «ինքնուս երգչուհի» (ըստ հոդվածագրի) Մարիետա Բաղալյանի մասին, որտեղ նշված էր նաև, որ, իբր նա Լոս Անջելես է եկել ՊՀՄ-ի վարչության հրավերով 1995 թ.: Որոշվեց համապատասխան***

*1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Հինգշ., Մարտ 13, 1997:*

հոդված պատրաստել: Տեղին է ընթերցողին որոշ լուսաբանություն տալ այս մասին:

Մի օր Մանվել Մարաշյանը զանգահարեց և, նշելով, որ մի երգչուհի է եկել Հայաստանից, խնդրեց օգնել՝ հովանավորելով նրա մենահամերգը: Ընդառաջեցի նրա խնդրանքին և պայմանավորված օրը նրան հանդիպեցինք Նունե Ավետիսյանի տանը: Ծանոթանալուց հետո քննարկեցինք հարցը: Մանվելը առաջարկեց հովանավորել նրա միջոցառումը: Համաձայնվեցի և դրամական օգնություն էլ առաջարկեցի՝ վերադարձնելու պայմանով: Խոսակցության ընթացքում Նունեն ասաց. «Այս նամակը կարծում եմ այլևս պետք չէ, պատռում գցում եմ» և առանց պատասխանի, որոշումը իրացրեց: Անակնկալի եկա, որովհետև ոչ մի տեղեկություն չունեի նամակի մասին (ո՞վ է գրել այն և ինչի՞ մասին է): Հետևաբար, Նունեի հարցը ուղղված էր Մանվելին և Մարիետային: Քաղաքավարությունից դրդված լռեցի: Բայց նամակը հանելուկ մնաց ինձ համար և կասկածի առիթ տվեց...: Այդ պատճառով հոդվածի մեջ հատուկ նշել եմ 1-ին կետը, որը գրելուց առաջ, երևույթը պարզաբանելու համար, խոսեցի տարբեր մարդկանց հետ:

Այսօր (7-06-2001), երբ պատրաստվում էի գրել այդ մասին, հիշեցի նամակը և հույս ունենալով, որ Նունեից սպառիչ պատասխան կստանամ, զանգահարեցի նրան: Ըստ նրա, նա հիշում է այդ օրվա հանդիպումը և խոսակցությունը, բայց նամակի մասին ոչինչ չի հիշում...: Իր խոսքերով, ինքը Մարիետային լավ չի ճանաչում, Երևանում երբեմն հանդիպել են աշխատանքի բերումով: Ամեն դեպքում նամակի առեղծվածը չպարզվեց: Բայց մի բան պարզ է. Մարիետան հենց այնպես չէր կարող ասել Բարսեղյան հաստատության, որ ՊՀՄ-ի հրավերով է եկել, և ոչ թե՝ մի ուրիշի...: Այս բոլորը բերում են այն եզրակացության, որ նամակը Մարիետային գրված է եղել Մանվել Մարաշյանի կողմից, և նամակի ոչնչացումով փաստերի հետքերը կորան: Մանավանդ, որ վարչության նիստում հոդվածը քննարկելիս Մանվելը բերանը ջուր էր առել ու լռել էր: Հետևաբար, եթե փաստերը ոչնչացված են, ապացույց չկա, ապա մարդն «անմեղ» է...:

4-13-97 թ. ՎՆ-ին ներկա էին 8 թեկնածուներ. Էքշիյան Մարտիրոս, Գասպարյան Հովսեփ, Ազատյան Ղուկաս, Թաշչյան Ստեփան, Գյոզալյան Հովհաննես, Ֆիլյան Գևորգ և Հարությունյան Սեդրակ: Արտահայտվեցին վարչականները և հրավիրյալները: Մարտիրոսն արդեն վարչության անդամ էր և ստանձնեց իր՝ քարտուղարի պաշտոնը: Հովսեփը համաձայնվեց աշխատել



վարչության մեջ: Որոշվեց մնացածներին ժամանակ տալ մտածելու և հաջորդ նիստերում հայտնելու իրենց որոշումները:

4-20-97 թ. ՎՆ-ում քննարկվեց Մարիետայի մասին գրածս հոդվածը[1] և որոշվեց հանձնել մամուլին: Ահա այն.

ԻՆՉՈ՞Ւ ԱՐԱՏԱՎՈՐԵԼ ՊԱՏԻՎԸ

Այս հոդվածը գրվում է «Նոր Հայաստան»-ի մարտ 13, 1997, թիվ 48-ում տպված «Մի տհաճ երեւոյթի առիթով» հոդվածի առթիվ, որի հեղինակն է պրն. Թորոս Ջիպրիտճյանը:

Հոդվածում, իրավացիորեն, հեղինակի անունով մի խումբ ազգասերների և արվեստագետների վրդովմունքն է արտահայտված Հայաստանից Լոս Անջելես եկած «վայ արվեստագետ» (ըստ հոդվածագրի) Մարիետա Բաղալյանի նկատմամբ, որն, ըստ հոդվածագրի, իր գրպանի շահերի համար խաբել և թյուրիմացության մեջ է գցել հարգված կազմակերպություններ, անհատներ և արվեստագետներ, համերգ կազմակերպելու պատրվակով, որի համար արվեստագետ Մարգարիտ Թախտաջյանի միջամտությամբ «չեղած տեղից» (ըստ հոդվածագրի) ստեղծվել է նրա ծայնաերիզը՝ «Բարսեղյան հաստատության» կողմից, որպեսզի համերգի օրը վաճառվի, նրան բերելով յոթացուցիչ եկամուտ: Բայց նա արհամարհելով բոլորին, հրաժարվելով համերգից, «Բարսեղյան հաստատություն»-ից պահանջել է 300 ձայնաերիզ՝ դիմելով դատարան (չնայած 100 ձայնաերիզ տրվել էր նրան ձրի) և չհասնելով ոչ մի արդյունքի, վերադարձել է Հայաստան և, ըստ Մարգարիտ Թախտաջյանի, այնտեղ էլ շարունակում է բողոքները: Հոդվածը վերջանում է հետևյալ պարբերությամբ. «Ժամանակն է, որ մեր գաղութը որոշակի վերաբերմունք ցուցաբերի նման անպարկեշտ «արուեստագէտների» դիմակ հագած անձնաւորութիւնների նկատմամբ»:

Հոդվածում Մարիետա Բաղալյանի գալը Լոս Անջելես կապվում է ՊՀՄ-ի հետ::

«1995 թուին, Լոս Անճելըս էր ժամանել Մ. Բաղալեանը, ՊՀՄ-ի հրաւէրով: Այդ Միութեան շրջանակներում ոչ մի համերգ չկազմակերպելով, այդ «արուեստագէտուհին» շատ ու շատ դռներ թակեց, խնդրելով այլ և այլ միութիւնների ու անհատ ձեռներէցների՝ կազմակերպելու իր մենահամերգը»:

Առաջին հայացքից պարզ թվացող այս արտահայտությունը փաստորեն հասկացվում է այնպես, որ ամբողջ կատարվածի համար մեղավոր է ՊՀՄ-ն, որը «տեր չի կանգնել հրավիրվածին», չնայած հոդվածագիրը ուղղակի չի գրում այդ մասին: Հեռախոսով կապվեցի «Բարսեղյան հաստատության» աշխատակից Արմենի և Մարգարիտ Թախտաջյանի հետ, լուսաբանելու համար, թե որտեղի՞ց է մեր միության անունը հայտնվել այնտեղ: Պարզվեց, որ ինքը՝ Մարիետա Բաղալյանն է ասել նրանց:

ՊՀՄ-ի վարչությունը, քննարկեց և որոշեց մամուլին հանձնել իր անհանգստությունը.

1. ՊՀՄ-ի վարչությունը իր գոյության ընթացքում, սկսած 1986 թվից, ոչ մի արվեստագետ չի հրավիրել Հայրենիքից, այդ թվում՝ Մարիետա Բաղալյանին, և պատասխանատու չէ առանձին անհատների բանավոր հրավերների համար, թեկուզ նրանք լինեն միության կամ նույնիսկ վարչության անդամներ:

2.Հավատում ենք, որ Լոս Անջելեսում հարգանք վայելող մեր միության անունը կմնա անաղարտ, ինչպես որ է մինչև հիմա, և համայնքը չի հավատա նրա պատիվը արատավորել ցանկացող «արվեստագետի» հորինվածքներին՝ խաբելով դրամ վաստակելու նրա շահադիտական գործունեությանը:

---

1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Երեքշ., Ապրիլ 29, 1997:

3. Միությունը դատապարտում է Հայրենիքից ամեն մի «վայ-արվեստագետի» հայտնվելը Լոս Անջելեսում և նրա հրավիրողին:

4. Մեր հարգելի հոդվածագիրները և խմբագրությունները ուշադիր և զգույշ լինեն հոդվածներում որևէ միության կամ անհատի անունը օգտագործելիս: Նախքան տպվելը ստուգեն և վստահ լինեն դրանց ճշտությանը, որից հետո խմբագրություն հանձնեն լույս ընծայելու համար:

Այս հարցը առիթ հանդիսացավ նոր մտորումների: Երբ Հայաստանը անկախացավ, արվեստագետների և տարբեր մասնագիտությամբ անհատների հոսքը ողողեց Լոս Անջելեսը, և նրանց մեծամասնությունը, ըստ իրենց՝ «դոկտորներ և պրոֆեսորներ էին», մի խոսքով, ով գալիս էր «պրոֆեսոր» էր և համայնքում նրանք կորցրեցին ոչ միայն իրենց հարգանքն ու պատիվը, այլև՝ տեղը:

Բայց կարծում ենք, որ մինչև հիմա բավական տհաճություններ եղան արվեստագետներ հրավիրելու հարցում և, իրոք, ինչպես հոդվածից մեջբերված վերջին պարբերության մեջ է ասված՝ չպետք է թողնել «արվեստագետների» դիմակ հագած անձնավորությունների»ն մուտք գործել այս համայնքը: Ո՞վ է թույլ տվել բաղալյաններին, օգտագործելով իրենց ծանոթությունները և ընդունելով խղճալի կեցվածք՝ արատավորել մեր միությունների, հաստատությունների, անհատների և, հատկապես, Լոս Անջելեսում հայրենի ժողովրդի պատիվը: Այլևս անհանդուրժելի է այս կեցվածքը և պատիվ չի բերում հային: Կարծում ենք, որ ժամանակն է արվեստագետների և միությունների ներկայացուցիչների միջոցով համայնքում ստեղծել մի Մարմին, որը Հայրենիքից եկած արվեստագետների տեղի ունենալիք ելույթները միայն քննարկելուց հետո թույլատրի Լոս Անջելեսի մեջ, որովհետև նրանց երեսից տուժում են իսկական արվեստագետները և արվեստասեր ժողովուրդը, որը հիասթափվելով անորակ արվեստագետների ելույթներից, չի հաճախում նաև իսկական արվեստագետների միջոցառումներին:

Նորություն չէ, որ այսօր Լոս Անջելեսում առանց հայրենի արվեստագետների (չվիրավորելով Սփյուռքի նրանց գործընկերներին), միջոցառումները շատ դժգույն են, և ժողովուրդը քիչ է հաճախում: Նրանց պատիվը բարձր պահենք:

4-20-97 թ. ՎՆ-ում որոշվեց նաև.

ա. Շարունակել չփումները վարչության անդամության թեկնածուների հետ, նրանց հրավիրելով վարչության նիստերին:

բ. Ընդառաջել ՀՅԴ-ի հրավերին և մասնակցել Մոնթեբելլոյում ապրիլի 24-ին կայանալիք Մեծ Եղեռնի 82-րդ տարելիցին:

գ. Մասնակցել Թելեթոնի կազմակերպման աշխատանքներին:

դ. Մասնակցել Զորավար Անդրանիկի մահվան 70-ամյակին կազմակերպված հանդիսությանը:

ե. Հոգեհանգիստ-հոգեճաշով նշել 1915 թ. նահատակների հիշատակը:

զ. Բեյլանի հուշարձանի հարցերի մասին նամակ գրել Ժոզեֆ Ավետիսյանին (տե՛ս հավելված էջ 466-467):

5-08-97 թ. ՎՆ-ում հարց դրվեց, որպեսզի բոլոր վարչականները իրենց կենսագրականները հանձնեն վարչության՝ որպես նրա պատմության կարևոր և անհրաժեշտ փաստաթղթերից



մեկը, որով, ծրագրում էի նաև յուրաքանչյուր վարչականի հիշարժան տարեթվերին՝ ծննդյան, ամուսնության և այլն, անհրաժեշտ հարգանք մատուցել նրան: Դժբախտաբար, ինչպես հացեների հավաքագրումը չիրագործվեց, այնպես էլ՝ կենսագրականներինը: Արխիվում կա միայն Մարտիրոս Էքշիյանի և իմ կենսագրականը: Պատճա՞ռը: Ըստ իմ կարծիքի, այստեղ էլ վարչականների մոտ արթնացան իրենք իրենց չհարգելու և չգնահատելու հարցը, որ երկրորդ կամ չորրորդ դասարանի կրթություն ունեցողը (Մանվել Մարաշյան, Գրիգոր Դովլաթյան, Հարություն Հարությունյան) կամ բոլորովին կրթություն չունեցողը (Սարգիս Գյոզալյան) ամոթ է, որ ներկայացնի կենսագրականը: Նրանք չէին կարող մտածել, որ դրանով իրենց կատարած գործունեությունը կարող էր ավելի բարձր գնահատվել հետագա սերնդի կողմից:

Այս ընթացքում բեյլանցիները հպարտանալու առիթ ունեցան, լսելով Զարեհ Պալյանի տղայի՝ Հարութի փաստաբանական ուսումն ավարտելը և Գլենդեյլի մեջ գրասենյակ բանալը:

Այս առիթով ՊՀՄ-ի վարչությունը գեղեցիկ ծաղկեզամբյուղ ուղարկեց, շնորհավորելով նրան և հաջողություններ ցանկանալով: Այնուհետև վարչականները այցելեցին նրա փաստաբանական գրասենյակը, ծանոթացան գրասենյակի ընդհանուր դրության և նրա գործունեության ծրագրերի հետ:

Թելման Տեր-Պետրոսյանի մահվան առթիվ վարչությունը ցավակցական ուղարկեց նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին (տես հավելված էջ 468):

5-22-97 թ. ՎՆ-ում որոշվեց Հարությունյան Սեդրակին, Խորշիդյան Հակոբին, Տոնոյան Մանուկին, Գյոզալյան Հովհաննեսին[1] ընդունել վարչության մեջ.:

8-14-97 թ. ՎՆ-ում քննարկվեցին դաշտահանդեսի և ՃՊ-ի կազմակերպչական հարցերը, ինչպես նաև վարչականներին նորից հիշեցվեց կենսագրականների մասին:

Միության դաշտահանդեսի մասին գրած հոդվածից բերենք որոշ պարբերություններ:

---

1.- Հիշեցնենք, որ ըստ ՄԿ-ի վարչության մեջ չեն կարող լինել երկու հարազատներ, ուստի նկատի էր առնված, որ Հարություն Հարությունյանը, Սարգիս Խորշիդյանը և Սարգիս Գյոզալյանը իրենց տղաներին զիջելով պաշտոնները, ժամանակի ընթացքում պիտի հեռանային վարչությունից: Նկատի ունեինք նրանց տարիքը և վարչության աշխատանքներին ակտիվ մասնակցության հարցը: Հարությունը տարվա մեծ մասը Երևանում էր: Բայց հեռացավ միայն Սարգիս Խորշիդյանը, իսկ մյուսները՝ ոչ, պաշտոննե՛ր ունեին... Հետևաբար նրանց տղաները չմասնակցեցին վարչության աշխատանքներին:

*ԴՀՄ-ի դաշտահանդեսը տեղի ունեցավ կիրակի, սեպտեմբեր 7, 1997-ին, Griffith Park-ի Cristal Springs Picnics Grounds Park Rengers-ի մեջ:*

*...Բացի բեյլանցիներից, ներկա էին նաև Լոս Անջելեսի հայրենակիցներ, որոնցից շատերը նախօրոք պանցահարում են դաշտահանդեսի մասին տեղեկություններ ստանալու համար, որովհետև նրանք արդեն գիտեն, որ մեր դաշտահանդեսը անցնում է շատ կազմակերպված, և իրենց երեխաների հետ միշտ ներկա են լինում: Արդեն մեր ուրախությունը մեր երեխաներն են, որոնց աշխատում ենք ամեն կերպ հայ պահել Հայրենիքից հեռու այս օտար ափերում: Այդ նպատակով, դաշտահանդեսի ամբողջ ծրագիրը երեխաների համար է կազմվում, և նրանց ուրախությունը, բնականորեն, ծնողների ուրախությունն է:*

*Ժողովրդի մեր շուրջը հավաքվելուն նպաստում է նաև այն, որ դաշտահանդեսի մուտքը ծրի է բոլորի համար: Երեխաների համար կազմակերպվում են խաղեր՝ երգ, պար, ասմունք, որոնց համար վարչությունը պատրաստում է մրցանակային նվերներ, իր ծախսերով, ինչպես նաև նարդիի և բլոթի մրցումներ:*

*Դաշտահանդեսին հյուրեր կային Հայաստանից, Լիբանանից, Ավստրալիայից, որոնք մեծ տպավորություններով հեռացան: Ներկա էր նաև Բեյրութից ՀՄ-ի կենտրոնական վարչության ատենապետ Տիգրան Սարաֆյանը եղբոր՝ Անդրանիկի և Ջորջ Մարկպանի ՀՄ-ի վարչության քարտուղար Հովսեփ Ասատրյանի հետ:*[1]

***10-02-97 թ. ՎՆ-ում որոշվեց ՀՄՄՄ-ի նիստերում Սարգիս Խորշիդյանին փոխարինել (նրա վարչությունից հեռանալու պատճառով) Արա Պետրոսյանով:***

***ՃՊ-ին նախագահում էին տեր և տիկին Վարդան և Արաքսի Թաշչյանները, որոնց տրվեց հուշատախտակ.***

*Սույնը տրվում է տեր և տիկին Վարդան և Արաքսի Թաշչյաններին ի գնահատանք նրանց ակտիվ մասնակցության միության գործունեությանը և այս տարվա ՃՊ-ի նախագահությունը ստանձնելու առթիվ:*

*ԴՀՄՎ, հոկտեմբեր 25, 1997 թ., Լոս Անջելես:*

***Մեջբերվում են որոշ հատվածներ ՃՊ-ի գրքի համար գրված «Հանուն Արցախի գոյատևման» հոդվածից՝***

*Հայրենիքի դժվար օրերին միությունը իր հնարավորության սահմաններում կարողացավ օգնել և՛ նրա պետականության կառույցներին, և՛ մեր հայրենակիցներին, շնորհիվ Լոս Անջելեսի հայրենակիցների նվիրատվության և միության կազմակերպած հանգանակության նրանց ակտիվ մասնակցելուն:*

*Այդ դժվար օրերը մնացին ետևում, բայց այսօր էլ Հայրենիքի և Արցախի մեր հայրենակիցները դեռ բազմաթիվ դժվարություններ ունեն, որոնք հրատապ լուծումներ են պահանջում:*

*Եթե ուզում ենք Արցախը պահել, եկեք բոլոր ուժերով օգնենք նրան՝ կառուցելու Գորիս-Ստեփանակերտ ստրատեգիական և Արցախի տնտեսության զարգացման համար մեծ նշանակություն ունեցող ճանապարհը, օգնենք Արցախի ժողովրդի կենցաղային կարիքներին (ջուր, էլեկտրականություն, հաղորդակցման միջոցներ և այլն):*

*Վարչության անունից շնորհակալություն եմ հայտնում բոլորին, որոնք թե՛ միության միջոցով և թե՛ անհատապես իրենց օգնությունն ու զորակցությունն են բերում Հայաստանի և Արցախի մեր հայրենակիցներին:*

***ՃՊ-ի մասին գրածս հոդվածից որոշ հատվածներ:***

*1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Երեքշ., Սեպտ. 16, 1997, էջ 9:*





*Դաշտահանդեսից մի տեսարան:*

*ԴՀՄ-ի ՃՊ-ն տեղի ունեցավ 1997 թ. հոկտեմբեր 25-ին, «Ամբրոզիա» շքեղապարդ սրահում:*[1]

*Բեյլանցիների սեղանը միշտ բաց է, և առանց հյուրի բեյլանցիները սեղան չեն նստում: Նույնն էր նաև այս ճաշկերույթի ժամանակ, այս տարի ևս հյուրեր ունեինք տարբեր երկրներից: Ներկա էին «Զանգու Զիքըն» հաստատության սեփականատեր Մարտիրոս Իսկենդերյանի տիկինը՝ Ռիտան՝ բարեկամների հետ, Ջորջ Մարկպանի ՀՄ-ի ատենապետ Նուպար Հակոբյանը, Հաճընի ՀՄ-ի վարչության անդամ Հարություն Ջոպանյանը, Զեյթունի ՀՄ-ի վարչության անդամ Ստեփան Մարիկյանը, ամենասիրված երգահաններից՝ Արմեն Մանդակունյանը, Գ. Սողուլյանի անվան թատրոնի ամենասիրված դերասաններից՝ Հարություն Ֆոդուլյանը իրենց կանանց հետ, Մեծ եղեռնից վերապրողներ՝ տեր և տիկին Հակոբ և Նվարդ Գասպարյանները, տիկին Նվեր Ապարյանը, ԲՀԿ-ի ճարտարապետ՝ Կարո Վահանյանը, Բեյրութից՝ պրն. Ավետիս Խորշիդյանը (Սարգիս Խորշիդյանի եղբայրը) իր կնոջ հետ, Կանադայից՝ պրն. Անդրանիկ Մարկոսյանը (Արայի քեռին), Երևանից՝ Բժշկուհի Վերգինե Պետրոսյանը (Կամո Տեր-Պետրոսյանի կինը՝ Արայի քույրը), Արցախի ազատագրական մարտերում 6 տարի մարտնչած ազատամարտիկ՝ Հուսիկ Գյոզալյանը, Երևանի «Հրազդան» մարզահամալիրի տնօրեն՝ Աշոտ Աղաբաբյանը, անվանի ֆուտբոլիստ՝ Հարություն Քեհեյանը, սիրելի բեյլանցիներ՝ իրենց հարազատներով ու բարեկամներով, որոնք, մի անգամ ևս հանդիպելով իրար, դարձյալ ապրեցին իրենց հուշերը:*

*Այս բոլորը նշվեց այն նպատակով, որ 1915 թ. Մեծ եղեռնից հետո, հայ ժողովուրդը՝ ցրված աշխարհի տարբեր երկրներ, միշտ ապրում է իր հարազատների ու*

*1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Հինգշ., Նոյ. 6, 1997, էջ 10:*



Ձախից աջ՝ տեր և տիկին Վարդան և Արաքսի Թաշչյաններ՝ ԾՊ-ի նախագահողներ, Ստեփան և Գայանե Թաշչյաններ՝ ԾՊ-ի հովանավորներ, Սեդրակ Հարությունյան:

հայրենակիցների կարոտով: Այսպիսի հավաքույթները կորացնում են մեր միասնությունը համայնքում սատարելով հայապահպանման գործընթացին:

ԾՊ-ին նախագահում էին բնիկ բեյլանցի, Բեյլանում ծնված՝ տեր և տիկին Վարդան և Արաքսի Թաշչյանները, իսկ հովանավորներն էին նրանց տղան և հարսը՝ տեր և տիկին Ստեփան և Գայանե Թաշչյանները: Այս գերդաստանը ցեղասպանությունից վերապրող իր մոր՝ Լուսյա Թաշչյանի հետ միասին միշտ եղել է, կա և վստահ ենք, որ հետագայում էլ կլինի միության և՛ նյութապես, և՛ բարոյապես քաջալերողներից մեկը:

Աշխուժանում է բեյլանցիների նոր սերունդը: Նրա մեջ կան ինժեներներ, բժիշկներ, փաստաբաններ, գործարարներ և այլն, որոնց թիվը օրը օրին աճում է: Երեկոյին ներկա էր այդ սերնդի ներկայացուցիչներից՝ երիտասարդ փաստաբան Հարութ Դալյանը (վարչության նախկին անդամ Զարեհ Դալյանի որդին), որն ունի իր գրասենյակը և, բնականորեն, իր օգնությունը պիտի բերի բեյլանցիներին և համայնքի բոլոր հայրենակիցներին: Շնորհավորում և հաջողություն ենք ցանկանում նրան, վստահ լինելով, որ նա իր նպաստը կբերի նաև միությանը:

Բեյլանցիները ամուր կառչած են իրենց պապենական սովորույթներին և աշխատում են դրանք փոխանցել նոր սերունդին, որպեսզի մեր բնօրրան Կիլիկիան չմոռացվի և հայապահպանումը շարունակվի: Ահա այս նպատակով էլ վարչության միջոցով կազմակերպվում է դաշտահանդես, ԾՊ, Մեծ եղեռնի նահատակների հիշատակին նվիրված հոգեհանգիստ-հոգեճաշ, մշակութային և այլ ձեռնարկներ:

**Դեկտեմբերին ծառայության պարտականությունը կատարելիս, սահմանի վրա զոհվեց Թաշչյան ընտանիքի հարազատի՝ Նաթալիի տղան, որի կապակցությամբ ՊՀՄ-ի վարչությունը ցավակցական և 200 դոլար դրամական օգնություն ուղարկեց զոհվածի ընտանիքին** (տե՛ս հավելված էջ 469):

**Վարչության որոշման համաձայն, ԾՊ-ի ժամանակ մասնա-**





Տեսարան ԾՊ-ից: Բահարյանների սեղանը:

Ձախից աջ՝ Վահան, Վահանիկ, Նարինե, Արաքսի Բահարյաններ, տեր և տիկին Անահիտ (Բահարյան) և Ջորջ Էփրոյաններ:

**կիցների բոլոր սեղաններն էլ պետք է լուսանկարվեին: Բայց Մանվելը միշտ իր քմահաճույքով էր շարժվում ու ուզած սեղաններն էր լուսանկարում...: Այնուհետև լուսանկարները բազմացվում ու բաժանվում էին հայրենակիցներին, որը նրա պարտականությունն էր, բայց նա չէր կատարում, որովհետև նա բոլորին նկար չէր տալիս և միության դրամն էլ ծախսում էր առանց խնայելու...: Նկարները բազմացնելն ու յուրաքանչյուրի համար առանձին-առանձին ծրարների մեջ դնելը մեծ աշխատանք և ժամանակ էր պահանջում, որը ծանրացնում էր առանց այն էլ իմ ունեցած դժվար գործը: Նկարների բաժանման կապակցությամբ վարչությունն առաջին անգամ շնորհակալական երկտող ստացավ Նուբարից** (տե՛ս հավելված էջ 470):

**Նոր Տարվա առթիվ ստացված շնորհավորական բացիկներից երկուսի Սողանալյան ընտանիքներինը ներկայացնում եմ.**

*Vahan*

*Wishing You beautiful holideys and a New Year filled with happiness.*

*Thank You all Your lovely cards and for remembering us.*

*Sarkis & Shirley Soghanalian*

Հաջորդը Զոհրապ Սողանալյանից էր.

Դեկտեմբեր, 1997 թ.

Մեծայարգ Տիար Վահան Բահարեան

Տարիները կը բոլորուին: Թէեւ կեանքի նաւակը հետք չի թողուր իր ետին, սակայն յիշատակելի և անմոռանալի կը մնան ձեր նման «Վահանին» ապգանուէր և հայրենասէրի ծառայութիւնները միշտ հայրենի կամ այլուր՝ օտարութեան մէջ ալ իր նուիրումները՝ ըլլայ իր հայրենակիցներուն, միութիւններուն և հայ մամուլին: Ահա որքան մեծ ես Վահան քու խիզախ և անձնուէր կեցուածքով հանդերձ բոլորին և բոլորիս: Քեզ կը յիշենք և մեր հիացումը կը յայտնենք միշտ: Նաև երախտապարտ կ'զգանք միշտ քու ծառայութիւններուդ, հանդէպ ՊՀՄ-եան, որ կանգուն կմնայ և կը հարատեւէ շնորհիւ քեզ: Վարձքդ կատար, Վահան

Սիրելի Վահան, այս տօնական օրերուն ընդունիր մեր ընտանեկան բարեմաղթութիւնները՝ առողջութիւն, արեւշատութիւն և երջանկութիւն:

Շնորհաւորենք նաեւ Նոր Տարին և Ս. Ծնունդը՝ քու և հայրենակիցներուդ:

Ձերդ՝ Զոհրապ Սողանալեան:

Ըստ բանկի 12-17-93 թ. տվյալների, միության ունեցած գումարը 25892 դոլար և 21 սենթ է:

## ՀՄՄՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մեջբերում եմ ՀՄՄՄ-ի գործունեությունը լուսաբանող մոտս եղած որոշ փաստաթղթեր (Ժոզեֆ Ավետիսյանին ուղարկված նամակը տե՛ս հավելված էջ 471-472):

Հիշատակության արժանի է 13 կազմակերպությունների միջոցով կազմված Հանձնախումբը, որի ջանքերի շնորհիվ ապրիլի 24-ին (ինչպես նաև նախորդ՝ 1996 թ. ապրիլին) մեծ շուքով նշվեց Մեծ եղեռնի 82-րդ տարելիցը Գլենդելի United Community Church-ում: Լուսաբանենք այդ Հանձնախմբի ստեղծումը:

1996 թ. ՀՄՄՄ-ն որոշեց կազմակերպել Մեծ եղեռնի 81-րդ տարելիցը: ՀՄՄՄ-ի նիստի որոշմամբ, նրա 5 անդամները՝ Գրիգոր Շենյան, Նուպար Հակոբյան, Մարտիրոս Իսկենդերյան, Տիգրան Գալուստյան և ես, հավաքվեցինք «Նոր Կեանք»ի խմբագրատանը, քննարկելու համար կազմակերպչական հարցերը: Գրիգոր Շենյանը տեղեկացրեց, որ Հնչակյան կուսակցության կենտրոնից զանգահարել է Տիրան Ճերեճյանը և առաջարկել՝ համայնքի կազմակերպությունների հետ միասնական ոգով նշել տարելիցը: Այդ հարցը քննարկելու համար, որը մեր հավաքված օրն էր, իրենց կենտրոնն է հրավիրել նաև ՀՄՄՄ-ին (միգուցե Շենյանը նախօրոք գիտեր այդ մասին, դրա համար էլ մեր հավաքույթը նույն օրն էր նշանակված): Մարտիրոսի մեքենայով գնա-



ցինք Հնչակյան կուսակցության կենտրոնը (Փասադենայի Ալլեն փողոցի վրա): Այնտեղ ներկա էին հետևյալ կազմակերպությունների ներկայացուցիչները (ըստ այբբենական կարգի).

Թեքեյան մշակութային միության, ՀԲԸՄ-ի, Հայ գրողների միության, Հայկական համագումարի, Հայ համալսարանականների միության, ՀՄՄՄ-ի, Հայրենիք միության, ՀՅԴ-ի, ՀՅԴ-ի Վերականգնումի շարժման, Նոր սերունդ մշակութային միության, Ռամկավար ազատական կուսակցության, Սոցիալ դեմոկրատ Հնչակյան կուսակցության և Վահագն մշակութային միության:

ՀՅԴ-ն հետագայում չմասնակցեց Հանձնախմբի աշխատանքներին, պատճառաբանելով ՀՅԴ-ի Վերականգնումի շարժման ներկայությունը[1]:

Նիստում քննարկվեց Հանձնախմբի հարցը: Ներկաները ուրախությամբ համաձայնվեցին մասնակցելու նրա աշխատանքներին: Այս մասին չունենալով ոչ մի գրառում, ինչ որ հիշում եմ, այն եմ գրում: Հանձնախումբը կազմվեց: Սույն նիստում, Հանձնախմբի նախագահի պաշտոնը վստահվեց Բարսեղ Քարթալյանին, իսկ քարտուղարինը՝ Նահապետ Մելքոնյանին, որը և կազմեց առաջին արձանագրությունը: Նիստից հետո երկխոսությունները շարունակվեցին տեղում: Այստեղ հիշատակության արժանի է մեր խմբի (Քարթալյան, Շենյան, Բահարյան, Մելքոնյան, Իսկենդերյան) քննարկած հարցը, որ ստեղծված Հանձնախումբը դարձնել մնայուն՝ հետագայում այն սփյուռքյան մի վերադաս մարմնի վերածելու նպատակով, որը կզբաղվի Սփյուռքին հուզող բոլոր հարցերով: Այդ մարմնի անվան հետ կապված որոշումը կտրվի նրա գոյություն ունենալուց հետո, որը կախված է այսօրվա Հանձնախմբի հետագա ակտիվ և խելացի գործունեությունից: Ի պատիվ Հանձնախմբի՝ պետք է նշել, որ նրա լավ աշխատանքի արդյունքը եղավ Մեծ Եղեռնի 81-րդ և 82-րդ տարելիցների մեծ շուքով նշելը: Հանձնախումբը անվանվեց Լոս Անջելեսի Հայկական Կազմակերպությունների Միացյալ Մարմին (ԼԱՀԿՄՄ):

Մեծ Եղեռնի 82-րդ տարելիցի հուշ-երեկոյին հանդիսավար Բարսեղ Քարթալյանը նշեց.

Հավաքուած ենք միասնաբար ոգեկոչելու Մեծ եղեռնի մեկուկէս միլիոն հայ նահատակներուն խնկելի յիշատակը և անգամ մը եւս հաստատելու մեր սուրբ դատին անժամանցելիութիւնը:

Այսօրուան նշանակալից ձեռնարկը սերտ համագործակցութեամբ կազմակերպած են համայնքիս մէջ գործող 13 գլխաւոր կազմակերպութիւններ, որոնց

[1] 1.- ՀՅԴ-ի Վերականգնումի շարժումը կազմակերպվել էր ՀՅԴ-ի շարքերից ինքնակամ հեռացած և Բյուրոյի կողմից հեռացված անդամներից:

Հաջորդը Զոհրապ Սողանալյանից էր.

Դեկտեմբեր, 1997 թ.

Մեծայարգ Տիար Վահան Բահարեան

Տարիները կը բոլորուին: Թէեւ կեանքի նաւակը հետք չի թողուր իր եզրին, սակայն յիշատակելի և անմոռանալի կը մնան ձեր նման «Վահանին» ազգանուէր և հայրենասէրի ծառայութիւնները միշտ հայրենի կամ այլուր՝ օտարութեան մէջ այ իր նուիրումները՝ ըլլայ իր հայրենակիցներուն, միութիւններուն և հայ մամուլին: Ահա որքան մեծ ես Վահան քու խիզախ և անձնուէր կեցուածքով հանդերձ բոլորին և բոլորիս: Քեզ կը յիշենք և մեր հիացումը կը յայտնենք միշտ: Նաև երախտապարտ կ'զգանք միշտ քու ծառայութիւններուդ, հանդէպ ՊՀՍ-եան, որ կանգուն կմնայ և կը հարատեւէ շնորհիւ քեզ: Վարձքդ կատար, Վահան

Սիրելի Վահան, այս տօնական օրերուն ընդունիր մեր ընտանեկան բարեմաղթութիւնները՝ առողջութիւն, արեւշատութիւն և երջանկութիւն:

Շնորհաւորենք նաեւ Նոր Տարին և Ս. Ծնունդը՝ քու և հայրենակիցներուդ:

Ձերդ՝ Զոհրապ Սողանալեան:

Ըստ բանկի 12-17-93 թ. տվյալների, միության ունեցած գումարը 25892 դոլար և 21 սենթ է:

### ՀՄՄՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մեջբերում եմ ՀՄՄՄ-ի գործունեությունը լուսաբանող մոտս եղած որոշ փաստաթղթեր (Ծոլեֆ Ավետիսյանին ուղարկված նամակը տե՛ս հավելված էջ 471-472):

Հիշատակության արժանի է 13 կազմակերպությունների միջոցով կազմված Հանձնախումբը, որի ջանքերի շնորհիվ ապրիլի 24-ին (ինչպես նաև նախորդ՝ 1996 թ. ապրիլին) մեծ շուքով նշվեց Մեծ եղեռնի 82-րդ տարելիցը Գլենդելի United Community Church-ում: Լուսաբանենք այդ Հանձնախմբի ստեղծումը:

1996 թ. ՀՄՄՄ-ն որոշեց կազմակերպել Մեծ եղեռնի 81-րդ տարելիցը: ՀՄՄՄ-ի նիստի որոշմամբ, նրա 5 անդամները՝ Գրիգոր Շենյան, Նուպար Հակոբյան, Մարտիրոս Իսկենդերյան, Տիգրան Գալուստյան և ես, հավաքվեցինք «Նոր Կեանք»-ի խմբագրատանը, քննարկելու համար կազմակերպչական հարցերը: Գրիգոր Շենյանը տեղեկացրեց, որ Հնչակյան կուսակցության կենտրոնից զանգահարել է Տիրան Ճերեճյանը և առաջարկել՝ համայնքի կազմակերպությունների հետ միասնական ոգով նշել տարելիցը: Այդ հարցը քննարկելու համար, որը մեր հավաքված օրն էր, իրենց կենտրոնն է հրավիրել նաև ՀՄՄՄ-ին (միգուցե Շենյանը նախօրոք գիտեր այդ մասին, դրա համար էլ մեր հավաքույթը նույն օրն էր նշանակված): Մարտիրոսի մեքենայով գնացինք Հնչակյան կուսակցության կենտրոնը (Փասադենայի Ալլեն փողոցի վրա): Այնտեղ ներկա էին հետևյալ կազմակերպությունների ներկայացուցիչները (ըստ այբբենական կարգի).

Թեքեյան մշակութային միության, ՀԲԸՄ-ի, Հայ գրողների միության, Հայկական համագումարի, Հայ համալսարանականների միության, ՀՄՄՄ-ի, Հայրենիք միության, ՀՅԴ-ի, ՀՅԴ-ի Վերականգնումի շարժման, Նոր սերունդ մշակութային միության, Ռամկավար ազատական կուսակցության, Սոցիալ դեմոկրատ Հնչակյան կուսակցության և Վահագն մշակութային միության:

ՀՅԴ-ն հետագայում չմասնակցեց Հանձնախմբի աշխատանքներին, պատճառաբանելով ՀՅԴ-ի Վերականգնումի շարժման ներկայությունը[1]:

Նիստում քննարկվեց Հանձնախմբի հարցը: Ներկաները ուրախությամբ համաձայնվեցին մասնակցելու նրա աշխատանքներին: Այս մասին չունենալով ոչ մի գրառում, ինչ որ հիշում եմ, այն եմ գրում: Հանձնախումբը կազմվեց: Սույն նիստում, Հանձնախմբի նախագահի պաշտոնը վստահվեց Բարսեղ Քարթալյանին, իսկ քարտուղարինը՝ Նահապետ Մելքոնյանին, որը և կազմեց առաջին արձանագրությունը: Նիստից հետո երկխոսությունները շարունակվեցին տեղում: Այստեղ հիշատակության արժանի է մեր խմբի (Քարթալյան, Շենյան, Բահարյան, Մելքոնյան, Իսկենդերյան) քննարկած հարցը, որ ստեղծված Հանձնախումբը դարձնել մնայուն՝ հետագայում այն սփյուռքյան մի վերադաս մարմնի վերածելու նպատակով, որը կզբաղվի Սփյուռքին հուզող բոլոր հարցերով: Այդ մարմնի անվան հետ կապված որոշումը կտրվի նրա գոյություն ունենալուց հետո, որը կախված է այսօրվա Հանձնախմբի հետագա ակտիվ և խելացի գործունեությունից: Ի պատիվ Հանձնախմբի՝ պետք է նշել, որ նրա լավ աշխատանքի արդյունքը եղավ Մեծ Եղեռնի 81-րդ և 82-րդ տարելիցների մեծ շուքով նշելը: Հանձնախումբը անվանվեց Լոս Անջելեսի Հայկական Կազմակերպությունների Միացյալ Մարմին (ԼԱՀԿՄՄ):

Մեծ Եղեռնի 82-րդ տարելիցի հուշ-երեկոյին հանդիսավար Բարսեղ Քարթալյանը նշեց.

Հավաքուած ենք միասնաբար ոգեկոչելու Մեծ եղեռնի մեկուկէս միլիոն հայ նահատակներուն խնկելի յիշատակը և անգամ մը եւս հաստատելու մեր սուրբ դատին անժամանցելիութիւնը:

Այսօրուան նշանակալից ձեռնարկը սերտ համագործակցութեամբ կազմակերպած են համայնքիս մէջ գործող 13 գլխաւոր կազմակերպութիւններ, որոնց

1.- ՀՅԴ-ի Վերականգնումի շարժումը կազմակերպվել էր ՀՅԴ-ի շարքերից ինքնակամ հեռացած և Բյուրոյի կողմից հեռացված անդամներից:

միակ նպատակը եղաւ յօրակցիլ և միասնական անկեղծ ու շինիչ գործընթացով հիմը դնել մնայուն աշխատակցութեան, ի շահ մեր համայնքի արեւելումին[1]:

Այնուհետև ելույթ ունեցավ Գրիգոր Շենյանը.

... Այսօր, ահաւասիկ այս մարդահեղեղ եկեղեցիին մէջ, նախաձեռնութեամբ 13 գլխաւոր կազմակերպութիւններու, միասնականութեան հիմը դրուած և ապագայ Հայկական Գոնկրեսի կորիզը կազմված է, որ Ուաշինկթընի և Սպիտակ Տան դռները պիտի թակէ ո՛չ թէ բաժան-բաժան, այլ մէկ ձայնով, որպէսզի լսելի դառնայ: Սպիտակ տուն, թէ հանուր աշխարհի որեւէ նախագահական պալատ, յստակ և միակամ կոչերը միտիկ կ՚ընեն, և ոչ թէ կտոր-կտոր խռպոտ ձայները[2]:

Օրինակ բերելով Հրեական միասնական պայքարը իր իրավունքների համար, նա շարունակեց.

Իսկ մենք ի՞նչ ըրինք կամ պիտի կատարենք: Այս 13 կազմակերպութիւնները, որոնք կորիզը կազմեցին Հայկական Գոնկրեսին, պիտի ընթանան հայկական պահանջների իրաւատիրոջ գիտակցութեամբ: Մեր դուռը բաց է. մեզի կրնան միանալ բոլոր անոնք, որ Հայաստանին ու ազգին շահերը գերիվեր կը համարեն ամէն նկատումէ: Մեզի կրնան միանալ բոլոր անոնք, որ կ՚անսան մեր նահատակներու ջինջ ու վճիտ ձայնին, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ միասնականութիւնը ամեն բանէ վեր: Այս 13 կազմակերպութիւնները «այո» ըսած են մեր նահատակներու պատգամին և վառած միասնականութեան ջահը[3]:

Գրիգոր Օգարյանի ղեկավարությամբ ճոխ գեղարվեստական հայտագրին մասնակցեցին Ռազմիկ Մանսուրյանը (երգ), Ալիս Կապլանջյանը (ասմունք), Մերուժան Մարգարյանը (ջութակ), Մարինե Տեր-Ղազարյանը (երգ), պրոֆ. Լևոն Աբրահամյանը (դաշնամուր), «Սիփան» երգչախումբը՝ Հենրիկ Անասյանի և «Օլիմպիա» նվագախումբը՝ Արմեն Տիրանի ղեկավարությամբ:

Գեղարվեստական մասով ավելի է ընդգծվում հայ ժողովրդի ընդվզումն ու միասնական պահանջատիրությունը, արտահայտելով ներկաների զգացմունքները՝ երբեք չմոռանալու Թուրքիայի կատարած բարբարոսական արարքը և հասնել Հայ դատի արդար լուծմանը: Նաև, պատմության են անցնում այս իրադարձությունները, որոնք հետագա սերունդներին որոշ պատկերացում կտան տվյալ ժամանակաշրջանի մեր կյանքի բնորոշ կողմերի մասին:

Նշենք, որ ԼԱՀԿՄՄ-ն իր նիստերում որոշ հարցեր քննարկել էր «Հայկական Գոնկրես» հասկացողության հետ կապված, որի կազմակերպման և ղեկավարման հարցում մասնակիցները տարբեր կարծիքներ ունեին, բայց որոշում չէր ընդունվել ո՛չ անունի, ո՛չ էլ հուշ երեկոյում այն ներկայացնելու մասին:

Մեր կարծիքով, դա զեկուցողի ինքնուրույն որոշումն էր,

---

1.- Տե՛ս Հայկական Ցեղասպանության 82-րդ Տարեդարձի Ոգեկոչման Միացեալ Մարմնի Համահայկական ձեռնարկը, «Նոր Կեանք», թիվ 21, մայիս 1, 1997 թ., էջ 1, այսուհետև՝ Հայկական Ցեղասպանության 82-րդ Տարեդարձի ...

2.- Նույն տեղում՝ էջ 32:

3.- Նույն տեղում՝ էջ 32:



որովհետև հարցը վերջնական լուծում չէր ստացել, և այսօր էլ, երբ գրվում են այս տողերը, ապացուցվեց, որ սխալ էր, քանի որ բազմաթիվ հարցեր էին առաջացել դրա քննարկման ժամանակ, որոնք լուծման էին սպասում և այդպես էլ չլուծվեցին: Այդ մասին կգրվի հետագա էջերում: Այստեղ միայն նշենք, որ, երբ այդ հարցի քննարկման մի նիստում առաջարկեցի Սփյուռքի հայտնի մտավորականների և գիտնականների մասնակցությունը, որպեսզի ճիշտ որոշում կայացվի, մեր «կառուցելիք աշտարակի» հիմքը ամուր լինի և հետագայում այն Բաբելոն չդառնա, որոշ մասնակիցներ դա վաղ համարեցին՝ նշելով, որ սկզբում մենք որոշենք, հետո նրանց կդիմենք: Սա նշանակում էր. «Մենք լինենք այդ մարմնի ղեկավար պաշտոնները զբաղեցնողները, հետո նրանց կհայտնենք»: Սա այն դժբախտությունն էր, որի համար սկզբից ևեթ վախենում էի, որ մարդիկ իրենց ցուցամոլության և փառասիրության համար են անում այս բոլորը: Հետագա ժամանակը ցույց տվեց, որ այդ ձևով երբեք հնարավոր չէ հաջողության հասնել: Պարզաբանումները դարձյալ հետագա էջերում: Ֆաքս[1] ուղարկվեց ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնին.

ՆԱԽԱԳԱՀԻՆ ՈՒՂԱՐԿՈՒԱԾ ՖԱՔՍ-Ը

Ապրիլ 24 1997

Մեծարգոյ Պիլ Գլինթըն
Նախագահ Ամերիկայի Միացեալ Նահանգներու
Ուաշինկթըն, Տի.Սի

Մեծարգոյ Տիար Նախագահ,

Այսօր, Կէնտէլի այս լայնատարած եկեղեցւոյն մէջ մէկտեղուած հազարաւոր հայորդիները, եկած են ոգեկոչելու Մեծ Եղեռնի 82-րդ տարելիցը:

Ինչպէս ծանօթ է Ձեզի, Օսմանեան պետութիւնը 1915 թ. Ապրիլ 24-ին շղթայազերծեց Հայկական Ցեղասպանութիւնը, որուն զոհ գացին աւելի քան մէկուկէս միլիոն հայեր: Պատմութիւնը պայն որակեց 20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը՝ «Մարդու անմարդկայնութիւնը մարդուն հանդէպ» յղացումով:

Այսօր, 82 տարիներ ետք այդ ցեղասպանութիւնը տակաւին կը մնայ անպատիժ, որովհետեւ իրարայաջորդ թուրք կառավարութիւններ ոչ միայն ճիգ ի գործ չեն դներ իրենց գործադրած ցեղասպանութիւնը ընդունելու, այլ ընդհակառակը, ամէն միջոցներով կը ջանան միջազգային հանրութեանը հաւատացնել թէ այդ ցեղասպանութիւնը ենթադրութիւն մըն է լոկ:

Կգնահատենք Գալիֆորնիոյ Նահանգային Խորհրդարանը, որ 21-ին միաձայնութեամբ որդեգրեց խորհրդարանի անդամ Հաուըրտ Գալուկեանի հեղինակած ցեղասպանութեան որոշումը, Ապրիլ 24, 1997-ը հռչակելով Գալիֆորնիոյ Նահանգի Ոգեկոչման Օր՝ նուիրուած 1915–1923-ի Հայկական Ցեղասպանութեան, ինչպէս նաև 1988-ի Սումգայիթի ջարդերու եւ 1999-ի Պաքուի բռնարարքներու զոհերուն: Աւելին, յօրուածը կոչ ուղղեց Գալիֆորնիոյ համայն բնակչութեան՝ աչալուրջ գտնուելու ի խնդիր

---

1.- Տե՛ս Հայկական Ցեղասպանության 82-րդ Տարեդարձի ..., էջ 33:

Արցախեան պայքարի խաղաղ լուծման եւ անոր բնակչութեան անվտանգութեան:

Հետեւաբար, մենք՝ հայ ժողովուրդի պաւակներս կոչ կ'ընենք Ձեզի, որպէս ամերիկացի քաղաքացիներ ու ամերիկաբնակ հայեր, որպեսզի Ձեր հեղինակութիւնը ի գործ դնէք եւ հրաւիրէք Թուրքիան, որ ճանչնայ իր գործադրած հայկական ցեղասպանութիւնը ու արդար հատուցում կատարէ այդ ահաւոր ոճիրին համար: Ցեղասպանութեան ժխտումը, ուրացումը եւ անպատիժ մնալը առիթ տուին Ատրպէյճանի, որ Սումգայիթ եւ Պաքու քաղաքներուն մէջ 1988-ին եւ 1990-ին հայ բնակչութեան դէմ անգութօրէն եւ անարգել գործադրէ ջարդ եւ տեղահանութիւն: Բայց վկայ ապատագրուած Արցախը, որ հայ ժողովուրդը պիտի չթոյլատրէ նման արարքի կրկնութիւնը:

Մեծարգոյ Նախագահ,

Ազատ ու Անկախ Հայաստանը, Ազատագրուած Արցախը եւ սփիւռքացած բոլոր հայկական համայնքները միակամ եւ միատեղ հրաւաւերն են հայկական սուրբ դատին: Վստահ ենք, որ Ձեր հեղինակութիւնն ու քաղաքական հեռատեսութիւնը պիտի թելադրեն Ձեզի առնելու միակ ճիշտ եւ արդար քայլը՝ հրաւիրել Անգարայի իշխանութիւնները, որ ընդունին հայոց վրայ գործադրած իրենց ցեղասպանութիւնը ու կատարեն արդար հատուցում:

Վստահ ենք նաեւ Դր. Նախագահ, որ Ձեր կրաւորական ու չեզոք դիրքը կը փոխեք Արցախի հիմնահարցին նկատմամբ ու կողքին կը կենաք ազատագրուած Արցախի ինքնորոշման պատմական իրաւունքին, արդարութիւն ու մնայուն խաղաղութիւն բերելու համար փառապեալ այդ շրջանին:

Այս կ'ակնկալէ Ձեզմէ ողջ ամերիկահայութիւնը այսօր:

Ակնկալութեամբ եւ յարգանօք

Ոգեկոչման Համահայկական Մարմնի բաղկացուցիչ կազմակերպութիւններ՝ (այբբենական կարգով)

Թէքէեան Մշակութային Միութիւն, Իրանահայ Միութիւն, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Հայ գրողներու միութիւն, Հայկական համագումար (Արմինիըն Էսէմպլի), Հայ համալսարանականներու միութիւններ, Հայրենակցական Միութիւններու Միացեալ Մարմին, Հայրենիք Միութիւն, Հ.Յ.Դ. Վերականգնումի Շարժում, Նոր Սերունդ Մշակութային Միութիւն, Ռամկավար Ազատական կուսակցութիւն, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն, Վահագն Բուհերի միութիւն:

(Ժոզեֆ Ավետիսյանին ուղարկված նամակը տե՛ս հավելված էջ 473-474):

**Հոկտեմբերին Լոս Անջելես ժամանեց Կարագյոզյան Հաստատության Հայաստանի մասնաճյուղի տնօրեն՝ Կամո Տեր-Պետրոսյանը: Մեջբերում եմ նրա հետ ունեցածս հարցազրույցը իր չահեկանությունից ելնելով:**

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԿԱՄՈ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ[1]

Շաբաթ, հոկտեմբեր 7, 1997 թ., Լոս Անջելես ժամանեց Հայաստանի հայրենակցական միությունների խորհրդի (ՀՀՄԽ) ատենապետ, Հայաստանի Մուսալեռ հայրենակցական միության ատենապետ, Կարագյոզյան հաստատության Հայաստանի մասնաճյուղի տնօրեն, բժիշկ-մանկաբույժ Կամո Տեր-Պետրոսյանը, իր բարեհամբույր տիկնոջ՝ բժշկուհի Վերգինեի հետ:

Օդանավակայանում նրանց դիմավորեցին՝ Լոս Անջելեսում ՀՀ հյուպատոս Էդուարդ Թառանյան իր անձնակազմով, Հայրենակցական միությունների միացյալ մարմնի (ՀՄՄՄ),

1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Զորեք., Հոկտ., 15, 1997, թիվ 194:



այլ կազմակերպությունների, մամուլի և հեռուստատեսության ներկայացուցիչներ ու անհատներ:

Օդանավակայանում հարգարժան հյուրերին բարի գալուստի խոսք ասաց տողերիս հեղինակը, որպես ՀՄՄՄ-ի փոխատենապետ, նրանց ցանկանալով հաջողություններ իրենց առաքելության մեջ և նաև հուզիչ ու հետաքրքիր հանդիպումներ, որտեղ բազմաթիվ հարազատներ, բարեկամներ ու ընկերներ ունեն:

Կամո Տեր-Պետրոսյանը իր պատասխան խոսքում շնորհակալություն հայտնեց բարի մաղթանքների համար և նշեց, որ այս անգամ իր առաքելությունը կապված է Կարագյոզյան հաստատության Հայաստանի մասնաճյուղի Երևանի մանկապատանեկան ձեռքի աշխատանքների ցուցահանդեսի բացման հետ, ՀԲԸՄ-ի Փասադինայի Ալեք Մանուկյան կենտրոնում:

Ուրբաթ, հոկտեմբեր 10, 1997 թ., շահեկան հարցազրույց ունեցանք հարգարժան հյուրի հետ, որը ներկայացնում ենք ընթերցողների ուշադրությանը:

**Հարց.** - Դոկ. Տեր-Պետրոսյան, խնդրում եմ մի քանի խոսքով մեր համայնքին ծանոթացնել ձեր անձի և աշխատանքի հետ Հայաստանում: Գիտենք, որ բացի ձեր աշխատանքից դուք կատարում եք նաև ազգային գործունեություն և այդ բոլորի հետ միասին էլ դեռ զբաղվում եք ձեր անձնական սիրած գործերով՝ ասմունքով և նկարչությամբ: Ի՞նչ են ձեր գործունեության շրջանակները և ինչպե՞ս եք հասցնում այդ բոլորը իրագործել:

**Պատ.** - Անձնական հետաքրքրություններս շատ են: Մասնագիտությամբ լինելով բժիշկ, հիմա ավելի շատ զբաղվում եմ վարչական աշխատանքով, քան թե իմ մասնագիտությամբ: Իհարկե դա ունի իր հետաքրքրությունը և նաև առավելությունը: Հայրենիքի առողջապահական վիճակի անհրաժեշտությունն է թելադրել ինձ՝ զբաղվել այս գործունեությամբ: Իմ հիմնական աշխատանքը այսօր կապված է Կարագյոզյան հաստատության հետ, որը Հայաստանում ծավալված է մի քանի կլինիկաներով: Դրանց թե՛ կազմակերպչական, թե՛ տնտեսական և թե՛ բժշկական հարցերը ինձ են վստահված: Չնայած ծանր, բայց շնորհալի, հետաքրքիր ու հաճելի աշխատանք է: Դրան զուգահեռ, ժամանակի ներածին չափով զբաղվում եմ իմ նախասիրություններով՝ երբեմն գրական երեկոներ եմ ունենում հայկական ռադիոյով, իսկ բեմերից՝ ավելի քիչ: Ինչ վերաբերվում է նկարչությանը, ես նկարչական ձիրք ու շնորհք չունեմ: Արվեստասեր եմ և Կարագյոզյան հաստատության հնարավորությունները օգտագործելով, նպաստում եմ հայ մանուկների նկարչական տաղանդի դրսևորման:

**Հարց.** - Քանի որ խոսք եղավ Կարագյոզյան հաստատության մասին և ձեր Լոս Անջելես առաքելության հիմնական նպատակներից մեկն է այդ, խնդրում եմ մի քանի խոսքով ընթերցողներին տեղեկացնել այդ հաստատության մասին. ե՞րբ է ստեղծվել, ի՞նչ նպատակներով և ի՞նչ գործունեություն է իրականացնում:

**Պատ.** - Կարագյոզյան հաստատությունը 76 տարվա պատմություն ունի, այն բացառիկ հաստատություններից է հայ իրականության մեջ, որ բարեգործությունը մինչև այսօր իրականացվում է մեկ ընտանիքի ներդրած դրամական միջոցներով: Այն ստեղծվել է 1921 թ. Նյու Յորքում, գորգի մեծ վաճառական տեր և տիկին Միհրան և Զաբել Կարագյոզյանների կողմից, ի հիշատակ իրենց վաղամեռիկ զավակի՝ Հովարդի, ու նպատակն այն է, որ աշխարհի որևէ ծայրում, հիվանդությունից հայ երեխա չմահանա: Այդ պատճառով ֆոնդը հիմնվել է որպես մանկական ֆոնդ և իր գոյության ընթացքում նպաստել է տարբեր գաղութներում հայ մանուկների առողջապահական, կրթական, դաստիարակչական և այլ խնդիրների լուծմանը: Նշված հիմնադրամով, 1921 թ. առաջին որբանոցն է բացվում Պոլսում: Մինչև 1924 թ. գոյատևելուց հետո, քաղաքական պատճառներով, որբանոցը տեղափոխվում է Ֆրանսիա-Փարիզ, որտեղ այլ շրջաններից համալրվելով, որբերի քանակը



Կամո Տեր-Պետրոսյանի հետ հարցազրույցի պահին:

հասնում է 200-ի, որոնց տրվում է և՛ ապաստան, և՛ կրթություն, և՛ սովորեցնում արհեստներ: Որբանոցը զբաղվում է նաև շրջանավարտների ինքնուրույն կյանք մտնելու ու գոյատևելու հարցերով: Որբանոցային գործունեությունը այստեղ երկար չի տևում: 1932 թ. Կարագյոզյան հաստատության շենքը հրդեհի ճարակ է դառնում, և 1936 թ. հաստատությունը տեղափոխվում է Հունաստան Աթենք ու շարունակում է իր գործունեությունը մեծ թվով որբեր ունեցող հունահայ գաղութում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հաստատությունը նյութական, առողջապահական մեծ օգնություն է ցույց տալիս պատերազմից տուժած հայ ընտանիքներին: Պատերազմի վերջին տարիներին այն իր գործունեությունը ծավալում է Միջին Արևելքում, որտեղ գոյություն ունեին ավելի մեծ օգնության կարիք ունեցող հայկական հոծ համայնքներ: 1950-ական թվականներին նա գործունեություն է սկսում Սիրիայում և Լիբանանում: Նրա կենտրոնները Սիրիայում գործում են առ այսօր և մանկական առողջապահական ծրագրեր են իրագործում Հալեպում, Կամիշլիում, Քեսաբում, իսկ Լիբանանում՝ Բեյրութում (կենտրոնը գտնվում է Պուրճ Համմուդում) և Անճար գյուղում, որտեղ բնակվում են միմիայն մուսալեռցիներ ու գյուղի գոյության առաջին տարիներից սկսած հաստատությունը նպաստում է երեխաներին համաճարակներից փրկելու, նրանց մանկական սնունդով ապահովելու և մնացած առողջապահական հարցերը լուծելու գործերով, որը շարունակվում է մինչև այսօր:

Հոլանդիայում ունեցել է մի փոքրիկ գործունեություն: Գաղթական հայերին տարանցիկ օգնություն է ցույց տվել:

**Հարց.** – Ինչպե՞ս ստեղծվեց Կարագյոզյան հաստատության մասնաճյուղը Հայաստանում, ի՞նչ շրջաններ է ընդգրկում և ի՞նչ գործունեություններ է իրականացնում:



**Պատ.** – Ինչպես գիտեք, ժամանակին սփյուռքահայ բոլոր կազմակերպությունները վերապահումով էին մոտենում Խորհրդային Միությանը: Կային սփյուռքյան ֆոնդեր, որոնք ըստ իրենց կանոնադրության կարող էին իրագործել հայանպաստ բարեգործական գործունեություն աշխարհի բոլոր երկրներում, բացի Խորհրդային Միությունից: Բայց Հայաստանի երկրաշարժը ցնցեց աշխարհը, և հայ կազմակերպությունների կողքին, օտարները նույնպես հասան օգնության: Կարագյոզյան հաստատությունը երկրաշարժից տուժածներին օգնության հասնողներից առաջիններից մեկը եղավ՝ սննդի, դեղորայքի, հագուստեղենի և այլ անհրաժեշտ ապրանքների առաքումներով՝ երեք տարի շարունակ, ու 1991 թ. արդեն անկախ Հայաստանում որոշեց ստեղծել իր մնայուն կառույցը: Հայաստանի առողջապահության նախարարությունը հաստատության համար տրամադրեց Նորքի գեղատեսիլ բարձունքում գտնվող նախկին մանկական «Նարինե» առողջարանի մասնաշենքերից մեկը, որը դարձավ Կարագյոզյան առաջին կենտրոնը Հայաստանում: Հայաստանի մասնաճյուղը տարբերվում է Սիրիայի և Լիբանանի մասնաճյուղերից: Այստեղ սկզբից ևեթ որոշվեց մանկական ատամնաբուժությունը և կրթությունը զարգացնել արևմտյան չափանիշով, հաստատությունը օժտելով արտասահմանյան նորագույն սարքավորումներով, քանի որ Խորհրդային Միությունը այդ ասպարեզում շատ էր ետ մնում արտասահմանյան երկրներից: Հաստատությունը կլինիկական գործունեությունը սկսեց 1993 թ.: Կլինիկայում տեղադրվեցին երեք ատամնաբուժական աթոռներ, և դարձյալ հաստատության միջոցներով Ամերիկայից եկան հայ մասնագետներ և մարզեցին հայրենի ատամնաբույժներին: 1994 թ. տեղադրվեց չորրորդ աթոռը, որն իրականացնում է ծուռ ատամների ուղղումը: Այսօրվա դրությամբ այնտեղ տեղադրված են հինգ աթոռներ: 1995 թ. օգոստոսին, Գյումրիում բացվեց չորս աթոռներով երկրորդ ատամնաբուժարանը՝ որպես Երևանի մասնաճյուղ, իսկ 1996 թ. սեպտեմբերին երկուական աթոռներով երկու ատամնաբուժարաններ բացվեցին Գորիսում և Ստեփանակերտում: Չորս տարվա ընթացքում գրանցված հիվանդների թիվը հասնում է 23 հազարի: Բնական է, որ հերթեր են գոյանում, բայց բոլորն էլ համբերությամբ սպասում են իրենց հերթին: Մեկ ամիս առաջ Նյու Յորքում ես մասնակցեցի հաստատության կենտրոնական ընդհանուր ժողովին, որտեղ քննարկվեցին ապագա ծրագրեր: Ըստ այդ ծրագրերի, 1998 թ. ամռանը նախատեսված է Երևանում բանալ ևս մեկ ատամնաբուժարան և մինչև 2000 թ., մեկ հատ էլ՝ Վանաձորում:

Հաստատության բոլոր ատամնաբուժարաններում բուժումը կատարվում է ձրի, իսկ նրա նյութական միջոցների, սկսած՝ շենքի պահպանության, դեղանյութերի հայթայթման, աշխատակիցների վճարումների և ընդհանուր բոլոր ծախսերը կատարում է հաստատության կենտրոնական վարչությունը:

Երեխաներին փողոցից կտրելու և նրանց գեղագիտական ճաշակով օժտելու նպատակով, հաստատության Նորքի կենտրոնում բացվեցին երեք խմբակներ. աղջիկների համար՝ ձեռագործ և ասեղնագործություն, տղաների համար՝ փայտի գեղարվեստական մշակում, իսկ աղջիկների ու տղաների խառը մի խմբակ՝ նկարչություն: Այս խմբակներին մասնակցում են տարեկան 80-100 աշակերտներ: Մասնագետները բարձր գնահատեցին ստեղծված գործերը: Մենք որոշեցինք դրանք ցուցադրել ցուցահանդեսներում և վաճառված գործերի եկամուտներով հրատարակել երեխաների համար գրքեր:

1995 թ. ցուցահանդեսը մեծ հաջողություն ունեցավ: Նրա եկամուտով մենք հրատարակեցինք Հայկ Խաչատրյանի «Նախոսարան» գիրքը 1400

օրինակով, իսկ 1996 թ. նույն հեղինակի «Արքայապատում» գիրքը՝ 1600 օրինակով, որոնք ձրիորեն բաժանվեցին Հայաստանի, Արցախի, Սփյուռքի միությունների և հայկական դպրոցների գրադարաններին: «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը վերջին գրքից հրատարակեց ևս 2000 օրինակ: Այս ձևով երեխաների ստեղծած գործերի արդյունքը մենք վերադարձնում ենք իրենց, օգնելով բոլոր հայ երեխաներին:

*Հարց. – Հայաստանի Կարագյոզյան հաստատության մասնաճյուղի կողմից Լոս Անջելեսում կազմակերպված այս ցուցահանդես-վաճառքը ի՞նչ նպատակներ է հետապնդում:*

Պատ. – Այս ցուցահանդեսը նույնպես բացված է վերոհիշյալ նպատակով: Նշենք նաև, որ մենք ցուցահանդեսից գումարային մեծ ակնկալիքներ չունենք և ինչ եկամուտ որ ստացվի արդյունքում, դրանով նորից կհրատարակվեն նոր գրքեր և նորից ձրիորեն կբաժանվեն վերևում թվարկված հաստատություններին: Այս ցուցահանդեսում ներկայացված են ձեռագործի, ասեղնագործության, փայտի և նկարի 220 գործեր:

*Հարց. – Արտասահմանում սա ձեր առաջի՞ն ցուցահանդեսն է:*

Պատ. – Ոչ: Սա երրորդ ցուցահանդեսն է: Առաջին ցուցահանդեսը բացվեց 1995 թ. հուլիսին Բոստոնում, Հայ Բժիշկների Միջազգային 6-րդ Կոնգրեսի շրջանակներում, և դրա եկամուտով էլ հրատարակվեցին վերոհիշյալ երկու գրքերը: Այս տարի գարնանը, հատուկ հանձնախմբի կողմից ընտրվեցին 40 նկար և 45 ձեռագործ աշխատանքներ, որոնք ցուցադրվում են Բուենոս-Այրեսում օգոստոսին բացված Հայ արվեստի ցուցահանդեսում, որը շարունակվում է մինչև այսօր:

*Հարց. – Խնդրում եմ՝ մի քանի խոսք ձեր գործունեության մասին, Հայաստանի հայրենակցական միությունների խորհրդում (ՀՀՄԽ):*

Պատ. – Իմ գործունեությունը այնտեղ համեստ է: Իմ ավելի աշխույժ գործունեությունը Մուսա Լեռի հայրենակցական միության մեջ է, որը ՀՀՄԽ-ի հիմնադիր անդամներից է: ՀՀՄԽ-ն ստեղծվեց 3 տարի առաջ, 9 հայրենակցական միություններով և այսօր այն ունի 19 անդամ, որից 3-ը արտասահմանյան: Ուրախալին այն է, որ շնորհիվ ՀՀՄԽ-ի կազմակերպման և գոյության, ստեղծվում են նոր հայրենակցական միություններ: ՀՀՄԽ-ի ամենամեծ առաքելությունն այն է, որ նախ միավորեց հայրենակցական միությունները, միավորեց նրանց ուժը ավելի մեծ նպատակներ իրագործելու և նաև ինքը հանդիսացավ հայրենակցական շարժում ու գիտակցություն ստեղծողը: Նոր ստեղծված միությունները անմիջապես անդամագրվում են ՀՀՄԽ-ին: Բոլորն էլ աշխույժ միջոցառումներ են իրականացնում, որոնց բոլոր միություններն էլ աշխուժորեն մասնակցում են: Ամենամեծ տոնակատարությունը այս տարվա Մուսա Լեռան հերոսամարտի տոնակատարությունն էր, որը համընկավ նաև Հայաստանի անկախության 6-րդ տարեդարձի հետ: Հուշարձանի շուրջ հավաքվեցին մոտ 20 հազար մարդ: Այն վերածվեց համազգային տոնակատարության: Ներկա էին նաև Սփյուռքից բազմաթիվ հայրենակիցներ և հյուրեր: Այստեղ ամբողջ հայ ժողովուրդն էր հավաքվել միասնական ոգով: ՀՀՄԽ-ն ձեռնամուխ եղավ «Բնօրրան»ի հրատարակմանը, որն արտացոլում է յուրաքանչյուր հայի բնօրրանին՝ Արևմտյան Հայաստանին և Կիլիկիային վերաբերող նյութեր, այլ հարցեր:

Բայց ես առիթից օգտվելով, ուզում եմ իմ դժգոհությունը հայտնել Սփյուռքի մեր հայկական կազմակերպություններին, հայրենակցական և այլ միություններին, որոնք շատ քիչ նյութեր են ուղարկում «Բնօրրան»ում տպելու համար: Սփյուռքից ուղարկված նյութերը կաշխուժացնեն նրա



գործունեությունը, լուսաբանելով Սփյուռքի հայրենակցական կյանքը և միացյալ ուժերով ավելի մեծ չափերի ձեռնարկներ կիրագործեն: Մենք ունենք նաև այլ հրատարակություններ, որոնցից մեկն էլ 1998 թ. օրացույցն է, որը պետք է կարողանանք բաժանորդագրել «Բնօրրան»ին զուգահեռ:

ՀՀՄԽ-ն հիմա գործակցում է Հայաստանի գիտական հաստատությունների հետ և նպատակ ունի «Բնօրրան»ը ավելի գիտա-հասարակական մակարդակի վրա դնելու, որպեսզի գիտական ավելի լայնածավալ վերլուծության ենթարկվեն պատմական Հայաստանի տարբեր շրջանների թե՛ ազգագրությունը, թե՛ բանահյուսությունը, թե՛ պատմությունը, որպեսզի մենք ոչ վերջնականորեն կորցրած հայրենիքը վերադարձնելու ուժը, հույսն ու հավատքն ունենանք մեր մեջ, հաջորդ սերունդներին փոխանցելու դրանք:

Այս տարվա սեպտեմբերի 23-ին, ՀՀՄԽ-ն Ազգային գրադարանի տնօրինության հետ համատեղ, Ազգային գրադարանում բացեց Հայրենակցական գրականության ցուցահանդես, որն ուներ երկու նպատակ. նախ՝ հասարակության ներկայացնել մինչև հիմա հայրենակցական ուղղությամբ ստեղծված թե՛ պատմական, թե՛ ազգագրական, թե՛ բանահյուսական գրականությունը, մտածել նաև հնարավորություններ ստեղծելու մասին, ապագայում շարունակելու գիտական հիմքի վրա դրված այդ հետազոտությունները և պատրաստել հրատարակություններ: Ամենակարևոր հարցերից մեկն էլ գրքերի հավաքչական աշխատանքների դժվարություններն են: Այսօր Ազգային գրադարանը միջոցներ ու հնարավորություններ չունի գնումներ կատարելու աշխարհի տարբեր ծայրերում հայերեն կամ օտար լեզվով հայերի ու Հայաստանի մասին գրված գրքերը ձեռք բերելու առումով: Դա մեր պետական, ազգային հարստություններից մեկն է, և ՀՀՄԽ-ն այսօր հանձն է առել օգնել նրան ու կոչ է անում Սփյուռքում գործող բոլոր հայրենակցական միություններին, այլ կազմակերպություններին և անհատներին սատար կանգնել նրա ֆոնդերի հարստացմանն ու յուրաքանչյուր գաղութում հրատարակված և՛ գրականության, և՛ ամսագրերի, և՛ թերթերի, և՛ օտար լեզուներով հայերի մասին լույս տեսնող գրքերից մեկական օրինակ ուղարկելու նրա հասցեով: Հույս ունենք: Սփյուռքի մեր հայրենակիցները կանսան մեր կոչին և կնպաստեն Հայաստանի գրադարանների ֆոնդերի հարստացմանը:

*Հարց. – Հայրենակցական միությունների հիմնական նպատակը Սփյուռքում, հայապահպանումն է: ՀՀՄԽ-ն կանգնած է մեր պետականության կողքին: Ի՞նչ է այս երկուսի տարբերությունը: Կարո՞ղ եք մի քանի խոսքով լուսաբանել:*

Պատ. – Հայաստանում գործող ՀՀՄԽ-ն, առանձին հայրենակցական կամ ցանկացած միություններ հայապահպանման խնդիր չունեն, որովհետև այդ հարցը լուծվում է պետական մակարդակով, բայց մեր խնդիրն է նաև ՀՀՄԽ-ի և քույր միությունների համագործակցությամբ Սփյուռքում ևս սատարել հայապահպանությանը, որովհետև ճիշտ է, այսօր նյութական առումով մեր հնարավորությունը սահմանափակ է Հայաստանից Սփյուռքին օգնություն հասցնելու, բայց բարոյական, գիտական, գրականության և պատմության առումով՝ մեծ են դրանք, եթե մենք գործենք Սփյուռքի հետ միասնաբար: Բայց մեր նպատակը ավելի շատ կորսվելու վտանգի մեջ եղած հայրենակցական մասունքների պահպանումն է և նրանց գիտական մշակումն ու Հայաստանում հավաքելը, որովհետև ցանկացած գաղութում Սփյուռքը, անկախ նրա կյանքի տևողությունից, հավերժ չի կարող լինել: Իսկ եթե հավերժ է այս երկրագունդը, ապա հավերժ են հայ ժողովուրդն ու Հայաստանը: Այդ իսկ պատճառով, մեր նպատակն է այդ հավաքչական



*Ձախից աջ՝ Մարտիրոս Խաչենդերյան՝ Հաճընի ՀՄ-ի վարչության ատենապետ, Տիգրան Գալուստյան՝ Մարաշի ՀՄ-ի նախկին ատենապետ, Վահան Բաղարյան՝ ՊՀՄ-ի վարչության ատենապետ և ՀՄՄՄ-ի փոխատենապետ, Գրիգոր Շենյան՝ Քիլիսի ՀՄ-ի վարչության անդամ և ՀՄՄՄ-ի ատենապետ, Երվանդ Բաբայան՝ Այնթապի ՀՄ-ի վարչության անդամ, Կամո Տեր-Պետրոսյան, Նուբար Հակոբյան՝ Զորք-Մարզպանի ՀՄ-ի վարչության ատենապետ, Էդուարդ Նարգիզյան՝ Մարաշի ՀՄ-ի վարչության անդամ, Ջորջ Խորյան՝ Կեսարիայի բարեսիրական ընկերության վարչության փոխատենապետ և Մանվել Քեչիչյան՝ վարչության անդամ, Հովհաննես Երկանյան՝ Եոզղաթի ՀՄ-ի վարչության ատենապետ, Արա Պետրոսյան՝ ՊՀՄ-ի վարչության փոխատենապետ։*

աշխատանքին նպաստել, վերևում նշված մասունքները Հայաստանում հավաքելու ու պահպանելու համար, որը ապագայում կարող է ծառայել որպես պատմական փաստ մեր պահանջատիրության խնդիրները լուծելիս:

Հարց. – Ի՞նչ կուզեիք հաղորդել Լոս Անջելեսի հայ համայնքին:

Պատ. – Ցանկացած հային աշխարհի ցանկացած ծայրում, նաև լոսանջելեսահայությանը ես նախ և առաջ կցանկանայի միշտ պահել հայի հպարտությունը, հայրենիքով ապրելու իղձն ու զգացումը, ունենալ հայի ինքնասիրությունը և ամենակարևորը՝ փոխադարձ հասկացողություն ու համբերություն, որովհետև մենք անլուծելի խնդիրներ չունենք և չենք էլ ունենա, եթե մեկ նպատակի ծառայելով, մտածենք բազմաձև, գործենք բազմաձև ու միասնականորեն: Եվ ամենակարևորը՝ խոսքի շեղում ու տարբերություն չունենանք, որովհետև եթե մինչև հիմա Հայրենիք-Սփյուռք



հարաբերությունները և անկախ, ապա Հայաստանի երևույթը երազ էր, ապա այսօր փաստ է, այսօր իրական է, և այսօր ամենակարևորը հայի համար նախ գործն է, հե՛տո խոսքը: Իսկ այդ գործը, ամենաչնչին գործը, շատ ավելի մեծ նշանակություն ունի թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի և թե՛ Սփյուռքի հայության գոյության համար, քան թե հազարավոր էջերով գրված կամ հարյուրավոր ժամերով ասված խոսքերը: Այս իսկ պատճառով ես կցանկանայի փոխադարձ հասկացողությունը և ամենակարևորը՝ գործնականությունը:

– Պրն. Տեր-Պետրոսյան, շատ շնորհակալություն այս բովանդակալից ու շահավետ հարցազրույցի համար:

**Երևանում նոր հայրենակցական միություններ ստեղծվելու կապակցությամբ մեջբերվում է գրածս հոդվածը[1]:**

ՆՈՐ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ

ՀՄ-ները աշխույժ գործունեություն ունեն Հայաստանում, որին խթան է հանդիսանում նաև ՀՀՄԽ-ն: Նրան անդամագրվում են նոր ստեղծված բոլոր ՀՄ-ները և իրենց միջոցառումները համադրում են նրա գործունեության հետ, որպեսզի բոլոր միություններն էլ հնարավորություն ունենան մասնակցելու կազմակերպված ձեռնարկներին, արթնացնելով բնօրրանի ոգին մեր ժողովրդի մեջ:

ՀՀՄԽ-ի ատենապետ Ժոզեֆ Ավետիսյանից վերջերս ստացա մի նամակ և մի քանի լուսանկարներ նոր ստեղծված միությունների մասին: Ըստ նամակի 1997 թ. Հայաստանում ստեղծվել են Տիգրանակերտ և Ադանա նոր ՀՄ-ները, որոնք արդեն անդամագրվել են ՀՀՄԽ-ին, իսկ Տիգրանակերտի առաջին լոնախմբությունը Այգեկ գյուղում մեծ հաջողություն է ունեցել:

Հայաստանում և Սփյուռքում մեր բնօրրանների բնակավայրերի անուններով ստեղծված ՀՄ-ները վառ են պահում մեր հիշողությունը նրանց մասին և նպաստում պահանջատիրության համար պայքարի արդար լուծման:

Լոս Անջելեսի ՀՄՄՄ-ն շնորհավորում է Հայաստանում նոր ստեղծված ՀՄ-ներին իրենց կազմերով, ցանկանալով նրանց ՀՀՄԽ-ի հետ հաջողություններ, ինչպես մեր պետականության կայացման, այնպես էլ պահանջատիրության հարցերի դրական լուծման նպաստելու գործում:

**Նոյեմբեր 27-ի թեյնեթոնի օրը ՀՄՄՄ-ի և ՊՀՄ-ի վարչության անուններից ելույթ ունեցա** (տե՛ս հավելված էջ 475):

1.– Տե՛ս «Նոր Կեանք», թիվ 46, Հոկտ. 23, 1997, էջ 41:

## ԺԳ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1998 Թ.

01-08-98 Թ. ՎՆ-ում քննարկվեց Արա Պետրոսյանի առաջարկը՝ ապրիլին ներկայացնել Պարույր Սևակի «Անլռելի Զանգակատունը», և վարչականներին ժամանակ տրվեց մտածելու:

02-04-98 Թ. ՎՆ-ում քննարկվեցին մի շարք հարցեր՝ հուշատոնի, Արցախի վիճակախաղին մասնակցելու, Գալիա Նովենցի 60-ամյակի և Արշակ Տիգրանյան դպրոցի նամակը:

1. Հուշատոնի հարցում որոշակի պարզություն մտցվեց: Որոշվեց, որ ասմունքողները լինեն ոչ-արհեստավարժ բնյլանցիներ: Տեխնիկական հարցերով խոստացան զբաղվել Հովսեփ Գասպարյանը՝ Կոմիտասի նկարի մեծացման, Մանվել Մարաշյանը՝ մոմաձև լույսերով ապահովելու, Հակոբ Խորշիդյան՝ խոսափողերով և բարձրախոսներով ապահովելու, միջոցառումը անցկացնել ապրիլի 21-ին:

2. Քննարկվեց ՀՅԴ-ի հունվար 30, 1998 Թ. նամակը «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Համահայկական Վիճակախաղ»ի առթիվ կատարվելիք ընթրիքի հրավերի մասին: Նամակում նշված էր նաև, որ «Համահայկական փարողութեամբ այս նախաձեռնութիւնը կը հովանաւորեն Հայ Առաքելական, Կաթողիկէ եւ Աւետարանական համայնքապետերը»: Վարչության արձանագրության մեջ նշված է, որ ՊՀՄ-ն չի կարող ընթացք տալ հրավերին, քանի որ ՀՄՄՄ-ն չի հրավիրված, որի անդամն է ինքը: Այս առթիվ Հարութ Տեր Դավիթյանի ստորագրությամբ լույս տեսած հոդվածից[1] բերենք որոշ հատվածներ:

... Նախ, վիճակահանութեան հետապնդած նպատակները կը նոյնանային 5 տարիներէ ի վեր գործող «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի նպատակներուն հետ: Ուրեմն ինչո՞ւ այս մէկը չիրագործուեցաւ հիմնադրամի ծիրին ընդմէջէն: Հարցազրոյցի ընթացքին փոխ վարչապետը (Ժիրայր Պողոսյան-Վ. Բ.) կը նշէ թէ «դեռ վերջնական որոշում չկայ, բայց քննարկւում է «Հայաստան» Հիմնադրամի, Հայ Առաքելական Եկեղեցու մասնակցութիւնը վիճակախաղի տոմսերի տարածման ընթացքի արագացման աշխատանքներին»:

... Վիճակախաղի յայտարարութենէն մի քանի օրեր ետք տեղի պիտի ունենար «Հայաստան» Հիմնադրամի երկրորդ «թելեթոն»ը, որի հասոյթը ամբողջութեամբ պիտի հատկացուէր Արցախի մէջ իրագործուելիք յստակօրէն բանաձեւուած ծրագիրներու: ... Երբ փոխ վարչապետը իր հարցազրոյցին մէջ կը նշէր թէ «մեծ ուրախութեամբ ընդունեցինք ՀՅԴ առաջարկութիւնը՝ Սփիւռքում 250000 տոմս (տպված էր 500000 տոմս-Վ. Բ.) տարածելու վերաբերեալ», այս խաչաձեւումի

1.- Տե՛ս «Հայրենի հող եւ Վիճակահանութիւն», «Մասիս», Շաբաթ, Ապրիլ 18, 1998, էջ 7:



կցացումը մարմին կը ստանար: Մի քանի ամիս ետք, Փետրուար 3, 1998-ին զանազանահայ եկեղեցական եւ ազգային կազմակերպութիւններու կեդրոնական վարչութիւնները հանդիպում ունեցած են տեղւոյն ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէի հետ, յայտարարութեան մէջ կ'ըսուէր. «Կը ցաւինք որ ՀՅ Դաշնակցութեան ներկայացուցիչները չհամաձայնեցան վիճակահանութեան ծրագիրը գործադրել «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին միջոցաւ եւ պնդեցին, որ հանգանակուած դրամին փոխանցումը կատարուի ՀՅ Դաշնակցութեան հաշվեկշռին տակ գտնուող Արցախ Հիմնադրամին միջոցաւ»: Անգամ մը համար եւս ականատես կ'ըլլայինք երկփեղկման զեղեցիկ նախաձեռնութեան մը՝ ինչպիսին է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամը, որը կոչուած էր կամրջելու համայն հայ ժողովրդի ջանքերը ի սպաս հայրենիքի հզօրացման: Անգամ մը համար եւս, համահայկական նախաձեռնութիւն մը կոհը կը դառնար յատուածական շահերու»:

3. Վարչությունը քննարկեց Մանվել Մարաշյանի առաջարկը, որոշեց մասնակցել Գալիա Նովենցի 60-ամյակի մեծարանքի երեկոյին և ՊՀՄ-ի վարչության կողմից հուշատախտակ նվիրել նրան (արժեքը՝ 50 դոլարի սահմաններում):

4. Ընդառաջելով Թէքէյան մշակութային միության «Արշակ Տիգրանեան» վարժարանի հոգաբարձության նամակին, վարժարանին նվիրվեց 200 դոլար (չեք #452, 3-01-98):

Այս ընթացքում Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման առիթով ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ընդունած որոշումը (փուլային լուծում) ընդվզում առաջացրեց ուժային նախարարության մոտ: Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյան, Ներքին գործերի և Ազգային անվտանգության նախարար Սերժ Սարգսյան և վարչապետ Ռոբերտ Քոչարյան եռյակը «պատճառաբանելով», որ նախագահը «ծախում է» Ղարաբաղը, ժողովրդի մեջ ատելություն սերմանեցին դեպի նա, որի արդյունքում ստիպեցին նրան հրաժարական տալ:

Այսօր, 4 տարի անց (02-05-2002 Թ.), երբ գրվում են այս տողերը, հայաստանյան մամուլը, գիտակցելով, թե Հայաստանը ինչ է կորցրել այդ տարիների ընթացքում, բացահայտեց, որ Լևոն Տեր-Պետրոսյանի ընդունած որոշումը պարտվողական չէր, այլ Ղարաբաղը անկախություն էր ստանում: Իսկ վերջին 4 տարիներին Հայաստանի ղեկավարների վարած սխալ քաղաքականության հետևանքով, որի արդյունքում Հայաստանը թուլացավ քաղաքականապես, լպիրշ Ալիեը նախագահ Քոչարյանից պահանջում է արդեն Հայաստանի մի մասը՝ հանձին Մեղրիի միջանցքի, որպեսզի Թուրքիան իրականացնի համաթուրանական իր վաղեմի երազները: Ահա, թե որտեղ է հասել նախագահ Ռոբերտ Քոչարյանի Ղարաբաղի հարցի կարգավորման «հաղթական» ընթացքը: Լավ է, որ համատարած արտագաղթից հետո էլ դեռ Հայաստանում կան առողջ ուժեր, որոնք ժողովրդի հետ

պայքարում են նախագահի «հաղթական» ծրագրերի դեմ, որպեսզի կանգուն պահեն հայկական հողը: Իսկ ժամանակին, Լևոն Տեր-Պետրոսյանի հարցադրմամբ, Ռոբերտ Քոչարյանն իր արբանյակներով, իրոք, ներկայացրել է անիրագործելի հաղթական ծրագիր, որը նախագահը չի ընդունել և ներկայացրել է իր հրաժարականը: Լևոն Տեր-Պետրոսյանի ընդունած տարբերակով Մեղրիով միջանցք չէր տրամադրվում Ադրբեջանին: Հրաժարականի ժամանակ նա ասաց. «Կյանքը ցույց կտա, թե ով ինչ է արել Արցախի համար, և ով է իրականում ծախում այն»[1]: Եվ շատ ավելի կարևոր միտք արտահայտելով նա ասաց. «Արցախի հարցի արծարծումը ընդամենը պատրվակ էր: Խնդիրը շատ ավելի խորն է և կապված է պետականության հիմնադրույթների, խաղաղության ու պատերազմի այլընտրանքի հետ»[2]: Ահա այսօր այդ փաստի առջևն ենք: Բաբկեն Արարքցյանը իզուր չէր հայտարարում, որ այն ժամանակ Անվտանգության նիստում Ռոբերտ Քոչարյանի և արբանյակների ներկայացրած տարբերակը Ղարաբաղի կարգավորման հարցում, իշխանափոխության համար էր, որից հետո այդ տարբերակը գցվեց աղբարկղ, բայց ՀՀՇ-ն ունի դրա պատճեն և հարկ եղած դեպքում կհրապարակի: Այսօր մի «քայլ» էլ առաջ գնալով, ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը, Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը գործում են ի նպաստ Ադրբեջանի, երբ հայտարարում են, որ ազատագրված տարածքները «գրավված», «զավթված» տարածքներ են՝ իրենց պարտադրելով ագրեսորի դերը:

Ամփոփ լուսաբանություն տվինք ընթերցողին Ղարաբաղի հարցի մասին, որը կապված էր ՊՀՄ-ի վարչության Լևոն Տեր-Պետրոսյանին ուղարկած նամակի հետ (տե՛ս հավելված էջ476):

Գալիա Նովենցի 60-ամյակի առթիվ մեծարանքի երեկոն նախատեսված էր երեքշաբթի, մարտ 17, 1998 թ. երեկոյան ժամը 7:30-ին Եփրեմյան սրահում (Գլենդել): Այդ առթիվ պատրաստված հուշատախտակի վրա գրված էր.

Նվիրվում է

ՊՀՄ-ի վարչության կողմից ՀՀ ժողովրդական դերասանուհի Գալիա Նովենցին, ի գնահատանք նրա ծառայություններին հայ մշակույթին՝ թատրոնում և շարժանկարներում խաղացած բազմաթիվ դերերի և ծննդյան 60-ամյակի կապակցությամբ:

Վարչություն, Լոս Անջելես, 3-17-98:

1,2.- Տե՛ս «Ով է իրականում ծախում Ղարաբաղը», «Զորրորդ Իշխանություն», No 200, մայիսի 16, 2001 թ. չորեքշաբթի:



Իմ ելույթը մեծարանքի երեկոյին:

Այսօր, այս գեղեցիկ սրահի կամարների տակ մեծարում ենք մեր գեղեցիկ սեռի, մեր թատրոնի ու շարժանկարի հռաշալի դերասանուհիներից մեկի՝ Գալիա Նովենցի ծննդյան 60 և գործունեության 40-ամյակը: ՊՀՄ-ի վարչության և բոլոր հայրենակիցների անունից շնորհավորում եմ հոբելյարին: Նա, իրոք, արժանի է այս մեծարման, որովհետև մեծ լումա ունի, հատկապես, հայկական շարժանկարի կարգացման ասպարեզում:

Հավանաբար, հայ դերասաններից քչերին է վիճակվել այնքան շատ դերերով հանդես գալու շարժանկարներում, որքան Գալիա Նովենցը: Բավական է հիշել նրա դերերը՝ «Հեղնար Աղբյուր», «Մենք ենք, մեր սարերը». «Նահապետը», «Կարոտ», շարժանկարներում, որոնք առանց հուշմունքի ու արցունքի չեք կարող դիտել:

Իր ամուսնու՝ Երվանդ Ղազանչյանի հետ կիսել են լավ ու վատ օրերը, հաջողությունններն ու դժվար օրերը, հասնելով իրենց նպատակին ու հարուստ և արժեքավոր ծառայություններ մատուցել հայ ժողովրդին:

Արժեքավորելով արվեստի դերը հայ իրականության մեջ, քանի որ մեր ժողովուրդը չի կարող գոյատևել առանց մշակույթի, ՊՀՄՎ-ն միշտ քաջալերել ու սատար է կանգնել դրան: Այսօր այդ նույն ոգով նա շարունակում է իր գործունեությունը և ի գնահատանք Գալիա Նովենցի բերած ծառայություններին հայ արվեստին, նրան նվիրում է այս հուշատախտակը:

Իմ խոսքից հետո Գալիա Նովենցին բեմ հրավիրեցի հուշատախտակը հանձնելու համար, Մանվելին՝ նույնպես (կարող էի առանց իրեն հանձնել), որպեսզի հեղինակությունը բարձրացնեմ: Մեծարանքի մասին հոդվածը[1] մեջբերվում է:

ԳԱԼԻԱ ՆՈՎԵՆՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈ

Գալիա Նովենց: Մի դերասանուհի, որին այդ օրը շատ-շատերը մոտիկից և անձամբ պիտի ճանաչեին:

Հայաստանի Հանրապետության վաստակավոր դերասանուհի, պետական մրցանակի դափնեկիր Գալիա Նովենցի ծննդյան 60 և աշխատանքային գործունեության 40-ամյակին նվիրված մեծարանքի երեկոն տեղի ունեցավ երեքշաբթի, մարտ 17, 1998 թ. երեկոյան, Եփրեմյան գեղատեսիլ սրահում, ավելի քան 500 արվեստասերների ներկայությամբ: Մուտքը հրավիրատոմսով էր: Երեկոն կազմակերպված էր ՊՀՄ-ի վարչության գեղարվեստական մասի պատասխանատու Մանվել Մարաշյանի կողմից: Ներկա էին Հայաստանի լավագույն արվեստագետներից շատերը, որոնք տարիներ առաջ Գալիա Նովենցի հետ բեմ էին բարձրացել: Նա օգնել էր բոլորին, սիրվել էր բոլորի կողմից, միասին էին կիսել իրենց ուրախությունները, լավ ու վատ օրերը: Ներկաները հեռացան սրահից, մեծ բավականություն ստացած:

Գալիա Նովենցը ծնվել է Երևանում, 1937 թ.: Ավարտելով Երևանի գեղարվեստական ինստիտուտը 1958 թ., աշխատել է մի շարք թատրոններում: 1965 թվականից մասնակցել է բազմաթիվ ռադիոհեռուստատեսային բեմադրությունների և նկարահանվել է տասնյակ ֆիլմերում, լուման ներդնելով հայ շարժանկարի կարգացմանը: Այդ են վկայում նրա, 1985 թ. Մինսկի համամիութենական կինոփառատոնում, Ալբերտ Մկրտչյանի «Իմ մանկու-

1.-Տե՛ս «Նոր Հայաստան», Զորեք., Ապրիլ 1, 1998, թիվ 57, էջ 4:



Հուշատախտակի հանձնում:

թյան տանգոն» ֆիլմում խաղացած կանացի դերի համար գլխավոր մրցանակին և Վենետիկի միջազգային կինոփառատոնում հատուկ մրցանակին արժանանալը: Բավական է հիշել ֆիլմերից մի քանիսը՝ «Հեղնար աղբյուր», «Մենք ենք, մեր սարերը», «Նահապետ», «Կարոտ», որոնք հայ ֆիլմաշխարհում իրենց ինքնուրույն տեղն ունեն և առանց հույմունքի ու արցունքի հնարավոր չէ դիտել:

Հավանաբար հայ դերասաններից քչերին է վիճակվել բախտ ունենալ ֆիլմերում հանդես գալ այնքան շատ դերերով, որքան Գալյա Նովենցը: Այդ առումով նա մեր արվեստագետների մեջ ամենաբախտավորներից է, մանավանդ, եթե հիշենք հայ բեմի տիտան Վահրամ Փափազյանին, որ 20-րդ դարի կարգացած տեխնիկայի պայմաններում, որոշ ղեկավարների անփութության և անտարբերության հետևանքով ոչ մի ֆիլմ չունեցավ, բացի մի քանի ձայնագրություններից: Ինչպիսի՜ մեծ կորուստ հայ մշակույթի համար:

Երեկոյի պատվավոր հյուրերն էին՝ Ամերիկայի Արևմտյան թեմի Առաջնորդ Գերշ. Վաչե Արք. Հովսեփյան, Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հյուպատոս Արմեն Մելքոնյան և փոխհյուպատոս Էդուարդ Թառանյան: Վերջիններս Հայաստանի նախագահական ընտրությունների կապակցությամբ չկարողացան ներկա լինել, սակայն հոբելյարին շնորհավորեցին գեղեցիկ ծաղկեփնջով:

Երեկոն սկսվեց «Վարդան Աճեմյան» թատրոնի ղեկավար Ժան Նշանյանի բացման խոսքով, որը դրվատեց հոբելյարի արժանիքները և ներս հրավիրեց նրան: Սրահը հոտնկայս ծափահարություններով ընդունեց նրան:

Երեկոյին իրենց մասնակցությունը բերին սիրված արվեստագետներ՝ Շաքե Թուխմանյանը, Սալբի Մայիլյանը, Ռափիկ Մանսուրյանը, Լևոն Սևանը, Հարութ Փամբուկչյանը, Հարություն Ֆոդուլյանը, Գրիգոր Օգարյանը, Արմեն Հովհաննեսյանը, Մերուժան Մարգարյանը (ջութակ),





Ձախից աջ՝ տեր և տիկին Հովսեփ և Պերճուհի Գասպարյաններ, Սարգիս Խորչիդյան, Մանվել Մարաշյան, Գալյա Նովենց, Վահան Բահարյան, Արա Պետրոսյան, տեր և տիկին Մանուկ և Աիդա Տոնոյաններ:

Արա Պետրոսյանը, «Օլիմպիա» նվագախումբը (գեղ. ղեկավար Արմեն Տիրան):

Բոլորն էլ իրենց ելույթներում նախ ողջունեցին հոբելյարին իրենց ջերմ խոսքերով, ապա կատարեցին նրան նվիրված ստեղծագործություններ, ողջագուրվեցին դերասանուհու հետ՝ հիշելով իրենց միասին աշխատած և հայ արվեստի կարգացմանը մատուցած բուռն տարիները:

Թատերագիր Ռափիկ Մաղոյանը իր ելույթում բարձր գնահատեց հոբելյարին, ընդգծելով նրա ունեցած ծառայությունները հայ բեմի և շարժանկարի կարգացման գործում:

Տողերիս հեղինակը իր ողջույնի խոսքից հետո, բեմ հրավիրեց Գալյա Նովենցին և ՊՀՄ-ի վարչության անունից հուշատախտակ հանձնեց հոբելյարին, ի գնահատանք իր ծառայություններին հայ ժողովուրդին:

Արք. Վաչե Հովսեփյանը իր ելույթում շեշտելով, որ ինքն արվեստասեր է, ապրելով Անգլիայում, Ամերիկայում, միշտ հաճախել է նրանց թատրոնները և հոգևոր բավականություն է ստացել դրանցից, բայց կարոտ է մնացել հայկականին, որը կարողացել է որոշ չափով հագեցնել, երբ Միեր Մկրտչյանը հանդես եկավ Լոս Անջելեսի բեմերում: Նա բարձր գնահատեց Գալյա Նովենցի արժանիքները, մանավանդ նրա դերերից դրվագներ տեսնելով տարբեր ֆիլմերում, որոնք ցուցադրվեցին այդ երեկոյի ընթացքում: Դրվագներ ցույց տրվեցին նաև Երևանում տեղի ունեցած հոբելյանական երեկոյից, որտեղ հայ անվանի արվեստագետներ գովեստով խոսեցին հոբելյարի անցած ուղու և իր անձնավորության մասին:

Հոբելյարը իր շնորհակալությունները հայտնեց երեկոյի կազմակերպիչին, իր հոբելյանին մասնակցող արվեստագետներին, ՊՀՄ-ի վարչությանը, իր նկատմամբ ցուցաբերած ուշադրության ու հուշատախտակ հանձնելու

կապակցությամբ և հայ արվեստասերներին:

*3-25-98 թ. Վ.Ն-ում վարչությունը հարգեց Սարգիս Խորչիդյանի բանավոր խնդրանքը և, տարիքն ու առողջությունը նկատի ունենալով, նրան ազատեց վարչության անդամի իր պարտականություններից: Նա կարող էր ցանկացած ժամանակ մասնակցել վարչության աշխատանքներին:*

*Կատարվեց նոր անդամների ընդունելություն և պաշտոնների վերաբաշխում. 1. Վահան Բահարյան՝ ատենապետ, 2. Արա Պետրոսյան՝ փոխատենապետ, 3. Մարտիրոս Էքշիյան՝ առաջին քարտուղար, 4. Մանուկ Տոնոյան՝ երկրորդ քարտուղար, 5. Գրիգոր Դովլաթյան՝ հաշվապահ-գանձապահ, 6. Մանվել Մարաշյան՝ գեղարվեստական և հասարակական կապերի պատասխանատու, 7. Հովսեփ Գասպարյան՝ հասարակական կապերի պատասխանատու, 8. Հակոբ Խորչիդյան՝ գեղարվեստական մասի պատասխանատու, 9. Սյուզի Հեքիմյան՝ Տիկնանց հանձնախմբի ատենապետուհի, 10-11. Սարգիս Գյոզալյան և Հարություն Հարությունյան՝ խորհրդատուներ:*

*Վարչության կից ստեղծվեց Տիկնանց հանձնախումբ, որի կազմը լրացվելու էր աստիճանաբար. Սյուզի Հեքիմյան՝ ատենապետուհի, Արմենուհի Դովլաթյան, Ախղա Տոնոյան, Եղիսաբեթ և Սեդա Մարոնյաններ (քույրեր), Սեդա Կվրյան, Մարի Թերջանյան, Աղավնի Նալչաչյան, Նազելի Կարոյան և Անահիտ Գասպարյան՝ անդամներ:*

*Նիստում առաջարկեցի քննարկել Բեյլանի մասին գիրք հրատարակելու հարցը, որի մասին ներկայացրեցի երեք գրություններ (որպես նախագիծ)՝ 1. Նախնական գրառումներ հրատարակվելիք գրքի կապակցությամբ: 2. Նամակ՝ «Կոչ հայրենակիցներին»* (տե՛ս հավելված էջ 477-478: *3. «Կարևոր ազդ»* (տե՛ս հավելված էջ 479):

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼԻՔ ԳՐՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Բեյլանի և իր շրջակայքի, ինչպես նաև Իսկենդերունի, Գըրըզ Խանի, Անտիոքի և նրանց շրջակա գյուղերի մասին նախապատրաստվող գրքի վերնագրի մասին դեռ հատուկ առաջարկություններ, պարզաբանումներ կամ որոշումներ չկան: Այս հարցը պետք է լրջորեն քննարկվի և համապատասխան որոշում կայացվի: Որպեսզի գրքի հրատարակման աշխատանքները որոշակի և ծրագրված լինեն, պետք է կազմվի հանձնախումբ, որը հիմնական ուշադրությունը դարձնի նախնական նյութերի հավաքման ու համադրման աշխատանքներին: Ինձ թվում է՝ գրքի հրատարակումը պետք է բաղկանա մի քանի հանգրվաններից.

ա. Նյութերի հավաքման և համադրման համար, առաջին հերթին անհրաժեշտ է ունենալ «Fax», պատճենահան մեքենա և համակարգիչ:

բ. Նախնական նյութերը համակարգչի մեջ մտցնելը պետք է կատարվի բովանդակության հաջորդականության որոշման համաձայն:



գ. Հրատարակման աշխատանք:

Այս բոլորն իր ուսերի վրա պետք է վերցնի ստեղծված հանձնախումբը, իսկ նշված կազմածների հարցը պետք է լուծվի անհապաղ:

Հանձնախմբում պետք է ընդգրկվեն լուրջ մտավորականներ: Հանձնախումբը պետք է կից լինի ՊՀՄ-ի վարչության և ունենա ատենապետ, փոխատենապետ (պայմանական), քարտուղար, գանձապահ և խորհրդատուներ:

Ջնայած հանձնախմբի գոյության կոչման, նյութերի հավաքման գծով արդեն 02-20-98 թվով ուղարկված նամակներին (Էջմիածին ուղարկված նամակը տե՛ս հավելված էջ **480**) Էջմիածնի և Անթիլիասի կաթողիկոսարաններին, Վենետիկի Մխիթարյան Միաբանության, Հալեպի-Սիրիայի և Պոլիսի պատրիարքարաններին, Պոլիսի «Ժամանակ» թերթի խմբագրության, դեռ նամակներ պիտի ուղարկվեն այլ հասցեներով և տարբեր երկրներում գտնվող հայրենակիցներին, նրանց ընդգրկելով հանձնախմբի մեջ:

Նկատի ունենալով, որ գրքի հրատարակումը շատ պատասխանատու գործ է, մանավանդ, որ նյութերի մեծ մասը գտնվում է Մերձավոր Արևելքի, Եվրոպայի, Հայաստանի արխիվներում և գրված նամակները չեն հուսադրում անհրաժեշտ նյութերի ստացման, պետք է նկատի ունենալ գիտակ մեկին գործուղղելու այդ նպատակով նշված վայրերը (եթե նամակների միջոցով չստացվեն անհրաժեշտ նյութերը)՝ նախնական պատրաստություններից հետո: Առայժմ հիմնական հարցը հում նյութերի հավաքումն է, իսկ այդ ժամանակաընթացքում բավական պարզություններ ու հստակացումներ կլինեն և կորոշվի, թե ո՞վ պիտի գրի գիրքը:

Վերոհիշյալներից ելնելով, պետք է նկատի ունենալ, որ սա, իրոք, ծախսալի գործ է, եթե նկատի ունենանք արխիվներում պատճենահանման և օգնության համար վճարումները, ինչպես նաև փոստային, առօրյա ծախսերը, և գործուղման ժամանակն էլ ամենաքիչը, հավանական է, երկու ամիս: Հետևաբար շատ լուրջ պետք է նախապատրաստվել գործուղման, նախօրոք հավաքելով անհրաժեշտ տեղեկություններ արխիվների նյութերից՝ հեշտ ու արագ օգտվելու նպատակով և միայն դրանք մանրակրկիտ համադրելուց հետո, ընտրել գործուղման ճանապարհորդության ճիշտ ծրագիր և դրանով առաջնորդվել:

Ներկա դրությամբ, բացի նամակներից, ես հեռախոսով կապվել եմ Զարեհ Պալյանի հետ (Նյու Ջերսի), որը ինձ որոշ նյութեր և Փարիզի իր ընկերոջ՝ Նուպար Մարթայանի հեռախոսի համարն ու հասցեն է ուղարկել: Հեռախոսով կապվեցի վերջինիս հետ, լուրջ մտավորական է: Ինձ բավական տեղեկություններ հաղորդեց նյութերի աղբյուրների մասին: Խոսել եմ նաև Սարգիս Պալյանի հետ (Կանադա): ԱՄՆ-ի և Կանադայի բավական մտավորականների հեռախոսների համարներ ունեմ, որոնց հետ խոսելուց հետո, առաջարկության ցուցակ կներկայացնեմ վարչությանը, նրանց հանձնախմբի մեջ ընդգրկելու համար: Շատ կարևոր է անդամներ ունենալ Սիրիայում և Լիբանանում: Առայժմ փնտրտուքների մեջ եմ: Նյութերի հավաքումը հեշտացնելու նպատակով պատրաստեցի «Կոչ Հայրենակիցներին» վերնագրով մի գրություն, որն անհրաժեշտ է ուղարկել աշխարհի տարբեր երկրներում բնակվող մեր հայրենակիցներին և հայկական մամուլին: Միգուցե դրանից հետո հայտնվեն մեկ օգնել ցանկացող հայրենակիցներ այդ երկրներում: Առայժմ այսքան:

*Գրվելիք գրքի համար նյութեր հայթայթելու նպատակով ուղարկված նամակներից միան մեկի պատասխանն ենք ստացել Ստամբուլից* (լուսապատճենն տե՛ս հավելված էջ 481):

*Ամփոփենք քննարկման արդյունքները: Բոլոր վարչականների մոտեցումը դրական էր գրքի հրատարակման հարցում: Հիմնա-*

կան մտահոգությունը անհրաժեշտ նյութերը հավաքելու հետ կապված ծախսերն էին: Բայց նկատի ունենալով, որ հրատարակված գիրքը մոռացությունից կփրկի մեր բնօրրանի փոքրիկ մի հատվածի՝ Բեյլանի և շրջակա հայկական բնակավայրերի կենցաղի, սովորությունների և իրադարձությունների պատմությունը, վարչությունը որոշեց իրագործել գրքի հրատարակությունը և այդ նպատակի համար քննարկել համակարգիչ, փաքսի և պատճենահան մեքենաներ գնելու հարցը:

Վարչականները խոստացան գրել իրենց հուշերը և նյութեր հավաքել: Սակայն այդ բոլորը մնացին նիստը կայացած սենյակի չորս պատերի ներսում և մինչև այսօր (2002 թ. փետրվար), վարչականներից ոչ մեկը որևէ նյութ չի հայթայթել այդ նպատակով: Դե՛, ի՞նչ արած, հասկացողության հարց է ...:

4-03-98 թ. Վ.Ն-ում Սյուզի Հեքիմյանի առաջարկով վարչությունը որոշեց միջոցառում անցկացնել Մայրերի օրվա առթիվ:

4-14-98 թ.Վ.Ն-ում հուշատոնին և Մայրերի օրվան նվիրված կազմակերպչական հարցերի քննարկման հետ, որոշվեց նաև ապրիլի 24-ին ծաղկեպսակ դնել Մոնթեբելլոյի Եղեռնի հուշարձանին, Հայ նահատակների հիշատակին, գնել համակարգիչ, փաքսի և պատճենահանման մեքենաները:

(Վարչության ուղարկված Գրիգոր Գոնտուրայանի նամակը տե՛ս հավելված էջ 482):

**Մի երկտող ևս.**

Մեր սրտագին շնորհակալությունն ենք հայտնում ՊՀՄ-ի վարչությանը, ուղարկած շնորհավորանքի համար մեր նշանախոսության առթիվ:

Հարգանքներով՝ Հակոբ Ջանոյան (Նուրիկ Աբրահամի թոռը)

4-10-98 թ. Լոս Անջելես:

**Իմ խոսքը Մեծ Եղեռնի 83-րդ տարելիցի հուշ-երեկոյին.**

Սրբազան հայր, հոգևոր հայրեր, Լոս Անջելեսում ՀՀ հարգելի Գլխավոր հյուպատոս՝ պրն. Արմեն Մելքոնյան, սիրելի հայրենակիցներ, այս օրերին համայն հայությունը Հայրենիքում և Սփյուռքում նշում է Մեծ Եղեռնի 83-րդ տարելիցը և շարունակում է աշխատանքները, աշխարհում միայն իրենց շահերը տեսնող պետություններին ապացուցելու Եղեռնի իրականությունը, ընդունել տալու այդ նրանց, որը մեծապես կապդի այդ գործադրողների վրա: Վերջապես Թուրքիայի այսօրվա պետությունը կընդունի իր նախորդների գործած ոճրի մեղսակցությունն ու, հայ ժողովրդից ներողություն խնդրելով, կհատուցի նրան հասցրած նյութական վնասները, կվերադարձնի մեր պապենական հողերը, իսկ նահատակված ժողովրդին, դժբախտաբար, երբեք չի կարող վերակենդանացնել: Նահատակված 1,5 միլիոն հայը այսօր, Եղեռնից 83 տարի հետո որքա՜ն պիտի բազմանար, շենացներ ու վարգացներ իր բնօրրանը, այնտեղ ստեղծելով բարեկեցիկ կյանք:

1915 թ Մեծ Եղեռնից հետո մի պահ ամեն ինչ լռեց: Ջարդից ազատված և աշխարհով սփռված հայ ժողովուրդը չկարողացավ ինքն իրեն մի անգամից գտնել, որովհետև բյուրավոր ընտանիքներ կորուստի էին մատնվել, նրանցից շատ քչերն





Մոնթեբելլոյի նահատակների հուշարձանին ծաղկեպսակ են զետեղում Գրիգոր Դովլաթյանն (ձախից) ու Մարտիրոս էքշիյանը:

էին փրկվել ու իրարից այնպես էին մեկուսացել, որ շատերը, նույնիսկ, կարծում էին հայ չի մնացել երկրագնդի վրա:

Հավատալով գերտերությունների խոստումներին,կազմակերպված հայ կամավորական լեգեոնը դաշնակիցների կողքերի հետ ազատագրեց Կիլիկիան, այնտեղ ազատ Հայրենիք ունենալու տեսլականով:

Հաղթանակը մոտ էր, ու Թուրքիայի պարտության հետևանքով հայ ժողովուրդը երազում էր ունենալ նաև Արևմտահայաստանի ինքնավարությունը, բայց նա զոհ գնաց դաշնակիցների շահերին:

Կամավորական լեգիոնում ծառայել են նաև բեյլանցիներ և շրջակա բնակավայրերի բնակիչներ:

Ջարդից հետո, Ֆրանսիայի խնամատարության հանձնված Կիլիկիայի Իսկենդերունի Սանջաքում հավաքվեց մոտ 30 000 հայ բնակչություն, սկսեց կամացկամաց վերքերը բուժել, և դրանք հազիվ էին սկսել սպիանալ, երբ 1939 թ. Ֆրանսիան այդ մի կտոր հողն էլ հանձնեց Թուրքիային, որի հետևանքով իր հողի վրա մնացած մի բուռ հայ ժողովուրդը, հեռանալով այնտեղից, խառնվեց հայ Սփյուռքին:

Հայ ժողովուրդը երախտապարտ է հյուրընկալ պետություններին, որոնք ապաստան տվին ջարդից մազապուրծ հայերին: Վերջիններս ոչ միայն նպաստեցին նրանց տնտեսության ու մշակույթի զարգացմանը, այլ նաև մեծ դեր խաղացին քաղաքական գործունեության մեջ:

Մեծ Եղեռնի 50-ամյակի առթիվ հուշարձաններ կառուցվեցին Երևանում և աշխարհի շատ երկրներում, որտեղ հայեր էին ապրում: Ապրիլ 24-ի նվիրական օրը նրանք հավաքվելով հուշարձանների շուրջը, իրենց հարգանքի տուրքն են մատուցում նահատակների հիշատակին, երդվելով նաև, որ կշարունակեն պայքարը Հայ դատի արդար լուծման համար:

Խորհրդային շրջանում Երևանի սրտում կառուցելով Մեծ Եղեռնի հուշար-

*ծանը, հայրենի կառավարությունը փաստեց, որ այն չի մոռացվելու և սպասում է հատուցման, իսկ Հայաստանի նորանկախ Հանրապետությունը, հարգելով միլիոնավոր նահատակների հիշատակը, հատուկ օրենքով ապրիլի 24-ը հայտարարեց ոչ աշխատանքային օր:*

*1988 թվականին ցեղասպանությունը կրկնվեց Սումգայիթում, անմեղ ու անզեն հայերի նկատմամբ, որն իր վայրագությամբ չէր զիջում Մեծ Եղեռնին: Այն տարածվեց Բաքու, Կիրովաբադ, Արցախ և Ադրբեջանի այլ շրջաններ, որի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է այն ժամանակվա Խորհրդային Միության ղեկավար Միխայիլ Գորբաչովի վրա:*

*Առաջին հաջողություններով արբեցած ազերիները չհասան Արցախը հայաթափելու իրենց նպատակին: Դրան հակառակ, հայերը համախմբվելով ոչ միայն պաշտպանվեցին, այլ նաև ազատագրեցին Արցախը՝ այն հայտարարելով անկախ պետություն, որի գոյատևումը կախված է հայ ժողովրդի միասնությունից:*

*83 տարի անցավ: Միայն սուգ ու աղոթք անելով չենք հասնի մեր նպատակին: Հայաստան-Սփյուռք, համախմբվելով, միասնական ուժով, ցեղասպանության հարցը պետք է բարձրացնի միջազգային ատյաններում, այն ընդունել տալու բոլոր պետություններին, այնուհետև ներկայացնելու ՄԱԿ-ին: Այս ուղղությամբ որքան շատ փաստեր հավաքենք Եղեռնի մասին, այնքան կհեշտանա այդ գործը: Ականատեսների բավական վկայություններ հավաքված են: Դժբախտաբար, դրանց հավաքումը ժամանակին չսկսվեց, վերապրողների մեծ մասը հեռացան մեզանից, իրենց հետ տանելով դրանք: Բայց մխիթարականն այն է, որ հեռացողներից շատերը իրենց ականատեսի հուշերը պատմել են ժառանգներին, որոնք էլ պետք է թղթին հանձնեն դրանք, շարունակվող Հայ դատի պայքարում օգտագործելու համար:*

*Ահա այդպիսի աշխատանքի է լծված ՊՀՄ-ի վարչությունը՝ փրկել ականատեսների հուշերի վերջին մնացորդները, որոնցով կհրատարակվի մի գիրք մեր բնօրրանի այդ շրջանի՝ Բեյլանի և նրա շրջակա բնակավայրերի մասին:*

*Օգտվելով առիթից, խնդրում եմ բեյլանցի և ոչ-բեյլանցի հայրենակիցներին, որպեսզի այդ առթիվ իրենց հուշագրերը հանձնեն վարչությանը, դրանք ընդգրկելու համար սույն գրքում:*

*Այսօր հայը կորցնում է իր դեմքը Սփյուռքում և Ամերիկայի նման քրիստոնյա երկրներում՝ առավել ևս: Լոս Անջելեսում նոր սերունդը, բացառությամբ մի չնչին մասի, սովորում է ամերիկյան դպրոցներում ու չիմանալով հայերեն գրել-կարդալ, հեռանում է իր արմատներից: Նրան բոլորովին չի հետաքրքրում իր պապերի երկիրն ու հայոց գողգոթան: Այս առումով, իհարկե, կան նաև դժվարություններ. հայկական դպրոցները քիչ են, և նրանց սակերն էլ մատչելի չեն բոլորին: Շատերն էլ մտածում են, որ երեխան միայն անգլերեն լավ պիտի իմանա ուսումը շարունակելու համար համալսարանում: Սակայն պետք է ընդունել, որ հայկական դպրոցների աշակերտները նույնպես լավ են տիրապետում անգլերենին:*

*Իհարկե, դեռ ամեն ինչ կորած չէ, և մենք Հայ դատի ջահը պետք է փոխանցենք նոր սերունդին, որպեսզի նա շարունակի պայքարը դրա արդար լուծման համար: Դրա համար պետք է նրա մեջ հայկականություն սերմանել, որն սկսում է ընտանիքից: Նա չպետք է մոռանա իր բնօրրանը: Երեխաներին պետք է հայերեն գրելկարդալ սովորեցնել տանը և շաբաթօրյա դպրոցներում: Նրանց հայ պահելու բեռը, ինչպես միշտ, հիմնականում ընկնում է ծնողների վրա:*

*Այսօր ուրախալի երևույթ էլ կա, որ ամերիկյան համալսարաններում բազմաթիվ հայ ուսանողներ են սովորում, որոնք, դաստիարակված լինելով հայկական ոգով, ստեղծել են ուսանողական միություններ՝ հոգալու համար հայ աշակերտների հոգսերը դպրոցներում և նվիրված են Հայ դատի պայքարին:*



*Համայնքի կազմակերպությունների պարտականություններն են՝ համադրել իրենց աշխատանքները ուսանողական միությունների հետ, ավելի արդյունավետ դարձնելու համար դրանք:*

*Մենք պետք է վստահենք և օգնենք մեր երիտասարդությանը՝ լուսավոր ապագան կերտողին:*

*Մեծ Եղեռնից հետո մեր բնօրրանում լռեցին եկեղեցիների զանգերի ղողանջները, որովհետև դրանց մեծ մասը ոչնչացվեց: Բայց Սփյուռքում հայը կառուցեց նոր եկեղեցիներ, ու նորից սկսեցին ղողանջել դրանք: Մենք մեծ հույսով ու հավատքով լցված, վստահ ենք, որ այդ ղողանջները պիտի շարունակվեն և վաղ թե ուշ դրանք պիտի լսենք մեր բնօրրանում՝ մեր կորցրած Հայրենիքում:*

*Զանգերի ղողանջները երբեք չեն լռելու ի հարատևություն մեր ազգի ու պետականության:*

*Հարգա՛նք նահատակների հիշատակին:*

*Թող կեցցե՛ հայ ժողովուրդն իր անկախ պետականությամբ:*

***Այս առթիվ մամուլում լույս տեսած Հոդվածը[1] մեջբերվում է:***

*ՀՈՒՇ-ԵՐԵԿՈ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 83-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԹԻՎ*

*ՊՀՄ-ի վարչությունը ամեն տարի նշում է 1915 թ. Մեծ Եղեռնի, 1988 թ. Սումգայիթի, 1989 թ. Բաքվի և Կիրովաբադի, 1988 թ. երկրաշարժի և Արցախյան ազատամարտում ընկած կոհերի հիշատակը:*

*Այս տարի նա կազմակերպեց հուշ-երեկո, որը տեղի ունեցավ երեքշաբթի, ապրիլ 21, 1998-ին, Սրբ. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցում:*

*Վարչության փոխատենապետ, շնորհալի արվեստագետ Արա Պետրոսյանի բեմադրությամբ և երաժշտական ձևավորումով, երեք ամսվա տքնաջան աշխատանքի արդյունքը՝ Պարույր Սևակի «Անլռելի Զանգակատունը» ներկայացվեց հայրենակիցների դատին: Բեմադրության մեջ ընդգրկված էին բեյլանցիների կրտսեր, միջին և ավագ սերնդի սիրողական պավակները, որոնց հետ մեծ աշխատանք տարավ Արան: Նրանք էին՝ Թերջանյան Մարի, Հարությունյան Էլիզաբեթ, Մարաշլյան Անի, Մարաշլյան Մուշեղ, Մարոնյան Եղիսաբեթ, Մարոնյան Սեդա, Մկրտչյան Նարինե, Պետրոսյան Վահագն, Սարգսյան Ռուզաննա, Օզարյան Գրիգոր, և Օզարյան Վալենտինա: Գրիգորն ու դուստրը՝ Վալենտինան բեյլանցի չեն, բայց սիրահոժար ցանկությամբ մասնակցեցին այս ձեռնարկին:*

*Հուշ-երեկոյին իր մասնակցությունը բերեց նաև Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հյուպատոս Արմեն Մելքոնյանը, իր աշխատակազմով:*

*Եկեղեցու խորանի առջև 2x3 մետրի վրա, ամբողջ հասակով Կոմիտասի գծանկարն էր, որը մեծ սիրով միությանը նվիրեց շնորհալի նկարիչ Խաչիկ Մասարճյանը: Սրահում ասեղ գցելու տեղ չկար: Վերապրողները և նրանց սերունդը եկել էին իրենց հարգանքի տուրքը մատուցելու նահատակների հիշատակին:*

*Հանդիսավար Արա Պետրոսյանը հուշատոնը հայտարարեց բացված և բարի գալուստի խոսքից հետո, բեմ հրավիրեց ինձ:*

*Իմ ելույթից հետո սրահում լույսերը մարեցին և խորհրդավոր մթության մեջ, վառված մոմերով բեմին մոտեցան ասմունքողները, և սկսեց խոսել Անլռելի զանգակատունը, որը տևեց մոտ մեկ ժամ, և սրահը քար կտրած, առանց ծպտունի ապրեց այդ պահը ասմունքողների հետ:*

*Երբ այն վերջացավ, և լույսերը վառվեցին, գնահատանքի ծափահարու-*

---

***1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Ուրբաթ, Մայիս 1, 1998, թիվ 74:***



Մեծ նըհոնի 83-րդ տարեդեցին նվիրված երեկոյում: Ձախից աջ՝ Ռուզաննա Սարգսյան, Սարգիս Գյոզալյան, Եղիսաբեթ Մարոնյան, Մարտիրոս Էքչիյան, ՀՀ Գլխավոր հյուպատոս Արմեն Մելքոնյան, Վալենտինա Օգարյան, Էլիզաբեթ Հարությունյան, Վահան Բահարյան, Սյուզի Հեքիմյան, Գրիգոր Դովլաթյան և Մարի Թերզյանյան:

թյունները երկար փնեցին:

Բեմադրության մասնակիցներն արժանի են ավելիին, մանավանդ, որ նրանց մեջ կային աամուլեքողներ, որոնք հայերեն կարդալ-գրել չգիտեին: Նրանք սիրով հանձն առան այս դժվար գործը և մեծ ավյունով կատարեցին այն, գեղեցիկ հուշ թողնելով ներկաների ներքնաշխարհում: Իսկ Արայի գործը կարելի է որակել գերազանց:

Այնուհետև բեմ հրավիրվեց Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հյուպատոս Արմեն Մելքոնյանը: Նա բարձր գնահատեց հուշ-երեկոն՝ նշելով, որ այն բարձր մակարդակով էր կազմակերպված, սրտաբուխ ներկայացում էր, որ այսօր Հայրենիքում և աշխարհի բոլոր երկրներում, ուր հայեր կան, նշվում է ցեղասպանության օրը, և Հայ դատի գլխավոր խնդիրն է հայոց ցեղասպանությունը ճանաչել տալ միջազգային ատյաններում: Իսկ այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ է, որ Հայրենիքն ու Սփյուռքը միասին գործեն, իսկ այստեղ՝ Լոս Անջելեսում, միասնական ընդհանուր համահավաք լինի, որպեսզի մենք կարողանանք օտարներին ցույց տալ մեր միասնական ոգին: Նա շնորհակալություն հայտնեց ԴՀՄ-ի վարչությանը, սույն գեղեցիկ միջոցառումը կազմակերպելու համար:

Հոգեհանգստյան արարողությունից առաջ, իր խոսքն ասաց եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Մանուկ Մարգարյանը: Նա ներկաների անունից շնորհակալություն հայտնեց վարչությանը միջոցառման համար և նշեց, որ եկեղեցական կյանքում կա երկու օր, որ պատգամ կամ քարոզ չեն տալիս՝ Քրիստոսի Սրբ. Ծննդյան և Սրբ. Հարության օրերը: Այդ օրերը յուրաքանչյուրն ապրում է իր հոգում: Այսօրվա ձեռնարկը նման է նրանց և, եթե արտասանողների հետ բոլորս ապրեցինք անցյալը հիշեցնող այդ կցացմունքները, ուրեմն այսօրվա ձեռնարկը հաղթանակն է մեր լավատեսու-



թյան: Նա եկեղեցականների շքախմբով կատարեց հոգեհանգստյան արարողությունը, որից հետո տեղի ունեցավ հյուրասիրություն:

Վարչությունը իր շնորհակալությունն է հայտնում Սրբ. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցու հովիվ Տեր Մանուկ Մարգարյանին, որ եկեղեցին և նրա սրահը սիրով տրամադրեց միությանը, և իր օգնությունը չխնայեց ձեռնարկի իրականացման համար:

Շնորհակալություն՝ ՀՀ Գլխավոր հյուպատոս Արմեն Մելքոնյանին և իր աշխատակազմին, որ հարգելով վարչության հրավերը, իրենց սուղ ժամանակը տրամադրեցին ու ներկա եղան ձեռնարկին:

Շնորհակալություն Խաչիկ Մասարճյանին՝ Կոմիտասի գեղեցիկ գծանկարի համար, Հովհաննես Ջափարյանին՝ միջոցառումը անհատույց տեսանկարելու համար, Աբրահամ Կարադանյանին՝ ձայնային գործիքների հատկացման, տեղադրման և կարգավորման համար, ներկայացման մասնակցող աամուլեքողներին և ղեկավարին:

Վերջապես շնորհակալություն հայրենակիցներին, որոնք իրենց ներկայությամբ հարգեցին նահատակների հիշատակը, օգնողներին՝ լինեն վարչության կամ Տիկնանց հանձնախմբի անդամ, թե կողմնակի անհատներ, որոնք նպաստեցին ձեռնարկի հաջողությանը:

5-18-98 Թ. ՎՆ-ում Հայտարարվեց, որ Համակարգիչը, փաքսի և լուսապատճենաՀանման սարքերը գնված են: Նորից Հիշեցվեց Հայրենակիցների Հասցեները Հավաքելու մասին, դրանք մտցնելու Համար Համակարգչի մեջ:

Այս նիստում որոշվեց Ավետիս Փափազյանի Հետ պարզաբանել Ալիշան Պայրամյանի Հրատարակության պատրաստ ձեռագրի գրքի Հրատարակության կազմակերպչական Հարցերը:

Այստեղ ընթերցողին եմ ներկայացնում Մարտիրոս Էքչյանի շնորՀակալական երկտողը վարչականներին: Այն գրված է սույն նիստի արձանագրության մեջ որպես Հ. Գ.

Հ. Գ.- Իմ շատ սիրելի գործընկերներ, թույլ տվեք ինձ իմ խորին երախտագիտությունը հայտնելու ձեվ՝ ԴՀՄ-ի վարչության անդամներին, քրոջս՝ Մարիցա Մարգարյանի հուղարկավորության, թաղումի և յոթ-քառասունքի արարողությունների մասնակից լինելու կապակցությամբ:

Ձեր ներկայությամբ, մարդկային անկեղծ հոգու վեհությամբ ցուցաբերած կարեկցանքը գնահատում եմ որպես ականվագույն արարք, որը չի փոխարինվում որևէ արժեչափով:

Շնորհակալություն բոլորին: (Ստորագրություն):

Իմ ատենապետությունը՝ սկսած օրվանից, միության աշխատանքային գործունեության Համար իմ անձնական Հեռախոսով կատարած բոլոր Հեռախոսային խոսակցությունների դիմաց, եթե դրանք մեծ գումարներ չէին կազմում, չէի պաՀանջում: Դա Համարում էի իմ փոքրիկ ներդրումը, մանավանդ, որ աշխատում էի և նյութապես ապաՀովված էի: Բայց երբ աշխատանքից դուրս եկա, միության կողմից մի քանի անգամ վճարվեց ինձ ընդՀանուր ծախսերի Համար:

Երբ Համակարգիչը գնեցինք, Համացանցի (ինտերնետ) Հա-

մար երկրորդ հեռախոսային գիծը միացրեցինք, և ծախսերը ավելացան: Ուստի խոստացա ամեն ամիս ներկայացնել ծախսերը վարչությանը, որն արժանացավ վարչականների հավանությանը:

Սույն նիստում հավանություն տրվեց Ալիշան Պայրամյանի գրքի առթիվ գրած նամակիս (տե՛ս հավելված էջ 483):

Արվեստագետ Ռազմիկ Մաղոյանից 7-16-98 թվակիր նամակ ստացա, որով ինձ հրավիրում էր «Գյումրի Հայրենակցական միություն» ստեղծելու նպատակով կազմակերպված հիմնադիր ժողովին՝ նկատի ունենալով նաև, որ խոսք կասեմ ՀՄՄՄ-ի և ՊՀՄ-ի անունից: Նա նաև զանգահարեց այդ հարցով: Ընդառաջելով հրավերին՝ ներկա եղա ժողովին: Ժողովը սկսվեց ժամը 4-ին: Վարչություն ընտրվեց և սկսվեց ԾԿ-ի նախագծի քննարկումը: Պարզվեց, որ ելույթ ունենալու համար հրավիրված անձինք իրենց խոսքը պետք է ասեն ԾԿ-ի քննարկումից հետո: Կեսգիշերին մոտ դեռ պարզ չէր, թե երբ կվերջանա քննարկումը, ներողություն խնդրելով դուրս եկա սրահից:

Պապ Շամլյանին ուղարկված նամակը տե՛ս հավելված էջ484:

Այս կապակցությամբ Մամուլում լույս տեսած գրությունը[1] ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը:

ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ՝
ԶՕՐԱՎԻԳ ԱՐԱՐԱՏ ՏԱՐԵՑՆԵՐՈՒ ՏԱՆ

Լոս Անճելըսի Արարատ տարեցներու տունը երկար տարիներէ ի վեր իսկական Ովասիս մը դարձեր է շրջանիս ողջ հայութեան համար: Արարատ Տան մէջ կը հոգացուին մեր տարեց հայրերն ու մայրերը, որոնք միջոցները չունին թերեւս լաւապէս հոգացուելու իրենց տուներուն մէջ:

Ամէն ամսուան առաջին երեքշաբթի օրերը, որոշ տօնախմբութիւն կը տրեղծուի Արարատ Տան մէջ: Արուեստագէտներ կու գան ճոխացնելու կէսօրուան ճաշը, որին կը մասնակցին դուրսէն եկած հիւրեր: Այս հանդիպումը կ'ունենայ չորս հովանաւորներ, որոնք 300-ական դոլար գումարով իրենց ներդրումը կը կատարեն այս ձեռնարկներուն:

Յառաջիկայ Սեպտեմբեր 1-ին տեղի ունենալիք հաւաքոյթին հովանաւորն է ՊՀՄ-ն, որ նաեւ մօտ հարիւր հիւրերով իր նպաստը պիտի բերէ Արարատ Տան ծրագրին:

Գնահատելի է Պէյլանի Միութեան վարչութեան այս քայլը, որ մեծապէս պիտի սատարէ միութիւններու աշխուժացումին և անոնց՝ Արարատ Տան նման հաստատութեան մը յօրավիգ հանդիսանալուն:

Մենք կը շնորհաւորենք Պէյլանի Հայրենակցական Միութեան վարչութիւնը և յաջողութիւն կը ցանկանանք անոնց ազգօգուտ գործունէութեան:

8-06-98 թ. նիստում վարչությունը քննարկեց Նիկոլայ Հովհաննիսյանից ստացված 8-03-98 թվակիր նամակը, Ալիշան Պայրամյանի գրքի հրատարակության առնչությամբ և որոշեց

1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Զորեքշ., Օգոստոս 19, 1998, թիվ 149:



իրականացնել այն՝ 2000 դոլարը ուղարկելով (1000 դոլարը գավակների կողմից) (այս հարցով ուղարկված նամակը տե՛ս հավելված էջ485): 8-27-98 թվակիր նամակով հայտնվում էր փողի ստացումը:

Արա Պետրոսյանի մայրը կազմակերպեց Արայի 55-ամյակը 8-28-98 թ.՝ անակնկալ մատուցելով նրան, որին մեծ սիրով մասնակցեցի, իմ կողմից անհրաժեշտ օգնությամբ, կատարելով նաև այդ օրվա հանդիսավարի պարտականությունը: Այդ առթիվ ՊՀՄ-ի վարչության կողմից նրան նվիրվեց հուշատախտակ.

Սույնը տրվում է փոխատենապետ Արա Պետրոսյանին
իր 55-ամյակի առիթով, ինչպես նաև նկատի ունենալով անքասիր և նվիրված աշխատանքը վարչության մեջ:

ՊՀՄ-ի Վարչություն, Լոս Անջելես, 8-28-98 թ.

Սեպտեմբեր 1-ի Արարատ Տան միջոցառման գեղարվեստական հայտագիրը վարչության քննարկման չներկայացնելու համար, 8-20-98 թ. ՎՆ-ում Սեդա Հայրիյանը (Կվրյանը) «թեթևակի մեղադրվեց» (ըստ գրված արձանագրության): Հայտագրում չի գրված, որ այն հովանավորում է ՊՀՄ-ն: Միջոցառման առթիվ ելույթս մեջբերվում է:

ԵԼՈՒՅԹ ԱՐԱՐԱՏ ՏԱՆ ՃԱՇԻ (LUNCHEONE) ԱՌԹԻՎ 09-01-98,

Բարև ձեզ հարգելի հայրենակիցներ,

ՊՀՄ-ն, ընդառաջելով Արարատ Տան տնօրեն պրն. Պապ Շամլյանի առաջարկին, հովանավորեց այսօրվա ճաշը: Արարատ Տունը կարևորություն ունի հայ իրականության մեջ, ուր հանգիստ կյանք են վայելում մեր տատիկներն ու պապիկները, միգուցե մի օր էլ մենք հայտնվենք այստեղ:

Ուրախանում ենք Արարատ Տան հաջողություններով: Հանձին Պապ Շամլյանի, մարդասիրական այս հաստատությունը գտնվում է ամերիկյան կառավարության ուշադրության կենտրոնում: Վերջերս նրա հիվանդապահների կայմը արժանացավ Կալիֆորնիայի նահանգի «լավագույն գործունեության» մրցանակին: Նահանգի 1,400 Տարեցների Տներից միայն հինգն են ստացել այդ մրցանակը 1998 թ., որոնց թվում է հայկական Արարատ Տունը: Շնորհավորում ենք:

Բեյլանցիները հոծ քայմությամբ մասնակցությունն են բերել այսօրվա ձեռնարկին: Ուզում եմ ծանոթացնել ձեզ բեյլանցիների հետ:

Բեյլանցիները Կիլիկիայի Սանջաքի Իսկենդերունի շրջանի ժողովուրդ են, որոնք 1939 թ., հաստատվեցին Լիբանանի Սուր քաղաքի մոտակայքում, երբ Ֆրանսիական կառավարությունը մեր պապենական հողերը հանձնեց Թուրքիային: 1946 թ., նրանց մեծամասնությունը ներգաղթեց Հայաստան և այնտեղից էլ վերջին տասնամյակներում Ամերիկա:

Պէյլանի հայրենակցական միությունը ստեղծվեց 1986 թ. Մայիսի 7-ին, 17 հիմնադիր անդամների կողմից, և հիմք դրվեց հայապահպանման գործընթացին սատարող մի կազմակերպության ևս:

Իր գործունեության ընթացքում միությունը իրականացնում է հայապահպանման գործունեություն, կազմակերպելով տարբեր միջոցառումներ և հովանավորելով մշակութային, գրական ու արվեստի երեկոներ:



Արարատ Տան Դյուքմենջյան սրահում: Ձախից աջ՝ Հովսեփ Գասպարյան, Արդա Մանուկյան, Վահան Բահարյան, Պապ Շամլյան, Սեդա Հայրիյան, Սյուզի Հեքիմյան, Արա Պետրոսյան, Մարտիրոս Էքշիյան և Լուիզա Կվրյան:

Նա Հայաստանի պետականության հետ է և նեցուկ է կանգնում նրա գործունեությանը և՛ նյութապես, և՛ բարոյապես: Նյութական օգնություն է ցույց տալիս Հայաստանի կարիքավոր ընտանիքներին, ինչպես նաև Լոս Անջելեսի դպրոցներին ու եկեղեցիներին:

Սա է ՊՀՄ-յան գործունեության հիմնական շրջանակները: Այսօրվա ճաշի հովանավորությունը իր հայանպաստ գործունեության մի մասն է:

Շնորհակալություն ուշադրության համար:

**Միջոցառումն անցավ բարձր մակարդակով: Այդ առթիվ ՊՀՄ-ի վարչությանը ուղղված իր շնորհակալական բացիկով Արարատ Տան ղեկավարությունը երախտագիտությունն էր հայտնում վարչությանը՝ շեշտելով, որ, նեցուկ կանգնելով Արարատ Տան գործունեությանը, ընդարձակվում է նրա շառավիղը, ստեղծվում են նոր տեղեր, որպեսզի ավելի շատ հայ պապիկներ և տատիկներ հնարավորություն ունենան իրենց վերջալույսի երջանիկ օրերը անցկացնելու այնտեղ:**

**Միջոցառման մասին գրեցի հետևյալ հոդվածը:**

Ի ՆՊԱՍՏ «ԱՐԱՐԱՏ ՏԱՆ»

ՊՀՍՎ-ն աշխատում է ընդարձակել իր գործունեությունը հայապահպանման գործընթացում և ուրախ է, որ կարողանում է իր փոքր լուման ներդնել ի նպաստ հայ ժողովրդի:

Ընդառաջելով «Արարատ Տան» տնօրեն Պապ Շամլյանի առաջարկին (Տիկնանց հանձնախմբի ատենապետուհի Սյուզի Հեքիմյանի միջոցով), ՊՀՄ-ն հովանավորեց սույն թվի սեպտեմբեր 1-ի, երեքշաբթի օրվա կեսօրվա ճաշը:

Շատ ուրախ ենք նաև, որ «Արարատ Տան» կողմից 99 մահճակալներ և այլ հիվանդանոցային սարքեր են նվիրված Հայաստանի երեք հիվանդանոցների երեխաների բաժանմունքներին, որոնք փոխադրված են Երևան Միացյալ հայկական ֆոնդի միջոցով: Տնօրենը ասաց, որ ուղարկված օգտագործված մահճակալների որոշ քանակը փոխարինված են լրիվ նորերով և ձեռնարկի ժամանակ, ցույց տվեց ՀԲԸՄ-ի նախագահ Լուիզ Մանուկյանի նամակը, որը հայտնում էր, թե դրանք հասել են Երևան և բաժանվել ըստ պատկանելիության: Այնուհետև նա ասաց, որ տարեցները ստանում են 700 դոլար թոշակ, իսկ յուրաքանչյուրի ծախսը նայում է 900 դոլարի, հետևաբար, լրացուցիչ գումարները հայթայթում են հայ ազգայինները և կազմակերպված այսպիսի ձեռնարկները:

ՊՀՄ-ի վարչությունը շատ ուրախ է, որ հոծ բազմությամբ իր մասնակցությունը բերեց այս ձեռնարկին, որին ներկա էին մոտ 400 հոգի, և հասավ իր նպատակին՝ «Արարատ Տան»ն օգնելու գործում:

Ելույթից հետո սկսվեց գեղարվեստական մասը, որը ղեկավարում էր Տիկնանց հանձնախմբի անդամ, «Կարկաչ» հեռուստաժամի պատասխանատու՝ Սեդա Հայրիյանը:

Ելույթ ունեցան 8 տարեկան և արդեն մրցանակներ շահած Ալին Մելիք-Ադամյանը (դաշնամուր), 11 տարեկան ակորդեոնիստ Գրիգոր Առաքելյանը և 14 տարեկան Միլեն Հայրիյանը, դարձյալ մրցանակներ շահած, որը ներկաներին հիացրեց իր հուզմունքով լեցուն երկու ասմունքներով՝ Պարույր Սևակի «Մենք քիչ ենք, բայց մեզ հայ են կոչում» բանաստեղծության անգլերեն թարգմանությամբ և Հովհաննես Շիրազի «Հայոց լեզուն» բանաստեղծության կատարմամբ:

Սեդա Հայրիյանի վարած գեղարվեստական հայտագիրը արժանացավ ներկաների բարձր գնահատականին:

Ամենահետաքրքրականն այն էր, որ վիճակահանությունից երեք շահողներ իրենց շահած նվերները նվիրեցին Ալինին, Միլենին և Գրիգորին, ավելի արժեքավորելով ու գնահատելով նրանց ելույթները:

Պապ Շամլյանը այնքան էր ոգևորված ձեռնարկի հաջողությունից, որ միությանը հրավիրեց նորից հովանավորելու ու իր նպաստը բերելու այս կարևոր հաստատությանը:

Վարչությունը շնորհակալություն է հայտնում Սյուզիին, Սեդային, վարչության և Տիկնանց հանձնախմբի այն անդամներին, որոնք իրենց ջանքերը չխնայեցին միջոցառման հաջողության համար, ինչպես նաև «Արարատ Տան» տնօրինությանը, համագործակցելով այսպիսի մի գեղեցիկ ձեռնարկ իրագործելու համար: Վարձքերնիդ ի կատար, բեյլանցիներ[1]:

**9-14-98 թ. նիստում վարչության քննարկմանը ներկայացրեցի ՀՄՄՄ-ում տեղի ունեցած դեպքերը վերընտրության ընթացքում: Վարչությունը, քննարկելով այն, որոշում ընդունեց այլևս չմասնակցել ՀՄՄՄ-ի աշխատանքներին (ըստ արձանագրության) «... սպասելով պարզաբանող գրավոր բացատրության Միացյալ Մարմնի կողմից», իսկ ես խոստացա մանրամասնությունները գրավոր ներկայացնել հաջորդ նիստերին:**

1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Սեպտ. 11, 1998, թիվ 165 էջ 8: Որոշ մասեր, որոնք կրկնվում են, ելույթից հանված են:

**11-06-98 Թվակիր նամակով պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանը տեղեկացնում էր գրքի հրատարական մասին:**

**11-14-98 Թ. ՃՊ-ում նախագահողներին տրվեց հուշատախտակ.**

Սույնը տրվում է տեր և տիկին Նուբար և Տիգրանուհի Մխսի-Գևորգյաններին ի գնահատանք նրանց ակտիվ մասնակցության միության գործունեությանը և այս տարվա ՃՊ-ի նախագահությունը ստանձնելու առթիվ:

ՊՀՄ-ի Վարչություն, նոյեմբեր 14, 1998 թ., Լոս Անջելես:

**ՃՊ-ի ելույթից մեջբերվում են որոշ հատվածներ:**

... Նուբարը մեր միության հիմնադիր անդամներից է և առաջին վարչության գանձապահը: Նա ընտանիքով հայրենասեր է և իր հնարավորության սահմաններում օգնում է Հայրենիքին: ...

Սիրելի հայրենակիցներ, միությունը նախաձեռնել է դժվարին, բայց գնահատելի գործ՝ մի գիրք հրատարակել Բեյլանի և նրա շրջակա գյուղերի մասին, որն իր մեջ կընդգրկի նաև Իսկենդերունը, Գըրըզ Խանը և Անտիոքը: Այս գրքի հրատարակումը կախված է բեյլանցիներից: Վարչությունը խնդրում է բոլորին, որ այդ բնակավայրերի մասին ձեր հուշերը գրեք և հանձնեք նրան: Եթե դրանք չլինեն, գրքի հրատարակությունը անիմաստ կլինի: ...Բնակավայրերի մասին մեր տեղեկությունները գնալով նոսրանում են, քանի որ դրանց աղբյուրը՝ մեր պապերն ու տատերը, մեր ծնողները հեռանում են և մի քանի տարի հետո շատ ուշ կլինի, որովհետև կկորցնենք այդ հուշերից մնացած փշրանքները ևս: ՊՀՄ-ի մեկենասությամբ Երևանում այս օրերին լույս տեսավ նաև «Ալեքսանդրետի Սանջաքի Հարցը և Միջազգային Դիվանագիտությունը 1936-1939 թթ.» գիրքը՝ հեղինակությամբ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության Ինստիտուտի գիտաշխատող Ալիշան Դայրամյանի, որի մեջ հույս ունենք, որ բավական նյութեր կլինեն օգտագործելու հրատարակվելիք գրքում:

**ՃՊ-ի ժամանակ, երբ խոսքը տրվեց Նուբարին, նա հարցրեց, թե որքա՞ն կարող է խոսել, միամտորեն ասացի որքան ուզում է: Նա խոսեց մոտ 45 րոպե: Ժողովուրդը սկսեց դժգոհել, չորս կողմից զգուշացրեցինք և հազիվ վերջ տվեց:**

**Սեպտեմբեր 11, 1998 Թվակիր նամակով ՀՄՄՄ-ն հայտնում էր տեղի ունեցած «վերընտրության» մասին՝ ՊՀՄ-ի վարչությանը խնդրելով մասնակցել նրա աշխատանքներին:**

**Այս առիթով ՊՀՄ-ի վարչությանը գրած իմ բացատրականը կրում է 11-25-98 Թվականը: Ահա այն.**

ՀԱՐԳԵԼԻ ՎԱՐՉԱԿԱՆՆԵՐ

Որպես ՀՄՄՄ-ի փոխատենապետ և նրա կապում ՊՀՄ-ի վարչության ներկայացուցիչ, վարչությանը ամփոփ կերպով ներկայացնում եմ ՀՄՄՄ-ում տեղի ունեցած իրադարձությունները՝ նշելով, որ ՊՀՄ-ն չխնայեց իր ջանքերը ՀՄՄՄ-ի կազմավորման գործում և նրա ստեղծման առաջին օրից մինչև այսօր շատ ակտիվ մասնակցություն է ունենում նրա աշխատանքներին՝ միասնական ուժերով սատարելու հայապահպանման գործընթացին Սփյուռքում և հատկապես Լոս Անջելեսում ու օգտակար լինելու մեր Հայրենիքին:

Վերջին ժամանակաշրջանի իրադարձությունները ցույց են տալիս, որ ՀՄՄՄ-ի ատենապետ Գրիգոր Շենյանն իր անձնական հարցերը խառնում





**Հուշատախտակի հանձնում: Ձախից աջ՝ Արա Պետրոսյան, Հովսեփ Գասպարյան, Վահան Բահարյան, Տիգրանուհի և Նուպար Մխսի-Գևորգյան, Գրիգոր Դովլաթյան, Հակոբ Խորչիդյան և Սյուզի Հեքիմյան:**

է միութենական գործունեության հետ, որի հետևանքը եղավ ՀՄՄՄ-ի և Լոս Անջելեսի Հայկական Կազմակերպությունների Միացյալ Մարմնի (ԼԱՀԿՄՄ) խզումը և այս տարի (1998 թ.) առանձին-առանձին ապրիլյան հուշատոն կազմակերպելը, ինչպես նաև նրա անպատշաճ հոդվածը այդ կազմակերպության ատենապետ Բարսեղ Քարթալյանի մասին, առանց ՀՄՄՄ-ի վարչական նիստում քննարկելու այդ, որը վրդովմունք առաջացրեց նրա մեջ: Այստեղ, ի միջի այլոց նշենք, որ այդ կազմակերպության դիվանը ստեղծվեց ՀՄՄՄ-ի ներկայացուցիչներ Գրիգոր Շենյանի, տողերիս հեղինակի, Նուպար Հակոբյանի, Մարտիրոս Իսկենդերյանի միջոցով, որտեղ գլխավոր դերակատարն էր Գրիգոր Շենյանը, և այսօր հանկարծ չգիտեմ ինչ անձնական հաշիվներից ելնելով՝ նա վարկաբեկում է ԼԱՀԿՄՄ-ին և նրա ատենապետին՝ առանց ՀՄՄՄ-ի անդամների գիտության: Շատ ավելի լավ կլիներ, որ նա իր խմբագրած թերթը օգտագործեր ո՛չ թե միությունների միասնությունը քայքայելու, այլ այն ամրապնդելու նպատակով...:

Ճիշտ է, որ ՀՄՄՄ-ն նախատեսել էր ապրիլյան հուշատոնը, իսկ ԼԱՀԿՄՄ-ն պետք է այն նշեր Մոնթեբելլոյի հայ նահատակների հուշարձանի մոտ (ըստ Գրիգոր Շենյանի հայտարարության ՀՄՄՄ-ի նիստում), սակայն հանգամանքների բերումով ԼԱՀԿՄՄ-ն, Մարտիրոս Իսկենտերյանի միջնորդությամբ, ՀՄՄՄ-ի ատենապետ Գրիգոր Շենյանին առաջարկել էր միասին կազմակերպել այն որպես մի կազմակերպություն, որը և էր, ինչպես անցյալ տարի, բայց նա մերժել էր, ՀՄՄՄ-ի անդամներից գաղտնի էր պահել և այդ պատճառով նիստի օրակարգի նյութ էլ չդարձրեց այն: Ժամանակին Մարտիրոսը ևս գաղտնի էր պահել այդ հարցը վարչականներից: Վերջիններս այդ մասին տեղյակ եղան միայն ԼԱՀԿՄՄ-ի ապրիլյան հուշատոնի մասին թերթերում եղած հայտարարությունը կարդալուց հետո, հաջորդ օրը հարցը

դրի քննարկման ՀՄՄ-ի նիստում։ Վարչությունը որոշեց հուշատոնը միասին անել, բայց շատ ուշ էր, ԼԱՀԿՄՄ-ն արդեն սրահ էր վարձել։ Բնական է, որ ամբողջ պատասխանատվությունն ընկնում է ատենապետի վրա, որը Նախապետ Մելքոնյանի և Բարսեղ Քարթալյանի հետ իր անձնական հաշիվների հետևանքով վիժեցրեց միասնական ձեռնարկը։ Իսկ Բարսեղ Քարթալյանի մասին գրված հոդվածի մասին ոչ-ոք ակնարկություն չէր անում։

Ըստ ԾԿ-ի, ՀՄՄ-ի վերընտրությունները պետք է կատարվեն երկու տարին մեկ անգամ, և նույն դիվանը իրավունք ունի ընտրվելու երկու անգամ։ Գրիգոր Շենյանը ՀՄՄ-ի ատենապետն է դրա ստեղծման օրից (1991 թ.) և երեք շրջան մնացել է որպես ատենապետ վարչականների սիրահոժար կամքով, քանի որ Վահան Շամլյանը՝ որպես իր մանկական ընկերը, դառնալով ՀՄՄ-ի ցկյանս նախագահ, խոստացավ այն ապահովել կենտրոնով։ Նկատի ունենալով այս և միության գործունեության համեմատաբար բավարար աշխատանքը մինչև վերջին ժամանակները (նկատի չունենալով որոշ միությունների հեռանալը Շամլյանի գալուց հետո՝ կապված կուսակցական հարցերի հետ և մանրմունր թերությունները), վարչությունը հարկ չէր գտնում նոր ընտրություններ անցկացնել։ Սակայն վերոհիշյալ իրադարձությունները վարչականներին բերին այն համոզման, որ տարբեր կազմակերպությունների հետ միասնությունը ամրապնդելու համար անհրաժեշտ է փոփոխություն մտցնել դիվանի կազմում, փոխելով ՀՄՄ-ի ատենապետին։ Այս հարցը վարչականների մեջ հաճախ էր քննարկվում, բայց օրակարգի նյութ չէր դառնում։

Սույն թվականի Օգոստոսի 13-ի ՀՄՄ-ի հերթական նիստում Հաճընի հայրենակցական միության ատենապետ Մարտիրոս Իսկենդերյանը խոսք խնդրելով, արտահայտվեց ՀՄՄ-ի քայքայման մասին, քանի որ նրա ատենապետը իր անձնական հաշիվներից ելնելով ՀՄՄ-ի կապերը խզում է մյուս կազմակերպությունների և հատկապես ԼԱՀԿՄՄ-ի հետ, այսինքն, հայ համայնքում միասնությունն է քայքայում՝ նշելով նաև Բարսեղ Քարթալյանի մասին գրված անպատշաճ հոդվածը և հանկարծ առաջարկեց ատենապետին փոխել, Վահան Բահարյանին ընտրել ատենապետի պաշտոնում, որպեսզի միությունների միասնությունը վերականգնվի և ամրապնդվի ու միասնական գործընթացը շարունակվի։ Ես անակնկալի եկա և, անհարմար դրության մեջ ընկնելով, անմիջապես խոսք խնդրեցի՝ ասելով, որ դրա համար պետք է հատուկ նիստ հրավիրվի։ Որոշվեց սույն թվականի Օգոստոսի 27-ին արտահերթ նիստ հրավիրել վերընտրության համար։

ՀՄՄ-ի ստեղծման ժամանակ ընդգրկված 15 հայրենակցական միություններից, այսօր կազմում կան յոթ հայրենակցական և մեկ կրթասիրաց միություններ իրենց ներկայացուցիչներով (ըստ այբբենական կարգի).

1. Այնթապի՝ Երվանդ Պապայան (վարչական)։ Մի քանի անգամ է եկել և ի վիճակի չէ գալու, որովհետև տարիքով մեծ է, մեքենա չի վարում։
2. Զեյթունի՝ Սամվել Ալաջաջյան (ատենապետ)։
3. Յոզղաթի՝ Հովհաննես Երկանյան (ատենապետ), ոչ հաճախ է գալիս։
4. Կեսարիայի Կրթասիրաց՝ Զորջ Խտրյան (փոխատենապետ) և Մանվել Քեշիշյան (վարչական)։
5. Հաճընի՝ Մարտիրոս Իսկենդերյան (ատենապետ) և Հարություն Չոբանյան (փոխատենապետ)։
6. Չորք Մարզպանի՝ Նուպար Հակոբյան (ատենապետ) և Սարգիս Մաճառյան (վարչական)։



7. Պէյլանի՝ Բահարյան Վահան (ատենապետ) և Արա Պետրոսյան (փոխատենապետ)։
8. Քիլիսի՝ Գրիգոր Շենյան (վարչական)։

Յուրաքանչյուր միությունից երկու անդամ է մասնակցում ՀՄՄ-ի նիստերին, մեկը խորհրդակցական ձայնով։

Վերջերս ՀՄՄ-ի կազմից հեռացավ ՄՀՄ-ն, որի ուղարկած նամակը ՀՄՄ-ի հասցեով («Նոր Կեանք»ի խմբագրություն) այդպես էլ չկարդացվեց Միացյալ Մարմնի ժողովում և պատճառները չիմացանք։ Համենայնդեպս, ըստ իմ լսածի, նա դժգոհ էր ՀՄՄ-ի ազգային հարցերին նվիրված գործունեությունից։ Ըստ ԾԿ-ի՝ որևէ միության ներկայացուցիչ կարող է մնալ ՀՄՄ-ի կազմում, եթե ինքը այլևս տվյալ միության վարչության անդամ չէ, ըստ որի վերոհիշյալ միության վարչության նախկին ատենապետ Տիգրան Գայուստյանը մնում է միացյալ մարմնի կազմում։

ՀՄՄ-ի անդամներին նիստի հրավիրելու համար, չգիտեմ ինչու՞, «քարտուղարի» պարտականությունը միշտ ես եմ կատարել և այս անգամ էլ բոլորին հայտնեցի վերընտրության օրվա նիստի մասին մի օր առաջ։ Այս ժողովից բացակայում էին Սարգիս Մաճառյանը, Զորջ Խտրյանը և Մանվել Քեշիշյանը, Երվանդ Բաբայանը, Հովհաննես Երկանյանը, Մարտիրոս Իսկենդերյանը։ Այնթապի ՀՄ-ի կողմից երկու նոր ներկայացուցիչներ էին եկել վերընտրության մասնակցելու նպատակով՝ Մեսրոպյան և Էքմեքչյան, որոնք առաջին անգամ էին այստեղ ու չէի ճանաչում նրանց։ Կեսարիայի կրթասիրաց միության ատենապետուհին, որին երբեք չենք տեսել, հեռախոսով Նուպար Հակոբյանին հայտնում է, որ ընտրում է Գրիգոր Շենյանին։ Այս ձևով ընտրությունը Գրիգոր Շենյանը անվանում է «փոխանորդագրով» ընտրություն (ընտրության պարմանալի մի ձև, որը ո՛չ տրամաբանական է, ո՛չ հասկանալի)։ Իբր թե՝ «փոխանորդագրով» Գրիգոր Շենյանին են ընտրել նաև բացակա մյուս վարչականները, այդ թվում՝ Մարտիրոս Իսկենդերյանը, որն ինքն էր առաջարկել փոխել ատենապետին։ Ինչպես երևում է, նախորդ ժողովից հետո Գրիգոր Շենյանը, «բան ու գործ» թողած, «մշակել» է վարչականներին։ ՀՄՄ-ի անդամների բացակայությունների պատճառով նիստը հետաձգելու առաջարկին համաձայն չեղավ նա։ Իսկ ՀՄՄ-ի հիմնական անդամների բացակայությու՞նը..., կարո՞ղ է իմ նկատմամբ անհարմար զգացին, արդյո՞ք...։

Իբր այս արարքով Գրիգոր Շենյանը բացահայտեց, որ ինքը ՀՄՄ-ի հավերժական ատենապետն է, և բացի իրենից ոչ ոք իրավունք չունի նստելու այդ աթոռին մինչև իր մահը։

Մեր միության նպատակը ՀՄՄ-ի կազմում, հայրենասիրական աշխատանք կատարելն ու հայ ժողովրդին օգտակար լինելն է և ոչ թե համայնքի միասնությունը քայքայելը։ Կարևոր չէ, թե ատենապետը ով է։ Ո՛վ էլ լինի նա, նվիրված պետք է լինի ազգային գործունեությանը և երբեք չպետք է մտածի իր փառասիրության մասին։

ՀՄՄ-ի ատենապետին փոխելը բոլոր անդամներն էին ուզում, իսկ վերընտրության նիստից նրանք բացակայում էին։ Այդ օրը ամեն ինչ փոխվել էր։ Եթե ատենապետը չպիտի փոխվեր, ի՞նչ կարիք կար վերընտրություն կատարելու, առանձին նիստ հրավիրելով։ Նախորդ դեպքերի նման, առանց վերընտրական նիստի, բոլոր անդամների համաձայնությամբ կմնար նա, հարցը լուծված կլիներ, և այդ օրվա նիստի տհաճ երևույթները չէին լինի։ Տհաճ, որովհետև Գրիգոր Շենյանը ապացուցեց իր աթոռամոլությունը՝

հակասելով ինքն իրեն, որ հաճախ էր կրկնում, թե Միացյալ Մարմնի մեջ մոնոպոլիա չպետք է լինի, իսկ ինքը հայտարարում է, որ մեկ հեռախոսային կանչով կարող է դրամ բերել միությանը: Իր ատենապետության յոթ տարվա ընթացքում միայն **10000** բերեց, այն էլ «Լարք»ի հետ համագործակցելով համերգ տալու, և ըստ իր նախնական հաշիվների **10000** դոլար շահելու հույսով, իսկ հաշվետվությունից հետո պարզվեց, որ ՀՄՄՄ-ն մոտ **3000** դոլար վնաս է ունեցել այդ համերգից...:

Նրա մի կանչով փող բերելու հարցը կրկնեցին նաև Սամվել Ալաջաջյանը և Տիգրան Գալուստյանը[1]: Բայց ինչպես նշեցի, միության համար մի կանչով փող բերողը, 7 տարվա ընթացքում **10000** դոլար բերեց՝ կարծեմ Վաչե Մանուկյանից: Ստացվում է այնպես, որ միայն միությանը դրամ բերողը պետք է լինի ատենապետ, հոգ չէ, թե նա կարող է քայքայել համայնքի միասնությունը: Հետևաբար, եթե դրամ բերելու կարողություն ունեցող անդամը վարչական է, դրամ չպիտի բերի: Որտեղ մնաց մարդու ազգային գործունեությանը նվիրվածությունը: Փառասիրությունով ազգային գործունեություն չես կարող իրականացնել: Ազգային գործիչը իր համեստ պարտականությունները կկատարի, նրան ինչ պաշտոն էլ որ տրվի և երբեք իր պաշտոնը չի չարաշահի անձնականի համար մյուս կազմակերպությունների հետ կապը խզելով ի վնաս ազգայինի:

Հաճընի ՀՄ-ի փոխատենապետ Հարություն Չոբանյանը իր ելույթում շեշտեց, որ մենք անցյալ ժողովներին որոշեցինք ատենապետին փոխել և նոր ատենապետ ընտրել, որպեսզի այս մարմնի գործունեությունը ավելի աշխուժացնենք և բարելավենք հարաբերությունները մյուս միությունների հետ, վերականգնելով համերաշխությունն ու համատեղ գործունեությունը և մեր միության վարչությունը որոշեց ատենապետ Մարտիրոս Իսկենդերյանի թեկնածությունը առաջարկել, բայց այստեղ մթնոլորտը այնպես է փոխված, որ ավելորդ է այդ մասին խոսելն իսկ:

Երբ առարկեցի Գրիգոր Շենյանի ասածներին, նա, դառնալով անծանոթ Այնթապի ներկայացուցիչներին, ասաց. «Անոր ըսածները արժեք չեն ներկայացներ, ուշադրություն մի դարձնեք»: Ուրեմն յոթ տարվա իմ փոխատենապետի գործունեության ժամանակ, երբ ես կքած աշխատում էի ՀՄՄՄ-ի համար, իմ «ըսածները արժեք» կներկայացնեին, իսկ հիմա ոչ: Նույնիսկ կարգին ԾԿ չունեինք, այս տարի ինքս կազմեցի այն:

Այսպիսի անձնական արհամարհանքը և վիրավորանքը չէի կարող

---

1.- ՊՀՄ-ի ՀՄՄՄ-ի կազմից դուրս գալուց հետո, մի օր Ալիշան Պայրամյանին այցելեցի և, այնտեղ տեսնելով Տիգրան Գալուստյանին, անակնկալի եկա: Առ ի քաղաքավարութիւն բարեւեցի: Մի պահ, երբ երկուսով մնացինք, ասաց. «Ես քեզանից նեղացել եմ»: «Փոխանակ ես նեղանամ, դու ե՞ս նեղանում»,- պատասխանեցի: Նա, թե՝ «Զգիտե՞ս, որ Շենյանի շրջանակը զորավոր է, ինչո՞ւ դեմ գնացիր նրան»: Զարմացած՝ «Ի՞նչ անեի, խոնարհվե՞ի նրա առաջ»: Աշխատեցի հասկացնել Տիգրանին, որ մարդ քծնանքով առաջ չի գնա, պատիվ չի ունենա: Հիշեցի նրա կյանքի համար կարեւորութիւն ներկայացնող մի երեւույթ: Երբ ինքը դուրս էր գալու ՄՀՄ-ի ատենապետութիւնից, ՀՄՄՄ-ում իր ներկայութեան հարցը դրեց: Մենք ընդառաջեցինք նրան և ԾԿ-ում կետ մտցրեցինք, որ ով իր միութեան վարչութիւնից դուրս մնա, ՀՄՄՄ-ի կազմի մեջ որպես խորհրդական կգործի: Տիգրանը կյանքն առանց պաշտոնի չէր պատկերացնում:



հանդուրժել ու որպեսզի ավելի տհաճ երևույթ չստացվի, հեռացա ժողովից:

Իմ հեռանալուց հետո, Հարություն Չոբանյանը նույնպես հեռացել էր առանց ընտրելու: Հետևաբար, եթե ընտրության արդյունքները ի մի բերենք, կստացվի հետևյալ պատկերը.

1. Այնթապի ՀՄ-ի ներկայացուցչի ձայնը անվավեր է, քանի որ նա անծանոթ է ՀՄՄՄ-ի աշխատանքին ու վարչականներին:

2. Դէյլանի և Հաճընի ներկայացուցիչները ընդվզելով՝ ընտրության չեն մասնակցել, հետևաբար իրականում դեմ են քվեարկել:

3. Կեսարիայի կրթասիրաց միության ատենապետուհու հեռախոսով ընտրելը նախ անվավեր է, երկրորդ՝ ո՛չ ՀՄՄՄ-ի անդամներն են իրեն ճանաչում, ո՛չ էլ ինքը՝ նրանց:

4. Յոզղաթի ՀՄ-ի ներկայացուցչի հեռախոսով ընտրելը անվավեր է:

Արդյունքում՝ ընտրությունները անօրինական են:

Այս առիթով ՀՄՄՄ-ի Սեպտեմբեր **11, 1998** թվակիր նամակը, ուղարկված ՊՀՄ-ի, խառնաշփոթ մի գրություն է այն իմաստով, որ ՀՄՄՄ-ի ատենապետի «վերընտրության» ժողովը տեղի ունեցավ ոչ թե Օգոստոսի 10-ին, այլ Օգոստոսի 27-ին, որն անօրինական էր, բացի այդ հնարավորություն չտրվեց նաև ուրիշ թեկնածուների առաջադրման, որովհետև Գրիգոր Շենյանը, ինչպես նշվեց, արդեն նախօրոք «մշակել» էր բոլոր անդամներին: Մյուս կողմից, եթե նամակում նշվում է, որ ուղարկվում է նաև հին և նոր ԾԿ-ից մեկական օրինակ, ապա միայն հինը չեն ուղարկում: Եւ ամենամեծ վիրավորանքը միության հանդեպ. «Ուրախ պիտի ըլլանք, եթէ Դէյլանի Հայրենակցական Միությունը նոր ներկայացուցիչով մասնակցի ՀՄՄՄ-ի ժողովներուն» անպատշաճ արտահայտությունն է: ՀՄՄՄ-ն չի որոշում և ոչ մի իրավունք չունի մեր վարչությանը թելադրելու, թե նրա կողմից ով մասնակցի ՀՄՄՄ-ի նիստերին, եթե նա որոշի մասնակցությունը շարունակել նրա աշխատանքներին:

Ամփոփելով վերոհիշյալները, նշեմ, որ եթե այս է ՀՄՄՄ-ի առաքելությունը հայ ժողովրդին օգտակար լինելու գործում, ապա ՊՀՄ-ն չի կարող մնալ այդպիսի կազմակերպության մեջ և պետք է հեռանա նրա գործունեությանը մասնակցելուց:

Ամփոփ կերպով ահա այս է ՀՄՄՄ-ում տեղի ունեցած իրադարձությունները, որ հանձնում եմ վարչության ուշադրությանը, քննարկելու և համապատասխան որոշում ընդունելու համար:

Տա Աստված, որ ՀՄՄՄ-ն մի օր «առողջանա», գտնի իր ճիշտ հունը իր նպատակների իրագործման համար: Եւ եթե մեր միությունը վարչության որոշումով հեռանա ՀՄՄՄ-ից, ապա նա նորից կվերադառնա նրա աշխատանքներին, երբ նա, իրոք վերսկսի իր ազգօգուտ գործունեությունը:

Հարգանքներով՝ Ատենապետ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ

**Ըստ բանկի 12-17-98 թ. տվյալների, միության ունեցած գումարը 29403 դոլար և 34 սենթ է:**

## ՀՄՄՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1998 թ. սկզբում Ղարաբաղի կարգավիճակի հարցով տեղի ունեցած իրադարձությունները Հայրենիքում, հասցրեցին նախագահ Լևոն Տեր Պետրոսյանի հրաժարմանը: (Այդ առթիվ նրան ուղղված նամակը տե՛ս հավելված էջ486-487):

ՀՄՄՄ-ն հանդիպում ունեցավ Լոս Անջելեսում նոր նշանակված ՀՀ Գլխավոր հյուպատոս Արմեն Մելքոնյանի հետ: Իր չահեկանությունից ելնելով, այդ մասին հանգուցյալ դոկտ. Էդուարդ Նարգիզյանի գրած հոդվածը[1] ներկայացնում եմ ընթերցողին: Միայն ցավալին այն է, որ ՀՄՄՄ-ի քննարկած լուրջ հարցերը երբեք չիրագործվեցին կյանքում...:

ՀՄՄՄ-Ի ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ ՊՐՆ. ԱՐՄԵՆ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՀԵՏ

Լոս Անջելեսում նոր նշանակված ՀՀ Գլխավոր հյուպատոս Արմեն Մելքոնյանը իր գործունեությունը սկսեց ծանոթանալով քաղաքի հայ համայնքի տարբեր կազմակերպությունների, նրանց վարչակազմի և առանձին գործիչների հետ: Հյուպատոսի այս քայլը անպայմանորեն կնպաստի հայ համայնքի տարբեր կանգվածներին համախմբելու հյուպատոսության շուրջը: Այս նպատակով մարտի 10-ին տեղի ունեցավ նրա հանդիպումը ՀՄՄՄ-ի հետ Գլենդելի «Անուշ» ռեստորանում:

Գլխավոր հյուպատոսը հանդիպմանը ներկայացավ իր կնոջ՝ Եվգենիայի և օգնական Խաչատուր Խուդիկյանի ու նրա կնոջ հետ: Ներկա էին նաև վարչականների կանայք:

ՀՄՄՄ-ի ատենապետ Գրիգոր Շենյանը Գլխավոր հյուպատոսին ներկայացրեց վարչականներին և նրանց ներկայացրած ՀՄ-ներին, որից հետո խոսքը տվեց պրն. Արմեն Մելքոնյանին: Վերջինս իր գոհունակությունը հայտնեց հանդիպման առթիվ և նշեց դրա կարևորությունը ՀՄ-ների ներկայացուցիչների հետ ավելի մոտիկից ծանոթանալու հարցում:

Այնուհետև սկսվեց անկաշկանդ մտքերի փոխանակություն: Վարչության անդամները նշեցին, որ ՀՄ-ները չունեն կուսակցական պատկանելիություն և հեռու են նրանց գաղափարախոսություններից, որոնք հեշտացնում են իրենց անդամների հաղորդակցումը և շփումը: Այս հանգամանքը շատ կարևոր է դաստիարակելու երիտասարդ սերունդին՝ հարգելու իրենց նախնիներին, սովորություններին, ճաշերին և ասացվածքներին, որոնք նպաստում են հայապահպանման գործին: Անկախ Հայրենիքի գոյությունը հզոր մղիչ ուժ է նշված նպատակների իրականացման համար:

ՀՄ-ներին հուզող հարցերի շուրջ իրենց կարծիքները հայտնեցին Գրիգոր Շենյանը (Քիլիս), Վահան Բահարյանը (Պէյլան), Նուպար Հակոբյանը և Սարգիս Մաճառյանը (Զորք Մարզպան), դոկտ. հովհաննես Երկանյանը (Յոզղաթ), Սամվել Ալաջաջյանը (Զեյթուն), դոկտ. Էդուարդ Նարգիզյանը (Մարաշ), Ջորջ Խտրյանը (Կեսարիա), Մարտիրոս Իսկենդերյանը (Հաճըն), Տիգրան Գալուստյանը:

Հետաքրքիր էր դոկտ. Երկանյանի առաջարկը: Նա գտնում է, որ հայապահպանման գործում մեծ անելիքներ ունեն հայկական դպրոցները, որոնք, դժբախտաբար, մատչելի չեն բոլորին: Շատ ընտանիքներ իրենց երեխաներին չեն կարող

1.- Տե՛ս «Նոր Կեանք», թիվ 16, Մարտ 26, 1998:



ուղարկել հայկական դպրոցներ, որոնք յուրաքանչյուր երեխայի համար ուսման վարձ են պահանջում 300-500 դոլար:

Նա առաջարկում է ստեղծել միացյալ ուսման ֆոնդ, որն անկասկած շատ դժվար գործ է, նույնիսկ, երբեմն անկարելի թվացող: Հանդիպման մասնակիցների կարծիքը այն էր, որ դժվարություններից պետք չէ վախենալ, և սկսել այդ գործը: Այդ նպատակով առաջարկվեց հյուպատոսարանին կից ստեղծել հասարակական մի հանձնախումբ քաղաքի հայ համայնքի ներկայացուցիչների ուժերով, մշակելու հարցի լուծման մեխանիզմը, կապված համապատասխան գումարների հայթայթման, հայկական դպրոցների ցանցի ընդլայնման հետ և այլն: Այս գործով պետք է զբաղվել այսօր, հույս ունենալով, որ մեր ապագա սերունդը հնարավորություն կունենա անվճար ուսանելու հայկական դպրոցներում: Որքան շուտ գտնվի այս հարցի լուծումը, այնքան քիչ կլինի մեր կորուստը հայապահպանման գործում:

Դոկտ. Էդուարդ Նարգիզյանը պրն. Արմեն Մելքոնյանին նվիրեց իր աշխատանքը՝ «Հայաստանի պատմութիւնը քարտէսներով» ատլասը:

Տիկնանց մասնակցությունը այդ հանդիպմանը բերեց իր հմայքը և միաժամանակ ցույց տվեց, որ կանայք գործունյա մասնակից են հայ համայնքի աշխատանքներին և ունեն իրենց մեծ ավանդը համախմբելու բոլոր հայերին իրենց Հայրենիքի շուրջը:

ՀՄՄՄ-ն ողջունեց ՀՀ նոր ընտրված նախագահ Ռոբերտ Քոչարյանին (նամակը տե՛ս հավելված էջ488):

Բնօրրանի բաժանորդագրման, օրացույցների վաճառքի և այլ հարցերի մասին Ժոզեֆ Ավետիսյանին ուղարկեցի 4-11-98 թվակիր նամակը (տե՛ս հավելված էջ489-491):

Անցած երկու տարիներում, նոր ստեղծված ԼԱՀԿՄՄ-ի կազմակերպությամբ նշվեց Մեծ Եղեռնի տարելիցը: ԼԱՀԿՄՄ-ն պիտի գոյատևեր, ուստի հետագա տարիներին ևս պիտի շարունակվեր միացյալ ուժերով և միասնությամբ նշելու այդ օրը:

Սակայն անցած երկու տարիների մեր ուրախությունը կարճ տևեց: Վաղորոք, ՀՄՄՄ-ի նիստում Գրիգոր Շենյանը առաջարկեց, որ այս տարի ՀՄՄՄ-ն առանձին կազմակերպի Մեծ Եղեռնի 83-րդ տարելիցը՝ նկատի ունենալով, որ ԼԱՀԿՄՄ-ն այն նշելու է Մոնթեբելլոյի Եղեռնի հուշարձանի մոտ: Վարչականները ընդունեցին առաջարկը: Այն ժամանակ մտքովս էլ չանցավ հարցնելու, թե ՀՄՄՄ-ն մաս է կազմում այդ կազմակերպության, ինչո՞ւ առանձին պիտի կազմակերպի միջոցառումը: Հետագա օրերում բավական հարցեր պարզվեցին: Այսպես, մինչև հիմա էլ դեռ չհասկացա, թե ԼԱՀԿՄՄ-ն ինչո՞ւ էր Մոնթեբելլոյում նշելու տարելիցը: Բայց, կարծում եմ, որ ենթադրությունններս ինձ տանում են ճիշտ ուղիով: Ապրիլի 24-ին մի քանի օր մնացած, «Նոր Հայաստան» օրաթերթի նույն համարում տեսա երկու հայտարարություններ Մեծ Եղեռնի տարելիցի նշման վերաբերյալ:

Առաջինը թերթի ամբողջ 7-րդ էջում՝

ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ 83-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ
Կազմակերպութեամբ Հայրենակցական Միութիւններու Միացեալ Մարմինի
(ՀՄՄՄ)
Ուրբաթ, 24 Ապրիլ, 1998, երեկոյեան ժամը 7:30-ին
Կլէնտէյլի United Community Church-ի մէջ (Կլոր Եկեղեցի)
333 East Colorado Street, Glendale, CA ...

Երկրորդը թերթի ամբողջ 11-րդ էջում՝
ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ՝ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 83-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ
Կազմակերպութեամբ՝ Լոս Անճելըսի Հայկական Կազմակերպութիւններու
Միացեալ Մարմնին
Ուրբաթ, Ապրիլ 24, 1998, երեկոյեան ժամը 7:00-ին
Hoover High School Auditorium
651 Glenwood Ave., Glendale, CA 91202 ...[1]

Սա, իհարկե, դառը ծիծաղի արժանի երեւույթ է...:

Թուրքը հարցրե՞ց, թե ո՞վ որ կազմակերպությունից է և առանձի՞ն-առանձի՞ն հաշիվ տեսավ նրանց հետ, որ հիմա էլ մենք ենք առանձին-առանձին ողբում մեր կորուստը:

Պարզվեց, որ Գրիգոր Շենյանը միտումնավոր է հարց դրել, որպեսզի ՀՄՄՄ-ն առանձին կազմակերպի Մեծ եղեռնի տարելիցը, որովհետև նրա հարաբերությունները վատացել են Նահապետ Մելքոնյանի և Բարսեղ Քարթալյանի հետ: Երևույթը գաղտնի է պահել: Ի՞նչն էր պատճառը, ինձ հայտնի չէ, բայց մի բան պարզ է, որ ՀՄՄՄ-ի ատենապետը միասնության գործընթացը և ազգայինը զոհեց իր անձնական շահին:

ՀՄՄՄ-ի վարչականների մեծամասնությունից գաղտնի, երկխոսություն է գնացել Գրիգոր Շենյանի և նշված կազմակերպության ներկայացուցիչների միջև՝ Մարտիրոս Իսկենդերյանի միջնորդությամբ: ՀՄՄՄ-ի ատենապետը անզիջող դիրք է բռնել: Այնուհետև Բարսեղ Քարթալյանի մասին անվայել հոդված գրել առանց ՀՄՄՄ-ի անդամների համաձայնությունը ունենալու:

Երբ կարդացի զույգ հայտարարությունները, որպես ՀՄՄՄ-ի փոխատենապետ պահանջեցի անմիջապես ՀՄՄՄ-ի նիստում քննարկել հարցը: Ճշմարտությունը պարզվեց, երբ Մարտիրոս Իսկենդերյանը Գրիգոր Շենյանին բացահայտորեն մեղադրեց Բարսեղ Քարթալյանի նկատմամբ ցուցաբերած մերժողական վերաբերմունքի համար: Ափսոսաց, որ երկու կողմերին հաշտեցնելու համար իր թափած ջանքերն իզուր են անցել, համայնքի միասնությունը ամրապնդելու փոխարեն, եղածն էլ է քանդվում: Բորբոքված անդրադարձավ նաև Բարսեղի դեմ Շենյանի գրած

1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Զորեք., Ապրիլ 22, 1998, թիվ 69:





Նոր հյուպատոսի հետ հանդիպումից մի պահ: Ձախից աջ՝ Վահան Բահարյան, Խաչատուր Խուդիկյան, Գլխավոր հյուպատոս Արմեն Մելքոնյան, Գրիգոր Շենյան:

հոդվածին և անսպասելիորեն առաջարկեց փոխել ատենապետին ու ատենապետ ընտրել Վահան Բահարյանին: Մարտիրոս Իսկենդերյանը ցավով արտահայտեց իր արդար դայրույթը, որ մի քանի «սապոնվող» վարչականներ իրավունք չունեն քանդելու համայնքի միասնությունը:

Առաջարկեցի ուղղել մեր սխալը և միասին նշել Մեծ եղեռնի տարելիցը: Առաջարկն ընդունվեց, բայց արդեն շատ ուշ էր: Շենյանը իմանալով, որ այլևս հնարավոր չէ միասին անել, ինքն էլ համաձայնվեց (սրահները վարձված և հայտարարություններն էլ մամուլում տրված էին):

Այս հարցով մի օր էլ հավաքվեցինք Մարտիրոս Իսկենդերյանի տանը: Շենյանը չկար, որովհետև Նահապետն այնտեղ էր: Մեր հիմնական նպատակը միասնության վերականգնումն էր: Այսօր, երբ գրում եմ այս տողերը, շատ մանրամասնություններ իհարկե չեմ հիշում այդ երեկոյից, բայց իմ մեջ տպավորված է արտահայտած մտքերից մեկը, որ պառակտման պատճառը Նահապետ Մելքոնյանի և Գրիգոր Շենյանի անձնական հարաբե-

րությունների վատացումն էր (արձագանքը հաջորդ օրն իսկ հասել էր Շենյանին...): Ներկաներս որոշեցինք կրկին հանդիպել և շարունակել հարցի քննարկումը: Սակայն որոշ ժամանակ անց մեր միությունն էլ դուրս եկավ ՀՄՄՄ-ի կազմից, ուստի հետագա իրադարձություններից տեղյակ չեմ:

Հիշենք մի դեպք, որը լրացուցիչ պարզաբանում կմտցնի այս հարցում: Մի օր Շենյանը զանգահարեց և առաջարկեց այս նույն՝ Մեծ Եղեռնի 83-րդ տարելիցը կազմակերպել Հնչակյան կուսակցության հետ: Կտրականապես մերժեցի, հիշեցնելով, որ ՀՄՄՄ-ի նիստում հատուկ որոշում է ընդունված՝ որևէ կուսակցության հետ միջոցառում չկազմակերպել:

Այս խոսակցության ժամանակ էլ որոշ բան պարզվեց, երբ հարցրեցի, թե կուսակցության փոխարեն ինչո՞ւ ԼԱՀԿՄՄ-ի հետ չկազմակերպենք, որի անդամն ենք արդեն: Նա պատասխանեց, որ Նախագահի հետ նույն սրահում չի նստի: Հուշեցի, որ հսկա սրահում ամեն մեկդ մի անկյունում կարող եք նստել և իրար չտեսնել: Խոսակցությունը գնում էր իմ, Շենյանի և պարտադրված՝ նաև կնոջ միջև (նա վերցել էր զուգահեռ հեռախոսը և մասնակցում էր մեր զրույցին): Երբեք չէի ցանկանա, որ կինը իմանար ՀՄՄՄ-ի մեջ կատարվող իրադարձությունների մասին:

Իհարկե, միջոցառումները «հաջողություններ» ունեցան՝ համայնքին երկու մասի բաժանելով և ավելորդ խոսակցությունների տեղիք տալով, ուրախացնելով նաև սույն կազմակերպությունների նկատմամբ համակրանք չտածողներին:

Մեր նպատակը Սփյուռքում ազգային միասնություն ստեղծելն է, որպեսզի կարողանանք երկարաձգել մեր գոյությունը որպես հայ: Եթե մեր ստեղծած կազմակերպությունները այդ նպատակին պիտի չծառայեն և պիտի դառնան (ղեկավար) անհատների անձնական շահերի, փառասիրությունների ու ցուցամոլությունների դրսևորման օջախ, իսկ վերջիններս կապած պիտի մնան իրենց աթոռներին ու եղածն էլ պառակտեն՝ նույնիսկ ուժի դիրքերից ելնելով, ապա անիմաստ է նրանց ստեղծումը:

05-06-98 թվակիր նամակում Ժոզեֆ Ավետիսյանը գրում է.

Սիրելի Վահան

Արացա նամակդ, սիրտս պղտորվեց փիրող իրավիճակից: Հայրենակցական գործունեությունը վերընթացի փոխարեն իջնում է: Փոքրիկ ծրագրերն անգամ չեն իրագործվում:

Մեր վերջին 2 տարիների գործունեության, համագործակցության արդյունքը արդյոք գոհացում տալի՞ս է մեզ, իհարկե ոչ:

Մեր ուղարկած «Բնօրրան»ը ուշադրության արժանացա՞վ: Ափսոս է դադարեցնել, ֆինանսական դժվարությունները մեծ են: Համարները պատրաստեցի Լիբանանի, Սիրիայի և ԱՄՆ-ի բաժանորդների գումարների օգնությամբ: Այսօր նույն վայրերից ոչ մի ուշադրություն չենք ստանում:

Արացա Թորոսի հետ ուղարկածդ. շնորհակալություն:

Ինչո՞ւ այդքան անուշադրություն, անտարբերություն քո մշակութային այդ արժեքների նկատմամբ՝ անկախ պետություն, հայրենի աշխարհ, ազգային մշակույթ, քրիստոնեության 1700-ամյա տարելից՝ բովանդակությունը օրացույցի, և այդքան պատկերի նկատմամբ անտարբեր հոգեբանություն: Սիրտդ թող չնեղվի:

Վահան ջան, ուղարկում եմ Խորհրդի նոր հաստատված կանոնադրությունը (պատճեն): Կարծում եմ կհետաքրքրի հայրենակցական կառույցներին և Խորհրդի ընկերակցությամբ Հայաստանում կարող են իրականացնել նպատակներ, ծրագրեր:

Պատահական հանդիպեցի Սյուզիին, և պարզվեց բեյլանցի լինելը, այն էլ Տիկնանց հանձնախմբի ատենապետուհի: Գնալու եմ հանդիպելու և ցույց տալու մեր գրասենյակը, որը փորձում ենք վերանորոգել: Չունենք միջոցներ: Մտածեք. այդ գրասենյակը հայրենակցական տուն է բոլոր հայրենակցականների համար: Խնդրում եմ նկատի ունենալ այս հանգամանքը: Արդյոք կկարողանա՞ս կազմակերպել վերանորոգման համար օգնություն: Աշխատիր:

Հիմա փոխված է կարգավիճակս, Նախագահի հետ ես էլ եմ հեռացել: Հավանաբար լավ կլինի Խորհրդի համար, քանի որ իմ կյանքի հիմնական բովանդակությունն է դարձել Խորհրդի գործը, ամենօրյա գործը:

Անկասկած կշահի Խորհուրդը: Փորձում եմ ստեղծել Խորհրդի տնտեսական կառույցները, որոնց միջոցով միայն Հայաստանում կարելի է պահել հայրենակցական շարժումը:

Կապրենք, կտեսնենք: Հաջողություն քեզ:

Բարևիր բոլորին. հայրենակցական ընկերներին. Ի՞նչ եղավ երշիկի գործարանի ծրագիրը:

(Ժոզեֆին ուղարկածս նամակը տե՛ս հավելված էջ 492-493):

### Ժոզեֆ Ավետիսյանը 11-08-98 թ. գրում է՝

08-11-98 թ., Երևան

Սիրելի Վահան

Երկու նամակներդ հաճախ կարդում եմ, որպեսզի հավատամ հայրենակցական շարժման կարևորության, թափվող ուժի անհրաժեշտության վրա: Տրամադրությունս չի փչանում, ավելի ամրանում եմ, լցվում եմ լավատեսությամբ, որ պիտի վերածնվի հայրանակցական շարժման երբեմնի բովանդակությունը: Մենք երբեք չպիտի կասկածենք մեր գործունեության անհրաժեշտության վրա, հակառակ դեպքում կդատապարտենք հայրենակցականությունը մահվան: Կյուրացնեն խմբավորումները, նույնիսկ խիստ ազգային համարվող, հայրենակցական կառույցների ձեռք բերած մշակութային և տնտեսական, նյութական արժեքները:

Պետք է դիմադրենք, իսկ դիմադրել կարող ենք, եթե մեր համագործակցությունը ստեղծենք աշխարհով մեկ՝ Ամերիկայում, Արգենտինայում, Լիբանանում, Սիրիայում, ամենուր: Ես պիտի անեմ, դու պիտի անես, պիտի ջանք թափենք բոլորս: Դրա համար Հայաստանում ստեղծում ենք պայմաններ: Հիմա ունենք աշխատանքային ընթացքը կազմակերպելու տարածք, հենց քաղաքի կենտրոնում: Ճիշտ է վերանորոգելու ենք և դժվարությամբ, բայց այլ ճանապարհ չունենք, կատարելու ենք:

Լոս Անջելեսյան միացյալ մարմինը կհավատա՞ իր գոյությանը, կօգնի, չի հավատա, ուրեմն ինքն էլ կամաց-կամաց կդատապարտվի, և երկրորդական կհնչի

*նրանց համար հայրենակցական գաղափարը:*

*Իհարկե սպասում ենք Միացյալ Մարմնի ձեռք սեղմանը Միացյալ հայրենակցական փան ստեղծման մեր ծրագրի իրականացման ճանապարհին: Սպասում եմ: Սպասում ենք Հայաստանի 17 Հայրենակցականների ընկերակցությամբ:*

*Վահան ջան, մեծ նպատակ ես փորձում իրագործել՝ Պէյլանի հայրենակցականության պատմագիրքը: Պատվավոր գործ է, բայց շատ դժվար: Կարող ես չմտածել տպագրության մասին, կնպաստենք, կիրագործենք ավելի ընդունելի պայմաններով: Կտարածենք ավելի լայն աշխարհագրական միջավայրով: Դու միայն մտածիր իրականացնելու վրա: Կհրատարակենք «Բնօրրան»ի հրատարակությամբ:*

*«Բնօրրան»ի հեղինակությունը Հայաստանում գնալով մեծանում է, ընդգրկված է գիտական կոչումներ շնորհող պետական ատեստացիոն հանձնաժողովի կողմից կազմված հանդեսների լրատվական միջոցների ցանկի մեջ: Դրեմն դառնում է գիտական-հասարակական կյանքին մոտ հանդես:*

*Այսուհետև կուղարկեմ քեզ միայն 40 օրինակ, որոնցից կհատկացնես բաժանորդներին, մնացյալը թերթերին և մի քանի անհատների, որոնց անունները կլինեն օրինակների վրա: Մենք կուղարկենք գիտական հաստատություններին նաև: Տպագրելու ենք այլալեզու հոդվածներ ևս, իսկ հայերենները ունենալու են օտարալեզու համառոտագրեր: Ամեն ինչ լավ կլինի ...:*

*Հարգանքներով՝ Ժուլեֆ Ավետիսյան:*

***ՀՄՄՄ-ի նիստում Գրիգոր Շենյանը առաջարկեց գործակցել Լարք երաժշտական ընկերակցության հետ, կազմակերպելու Հայ ժողովրդական և գուսանական երգերի ու պարերի երեկո՝ նվիրված Թաթուլ Ալթունյանի մահվան 25-յակին և «Հայաստանի երգի ու պարի անսամբլ»ի հիմնադրման 60-ամյակին: Նա տեղեկացրեց նաև, որ յուրաքանչյուր կազմակերպություն 10000 դոլար հատկացնելով (ընդհանուր՝ 20000 դոլար), ըստ Լարքի համապատասխան մասնագետների նախահաշիվների, 20000 դոլար եկամուտ կապահովվի, այսինքն յուրաքանչյուր կազմակերպություն 10000 դոլար եկամուտ կունենա: 10000 դոլարը ՀՄՄՄ-ին հատկացրել էր Վաչե Մանուկյանը, Գրիգոր Շենյանի միջոցով:***

***Նրա նախնական հանդիպումների արդյունքները գոհացուցիչ գտնելով, վարչության անդամները նույնպես հանդիպեցին Լարքի պատասխանատուների հետ և որոշեցին մասնակցել միջոցառման իրականացմանը, որը տեղի ունեցավ շաբաթ, հունիս 7, 1998 թ. երեկոյան ժամը 6-ին John Anson Ford Amphitheater, 1580 Cahuenga Boulevard, Hollywood:***

***Այս գործարքում, 10000 դոլար չահույթի փոխարեն, ՀՄՄՄ-ն կորցրեց 3000 դոլար:***



## ԺԴ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1999 Թ.

***Հունվարին նամակ ստացա Գևորգ Պաղճյանից, որին Ալիշան Պայրամյանի գիրքն էի ուղարկել ՊՀՄ-ի վարչության կողմից*** *(տե՛ս հավելված էջ494):*

***01-11-99 ՎՆ-ում կարդացվեցին Նոր Տարվա առթիվ ստացված շնորհավորագրերը՝ Մարիձա և Զոհրապ Սողանալյաններից, Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հյուպատոսից և այլ տեղերից:***

***Կարդացվեց նաև Նիկոլայ Հովհաննիսյանին գրված նամակը, որը հավանության արժանացավ վարչականների կողմից և ուղարկվեց*** *(տե՛ս հավելված էջ495):*

***Զոհրապ Սողանալյանի գրածը մեջբերվում է:***

*Բոլորիս սիրելի Վահան*

*Որքան փափաքելի էր, որ ձեզի գոնէ այնպէս տեսնելով շնորհաւորել տօնական օրերը երկար բացակայութենէ վերջ, սակայն մեր պարագաները չի ներեցին տակաւին: Յուսալից ենք, որ մօտ են օրերը, որ ձեզի և մեր միութեան՝ ՊՀՄ-եան և վարչութեան հանդէպ մեր պարտականութիւնը կատարենք:*

*Շատ շնորհակալ և երախտապարտ ենք, որ մեր մօր անունը իբր նախագահուհի չէք մոռնար, և մենք ալ ձեզի չի պիտի մոռնանք, վստահ եղէք:*

*Այս տօնական օրերուն հաճեցէք ընդունիլ մեր ընտանիքի բարեմաղթութիւնները և շնորհաւորանքները ձեր սիրելի անձին և վարչութեան:*

*Զոհրապ Սողանալեան*

***Ալիշան Պայրամյանի գրքի հրատարակության առթիվ գրածս հոդվածը[1] մեջբերվում է:***

*ԱԼԵՔՍԱՆԴՐԵՏԻ ՍԱՆՋԱՔԻ ՀԱՐՑԸ*
*ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ (1936-1939 ԹԹ.)*

*Գիրքը հրատարակվեց 1998 թ. աշնանը Երևանում, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի կողմից, ՊՀՄ-ի մեկենասությամբ և հեղինակի կավակների աջակցությամբ:*

*Մենագրությունը լուրջ գիտական ուսումնասիրություն է Ալեքսանդրետի Սանջաքի մասին, որի վրա հեղինակը աշխատել է երկար տարիներ: Մի շարք քաղաքագետների վկայությամբ և հավաստի բազմաթիվ փաստաթղթերով նա ապացուցում է, որ միջազգային իրավունքի ակնհայտ խախտման հետևանքով, Ֆրանս-թուրքական սառ պայմանագրով և Անգլիայի ներգործությամբ, Սանջաքը, Սիրիայից անջատվելով, կցվեց Թուրքիային: Գրքի արժեքը բարձրացնում է նաև օգտագործված աղբյուրների հսկա ցանկը, որն անառարկելի փաստ է հեղինակի գիտական մոտեցման և հարցերի լուրջ վերլուծման:*

*Ընթերցողը, հատկապես, եթե նա Սանջաքցի է, կարդալով այս գիրքը,*

---

*1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Շաբաթ, Հուն. 16, 1999, թիվ 8:*

չի կարող չմղկտալ իր բնօրրանի կորուստի համար:

Ես, որպես Պէյլանի շրջանի Աթըգ գյուղում ծնված՝ բնիկ սանջաքցի, չէի կարողանում հանգիստ կարդալ գիրքը, խորապես ապրում, սարսռում էի, նկատի ունենալով շահամոլ պետությունների, հատկապես Ֆրանսիայի անիրավությունները այս հարցում, որի պատճառով քաղաքացիների մի մասը հայերի և արաբների հետ միասին նույնպես զոհ գնացին Սանջաքում այդ ժամանակ տեղի ունեցած իրադարձություններին: Գիրքը մի ուրիշ արժեք ևս ունի: Հեղինակը՝ նշելով, որ Սանջաքը Կիլիկիայի մի մասն է կազմում, իրավացիորեն այն համարում է սիրիական տարածք, ելնելով տվյալ ժամանակաշրջանի յուրահատուկ քաղաքական պայմաններից և նկատի ունենալով նաև այնտեղ ապրող, հատկապես հայերին և արաբներին: Նրանք մեծամասնություն էին կազմում այդ տարածքաշրջանում և դարերից ի վեր ապրում էին կողք-կողքի, ունենալով բարի-դրացիական անկեղծ հարաբերություններ:

Այս տեսակետից հայ և արաբ ժողովուրդների միասնական պայքարը՝ Սանջաքը Սիրիայի կազմում պահելու համար, առավել ևս ամրապնդում է նրանց բարեկամական կապերը, և պարմանալի էլ չէ, որ հանգամանքների բերումով գրքի արաբերեն թարգմանությունը ավելի շուտ է լույս տեսել՝ 1993 թ. Դամասկոսում:

Սանջաքը Թուրքիային հանձնվեց Ֆրանսիայի իշխանությունների դավաճանությամբ: Բազմաթիվ օտար աղբյուրների և հատկապես փաստական վավերագրերի հիման վրա շարադրված այս գիրքը կարդալիս, ընթերցողը շատ բան է հասկանում գերպետությունների քաղաքական մեքենայությունների մասին, որոնք իրենց քաղաքական նպատակների իրագործման համար կանգ չեն առնում կոխելու իրենց ճանապարհին արգելք հանդիսացողներին՝ լինեն նրանք անհատներ, թե ազգեր:

Մեծ տերությունները չհարգեցին ազգերի ինքնորոշման իրավունքը, և Ազգերի Լիգան եղավ նրանց ձեռքին խաղալիք: Սանջաքը հանձնվեց Թուրքիային, հայ և արաբ ժողովուրդները ստիպված հեռացան այնտեղից՝ ապաստանելով մեծ մասամբ Սիրիայում և Լիբանանում:

Այսօր Արցախի խնդիրն էլ Սանջաքի հարցի նման վտանգավոր ելևէջների մեջ է, միայն մի տարբերությամբ, որ Արցախում հայը իր ուժը ցուցադրեց, որին նպաստեցին նաև Ռուսաստանի և աշխարհի առաջադեմ երկրների մի շարք քաղաքական գործիչներ: Միայն հայերի միասնությունն ու համառ ջանքերը, աշխարհի արդարամիտ ուժերի հետ, կարող են վերջնականապես լուծել Արցախի հարցը ի նպաստ հայերի:

Նկատի ունենալով վերոհիշյալները՝ արդյո՞ք Ֆրանսիայի իշխանության ներկայացուցիչը Մինսկի խմբի եռանախագահությունում ճիշտ մոտեցումներ պիտի ցուցաբերի Արցախի հարցի արդար լուծման համար, հաշվի առնելով նաև այն, որ այսօր քաղաքական պայմանները փոխված են, Ֆրանսիայում ունենք ուժեղ հայկական համայնք իր լոբբինգով, ունենք հայկական անկախ պետականություն և Սփյուռք: Բայց առայժմ Արցախի հարցում դեռևս անտեսվում է ազգերի ինքնորոշման իրավունքը և նկատի է առնվում միայն տարածքային ամբողջականությունը, հաստատ համոզված լինելով նաև, որ Արցախի ժողովրդի վերագրաված տարածքները հայկական հողեր են, և Արցախը պատկանում է հայերին:

Գրքի որակը արդյունք է նաև հեղինակի մի շարք լեզուների (յոթ լեզու) հմուտ տիրապետման, որով և նա ստեղծել է պատմական ու իրավական



արժեք ներկայացնող այս մենագրությունը:

Գիրքը արժեքավորվում է հեղինակի անաչառ եզրակացություններով, ինչպես նաև վերջում կետեղված ֆրանսերեն և անգլերեն ամփոփագրերով:

Եզրակացնելով՝ նշենք, որ պրոֆ. Ալիշան Բայրամյանի այս աշխատությունը մի պատմական փաստաթուղթ է, որը կարող է օգտակար լինել արաբ ժողովրդի արդար իրավունքների վերականգնման՝ Սանջաքը Սիրիային վերադարձնելու հարցում:

**Ա. Պայրամյանի գրքից մի օրինակ ուղարկեցի Ֆրանսիա՝ Նուպար Մարթայանին** (նամակը տե՛ս հավելված էջ 496):

**Ա. Պայրամյանի գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ 1999 թ. փետրվարի 4-ին, երեկոյան ժամը 7:30-ին, Գլենդելի Հանրային գրադարանի հանդիսասրահում. Glendale Public Library Auditorium, 222 E. Harvard St. Glendale, CA 91205:**

**Շնորհանդեսը մեծ հաջողություն ունեցավ, և նրա մասին մամուլում լույս տեսան հոդվածներ, որոնցից, հատկապես ուշադրության արժանի է Սարգիս Յափուճյանի լրջախոհորեն գրված հոդվածը, որը տպեցին հայկական համարյա բոլոր թերթերը[1]: Հոդվածից մեջբերում եմ ՊՀՄ-ի վերաբերող մասը**

«Ջմոռանանք երէկուայ արժէքները, որպէսզի վաղը նորը փնտռելու ստիպուած չըլլենք»: Ս. Ալաջաջեան

Անշո՛ւշտ նոյն այս իմաստուն սկզբունքով ղեկավարուած կը լինեն ՊՀՄ-ի վարչության անդամները, որոնք գրեթէ ստիպել են Փրոֆ. Ա. Պայրամեանին համաձայնուելու գնահատանքի և մեծարման երեկո կազմակերպելու իրենց որոշումին, որ նկատի ունէր երեք կարևոր, յիշարժան իրողութիւն: Երևանում ՀՀ ԳԱԱ-ի որոշումով Ա. Պայրամեանի աշխատասիրած «Ալեքսանդրէտի Սանջաքի Հարցը և Միջազգային դիւանագիտութիւնը (1936-1939 թթ.)» մենագրութեան հայերէն բնագրի հրատարակութիւնը, Սանջաքը թուրքերին հանձնելու 60-ամեակը և աշխատութեան արգոյ հեղինակի օրերս լրացած 85-րդ տարեդարձը:

Օրուայ հանդիսավար և ՊՀՄ-ի վարչութեան փոխատենապետ Արա Պետրոսեանը կարդում է երեկոյի ծրագիրը, ապա՛ բացման խօսքի համար հրաւիրում է միութեան վարչութեան ատենապետ Վահան Պահարեանին:

Որպէս նախկին Սանջաքցի, որ անձամբ կրել-տարել է տարածաշրջանում կատարուած իրադարձութիւնների տխուր հետևանքները, Դրն. Վահան Պահարեանը խոստովանում է. «Չէի կարողանում հանգիստ կարդալ գիրքը, խորապէս ապրում, սարսռում էի, իմանալով շահամոլ պետութիւնների, յատկապէս Ֆրանսիայի անիրաւութիւնները Սանջաքի հարցում»: Ապա՝ եզրակացնելով իր խօսքը, Վահան Պահարեանը յոյս է յայտնում, որ Փրոֆ. Ալիշան Պայրամեանի սոյն արժէքաւոր մենագրութիւնը պիտի անկասկած նպաստի Սուրիայի ազնիւ ժողովուրդի իրաւունքի վերականգնմանը, Սանջաքը վերադարձնելու գործում:

**Շնորհանդեսի մասին գրած հոդվածը[2] մեջբերվում է:**

1.- Տե՛ս «Նոր Օր», Հինգշաբթի, Մարտ 4, 1999:
2.- Տե՛ս «Նոր Հայաստան», Ջորեք., Փետր. 17, 1999, թիվ 26:



Հեղինակը շրջապատված վարչության անդամներով և բարեկամներով:

## Բ Ն Օ Ր Ր Ա Ն Ի   Կ Ա Ր Ո Տ Ո Վ...

Այս տարի լրանում է Ֆրանս-թուրքական պայմանագրով և Անգլիայի ներգործությամբ Սանջաքը Սիրիայից անջատման և Թուրքիային կցման 60-ամյակը, որի մասին լայն արձագանքեց ինչպես արաբական, այնպես էլ հայկական մամուլը:

Այդ անիրավ գործարքի ու կեղծիքի մասին է պրոֆ. Ալիշան Պայրամյանի «Ալեքսանդրետի Սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939 թթ).» գիրքը, որտեղ մի շարք քաղաքագետների վկայությամբ և հավաստի բազմաթիվ փաստաթղթերով հեղինակը ապացուցում է հզոր պետությունների խարդավանքները, իրենց նպատակներին հասնելու ճանապարհին: Գիրքը գրված է 30 տարի առաջ և հանգամանքների բերումով լույս տեսավ 1998 թ.՝ Պ<Մ-ի մեկենասությամբ և հեղինակի կավակների աջակցությամբ:

Պ<Մ-ի վարչությունը կազմակերպեց և հովանավորեց նաև գրքի շնորհանդեսը, որը տեղի ունեցաւ փետրվար 4, 1999 թ. Գլենդեյլի հանրային գրադարանի հանդիսասրահում և զուգադիպեց Սանջաքը Թուրքիային հանձնելու 60-ամյակի եւ հեղինակի 85-ամյակի հետ: Իր բնօրրանին կարոտ սանջաքցին եկել էր մասնակցելու եւ մի քիչ մխիթարվելու ապագայի գալիք հույսերով:

Մինչև հանդիսության սկսելը հնչեցին «Ատանա», «Կիլիկիա» եւ «Էրեբունի» երգերը ձայնաերիզով՝ Հայաստանի պետական երգչախմբի կատարմամբ, որոնք հուզմունք պատճառեցին բնօրրանը կորցրած հային:

Հանդիսավարը վարչության փոխատենապետ Արա Պետրոսյանն էր, որը բարի գալուստի խոսքից հետ, ամբիոնի մոտ հրավիրեց տողերիս հեղինակին, որը հպանցիկ խոսեց գրքի եւ հեղինակի մասին:



Գիրքը ներկայացրեց պատմաբան Ավետիս Փափայանը: Նա հանգամանալից վերլուծումներով ցույց տվեց հեղինակի կատարած հսկայածավալ աշխատանքը, բավարարեց ներկաների հետաքրքրությունը, արժանանալով նրանց ջերմ գնահատանքին:

Երևանի Արևելագիտության ինստիտուտի նախկին գիտաշխատող Ավին Չուլջյանը լուսաբանեց գրքի արաբերեն թարգմանությունն ու հրատարակությունը 1993 թ.:

Գրքի մասին գնահատանքի խոսք ասաց պ.գ.դ. պրոֆ. Երվանդ Սարգսյանը, նախկին ղեկավարը Երևանի Արևելագիտության ինստիտուտի թուրքագիտական բաժնի:

Երևանից ստացված <<ԳԱԱ Արևելագիտության Ինստիտուտի տնօրեն պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի հեռագիրը ողջունում էր սանջաքցիների այս նախաձեռնությունը եւ թրվատում հեղինակի արժանիքները:

Վերջում ելույթ ունեցավ հեղինակը: Նա իր երախտագիտական խոսքն ուղղեց գրքի հովանավոր Պ<Մ-ի վարչությանը, նաև <<ԳԱԱ Արևելագիտության Ինստիտուտի իր բոլոր նախկին գործընկերներին և հատկապես նրա տնօրեն պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանին, գիրքը գրելու ընթացքում իրեն ցուցաբերած օգնության համար: Շնորհակալական խոսքեր ուղղեց և իր կողակցին, ընտանիքին, հարազատներին, որոնք միշտ նրա կողքին եղան: Իր խոսքից հետո հեղինակը սիրով պատասխանեց բազմաթիվ հարցերի:

Շնորհանդեսը վերածվեց իսկական գրական երեկոյի:

Ելույթ ունեցողները շնորհավորեցին հեղինակի 85-ամյակը: Պ<Մ-ի վարչությունը այս առիթով նրան գեղեցիկ ծաղկե պսակ նվիրեց:

Երեկոն համեմվեց Արա Պետրոսյանի և Մարի Թերջանյանի ասմունքներով:

Պ<Մ-ի վարչության կողմից հայկական բոլոր թերթերի խմբագիրներին, Կիլիկիո բնօրրանի անունները կրող <Մ-ներին՝ Չորք Մարզպանի, Այնթապի, Մարաշի, Զեյթունի, Հաճընի, Քիլիսի (հեղինակը քիլիսցի է), Մուսա Լեռան, Քեսաբի, Սիսի եւ Կիլիկիայի, ուղարկվեցին հրավիրատոմսեր, գրքեր: Նրանցից ներկա էին միայն մի քանիսը: Մտահոգություն է պատճառում նրանց բացակայությունը: Արդյոք բնօրրանը նրանց համար այլևս արժեք չի ներկայացնում: Ի՞նչ ձևով պետք է հայ պահենք նոր սերնդին, եթե նրա մեջ չներարկենք այդ հուշերը: Արժի, որ բոլորն էլ մի պահ մտածեն այս մասին: Եթե բնօրրանում ծնված հայրենակցին չի հետաքրքրում այդ, ապա իր երեխաներին ինչու պիտի հետաքրքրի:

Լավատես լինենք:

**Գրքից մի օրինակ ուղարկեցի Կանադա՝ Սարգիս Պալյանին, և խնդրեցի նաև, որ իր ողջույնի խոսքն ուղղի շնորհանդեսին: Նրա նամակը մեջբերում եմ:**

Մոնրէալ, 4 Փետրուար 1999

Շատ սիրելի Վ. Պահարեան

Ճիշդ երէկ ստացայ Ալիշան Բայրամեանի հեղինակած «Ալեքսանդրեթի Սանջաքի հարցը» նոր գիրքը, որուն շնորհահանդէսը տեղի պիտի ունենայ 4 Փետրուար 1999-ին: Մեծապէս շնորհակալ եմ, որ ինծի ալ չէք մոռցած:

Դժբախտաբար, սիրելի Պահարեան, ողջոյնի խօսքս ժամանակին պիտի չհասնի, քանի որ երեկ կէսօրին (3 Փետր.) ստացայ գիրքը և ժամանակ իսկ չունեցայ թերթատելու: Յամենայնդէպս Պ<Մ-ն մեկենասութիւնը ստանձնելով նման շատ

օգտակար գործին, շնորհակալ գործ մը կատարած է, մեծապէս գնահատելի։ Երանի ձեր օրինակին հետեւին ուրիշ հայրենակցական միութիւններ ալ։

Այս գիրքի մասին բարեկամէ մը լսած էի, որը կարծեմ հեղինակէն նուէր ստացած ու գիրքն ամբողջ կարդացած էր և ինծի յայտնած՝ բովանդակութիւնը, որ շատ հետաքրքրական է մեզի համար, որովհետև թուրք բանակին Սանճագ մտած օրը ես հոն էի և մայթի մը վրայ ընկերներուս հետ կը սպասէի տեսնելու համար թուրք զինուորը։ Զնդապետ Գոլէի առաջնորդութեամբ բանակը մուտք գործեց, բայց ինչ բանակ. հողի գոյն դէմքերով զինուորներ պարտուածի երեւոյթով կը քալէին. յայտնի էր, որ վախով մտած էին, կարծելով որ հայերու ընդդիմութեան պիտի հանդիպին։

Ֆրանսացիները նուէր տուին թուրքին՝ Սուրիոյ ծաղիկը հանդիսացող գեղեցիկ Սանճագը, որուն ծուկերը, պտուղները, հայկական տոկաշունչ ամառանոցները նշանաւոր էին այդ կողմերուն մէջ։ «Տէրէ պաղչէի» նուռերը, դեղձերը, տանձերը աշխարհի մէջ նշանավոր էին, որոնք ամբողջութեամբ հայերուն կը պատկանէին։ Ես կը յիշեմ այդ բոլորը, որովհետև նուռերը առասպաղէն կը կախէին, որպէս պարէն ձմեռուան։ Կը չորցնէին ու ձմեռը հիւրերուն կը հրամցնէին քաղցրահամ նուռերը։

Գիրքը պիտի կարդամ, որովհետև զիս շատ կը հետաքրքրէ։

Յայտնելով իմ խորին շնորհակալութիւններս քեզի և հայրենակցական միութեան, կը մաղթեմ յաջողութիւն, նորանոր յաջողութիւններ ու երկար և առողջ կեանք ձեր բոլորին, ու շարունակէք իրագործել պզգօգուտ և օգտաշատ գործունէութիւն սփիւռքի այս տարածքին վրայ։

Սիրով՝ (ստորագրութիւն)

**02-11-99 թ. ՎՆ-ում բարձր գնահատվեց Ալիշան Պայրամյանի գրքի շնորհանդեսի կազմակերպումը: Այդ առթիվ արձանագրությունից բերենք երկու նախադասություն:**

Վարչության փոխատենապետ Արա Պետրոսյանը արվեստով իրականացրեց հանդիսավարության դերակատարությունը։

Ատենապետ Վ. Բահարյանի ելույթները (2 անգամ) գերազանց էին։

**Հիշենք մի կարևոր հանգամանք: ՀՀԳԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Նիկոլայ Հովհաննիսյանի կողմից գիրքը նվիրվել է բազմաթիվ սփյուռքահայերի և արտասահմանյան հյուրերի, որոնք գրքի հրատարակության հաջորդող օրերին Երևանում մասնակցել էին ՀՀԳԱ-ում տեղի ունեցող միջազգային գիտաժողովին: Գիրքը հեղինակի և ՊՀՄ-ի վարչության կողմից ևս ուղարկվեց բազմաթիվ հասցեներով: ՊՀՄ-ի անունը սփռվեց ամբողջ աշխարհով մեկ, որպես ազգային գործունեություն կատարող կազմակերպություն:**

**Այս նիստում քննարկման ներկայացրեցի նաև ՀՀ նախագահ Ռոպերտ Քոչարյանին գրած նամակիս նախագիծը, որը վարչականների մեծամասնության կողմից որոշվեց ուղարկել: Մի քանի օր հետո Հայաստանից տեղեկություն ստացվեց Պետօպերայի թատրոնի տնօրենի պաշտոնից Լևոն Տիգրանյանի հեռացման մասին, ուստի նամակը չուղարկվեց, բայց կարևորություն ներկայացնելով հրապարակում եմ:**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՌՈԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի նախագահ,

ՊՀՄ-ն հիմնադրվեց **1986** թ. Լոս Անջելեսում և հիմնադրման օրից եղավ, կա ու պիտի մնա մեր անկախ Հանրապետության կողքին, պետականության կայացման և ամրապնդման, հայ ժողովրդի նպատակների իրականացման ճանապարհին:

Այս նկատառումներից ելնելով միությունը ջատագովում է հայկական մշակույթի աշխուժացումը Սփյուռքում և հատկապես Լոս Անջելեսում, որտեղ նա իրականացնում է իր գործունեությունը հանուն հայ ժողովրդի գոյատևման: Նա իր ստեղծման օրից ուշի-ուշով հետևում է համայնքի բոլոր, այդ թվում՝ մշակութային կյանքում տեղի ունեցող իրադարձություններին, որոնք այսօրվա դրությամբ բավարար հիմքերի վրա չեն դրված: Հայկական երաժշտությունը կորցրել է իր դեմքը համայնքում: Բացառությամբ մի քանի արվեստագետների, ինչպիսի երաժշտություն ասեք ներկայացնում են ժողովրդին: Մակարդակի մասին մտածող չկա: Շահի մարաթոն է: Եթե սրան ավելացնենք կազմակերպչական կողմը, որն ընդհանրապես գոյություն չունի, ապա պատկերը պարզ կդառնա: Սրանք լուրջ հարցեր են, որոնց վրա ոչ-ոք ուշադրություն չի դարձնում և՛ Հայրենիքում, և՛ Սփյուռքում, որի հետևանքով հաճախ ողբալի վիճակներ են ստեղծվում: Հայրենիք-Սփյուռք կապերի հիմնական հարցերից են սրանք և անհապաղ լուծում են պահանջում:

Հայաստանի անկախացումից հետո հայ մշակույթի գործիչները սկսեցին ողողել Սփյուռքը, իրենց հետաքրքրություններին հագուրդ տալու նպատակով: Սկզբում մի քանի խմբերի ներկայությունը ընդունելի էր Լոս Անջելեսում: Դժբախտաբար, հետագայում դա տարերային բնույթ կրեց, և Լոս Անջելեսի պատահական կազմակերպություն կամ անհատ իր գրպանի շահերի համար Հայաստանի արվեստագետների ելույթներ էր կազմակերպում Լոս Անջելեսում, որոնցից շատերը անփառունակ վախճան ունեցան կազմակերպիչների խաբեբայության ու փողերի յուրացման հետևանքով, որի արդյունքում որոշ խմբեր, նույնիսկ գիշերելու տեղ և Երևան վերադառնալու ճանապարհածախս չունեցան:

Վերջին օրերս Լոս Անջելեսում նույն պատմությունը կրկնվեց Երևանի Սպենդիարյանի անվան պետական օպերայի և բալետի թատրոնի 173 հոգիանոց խմբի հետ: Տիգրան Լևոնյանի բեմադրությամբ և Յուրի Դավթյանի խմբավարությամբ հունվարի 23-ին «Անուշ» օպերան ներկայացվել է Լոս Անջելեսի «Շրայն» հանդիսասրահում Անուշի դերում Անահիտ Մխիթարյան, Սարոյի դերում Դրաստամատ Պետրոսյան, Մոսիի դերում Կոնստանտին Սիմոնյան: Ներկա են եղել մոտ **5000** հոգի և մեծ հաջողություն է ունեցել, բայց խումբը Երևան վերադառնալու ճանապարհածախս չունի: Խմբի անդամներից մի քանիսը այստեղ մնալու նպատակով, Երևանում **6000**-ական դոլար են վճարել թատրոնի ղեկավարությանը[1]:

Այս երևույթը անհանգստության ու մտածմունքի տեղիք է տալիս, մանավանդ, որ այս հարցի շուրջ փետրվարի 8-ին Հայաստանի մշակույթի նախարար Ռոլանդ Շառոյանի մեկնաբանությունները Երևանից Լոս Անջելեսի «Հորիզոն» հեռուստակայանին, ուղղակի եթեր սփռման ժամանակ,

---

**1.- Տե՛ս «Նոր կեանք», թիվ 10, փետրվար 11, 1999 թ.:**

վստահություն չներշնչեց լսողներին և բավարար չէր այն իմաստով, որ, ըստ նախարարի մեկնաբանության, նախարարությունը բոլորովին «տեղյակ չէ» այս հարցերին, ու խոստանում է, որ հիմա անպայման կզբաղվի դրանցով: Նա պետք էր ժամանակին «զբաղվեր», որպեսզի այս խայտառակությունը չստացվեր:

ՊՀՄ-ի վարչությունը, դատապարտելով այս երևույթը և իր մտահոգությունները հայտնելով այդ առթիվ, գտնում է, որ լավ կլիներ.

1. Երևանում մշակույթի նախարարության կից ստեղծել հատուկ հանձնախումբ, որը զբաղվեր հայ մշակույթի գործիչների Սփյուռք գործուղման հարցերով, ճշտելով բոլոր անհրաժեշտ տեղեկություններն ու գործարքները տվյալ երկրում ՀՀ դեսպանատան կամ հյուպատոսարանի հետ:

2. Կարգավորել չվացուցակը, որպեսզի արվեստագետների ելույթները չխաչաձևվեն միմյանց: Այս օրերին Լոս Անջելեսում են գտնվում Երևանի Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի խումբը, Դո-Ռե-Մի մանկական համույթը 70 հոգով, Հրաչյա Ղափլանյանի անվան թատրոնի խումբը, Սպենդիարյանի անվան պետական օպերայի ու թատրոնի արվեստագետները, առանձին անհատներ, որոնց ելույթները խաչաձևվում են մեկը մյուսի և տեղի արվեստագետների ելույթների հետ:

3. Սփյուռքում ՀՀ դեսպանատան կամ հյուպատոսարանին կից նրանց և տեղի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ նույն ձևի հանձնախումբ ստեղծվեր, որը կարգավորեր համայնքում տեղի ունենալիք բոլոր ելույթների համադրումը:

Միայն այս ձևով կարելի է կանխարգելել ու կարգավորել տիրող խառնաշփոթության, խաբեբայության և այլ հարցերը, և ամենակարևորը՝ անաղարտ պահել մեր մշակույթի հարգարժան գործիչների անունները, որոնք հավատալով ու խաբվելով ամեն մի աճպարարին, գալով Լոս Անջելես, ընկնում են անելանելի դրության մեջ և անկախ իրենց կամքից խայտառակվում են, վնասելով նաև իրենց արժանապատվությանը:

Հետևաբար, մեր միությունը գտնում է, որ ՀՀ կառավարության միջամտությունը այս հարցում շատ կարևոր է և անհրաժեշտ, ու որքան շուտ լինի դա, այնքան լավ՝ մեր արվեստագետների ու ժողովրդի արժանապատվությունը բարձր պահելու համար:

Հարգանքներով՝
Ատենապետ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ
Քարտուղար՝ ՄԱՐՏԻՐՈՍ ԷՔՇԻՅԱՆ

**Նույն նիստում քննարկվեց նաև Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական Թատրոնի Հրաժեշտի երեկոյին մասնակցելու Հարցը: Դեռ 1998 Թ. նոյեմբերին, չնայած խիստ զբաղվածությանս (միության նոյեմբերի 14-ի ՃՊ-ին Հաշված օրեր էին մնում), այս Հարցում ընդառաջեցի Մանվելի առաջարկին, ժամանակ Հատկացրեցի, և այդ Թատրոնի Հյուրախաղերը Լոս Անջելեսում Հովանավորեց ՊՀՄ-ն: Թերջանյանի տպարանում ծանուցման գրքի վերջնական սրբագրությունն էի կատարում (իմ ատենապետության ամբողջ գործունեության ընթացքում այդ գործը ես եմ կատարել), երբ Մանվելը ներս մտավ և ասաց, որ Թատրոնի Հովանավորության Հետ կապված որոշ Հարցեր չեն լուծվում:**



**Գործս Թողեցի և, զանգելով այդ գործի պատասխանատուին, երկու ժամ դրանով զբաղվեցի, որպեսզի Թատրոնը կարողանա ժամանակին ունենալ իր ելույթները (1999 Հունվարին):**

**Թատրոնի վերջին ներկայացման չկարողացա անձամբ ներկա լինել, գրավոր խոսքս ուղղեցի անձնակազմին, և վարչության կողմից էլ մի գեղեցիկ ծաղկեզամբյուղ նվիրվեց նրան:**

**Նույն նիստում ընթերցվեց ՀՄՄ-ի նամակը** (տե՛ս հավելված էջ 497) **և ՊՀՄ-ի վարչության ՀՄՄ-ին ուղարկած նամակը** (տե՛ս հավելված էջ 498):

**Այս ընթացքում պրոֆ. Նիկոլայ ՀովՀաննիսյանին ուղարկվեց նամակ** (տե՛ս հավելված էջ 499):

**Մայիսի 7-ին վարչությունը ՄՀՄ-ի սրաՀում ակտիվորեն մասնակցեց արձակագիր Պողոս Քյուփելյանի «Merci Beaucoup, Ասպետական Ֆրանսա» Հատորի գինեձոնին, որը տեղի էր ունենում Հովանավորությամբ Համազգայինի Արևմտյան Ամերիկայի Շրջանային Վարչության, կազմակերպությամբ «Սարդարապատ» գրախանութի և մասնակցությամբ ՄՀՄ-ի, Հայ Կաթոլիկե Երիտասարդական Միության, ՊՀՄ-ի:**

**Մայրերի օրվա միջոցառումը մեծ Հաջողություն ունեցավ: Այդ առթիվ գրեցի Հետևյալ Հոդվածը[1]:**

ՄԱՅՐԸ ԱԶԳԻ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ...

ՊՀՄ-ի վարչության Տիկնանց հանձնախմբի կազմակերպած Մայրերի օրվան նվիրված հանդիսությունով, վարչությունը մի անգամ ևս ուզեց ընդգծել մոր արժանիքները կյանքում և հարգանքի տուրք մատուցել նրան:

Հանդիսությունը տեղի ունեցավ Մայրերի օրը՝ կիրակի, մայիս 9, 1999 թ., ցերեկվա ժամը 11:30-ին, «Երևանյան գիշեր» տոնական տեսք ստացած սրահում **(6211 Hollywood Blvd., Los Angeles, CA 90028), 250** հոգու ներկայությամբ:

Հանդիսավարներն էին՝ Տիկնանց հանձնախմբի անդամ և «Կարկաչ» հեռուստատեսության մանկական հաղորդումների հիմնադիր Սեդա Հայրիյանը և Մարի Թերջանյանը՝ վարչության նախկին անդամ, լուսահոգի Գևորգ Թերջանյանի այրին: Սեդա Հայրիյանի բարի գալուստի խոսքից հետո, բացման խոսքով հանդես եկա ես:

Վարչության և Տիկնանց հանձնախմբի անունից շնորհակալություն հայտնելով ներկաներին, շարունակեցի.

«Այսօր այստեղ ներկա են Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հյուպատոսարանից՝ հյուպատոս Արմեն Հայրապետյանը, Տեր և Տիկին Ալիշան և Սիլվիա Պայրամյանները:

Այսօրվա ուրախ առիթով շնորհավորում եմ բոլոր մայրերին, որոնք իդեալական սրբություն են հանդիսանում մեր ընտանիքներում, որոնց վրա դրված են ընտանիքի ամենադժվար պարտականություններն ու հոգսերը՝ սկսած ժառանգ ունենալուց, դաստիարակելուց, վերջացրած տան հոգսերով

---

**1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Երեքշ., Մայիս 25, 1999, Թիվ 93:**



Մայրերի օրվա առթիվ: Ձախից աջ՝ առաջին շարք. Արա Պետրոսյան, Քնարիկ Սալաթյան, Սյուզի Հեքիմյան, Ախգա Տոնոյան, Սեդա Հայրիյան, Լուիզա Կվրյան, Մարի Թերջանյան, Մարգարիտ Գարայան: Երկրորդ շարք. Գրիգոր Դովլաթյան, Հարություն Հարությունյան, Մանվել Մարաշյան, Մանուկ Տոնոյան, Վահան Բահարյան, Մարտիրոս Էքշյան, Հովսեփ Գասպարյան:

և իրենց ամուսիններին օգնելով:

Մայրերը դժվարություններին դիմացող ամենաաննկուն արարածներն են, դժբախտությունները երբեմն ընկճում են նրանց, բայց նրանք երբեք չեն ընկրկում և չեն նահանջում իրենց պարտականություններից, պատասխանատվություններից, իրենց ընտանիքի հանդեպ:

Խորհրդային շրջանում, Մայրերի օրը մեծ շուքով տոնվում էր մարտի 8-ին, և այդ օրը աշխատանքային օր չէր, ի հարգանք նրանց:

Այսօր մայիսի 9-ն է, Խորհրդային Միության հաղթանակի օրը ֆաշիստական Գերմանիայի դեմ: Ինչպես ամեն մի պատերազմում, Երկրորդ Համաշխարհային պատերազմի հետևանքով ևս միլիոնավոր մայրեր, այդ թվում և հայ մայրեր, սգացին իրենց երիտասարդ որդիների առհավետ կորուստը: Նրանց պետք է համարել հերոսներ, որովհետև նրանց ծնած երիտասարդներն իրենց արյան գնով խաղաղություն բերին աշխարհին, որպեսզի ապագա սերունդները սուգ չտեսնեն: Մայրն է ազգի բազմացման հիմքը:

Առանց մայրերի ոչ մի ազգ չի կարող գոյատևել:

Եկեք մեր մայրերին հարգենք, ուրախացնենք, երջանկացնենք նրանց ողջ եղած ժամանակ: Մեզանից հեռանալուց հետո, ոսկե արձան էլ կանգնեցնենք նրանց շիրիմներին, նրանք հանգիստ չեն լինի իրենց շիրիմներում, և մեր խիղճն էլ չի հանգստանա:

Փառք մեր մայրերին, որոնք պատմություն են կերտում:

Բոլորիդ ցանկանում եմ բարի գալուստ և ուրախ Մայրերի օր»:

Տիկնանց հանձնախմբի անդամ Լուսինե Պողոսյանը իր ելույթում,



շնորհավորելով ներկաներին, պատմեց Մայրերի օրվա մտահղացման ու առաջացման մասին, թե ինչպես 1908 թ., Ամերիկայի բազմաթիվ քաղաքներում, Աննա Ջերվիսի ջանքերի շնորհիվ, Մայիսի երկրորդ կիրակին սկսվեց տոնվել Մայրերի օրը և 1914 թ. Միացյալ Նահանգների Ներկայացուցչական Տունը (Կոնգրեսը) պաշտոնականացրեց այն, իսկ 1915 թ. նախագահ Վուդրո Վիլսոնը վավերացրեց որոշումը, որից հետո Ամերիկայում, ինչպես նաև աշխարհի բազմաթիվ երկրներում Մայրերի օրը դարձավ ժողովրդական տոն ու տոնվում է մեծ շուքով:

Գեղարվեստական ձոխ հայտագրում մորը նվիրված գեղեցիկ ստեղծագործությունով հանդես եկավ Լուսինեի տասներկուամյա դուստրը՝ Վիկտորիան: Մայրերին շնորհավորեցին Հայ քույրերի վարժարանի աշակերտուհիները, գեղեցիկ հայկական տարազներով ներկայացնելով հայկական պար: Մարի Թերջանյանը բարձր պաթոսով կատարեց Սիլվա Կապուտիկյանի մորը նվիրված բանաստեղծությունը: Վարսենիկ Հակոբյանը ներկաներին գրավեց իր իսպանական պարերով: Սեդա Կվրյան-Հայրիյանը կատարեց Պարույր Սևակի «Մոր ձեռքերը»՝ հուզմունք պատճառելով ներկաներին: և Մարի Թերջանյանի հայտարարությունով սկսվեց կանացի հագուստների փարիզյան նորաձևության ցուցադրությունը: 10 անփորձ պարմանուհիներ 30 րոպե հատուկ, փարիզյան երաժշտության հնչյունների տակ, շատ բնական ու գեղեցիկ ձևով ցուցադրեցին դրանք՝ մեծ աշխուժություն մտցնելով սրահում և արժանացան ներկաների ջերմ գովասանքներին:

Արժեքավոր նվերներով պարգևատրվեցին ամենատարեց, ամենաերիտասարդ և ամենաբազմազավակ մայրերը:

Հայկական պարերը ավելի ջերմացրեցին մթնոլորտը:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ Տիկնանց հանձնախմբի ատենապետուհի Սյուզի Հեքիմյանը, որը շնորհակալություն հայտնեց միության կազմակերպած այս գեղեցիկ հանդիսության մասնակիցներին:

Բոլորն անհամբեր սպասում էին վիճակախաղի անցկացմանը, որ կազմակերպված ու հետաքրքիր կերպով անցկացրեց Տիկնանց հանձնախմբի անդամ Եղիսաբեթ Մարոնյանը: Նվերներ շահողները ուրախ տրամադրությամբ, իսկ չշահողները՝ եկող տարվա հույսով հեռացան սրահից:

Վարչության անունից շնորհակալություն եմ հայտնում Տիկնանց հանձնախմբի բոլոր անդամներին, որոնք ջանք չխնայեցին հանդիսության հաջողության համար, հանդիսավարներ Սեդային և Մարիին, որոնք հիանալի կերպով վարեցին հանդիսությունը, Հայ քույրերի վարժարանի աշակերտուհիներին՝ հանդիսության իրենց անսակարգ մասնակցության համար, **Nataly's Collection**-ին, իր հագուստները ցուցադրության տրամադրելու համար, Սելիմ Գամիլին, սրահը փուչիկներով անվճար զարդարելու համար, «Երևանյան Գիշեր» սրահի տնօրինությանը և անձնակազմին՝ հանձին Կարոյի, որ ներկաներին բարձր սպասարկությամբ հրամցրեցին համադամ ճաշեր ու լավ վերաբերմունք, վարչության անդամներին և հատկապես մասնակիցներին, առանց որոնց չէինք կարող իրականացնել հանդիսությունը և որոնք գոհ հեռացան սրահից՝ իրենց հետ տանելով լավագույն տպավորություններ:

**Հունիս ամսին Բեյլանի մասին մի քանի նկարների պատճեն ստացա Կանադայից, Հայտնի մտավորական և գրող՝ Սարգիս Պալյանի միջնորդությամբ** (այդ առթիվ վարչության շնորհակալական նամակը տե՛ս հավելված էջ 500):

**Հունիս 13-ին վարչությունը մասնակցեց Արա Պետրոսյանի տղայի՝ Զավենի ավարտական խնճույքին** (այդ առթիվ նրան տրված շնորհավորական բացիկը տե՛ս հավելված էջ501):

**8-30-99 թ. Վ Ն-ում, դաշտահանդեսի հարցերի հետ քննարկվեց նաև Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հյուպատոսից ստացված Համահայկական խորհրդաժողովը նախապատրաստող կառավարական հանձնաժողովի, ՊՀՄ-ի վարչության ուղղված 20 օգոստոս, 1999 թվակիր բացատրական նամակ-հրավիրագիրը՝ Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովին մասնակցելու կապակցությամբ, որտեղ կազմակերպչական հարցերի հետ գրված էր.**

Այս համազգային ձեռնարկին ձեր նպաստը բերելու համար, որպես ամերիկահայ համայնքում գործունեություն ծավալող կազմակերպություն, հրավիրվում եք մեկ ներկայացուցիչ առաքելու սեպտեմբերի 22-23-ին Երևանում կայանալիք համահայկական խորհրդաժողովին: Խնդրում ենք մինչև ս.թ. օգոստոսի 27-ը Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովի կազմակերպման աշխատանքային խմբին ուղարկել ձեր պատվիրակի անունը և տվյալները:

**Արձանագրության որոշման մեջ գրված է.**

... Ժողովի մասնակիցները, լրջորեն քննարկելով ներկայացված հարցի կարևորությունը որպես սկզբնակետ ՀՀ հետագա վերելքին, որը յուրաքանչյուրիս անկեղծ փափաքն է, միաձայն որոշեցին. ատենապետ Վ. Բահարյանին գործուղել Երևան մասնակցելու համար վերոհիշյալ ժողովին և անելու իր կարելին հնարավոր սահմաններում:

Հայաստանում իր կեցության շրջանին լիապորել Վ. Բահարյանին զբաղվելու 1915 թ. պէյլանցի կոհերի հիշատակը հավերժացնող, 1975-ին կառուցված հուշարձանի և այլ հարակից հարցերով:

**Բեյլանի հուշարձանի հարցերով նամակ պատրաստեցի ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին** (նամակը և արձանագրության քաղվածքը տե՛ս հավելված էջ502-503): **Ինչպես ժողովրդական առածն է ասում. «Տան պազարը չուկային չի բռնում»: Իրոք, երբ Երևանում մասնակցեցի Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովին և ծանոթացա տեղի կացությանը, նամակում շոշափված հարցերի լուծման մասին ավելորդ էր մտածել, քանի որ, ինչպես ասում են «բարև»ն էլ փողով էր, կաշառակերությունն ու անօրինականությունը գլուխներն առել գնում էին, տեր-տիրական չկար:**

**Մեջբերում եմ սույն նամակի երկու պատճենների վրա նշումներս Լոս Անջելես վերադառնալուց հետո՝ 11-15-99 թ.:**

Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովի ժամանակ, երբ ծանոթացա երկրի ներկա քաղաքական և տնտեսական պայմաններին, ծիծաղելի թվաց ինձ, այսպիսի մի նամակ պատրաստելը: Երբ այցելեցի Բեյլանի հուշարձանը, հիասթափություն ապրեցի: Այն գտնվում է կղզիացած մի տարածքում: Այնքա՜ն հեռու է գտնվում Երևան-Էջմիածին գլխավոր մայրուղուց (գտնվում է Ոսկեհատի՝ նախկին 4-րդ Սովխոզի գերեզմանոցին կից), որ այնտեղ պետք է գնալ սեփական մեքենայով կամ տաքսիով՝ Էջմիածնով, հետո Ոսկեհատի միջով, այսինքն այն կտրված է կյանքից,



ուստի դրա մասին մտածելն անիմաստ է: Հետևաբար, նախ լուրջ ձևով պետք է քննարկել դրա գոյության պայմանները և հոգատարությունը, որից հետո միայն կարելի է վերադառնալ նամակում արծարծված հարցերին:

**Երևանից վերադառնալուց հետո, հաշվետվություն գրեցի իմ գործուղման կապակցությամբ և որպես գիրք հրատարակեցի այն՝ «Հայաստան-Սփյուռք համաժողով և հայաստանյան օրագիր[1]»: Գրքի 14-րդ էջում գրված է.**

Քանի որ խորհրդաժողովում, որպես պատգամավոր, ես ներկայացնում էի Պէյլանի հայրենակցական միությունը (լինելով նրա վարչության ատենապետը), ուստի այս աշխատությունը դիտում եմ որպես ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ:

**10-28-99 թ. Վ Ն-ում, նկատի ունենալով Հայաստանի Ազգային ժողովում կատարված ողբերգությունը, վարչությունը միաձայն որոշում ընդունեց՝ չեղյալ համարել միության նոյեմբերի 13-ին նախատեսված ճՊ-ն որպես հարգանք հանգուցյալների հիշատակին[2], և տվյալ ժամանակաշրջանը՝ սգատոն, ինչպես նաև ցավակցական նամակ ուղարկեց Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հյուպատոսին** (տե՛ս հավելված էջ504):

**Ըստ բանկի 12-16-99 թ. տվյալների, միության ունեցած գումարը 28108 դոլար և 92 սենթ է:**

---

1,-Երևան, 2001 թ., «Զանգակ-97»:

2.- 1999 թ հոկտեմբերի 27-ին, մարդասպաններ՝ Նաիրի (գլխավոր կազմակերպիչը և ղեկավարը) և Կարեն Հունանյանները, Նաիրիի քեռին՝ Վռամ Գալստյանը, Էդուարդ Գրիգորյանն ու Դերենիկ Բեջանյանը, Ազգային ժողովում սպանեցին վարչապետ՝ Վազգեն Սարգսյանին, Ազգային ժողովի նախագահ՝ Կարեն Դեմիրճյանին, Ազգային ժողովի փոխնախագահներ՝ Յուրի Բախշյանին և Ռուբեն Միրոյանին, պետական գործողությունների նախարար՝ Լեոնարդ Պետրոսյանին, ակադեմիկոս և ազգային ժողովի անդամ Միքայել Քոթանջյանին, «Հայաստան» թերթի նախկին խմբագիր և ազգային ժողովի անդամ Արմենակ Արմենակյանին, իսկ ծանր կամ թեթև վերքեր ստացան. սեփականաշնորհման նախարար՝ Դավել Ղալթախճյանը, Ազգային ժողովի անդամներ՝ Արմեն Խաչատրյանը, Անդրանիկ Մանուկյանը, Ժիրայր Գևորգյանը, Հերմինե Նաղդալյանը, Էդմոն Ծատուրյանը և ուրիշներ (տե՛ս «ՆորՕր»,Շաբաթ,Նոյեմբեր6,1999թ.,էջ27և«Մասիս», Շաբաթ, Նոյեմբեր 6, 1999, թիվ 40, էջ 1):

## ԺԵ. ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 2000 Թ.

1999 թ. նոյեմբերին սկսված բուժումս վերջացավ 2000 թ. հունվարի 8-ին, բայց տնից չէի կարողանում դուրս գալ՝ կապված հետևանքների հետ:

Հունվարի վերջին խնդիրներ ունեցա վաղուց ինձ անհանգստացնող լեղապարկիս հետ: Մի շաբաթ մի կերպ համբերելուց հետո զգացի, որ բարդություններ է առաջանում: Հունվարի 28-ին գնացի Սենթ Ժոզեֆ հիվանդանոցի շտապ օգնության բաժանմունքը: Ստուգելուց հետո ինձ պահեցին հիվանդանոցում, երկու անգամ գործողություն եղա, փետրվարի 6-ին դուրս գրվեցի և սկսեցի ապաքինվել տանը:

Մի օր Տիգրանուհին՝ Նուբարի կինը զանգեց և նրա 70-ամյակին հրավիրեց ինձ որպես անակնկալ միջոցառում: Որպես ձևական երևույթ, սա էլ մոդա դարձավ Լոս Անջելեսում: Հրավիրում էր, որովհետև ՊՀՄ-ի վարչության ատենապետն էի և առանց ատենապետի, վարչականների ներկայությունը միջոցառմանը դրական երևույթ չէր լինի հոբելյարի համար, ի՞նչ կասեին ներկաները...: Տեղյակ լինելով հանդերձ Նուբարի ու Մանվելի կողմից իմ դեմ հյուսվող դավերին (Տիգրանուհին ո՞րքան մաս ուներ դրանց մեջ, չգիտեմ...), ես մասնակցեցի այդ միջոցառմանը:

Վարչության կողմից նրան նվիրված բացիկում գրված էր.

Սիրելի Նուբար,

ՊՀՄ-ի վարչությունը շնորհավորում է 70-ամյա հոբելյանդ, ցանկանում է քեզ ընտանյոք քաջառողջություն, երջանիկ ընտանեկան կյանք Տիգրանուհու, երեխաներիդ ու հարազատներիդ հետ:

Հայրենասիրական գործունեությունդ թող վարակի բոլոր հայրենակիցնե-րին, իրենց լուման ներդնելու Հայրենիքի բարգավաճման գործին:

Հարգանքներով՝ ՊՀՄՎ, Լոս Անջելես, 3-12-2000 թ.:

Նուբարն ու Տիգրանուհին սկսեցին մոտենալ սեղաններին, հյուրերին շնորհակալություն հայտնելու իրենց ուրախության մասնակից դառնալու համար: Երբ մոտեցան մեր սեղանին, Նուբարը երկու խոսք փոխանակեց հետս գոնե քաղաքավարության համար, իսկ Տիգրանուհին անմիջապես մոտեցավ հաջորդ սեղանին նստած ծանոթին: Ասացի. «Տիգրանուհի, մեկ մարդու տեղ չէ՞ս դնում, չէ՞ որ մեկնից հետո այդ սեղանին եք մոտենալու»: «Օֆ, դու էլ ամեն ինչի վրա խոսում ես, գալիս եմ է՛լի...» ասաց: Այլևս չխոսեցի, և այդ պարտադրական քաղաքավարական մոտեցումով վերջացավ մեր հանդիպումը:



Հոգեհանգիստ-հոգեճաշը տեղի ունեցավ ապրիլի 30-ին Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցում և դրա սրահում: Այդ առթիվ ելույթ ունեցավ Մարտիրոս Էքշիյանը: Նա լուսաբանեց Մեծ եղեռնի արհավիրքները և հայ ժողովրդի լուսավոր ապագան:

Մայրերի օրվա առթիվ խոսքս ու հոդվածը մեջբերվում են:

### ՓԱՌՔ ՀԱՅ ՄՈՐ

Սիրելի մայրեր, հարգարժան բարեկամներ և հյուրեր, այսօր այս գեղեցիկ սրահում հավաքված ենք նշելու մեր գեղեցիկ սերի, սիրասուն «Մայրերի օրը», որը աշխարհի ամենանվիրական տոներից մեկն է:

Առանց մոր, երկրի վրա կյանք գոյություն չունի: Մայրը ազգի գոյատևման հիմքն է: Առանց նրան չկա նոր սերունդ: Իսկ եթե չկա նոր սերունդ, ապա ազգը դադարում է գոյություն ունենալուց:

Ահա թե ինչու բոլոր և հատկապես փոքր պետությունների մեծագույն հոգսը իրենց ազգաբնակչության աճն է, որով պայմանավորված է տվյալ երկրի հզորությունը, տնտեսական զարգացումը և ազգի գոյատևումը:

Այս իմաստով հայ ազգը գտնվում է աննախանձելի վիճակում: Քաղաքում ապրող հայ ընտանիքում երեխաների միջին թիվը 2 է: Հայ ազգի հիմնական աճը Հայաստանի գյուղերից է, որտեղ յուրաքանչյուր ընտանիքում միջին հաշվով **4-5** երեխաներ են ծնվում: Եթե այս թվերը համեմատենք Թուրքիայի կամ Մեքսիկայի բնակչության աճի հետ, որտեղ մի ընտանիքում համապատասխանաբար **7-12** և **15-20** երեխաներ են ծնվում, ապա զարմանալի չի թվա, թե ինչո՞ւ **50-60** տարի առաջ **10** միլիոն բնակչություն ունեցող Թուրքիան, այսօր **65** միլիոնի շուրջ բնակչություն ունի:

Չհաշված վերջին տարիները, Հայաստանում հայ ընտանիքների կենսական պայմանները համեմատաբար ավելի լավ են եղել, քան թուրքերինը կամ մեքսիկացիներինը: Բայց ազգի բազմացումը երբեք ակնառու չի եղել: Հետևաբար, եթե ուզում ենք որպես ազգ գոյատևել, առաջին պայմանը համեմատաբար շատ երեխա ունենալն է:

Բոլորս էլ գիտենք, որ Հայաստանում տասնյակ տարիների ընթացքում որոշակի աճ ունեցած հայ ժողովուրդի մոտ կեսը արտագաղթեց, հատկապես՝ վերջին տարիներին և երկրի բնակչության թիվը կտրուկ նվազեց, որը բացասական անդրադարձ ունեցավ երկրի տնտեսության վրա: Իսկ արտագաղթածների հետագա ճակատագիրը անխուսափելիորեն դառնալու է սպիտակ ջարդը: Ահա այս ձևով է պակասում հայ ժողովրդի թիվը:

Այս բոլորը նշեցի ո՛չ թե նրա համար, որ այսօր ձեր տրամադրությունը գցեմ, այլ նրա համար, որ մենք մեր մայրերի հարգը իմանանք: Նրանք են ստեղծում այդ ժողովուրդը: Նրանք են ծնել այն երիտասարդներին, որոնք պաշտպանեցին մեր երկիրը, իրենց արյան գնով ազատագրեցին մեր պապենական հողերը Արցախում: Փա՜ռք նրանց հիշատակին:

Նեղ օրերը կանցնեն, միայն թե ժողովուրդն իր հույսը չկորցնի: Նա նորից կբարգավաճի և կունենա իր հզոր հայրենիքը, ժողովրդի բարեկեցիկ կյանքով: Մենք լավատես ենք մեր Հայրենիքի նկատմամբ: Փա՜ռք նրան:

Այսօր, Մայրերի օրվա առթիվ, անհուն սիրով շնորհավորում ենք ազգի գոյության հիմնաքարը հանդիսացող մեր մայրերին, ցանկանալով նրանց քաջառողջություն, ընտանեկան սեր և երջանկություն:

Թող խաղաղություն լինի ամբողջ աշխարհում և հատկապես մեր

Հայրենիքում, որպեսզի ոչ մի մայր որդու ցավը չզգա:

Փա՛ռք, ընտանեկան սյունը հանդիսացող անվեհեր, նվիրական մայրերին:

**Հոդվածը[1].**

## ՄԱՅՐԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՍՅՈՒՆՆ Է[2] ...

Թող մայրական օրհնությունը
Ընտանիքում միշտ վառ մնա:
Իսկ նա որպես նրա սյունը
Անմահությամբ հավերժանա:

ՊՀՄ-ի վարչության կազմակերպմամբ Մայրերի օրվան նվիրված ցերեկույթը տեղի ունեցավ Մայիս **14, 2000** թ. ժամը **11:30**-ին «Երևանյան գիշեր» տոնականորեն զարդարված գեղեցիկ սրահում (**6211 Hollywood Blvd., Los Angeles, CA 90028**), **250** հոգու ներկայությամբ: Ներկաները եկել էին հարգանքի տուրք մատուցելու մայրերին, որոնք իրենց ամբողջ կյանքը նվիրում են ընտանիքի բարօրության համար:

Բացման խոսքով հանդես եկա ես:

Տիկնանց հանձնախմբի անդամուհի Արդա Տոնոյանը լուսաբանեց, թե ինչպե՞ս է ստեղծվել Մայրերի օրը Ամերիկայում **1908** թ., ինչպե՞ս է կամաց-կամաց մեծ ժողովրդականություն ստացել և վերջապես **1914** թ. կառավարության կողմից պաշտոնականացվել, իսկ **1915** թ.՝ վավերացվել նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից:

Գեղարվեստական հարուստ հայտագրում չորսամյա Անի Արթինյան արտասանեց մայրերին նվիրված բանաստեղծություն:

Շնորհալի Մերի Բալյանը կատարեց Մադոննայի երգերից մեկը, որն ընդունվեց բուռն ծափահարություններով:

**17**-ամյա Անի Մուղդչյանը սովորում է համալսարանի երաժշտական բաժնում, միաժամանակ իր երգարվեստը կատարելագործում է Բեյրութահայ **35** տարվա երգչուհի և երաժշտագետ-դասախոս Ժանեթ Գույումջյանի մոտ: Նա բարձր կատարողական արվեստով, ինքնուրույն մեկնաբանությամբ, ներկաներին նվիրեց «Մայրիկիս», «Կռունկ», «Ավե Մարիա» և «Ծիծեռնակ» երգերը, հիացմունք պատճառելով նրանց: Անին մեծ ապագա խոստացող արվեստագիտուհի է: Ցանկանանք հաջողություններ ուսման գործում, հավատալով, որ նա իր լուման կունենա հայ երգը միջազգայնացնելու գործում:

Տիկնանց հանձնախմբի անդամ Մարի Թերջանյանը պաթոսով ասմունքեց «Մայրիկիս» բանաստեղծությունը:

**«Knar's Fashion»**-ի կողմից ներկայացվեց նորաձևության ցուցադրություն (մոդելները բեյրութցիներ էին), որը ավելի աշխուժացրեց մթնոլորտը:

Մայրերին սրտի խոսք ասաց հրավիրյալ, սկսնակ բանաստեղծուհի Լուսինե Մարաբյանը:

Վարչության փոխատենապետ Արա Պետրոսյանը մայրերին շնորհավորեց ասմունքով և վարչության անունից շնորհակալություն հայտնեց Տիկնանց հանձնախմբին այս գեղեցիկ միջոցառումը կազմակերպելու առթիվ:

Ամերիկայում հայկական առաջին մանկապատենական հեռուստածրագրի հեղինակն է շնորհալի արվեստագիտուհի, միության Տիկնանց հանձնախմբի անդամ Սեդա Հայրիյանը, որը այս ցերեկույթի հանդիսավարն էր: Նա բծախնդրորեն էր կազմել հայտագիրը, որի ընթացքում մերթ ընդ մերթ այն համեմում էր մայրերին նվիրված գեղեցիկ ստեղծագործություններով: Նրա հանդիսավարությամբ միջոցառումը վերածվեց մշակութային ցերեկույթի, հիացմունք պատճառելով ներկաներին:

Երգիչ Արթուր Սատուրյանը իր «Նաիրի» նվագախմբով ներկաներին ուրախացրեց առանց նյութական ակնկալիքների: Նա հանդես եկավ մայրերին նվիրված գեղեցիկ երգերի կատարումով, թեժացնելով պարային մթնոլորտը իր նվագախմբի հետ:

Ներկաները գոհ հեռացան ցերեկույթից:

Վարձքերնիդ ի կատար բեյրութցիներ:

**Մայրերի օրվա առթիվ վարչության կողմից Անիին տրված շնորհավորական բացիկում (5-29-2000 թ.) գրված է.**

Սիրելի Անի Մուղդչյան,

ՊՀՄՎ-ի և Տիկնանց հանձնախմբի անունից շնորհակալություն ենք հայտնում քեզ, կիրակի, մայիս 14, 2000 թ. Մայրերի օրվա առթիվ քո հայկական երգերի գեղեցիկ կատարման համար:

Շնորհավորում ենք քեզ քո հաջողությունների համար երաժշտության մեջ, մեծ հույս ունենալով, որ մի օր քեզ կտեսնենք միջազգային բեմերում, հայկական երգը տարածելիս օտարների մեջ՝ հպարտություն բերելով հայ ազգին:

Հարգանքներով՝
ատենապետ՝ Վահան Բահարյան
Տիկնանց հանձնախմբի ատենապետուհի՝ Սյուզի Հեքիմյան:

**Դեռ Հունվարին մի գրություն[1] էի կարդացել, որի համաձայն Սարգիս Սողանալյանը արգելափակվել էր: Այս առիթով զանգեցի Մերի Նաճարյանին, պարզվեց, որ ինքն է զբաղվում նրա հարցով: Առաջարկեցի միության օգնությունը և համապատասխան հարցերը կարգավորելուց հետո, ՊՀՄ-ի անունից անհրաժեշտ հասցեով նամակ ուղարկեցի** (տե՛ս հավելված էջ 505):

**Դաշտահանդեսը հաջողություն ունեցավ, որի մասին է խոսում մամուլում լույս տեսած հոդվածը[2]:**

## ՊԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

Դաշտահանդեսը տեղի ունեցավ Կիրակի, օգոստոս **27, 2000** թ., **Griffith park**-ի **Crystal Springs Picnic Grounds Park Rengers**-ում:

Ինչպէս միշտ, առավոտյան ժամը 8-ից արդեն ժողովուրդը սկսեց գալ և զբաղեցնել իր համար հարմար սեղանը:

Դաշտահանդեսում քեթըրինգ չի լինում և ժողովրդին չի պարտադրվում ուտելիք գնել: Նա հետն է բերում բազմատեսակ ուտելիքներ, պատ-

1.- Տե՛ս «Նոր Օր», Շաբաթ, Հունիս 3, 2000:

2.- Այս վերնագրով բանաստեղծությունս ձոնվեց մայրերին, Մայրերի օրվա առթիվ: Տե՛ս «Միրո Ղողանջներ», Երևան, 2001, «Զանգակ-97»:

1.- Տե՛ս «The California Courier», January 13, 2000:

2.- Տե՛ս «Նոր Օր», Շաբաթ, Սեպտեմբեր 16, 2000:



*Վահան Բահարյանը ներկայացնում է Գրեն Միսակյանին: Ձախից աջ՝ Մարտիրոս Էքչյան, Գրիգոր Դովլաթյան, Գրեկ Միսակյան, Նուբար Միսիր-Գեորգյան, Փայլակ Ահարոնյան, Վահան Բահարյան, Հովսեփ Գասպարյան, Հարություն Հարությունյան:*

*բաստված Բեյլանի և շրջակա գյուղերի իր պապերից փոխանցված սովորություններով, իսկ խորոված էլ տեղում անելով, բոլորը միասին ուրախանում են իրենց երեխաների, վաղուց չտեսած ու այնտեղ հանդիպած բարեկամների ու վաղեմի ծանոթների հետ:*

*Մեր միության կազմակերպած դաշտահանդեսին մասնակցում են նաև ոչ-բեյլանցիներ, որի համար շատ ուրախ էլ ենք, որովհետև որքան շատ հայեր և, հատկապես, երիտասարդներ ու երեխաներ ներկա լինեն, այնքան ազգայինը կամրապնդվի նրանց մեջ և ուծացումը կդանդաղի:*

*Ուրախությունը սկսվեց երգիչ Արթուր Սատուրյանի և իր «Նաիրի» նվագախմբի գեղեցիկ հայկական երգերի ու պարեղանակների կատարումով: Սկսվեցին հայկական կրակոտ պարերն ու շուրջպարերը, գնալով ավելի աշխուժացան՝ մեկ միշտ հիշեցնելով բնօրրանն իր ամբողջ գեղեցկությամբ, որ դժբախտաբար հիմա վայելում են հայերի ցեղասպան՝ թուրքերը:*

*Սեղանների վրա ուտելիքները շնորհքով դասավորված են և ով որտեղ հանդիպում է, այնտեղ էլ ուտում է: Հավաքված մոտ* **500** *հոգու սեղանները միանալով դարձել են մի սեղան, ժողովուրդն էլ՝ միասնական մի ընտանիք: Միության կողմից նվերներ տրվեցին լավ պարող, երգող և արտասանող երեխաներին, իսկ հետո՝ բոլոր երեխաներին:*

*Այս տարվա դաշտահանդեսը հատկանշական էր նաև նրանով, որ մեկ անակնկալ հյուր եղավ Կալիֆորնիայի նահանգի կոնգրեսի հայ թեկնածու Գրեկ Միսակյանը, որը, գնահատելով մեր միության ազգային և հայապահպանման գործունեությունը, պատվեց մեկ իր ներկայությամբ: Իր ծնողները, Կիլիկիայից են՝ Քեսապից: Ահա, թե ինչու նա բոլոր սեղաններին մոտեցավ*



*հարազատորեն, ծանոթացավ բեյլանցի հին ու նոր սերունդների հետ, ուրախություն պատճառելով բոլորին:*

*Հայերս պետք է աշխատենք շատ կոնգրեսմեններ ունենալ նահանգներում և Սպիտակ Տան մեջ, որպեսզի մեր իրավունքները պաշտպանելով հանդերձ, իրենց լուման բերեն նաև հայապահպանման գործին:*

*Վարչությունը շնորհակալություն է հայտնում Կալիֆորնիայի նահանգի կոնգրեսի հայ թեկնածու Գրեկ Միսակյանին, որ իր հարգանքը մատուցեց միության, ներկա եղավ դաշտահանդեսին և մի կտոր հաց կիսեց մեկ հետ:*

*Դաշտահանդեսը շարունակվեց մինչև մութն ընկնելը:*

*Վերջում տեղի ունեցավ վիճակահանություն: Շահողները իրենց նվերներով ուրախ-ուրախ, իսկ չշահողները եկող տարի շահելու հույսով հեռացան դաշտահանդեսից, իրենց հետ տանելով այդ օրվա տպավորությունները և հուշերը:*

*Շնորհակալություն երգիչ Արթուր Ծատուրյանին և իր նվագախմբի անդամներին, առանց ականջալիքների դաշտահանդեսին սիրահոժար իրենց մասնակցությունը բերելու համար:*

*Վարձքերնիդ ի կատար, բեյլանցիներ:*

***Միայն նշենք, որ Գրեկ Միսակյանին ուղեկցում էր Փայլակ Ահարոնյանը, որի հետ եկել էր նաև Նուբար Միսիր-Գեորգյանը, որը առաջ վազելով սկսեց ուղեկցել Գրեկին դեպի սեղանները, կարծեք թե ինքն էր վարչության ատենապետը: Իհարկե այդ պահին անհարմար էր որևէ բան ասել, հետո Փայլակ Ահարոնյանին ակնարկեցի այդ մասին, բայց...:***

***11-08-2000 թ. Վ-ն-ում քննարկվեց նաև «Հայաստան» Հիմնադրամի նոյեմբերի 23-ին կայանալիք թելեթոնին առթիվ ստացված նամակը, ըստ որի թելեթոնի ժամանակ միությունից երկու հոգու էր թույլատրվում խոսք ասել, եթե միությունը 2000 դոլար նվիրեր Հիմնադրամին: Սա դժգոհություն առաջացրեց վարչականների մոտ և վարչությունը, որ ամեն տարի նվիրում էր 1000 դոլար, հրաժարվեց մասնակցել թելեթոնին:***

***Դժբախտաբար, թելեթոնի ժամանակ, նույնիսկ 500 դոլար և ավելի քիչ նվիրողը եթերում ելույթ ունեցավ, որի արդյունքում Հիմնադրամը մեր միության 1000 դոլարից զրկվեց: Միգուցե շատ-շատեր չմասնակցեցին նրա աշխատանքներին կազմակերպիչ հանձնախմբի այս սխալի պատճառով:***

***11-18-2000 թ. ՃՊ-ի նախագահին տրվեց Հուշատախտակ.***

*Սույնը տրվում է ՊՀՄ-ի ՃՊ-ին նախագահող՝ պրն և տիկին Վաչիկ (Սիրեկան) և Տիգրանուհի Գրիգորյաններին, ազգին նվիրվածության և ազգային ու ազգապահպանման գործունեության մեջ իրենց ունեցած ծառայությունների համար:*

*Հարգանքներով՝ ՊՀՄ-ի վարչություն, Լոս Անջելես, 11-18-2000:*




Ձախից աջ՝ Գրիգոր Դովլաթյան, տեր և տիկին Մանուկ և Ալիդա Տոնոյաններ, Մարի Թերջանյան, Վահան Բահարյան, օրվա նախագահողներ՝ տեր և տիկին Վաչիկ և Տիգրանուհի Գրիգորյաններ, Մարտիրոս Էքշյան, Սյուզի Հեքիմյան և Հովսեփ Գասպարյան:

## ՄԱՐՏԻՐՈՍ ԷՔՇԻՅԱՆԻ ԽՈՍՔԸ

Հարգարժան հյուրեր, սիրելի հայրենակիցներ,

Սույն ձեռնարկի կայացման մասին մեր վարչության անունից տրված հայտարարության համաձայն, այսօրվա հայտագրին մաս է կազմում նաև ՊՀՄ-ի ատենապետ՝ Վահան Բահարյանի մեծարումը, նրա ծննդյան 65-ամյակի և հասարակական գործունեության 15-ամյակի առթիվ: Նրա անունը անմիջականորեն շաղկապված է մեր միության սկզբնավորման ու առ այսօր գործունեության հետ:

Ի միջի այլոց նշեմ, որ ձեր պարահանդեսային տրամադրությունները չվնասելու նկատառումով, կաշխատեմ այն ներկայացնել հնարավորին չափ սեղմ և համառոտ:

Ինչպես գիտեք, Սփյուռքի ՀՄ-ի սրբազան պարտականությունն է, առաջին հերթին, ստեղծել համայնքի հարատևությանը նպաստող հիմնախնդիրներ և համատեղ ջանքերով իրականացնել բազմաբովանդակ, ազգօգուտ միջոցառումներ:

1986 թվականին Լոս Անջելեսում հիմնադրվեց ՊՀՄ-ն, 17 հիմնադիր անդամների կողմից, որոնց շարքում էր նաև Վահան Բահարյանը: Նա ստանձնեց նորընտիր վարչության առաջին քարտուղարի պարտականությունը: Վահանը մշակեց միության ԾԿ-ի նախագիծը, որը որոշ փոփոխություններով, դարձավ նրա հետագա գործունեության ուղեցիծը:

Ես, որպես գործընկեր, գիտեմ տվյալ ժամանակում արհեստականորեն ստեղծված դժվարությունների հոսքը և դրանց հաղթահարման համար պահանջվող պայքարը: Ականատես եմ եղել Վահանի անկեղծ, համառ և նվիրյալ աշխատանքին, որը հիմք հանդիսացավ նորաստեղծ միության հետագա անխախտելիության:



1989 թվականից առ այսօր նա վարում է միության ատենապետի պաշտոնը: 7 (յոթ) տարի եղել է ՀՄՄ-ի փոխատենապետը:

Նա աշխույժ մասնակցություն է ունեցել միության անցած 15 տարվա գործունեությանը, մասնավորապես, նյութական աջակցություն ցույց տալու հետևյալ հաստատություններին. անկախ ՀՀ հյուպատոսարանների հիմնադրմանը Վաշինգտոնում և Լոս Անջելեսում, դպրոցական դասագրքերի հրատարակման, Հոլիվուդի Ս. Հովհաննու Կարապետ Մայր եկեղեցու վերանորոգության, «Հայաստան» Հիմնադրամին, Medical Outreach հաստատության, Արցախին, Արշակ Տիգրանյան դպրոցին, Բեյրութի ազգային վարժարաններին, 1991-1993 թվականների նեղ օրերին՝ Հայրենիքի մեր կարիքավոր հայրենակիցներին և այլուր:

Միությունը հովանավորել է նաև գրքերի հրատարակման, գինեծոների կազմակերպման հանդիսություններ, ինչպես նաև հուշ երեկոներ:

Վերոհիշյալները և նման այլ ձեռնարկներ բարձրացրեցին միության անունը համայնքում: Շարունակվում է միության գործունեությունը և պիտի շարունակվի հետագայում, որպեսզի Հայ նոր սերունդը չկորցնի իր ինքնությունը:

Ես չեմ անդրադառնում Վահան Բահարյանի կենսագրությանը, այսօրվա մեր տարեգրքույկում կա այն:

Ավելացնեմ, որ նրա հեղինակած 4 (չորս) գրքերը մամուլի տակ են և շուտով լույս կտեսնեն:...

Իսկ ես, իմ կողմից, որպես Վահանին մոտիկից ճանաչող ընկեր և գործընկեր, ավելացնեմ. սիրելի Վահան, շնորհավորելով հանդերձ քո ծննդյան 65-ամյակը և հասարակական գործունեությանդ 15-ամյակը, ցանկանում եմ քեզ քաջառողջություն, քո հանրօգուտ ներդրումդ համարում եմ մեր երիտասարդ սերնդի անշեղ ուղեցույցը:

**Տիկնանց Հանձնախումբը ծաղկե զամբյուղ նվիրեց նվերներով միասին, իսկ շնորհավորական բացիկում գրված էր:**

Պէյլանի հայրենակցական միության ատենապետ՝
հարգարժան Վահան Բահարյանին

Շնորհավորում ենք ծննդյան 65-ամյակի և ազգային-հասարակական գործունեության 15-ամյակի առթիվ, ցանկանում քաջառողջություն և երկար տարիների կյանք:

Պէյլանի հայրենակցական միության Տիկնանց հանձնախումբ:

**Ըստ բանկի 12-22-2000 թ. տվյալների, միության ունեցած գումարը 27 629 դոլար և 18 սենթ է:**

## ԺԶ. ՆԵՐՎԱՐՉԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ինչպես գոյություն ունեցող բոլոր կազմակերպություններում, ՊՀՄ-ի վարչության մեջ ևս ամեն ինչ հարթ չէր ընթանում: Տարբեր պատճառներով առաջանում էին խնդիրներ, որոնք ճիշտ լուծում էին պահանջում:

Ներվարչական խնդիրները կամաց-կամաց զարգացան վարչության աշխատանքային գործունեության ընթացքում:

Հիշենք 1987 թ. «վերընտրության», 1987 թ. Մայր Մարիամ Սողանալյանին զարդեղեն նվիրելու պատմությունները:

Հետագայում, երբ խոսք եղավ զարդեղենի մասին, Մարտիրոսը, Գրիգորը և Արմենակը հայտնեցին, որ վարչությունը 3000 դոլար է վճարել Նուբար Միսսի-Գևորգյանին (չեք # 209, 06-01-88 թ.): Ես հիշեցրեցի, որ 1986 թ. մեր տանը գումարված ՎՆ-ի ընթացքում Նուբարը այդ զարդեղենը գնահատեց 1500 դոլար, ինչո՞ւ 3000 դոլար վճարեցիք: Ըստ նրանց՝ Նուբարը ջղայնացել և ասել է, որ, եթե դրամը չտան, կգնա Մարիամայի մոտից կքաշի-կհանի զարդեղենը, ուստի տհաճություններից խուսափելու համար և վախենալով, որ Նուբարը կարող է իր ասածը իրոք անել, վճարել են:

01-11-88 թ. Փասադենայի Heller's Bakery-ում (Հարություն Դովլաթյանին պատկանող փուռը-Վ. Բ.) տեղի ունեցած ՎՆ-ի արձանագրության կարևոր մասերը ներկայացնում ենք ընթերցողին, առանց մեկնաբանության:

ՊՀՄ-ի վարչության անդամների արտակարգ (արտահերթ) հանդիպում, ներկայությամբ՝ Ս. Ճինպաշյանի, Մ. Էքշիյանի, Ն. Միսսի-Գևորգյանի, Հ. Դովլաթյանի, Գ. Դովլաթյանի և Ա. Հեքիմյանի: Բացակա էին՝ Վ. Գևորգյան (հարգելի), Ն. Մելքիսեթյան (գտնվում էր Մայամիում), Ս. Գյոզալյան, Մ. Մարաշյան և Գ. Թերջանյան (ընդմիշտ բացակա):

Օրակարգ. վարչականների Մայամի գնալու կապակցությամբ պարզել որոշ հարցեր, որոնք խառնաշփոթություն էին առաջացրել նրանց փոխհարաբերություններում:

Ն. Մելքիսեթյանը Ս. Սողանալյանի խմբի հետ գնացել էր Մայամի, այնտեղից ուղարկել էր օդանավի 4 (չորս) հատ ձրի երթևեկության տոմս՝ ներառյալ երկու օրվա համար հյուրանոցը: Երկուական տոմս հասցեագրված էր տեր և տիկին Ն. Միսսի-Գևորգյանի և տեր և տիկին Ս. Ճինպաշյանի անուններով, իսկ մեկ տոմս՝ Ն. Մելքիսեթյանի անունով: Նախորդ ժողովում բոլոր վարչականները ցանկություն էին հայտնել ներկա լինել եկեղեցիի օծմանը, բացի Մ. Էքշիյանից (բարեկամի մահվան պատճառով):

Հ. Դովլաթյանը, Գ. Դովլաթյանը և Ա. Հեքիմյանը մեղադրեցին Ն. Մելքիսեթյանին առ այն, որ նա նախկին պայմանավորվածությամբ կողմնակալ և դիտումնավոր կերպով օդանավի տոմսերը հասցեագրել էր, հատկապես, վերոհիշյալ անձանց: Նրանք նշեցին, որ օրինավոր կլիներ



առաջին հերթին տիկինների փոխարեն այդ տոմսերը հատկացվեին վարչության անդամներին, որոնք նախորդ ժողովին, պահանջ էին ներկայացրել: Եղած կարգադրությունները խիստ անարդար նկատվեցին և Մելքիսեթյան-Ճինպաշյան-Միսսի-Գևորգյան եռյակի մեջ անձնական շահագրգռվածության վերագրվեցին: Ճինպաշյանը խիստ ձևով պատասխանեց նրանց, հայտնեց իր անտեղյակ և անշահախնդիր լինելը և ապացույցներ բերեց՝ վերհիշեցնելով որոշ դիպվածներ: Նա հրաժարվեց իրեն հասցեագրված տոմսերից, իսկ Ն. Միսսի-Գևորգյանը ի պատասխան իրեն վերագրված հերյուրանքների հայտարարեց, որ պարտհանդեսի ընթացքին անձամբ իրեն և իր շրջապատի կողմից խոստացված մոտավորապես 3000 դոլարը չպիտի վճարի և այդ խոստումը համարում է չեղյալ:

Ժողովի ամբողջ տևողության ընթացքին լսեցինք փոխադարձ հայհոյանքներ և անվայել փողոցային արտահայտություններ, էլ չենք խոսում նյարդային բարձրացույն լարվածությունների մասին:

**02-01-88 թ. ՎՆ-ում արծարծվում են միության համար սրահ գտնելու և Նուբար Միսսի-Գևորգյանի կողմից վաճառված տոմսերի ու Նորայր Մելքիսեթյանի (որը գտնվում է Մայամիում) կողմից ծանուցումների գումարները վճարելու հարցերը:**

**Մեջբերվում է ԾՊ-ից հետո 12-22-89 ՎՆ-ի արձանագրության վերջում Մարտիրոս Էքշիյանի նոթագրությունը առանց մեկնաբանության:**

Վերջին ժամանակաշրջանում մեր ժողովների ընթացքում տեղի ունեցած թերությունների և թյուրիմացությունների պատճառով անհնարին է դառնում հստակ արձանագրություններ կազմելը, որը արգելակում է հաջորդ նիստերում հարցերի ճիշտ քննարկմանը: Նախապարտհանդեսային ժամանակաշրջանի ժողովներում ակնհայտորեն բացահայտվեց, որ վարչության անդամները ցույց են տալիս ոչ-լուրջ վերաբերմունք քննարկվող հարցերի նկատմամբ, որի պատճառով էլ հանգում են իրարամերժ մտքերի (կարծիքների): Արձանագրության ճշգրիտ ձևակերպումները նույնպես թերանում են: Նկատի ունենալով վերոհիշյալը, խնդրում եմ ժողովների ընթացքում իրար նկատմամբ պահպանել տարրական հարգանք, այսինքն՝ ժողովի ընթացքում չզբաղվել կողմնակի խոսակցությամբ, պահպանել հանգիստ գոյավիճակ, ամենապետի առաջարկությունները հնարավորին չափով ճիշտ հասկանալ և հետևողականորեն ճշգրիտ, հստակ պատասխանել: Առաջարկություններ անելու համար յուրաքանչյուրը պետք է ստանա խոսելու արտոնություն և ոչ թե բոլորը միանգամից խոսեն: Այս բոլորը կարող են նպաստել մեր առած որոշումները հստակորեն գրի առնելու, դրանք ճշգրիտ կատարելու համար:

**1989 թ. դեկտեմբերի 16-ի ԾՊ-ի համար վարչականների վաճառած տոմսերի և հավաքած ծանուցումների էջերի քանակը (էջը 100 դոլար, կես էջը 5+0 դոլար), սույն տարվա մեջ տեղի ունեցած վարչության 15 նիստերից բացակայությունների թիվը ներկայացնում են հետևյալ պատկերը.**

1. Վահան Բահարյան՝ 55 տոմս, 6,0 էջ ծանուցում, բացակա 0:
2. Գրիգոր Դովլաթյան՝ 36 տոմս, 5,5 էջ ծանուցում, բացակա 1:
3. Մարտիրոս Էքշիյան՝ 5,0 տոմս, 2,0 էջ ծանուցում, բացակա 0:

4. Աշոտ Տեր-Ստեփանյան՝ 5,0 տոմս, 0,5 էջ ծանուցում, բացակա 6:
5. Արմենակ Հեքիմյան՝ 20 տոմս, 0,5 էջ ծանուցում, բացակա 1:
6. Մանվել Մարաշյան՝ 25 տոմս, 0,5 էջ ծանուցում, բացակա 4:
7. Վահան Գևորգյան՝ 11 տոմս, 0 ծանուցում, բացակա 4:
8. Սարգիս Խորշիդյան՝ 11 տոմս, 0 ծանուցում, բացակա 2:
9. Սարգիս Գյոզելյան՝ 4,0 տոմս, 0 ծանուցում, բացակա 3:
10. Մարտիրոս Գյոզելյան՝ 0 տոմս, 0 ծանուցում, բացակա 2:

Բոլոր բացակայություններն էլ անհարգելի են:

Այս վիճակագրությունը ամեն տարվա համար պիտի բերվի, ընթերցողին ցույց տալու, թե վարչականները ինչպիսի նվիրվածությամբ էին աշխատում և պահպանում ՄԿ-ի կանոնները:

Անցած մեկ տարվա իմ աշխատանքի ընթացքում զգում էի, որ ՎՆ-ում քննարկված հարցերի մասին տեղեկությունները հոսում էին դուրս: Սկզբում ուշադրություն չէի դարձնում, բայց վարչականներին միշտ հիշեցնում էի, որ այդ երևույթը ՄԿ-ի խախտում է: Վերջին ժամանակներս ՎՆ-երի ընթացքում որոշ վարչականների վերաբերմունքից զգացի, որ նրանք են ինֆորմացիաները հասցնում նախկին վարչական Նուբար Մխսի-Գևորգյանին, որի հետ սերտ կապերի մեջ են և կրում են նրա ազդեցությունը: Տեղեկացնողներից մեկը Մանվել Մարաշյանն էր: Ըստ Գրիգոր Դովլաթյանի, մի անգամ վարչության նիստում Նուբարը այնքան էր ջղայնացել, որ հայտարարել էր, թե ոչ մի բեյլանցի թող չգա դեղատունը դեղի համար: Քանի որ դեղի անունը շոշափվեց, նշենք նաև մի դեպք, որը պատմեց Մարտիրոս Էքշիյանը: Մի անգամ իրեն դեղ է պետք եղել Երևան ուղարկելու համար և օտար դեղատնից գնելու փոխարեն բեյլանցու՝ Նուբարի դեղատնից է վերցրել: Որոշ ժամանակ անց մի ընտանիքում, հավաքույթի ժամանակ, խոսք է բացվել այդ մասին, Մարտիրոսն ասել է, որ անհրաժեշտ դեղերը բեյլանցու դեղատնից է գնել ու ուղարկել: Երբ այնտեղ ներկա եղող մի դեղագործ իմացել է, թե նա որքա՞ն է վճարել դեղերի համար, ասել է, որ այդ դեղագործը քեզանից կրկնակի դրամ է վերցրել: Իսկ Նուբարը ամեն առիթով բողոքում էր, որ բեյլանցիները իր դեղատնից դեղ չեն գնում...:

Ընթերցողը, հատկապես բեյլանցին թող ներող լինի, որ բեյլանցիների այնքան մաքուր, սրտաբաց, օգնող, հանող ժողովուրդ լինելով հանդերձ, այսպիսի բաներ եմ գրում նրանց մասին: Ամեն մի ազգի, համայնքի, գերդաստանի և խավի մեջ էլ բացառություններ կան:

Հետագա տարիները ցույց տվեցին, որ մարդիկ կան, որոնք երբեք չեն մոռանում իրենց ատելությունն այն մարդկանց նկատմամբ, որոնց գաղափարների կամ կարծիքների հետ համաձայն



չեն եղել և շարունակում են պահել իրենց սրտի մաղձը: Նրանցից է Նուբար Մխսի-Գևորգյանը, որը զգացի տարիներ անց: Նորայր Մելքիսեթյանը ավելի խոհեմ էր ու խորամանկ:

1990 թ. դեկտեմբերի 22-ի ՃՊ-ի սրահ ուղեկցելիս, լիմուզինի մեջ Սարգիս Սողանալյանը հայտնեց, որ Նորայր Մելքիսեթյանի հետ խոսել է սրահի մասին, և վերջինս ասել է. «Ի՞նչ պիտի ընեն սրահը, պիտի նստին նարտի՞ խաղան»:

Այս մասին մեր վարչականներից էլ էի լսել, բայց չէի հավատում, որ միության առաջին ատենապետը, որ ինքն էր շահագրգռված սրահ ունենալու, հանկարծ, այդպիսի բան ասի: Իսկ ի՞նչն էր պատճառը Նորայրի այսպիսի մոտեցման: Կարելի՞ է ենթադրել, որ վարչությունից իր հեռանալն է և Նուբար Մխսի-Գևորգյանի հետ ունեցած հարաբերությունները: Մի դուցե:

Համենայն դեպս նշենք, որ Նուբարը հավատարիմ մնալով ինքն իրեն, շարունակեց աշխատանքի այդ «մաքուր» գործելակերպը իմ նկատմամբ մինչև վարչությունից դուրս գալս՝ համախոհ ունենալով ճիշտ իր նման սև սիրտ ունեցող Մանվել Մարաշյանին, որին հետագայում ավելացան նաև ուրիշներ:

1990 թ. դեկտեմբերի 22-ի ՃՊ-ի համար վարչականների վաճառած տոմսերի և հավաքած ծանուցումների էջերի քանակը, սույն տարվա մեջ տեղի ունեցած վարչության 16 նիստերից բացակայությունների թիվը ներկայացնում են հետևյալ պատկերը.

ֆփ Վահան Բահարյան՝ .: տոմս, խշչ էջ ծանուցում, բացակա ջ:
2. Գրիգոր Դովլաթյան՝ 13 տոմս, 8,0 էջ ծանուցում, բացակա 3:
3. Մարտիրոս Էքշիյան՝ 16 տոմս, 3,0 էջ ծանուցում, բացակա 4:
4. Աշոտ Տեր-Ստեփանյան՝ 23 տոմս, 1,0 էջ ծանուցում, բացակա 10
5. Արմենակ Հեքիմյան՝ 26 տոմս, 2,0 էջ ծանուցում, բացակա 1:
6. Մանվել Մարաշյան՝ 34 տոմս, 1,0 էջ ծանուցում, բացակա 4:
7. Վահան Գևորգյան՝ 11 տոմս, 0 ծանուցում, բացակա 14:
8. Սարգիս Խորշիդյան՝ 13 տոմս, 1,0 էջ ծանուցում, բացակա 2
9. Սարգիս Գյոզելյան՝ 15 տոմս, 1,0 էջ ծանուցում, բացակա 10:

Վարչությունը որոշեց ՃՊ-ի օրը՝ 12-21-1991 թ. Եփրեմյան սրահում և 10-16-91 թ. ՎՆ-ում հանձնարարեց Արմենակ Հեքիմյանին, Գրիգոր Դովլաթյանին և Սարգիս Գյոզելյանին խոսել Գաբրիել Աղազարյանի հետ ճաշերի պատրաստման համար (քեթըրինգ) և նախահաշիվը ներկայացնել ՎՆ-ի քննարկման: 10-23-91 թ. ՎՆ-ում քննարկվեցին երկու առաջարկներ. Գաբրիելինը՝ 18 դոլար և Սուրիկինը՝ 15 դոլար: Ընդունվեց վերջինը: Գրիգոր Դովլաթյանն ու Սարգիս Գյոզալյանը սկսեցին վիճաբանել վարչականների հետ, թե պայմանավորվել են Գաբրիելի հետ, որ նա պատրաստի ճաշերը, և վարչությունը իրավունք չունի չընդունելու: Ինչպես միշտ, այս անգամ էլ բացատրեցի, որ իրենց պարտականու-

թյունը առաջարկը բերելն է և իրավունք չունեն որևէ բան խոստանալ որևէ մեկին առանց վարչության որոշման: Մեծ տհաճություն ստացվեց, որովհետև նրանք ոչ հարցի էությունն էին հասկանում, ո՛չ էլ կարգ ու կանոնը, մի խոսքով՝ վարչության գործունեությունը չէին հասկանում: Երկուսն էլ խռովեցին, որի հետևանքով Սարգիս Գյոզալյանը ոչ մի տոմս չծախեց, իսկ Գրիգոր Դովլաթյանը մի կերպ 18 տոմս ծախեց, իսկ իր բարեկամներին տոմսեր ծախեց Մանվել Մարաշյանը:

Վարչության որոշման համաձայն ԾՊ-ի օրը Սարգիս Խորչիդյանի բեռնատար մեքենայով գնացինք Ջոնս մարկեթ, անհրաժեշտ խմիչքներն ու ջրեղենը գնեցինք և տարանք Եփրեմյան սրահ: Պատշաճորեն հագնված գնացի: Ետ տուն չէի գալու՝ սրահում առաջացած հարցերը պիտի լուծեի: Վարչականներն էլ պիտի գային նշված ժամին, որպեսզի օգնեին մեքենան դատարկելու, քանի որ Խորչիդյանը սրտի գործողության պատճառով չէր կարող օգնել, այնուհետև սեղանների բաշխումը պիտի կատարեինք:

Մենք սրահ հասանք, վարչականներից ոչ-ոք չկար: Բոլոր խմիչքները արկղերով իջեցրեցի մեքենայից, դասավորեցի, հոգնած ու քրտինքի մեջ կորած, Խորչիդյանից ներողություն խնդրելով, գնացի Սարգիս Գյոզելյանի տունը (որը մոտ էր սրահին), իմանալու, թե ին՞չ է պատահել, որ հիվանդացել է: Երբ ներս մտա ապշած մնացի: Սարգիսը բազմոցին նստած ընկույզ ու չամիչ էր ուտում: Բարևեցի՝ ասելով, որ տղաները ասացին հիվանդ ես, այցելեցի իմանալու, թե ի՞նչ է պատահել, իսկ դու բազմոցին նստած ընկույզ ու չամիչ ես ուտում: Նեղացած ձայնով պատասխանեց. «Բա՛ ի՞նչ պիտի անե՛մ ...»: Զգացի, որ նա հիվանդ չէ, խռովել է, ԾՊ-ի ոչ-մի տոմս չի ծախել և, եթե չայցելեի, մարդ ու կին չէին էլ գա ԾՊ-ին:

Ըստ միության ԾԿ-ի,նրա հարցը պետք է քննարկվեր ՎՆ-ում: Նկատի ունենալով, որ մեծ մարդ է, և մեր մեծերը պնդաճակատ են լինում, իսկ դեպքը ավելորդ ասեկոսեների առիթ կտա, հարցը չդրի քննարկման:

ԾՊ-ի հաշվետվության նիստում Մանվելը հայտարարեց, որ երկու հոգի չեն եկել ԾՊ-ի և ԾՊ-ից հետո նրանց տոմսերի փողը վերադարձրել է: Թող ների ինձ ընթերցողը, այստեղ են ասում. «Հարսի ինչով փեսուն լավություն է անում»: Իր հաճոյամոլության համար նա դիմում է ամեն միջոցի: Նշենք, որ վարչության կողմից այդ երկու տոմսերի ճաշերի համար վճարվել է խոհարարին: Նաև ինչպե՞ս համոզվենք, որ տոմսերի գումարը վերադարձվել է, երբ ոչ մի փաստ ու ապացույց չկա: Նրան դիտողու-



թյուն արեցի այս առթիվ: Վարչությունը Մանվելին ընդհանրապես դրամի հետ կապված ոչ մի գործ չէր հանձնարարում: Այդ հարցում նա կորցրել էր իր վստահությունը: Եթե, երբեմն առաջարկում էի նրան հանձնարարել վիճակահանության նվերները գնել, ամենամոտիկ ընկերը՝ Գրիգորը կտրուկ դեմ էր լինում և իր վրա էր վերցնում պարտականությունը:

**1991** թ. դեկտեմբերի **21**-ի ԾՊ-ի համար վարչականների վաճառած տոմսերի և հավաքած ծանուցումների էջերի քանակը, սույն տարվա մեջ տեղի ունեցած վարչության **23** նիստերից բացակայությունների թիվը ներկայացնում են հետևյալ պատկերը.

1. Վահան Բահարյան՝ 33 տոմս, 6,0 էջ ծանուցում, բացակա 0:
2. Գրիգոր Դովլաթյան՝ 18 տոմս, 3,0 էջ ծանուցում, բացակա 1:
3. Գևորգ Գայչյան՝ 0 տոմս, 0 ծանուցում, բացակա 9:
4. Արմենակ Հեքիմյան՝ 9 տոմս, 1,0 էջ ծանուցում, բացակա 0:
5. Մանվել Մարաշյան՝ 105 տոմս, 6.5 էջ ծանուցում, բացակա 5:
6. Սարգիս Խորչիդյան՝ 14 տոմս, 0,5 էջ ծանուցում, բացակա 0:
7. Սարգիս Գյոզելյան՝ 0 տոմս, 0 ծանուցում, բացակա 7:

Ընդ որում Գևորգ Գայչյանը վարչության մեջ ընդունվելուց հետո տեղի ունեցած 20 նիստերից բացակայել է 9 անգամ, որից 3 անգամ՝ իրար հաջորդող նիստերից: Մանվել Մարաշյանը 3 անգամ և Սարգիս Գյոզելյանը 6 անգամ բացակայել են իրար հաջորդող նիստերից[1]: Գևորգ Գայչյանի դեպքում նշենք, որ բացի հույժ հարգելի պատճառից, եթե վարչականը ներկա չի լինում 20 նիստերի համարյա կեսին, նա չի կարող լինել վարչության անդամ: Իսկ Սարգիս Գյոզալյանի բացակայության համար որոշ վարչականներ հավաստիացրեցին, որ նա հիվանդ է: Իրականում նա հիվանդ չէր, ես համոզվեցի, երբ այցելեցի նրան:

**1992 թ. տեղի ունեցած վարչության 14 նիստերից բացակայությունների թիվը ներկայացնում է հետևյալ պատկերը.**

1. Վահան Բահարյան՝ բացակա 0:
2. Գրիգոր Դովլաթյան՝ բացակա 0:
3. Գևորգ Գայչյան՝ բացակա 8:
4. Սեդա Կվրյան՝ բացակա 0:
5. Արմենակ Հեքիմյան՝ բացակա 4:
6. Մանվել Մարաշյան՝ բացակա 3:
6. Սարգիս Խորչիդյան՝ 4:
7 Սարգիս Գյոզելյան՝ բացակա 2:
8. Հարություն Հարությունյան՝ բացակա 2:

Ընդ որում Գևորգ Գայչյանը վարչության 11 իրար հաջորդող նիստերից բացակայել է 8 անգամ, որից 6-ը անհարգելի, իսկ մնացածների բացակայությունը հարգելի է, բացի Մանվել Մարաշյանինը:

1.- Հիշեցման կարգով նշենք, որ 3 իրար հաջորդող նիստերից կամ 6 նիստերից 4-ից անհարգելի պատճառով բացակայողները, ըստ ԾԿ-ի, վարչության նիստի ընդունած որոշումով հեռացվում են վարչությունից:

Մանվելը միշտ իրար է անցել Հայաստանի կարիքավորներին օգնելու, բայց 1986-2001 թթ. վարչության ամբողջ գործունեության ընթացքում ոչինչով չի օգնել, մանավանդ, սույն ՃՊ-ն նախատեսված էր այդ նպատակով: Թեկուզ տոմսեր վաճառեր:

1993 թ. մարտի 20-ի ՃՊ-ի համար վարչականների վաճառած տոմսերի և հավաքած ծանուցումների էջերի քանակը ներկայացնում է հետևյալ պատկերը.

1. Վահան Բահարյան՝ 99 տոմս, 12,0 էջ ծանուցում, բացակա 0:
2. Գրիգոր Դովլաթյան՝ 65 տոմս, 8,0 էջ ծանուցում, բացակա 3:
3. Գևորգ Գայչյան 0 տոմս, 0 ծանուցում, բացակա 9:
4. Սեդա Կվրյան՝ 0 տոմս, 0 ծանուցում, բացակա 11:
5. Արմենակ Հեքիմյան՝ 0 տոմս, 0,5 էջ ծանուցում, բացակա 0:
6. Մանվել Մարաշյան՝ 4 տոմս, 0 ծանուցում, բացակա 3:
7. Սարգիս Խորշիդյան՝ 4 տոմս, 0,5 էջ ծանուցում, բացակա 7:
8. Սարգիս Գյոզելյան՝ 12 տոմս, 0,5 էջ ծանուցում, բացակա 7:
9. Հարություն Հարությունյան՝ 20 տոմս, 1,0 էջ ծանուցում, բացակա 7

Ինչպես տեսնում եք, որոշ վարչականներ ոչ մի տոմս չեն վաճառել, որոշ վարչականներ վաճառել են մի քանի տոմս: Ցավալի է, բայց փաստ, որ նշված վարչականները և որոշ հայրենակիցներ չկարողացան հասկանալ պահի լրջությունը Հայաստանի հայրենակիցներին օգնելու գործում: Իսկ Մանվել Մարաշյանը, վարչության նիստում ՃՊ-ի հարցը քննարկելիս, դեմ եղավ նրա կայացմանը և հրաժարվեց տոմս վաճառելուց, պատճառաբանելով, որ մարտին ոչ-ոք ՃՊ չի գա: Արդյո՞ք նա հասկացավ ...

Ինչպես նշեցի, կարգապահությունը եղել է մեր վարչության չլուծվող խնդիրներից մեկը, որին հետագայում հաճախ կանդրադառնամ: Բայց այստեղ մի հարցի մասին պիտի խոսեմ: Գրիգոր Դովլաթյանը դիմում էր գրել վարչությունից հեռանալու՝ պատճառաբանելով, թե իրեն «կոշտ վերաբերմունք» է ցույց տրվել ՎՆ-ներում: ՎՆ-ում քննարկելով հարցը՝ վարչությունը գտավ, որ դա չի համապատասխանում իրականությանը, և պետք է մանրամասն բացատրություն տա հեռանալու պատճառների մասին:

Վիճաբանություններ լինում էին անշուշտ նիստերում և վարչականներ՝ Մանվել Մարաշյանը, Սարգիս Գյոզալյանը և Գրիգոր Դովլաթյանը շատ հարցեր ճիշտ չէին հասկանում, շարունակում էին վեճերը, և երբ իրենց առաջարկությունները չէին ընդունվում, որոշ վարչականներ նույնիսկ նիստի կեսից թողնում ու հեռանում էին՝ «այլևս ես չգամ» ասելով, իսկ հաջորդ նիստին նորից գալիս էին՝ չմտածելով նույնիսկ, որ իրենց արժանապատվության հետ են խաղում և նսեմացնում վարքը: Այս առթիվ հիշենք Գրիգորի ու Սարգսի օրինակը, որ տոմս չծախեցին ՃՊ-ի համար, քանի որ իրենց առաջարկած քեթըրինգը չընդունվեց:



Մեր և Գրիգորենց ընտանիքները շատ մոտ են եղել իրար դեռ բնօրրանից: Մենք Աթրգում էինք ապրում, իսկ նրանք Պալլը Ղասթալում: 3-4 տարեկան էի, և լուսահոգի հայրս ինձ, նստեցնելով ձիու գավակը, տանում էր նրանց գյուղը, որտեղ մի քանի օր մնում էի: Գրիգորի փոքր եղբայրների՝ Եղիայի ու Վարդանի հետ, մտնում էինք խաղողի այգիները, ուտում էինք մեր ուզած խաղողը, հատկապես ողկույզները՝ ճիթերը (թուրքերեն «չթըֆ» բառն էինք օգտագործում), վրան մի քանի հատիկներով, որոնք շատ համով էին լինում: Երեք ընկերներ ամբողջ օրը խաղում էինք, իսկ երեկոյան Գրիգորի քույրը՝ Եղիսաբեթը, մեր ձեռքերըոտքերը լվանալով, մեկ-մեկ անկողին էր դնում: Մեր ընտանիքների սերտ հարաբերությունները պահպանվեցին ինչպես Լիբանանում, այնպես էլ 1946 թ. Հայաստան ներգաղթելուց հետո՝ մեր ամենադժվարին օրերին իսկ: 11-18-93 թ. ՎՆ-ից հետո գնացի նրա տունը և բարեկամորեն հանդիպմանելով հարցը լուծեցի: Բայց իր համառությունը և իր մասին ամենագետի պատկերացումը հաճախ իրեն դնում էին տհաճ վիճակի մեջ:

1993 թ. դեկտեմբերի 31-ի ՃՊ-ի համար վարչականների վաճառած տոմսերի և հավաքած ծանուցումների էջերի քանակը, սույն տարվա մեջ տեղի ունեցած վարչության 24 նիստերից բացակայությունների թիվը ներկայացնում է հետևյալ պատկերը.

1. Վահան Բահարյան՝ 49 տոմս, 6,5 էջ ծանուցում, 0 բացակա:
2. Գրիգոր Դովլաթյան՝ 95 տոմս, 4,0 էջ ծանուցում, 2 բացակա:
3. Գևորգ Գայչյան՝ 9 տոմս, 0 ծանուցում, 9 բացակա:
4. Սեդա Կվրյան՝ 0 տոմս, 0 ծանուցում, 11 բացակա:
5. Մանվել Մարաշյան՝ 27 տոմս, 2 էջ ծանուցում, 3 բացակա:
6. Սարգիս Խորշիդյան՝ 0 տոմս, 0,5 էջ ծանուցում, 7 բացակա:
7. Սարգիս Գյոզելյան՝ 0 տոմս, 0,5 էջ ծանուցում, 7 բացակա:
8. Հարություն Հարությունյան՝ 17 տոմս, 1,0 էջ ծանուցում, 7 բացակա:
9. Սարգիս Կապուտյան՝ 0 տոմս, 0 ծանուցում, 0 բացակա:

Սարգիս Խորշիդյանը հիվանդության պատճառով է բացակայել: Սարգիս Գյոզալյանը 13 իրար հաջորդող նիստերից բացակայել է 7 անգամ և ոչ մի տոմս չի վաճառել, Սարգիս Կապուտյանը նույնպես տոմս չի վաճառել: Գևորգի, Սեդայի, Սարգիս Գյոզալյանի և Հարությունի հարգելի բացակայությունները պայմանական բնույթ են կրում այն իմաստով, որ շատ դեպքերում վարչությունը շարժվում էր բացակայողի քմահաճույքով, որպեսզի վարչությունից դուրս չմնա:

Մի տհաճ երևույթ էր տեղի ունեցել «Երգիծանք» թատրոնի 3-5-94 թ. «Գնա՞նք, թե՞ մնանք» ներկայացման սրահում Պետրոս Բերբեքյանի հետ: Նա տոմս էր գնել, կնոջ հետ եկել էր թատրոն և նստել էին հրավիրվածներին հատկացված շարքում: Մանվել Մարաշյանը 4 հրավիրատոմսերով մտնում է ներս, Պետրոսին կնոջ հետ կոպտորեն հանում է իրենց տեղերից՝ ասելով, որ դրանք

հրավիրյալների տեղերն են, և զբաղեցնում տեղերը:

Հարցնենք. Յուրաքանչյուր վարչականի երկու հրավիրատոմս էր տրված, Մանվելին ո՞րտեղից էր 4 հրավիրատոմս: Ըստ մեր ունեցած տեղեկության, շահագործելով միության անունը, նա վարչության անունից լրացուցիչ հրավիրատոմսեր է վերցրել վաճառողից:

4-13-94 թ. ՎՆ-տում, որը տեղի ունեցավ Հարություն Հարությունյանի տանը, և այնտեղ ներկա էր նաև Պետրոս Բերեքյանը, հաշվետվություն տրվեց ներկայացման հովանավորության մասին՝ գոհունակություն պատճառելով բոլորին: Վերոնշված հարցը այս նիստում քննարկման նյութ դարձրեցի: Բայց Պետրոսը ասաց, որ այդպիսի բան չի եղել (փաստորեն սուտ խոսեց), ու հարցը հանվեց քննարկումից: Նիստից հետո, երբ վարչության անդամներն արդեն գնացել էին, հարցրեցի Պետրոսին, թե ինչո՞ւ ետ կանգնեց իր խոսքից: Պատասխանեց, որ չուզեց անհամություն առաջվեր վարչության մեջ:

Վարչության անդամները պետք է բարոյական օրինակ ծառայեն ժողովրդին: Բերեքյաններին կարելի է իրենց տեղից հանել լավ վերաբերմունքով, բայց Մանվելի մոտ այդպիսի վերաբերմունք հազվադեպ երևույթ է: Մտորում եմ՝ Պետրոսը, Մանվելը, Գրիգորը և Հարությունը երկար տարիների ընկերներ են և նրանք վարժ են իրար հանդեպ կոպիտ վերաբերմունք ցուցադրելու, որը իրենց համար սովորություն է դարձել: Ինչ որ է, այս տհաճ դեպքն էլ այս ձևով վերջ գտավ: Բայց Մանվելը շարունակում էր իր այդ վերաբերմունքը, որը հետագայում ևս ի հայտ եկավ տարբեր շարժառիթներով, ինչպես վարչության նիստերում, այնպես էլ միջոցառումների ժամանակ, և բացի ինձնից ոչ մեկը չէր զգուշացնում նրան, որպեսզի «վատամարդ» չլինի:

3-20-94 թ. ՎՆ-ում երբ դիտողություն արեցի Գևորգ Գազջյանին՝ վարչականների ներկայությունը չապահովելու համար գրող Նշան Շահենի «Փշուր-փշուր մանկություն» գրքի գինեձոնին, որն իր պարտականությունն էր, նա շատ անտարբեր պատասխանեց. «Ժամանակ չունեի զանգահարելու...» և այլ պատճառներ:

Այս պատասխանին ոչ մի վարչական չարձագանքեց բացի ինձնից, ես նորից ու նորից բացատրեցի վարչության գործունեության ընթացքի և վարչականների պարտականությունների մասին: Դե՛, ընթերցող ինքդ դատիր, մանավանդ, եթե այդ գործին ծանոթ ես: Եթե մարդը կամավոր մասնակցում է վարչության աշխատանքներին և ստեղծված առիթը չի օգտագործում միության անունը մասսայականացնելու համար, կարո՞ղ է արդարանալ,



ինչպե՞ս կարող է ազգային գործունեություն կատարել: Եւ մյուս վարչականները, փոխանակ կարգի հրավիրելու այդպիսիներին, դեռ պաշտպանում են նրանց: Կրթության, զարգացածության ու մակարդակի հարց է, և դժբախտաբար մարդուց պահանջում ես այն, որը նա ի վիճակի չէ կատարելու:

6-13-94 թ. ՊՀՄ-ի ՎՆ-ում քննարկվեց Արցախին կապի միջոցներով ապահովելու համար Արբատում կազմակերպվող ճաշկերույթին մասնակցելու հարցը: 9 վարչականներից 6-ը ցանկացան կանանց հետ մասնակցել՝ Վահան Բահարյան (միայնակ), Գրիգոր Դովլաթյան, Մանվել Մարաշյան, Սարգիս Գյոզելյան, Հարություն Հարությունյան և Սարգիս Կապուտյան: Մանվել Մարաշյանը և Սարգիս Կապուտյանը տվյալ պահին տոմսի դրամ չունենալով, առաջարկեցին միության բանկի հաշվից իրենց տալ 150-ական դոլար, վերադարձնելու պայմանով: Չուզելով միության բանկի դրամին ձեռք տալ, ես խոստացա իրենց փոխարեն վճարել, որը և միության կողմից ընդունվեց միաձայն: Բայց ես տուժեցի: Ահա թե ինչու: Նույն տարվա օգոստոսին Գրիգորը և Հարությունը Երևան էին գնալու, որի ընթացքում միության կողմից դրամ էին բաժանելու կարիքավորներին: Սարգիս Կապուտյանը, մի ծանոթի հասցե տալով Գրիգորին, խնդրեց նրան էլ օգնել:

Վերադառնալուց հետո, վարչության նիստում հաշվետվության ժամանակ Գրիգորը տեղեկացրեց, որ որոշ մարդիկ, այդ թվում Սարգսի ծանոթը, վերջին օրերին են եկել, երբ դրամը վերջացել էր, ուստի չեն կարողացել նրանց կարիքը բավարարել: Այս պատրվակով Սարգիս Կապուտյանը պարտքը չտվեց և նույն տարվա նոյեմբերից էլ հրաժարվեց վարչության աշխատանքներին մասնակցելուց:

Մանվելի «Լուսանկարչական ցուցահանդես» (6-15-94 թ.) այցելեցին նաև գրող Նշան Շահենը իր դստեր՝ Ծովինարի հետ, «Երգիծանք» թատրոնի դերասաններ Հովհաննես Ղուկասյանը և Կարպիս Ցեսչյանը:

«Երգիծանք» թատրոնի դերասանները ցուցահանդեսում ոչ մի նկար չունեին և հիասթափված հեռացան՝ այդ մասին ակնարկելով ինձ: Հարցը նրանում է, որ ՊՀՄ-ն հովանավորեց նրանց ներկայացումները, նրանք հրավիրատոմսեր էին հատկացրել միության ըստ նրա պահանջի, բայց Մանվելը, որպես այդ միության վարչության գեղարվեստական մասի ղեկավար, երբեք չլուսանկարեց ներկայացումը: Երբ հիշեցրեցի այդ մասին, նա առանց քաշվելու պատասխանեց. «Ե՞րբ ինձ ասացիր նկարի, որ նկարեի»,

իբր չէր հասկանում, որ դա իր պարտականությունն է և պետք է կատարեր, և երկրորդ՝ երբ ինքն օգտագործում է միության անունը իր շահերի համար առանց վարչության թույլտվության, դիտողություն անելիս, ամբարտավանորեն պատասխանում է, որ ինքն իրավունք ունի այդ անելու:

Ծախու դրված լուսանկարներից չգնեցի, քանի որ ինքը միության հեղինակության հետ խաղաց՝ ցուցահանդեսում չունենալով «Երգիծանք»ի դերասանների ոչ մի նկար: Մյուս կողմից նկարների գերակշռող մասը Հակոբ Պարոնյանի անվան թատրոնի դերասաններինն էր, իսկ Լոս Անջելեսում սփյուռքահայ դերասանների նկար համարյա չկար ...:

**1994** թ. դեկտեմբերի **17**-ի ԾՊ-ի համար վարչականների վաճառած տոմսերի և հավաքած ծանուցումների էջերի քանակը, սույն տարվա մեջ տեղի ունեցած վարչության **15** նիստերից բացակայությունների թիվը հետևյալ պատկերն է ներկայացնում.

1. Վահան Բահարյան՝ 36 տոմս, 5,0 էջ ծանուցում, 0 բացակա:
2. Գրիգոր Դովլաթյան՝ 22 տոմս, 7,0 էջ ծանուցում, 0 բացակա:
3. Գևորգ Գալչյան՝ 0 տոմս, 0 ծանուցում, 7 բացակա:
4. Սեդա Կվրյան՝ 2 տոմս, 0 ծանուցում, 7 բացակա:
5. Արա Պետրոսյան՝ 2 տոմս, 0,5 էջ ծանուցում, 3 բացակա:
6. Մանվել Մարաշյան՝ 28 տոմս, 1,5 էջ ծանուցում, 3 բացակա:
7. Սարգիս Խորշիդյան՝ 7 տոմս, 0 ծանուցում, 2 բացակա:
8. Սարգիս Գյուլեյան՝ 4 տոմս, 0,5 էջ ծանուցում, 0 բացակա:
9. Հարություն Հարությունյան՝ 21 տոմս, 1,0 էջ ծան., 0 բացակա:
10. Սարգիս Կապուտյան՝ 0 տոմս, 0 ծանուցում, 6 բացակա:

Ինչպես տեսնում եք, ընդհանուր առմամբ Գևորգ Գալչյանը 7 անգամ (ԾՊ-ին էլ չմասնակցեց), Սեդա Կվրյանը 7 անգամ, Սարգիս Կապուտյանը 6 անգամ (նոյեմբերի 11-ի նիստից հետո նա հեռացավ վարչությունից) բացակայել են վարչության 15 նիստերից, իսկ հարգելի բացակայությունները պայմանական բնույթ են կրում, ինչպես նշվել է նախորդ էջերում:

2-09-95 թ. ՎՆ-ում, որը տեղի ունեցավ Սարգիս Գյոզալյանի տանը, հիմնականում, նորից քննարկվեց 1994 թ. դեկտեմբերի 17-ի ԾՊ-ի կազմակերպչական հարցերում թույլ տրված թերությունները և կարգապահության հարցեր:

Առաջինը Գևորգ Գաղջյանի հարցն էր, որը 1994 թ. տեղի ունեցած վարչության 15 նիստերից բացակայել էր 7-ում: Մինչև այս, նրա հարցը մի քանի անգամ քննարկվել էր նախորդ նիստերում իր բացակայության ժամանակ և որոշվել էր հեռացնել վարչությունից որպես անպատասխանատու և ոչ լուրջ վարչականի: Նա երբեք պարտաճանաչ, ճշտապահ և ճիշտ խոսող չէր և այս նիստում էլ, երբ քննարկվում էր իր բացակայությունը, առանց կարմրելու հայտարարում է, որ ինքը տեղյակ չի եղել վարչության նիստերի մասին: Ի՞նչ կարելի է սպասել այսպիսի վարչականից...:



Նա որպես վարչական ոչ մի պատասխանատվություն չէր զգում և իր վրա դրված պարտականությունները չէր կատարում՝ ամեն անգամ մի սուտ հնարելով: Այնքան անպատասխանատու էր, որ նույնիսկ 1994 թ. կարևոր ԾՊ-ին չմասնակցեց, պատճառաբանելով հոր հիվանդությունը և ոչ մի տոմս չվաճառեց, մեծ գերդաստան լինելով հանդերձ: Երբ չէր ուզում կատարել պարտականությունը և ելք չէր ունենում, հոր հիվանդությունն էր պատճառաբանում, թե հորը չի կարող մենակ թողնել, չնայած կինը միշտ տանն էր:

Ես կարծում էի, որ այս նիստում վարչությունը նրան պիտի հեռացներ որպես ոչ լուրջ և իր պաշտոնին չհամապատասխանողի, մինչդեռ նիստի ժամանակ ինձ անակնկալ էր սպասում: Բոլոր վարչականները, որոնք նախօրոք տրամադրված էին նրան հեռացնել, մտափոխ էին եղել և պնդեցին, որ պետք է մնա ու աշխատի: Ես ապշել էի: Երբ տուն եկա, հասկացա, որ սխալ եմ թույլ տվել՝ տեղում չեմ հրաժարվել իմ պաշտոնից և հեռացել, քանի որ վարչականները լրջություն չունեն և քամու նման փոխում են իրենց խոսքերն ու որոշումները: Նրանք չեն աշխատում, ամբողջ օրը միասին են և իրենց «խելքով» ծրագրեր են կազմում ու իրագործում:

Որոշվել էր Հայաստանի հայրենակիցներին 4000 դոլար նյութական օգնություն բաժանել, իսկ Գրիգորն ու Հարությունը 1200 դոլար ավելի էին բաժանել ինքնագլուխ առանց վարչության գիտության:

Մի ուրիշ կարգապահության խախտում ևս: ԾՊ-ից հետո Սարգիս Սողանալյանը Նոր Տարվա առթիվ վարչությանը հրավիրեց Palm Spring-ի իր տունը: ԾՊ-ի 8.5"x10" (ինչի) վրա մեծացրած լուսանկարները ևս տարանք բարերարին: Տեսնելով նկարները՝ նա ուրախացավ և ասաց, որ, եթե Հերի Տիրամիրյանը և մյուսները տեսնեն, նրանք էլ կուզեն այս նկարներից: Խոստացանք նրանց համար էլ պատվիրել, եթե ուզեն:

Սույն նիստին Մանվելը բերել էր նույն չափի մեծացրած 12 նկար և վարչությունից պահանջում էր 108 դոլար: Մենք զարմացած մնացինք, քանի որ.

ա. Վարչությունը չէր որոշել այդ նկարները մեծացնել:

բ. Այդ չափի նկարները մեծացնում են ավելի էժան գներով:

Հետևաբար, Մանվելն, ինքնագլուխ գործելով, միության հաշվին դրամ վաստակելու համար անթույլատրելի արարք էր կատարել:

Նկատի ունենալով, որ վարչությունը կատարված փաստի

առաջ է կանգնած (իհարկե, կարող էինք չվճարել), և այսպիսի հարցերով տհաճ լարվածություն է ստեղծվում, իմ առաջարկով որոշում ընդունվեց. այս անգամ վճարել և՛ Գրիգորին ու Հարությունին, և՛ Մանվելին, իսկ այսուհետև, եթե որևէ վարչական ինքնագլուխ դրամ ծախսի որևէ նպատակով միության անունից, առանց վարչության որոշման, նա իր գրպանից կվճարի: Եթե ընթերցողը մոտ է ազգային գործունեության, ինքը կարող է գնահատական տալ այսպիսի գործերին և եզրակացության հանգել:

Մի քանի խոսք էլ Սեդայի մասին: Նախորդ էջերում նշել էի արդեն, որ մենք ընտանեկան մոտիկ հարաբերություններ ունեինք: Վարչության վերոհիշյալ արձանագրությունը նա է սկսել գրել, բայց վաղ գնալու պատճառով Գևորգ Գաղջյանն է շարունակել: Սեդայի գործը դժվար էր: Նա երկու երեխաներ ուներ, ընտանիքի տնտեսական հարցերը չէին լուծվում, հաճախ էր գնում հեռուստատեսային ստուդիաներ ծանուցումներ կարդալու, ուստի դյուրագրգիռ էր դարձել: Այդ պատճառով 1994 թ. նա ևս վարչության նիստերից ուներ 7 բացակայություն, որոնցից 3-ը հարգելի էր նշանակված: Վարչության հաջորդ նիստը նույնպես տեղի ունեցավ Սարգիս Գյոզալյանի տանը և վերջանում էր, երբ ամուսնու ու երեխաների հետ ներս մտավ Սեդան: Ստուդիայից էր գալիս և լավ տրամադրություն չուներ, սակայն պարտաճանաչ էր: Ներողություն խնդրեց ուշանալուն համար: Որոշ ժամանակ հետո նորից ներողություն խնդրեց և ընտանիքի հետ տուն գնաց: Գիշերվա ժամը 10-ի մոտ էր, երեխաների հոգսերը պետք էր հոգալ: Գնալուց առաջ նա Սարգսի կնոջ՝ Վիկտորիային խնդրել էր հաղորդել վարչությանը, որ ինքն այլևս պիտի չմասնակցի վարչության աշխատանքներին: Այս լուրից ես անձամբ վրդովվեցի, քանի որ Սեդան ո՛չ թե Վիկտորիային, այլ վարչությանը պետք է ասեր այդ մասին: Մենք ամեն օր հեռախոսով խոսում և հազար ու մի հարցեր էինք քննարկում: Այդ ընթացքում, նա իր որոշումը կարող էր հայտնել ու քննարկել հետս: Ուստի չզանգահարեցի նրան, սակայն Գրիգորը զանգահարել էր: Այս չեշտում եմ, որովհետև մի առիթով ամուսինը գանգատվել էր, որ այդ հարցով ոչ մեկը չզանգահարեց Սեդային, իսկ Գրիգորը ասել էր, որ ինքը զանգահարել է: Սեդան բարեխիղճ, պարտաճանաչ ու նվիրված աշխատող էր և պատասխանատվություն էր զգում իր գործի համար: Բայց ապրուստի հարցը միշտ ամենամեծ հոգսն է պատճառում մարդուն: Զգացի, որ նա ձգտում է աշխատել ու իր ընտանիքի տնտեսական վիճակը բարելավել, հետևաբար, ներկայումս ի վիճակի չէ մասնակցելու վարչության աշխատանքներին, իսկ



վարչությունը հնարավորություն չունի նյութապես օգնելու նրան:

Քարտուղարի պաշտոնը վստահվեց Արա Պետրոսյանին:

7-26-95 թ. ՎՆ-ում այլ հարցերի շարքին քննարկվեցին նաև հետևյալ հարցերը.

ա. Հասցեների ճշտման և նորերը հավաքելու հարցը: Հանձնարարվեց վարչականներին, որ յուրաքանչյուրը իր գերդաստանի և մոտիկ շրջապատի մարդկանց հասցեները հավաքի և ներկայացնի վարչությանը:

բ. Ըստ վարչության հասած տեղեկությունների, Ոսկեհատի գյուղխորհրդի կողմից բռնագրավման վտանգի տակ է հայտնված Հայաստանում Բեյլանի հուշարձանի տարածքը: Որոշվեց անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, և քանի որ Հարություն Հարությունյանը հաճախ է լինում Երևանում, վարչությունը նրան հանձնարարեց ճշտել հուշարձանի տարածքի չափերը և հետաքրքրվել դրա փաստաթղթերով, մանավանդ, որ նա եղել է ՀՀԿՀ-ի անդամ:

Վարչության հաջորդ նիստերից մեկում Գրիգորը մի նամակի պատճեն տվեց ինձ՝ գրված ՊՀՄ-ի վարչության անունից և ուղարկված «Հայաստանի Պեյլանի հայրենակցական միության վարչության», որը գոյություն չունի (տե՛ս հավելված էջ506):

Այստեղ միայն մնում է հարցնել. ՎՆ-ում Հարություն Հարությունյանին հանձնարարվեց այդ գործը տեղում պարզել, բայց ո՞րտեղից հայտնվեց, ո՞վ էր գրել այդ «գրագետ» նամակը: Գրիգորն էր ինքնագլուխ գործել, առանց վարչության տեղեկության պատրաստել և ուղարկել էր նամակը: Այսպիսի գրությունները երբեք պատիվ չեն բերում միությանը, և նրա հեղինակությունն է ընկնում, իսկ ատենապետը, որպես պատասխանատու թող մտածի՝ ինչպես հանի «էշը ցեխից»: Եւ երբ նա նկատողություն է անում այդ նպատակով, սկսում են նրա դեմ լարվել:

1995 թվականին տեղի ունեցած վարչության 8 նիստերից բացակայությունների թիվը հետևյալ պատկերն է ներկայացնում.

1. Վահան Բահարյան՝ 0 բացակա:
2. Գրիգոր Դովլաթյան՝ 1 բացակա:
3. Գևորգ Գաչջյան՝ 4 բացակա:
4. Արա Պետրոսյան՝ 0 բացակա:
5. Մանվել Մարաշյան՝ 3 բացակա:
6. Սարգիս Խորշիդյան՝ 1 բացակա:
7. Սարգիս Գյոզալյան՝ 0 բացակա:
8. Հարություն Հարությունյան՝ 2 բացակա:

Գևորգ Գաչջյանը չմասնակցեց նախորդ տարվա ԾՊ-ին և դրանից հետո հեռացավ վարչությունից: Մանվել Մարաշյանի 3 անհարգելի բացակայությունները, իր 8-03-95 թ. վարչության նիստից կիսատ թողնելն ու հեռանալն էր, որովհետև դարձյալ իր առաջարկը չէր ընդունվել վարչության կողմից: Սա սովորական

երևույթ էր դարձել նրա համար, և իր կժվժիկի խոսքերը «այլևս ես չկամ»ը հաջորդ նիստին դառնում էր «... ես կամ»: Մարդ ինչպե՞ս կարող է իր արժանապատվությունը ցեխոտել..., իսկ վարչականների կեցվա՞ծքը...:

ՊՀՄ-ի Հիմնադրման 3-23-96 թ. Հոբելյանական ՃՊ-ի ժամանակ Մանվել Մարաշյանը, որպես վարչության գեղարվեստական մասի ղեկավար, չզբաղվեց իրեն վերաբերող Հարցերով (արվեստագետների, տեսաերիզի, Հուշանվերների ևայլն): Նա չկատարեց նաև ՃՊ-ի ժամանակ իրեն տրված միակ պարտականությունը՝ գոնե լուսանկարեր բոլոր արվեստագետներին ելույթ ունենալիս:

Ուշադիր Հետևում էի, որ սխալ մի բան չլինի, բայց... եղավ: Երբ Շաքե Թումանյանը բեմ Հրավիրվեց ասմունքելու, Մանվելը անՀայտացավ: Փնտրում էի նրան անցնելով սեղանների կողքով: Երբ մոտեցա Աննա Նշանյանի (Շաքեի կեսուրը) սեղանին, նա ասաց. «Վահան, տեսա՞ր որ Մանվելը Շաքեին չնկարեց»: Ասմունքը վերջանալուց Հետո Մանվելը Հայտնվեց: Վրդովված՝ դիտողություն արեցի նրան Շաքեին չնկարելու Համար: Պարզվեց, որ նա Շաքեի Թատրոնը լուսանկարելու, թե տեսանկարելու (չգիտեմ որը) գործարք է ունեցել, և նա փողը չի վճարել...: Բացատրեցի նրան, որ սա միության միջոցառում է և անձնական Հաշիվներ մաքրելու տեղ չէ, դու, փաստորեն միության Հեղինակության Հետ խաղացիր:

Շաքեի լուսանկարը չլինելու պատճառով, թերթում տպագրված Հոդվածում չկարողացա զետեղել 10-ամյակի ՃՊ-ում ելույթ ունեցած արվեստագետների նկարները:

Այս մասին Հետագայում ես խոսեցի Մանվելի Հետ, որպեսզի վարչության քննարկման նյութ չդարձնեմ, մտածելով, որ կՀասկանա և Հետագայում չի կրկնի: Վարչության միասնությունը չխախտելու նպատակով, միշտ այս ձևով եմ վարվել վարչականների Հետ: Բայց չարաչար սխալվել եմ, ինչպես ցույց տվեցին վարչության Հետագա գործունեության ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները:

Մի ուրիշ տՀաճություն առաջացավ Հոդվածը[1] լույս տեսնելուց Հետո: Նուբարի Համար պատրաստված կրծքանշանը և Հոդվածից մի օրինակ վերցրեցի, ուրախ-ուրախ գնացի նրա դեղատունը՝ կրծքանշանը տալու և նրա տված ծանուցման 100 դոլարը վերցնելու Համար: Կնոջը՝ ՏիգրանուՀուն բարևեցի, Նուբարին Հարցրեցի, ասաց՝ դեղատանը չէ: Մի ուրիշ օր գնացի, նա

---

1. Տե՛ս «Նոր Հայաստան», Զորեք., Ապրիլ 3, 1996, էջ 4:



նորից այնտեղ չէր, իսկ ՏիգրանուՀին էլ սառը ընդունեց ինձ: Զգացի, որ մի բան պատաՀել է, թողեցի ու Հեռացա:

Վարչության նիստի ժամանակ Մանվելը պարզաբանեց Հարցը: Առաջինը՝ 10-ամյակի ՃՊ-ի ժամանակ Նուբարին Հուշատախտակ Հանձնելիս իր մասին չեմ խոսել, չեմ գովաբանել իրեն (արդյո՞ք ժամանակին Նորայրի Հետ վարչության գրած նամակի, թե՞ խոստացված նվիրատվությունների կամ ծանուցումների փողի մի մասը չտալու Համար..., ինչպես այս անգամ էլ չտվեց): Երկրորդ՝ Հոդվածում նրա անունը չեմ գրել: Մտքովս չանցած բաներ: Տպագրված Հոդվածը չէի կարդացել, կարդացի և աչքերիս չՀավատացի: Ոչ միայն Նուբարի անունը չկար, այլ ԱնաՀիտ Մարտիրոսյանինն էլ՝ և ուրիշ բացթողումներ էլ կային, չնայած՝ Հոդվածը չարվելուց Հետո անձամբ ստուգել էի:

Անմիջապես գնացի թերթի խմբագրություն և խմբագրին՝ ՎաՀան ՎաՀանյանին Հարցրեցի, թե ինչո՞ւ է Հանել մարդկանց անունները: Այստեղ էլ պարզվեց, թե որտեղ է թաղված շան գլուխը: Նուբար Միսսի-Գևորգյանի և Հայկական Հեռուստատեսության տնօրեն Սարգի Մուրադյանի Հետ ՎաՀանյանի Հարաբերությունները լավ չեն, որի արդյունքում Հոդվածից Հանվել են Նուբարի և ԱնաՀիտի (որը աշխատում է Սարգիի մոտ) անունները:

Այս բոլորը լսելուց Հետո՝ վրդովվեցի ու ՎաՀանին նկատել տվի, որ Հոդվածը ես եմ գրել, և նրա մեջ կարող են լինել բազմաթիվ անուններ, որոնց դու չես Համակրում: Եթե նրանցից մեկն ու մեկի մասին լիներ Հոդվածը, կարող էիր ընդՀանրապես չտպել: Ներկա դեպքում, փաստորեն, միության Հեղինակության Հետ ես խաղացել: Ամբողջ մեղքը գցում են իմ վրա, մանավանդ Նուբարը, որի նկատմամբ ես ոչինչ չունեմ, բայց իր արտաՀայտությամբ «մեր հարաբերությունները արդեն լավ չեն»: Մարդիկ ինչո՞ւ մաքուր չեն և միշտ իրենց մեղքերը գցում են ուրիշի վրա, այդ բանը մինչև Հիմա չեմ Հասկանում: Համարյա մեկ ամիս Հետո՝ (Թերթի Հինգշ. Ապրիլ 30, 1996, թիվ 78-ում) ՎաՀանը տպագրեց իմ գրած ուղղումը: Դրանից Հետո այլևս չգնացի Նուբարի մոտ: Մարդ պետք է անկեղծ լինի ու մաքուր Հոգի ունենա:

1996 թ. մարտի 23-ի հոբելյանական ՃՊ-ի համար վարչականների վաճառած տոմսերի և հավաքած ծանուցումների էջերի քանակը հետևյալ պատկերն է ներկայացնում.

1. Վահան Բահարյան՝ 41 տոմս, 11,5 էջ ծանուցում:
2. Գրիգոր Դովլաթյան՝ 59 տոմս, 4,5 էջ ծանուցում:
3. Արա Պետրոսյան՝ 7 տոմս, 0 ծանուցում:
4. Մանվել Մարաշյան՝ 14 տոմս, 0 ծանուցում:

5. Սարգիս Խորշիդյան՝ 9 տոմս, 1,0 էջ ծանուցում:
6. Սարգիս Գյոզալյան՝ 38 տոմս, 1,0 էջ ծանուցում:
7.Հարություն Հարություն-յան՝ 18 տոմս, 2,0 էջ ծանուցում:

Գրիգոր Դովլաթյանի քրոջ և Անդրանիկ Դովլաթյանի մահվան կապակցությամբ, 4-10-96 թ. և 4-29-96 թ. վարչության կողմից ցավակցական ուղարկվեց Երևան:

Մինչ այդ, Գրիգորը Ասատուր Գյոզալյանի մահվան առթիվ ցավակցական հեռագիր էր ուղարկել Երևան, որի համար վճարել էր 25 դոլար՝ նորից ինքնագլուխ, անգրագետ գրված և առանց թվականի: Հարցրեցի, թե ինչո՞ւ ուղարկեցիր առանց ինձ հարցնելու, փաքս կանեինք, չէիր չարչարվի, փող չէիր տա և բովանդակալից կլիներ: Պատասխանեց, որ ինքը չէր իմանում: Վարչության անունից հեռագիր է ուղարկում առանց վարչության կամ գոնե ատենապետին տեղյակ պահելու: Ահա այսպես են գործում, և չես էլ կարողանում հասկացնել (տե՛ս հավելված էջ 507):

Վերադառնալով իմ կապերին նախկին վարչականների հետ՝ 1987 թվականից հետո ընդհանրապես հարաբերություն չունեի Նուբար Միսի-Գևորգյանի, Զարեհ Պալյանի և Նորայր Մելքիսեթյանի հետ: Վերջինիս հետ մեր ստիպողական կապը, անհրաժեշտության դեպքում, Սարգիս Սողոնալյանին վերաբերող փաստաթղթերի կապակցությամբ էր, այն էլ հեռախոսով կամ թղթակցությամբ: 100000 դոլարի հետ կապված նրա վարչության ուղղված օգոստոս 8, 1990 թվակիր նամակից հետո, մենք ընդհանրապես չէինք հաղորդակցվում իրար հետ: Սողանալյանների մասին որոշ տեղեկություններ հաղորդում էր ինձ հանգուցյալ Ռեպեկա Գասպարյանը: Երբ նա նամակ էր ստանում Մայր Մարիամ Սողանալյանից, անպայման զանգահարում էր:

**ՍՐԲԱԳՐՈՒՄ**

Թերթիս Ջորեքշաբթի, Ապրիլ 3, 1996Թ., թիւ 62-ում «Պէյլանի հայրենակցական միութեան ճաշկերոյթ-պարահանդէս» յօդուածում թոյլ են տրուել հետեւեալ բացթողումները, որի համար ներողութիւն ենք խնդրում:

1. Շնորհակալութիւն Աւահիտ Մարտիրոսեանին, որ իր հիանալի ասմունքով նոյնպէս իր լուման բերեց այդ երեկոյի յաջողութեանը՝ շնորհաւորելով Միութեան հիմնադրման 10 ամեակը:

2. «Յուշատախտակներ տրուեցին Միութեան և վարչութեան 13 անդամներին...» պարբերութիւնում, յուշատախտակներ ստացողների թուարկման մէջ պէտք է լինէր նաեւ Նուբար Միսի Գէորգեանը:

3. «Վահան Բահարեանի խօսքը» վերնագրի տակ «Սրահի գնման...» պարբերութիւնը կարդալ. «1994Թ. ճաշկերոյթ-պարահանդէսի ժամանակ, Նախագահող Պրն. Սարգիս Սողանալեանը խոստացաւ մեր միութեան համար գնել սրահ, և այժմ մենք տեղի փնտռտուքի մէջ ենք»:

Հոդվածի ուղղման լուսապատճենը:



Մի օր էլ զանգահարեց և ասաց, որ Նորայրի վիճակը ծանր է, թոքերից մեկը հեռացրել են, լավ կլինի, որ այցելես նրան: Տրամադրությունս ընկավ այս լուրի վրա, անկախ նրա կատարած արարքներից, կազմակերպեցի, և վարչականներով այցելեցինք նրան Գլենդելի իր տանը: Նա ապաքինվեց և դրանից հետո, ինչպես ընթերցողը կարդաց նախորդ էջերում, մենք միասին կազմակերպեցինք Սողանալյանի մեծարանքի երեկոն:

1996 թ. դեկտեմբեր 24-ի ՃՊ-ի համար վարչականների վաճառած տոմսերի և սույն տարվա մեջ տեղի ունեցած վարչության 20 նիստերից բացակայությունների թիվը հետևյալ պատկերն է ներկայացնում.
1. Վահան Բահարյան՝ 17 տոմս, 0 բացակա:
2. Գրիգոր Դովլաթյան՝ 35 տոմս, 1 բացակա:
3. Արա Պետրոսյան՝ 14 տոմս (5-ը՝ 20 դոլարանոց), 2 բացակա:
4. Մանվել Մարաշյան՝ 18 տոմս (8-ը՝ 20 դոլարանոց), 5 բացակա:
5. Սարգիս Խորշիդյան՝ 9 տոմս (2-ը՝ 20 դոլարանոց), 0 բացակա:
6. Սարգիս Գյոզալյան՝ 15 տոմս (8-ը՝ 20 դոլարանոց), 0 բացակա:
7. Հարություն Հարությունյան՝ 20 տոմս (8-ը՝ 20 դոլ.), 3 բացակա:

Գևորգ Գալչյանը մասնակցել է միայն տարվա սկզբի երկու նիստերի, որից հետո հեռացել է վարչությունից, առանց հայտնելու: Մանվել Մարաշյանի 5 բացականերից 3-ը իրար հաջորդող անհարգելի են:

10-09-97 թ. ՎՆ-ում տեղի ունեցավ «Բնօրրան»ի նոր տարվա բաժանորդագրությունը, այլ հարցերի հետ քննարկվեց նաև Մանվել Մարաշյանի Բեյլանի մասին պատրաստած տեսաերիզը (1996 թ. Բեյլան այցելելուց հետո), որը նա ցուցադրեց «Ամրոցիա»ում: Այս կապակցությամբ, Արա Պետրոսյանի առաջարկով 200 դոլար նվիրվեց Մանվելին, որին Գրիգորը բացարձակորեն դեմ էր,(նրան պարզ չէր, թե ինչո՞ւ համար էր տրվում փողը, երբ նա դրանով գործարք (բիզնես) էր անում): Երբեմն այսպիսի չնչին(?) լինում էին, քանի որ տհաճություններ էին ստեղծվում, և ասեկոսեները շատանում էին, թե այսինչ վարչականը այս բանը արեց, իսկ վարչությունը չքաջալերեց նրան և այլն: Մեր նպատակն էր վարչականների միասնությունը պահպանել:

Մի քիչ մանրամասն կանգ առնենք տեսաերիզի հարցին, ջնջելով դեպքերի ընթացքի ժամանակագրությունը, քանի որ ոչ մի տեղ, ոչ մի նշում չի եղել և չկա այդ մասին:

Ճանապարհորդությունից վերադառնալուց որոշ ժամանակ անց, Մանվելը առաջարկեց դիտել պատրաստած տեսաերիզը: Պայմանավորված օրը նրա տանն էինք՝ Մարտիրոս Էքշյանը, Արա Պետրոսյանը և ես: Դիտեցինք 3,5 ժամանոց տեսաերիզը, որտեղ միայն մեկ ժամ ցույց էր տրվում Պոլիսը՝ թուրքական երաժշտության ուղեկցությամբ: Նստեցինք արդեն պատրաստի սեղանի շուրջը և վայելեցինք Մարքուհու պատրաստած ճաշերը,

որտեղ ինձ համար, հատկապես, առանձնանում էր պատրաստած չիք քյոֆտեն:

Ճաշելուց հետո կարծիքներ փոխանակեցինք տեսաերիզի մասին: Նշվեց, որ տեսաերիզը պետք է լինի 1,5-2,0 ժամանոց: Այն անվանվում է «Զիմ Կիլիկիա», բայց մեկ ժամից ավելի Պոլիսն է ցուցադրվում՝ Դոլմա-Բահչե պալատով, որտեղ հազարավոր հայ կանայք և կույս աղջիկներ են պղծվել: Դա կնսեմացնի տեսաերիզի արժեքը: Թուրքական երաժշտությունը կրճատել: Դոլմա-Բահչեն ցուցադրել մի քանի րոպեով: Դա ճիշտ կհասկանա ժողովուրդը, քանի որ Բեյլան գնալու ճանապարհը անցնում է Պոլիսով:

Մանվելը հայտնեց, որ մի քանի տասնյակ թուրքական տեսաերիզներ ունի, ու՞մն է խանգարում դրանց երաժշտությունը: Սա ասում էր ՊՀՄ-ի վարչության գեղարվեստական մասի պատասխանատուն...:

Դժբախտաբար, Մանվելի նման շատեր են պատվիրում թուրքական տեսաերիզներ Նյու Յորքում, թե Վաշինգտոնում: Երանի, թե նույն ակտիվությամբ էլ հայկական տեսաերիզներ պատվիրեին:

Մանվելին առաջարկվեց՝ եթե իր հեղինակության համար է պատրաստում տեսաերիզը և վերոնշյալ պայմանները ընդունի, վարչությունը կհովանավորի այն: Եթե դրամ շահելու համար է՝ դա արդեն իր գործն է, թե ինչպիսի տեսաերիզ կպատրաստի:

Պայմանավորվեցինք կիրակի օրը նորից հավաքվել (նախորդ օրը շաբաթվա մեջ էր), որի մասին Մանվելը տեղյակ պիտի պահեր մեզ: Հանդիպումը տեղի չունեցավ: Մի օր էլ լսեցինք, որ 3,5 ժամանոց տեղաերիզից մի քանի օրինակներ վաճառել է արդեն «Թրքասեր» բեյլանցիներին:

Արայի տատիկը մահացավ 102 տարեկանն անց: Մահվան կապակցությամբ հայտարարություն տալու համար նրա եղբոր տղայի հետ գնացինք «Armenia Today» հեռուստաստուդիա: Այնտեղ հանդիպեցի Մանվելին և հարցրեցի, թե ի՞նչ գործ ունի ստուդիայում: Պարզվեց, որ ֆիլմն է պատրաստում՝ և ցույց տվեց պատրաստողին, որն անծանոթ էր ինձ: Վերջինս Բեյլանի և շրջակա բնակավայրերի անուններն էր գրում համակարգիչով: Նկատեցի, որ դրանք սխալ են: Մանվելին նկատել տվի, որ անունները սխալ է գրվում: Պատասխանեց. «Ի՞նչ անեմ, մարդը ձրի է անում, ո՞նց ասեմ, որ ուղղի» (իրականում չէր կարող ուղղել, քանի որ ինքը չգիտեր): Շարունակեցի, թե սա ֆիլմ է լինելու, ինչպե՞ս կարող ես ներկայացնել հանրությանը սխալ անուննե-



րով: Մոտեցա պատրաստողին, ներողություն խնդրեցի և ասացի, որ մի սխալ գրված անուն տեսա, կարելի՞ է ուղղել: Անունը ուղղելուց հետո երիտասարդը խնդրեց, որ սկզբից սկսի, որպեսզի բոլոր անունները ստուգեմ (հավանաբար ինքն էլ գիտեր, որ Մանվելը ի վիճակի չէ այդ անելու):

«Ամբրոսիա»ում 2,5 ժամանոց տեսաերիզը դիտելուց հետո, մի քանի մտավորականներ, հենց տեղում, դիտողություն արեցին թուրքերեն երգերի մասին, չնայած, որոշ կրճատումներ եղել էր:

Տեսաերիզում՝ թուրք գյուղացիների հետ Մանվելի հարցազրույցի ժամանակ, ալեհեր թուրքեր հիշում էին բնօրրանից հեռացած շատ հայերի անունները, բայց չէին ասում, թե նրանք ինչու հեռացան, իսկ Մանվելը չէր հարցնում այդ մասին: Նա մտադիր էր նորից այցելել բնօրրանը, և այդպիսի հարցերից խուսափում էր, կարծեք վախով էր համակված:

Արևմտահայաստան (Թուրքիա) այցելող ամերիկահայ և հայրենի զբոսաշրջիկները դժվարություններով ու վախով ինչպիսի՜ հայկական հուշարձաններ և բնակավայրեր են լուսանկարում ու տեսանկարում, բերում և դարձնում հանրության սեփականությունը, դրանք ցույց տալով ամենուրեք: Դրանք դիտելիս, ոչ միայն զարմանում ես նրանց համարձակության վրա, այլ հիանում՝ նրանց հայրենասիրությամբ: Թուրքիայում գիտեն նրանց մասին, բայց նրանք գնում են դարձյալ և նույն նպատակով, առանց վախենալու շարունակում իրենց գործը, իսկ Մանվելի դեպքո՞ւմ:

Երբ Մանվելը վերադարձավ Սանջաքից, պատահականորեն նրան տեսա Մանգասարյանի հեռուստաժամով ելույթ ունենալիս, որի այն հարցին, թե ինչո՞ւ ստեղծվեց ՊՀՄ-ն, Մանվելի պատասխանեց. «Հայաստանի հայրենակիցներին օգնելու համար»:

Ահա նրա հասկացողությունը միության գործունեության մասին, որի համար այդ հարցը քննարկվեց ՎՆ-ում և մի անգամ ևս բացատրվեց, որ նա, ընդհանրապես, որևէ վարչական առանց վարչության թույլտվության իրավունք չունի ՊՀՄ-ի անունից ելույթ ունենալու: Նա վարչության նիստում ևս պնդում էր, որ իրավունք ունի, որովհետև ինչպես որ ինքն է, իր «բանիմաց» ընկերներն էլ ձայն չէին հանում, կարծեք, թե ԾԿ-ն ուրիշների համար է գրված, բայց եթե չեն հասկանում իրենց կարդացածը, կամ չեն էլ կարդացել այդ, ի՞նչ կարող ես անել:

Մանվելի կողմից իմ նկատմամբ ամենուրեք շարունակվեց զրպարտությունը այն մասին, որ իբր թե ես առաջարկել եմ տեսաերիզի մեջ մտցնել հազարավոր հայ կանանց ու կույս աղ-

ջիկների պղծվելը Դոլմա-Բահչե պալատում: Վերջապես, մի օր նրա, Մարտիրոսի և Արայի ներկայությամբ արծարծեցի հարցը՝ վերջ տալով Մանվելի զրպարտությանը:

Այսպիսի մոտեցումները վարչության մեջ ձեխքեր էին առաջացնում, քանի որ ճշմարտությունը թաքցվում էր, իսկ զրպարտիչը առիթից օգտվելով դիմում էր հաջորդ քայլին:

1997 թ. հոկտեմբեր 25-ի ՃՊ-ի համար վարչականների վաճառած տոմսերի և հավաքած ծանուցումների էջերի քանակը, սույն տարվա մեջ տեղի ունեցած վարչության 17 նիստերից բացակայությունների թիվը հետևյալ պատկերն է ներկայացնում.

1. Վահան Բահարյան՝ 48 տոմս, 8,5 էջ ծանուցում, 0 բացակա:
2. Գրիգոր Դովլաթյան՝ 36 տոմս, 3,5 էջ ծանուցում, 0 բացակա:
3. Մարտիրոս Էքշիյան՝ 9 տոմս, 0,5 էջ ծանուցում, 1 բացակա:
4. Արա Պետրոսյան՝ 17 տոմս, 1,0 էջ ծանուցում, 1 բացակա:
5. Սանուկ Տոնոյան՝ 0 տոմս, 0 ծանուցում, 6 բացակա:
6. Մանվել Մարաշյան՝ 26 տոմս, 4,0 էջ ծանուցում, 0 բացակա:
7. Հակոբ Խորշիդյան՝ 20 տոմս, 1,0 էջ ծանուցում, 3 բացակա:
8. Սարգիս Գյոլպյան՝ 5 տոմս, 1,0 էջ ծանուցում, 2 բացակա:
9. Հովսեփ Գասպարյան՝ 18 տոմս, 1,0 էջ ծանուցում, 0 բացակա:
10. Հարություն Հարությունյան՝ 33 տոմս, 1,0 ծանուցում, 4 բացակա:

Սանուկ Տոնոյանը մտավ վարչության մեջ, բայց հաճախ էր բացակայում, պատճառաբանելով, որ երկու տեղ է աշխատում, որպեսզի ապահովի ընտանիքի պահանջները: Ոչինչ չենք կարող ասել: Վարչությունը հաճախ է հանդուրժում բացակայությունները, որովհետև առանց այդ էլ քիչ ենք, իսկ երիտասարդության մոտ մեծ մասամբ հայրենակցական պգացմունքները բացակայում են, և ով էլ, որ ունի, նրա էլ տնտեսական պայմանները չեն ներում: Հարություն Հարությունյանի 4 բացականերից 3-ում տղան՝ Սեդրակն է փոխարինել իրեն: Այս ձևով, արդյոք հնարավո՞ր է վարչական պարտականությունները կատարել...:

ՎՆ-ում Մանվելը ցույց տվեց մեծարանքի երեկոյին (3-17-98 թ.) Գալիա Նովենցին նվիրվելիք հուշատախտակը՝ ասելով, որ 75 դոլար է վճարել, ավելացնելով նաև, թե. «գեղեցիկ է, չէ՞»: Տեղում դիտողություն արեցի նրան, ասելով, որ եթե 500 դոլար վճարեիր ավելի գեղեցիկ կլիներ, բայց վարչությունը որոշեց 50 դոլար արժեքով հուշատախտակ, դու ի՞նչ իրավունքով ես 75 դոլարանոց պատվիրել: Նորից տհաճ խոսակցություններ, որոնք երբեք չազդեցին Մանվելի վրա:

Մեծարանքի օրը վաղ գնացի սրահ, որ օգնեմ Մանվելին: Ոչ մեկը չկար (խոսքը իր ընկերների՝ Գրիգորի, Հարությունի ու Սարգիս Գյոզալյանի մասին է): Փոքր սրահից լրացուցիչ աթոռներ տեղափոխեցինք միասին, բայց «քիթը կախ էր»: Ժողովրդը սկսեց գալ: Նախասրահում կանգնած էինք միասին, մի կին մոտեցավ, կիրթ ձևով ներողություն խնդրեց և ասաց, որ թերթում հայտարարություն կա մեծարանքի երեկոյի մասին, որ մուտքը



ազատ է, ինքն էլ շատ է հարգում ու սիրում Գալիա Նովենցին, կարո՞ղ է մասնակցել: Մանվելը բորբոքված, գոռգոռաց կնոջ վրա, թե մուտքը միայն հրավիրատոմսով է, դուք չե՛ք կարող ներս մտնել: Կինը ուզում էր անպայման ներկա լինել: Նա նորից ջղայնացավ և ներս գնաց թերթը բերելու և կնոջը ապացուցելու, որ նա սխալ է կարդացել: Իսկ իրականում, թերթում տարբեր օրեր երկու ձևով էլ տպվել էր հայտարարությունը: Երբ Մանվելը ներս գնաց, կնոջը իմ հրավիրատոմսը տվի, խնդրեցի ներս մտնել:

Նախասրահում էի, երբ Սարգիս Գյոզալյանը եկավ: Նա առաջարկեց 200 դոլար տալ Մանվելին: Զարմացանքեցի: ՎՆ-ում նա հայտարարեց, որ ատենապետը լավ չի աշխատում: Երբ հարցրեցին, թե կոնկրետ ի՞նչը լավ չի անում, չկարողացավ պատասխանել: Նա կարծում է, որ միության գործը ՎՆ-ին մասնակցելն է: Քանի-քանի անգամներ է նիստից թողել, հեռացել, որովհետև իր առաջարկը չի ընդունվել վարչականների կողմից: Իսկ երբ իմ՝ ատենապետիս, աշխատանքի գնահատականի հարցն էր քննարկվում ՎՆ-ում, ձեռքերը գրպանը տանելով փերձեց ինձ վախեցնել, որ եթե պետք լինի, հետս ուրիշ ձևով էլ կը խոսի: Նա վարչությունը և փողոցը իրարից չէր զանազանում:

Գալիա Նովենցի երեկոյի ավարտից հետո Ռուբեն Քոչարը հարցրեց, թե կարո՞ղ է հարցազրույց ունենալ Գալիա Նովենցի հետ, ասացի, որ հիմա Մանվելը կգա, կպարզենք: Երբ նա եկավ, փոխանցեցի Ռուբենի առաջարկը: Մանվելը կոպտորեն պատասխանեց. «նա ո՛չ մեկի հետ էլ հարցազրույց չի ունենա, ե՛ս եմ որոշողը...» և այլ կոպիտ արտահայտություններով: Ապշած մնացի: Այդքա՜ն էլ անտակտություն...: Ռուբենն էլ զարմացավ, ներողություն խնդրեց ինձանից տհաճ դեպքի համար:

Հաջորդ օրը երեկոյան Մանվելը զանգեց և հարցրեց, թե Անահիտ Մարտիրոսյանը (որն ինձ հետ մոտ է, Մանվելը չէր ճանաչում նրան) կարո՞ղ է հարցազրույց ունենալ Գալիա Նովենցի հետ: Մոռացել էի երեկվա նրա պատճառած տհաճություններն ու վիրավորանքները (դա էլ իմ «թերությունն» է): Հեռախոսի համարը տվի և ասացի՝ «իմ անունից խնդրի և հարցդ կլուծվի»:

1998 թ. ապրիլ 23-ի հուշ-երեկոյի լուսանկարումը վարչության կողմից հանձնարարված էր Մանվել Մարաշյանին, իսկ գլխավոր բանախոսը ես էի: Նշեմ, որ միության 10-ամյակի ժամանակ՝ Շաքե Թուխմանյանին չնկարելու համար Մանվելին դիտողություն անելուց հետո, հետագա միջոցառումներին նա ընդհանրապես չնկարեց ինձ, այդ թվում՝ սույն միջոցառման ժա-

մանակ: Նա չէր հասկանում, որ միության գործունեությունը ՊՀՄ-ի պատմությունն է ներկայացնում: Մարդ որքան անելություն ու մաղձ պետք է ունենա հոգում, որ լավությունների դիմաց միշտ վատություն անի...:

Մայրերի օրվա առթիվ վարչության կազմակերպած միջոցառմանը ներկա էր Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր հյուպատոս Արմեն Մելքոնյանի կինը՝ Եվգենիան: Սա ՊՀՄ-ի վարչության Տիկնանց Հանձնախմբի առաջին միջոցառումն էր, որը հաջողություն ունեցավ, ոգևորելով կազմակերպիչներին:

Այս միջոցառմանը վարչականներից մասնակցում էին ես՝ ատենապետի հանգամանքով և Մանվել Մարաշյանը՝ միջոցառումը լուսանկարելու պարտականությամբ: Գեղարվեստական հայտագիրը կազմել և վարում էր Սեդա Կվրյանը: Ելույթ ունեցան Տիկնանց Հանձնախմբի ատենապետուհի Սյուզի Հեքիմյանը և այլ անդամներ:

Մանվելը այստեղ էլ չմոռացավ գրպանի շահը և ցույց տվեց իր «փայլուն» մտահղացումը՝ Սյուզիին առաջարկել իրենից գնել «Ջիմ Կիլիկիա» տեսաերիզը և նվիրել հյուպատոսի կնոջը:

Ի՞նչ ձևով կարելի է վերաբերվել այսպիսի մարդկանց հետ...: Հայ ժողովրդական առածն ասում է Մանվելի օգտագործած լեզվով՝ թուրքերենով՝ «Ջան չքմայան, խույ չքմայ» (մարդու հոգին դուրս չեկած, բնավորությունը դուրս չի գա, այսինքն չի փոխվի): Եւ Մանվելը շարունակեց իր այդ գործը, առանց դիտողության կամ նկատողության արժանանալու վարչության որևէ անդամի կողմից, բացի ինձնից: Հին սովորություն է: Իրենց ընկերոջը չեն ուզում վիրավորել, չհասկանալով, որ սա ընտանեկան միջնոլորտ չէ, այլ ազգային գործ է, յուրաքանչյուրը պետք է ճիշտ կատարի իր պարտականությունները:

5-18-98 թ. ՎՆ-ում ամփոփվեցին Հուշ-երեկոյի և Մայրերի օրվա միջոցառումների արդյունքները բարձր գնահատականով: Մի հարց կրկին վիճաբանության նյութ դարձավ: Միջոցառումներից հետո վարչականներից մի քանիսը հաճախ շուտ են գնում, ոմանք հարգելի, ոմանք էլ անհարգելի պատճառներով, գործի ամբողջ ծանրությունը թողնելով մնացողների վրա, իսկ ես որպես ատենապետ, դատապարտված էի և, անկախ պատճառներից, իրավունք չունեի շուտ գնալու:

Հուշ-երեկոյի ավարտից հետո, Սեդա Կվրյանը առաջարկեց, որ եթե միությունը 200 դոլարով հովանավորի իր «Կարկաչ» հեռուստածրագիրը, որի հաղորդումները 2-3 օր հետո էր, նա կցուցադրի միջոցառումը (ծրագիրը շաբաթը մի անգամ էր): Եթե



այդ պահին չորոշվեր հարցը, մյուս շաբաթ արդեն ուշ կլիներ և իմաստ չուներ այն ցուցադրել, ուստի վարչականների մեծ մասի ներկայությամբ (մի քանիսը գնացել էին արդեն) որոշում ընդունվեց ցուցադրել այն: Սա որոշ վարչականների, հատկապես, Գրիգոր Դովլաթյանի մոտ վրդովմունք առաջացրեց, թե ինչո՞ւ համար 200 դոլար պիտի տրվի այն ցուցադրելու համար:

Իհարկե, միջոցառումը ցուցադրվեց՝ մի անգամ ևս բարձրացնելով միության անունը Լոս Անջելեսի հայ համայնքում: Դժբախտաբար, գրիգորները չէին կարող ըմբռնել այդ հաջողության իմաստը՝ կպած մնալով 200 դոլարին:

Քանի որ միության ԾԿ-ի որոշ կետեր հաճախ էին խախտվում որոշ վարչականների կողմից, 6-29-98 թ. ՎՆ-ին ներկայացրեցի «Վարչության անդամների պատասխանատվությունը» գրությունը (տե՛ս հավելված էջ 508):

Կյանքում ընտանիք չկա, որ վեճ չունենա: Բայց այն ընտանիքն է հարատևում, որտեղ դա լրջորեն է կատարվում:

Հասարակական կյանքում բոլոր կազմակերպությունները (կուսակցություն, եկեղեցի, տարբեր միություններ) ընտանիքներ են սեպվում, որոնց մեջ նույնպես անխուսափելի են տարբեր բնույթի (ազգային, անձնական, աթոռի և այլ) վեճեր: Եթե դրանք չկասեցվեն, ժամանակին հայտնաբերելով և պատժելով մեղավորին (նկատողություն, անձնական տույժ, ծայրահեղ դեպքում կազմակերպությունից հեռացնել), ապա տվյալ կազմակերպությունը կարող է հասնել կործանման եզրին;

Այս առումով նշված գրությունը մեղմ դիտողություն էր վարչականներին, որպեսզի ՎՆ-ում կարգ ու կանոն պահպանեն և անտարբերություն ցուցաբերելով չբացակայեն ՎՆ-ից՝ առանց այդ մասին նախօրոք տեղյակ պահելու ատենապետին:

Նշված գրությունը վարչության անդամներին բաժանելիս, Արա Պետրոսյանն ասաց, որ դա պատիվ չի բերում վարչությանը, պետք չէ կցել արձանագրությանը: Բայց դա կցվեց դրան և դրա հետ դեռ ուրիշներն էլ ավելացան...:

Վարչության ներսում հարուցված վեճերի հիմնական հեղինակը Մանվել Մարաշյանն էր:

Ես անմիջական եմ եղել բոլոր վարչականների հետ և յուրաքանչյուրի հետ քննարկել եմ վարչականներին վերաբերող դրական կամ բացասական երևույթները առանց որևէ մեկից թաքցնելու դրանք:

Այդպիսի մի հարցի մասին մի օրինակ. վերջին ԺՊ-ից հետո մի օր Մանվելը զանգահարեց՝ ասելով, որ ԺՊ-ի մասին գրված

հոդվածի հետ այն խմբանկարը տալ թերթին, որի մեջ Սարգիս Գյոզալյանն էլ կա: Ես առարկեցի՝ նշելով, որ թերթում դրվում են ակտիվ ու նվիրված աշխատողների նկարները և ոչ թե նրանց նկարները, որոնք ոչ մի գործ չեն կատարում միության համար: Նա առանց երկար մտածելու հրամայական տոնով առաջարկեց իր նկարը...:

Կրկնում եմ, ոխակալ չեմ եղել բոլորովին: Աշխատանքի մեթոդս է եղել՝ այդ ձևով մեղմորեն «պատժել» վարչականին, զգացնել տալ սխալը, որպեսզի չկրկնվի այլևս :

Այս խոսակցությունները Մանվելը հասցնում է Սարգիս Գյոզալյանին, բնական, չգիտեմ հետն էլ որքան ավելորդ խոսքերով: Երկուսով սկսեցին շարունակել իրենց տհաճ վեճերը, որոնց հետևում կանգնած էին նաև Գրիգորն ու Հարությունը (հետո բացահայտվեց):

Ինչպես նշեցի, վարչականները մատների արանքով էին նայում վարչության գործունեությունը իր հիմնական նպատակներից շեղող այս վեճերին: Տուն էինք գնում ներվայնացած:

Այս բոլորը նկատի ունենալով՝ առաջարկեցի ատենապետիս գործունեության հարցը քննարկել վարչության նիստում՝ խնդրելով ազատորեն կարծիքներ հայտնել աշխատանքիս մասին: Զզվել էի այդ վեճերից, մտածեցի՝ եթե իրոք դժգոհ են գործունեությունիցս, կթողնեմ ատենապետությունը և գիշերները հանգիստ կքնեմ:

Ատենապետի հարցը քննարկվեց 7-08-98 թ. ՎՆ-ում: Բոլոր վարչականներն էլ արտահայտվեցին: Դժբախտաբար, արձանագրության մեջ Մարտիրոսը շատ քիչ բան է գրանցել այդ մասին, այնուամենայնիվ եղածը ներկայացնում եմ հայրենակիցներիս՝

Վահան Բահարյանը որպես ատենապետ, խոսեց իր վերջին տարիների աշխատանքային գործունեության մանրամասնությունների մասին, իր պարտականությունների և իրավասության սահմաններում միության ներքին հարցերի և անհրաժեշտաբար այլ կազմակերպությունների հետ գործակցաբար ունեցած հանրօգուտ երևույթների և այլոց մասին: Ներկայացրեց վերջին շրջանի իր գործունեության իրական պատկերը:

Ունկնդիր վարչականներից յուրաքանչյուրն արտահայտեց իր անձնական խոսքը, այն է. Սարգիս Գյոզալյանը և Մանվել Մարաշյանը խոսեցին անցյալ տարիների համատեղ աշխատանքի ընթացքին առաջացած վիճելի հարցերի մասին, որտեղ միանգամայն անարդար մոտեցում է ցույց տրվել ատենապետի կողմից: Ըստ նրանց, նա նկատելիորեն չարաշահել է իր իրավասությունները:

Մասնակից՝ մյուս վարչականները Վահան Բահարյանի ատենապետության աշխատանքային գործունեությունը գնահատեցին դրական, տարբեր հարցերի նկատմամբ անաչառ մոտեցմամբ և արդյունավետ գործունեությամբ:

Վարչությունը լրիվ կազմով էր. Վահան Բահարյան, Արա



Պետրոսյան, Մարտիրոս Էքշիյան, Մանուկ Տոնոյան, Գրիգոր Դովլաթյան, Մանվել Մարաշյան, Հակոբ Խորշիդյան, Սյուզի Հեքիմյան, Հովսեփ Գասպարյան, Հարություն Հարությունյան և Սարգիս Գյոզալյան: Մարդուն մեղադրելիս, փաստեր են բերում, որոնք այս դեպքում չկան: Հետևաբար, Սարգիս Գյոզալյանի և Մանվել Մարաշյանի վերոհիշյալ արտահայտությունները զրպարտություններ են:

Միջոցառումների ժամանակ մասնակիցներին լուսանկարելը, նկարները բաժանելը, որոշակի հարգանքի նշան է նրանց հանդեպ, հայրենակիցներին միությանը ավելի մոտեցնելու մի ձև: Մանվելը զլանում էր շատերի նկատմամբ:

Այս պատճառով ՎՆ-ում առաջարկեցի օգոստոսի 23-ին կայանալիք դաշտահանդեսում լուսանկարելու պարտականությունը հանձնարարել Հակոբ Խորշիդյանին, որն ընդունվեց:

Արա Պետրոսյանը հրաժարվեց դաշտահանդեսի գեղարվեստական մասի և հանդիսավարի պարտականությունները կատարելուց՝ պատճառաբանելով, որ կոկորդն է ցավում, ի վիճակի չէ: Դրանք հանձնարարվեցին Տիկնանց հանձնախմբի անդամներ Սեդա Հայրիյանին, Աիդա Տոնոյանին և Եղիսաբեթ Մարոնյանին:

Ինչպես միշտ, դաշտահանդեսը սկսվեց վաղ առավոտյան, և յուրաքանչյուրն անցավ իր պարտականությունների կատարմանը: Սեդան, Աիդան և Եղիսաբեթը կազմակերպում էին խաղեր, պարեր, ասմունք, երգ և միջոցառումը ընթանում էր հաջողությամբ: Վարձված էր D. J.: Կեսօրն արդեն անցել էր: Բարձրախոսը լռեց: Նվագողին հարցրեցի, թե ինչո՞ւ լռեց, ասաց՝ ընդմիջում է: Նրան խնդրեցի երաժշտություն միացնել: Երբ ետ դարձա, տեսա, որ սուր վիճաբանություն է գնում Արայի և Եղիսաբեթի միջև: Տեղյակ չէի, թե ինչ է կատարվում (այդ մասին հետո Եղիսաբեթը պատմեց ինձ. Մանվելը ձեռքը սեղանին խփելով, գոռացել է վրան, թե այս ի՞նչ ձևի եք կազմակերպում... Արային էլ ներքաշում է և ինք քաշվում է մի կողմ[1]:

Սեդան ընդմիջում էր հայտարարել, որ ճաշելուց հետո շարունակի ծրագիրը: Բայց բորբոքված Արայի Եղիսաբեթի նկատմամբ դրսևորած վարմունքը ինձ զարմացրեց, նաև այն, որ ցուցադրաբար վերցնելով խոսափողը շարունակեց ծրագիրը: Այս փաստերը ցավով եմ արձանագրում: Այդ օրը Մանվելի դեմքին

1.- Ըստ ինձ հասած տեղեկությունների, Մանվելը շատերին առաջարկել է գնել իր «Ջիմ Կիլիկիա» տեսաերիզը, այդ թվում՝ Եղիսաբեթին և քրոջը՝ Սեդային (հատը 20 դոլար): Գնողները ամաչելով վճարել են:

նայողի գործը շաբաթներով կխանգարվեր: Զրկվելով լուսանկարելու պարտականությունից, նա իրեն արհամարհված զգաց և այդ պատճառով աշխատեց ձախողեցնել դաշտահանդեսը... (Եղիսաբեթն ու քույրը՝ Սեդան հեռացան միությունից):

Վարչության հետագա նիստերում քննարկվող հիմնական հարցերից մեկը ՃՊ-ի նախագահողի հարցն էր: Առաջարկվեց Նուբար Միսսի-Գևորգյանի թեկնածությունը: Դեմ չլինելով հանդերձ, նկատի ունենալով անցած դեպքերը, ես հրաժարվեցի բանակցելու նրա հետ: Մանվելը խոստացավ խոսել հետը, և ես նրան տվի 10-ամյակի առթիվ Նուբարի համար պատրաստել տված կրծքանշանը և թերթի ուղղումը իր անունի բացակայության հարցով, որպեսզի նրան տա: Հաջորդ նիստում Մանվելը հայտնեց, որ Նուբարը համաձայն է, և ինքն էլ նրան ասել է, թե 1000 դոլար նվիրես հերիք է: Վարչությունը նրան հանձնարարություն չէր տվել գումարի մասին: Ընդհանրապես մեր վարչությունը հարցի այդ մասը թողնում է նախագահողին: Նրան դիտողություն արեցի դրա համար և ասացի, որ երեկոյան կզանգահարեմ կենսագրական տվյալները կվերցնեմ ծանուցման գրքի համար և նաև կխոսեմ հետը: Երբ խոսեցի նրա հետ, նա արդեն գիտեր ՎՆ-ի մեջ եղած բոլոր խոսակցությունների մասին, իհարկե և ոչ միայն այդ նիստի: Մանվելը նրան էր հասցնում բոլոր ՎՆ-երի վերաբերյալ ինֆորմացիաները մանրամասնություններով: Երբ խնդրեցի նկարը և կենսագրական տվյալները, խոսակցության հունը փոխելով, նա հետաքրքրվեց նախորդ ՃՊ-ի նախագահի նվիրած գումարով, որը մոտ 3000 դոլար էր: Ես գիտեի, որ եթե նա նախագահի, 1000 դոլարով չի սահմանափակվի, հեղինակության հարց է: Նա անտրամադիր պատասխանեց՝ ասելով, որ արդեն շատ էլ չէր ուզում, Մանվելի խաթեր պիտի նախագահեր, որ նա լավ տղա է: Այս բոլորը նա շեշտելով էր ասում ինձ: Զգացի, որ նա չի փոխվել և չի էլ փոխվի: Հետագայում Մանվելը բերեց տվյալները:

10-02-98 թ. ՎՆ-ում մի հարց նորից տհաճություն առաջացրեց: Բերում եմ սույն նիստի 6-րդ կետը:

6.– Պարզաբանումներ.– Մանվել Մարաշլյանը վաճառել էր պարահանդեսի 15 տոմս, պայմանով, որ նա սրահում ցուցադրեր որոշ լուսանկարներ՝ Ռաֆայել Վրթանեսյանի, Ժիրայր Քյուփելյանի դիմանկարները, ... Արցախում կռված ազատամարտիկի և այլ նկարներ: Ներկայացված առաջարկը ներկաներն ընդունեցին դժկամությամբ. պարահանդեսին մասնակցող հանրության մոտ վերոհիշյալները պիտի ստեղծեին տխուր հուշեր, հետևաբար, պիտի փոխվեր ձեռնարկի իսկական իմաստը, և ամենակարևորն այն էր, որ Մ. Մարաշլյանը խախտում էր ընդունված կարգն ու կանոնը, այդպիսի սակարկության մեջ մտնելով մենակը, այսինքն նա կատարել էր միանձնյա որոշում առանց վարչության համաձայնությունը ստանալու: Այդ կարգի նկարների ցուցադրությունը հարմար էր ցեղասպանության տարելիցի առթիվ, որ մեր միությունը ձեռնարկում է համարյա ամեն տարի: Տաք վիճաբանություններից հետո որոշվեց տեղի տալ Մանվելի առաջարկին, նկատի ունենալով, որ արարքն արդեն կատարված է, և հարցի մերժումը կստեղծեր նորանոր տհաճություններ: Մարաշլյանին արվեց անհրաժեշտ նկատողությունը ժողովականների կողմից, իր ինքնագլուխ որոշումների կապակցությամբ:



Վարչությունը թույլատրեց (արձանագրության մեջ չի նշված) ցուցադրել միայն Ժիրայր Քյուփելյանի (որի ընտանիքին էին ծախվել տոմսերը) և Ռաֆայել Վրթանեսյանի նկարները:

Մի քանի օր անց Մանվելը զանգահարեց, թե նկարների տակ ուզում է որոշ բաներ գրել, ինչպես գրի և ինչ գրի: Նրան բառ առ բառ թելադրեցի հեգելով: Նա մի քանի անգամ գրեց և կարդաց, սխալ էր: Խնդրեցի բոլորը ջնջել և նորից գրել: Այդ գործը մոտ մեկ ժամ տևեց: Հետագա ժողովներում էլ հարց դրեց, թե ինքը միության համար որոշ գրություններ է տալիս Գրիգորին (Թերջանյան տպարանի աշխատող) համակարգչով շարելու, լավ կլինի, որ վարչության կողմից մի տուփ շոկոլադ և մի հատ կոնյակ նվիրվի նրան: Նա իր «Զիմ Կիլիկիա» տեսաերիզի համար նրան էր տվել շարելու անհրաժեշտ նյութերը (տպարանում Գրիգորը ցույց տվեց դրանք ինձ): Փաստորեն, նա ուզում էր անձնականի համար ուրիշի արած գործերի դիմաց վարչությունը վճարի: Հարցրեցի, թե ինչո՞ւ համար գնեցինք համակարգիչը, եթե վարչության գրությունները ուրիշներին պիտի տանք շարելու: Նա ծպտուն չհանեց, և հարցը փակվեց:

ՃՊ-ի ժամանակ նա բերել էր բոլոր նկարները (ոչ թե վարչության թույլ տված՝ երկուսը), առանց հաշվի առնելու վարչության որոշումը և ուզում էր սրահի ներսում տեղավորել, որը Արամ թույլ չտվեց՝ ասելով, որ ՃՊ եկողները հանգուցյալների նկարներին նայելո՞վ պիտի ուրախություն ու քեֆ անեն:

ՃՊ-ի մասին 11-18-98 թ. հոդվածի[1] մեջ նշել էի, որ օրվա նախագահը միությանը խոստացավ 4000 դոլար:

11-25-98 թ. ՎՆ-ում Մանվելը Նուբարի կողմից գրված մի նամակ տվեց, որի մեջ էր նաև 4300 դոլարի չեքը (300 դոլարը մի սեղանի 10 տոմսերի համար էր): Նա շնորհավորում էր վարչությանը ձեռնարկի հաջողության համար, նշելով նաև վարչականների մի քանիսի անունը (իհարկե, բացառությամբ իմ անվան): Զանգահարեցի խմբագրություն, որպեսզի հոդվածի մեջ վերոնշյալ «խոստացավ» բառը փոխարինեն «նվիրեց»ով: Խոստացան, բայց հոդվածը տպել էին առանց այդ բառը փոխելու: Շա-

1.– Տե՛ս «Նոր Հայաստան», Երեքշ., Դեկտ. 1, 1998 թ.

բաթ օրը խմբագրատուն գնացի: Այնտեղ էր Փայլակ Ահարոնյան, Նուբար Մխսի-Գևորգյան և Մարտիրոս Վարդանյան եռյակը: Նուբարի ձեռքը սեղմելով, շնորհակալություն հայտնեցի տրված չեքի համար և ներողամտությունս խնդրեցի փոքրիկ թյուրիմացության համար, որ վերոնշյալ ուղղումը չի կատարված հոդվածում, շարողն էլ նույնը կրկնեց և նշեց, որ մոռացել է ուղղելու:

Նուբարը բորբոքվեց և ասաց. «Դու գիտես, որ մեր հարաբերությունները արդեն լավ չեն: Եվ գրել ես, որ ես մի գրքի հրապարակություն եմ հովանավորել: Զանգ տայիր հարցնեիր: Անցած անգամ էլ անունս չէիր գրել...»: Նշեցի, որ մի քանի գրքերի հրատարակություն հովանավորելուդ առթիվ թյուրիմացություն է եղել, ինչ վերաբերում է մեր հարաբերություններին, ես ոչինչ չունեմ քո հանդեպ, իսկ եթե դու ունես, չգիտեմ, միության 10-ամյակի մասին գրված հոդվածից թերթի խմբագիրն է հանել քո անունը՝ թերթում ծանուցումները դադարեցնելու պատճառով, որը ոչ մի կապ չունի ինձ հետ, (այդ մասին խմբագիրը ասել էր հոդվածից նրա անունը հանելուց հետո), մտնենք խմբագրի մոտ և պարզենք: Անհարմար մթնոլորտ ստեղծվեց: Մարտիրոս Վարդանյանը միջամտեց, թե անհարմար խոսակցություն է, լավ կլինի վերջ տալ: Նուբարը չմտավ խմբագրի մոտ, նրանք դուրս եկան խմբագրատնից, և տհաճ պահն էլ անցավ:

1998 թ. նոյեմբեր 14-ի ՃԴ-ի համար վարչականների վաճառած տոմսերի և հավաքած ծանուցումների էջերի քանակը, սույն տարվա մեջ տեղի ունեցած վարչության 18 նիստերից բացակայությունների թիվը հետևյալ պատկերն է ներկայացնում.

1. Վահան Բահարյան՝ 21 տոմս, 6,0 էջ ծանուցում, 0 բացակա:
2. Գրիգոր Դովլաթյան՝ 30 տոմս, 6,5 էջ ծանուցում, 1 բացակա:
3. Մարտիրոս Էքշիյան՝ 7 տոմս, 0 ծանուցում, 0 բացակա:
4. Արա Պետրոսյան՝ 6 տոմս, 0 ծանուցում, 2 բացակա:
5. Մանուկ Տոնոյան՝ 0 տոմս, 0 ծանուցում, 12 բացակա:
6. Սյուզի Հեքիմյան՝ 24 տոմս, 0 ծանուցում, 4 բացակա:
7. Մանվել Մարաշյան՝ 56 տոմս, 10,0 էջ ծանուցում, 1 բացակա:
8. Հակոբ Խորշիդյան՝ 18 տոմս, 0 ծանուցում, 1 բացակա:
9. Սարգիս Գյոզալյան՝ 5 տոմս, 1,0 էջ ծանուցում, 2 բացակա:
10. Հովսեփ Գասպարյան՝ 4 տոմս, 0 ծանուցում, 4 բացակա:
11. Հարություն Հարությունյան՝ 0 տոմս, 0 ծան., 10 բացակա:

01-11-99 թ. ՎՆ-ում քննարկվեց Ալիշան Պայրամյանի գրքի շնորհանդեսի կազմակերպչական աշխատանքները: Մանվել Մարաշյանը, որպես վարչության գեղարվեստական մասի պատասխանատու, կտրականապես հրաժարվեց զբաղվել այդ հարցով: Նա ընդհանրապես դեմ էր և՛ գրքի հրատարակման հովանավորությանը, և՛ շնորհանդեսի կազմակերպմանը:



Դժբախտաբար, վարչականներն էլ չզբաղվեցին նրա հարցով:

Սույն նիստի ընթացքում Գրիգորը Մանվելից պահանջեց վճարել 1998 թ. նոյեմբեր 14-ի ՃԴ-ի գրքի համար նրա կողմից չվճարված ծանուցումների գումարը: Վերջինս բորբոքվեց, և երկուսի մեջ սկսվեց մեծ վեճ: Բանն այնտեղ հասավ, որ Մանվելը ջղայնացած իր «տժվժիկ»ի երգը կրկնեց, թե ինքը դուրս է գալիս վարչությունից: Գրիգորը կոպիտ ձևով պատասխանեց նրան՝ ասելով, որ հիմա էլ կարող է գնալ, «սիկտիրդ քաշի»: Միջամտեցի բացատրելով, որ Գրիգորը իր պարտականությունն է կատարում, ծանուցումների գումարները պետք է վճարվեն ժամանակին: Մանվելն ավելի բորբոքվեց և իր հերթական «այլևս ես չկամ»ով հեռացավ նիստից, իհարկե, ըստ իր սովորության հաջորդ նիստին ներկա լինելու պայմանով:

Ինչպես նշվեց, Ա. Պայրամյանի գրքի շնորհանդեսի կազմակերպման ժամանակ Մանվելը բացարձակորեն միջոցառման իր պարտականությունը չկատարեց, բայց սրահում նկարահանված տեսաերիզի մեջ առաջինը ինքն է երևում՝ գիրքը բռնած, ցույց տալով այն ասում է. «Այսօր այս գրքի շնորհանդեսն է», ավելացնելով արդեն անիմաստ մի քանի արտահայտություններ...:

02-11-99 ՎՆ-ում իմ կողմից քննարկման ներկայացվեց «ՊՀՄ-ի վարչության հաջորդ նիստերի օրակարգերի նախագիծ»ը, որը նիստում լրացվեց երկու (9, 10) կետերով և վավերացվեց վարչության կողմից (տե՛ս հավելված էջ 509):

Ըստ ընդունված որոշման, վարչության հաջորդ նիստում պիտի քննարկվեր Մանվել Մարաշյանի հարցը:

Նիստից մի օր առաջ Արա Պետրոսյանը զանգահարեց և խնդրեց, որ նրա հարցի քննարկման ժամանակ խիստ չվերաբերվեմ: Խոստացա: Նպատակս վարչության անդամների մեջ լարվածություն ստեղծել չէր, այլ՝ համերաշխ գործունեություն իրագործել հանուն ազգային շահերի: Մանվելը պետք է ընդուներ իր սխալները և շարունակեր համերաշխ աշխատել:

02-25-99 թ. ՎՆ-ում, Մանվելի հարցի քննարկման ժամանակ Հարություն Հարությունյանը հայտարարեց, որ առանց Մանվելի ոչ մի միջոցառում չենք կարող անել, նա է ապահովում ժողովրդի ներկայությունը: Նույն ձևով արտահայտվեց նաև Գրիգոր Դովլաթյանը: Ըստ Արային տված խոստմանս՝ չարձագանքեցի: Այդ նիստի արձանագրությունից մեջբերում եմ «բ» կետը առանց մեկնաբանության:

բ.– վարչության անդամների ելույթներում եղած տարբեր արտահայտությունների ամփոփումը Մ. Մարաշյանի անցած տարիներին կատարած աշխատանքի գնահատման մասին. նա աշխույժ է իրեն հատուկ բնավորությամբ, շար-

ժունակ, էապես ընդունակ է ձեռնարկված միջոցառումներին նպաստել իր կազմակերպչական արդյունավետությամբ: Ունի ստեղծելու, ներկայացնելու փաստացի հատկություններ:

Խոսելով նրա աշխատանքային վերջին շրջանի մասին՝ մատնանշվեց. նա աստիճանաբար ընդգրկվելով անհատական գործունեության ոլորտն ու գերագնահատելով սեփական հաջողությունները, փոխեց իր անձնական փոխհարաբերությունների բնականոն ընթացքը վարչությունում. ավելի հաճախակի ի հայտ եկան նրա կամակոր վերաբերմունքը ընդհանուր գործի հանդեպ: Եղան դեպքեր, որտեղ նա նույնիսկ հրաժարվեց կատարել վարչության կողմից իրեն հանձնա-րարված պարտավորությունները: Ամենահատկանշականն այն է, որ վերջին ժամանակներում որոշ հարցերում չի ենթարկվել միության ներքին կարգ ու կանոնի տրամադրություններին: Խախտումներ, որոնց իրականացումը դժվարության է մատնել վարչակազմին, համակարգելու նախատեսված միջոցառումները:

Ժողովում ավելորդ անգամ հիշեցվեց, որ վարչության յուրաքանչյուր անդամ գիտակից և պատասխանատու կգա իրեն ընդհանուր գործի համար բացասաբար ազդող այն արարքների համար, որոնք խափանում են վարչության բնականոն աշխատանքը և որոնց չեզոքացման համար հատկացնում ենք ավելորդ ժամանակ և նյարդային ահռելի բորբոքումներ մեր առողջության հաշվին:

Ս. Մարաշլյանի անցած տարիների աշխատանքը գնահատվեց լավ և բավարար: Դեմ էր Վ. Բահարյանը:

Միայն ավելացնենք, որ, եթե ընթերցողը ուշադիր կարդաց, ինքը կարող է եզրակացնել, թե այդքան պարտազանցություններից հետո ինչպե՞ս կարելի է լավ և բավարար գնահատել մարդու աշխատանքը:

3-24-99 թ. ՎՆ-ում որոշվեց սույն տարվա հոգեհանգիստ-հոգեճաշը հետաձգել հաջորդ տարվան և Մեծ Եղեռնի 85-րդ տարելիցը մեծ շուքով նշել: Հետաձգելու մյուս պատճառն այն էր, որ վերջին հոգեճաշին քիչ մարդ էր մասնակցել (սա էլ Մանվելի շատ ժողովուրդ հավաքելու աշխատանքի արդյունքն էր: Նա ժողովրդին հեռացնում էր միությունից): Որոշվեց այս ուղղությամբ լուրջ աշխատանք տանել հայրենակիցների շրջանակում:

Այստեղ պիտի գրեմ մի նյութի մասին, որի անհրաժեշտությունը չնայած չկար, բայց հետագա դեպքերի ընթացքը առանց այդ նյութի պարզ չի լինի ընթերցողի համար:

Արայի ընտանիքի հետ իմ հարաբերությունները առաջվա նման անկեղծ ու ջերմ էին: Ապրիլի սկզբին, Արայի հետ մի խոսակցության ժամանակ պարզվեց, որ մոր՝ տիկին Աղավնիի 75-ամյակն է: Ծաղկեզամբյուղ ուղարկեցի նրան, շնորհավորական և բարի մաղթանքների խոսքերով: Մի քանի օր հետո այցելեցի նրանց: Արայի մաման ասաց, որ ծաղկեզամբյուղը չի՛ վերցրել, մինչև չի իմացել, թե ուղարկողը ով է: Նա պատմեց, որ իրենց բարեկամներից մեկի կնոջ տարեդարձն է եղել, և նա տանը մենակ է եղել, երբ դուռը ծեծել և ասել են, որ ծաղկեզանբյուղ ունի:



Առանց հարցնելու, թե ո՞վ է ուղարկել, նա բացում է դուռը: Երկու հոգի դիմակներով մտնում են ներս, ծաղկեզամբյուղը դնում են սեղանին, կնոջ թալանում, ձեռքերն ու ոտքերն էլ կապելով հեռանում են:

Ապրիլ 11-ին վարչությունը հրավիրված էր Մանուկ Տոնոյանի նոր տան բացմանը Նորթրիջում (այդ առթիվ շնորհավորական բացիկում գրված խոսքը տե՛ս հավելված էջ 510):

Անձրևային, բայց հաճելի օր էր: Հավաքվեցինք ժամանակին: Արան ու մայրը Մանվելի հետ, նրա մեքենայով եկան: Լավ ընդունելություն եղավ, բարի մաղթանքների շատ կենացներ առաջարկվեցին, բայց Մանվելը այստեղ էլ զլացավ իր պարտականությունը կատարելուց: Նա դարձյալ չէր բերել լուսանկարչական ապարատը, որ այդ հաճելի օրվա հուշը ունենայինք: Երբ հարցրեցի, թե ինչո՞ւ չի բերել, ինչպես միշտ, նույն լակոնիկ պատասխանն ստացա. «Դու ասացի՞ր, որ բերեմ»: Բայց որտեղ ուզում էր, տանում էր առանց հարցնելու: Այսօր վարչությունն էր հավաքվում իր անդամի տանը, արդյո՞ք պետք էր ասել:

Ուտել-խմելուց հետո Արան ու ես կողք-կողքի նստած սուրճ էինք խմում: Ասացի Արա՛ (չմոռանանք, որ նա վարչության փոխատենապետն էր) Մայրերու օրվա հանդիսավարությունը դու կվարե՞ս: Նա առանց այլևայլության երեք մատ ցույց տալով ինձ, գռեհիկորեն ասաց. «Ա՛ռ քեզ հանդիսավարություն»: Զարմացած մնացի, սրտիս ստանալով ծանր մի հարված և հանգիստ ասացի. «Արա, շատ շնորհակալ եմ ու կգացված քո այս վերաբերմունքից»: Ինչպես ասում են, այդ օրվա ուրախությունը քթիցս եկավ:

Ահա, թե ինչու հիշեցի ծաղկեզամբյուղի պատմությունը, որը երկու-երեք օր առաջ էր: Զգացի, թե իմ անկեղծության դիմաց ինչպես եմ հատուցվում ու գնահատվում ու հիշեցի, որ Մանվելի հետ՝ նրա մեքենայով էին եկել: Վերջինս իր անգրագիտությամբ ժամանակի ընթացքում հարաբերությունները սերտացնելով նրանց հետ, կարողացել է իր ազդեցությունը թողնել մոր ու որդու վրա, որը շարունակել է նաև մեքենայի մեջ, նրանց լարելով իմ դեմ, որի փաստը Արայի վարմունքն էր ինձ հանդեպ:

Այստեղ նշենք նաև, որ աշխատանքի բերումով, համարյա շաբաթը մեկ անգամ Արան լինում էր իմ տանը (չորեքշաբթի օրերը), սուրճ էինք խմում, մի քիչ էլ զրուցում էինք, և գնում էր:

Այս դեպքից երկու շաբաթ անց նա նորից եկավ (այդ շաբաթները ինձ համար շատ ծանր անցան նրա վերաբերմունքի պատճառով): Նա նույնիսկ չհիշեց դեպքի մասին: Դիտմամբ ակնարկեցի, որ գոնե ասեր՝ «Վահան կներես...»: Նա չասաց այդ,

չնայած, իր գալն արդեն մեղքն ընդունել էր նշանակում:

5-05-99 թ. ՎՆ-ում քննարկված կարևոր հարցերից էին.

ա. Մայրերի օրվա հանդիսավարի հարցը: Մայրերի օրը նշվելու էր մայիսի 9-ին, և երբ Սեդա Հայրիյանը հրաժարվեց հանդիսավարությունից, վարչությունը այդ պարտականությունը վստահեց Մարի Թերջանյանին:

Սույն նիստից մի քանի օր առաջ Տիկնանց հանձնախմբի անդամները գնալու էին սրահ, միջոցառման ժամանակ նորաձևության ցուցադրության հարցերը տեղում լուծելու համար: Որպես գեղարվեստական մասի պատասխանատու, Մանվել Մարաշյանին խնդրեցի ներկա լինել և անհրաժեշտության դեպքում օգնել նրանց:

Նշված օրը սրահից զանգահարեց Սյուզին և բացատրեց, որ բարդություն է առաջացել. Սեդան միտքը փոխել է և ուզում է հանդիսավարությունն ինքը վարել, իսկ Մանվելն ավելի չիկացրե է մթնոլորտը՝ ընդառաջելով Սեդայի ցանկությանը, բացի այդ, ասել է, որ չի մասնակցելու միջոցառմանը, ինքը պատ-ճառներ ունի: Խնդրեցի Սյուզիին իրենց գործնական հարցերը լուծել սրահում, իսկ հանդիսավարի հարցը կքննարկենք վարչու-թյան նիստում: Իհարկե, երևույթը չատ տգեղ էր, և Սեդան չէր կարող չզգալ այդ, բայց ի՞նչն էր իրեն դրդել դիմելու այդ քայլին, ինչո՞ւ էր արհամարհել Մարիին, երեսին ասելով, որ ինքը պիտի վարի միջոցառումը, անհայտ մնաց:

Տհաճություններից խուսափելու համար, ՎՆ-ում ընտրելով չարիքի փոքրագույնը, Սեդային հանձնարարվեց ընդհանուր, իսկ Մարիին՝ նորաձևությունը ներկայացնելու հանդիսավարությունը, որը Մարին ընդունեց առանց դժգոհության:

բ. Վարչությունը որոշեց Մայրերի օրվա առթիվ այցելել Ռեպակա Գասպարյանին (Արարատ տարեցների տանը):

Ամփոփելով այս հարցերը՝ նշենք, որ Մանվելը ոչ մի տոմս չծախեց նշված միջոցառման համար՝ ասելով, որ մի քանի օր առաջ աներձագն է մահացել, և ինքը չի գալու: Իսկ նրա՝ Սեդային պաշտպանելու գաղտնիքը հետո պարզվեց: Այդ մասին հետո:

Մայիսի 16-ին վարչության մի քանի անդամներով՝ Արա Պետրոսյան, Գրիգոր Դովլաթյան և ես, մասնակցեցինք Մանվելի աներձագի 7-ին ու 40-ին և հոգեճաշին՝ Նորթ Հոլիվուդի «Էլեգանտ» ճաշարանում:

Մանվելը մեզ հետ նստեց և բոլորիս հյուրասիրեց: Արան շուտ գնաց: Մանվելը հիշեցրեց Արարատ տուն այցելության մասին և ցույց տվեց Ռեպեկա Գասպարյանի հետ նկարված



նկարը: Խնդրեցի մի նկար ինձ տալ, որպեսզի այդ մասին հոդված գրեմ: Այդ րոպեին նա կարող էր իր ձեռքում եղած նկարը տալ, բայց չտվեց, և այդ մասին խոսակցությունը այդպես էլ վերջացավ:

Երկու օր հետո «Նոր Հայաստան»ի խմբագրությունում, խմբագրի սեղանին պատահաբար տեսա այն նույն նկարը, և հետն էլ հետևյալ գրությունը.

ՊՀՄ-ը «Արարատ Տարեցներու Տան» մէջ

Մայրերու օրուան առթիւ, ՊՀՄ-ի կարգ մը անդամներ այցելեցին Տարեցներու «Արարատ» Տունը, ուր ընդունուեցան Վրդ. Մովսէս Ճանպապեանի կողմէ: Վրդ. Ճանպապեան հայտարարեց. «Շնորհակալութիւն ձեր այցելութեան «Արարատ» Տան տարեցներուն, նաև շնորհակալութիւն «Ձիմ Կիլիկիա» կիտչօ գասէթին համար: Կը գնահատենք ձեզ և կը յուսանք, որ դարձյալ կ՚այցելէք մեզ»:

Բնականորեն, ընդվզեցուցիչ էր այս արարքը: Խմբագրին հիշեցրեցի, որ «Նոր Հայաստան»ում տպագրվելիք միության բոլոր գրությունները իմ՝ ատենապետի միջոցով է հանձնվում, ինչո՞ւ է վերցրել Մանվելի գրությունը ...: Խնդրեցի, որ չտպի մինչև հարցը պարզեմ: Իհարկե, գրություն չի եղել իրականում, այն գրվել է խմբագրությունում, քանի որ Մանվելը անգրագետ է:

Պարզվում է, որ «Արարատ տուն» գնալու նպատակը Վրդ. Ճանպազյանին տեսաներիզ նվիրելն էր, որպեսզի հետո էլ թերթում միության անունով գովազդի այն: Իսկ գլխավորը, առանց վարչության կամ ատենապետի գիտության, գրության հանձնումը խմբագրություն վարչության կարգապահության կոպիտ խախտում էր: Հարցը քննարկվեց վարչության նիստերից մեկում, որի մասին կգրվի ժամանակին:

Մանվել Մարաշյանը շարունակում էր իր հակավարչական գործունեությունը, աշխատելով ձախողեցնել վարչության նպատակային ծրագրերը, և իր ընկերները՝ Գրիգորը և Հարությունը, փոխանակ խրատելու, համագործակցում էին նրան, ենթարկվելով նրա քմահաճույքներին: Որքան էլ նրա հակավարչական գործունեությունը քննարկման նյութ էր դարձնում ՎՆ-ում, նրանք մեղմորեն էին վերաբերվում նրա արարքներին, իսկ որոշ վարչականներ էլ չէին ուզում «վատամարդ լինել», որի հետևանքով նա ավելի էր չփանում:

Որպեսզի վերջ տրվի այս լարված մթնոլորտին, վարչության կատարելիք օգտավետ աշխատանքների ծրագիրը մի կողմ թողած, պատրաստեցի և 6-16-99 թ. ՎՆ-ի քննարկման ներկայացրեցի ներքոհիշյալը:

## ՄԱՆՎԵԼ ՄԱՐԱՇՅԱՆԻ
## ԽԱՌՆԱԿԻՉ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Նկատի ունենալով վերջին տարիների իրադարձությունները վարչության ներսում, կապված նրա գեղարվեստական մասի պատասխանատու Մանվել մարաշյանի խանգարիչ գործունեության հետ, նրա հարցը Վարչության նախորդ նիստերից մեկում քննարկվեց, որպեսզի վերջ տրվի վարչության ներսում տիրող անկայուն վիճակին, և նա շարունակի արդյունավետ աշխատանքն իր ծրագրերի իրականացման գործում: Բայց Վարչության անդամները շատ մեղմ վերաբերվեցին նրա հետ, սխալները երեսին ասելու փոխարեն, գովեցին նրան, մտածելով, որ դրանով ամեն ինչ կհարթվի, և վարչությունը նորմալ գործունեությունը կշարունակի: Քանի որ Վարչությունը ուզեց խաղաղ վերջացնել այդ հարցը, մեկ էլ դրան չվերադառնալու պայմանով, որպես ատենապետ զգուշացրի, որ նա ամեն ինչ պետք է մոռանա, և Վարչությունում համագործակցված աշխատանքը շարունակվի:*

*Սակայն այդ նիստից հետո, մինչև այսօր տեղի ունեցող իրադարձությունները ստիպեցին Վարչությանը նորից վերադառնալ այդ հարցին, որը իմ կարծիքով այս ժողովին անպայման պետք է լուծում գտնի: Հակառակ դեպքում լուրջ փորձության դեմ կկանգնի Վարչությունը: Վարչության անդամները իրենց ընտանեկան և անձնական գործերը թողած, ամիսներ շարունակ, փոխանակ վարչության մեջ արդյունավետ աշխատանք կատարելու, Մանվել Մարաշյանի ստեղծած հոգսերով (պրոբլեմներով) են զբաղված, որը արդեն շատերին ներվայնացնում է և կարող է վատ հետևանքների հասցնել միության գործունեությունը: Նկատի ունենալով այն, որ այստեղ նստածներս՝ բոլորս ազգակցական կապեր ունենք մեկս մյուսի հետ, նաև այն, որ որոշ Վարչական անդամներ փոխադարձ գործունեության կապեր ունեն իրարու հետ, պիտի խնդրեմ բոլորին, որ այդ կապերը չտեղափոխեն ժողով և այս հարցի քննարկման ընթացքում ազատորեն իրենց կարծիքները արտահայտեն՝ չմտածելով, որ կարող է կպնեն իրարու «փաթեր»: Այստեղ ազգային հարց է լուծվում, և բարեկամական հարաբերությունները պետք է մոռացվեն ու չպետք է դեր խաղան: Միության գործունեության մեջ բարեկամությունը պետք է մոռացվի: Վարչության այս նիստին ուզում եմ բերել նոր տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ Մանվել Մարաշյանը աշխատում է ձախողեցնել Վարչության միջոցառումները՝ չմասնակցելով դրանց կազմակերպչական աշխատանքներին: Վարչութան մեջ այդ հարցը որևէ վարչականին չի անհանգստացնում: Այդ բոլորի փոխարեն, նա քայքայիչ գործունեություն է սկսել Վարչության դեմ, որը ապացուցում են հետևյալ փաստերը.*

*1. **1915** Մեծ Եղեռնի միջոցառման կապակցությամբ (Վարչության կողմից հետաձգված էր հաջորդ տարվան, որպեսզի կազմակերպված ձևով նշվի որպես **85**-րդ հուշատոն), նա ինքնագլուխ խոսում է բոլոր վարչականների հետ առանձին-առանձին, հիարկե բացառությամբ ատենապետի, որպեսզի **2-3** օրվա ընթացքում հոգեհանգիստ-հոգեճաշ կազմակերպի:*

*2. Անցած տարվա ՃՊ-ի ժամանակ ցուցադրված Արցախում զոհված պէյլանցիների նկարները տպել էր տվել «Նոր Հայաստան»ում ինքնագլուխ, առանց վարչության և ատենապետի տեղեկության, այն էլ անգրագետ կերպով, որը պատիվ չի բերում մեր վարչության և միության:*

*3. Պրոֆ. Ալիշան Պայրամյանի «Ալեքսանդրետի Սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը **1936-1939** թթ.» գրքի շնորհանդեսի կազմակերպման աշխատանքներից բացարձակորեն հրաժարվելուց բացի,*



*խանգարել է նաև նրա աշխատանքներին՝ հորդորելով մարդկանց չմասնակցել, ինչպես Սեդա Կվրյանին: Շնորհանդեսի գեղարվեստական մասին իրենց մասնակցությունը պիտի բերեին Բելլա Դարբինյանը և Լևոն Քաթրջյանը: Վարչության նիստում այս մասին հայտարարվելուց երկու օր հետո, երկու օր ընդմիջումներով, երկու արվեստագետներն էլ հրաժարվեցին՝ պատճառաբանելով, որ հիվանդ են: Արա Պետրոսյանը նշեց, որ Մանվելը մի ծանոթ արվեստագետ ունի, որին ինքը կարող է բերել: Կասկածում էի, որ նա կբերի, բայց առաջարկն ընդունվեց: Պարզվեց, որ այդ օրը արվեստագետը զբաղված է: Վերոհիշյալները իմանալուց հետո, հիմա հաստատ գիտեմ, որ Մանվելը չի ցանկացել, որ նա գա, իսկ մյուս կողմից էլ կասկածում եմ արդեն, որ մյուս արվեստագետների չգալու պատճառն էլ ինքն է, որովհետև վարչության նիստերում ինչ որ կատարվում է, նա է տարածում դրսում և, մանավանդ, չէր կամենում, որ շնորհանդեսը հաջողություն ունենա: Եթե նա ցանկանար, փոխանակ եկողներին արգելք հանդիսանալու, նոր մասնակիցներով կապահովեր այն: Այստեղ ակամա պիտի հիշեմ Արայի խոսքը, ՎՆ-ում շնորհանդեսի հարցը քննարկելիս, որ Մանվելը սկզբից «մի քիչ» պասսիվ էր նրա աշխատանքներին մասնակցելուց, բայց հետո «շատ» ակտիվացավ: Իհարկե, «շատ» ակտիվանալը չտեսանք, բայց ես մի բանում համոզվեցի, որ նա սկզբից մինչև վերջ, իրոք շատ մեծ ակտիվություն ունեցավ շնորհանդեսը ձախողեցնելու համար, որը, իհարկե, չհաջողվեց նրան:*

*4. Այս տարվա Մայիսի **9**-ին Մայրերի օրվա հանդիսության գալուց հրաժարվեց և ոչ մի կազմակերպչական աշխատանքին էլ չմասնակցեց, պատճառաբանելով աներձագի հիվանդությունը: Բայց հանդիսության եկավ: Այստեղ պետք է նշել, որ եթե ինքը իրոք չէր կարող մասնակցել հանդիսության հարգելի պատճառով, իսկ վարչության մեջ էլ անընդհատ հայտարարում էր, որ **500** հոգի կարողանում է ապահովել իր կազմակերպած միջոցառումներին, իհարկե, ոչ առանց միության անունի, ապա ինչո՞ւ համար գոնե մի սեղան չապահովեց տասը տոմս ծախելով: Մյուս կողմից էլ իր «Զիմ Կիլիկիա» տեսաժապավենն է բերում, առաջարկում է Տիկնանց հանձնախմբին (նրա անդամ Սեդային, ինչպես անցյալ տարվա Մայրերի օրվա առթիվ) տեսաժապավենը գնել քսան դոլարով և նվիրել հյուպատոս Արմեն Հայրապետյանին: Նշենք նաև, որ այս տեսաժապավենի գոյությունը պիտի հովանավորեր մեր միությունը, և մի օր Մարտիրոս Էքշիյանը, Արա Պետրոսյանը և ես եղանք Մանվելի տանը և դիտեցինք այն: Մանվելը չհամաձայնվեց վարչության կողմից մեր՝ որպես ներկայացուցիչների առաջարկած պայմաններին դրա որակի հարցում, որը չէր համապատասխանում միության պահանջներին և գործունեությանը: Հետևաբար, այդ տեսաժապավենը միության կամ նրա Վարչության կողմից չի կարող նվիրվել որևէ մեկին, բայց Վարչությունը որոշ վիջումներ արեց նրան այդ ուղղությամբ:*

*5. Վարչության որոշմամբ, Մայրերի օրվա առթիվ, Մայիսի **8**-ին «Արարատ տարեցների տուն» այցելեցին Վարչության անդամներ՝ Մարտիրոս Էքշիյանը, Գրիգոր Դովլաթյանը և Մանվել Մարաշյանը: Մանվելի աներձագի յոթի և քառասունքի առթիվ հոգեճաշի սեղանի շուրջ նստած էինք Գրիգոր Դովլաթյանը, Մանվել Մարաշյանը և ես: Մանվելը ասաց, որ «Արարատ տարեցների տան»ը նկարված նկարները լավ են ստացվել, եթե թերթում տպագրենք լավ կլինի: Առաջարկեցի նկարը ինձ տալ, որպեսզի հոդված գրեմ: Երբ Մայրերի օրվա առթիվ պատրաստած հոդվածս խմբագրատուն տարա, այնտեղ սեղանի վրա նկատեցի Մարտիրոսի նկարը, երբ թղթերի*

տակից հանեցի, տեսա որ «Արարատ» տանը նկարված խմբակային նկար է Գրիգոր Դովլաթյանի, Մանվել Մարաշյանի և տարեցների հետ, հետն էլ մի անգրագետ գրություն կա: Խմբագրին հարցրեցի, թե ո՞վ է բերել այդ, ասաց Մանվելը, խնդրեցի իրեն չտպել մինչև որ պարզեմ դրա էությունը: Պարզվեց, որ Մանվելը առանց վարչության և իմ գիտության, ինքնագլուխ, տարել է այդ խմբագրատուն, տպելու համար: Երբ համակարգչի դեմ նստած, ճառագայթներ ընդունելով, Վարչության գործերն եմ շարում, նա ժողովրդի մեջ, համոզելով նրան, կրպարտություններ է նկարում տեսաժապավենի վրա իմ և Վարչության դեմ:

Կարծում եմ այսքանն էլ բավական է՝ Մանվել Մարաշյանի վերջին տարիների և հատկապես վերջին ամիսների Վարչության մեջ անօգտակար գործունեության մասին եզրակացություն անելու:

Հետևաբար, որպեսզի նա Վարչության մեջ շարունակի գործունեությունը որպես անդամ, գեղարվեստականի պատասխանատու, պետք է.

1. Ժողովրդի մեջ վերջ տա իր կրպարտություններին, ատենապետի դեմ և այդ կրպարտությունների համար նկարահանած նյութերը, որոնք բարոյապես ևս ստորացնում են իրեն, դրականի ձևափոխված, այսինքն այդ մարդկանց վերաբերմունքը դրականի վերածած, Վարչության և ատենապետի նկատմամբ, նորից տեսաժապավենի միջոցով բերի և Վարչությանը հանձնի: Այստեղ հարկ է նշել նաև, որ որոշ վարչականների (Արա Պետրոսյան, Գրիգոր Դովլաթյան և Հարություն Հարությունյան) վախի մտայնությունը, թե նա կգնա և ժողովրդի մեջ ավելի մեծ կրպարտություններ կանի, անհիմն է: Եթե տասը հոգանոց Վարչությունը չկարողանա մի հատ Մանվել դաստիարակել, էլ ի՞նչ Վարչության մասին խոսք կարող է լինել:

2. Վերջ տա իր փառասիրությանը և ցուցամոլությանը:

3. Վերջ տա իր շահամոլությանը:

4. Իր «Զիմ կիլիկիա» տեսաժապավենը նվիրելիս կամ ծախելիս որևէ մեկին, Վարչության անունը չպիտի օգտագործի և Վարչությունն էլ միության անունից որևէ մեկին չպետք է նվիրի այդ:

5. Ենթարկվի Վարչության ԾԿ-ին և որոշումներին:

6. ՊՀՄ-ի և Վարչության անունը չպիտի օգտագործի իր անձնական նպատակների իրագործման համար՝ հեռուստատեսությամբ, մամուլում, կազմակերպած միջոցառումներում և այլ տեղերում, առանց վարչության համաձայնության:

7. Վարչության կողմից իրեն տրված հանձնարարությունները անվերապահորեն կատարի:

8. Վերջ տա Վարչության մթնոլորտը ապականող և վիճաբանություններ առաջացնող իր արտահայտություններին:

9. Մոռանա անցյալը և սկսի նորմալ հարաբերություններ պահպանել Վարչության բոլոր անդամների հետ ու ՎՆ-ի մթնոլորտը չխանգարել:

10. Վերջ տա նիստերի կեսից հեռանալուն, արհամարհելով բոլոր վարչականներին և «ես այլևս չկամ» արտահայտության, իսկ հաջորդ նիստին նորից ներկայանալ: Մարդ պետք է արժանապատվություն ունենա:

11. Վարչությունը իր որոշումով դատապարտի նրա արարքները, և նա ընդունի իր սխալները, դրանք հետագայում չկրկնելու պայմանով:

12. Վարչությունը գնահատական տա վերոհիշյալ բոլոր հարցերի վերաբերյալ և որոշում ընդունի, որ այսուհետև եթե Մանվել Մարաշյանի կողմից նշված հարցերից որևէ մեկի նկատմամբ որևէ խախտում կատարվի,



ապա նա այլևս չի կարող մնալ վարչության մեջ:

Ատենապետ՝ Վահան Բահարյան

Երբ նիստում սկսեցին դիտողությունները ու նկատողությունները նրա նկատմամբ, ինչպես միշտ, նա նորից դիմեց իր «տժվժիկին» և, «ես չկամ այլևս» ասելով, հեռացավ ՎՆ-ից (իհարկե, նորից ինչպես միշտ, հաջորդին ներկա լինելու պայմանով):

Այստեղ բերում եմ սույն արձանագրության որոշումը.

Գրիգոր Դովլաթյանի առաջարկությամբ ընդունվեց հետևյալ որոշումը. նկատի ունենալով Մ. Մարաշյանի առողջական նյարդային վիճակը և նրա հետ կապված, վերջին ժամանակներում ժողովներից ինքնակամ հեռանալը, սրանից հետո, որոշ ժամանակաշրջան, չկանչել նրան ժողովների, մինչև որ թե՛ նա հանգստանա և թե՛ ընդհանուր կացությունը հանդարտվի:

Այսպիսով վարչականների կողմից նորից մեղմ վերաբերմունք ցույց տրվեց նրա արարքներին:

Նիստից հետո Արան Մարտիրոսին ու ինձ հրավիրեց իր տունը, որտեղ մնացինք մինչև գիշերվա ժամը 12-ը, շոշափեցինք բազմաթիվ հարցեր: Երբ նույն օրվա ժողովի մասին էինք խոսում, նշեցի, որ լավ եղավ Մանվելի ժողովներին չմասնակցելու... և խոսքս չվերջացած լսեցի Արայի մամայի հուզված ձայնը: Նա հանկարծակիի եկած, անհանգստացած վիճակով հարցրեց. «Ո՞նց, Մանվելը այլևս չկա՞ վարչության մեջ»: Մարտիրոսը հանգստացրեց նրան ասելով, որ որոշ ժամանակ չի մասնակցելու նրա աշխատանքներին: Մանվելը նպատակին հասել էր՝ Արային և մորը իր կողմը գրավելու հարցում, որի արդյունքն էր Արայի վերաբերմունքն իմ հանդեպ:

Օգանավի տոմս սեպտեմբերի 18-ի համար էր: Գրիգոր Դովլաթյանը զանգահարեց վարչության նիստի հարցով, ասացի չեմ կարող գալ, այս անգամ առանց ինձ գումարեք: ՊՀՄ-ի վարչության մեջ իմ ամբողջ գործունեության ընթացքում, առաջին անգամ լինելով բացակայեցի 9-15-99 թ. ՎՆ-ից՝ պատրաստվում էի ճանապարհորդության: Բացակայությունիցս օգտվելով, Գրիգորը սույն նիստին Մանվելին բերել է հետը, խախտելով իր իսկ առաջարկությամբ 6-16-99 թ. ՎՆ-ում ընդունված որոշումը, որի համաձայն Մանվելն իրավունք չուներ մասնակցելու նիստին: Դա բավական չէ, հետն էլ սկսել է նորից քննարկել ատենապետին Երևան գործուղելու հարցը: Դե՛, ինչ արած, Գրիգորը Մանվելի ընկերն է...: Նիստին ներկա են եղել վարչականների 50%-ը, հետևաբար նիստը համարվում է անվավեր, և բնականորեն ընդունված որոշումներն էլ:

Վարչության նկատմամբ Մանվելի ունեցած վերաբերմունքի հարցում մեծ դեր խաղաց Նուբար Միսաք-Գևորգյանը, որը միու-

թյան ՃՊ-ի նախագահությունը ստանձնելուց հետո, ակտիվացրեց իր անվայել գործունեությունը իմ դեմ, դրա մեջ ընդգրկելով նաև Գրիգորին և մյուս վարչականներին, նրանց հաճախ հրավիրելով տունը և «ուղեղները լվանալով», որ ատենապետին փոխեն: Նույնիսկ Մարտիրոսի հորեղբոր տղայի՝ Աբրահամի թաղման արարողության ժամանակ, նրա տանը, «հարգելով հանգուցյալին», Նուբարը ստիպում է Մարտիրոսին, որ նա ատենապետ դառնա: Իսկ Մարտիրոսը հրաժարվում է՝ ասելով, որ ինքը չի կարող ատենապետի պարտականություն կատարել իր մեղմ բնավորությամբ, որի հետևանքով կիշխվի վարչականների կողմից:

Վարչության նիստերից մեկում Մանուկ Տոնոյանը դիպուկ մի արտահայտություն կատարեց՝ ասելով, որ նրանք վարչության նիստում համաձայնվում են որոշման հետ, իսկ գիշերը, մտքերը փոխելով, հաջորդ նիստում հրաժարվում են իրենց իսկ ընդունած նախորդ օրվա որոշումից: Դժբախտաբար այդպես էր: Նրանք չէին հասկանում վարչության անդամի պատասխանատվությունը, որ միությունը կազմակերպություն է, որն զբաղվում է ազգային կարևոր հարցերով, և նրա վարչության որոշումները չեն կարող փոփոխվել բնավորությունների քմահաճույքներով...:

10-18-99 թ. ՎՆ-ում տեղեկություն էի տալիս Հայաստան-Սփյուռք համաժողովի աշխատանքների մասին (հոկտ. 10-ին էի վերադարձել), երբ Գրիգորը, խոսքս բերանս թողնելով, միջամտեց ու ասաց, որ այդ բոլորը իրենք գիտեն, ժողովրդի դրության մասին խոսեմ: Ոչ մեկը չառարկեց նրան: Չշարունակեցի:

1999 թվականին տեղի ունեցած վարչության 17 նիստերից ընդհանուր բացակայությունների թիվը հետևյալ պատկերն է ներկայացնում.

1. Վահան Բահարյան՝ 1 բացակա:
2. Արա Պեյտրոսյան՝ 10 բացակա:
3. Մարտիրոս Էքշիյան՝ 1 բացակա:
4.– Մանուկ Տոնոյան՝ 6 բացակա:
5. Գրիգոր Դովլաթյան՝ 0 բացակա:
6. Մանվել Մարաշյան՝ 4 բացակա:
7.– Սյուզի Հեքիմյան՝ 3 բացակա:
8. Հակոբ Խորշիդյան՝ 1 բացակա:
9. Հովսեփ Գասպարյան՝ 7 բացակա:
10. Սարգիս Գյոզալյան՝ 15 բացակա:
11. Հարություն Հարությունյան՝ 6 բացակա:

Ընդ որում՝ Արա Պեյտրոսյանն ունի 7 անհարգելի բացակա, որից 4-ը՝ իրար հաջորդող, Մանուկ Տոնոյանը՝ 6 անհարգելի բացակա, որից 3-ը՝ իրար հաջորդող, Մանվել Մարաշյանն ունի 3 անհարգելի իրար հաջորդող բացակայություն, Հովսեփ Գասպարյանն ունի 6 անհարգելի բացակա, որից 4-ը՝ իրար հաջորդող, Սարգիս Գյոզալյանն ունի 15 իրար հաջորդող բացակայություն (նա հեռացավ վարչությունից), Հարություն Հարությունյանն ունի 6 անհարգելի բացակա, որից 3-ը՝ իրար հաջորդող: Վարչությունն ամբողջ տարին ունեցել է ընդամենը 17 նիստ և այսքան բացակայություններով միութենական գործունեություն է ծավալել:



Նուբար Մխսի-Գևորգյանի 70-ամյակի առթիվ (3-12-2000 թ.) նրան նվիրված բացիկը որոշվեց ստորագրել բոլոր վարչականներով: Մանվելը, առանց հարցնելու, սկզբում այն տվեց Գյոզալյան Սարգսի կնոջը՝ Վիկտորիային (Սարգիսը ինքնակամ հեռացել էր միությունից), որպեսզի նրա փոխարեն ստորագրի, որը վարչության կանոնակարգի խախտում էր: Գոնե պատշաճ ձևով արվեր դա: Հարցը Մանվելի ստեղծած տհաճություններն են: Նա վիճում էր Արայի հետ (Արան ու ես տարբեր սեղանների շուրջ էինք նստած), պարզվեց, որ նրան ստիպում է, որպես փոխատենապետի, ելույթ ունենալ միության անունից, իսկ ատենապետի ներկայությունը այնտեղ «չի նկատում»: Պատշաճությունից ելնելով, Արան ինձ ասաց, որ հարցը լուծեմ: Ասացի «Լուծելու հարց չկա, եթե ձայն տան, կխոսենք»: Մանվելը ձայնը կտրեց: Որոշ ժամանակ անց բեմից անունս լսեցի, բեմ բարձրացա և վարչության անունից շնորհավորեցի Նուբարին՝ անդրադառնալով միության մեջ նրա գործունեությանը՝ որպես հիմնադիր անդամի և վարչության գանձապահի:

Երևի ելույթս դուր չեկավ Մանվելին: Ինձանից հետո բարձրացավ բեմ, շողոքորթ խոսքեր շռայլեց ՊՀՄ-ի մեջ նրա գործունեության մասին:

3-20-2000 թ. ՎՆ-ում քննարկվեցին ցեղասպանության 85-րդ տարելիցի, Մայրերի օրվա հանդիսության և այլ հարցեր:

Նիստի հարցերը սպառված էին, և պատրաստվում էինք տուն գնալու, երբ Մանվելն ասաց, որ գրություն ունի ներկայացնելու վարչությանը: Առանց հարցնելու, թե ի՞նչ գրության մասին է խոսքը, շեշտեցի, որ այսօրվա նիստի հարցերը սպառված են, դա թող մնա հաջորդին: Բայց Գրիգորն ու Հարությունը պահանջեցին, որ նա կարդա գրությունը (տե՛ս հավելված էջ 511):

Սույն նիստի արձանագրությունը կարդալիս, պարզվեց, որ գրությունը ներկայացվել է նախորդ նիստին և դրա «հեղինակները» նախապատրաստված էին եկել: Իսկ ինչո՞ւ չի քննարկվել այն նախորդ նիստին և ինչո՞ւ այս նիստի օրակարգի հարց չդարձավ, թեկուզ քարտուղարի կողմից, մութ մնաց:

Տրամաբանական չէ, որ նամակը, ինչպես իրենք են կոչում այդ, գրել հոկտեմբերի 11, 1999 թ. և ՎՆ-ի քննարկմանը ներկայացնել 2000 թ. փետրվարին: Ի՞նչն էր ստիպում Մանվելին, այն գրելուց անմիջապես հետո չներկայացնել վարչության քննարկ-

մանը: Կարծում եմ, որ այն ժամանակ որոշ վարչականներ խորհուրդ են տվել նրան համոզելու մնացածներին:

Սույն նիստի արձանագրության 5-րդ կետը վերաբերում է նամակի քննարկմանը: Այն սկսում է այսպես.

5. Թեև օրակարգում չէր նշված, բայց նիստի մասնակիցների առաջարկով կրկին անգամ ընթերցվեց և մտքերի փոխանակության դրվեց Մանվել Մարաշյանի, նախորդ No.118 նիստին ներկայացրած նամակը: Ինչպես հայտնի է, Վահան Բահարյանը հիվանդության պատճառով բացակայում էր այդ նիստից և հետևապես, ծանոթ չէր նամակի բովանդակությանը: Նամակում պահանջ էր ներկայացվում վարչության ատենապետի փոխարինումը մեկ այլ արժանի գործընկերով: Մեղադրվում էին վարչության անդամները, նախկինում իր ներկայացրած նույն առաջարկի քննարկումը աչքաթող անելու համար:

Նախկինում որևէ այդպիսի առաջարկ չի եղել, ատենապետը չի փոխարինվում, այլ ընտրվում է: Իսկ նամակից վերցնենք առաջին նախադասությունը.

Հարգելի վարչականներ,

Ես բողոքում եմ ձեր անարդար աշխատանքային ընթացքի դեմ. Մի քանի անգամ մեր ժողովներում, ատենապետի վերընտրության մասին հարց եմ ներկայացրել, սակայն, մինչև այսօր պատասխան չեմ ստացել:

Զանդրադառնալով նամակի որակի մասին, նշենք, որ նթե վարչության նիստում Մանվելը օրակարգի հարց դարձներ ատենապետի վերընտրությունը, ապա այդ հարցը անպայման կքննարկվեր: Հետևաբար զրպարտում է վարչությանը, որովհետև 7-08-98 թ. ՎՆ-ում ատենապետի հարցը քննարկվեց հենց իմ առաջարկով և գնահատվեց դրական:

Բերենք նամակի հաջորդ նախադասությունը.

Այս նամակով մեր վարչության անդամներին առաջարկում եմ հետևելու ընդունված օրինաչափություններին:

Ո՞ր օրինաչափությունների մասին է խոսքը, երբ գլխավոր օրինազանցն ինքն է, որ ոչ ՊՀՄ-ի ԾԿ-ին է ենթարկվում, ոչ էլ սխալներն է ընդունում վարչության մեջ իր գործունեության, ակնհայտ է, որ երբեք չի ընթերցել ԾԿ-ն ու ուսումնասիրել խորապես:

Նամակում այնուհետև գրված է.

Հիշեցնում եմ, պրն. Վահան Բահարյանը մեր վարչության (անընդմեջ) ատենապետն է ավելի քան 10 տարի: Նա վաղուց իր տեղը պետք էր զիջեր մեկ այլ արժանի գործընկերոջ: Խոսքը իր լավ կամ վատ աշխատանքի մասին չէ, այլ ատենապետության երկարաժամկետ դերակատարության մասին է, որը հայրենակցական միությունների կյանքում ապօրինի է:

Ես առաջարկում եմ կատարել մեր վարչության կազմի անհապաղ վերընտրությունը, այդ թվում նաև՝ ատենապետի:

Ընթերցենք արձանագրության շարունակությունը.

... Վարչության ներսում սա չարչրկված հարց էր, որը քննարկվում էր, անհամեմատ, երկար ժամանակվա ընթացքին և որը ոչ մի լուծում չէր ստանում այն



պատճառով, որ թե մեկը և թե մյուսը ունեին իրենց կարևոր լուման և աշխատանքային ներդրման բաժինը միության կենցաղում: Հարցի խաղաղ ճանապարհով լուծումը պահանջում էր փոխվիճում փոխադարձ հարգանքի պայմաններում: Իրականում կատարվում էր հակառակը, ամեն ամգամ ականատես էինք լինում նորանոր նյարդային բորբոքումների:

Մ. Էքչիյանը առաջարկեց վարչության կազմը ընդարձակել և այն ձևականորեն բաժանել 2 մասի, յուրաքանչյուրին հատկացնելով տարբեր պարտավորություններ, համապատասխան լիազորություններով, մեկուսացնելով հակամարտող կողմերը: Նրա կարծիքով ստեղծված նոր կարգավիճակը պատնեշ կստեղծեր մեր գործընկերներին դեմ հանդիման հանդիպելու: Այս տեսակ կամ նման հարցերի մշակման դեպքում կդադարեր գոնե կադրային հոսունությունը, որը միշտ կախված է մեր գլխավերևում, ինչպես նշեցի վերևում, սա պետք էր լիներ ձևականորեն և ժամանակավոր երևույթ: Մեր վարչականները նույնիսկ չուզեցին լսել այդ մասին, առանց նույնիսկ որևէ ակնարկի, նրանք յուրաքանչյուրն իրենց իմացածը գերադասելով, ընդգրկվեցին նորանոր թեժ պայքարի, ստեղծելով նոր շիկացած մթնոլորտային պայմաններ:

Արա Պետրոսյանը հանդես եկավ համերաշխության, փոխադարձ հարգանքի քարոզով և կոչ արեց մնալ անբիծ, մաքուր, ապագա սերնդի առաջ:

Գր. Դովլաթյանը, Մ. Մարաշյանը և Հ. Հարությունյանը առաջարկեցին կասեցնել ներկա ատենապետի գործունեությունը (իրավասությունները) և կատարել վերընտրություն:

Հարցի լիարժեք քննարկումը չհասավ իր լրումին և հետաձգվեց հաջորդ ժողովին:

Նախքան նամակում և արձանագրության վերջին մտքերի վերլուծումը, նշեմ, որ ես երբեք չեմ երազել ատենապետի անշնորհակալ գործը տասնյակ տարիներով շարունակել, այդ հարցի մասին հաճախ եմ խոսել և հարմար թեկնածու լինելու դեպքում, անմիջապես փոխանցել նրան ըստ ԾԿ-ի: Իսկ Մանվելի քմահաճույքներով աշխատելը, սխալների համար նրան ուղիղ ճամփու վրա բերելու հարցում վարչության անդամների մեղմ, անտարբեր և անհետևանք վերաբերմունքն ու պատժամիջոցների չդիմելը երբեք ներելի չեն: Կազմակերպության կանոնագրության խախտում է: Այս անտարբերությունը չփացրեց նրան, ու նա շարունակեց իր հակավարչական գործունեությունը: Ես աշխատում էի, որ նա հասկանա իր սխալները, և վարչության գործունեությունը խաղաղ ընթանա: Հետևաբար, այս հարցի բարդացման և անկառավարելիության ամբողջ մեղքն ընկնում է վարչականների վրա, որոնք, չգանազանելով ընկերությունն ու ազգային գործունեությունը, սխալ պատկերացում են կազմել ՀՄ-ի կառուցվածքի մասին: Նրանք կարծում են, թե միության գործունեությանը մասնակցելը կամավոր է, և պարտաճրելը անընդունելի է: Սա բացարձակ անգիտության հետևանք է: Այն միությունը, որը թույլ կտա այսպիսի մոտեցում կամ վերաբերմունք, կքայքայվի: Հետո անհասկանալի է մնում, թե ի՞նչ «փոխզիջման» մասին է խոսքը:

Յուրաքանչյուր միության կայուն գործունեությունը պայմանավորված է նրա ներքին խոհանոցով: Եթե գործի մաքուր ու անբիծ՝ ըստ նախատեսված ԾԿ-ի, երբեք չի քայքայվի: Կանոնակարգը պետք է խիստ կիրառվի: Այո՛, եթե որևէ վարչական, թեկուզ նա լինի ատենապետը, մի քանի անգամ նախազգուշացվելուց հետո սխալները չի ուղղում և շարունակում է հակավարչական գործունեությունը, խստորեն պետք է պատժվի, ընդհուպ, հեռացվի վարչությունից:

Ըստ Մ. Էքշիյան կարծիքի, այս հարցը «չարչրկված հարց է, որը քննարկվում է, անհամեմատ, երկար ժամանակի ընթացքին, և որը ոչ մի լուծում չէր սպանում այն պատճառով, որ թե մեկը և թե մյուսը ունեին իրենց կարևոր լուման և աշխատանքային ներդրման բաժինը միության կենցաղում», և նա առաջարկում է վարչությունը երկու մասի բաժանել...:

Սա ներվարչական հարց էր, և վարչականները դիտողի դերում չպիտի լինեին, որպեսզի հետագայում հնարավոր լիներ լուծել այդ: Մարտիրոսը, լինելով իմ լավ ընկերը, շատ ազնիվ ու մաքուր մարդ, առաջիններից մեկն էր, որ միշտ կրկնում էր, թե մեր կամքը չենք կարող պարտադրել վարչականներին: Նրա գրածից այնպես է հասկացվում, որ ատենապետի վերընտրության հարցն է «չարչրկված», այնինչ Մանվելի ապօրինականության հարցերն էին չարչրկված, որոնց լուծումը չկարողացան գտնել վարչության ոչ վճռակամ անդամները: Այդ ինչպե՞ս է հավասարության նշան դրվում «մեկի» և «մյուսի» միջև, թե նրանք «ունեին իրենց կարևոր լուման և աշխատանքային ներդրման բաժինը միության կենցաղում»: Մարդ գործում և հարգվում է շրջապատում այնքան ժամանակ, քանի դեռ շարունակում է ազնվորեն կատարել իր պարտականությունները, հակառակ դեպքում չի կարող այդ շրջապատին մաս կազմել: Ինչ վերաբերում է վարչությունը երկու մասի բաժանելուն հիշեցնեմ միայն ժողովրդական առածը՝ «Երկու գլուխ մի կաթսայի մեջ չի եփվի»:

Շեշտադրում եմ, որ ատենապետի պաշտոնը «դերակատարություն» չէ, այլ կազմակերպությունում օրենքով նախատեսված լուրջ պաշտոն է, որը ատենապետը վարում է մինչև հրաժարվելը: Այդ չի կարող հասկանալ Մանվելը, որին «Դերակատարություն» ածականը ավելի բնութագրող է, քանզի նրա գույնը փոխվում է քամելիոնի նման:

Երկարաժամկետ պաշտոնավարությունը սահմանվում է ՀՄ-ի ԾԿ-ում նախատեսված կանոններով, որի մասին, իհարկե, գաղափար չունի անընթերցասեր Մանվելը: Չնայած այդ մասին նախորդ էջերում գրել ենք, բայց հիշեցնենք, որ ՊՀՄ-ի ԾԿ-ում



վարչության վերընտրությունը նախատեսված է 1-5 տարիների ժամանակահատվածով: Իմ 10 տարվա անընդհատ աշխատանքը ատենապետի պաշտոնում անհրաժեշտություն է նկատվել: Իսկ եթե փաստի առաջ ենք կանգնած, թեկուզ անհամեստություն էլ լինի, պետք է նշեմ, որ լավ եմ աշխատել, հակառակ դեպքում վարչությունը ինչո՞ւ պիտի հանդուրժեր ինձ 10 տարի և վերընտրության հարց չբարձրացներ: Չնայած վարչությունը ընդհանրապես ատենապետի վերընտրության հարց չի դրել, բայց 1989 թ. ատենապետի պաշտոնը ստանձնելուց հետո, անձամբ դրի այդ հարցը վարչության առջև, և 1991 թ. կատարվեց վերընտրություն[1]: Հաջորդող տարիներին միշտ էլ շոշափել եմ այդ հարցը, բայց վարչությունը չի արձագանքել, քանի որ դրա անհրաժեշտությունը չի եղել:

Վերջին տարիների իրադարձությունները վարչության մեջ ինձ ստիպեցին նորից անդրադառնալ այդ հարցին: Քանի որ Մանվելը չէր ենթարկվում վարչության կարգ ու կանոնին, նույնիսկ սկսել էր հայրենակիցներին տեսանկարահանել ատենապետին վարկաբեկելու շահախնդրությամբ: Այդ անելիս, նա համոզում էր հայրենակիցներին վարկաբեկել ատենապետին: Լավագույն փաստերից մեկն է Տիկնանց հանձնախմբի ատենապետուհի Սյուզի Հեքիմյանի պատմածը: Մանվելը գնացել է նրա մոր՝ տիկին Մարիի (Արմենակ Հեքիմյանի կնոջ) տունը, հորդորել ու համոզել, որ տեսանկարվելիս ատենապետին վարկաբեկի իր թելադրած մտքերով: Անակնկալի եկած կինը ասել է, որ փաստեր չեղած տեղը ո՞նց ասեմ այդպիսի բաներ, զրպարտե՞մ մարդուն...: Տեսաերիզի մասին Մարտիրոսին անհանգստությունն էր հայտնել նաև նրա հորեղբոր թոռնիկը՝ Աբրահամի տղան, արվեստագետ Սահակ Էքշիյանը (որին նույնպես տեսանկարել էր)՝ խնդրելով, որ տեսաերիզը ժողովրդի մեջ չցուցադրվի: Արդյոք սա լկտիություն չէ՞: Այսպիսի ստորության և զրպարտության մարդկային էակը ընդունակ չէ:

Նկատի ունենալով այս բոլորը և մտածելով, գուցե, իրոք չեն ուզում, որ շարունակեմ ատենապետի պաշտոնը, 7-08-98 թ. ՎՆ-ում քննարկման ներկայացրեցի իմ՝ ատենապետի աշխատանքային գործունեությունը: Վարչությունը գնահատեց իմ աշխատանքը, և ատենապետի վերընտրության մասին ոչ մի խոսք չեղավ: Դա փաստացի իմ վերընտրությունն էր, ուստի նամակում

1.- Մանրամասնությունները տես «Զ. Վարչության գործունեությունը 1991 թ.» վերնագրի տակ:

Մանվելը, 10 տարվա իմ անընդմեջ օրինական ատենապետ լինելու հանգամանքը հիշեցնելով, զրպարտում էր: Նա տենդագին աշխատանքի էր լծվել սևացնելու իմ վարքը, բնականորեն, չէր կարող հիշել այդ ընտրությունների մասին, ձեռնտու էլ չէր:

Վերադառնանք վարչության մարտ 20, 2000 թ. No 119 նիստին, որտեղ Գրիգորը, Հարությունը և Մանվելը անկիրթ ելույթներ ունեցան, իսկ վերջում էլ Հարությունը ամբարտավանորեն չպրտեց. «Գնա՛, դու քո գիրքը գրի, ի՞նչ գործ ունես այստեղ»...: Սա այն Հարությունն էր, որի հետ աղ ու հաց ենք կերել, որին վարչության մեջ ընդունեցի հանգուցյալ Անդրանիկ Դովլաթյանի խնդրանքով:

Նիստից անտրամադիր հեռացա, ոչ թե ներկայացված նամակի, այլ վարչականների անկիրթ վերաբերմունքի պատճառով: Արա Պետրոսյանը իմ կողքին էր նստած նիստի ժամանակ:

Այդ վիրավորանքներից հետո, գիշերը շատ անհանգիստ քնեցի: Ատենապետությունը բոլորովին հոգս չէր: Եթե պաշտոնի ձգտեի, ՀՄՄՄ-ից չէի հեռանա: Ես ՀՄՄՄ-ի փոխատենապետ էի 7 տարի շարունակ, կմնայի էլի իմ պաշտոնում, եթե հանդուրժեի ՀՄՄՄ-ում նրա անդամների ապազգային գործունեությունը:

Հաջորդ օրը Մարտիրոսին զանգեցի և հարցրեցի, թե վարչության նիստի վերջում ինչո՞վ էր պայմանավորված այդ խեղկատակությունը արդյոք իմ երկար տարիների անխոնջ աշխատանքի դիմաց հատուցո՞ւմ էր: Նա որոշ մեկնաբանություններ կատարեց և պարզվեց, որ բարեկամներիցս մեկն էլ՝ Արան մասնակից էր նյութվող դավադրությանը:

Նամակը բանի տեղ չէի դնում, բայց երբ լրացուցիչ տեղեկացվեցի վարչության նիստում Արայի խաղացած երկդիմի կեցվածքի վերաբերյալ, վերջնականապես հիասթափվեցի և որոշեցի ընդմիշտ հեռանալ վարչությունից:

Նույն օրը Գրիգորը զանգահարեց, հեռուստատեսությամբ Մայրերի օրվա ծանուցումը հաղորդելու հարցով: Պատասխանեցի, որ ես այլևս չեմ մասնակցելու վարչության աշխատանքներին, ուստի ոչինչ մի հարցնեք ինձ: Անմիջապես հետևեց նրա հարցը. « Ե՞րբ գամ չեքբուքը վերցնեմ: Ի՞նչ է, դժվա՞ր է ատենապետ լինելը... Ե՛ս էլ կարող եմ լինել...»: Ասացի. «Գրիգոր, եթե կարող էիր ատենապետություն անել, այն ժամանակ (1989 թ.) ինչո՞ւ ձեռք ու ոտք ընկած, ինձ խնդրեցիք, որ ատենապետ լինեմ՝ ասելով, որ անտեր եք մնացել, ոչ մի գործ առաջ չի գնում և այլն, և այլն...», և էլի որոշ բաներ խոսելուց հետո խոսակցությունն ավարտեցի:

Ավելորդ չեմ համարում ընթերցողին ներկայացնելու սույն



նիստի արձանագրության կից Մարտիրոսի «Հավելված No 119-ի նիստի առթիվ» գրությունը:

Ցավալի երևույթ է, որ մենք բացառիկ կարևոր հարցերի լուծումների ընթացքում, չենք կարողանում տիրապետել մեր ներքին, անձնական զգացմունքների գերագույն լիցքաթափմանը, առանց որի հնարավոր չէ արդարացի որոշում կայացնել: Առանց նախաբանի նշեմ, որ կայացած մոտեցումը ճիշտ չէ իր բարոյական առումով:

Վ. Բահարյանի ատենապետության երկարատևությունը այսպիսի ուղղահայաց հարվածով չէ որ պիտի ավարտվեր: Նկատի ունենալով տվյալ կազմակերպությունում նրա աշխատանքային արժանիքները, ավելի քաղաքակիրթ հիմքերով պետք էր որոնել մեղմ, արժանի և խաղաղ լուծում թելադրող հնարավորություններ: Դեռևս ներկա վարչության անդամներին հայտնի չեն որոշ մանրամասնություններ: Հիշեցնեմ. 1986-ին 18 (պետք է լինի 17-Վ. Բ.) հոգի հաշվվող «հիմնադիրներ» կոչված խմբի մեջ կային մարդիկ, որոնք դատարկ լոզունգներ արտաբերելուց բացի, որևէ բան անելու ընդունակ չէին: Խմբի 50%-ը կազմող այդ մարդիկ, ինչպես երևացին, այնպես էլ անհայտացան, աննկատելի: Ընտրված 5 (պետք է լինի 7-Վ. Բ.) հոգիանոց վարչության 3 հոգին միանգամայն անտարբեր էին վարչությանը դեմ առ դեմ ցցված անսպասելի և խճճված հարցերին լուծում գտնելու գործում: Վ. Բահարյանը և ես գիշերներ էինք լուսացնում խաչաձևող արգելքները հաղթահարելու համար: Մեր մոտեցումներն ու պատկերացումները տարբեր էին մեր աշխարհայացքի հետ առնչված: Հոգնած ու գերլարված իրադրությունում ստեղծվում էին նոր տհաճություններ, որոնց դիմակայելու համար ուժ ու կարողություն չունեինք: Նման իրավիճակում, ուշքի գալով, գիտակցում էինք, որ կամավոր կերպով կատարում ենք հանրօգուտ աշխատանք, որն անհրաժեշտ էր ստեղծված միության հիմքերը ամրապնդելու համար: Այնուհետև, մեկ տարի անց, տարեկան վերընտրությունում, կազմակերպված խարդավանքներին զոհ գնաց Վահանը. նա վարչության կազմից դուրս մնաց: 1989 թ. նա վերադարձավ վարչություն, վարչության հրավերի համաձայն, որովհետև նրա կարիքն ունեինք: Վերջին տարիներին ես ականատես եմ եղել որոշ դեպքերի ու համոզվել եմ, որ առավելապես նրա ջանքերով և օգտաշատ գործունեությամբ, այլ կազմակերպություններ բարձր են գնահատում մեր միության անունը:

Ցավալի է այն երևույթը, որ մենք 2 և ավելի տարիների ընթացքում չկարողացանք ընդհանուր եզրեր գտնել մեղմացնելու մեր երկու գործընկերների միջև ծագած վատթար փոխհարաբերությունները, որոնք, նույնիսկ, տարածվեցին մեր շրջանակի սահմաններից դուրս և ստեղծում են «հաղթողի և պարտվողի» ավելորդաբանությունը:

Իմ վերջին խոսքն է. մարդկանց արժանապատվության հետ հաշվի պետք է նստել և գնահատել:

Դժբախտաբար, նախավերջին պարբերությունում Մարտիրոսը սխալ է մեկնաբանում իրադրությունը: Ես անձնական որևէ խնդիր չունեի Մանվելի հետ: Նա սկսեց չենթարկվել և չկատարել վարչության հանձնարարությունները և, երբ հարցը դրի վարչության քննարկման, ինչպես մի քանի անգամ կրկնել եմ այդ մասին, վարչությունը գործնական որոշում չկայացրեց, որի արդյունքում Մանվելը, իրեն ազատ զգալով, կատարեց իր գործը, սկզբունքը հանգեցնելով անձնական հարաբերության:

Մարտիրոսի հետ մեր խոսակցությունից հետո, հավանաբար նա խոսել էր Արայի հետ և հարցը քննարկվել էր 4-03-2000 թ.

ՎՆ-ում, որի արձանագրության որոշման 3-րդ կետում գրված է.

3. Արա Պետրոսյանը, անդրադառնալով Վ. Բահարյանի ատենապետության հարցին, նշեց, որ այդ հարցի շուրջ եղած խոսակցությունները, քննարկումները պետք է ընթանան բացառիկ խաղաղ պայմաններում, որը միշտ բացակա է մեզ մոտ: Նա հայտարարեց, որ ինքը չի աշխատելու այնպիսի մթնոլորտում, որտեղ վարչությունը ճիշտ չի մոտենում, ճիշտ ձևով չի պատժում Մ. Մարաշյանին. այլ պաշտպանում է նրան, թաքցնելով նրա օրինապանցությունները:

Ես նույնպես չեմ աշխատի այս պայմաններում, մենք իրավունք չունենք խաղալու միության պատվի հետ, այս ձևով միությունը կպառակտվի:

Պետք խնդրենք նրան (Վ. Բահարյանին), որ նա չթքի ու հեռանա, նրան պետք համոզենք, որ վերադառնա: Վերընտրությունը պետք է ընթանա նորմալ պայմաններում, որպեսզի նա մնա վարչության մեջ և շարունակի աշխատել որպես վարչության անդամ: Ոչ մեկս մյուսիս նկատմամբ առավելություն չունենք, բոլորս իրավահավասար կամավորներ ենք տվյալ գործում:

Վահանին ճամփու դնել օրինական, պատշաճ ձևով, շնորհելով նրան որևէ կոչում իր անցյալի ծառայությունների համար: Եթե համաձայն եք ինձ հետ, ես խոսեմ նրա հետ:

Վահանը 10 տարի և ավելի աշխատել է այս վարչությունում, ունի իր անունը, պետք է տալ նրան «Պատվավոր ատենապետի կոչում»:

Գր. Դովլաթյանը, Մ. Մարաշյանը և Հ. Հարությունյանը դժկամությամբ ընդունեցին Արայի առաջարկությունը և բացասաբար արտահայտվեցին որևէ կոչում տալու մասին:

Այս հարցով մի օր Արան ու Մարտիրոսը եկան տունս և առաջարկեցին, որ եթե համաձայնվեմ մնալ վարչության մեջ, նրանք կքննարկեն ՎՆ-ում ինձ «Պատվավոր ատենապետի» կոչում շնորհելու հարցը, և խնդիրը սահուն կլուծվի: Մի քանի օր հետո Արան զանգահարեց և հայտնեց, որ բոլորն էլ համաձայն են: Ես հատուկ հարցրեցի Մանվելի վերաբերմունքի մասին, ասաց, որ լավ ընդունեց, ամեն ինչ կարգին է: Սակայն լավ ճանաչելով Մանվելին, լամծիս չհավատացի:

4-26-2000 թ. ՎՆ-ում նորից է շոշափվում վերոնշյալ հարցը: Արան առաջարկում է «Վահան Բահարյանին «Պատվո ատենապետ»ի կոչում շնորհելու հետ միասին ներկայացնել նաև միության վետերաններից ոմանց (արժանավոր մարդկանց) ինչպիսին են՝ Արմենակ Հեքիմյանը և ուրիշներ, որպես միության «Պատվավոր անդամ»: Մշակել այս բոլորը և ներկայացնել ընտանեկան միջավայրում»:

Մի քանի օր հետո Արան նորից զանգահարեց, թե Մանվելը, Գրիգորը և Հարությունը մտքերը փոխել են, համաձայն չեն: Մեկ-երկու օրվա մեջ ի՞նչ փոխվեց: Ըստ ինձ, ինչպես վարչության նիստերի բոլոր ինֆորմացիաները Մանվելի միջոցով հասնում էին Նուբարին, որի կարգադրության համաձայն էր չարժվում նա, և վերջին ժամանակներս նրան էր միացել նաև Գրիգորը, այս հարցն էլ, շատ հավանական է, նրանց միջոցով հասել է Նուբարին, որի կարգադրությամբ նրանք փոխել են իրենց մտքերը: Նրանք



արդեն դարձել էին Նուբարի կամակատարները:

Մի օր էլ նույն հարցով Արան և Մանուկը եկան տունս: Հարցը քննարկելուց հետո որոշվեց, որ ես շարունակեմ անցկացնել վարչության նիստերը, 1915 թ. նահատակների հիշատակին նվիրված հոգեհանգիստ-հոգեճաշից և Մայրերի օրվա միջոցառումից հետո, վարչության մեջ վերընտրություն կատարենք և լուծենք հարցը:

Հարցը քննարկվել է 5-31-2000 թ. ՎՆ-ում: Արձանագրության մեջ նշված է նաև, որ ատենապետին «պատվով ճանապարհելու համար նախնական հաշվումներով 2500-3000 դոլար ծախս է պահանջվում»...:

Այս նիստից մի քանի օր հետո տունս եկան Արան, Մարտիրոսը, Գրիգորը, Հարությունը, և նորից քննարկվեց հարցը: Գրիգորը առաջարկեց մեծարումը կատարել ՃՊ-ի ժամանակ: Հարցի քննարկման ժամանակ Մարտիրոսը իրեն շատ մեկուսացած պահեց: Հանդիպումից հետո, վրդովված նրան հարցրեցի, թե ինչո՞ւ իր խոսքը չասաց: Գրիգորին ու Հարությունին ինքն է բերել, և իր մեքենայի մեջ նրանք սկսել են գոռգոռալով քննարկել ինձ մեծարելու հարցը՝ անթույլատրելի արտահայտություններով. «Ի՞նչ Պատվո ատենապետ, ի՞նչ մեծարանք...» և այլ բաներ: Մարդիկ ի՜նչ կոմայի (անզգայության) մեջ են ընկել: Մարտիրոսը վախից չի խոսել: Իր բացատրությամբ՝ տհաճություններ չառեղծելու համար: Իրականում նա վախենում էր, որ իրենց հարաբերությունները կվատանան...: Նա խուսափում էր արտահայտել իր կարծիքը նաև վարչության մեջ՝ նկատի ունենալով հենց այդ կետը:

Ռեպեկա Գասպարյանի մահվան առթիվ տրված հոգեճաշի ժամանակ (5-16-2000 թ.) սեղանի շուրջ նստած էինք Գրիգոր Դովլաթյանը, Զարեհ Պալյանը (նախկին վարչական), Սարգիս Գյոզալյանը, Մանվել Մարաշյանը և ես: Մանվելը, որ Մայրերի օրվա առթիվ մատը մատին չկպցրեց և մի հատ տոմս էլ չվաճառեց, սեղանակիցներին հայտարարում է, որ հաջորդ Մայրերի օրվան տուն-տուն պիտի գնա ու տոմս վաճառի (այս օրերին՝ դեկտ. 2001 թ. Սյուզիից տեղեկացա, որ սույն տարվա Մայրերի օրվա առթիվ էլ ոչ մի տոմս չի վաճառել Մանվելը): Մյուս կողմից Զարեհը սկսեց հին հարցեր շոշափել, որ 1987 թ. մայիսի վերընտրության ժամանակ իբր թե ինքը դեմ չի քվեարկել ինձ: Երբ մարդիկ անկեղծ չեն, ո՞րքանով կարելի է հավատալ նրանց մեղանչական խոսքին...:

Հունիսին Մարտիրոսն ու Գրիգորը եկան տունս: Նկատի ունենալով վարչականների առաջարկը, մի գրություն էի պատրաստել ՎՆ-ում քննարկելու և վերջ տալու համար պառակտ-

***մանը: Այն կարդացի, իրենց համաձայնությամբ անուններն էլ ավելացրեցի, բազմացրեցի և տվի՝ բաժանելու վարչության անդամներին, որպեսզի հաջորդ ՎՆ-ում հարցը հասցնենք լրումին: Ահա այն (գրված 6-06-2000 թ.).***

## ՊԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ 15-ԱՄՅԱԿԸ

*Այս տարի լրացավ ՊՀՄ-ի ստեղծման 15 տարին (հիմնադրված՝ մայիս 7, 1986 թ., Լոս Անջելեսում):*

*Միության ստեղծումը կարևոր իրադարձություն էր Հայրենիքից հեռու, այս օտար ափերում հայի ինքնությունը պահպանելու և միաժամանակ Հայրենիքին օգնելու գործում, որոնք էլ հանդիսացան միության ԾԿ-ի հիմքը: Քանի որ միությունը ոչ-շահութաբեր, պետական հարկերից ազատված կազմակերպություն է, վարչականները չեն վճարվում և աշխատում են կամավոր սկզբունքով, ծրագրում նախատեսված են նաև կարգապահական հարցեր, որոնք պարտադիր են վարչության բոլոր անդամների համար:*

*Միության ստեղծվելուց երկու տարի հետո, նրա առաջին ատենապետ հանգուցյալ Նորայր Մելքիսեթյանը, ընդառաջելով Սարգիս Սողանալյանի հրավերին, մեկնեց Մայամի, նրա մոտ աշխատելու, և 1989 թ. վարչության ատենապետությունը վստահվեց Վահան Բահարյանին, որը պաշտոնավարում է մինչև այսօր:*

*Վարչության բոլոր անդամներն էլ, ԾԿ-ի թույլատրած սահմաններում, ազգակցական կապեր ունեն միմյանց հետ և որևէ կուսակցության չեն պատկանում կամ հարում: Այս սկզբունքով նրանց համերաշխ և աշխույժ աշխատանքը տվեց իր պտուղները, միության հեղինակությունն ու ժողովրդականությունը բարձրացնելով ոչ միայն Լոս Անջելեսի հայ համայնքում, այլ նաև նրա սահմաններից դուրս, հատկապես, երբ նրա մեկենասությամբ լույս տեսած պրոֆ. Ալիշան Պայրամյանի «Ալեքսանդրետի Սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը 1936-1939 թթ.» աշխատությունը, միության ատենապետի, հեղինակի և ՀԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյանի ջանքերով տարածվեց համարյա ամբողջ Սփյուռքում:*

*Դժբախտաբար, միության ստեղծման տասնամյակը նշելուց հետո, վարչության ներսում սկիզբ առան անհասկացողություններ նրա որոշ անդամների փառասիրության, եսի և ցուցամոլության հետևանքով, որոնք ավելի վառ շեշտվեցին Մանվել Մարաշյանի մոտ: Նա, չբավարարվելով, առանց վարչության թույլտվության ինքնագլուխ գործեր կատարելով ու վարչության հանձնարարականները չկատարելով, ավելի հեռու գնաց և սկսեց հակամիութենական ու հակավարչական գործունեություն ծավալել ոչ միայն բեյլանցիների մոտ, այլ ամբողջ լոսանջելեսահայ համայնքի իրեն ծանոթ շրջապատում: Նույնիսկ բեյլանցիների տներն էր այցելում՝ նրանց համոզելով, որ միության և հատկապես նրա ատենապետի մասին բացասական կեցվածք ցույց տան ու տեսանկարում էր:*

*Այսպիսով միության հեղինակությունը ընկավ համայնքում, և վարչությունը կանգնեց փակուղու առջև:*

*Որոշ վարչականներ գիտակցաբար կամ ոչ, հաճախ ՎՆ-ում պաշտպանեցին նրան, որից քաջալերվելով՝ նա շարունակեց իր ոչ-միութենապաստ հակավարչական գործունեությունը:*



*Որպեսզի միության հեղինակությունը վերականգնվի համայնքում և վարչության մեջ ամրապնդվի նախկին համերաշխությունն ու շարունակվի նրա ակտիվ գործունեությունը, վարչությունը որոշում է.*

*1. Քանի որ վարչությունում աշխատելը կամավոր է, դա չի նշանակում, որ յուրաքանչյուր անդամ իր ուզածը կարող է անել: Վարչության որոշումները պարտադիր հանձնարարականներ են նրա բոլոր անդամների համար:*

*2. Համաձայն կետ 1-ի և միության ԾԿ-ի, կանոնները խախտողին վարչությունը առաջին անգամ գրավոր կգուշացնում է, երկրորդ անգամ գրավոր խիստ նկատողություն է տալիս, իսկ երրորդ անգամ հեռացնում է վարչությունից:*

*3. Եթե որևէ վարչականի առաջարկությունը ՎՆ-ում չի ընդունվում, ապա դա երբեք հակավարչական երևույթ չպետք է առաջացնի և անձնական վիրավորանքների ու հարցերի չպետք է վերածվի, ենթադրելով, որ «ինչ-որ մեկի քմահաճույքով չընդունվեց» անհիմն հասկացողությամբ, քանի որ առաջարկն ընդունվում կամ մերժվում է քվեարկությամբ:*

*4. Վարչության գործունեության վրա ազդում է նաև կարգապահությունը: Նրա նիստերը պետք է կայանան հանգիստ մթնոլորտում, խոսողին պետք չէ ընդհատել և թողնել, որ վերջացնի իր խոսքը: ՎՆ-ի օրակարգի հարցերը հիմնականում նախապատրաստվում են ատենապետի կողմից և նիստի սկզբում կարդացվում են քարտուղարի կողմից: Լրացուցիչ հարցեր մտցնելը օրակարգ կամ հանելը դրանից, պետք է հաստատվի վարչության կողմից, որից հետո սկսվի քննարկումը:*

*5. Տիկնանց հանձնախմբի գործունեությունը համադրել վարչության գործունեության հետ: Եթե վերջնականապես ձևավորված է Տիկնանց հանձնախումբը, հաստատել այն որպես վարչության կից ակտիվ գործունեություն ունեցող մարմին: Կազմակերպել հավաքույթ՝ մոտիկից ծանոթանալու անդամների հետ, որպեսզի վարչության հետ միասնական ակտիվ աշխատանքային գործունեություն կատարվի:*

*6. Անցած 15 տարիների ընթացքում կյանքի պայմանները բավական փոխվել են: Հետևաբար ժամանակն է միության ԾԿ-ն վերանայել ստեղծված հատուկ հանձնախմբի միջոցով, քննարկել ՎՆ-ում և հաստատել, որից հետո միության գործունեությունը խստորեն իրականացնել ըստ ԾԿ-ի, առանց շեղվելու նրա դրույթներից:*

*7. Միության վարչության երկփեղկման մասին համայնքում տարածված ասեկոսեներին և մտայնություններին վերջ տալու նպատակով, նկատի ունենալով ատենապետ Վահան Բահարյանի 15 տարիների՝ նվիրված, անբասիր աշխատանքը նրա գործունեությունում, որ իր ջանքերը չխնայեց և հիմա էլ շարունակում է նույն ձևով, բարձրացնելու միության անունն ու հեղինակությունը համայնքում և այլ վայրերում, որտեղ բոլորն էլ հարգանքով են վերաբերվում ՊՀՄ-ին, ինչպես նաև նրա 65-ամյակի և իր միութենական ու ազգային գործունեության 15-ամյակի առթիվ, Վահան Բահարյանին շնորհել ՊՀՄ-ի վարչության Պատվավոր ատենապետի կոչում (ըստ վարչության մեջ ընդունված որոշման), վստահ լինելով, որ այսուհետև էլ նա կսատարի միության գործունեության հաջողություններին, իրեն կից ունենալով նվիրված վարչականներ: Այս առիթով կազմակերպել հավաքույթ-խրախճանք վարչականների և տիկնանց հանձնախմբի անդամների հետ միասին, իրենց ամուսիններով և տիկիններով:*

*Հավաքույթ-խրախճանքում Վահան Բահարյանին Պատվավոր*

ատենապետի կոչումը հանձնելուց հետո, որոշ ժամանակ անց կատարել վերընտրություն, ընտրել նոր ատենապետ, իսկ Վահան Բահարյանին խնդրել, որ մնա վարչության մեջ որպես խորհրդատու:

Միայն այս ձևով վերջ կտրվի համայնքում պտտվող անեկոտներին, այլ խոսակցություններին, և միության հեղինակությունը կբարձրանա, արժանանալով համայնքի համակրանքին ու հարգանքին:

Սույնը՝ Մարտիրոս Էքշիյանի, Գրիգոր Դովլաթյանի և Վահան Բահարյանի համատեղ մշակված նախագիծն է, ՎՆ-ում քննարկելու համար:

Հարգանքներով՝ Եռյակ

**Հետագայում, գերեզմանոցում պատահած արտառոց մի դեպք նոր բարդություններ առաջացրեց: Այդ առիթով պատրաստեցի մի նոր գրություն, որտեղ ներկայացված էին նաև այլ խախտումներ, որոնք տեղ էին գտել Հոգեհանգիստ-Հոգեճաշի ժամանակ և այլուր: Ահա այդ գրությունը.**

## ՎԱՐՉԱԿԱՆԻՆ ԱՆՎԱՅԵԼ ԱՐԱՐՔ...

Վարչության անդամ Մանվել Մարաշյանը վարչությունում շարունակում է իր ինքնագլուխ գործունեությունը՝ չենթարկվելով նրա կարգ ու կանոնին և որոշումներին: Այդ մասին է խոսում հետևյալ փաստը. 1915 թ. նահատակների հիշատակին ապրիլի 30-ին կատարվելիք հոգեհանգիստ-հոգեճաշի նախօրյակին տեղի ունեցած ՎՆ-ում, նա առաջարկել է հոգեճաշի սրահում պատին կախել Ռաֆայել Վրթանեսյանի և Ժիրայր Քյուփելյանի նկարները: Վարչությունը մերժել է այդ առաջարկը, բայց հաջորդ օրը այդ նկարները այնտեղ են եղել Մանվելի ինքնագլուխ նախաձեռնությամբ:

Հոգեճաշի ժամանակ մեր ժողովուրդը, իր հացից կտրելով, նվիրատվություն է անում միությանը, իր անցյալների հիշատակին, թեկուզ 10 դոլարով, իսկ Մանվելը վարչության ատենապետին դիմելու փոխարեն, որը այնտեղ նստած էր, դիմում է փոխատենապետ Արա Պետրոսյանին, առաջարկելով այնտեղ ներկա եղող և երկու երգ երգող իր ծանոթուհուն 40 դոլար վճարել, որը վճարվում է:

Մի դատապարտելի արարք ևս, որը կապված է հոգեհանգիստ-հոգեճաշի հետ, բայց կապված չէ Մանվելի հետ. Սարգիս Գյոկալյանը դիմում է Արա Պետրոսյանին, որպեսզի Ռաֆայել Վրթանեսյանի 26-րդ տարելիցի առթիվ հոգեհանգստյան պաշտոն կատարվի վարչության անունից, որի համար վճարում է ինքը:

Ըստ Արա Պետրոսյանի, երկու դեպքերում էլ (40 դոլարի և հոգեհանգստի), տհաճություններից խուսափելու համար, նա համաձայնվել է ..., այսինքն չի ուզել նրանց հետ գժտվել:

Նախ նկատի պետք է ունենալ, որ հոգեճաշին մասնակցողների բոլորի հարազատներն էլ ջարդ են տեսել, հետևաբար այնտեղ երգողները կամ արտասանողները չպետք է փողով ելույթ ունենան: Դա անարգել է նշանակում նահատակների հիշատակը: Երկրորդ, ի՞նչ է նշանակում ժողովրդի իր անցյալների հիշատակի համար տված փողը երգողին տալ: Սա անթույլատրելի և ոչ ներելի արարք է:

Իսկ եթե Ռաֆայել Վրթանեսյանի 26-րդ տարելիցի առթիվ հոգեհանգստյան պաշտոն է կատարվում վարչության անունից, թող կատարվի ԲՀԿՀ-ի բոլոր անդամների համար, որոնք այսօր չկան, և որոնց տարելիցը սկսում է



մի քանի տարուց մինչև 15 տարի և ավելի: Նրանց ի՞նչու արհամարհել:

Նորից անդրադառնանք Մանվել Մարաշյանի գործունեությանը: Վարչությունում քննարկվող հարցերը միայն վարչության սեփականությունն են, նրանք ենթակա չեն նրանից դուրս տարածվելու: Այս մասին բազմիցս ասվել է վարչության մեջ: Դեռ վարչության ատենապետի մասին ոչ մի որոշում չկայացած, Մանվելը Չորք Մարզպանի ՀՄ-ի վարչության ատենապետ Նուպար Հակոբյանին ասում է, որ Վահանը հեռացել է ատենապետությունից, ինչպես դիմում գրենք, որ նորից անդամ դառնանք ՀՄՄ-ին: Մանվելը անկտրող լինելով հասկանալ, թե ի՞նչ է ազգային գործունեությունը, որտեղ ինչ մտածում, այն էլ ասում է, առանց անդրադառնալու հետևանքներին: Դեռ այս բոլորը կարելի էր ներել իրեն, եթե ինքն ընդուներ սխալները: Դժբախտաբար նրա համար վիրավորանք է այդպիսի քայլը:

Նրա վերջին արտառոցությունը տեղի ունեցավ գերեզմանատանը, Սեդրակ Ճերեճյանի թաղումից հետո, հինգշաբթի, հունիս 22, 2000, երբ Մարտիրոս Էքշիյանը առաջարկեց միատեղ հավաքվել այնտեղ գտնվող Գրիգոր Դովլաթյանի և Մանվել Մարաշյանի հետ և վարչության նիստի օրը որոշել: Ես ասացի, որ այստեղ չանենք, կարող է տհաճություններ ստացվեն, ամոթ կլինի վարչության համար, թաղման ենք եկել: Մարտիրոսը չհավատաց՝ ասելով, որ այդպիսի բան ինչպե՞ս կարող է տեղի ունենալ այստեղ, և մենք շարժվեցինք դեպի ծառի շուքը, որտեղ ժողովրդի հետ Գրիգորն ու Մանվելն էլ էին կանգնած, իսկ նրանց կողքին՝ նաև Մանվել Մարաշյանի տղաները՝ Հովիկն ու Մուշեղը: Երբ չորսով միասին էինք արդեն, Մանվելն առանց պատճառի սկսեց գոռգոռալ՝ մոռանալով ամեն պատշաճություն և ամենակարևորը, որ գտնվում ենք գերեզմանատանը և ժողովրդի մեջ: Ես զգուշացրեցի նրան՝ ասելով, որ Մանվել ամոթ է, բոլորը մեզ են նայում, լսում են, կամաց խոսիր: Նա իրեն հաշիվ չտվեց, որ գերեզմանատանն ենք, թաղման ենք եկել և շարունակեց թափել իր հոգու մաղձը ավել-պակաս արտահայտություններով և ահ տալ ինձ՝ մայր հայհոյելով և ասելով. «Ես քեզ ցույց կտամ ...»: Թե ինչ է ցույց տալու, այստեղ՝ վարչության մեջ թող ցույց տա: Հետագա տհաճություններից խուսափելու համար Մարտիրոսը և ես հեռացանք: Բայց այնտեղ գտնվող ժողովուրդը լսեց այդ բոլորը: Նույնիսկ մեկ խոսողներից մեկը սուր կատակի ձևով ասաց, որ մեռելը նեղացավ այդ տհաճ խոսակցությունից:

Նա խիստ վիրավորանք հասցրեց ինձ և ահ տվեց: Այսպիսի արարք կարող է թույլ տալ միայն հիվանդ, հավասարակշռությունը կորցրած մարդը կամ փողոցային խուլիգանը: Բոլոր դեպքերում էլ այդպիսի մարդը չի կարող միության վարչության անդամ լինել: Հետևաբար, այս հարցը դնելով վարչության նիստում, ես խնդրում եմ վարչականներին, որ լուրջ մոտեցում ունենան և ճիշտ որոշում ընդունեն՝ վարչությունը հետագա տհաճություններից հեռու պահելու համար: Նշենք նաև, որ այս դեպքից հետո, նույնիսկ վարչության ՃՊ-ի կայացումն էլ հարցականի տակ դրվեց, որովհետև ամբողջ ժողովրդի մեջ տարածվեց միջադեպը:

**Հովսեփենց տանը տեղի ունեցած 07-03-2000 թ., No 128 ՎՆ-ում քննարկվեց այս գրությունը և ատենապետության հարցը:**

**Այնքան էի վրդովված այս դեպքի առիթով, որ մոռացա քննարկման դնելու** «Պէյլանի հայրենակցական միության 15-ամյակը» **գրությունը: Մարտիրոսը նույնպես մոռացել էր, չնայած, որ այդ**

գրության աջ անկյունում իր ձեռքով գրել էր.

Սույնը ներկայացված է Մ. Էքշիյանին և Գր. Դովլաթյանին վարչության հաջորդ նիստին քննարկության համար: Վ. Բահարյանի բնակարան:

Ահա թե ինչ էր գրված վարչության սույն նիստի արձանագրության մեջ այդ մասին.

Հ. Գ.. Վարչության մեջ մթնոլորտը այնքան լարվեց Մանվել Մարաշլյանի գերեզմանոցի արարքի առիթով, որ լուրջ սխալ թույլ տրվեց՝ մոռացվեց քննարկելու Վահան Բահարյանի 06–06–2000 թ. «Դէկլյանի հայրենակցական միության 15-ամյակը» գրությունը, որը բավական պարկություն կարող էր մտցնել վարչու-թյունում քննարկվող հարցերի մեջ:

Գրությունը (նախորդի մասին է խոսքը) կարդացի: Վարչականները արտահայտվեցին: Դժբախտաբար, որոշ կարևոր արտահայտություններ, որոնք իմ մեջ տպավորված մնացին, արձանագրության մեջ չեն գրանցված: Ըստ արձանագրության.

Ընթերցումից ստացված տպավորություններից ազդված Գր. Դովլաթյանը և Մ. Տոնոյանը քննադատեցին գերեզմանոցի դեպքը, որտեղ Մանվել Մարաշլյանը անվայել արտահայտություններ էր արել Վահան Բահարյանի հասցեին, նշեցին հատկապես, որ նման դեպքերը որպես տգեղ երևույթներ, միմիայն պատվազրկում են վարչության հեղինակությունը:

Հովսեփ Գասպարյանը քննադատեց վերջին դեպքերը և առաջարկեց լինել անաչառ իր գործընկերների նկատմամբ, հարգել վարչության օրենքները:

Գրիգորը խոսեց նաև վարչության նիստերում քննարկված հարցերը՝ Մանվելի դրսում տարածելու մասին:

Հարություն Հարությունյանը վերջապես խոստովանեց, որ Գրիգորի հետ միշտ պաշտպանել է Մանվելին, որպեսզի նա վարչությունից դուրս չգա:

Մարտիրոսը նույնպես դատապարտեց գերեզմանոցի դեպքը, միաժամանակ նշելով, որ երկու հոգու պատճառով լարվածություն ստեղծվեց վարչությունում և չգիտենք ո՞վ է մեղավոր, կարգ ու կանոնը մի օրվա հարց չէ, իրար հետ չենք ուզում վստամարդ լինել:

Իհարկե, չի կարելի համաձայնվել Մարտիրոսի հետ մեղավոր փնտրելու հարցում, քանի որ ես՝ որպես ատենապետ փաստեր էի ներկայացրել վարչությանը, և նա ճշտեց իր միտքը իր խոսքի շարունակության մեջ, որ «իրար հետ չենք ուզում վստամարդ լինել»:

Ահա թե ինչ: Ուրեմն ինչպիսի հարց էլ քննարկվի վարչության մեջ, անկախ դրա կարևորությունից, վարչականների՝ իրար հետ ունեցած բարեկամության և ընկերության պատճառաբանությամբ պիտի լուծվի ի վնաս վարչության գործունեության...:

Այս հարցի նկատմամբ արձանագրության որոշման մեջ գրված է.

Նկատի ունենալով Մանվել Մարաշլյանի անմարդկային և տգեղ վերաբեր-



մունքը գերեզմանոցում. այն է նրա մայր հայհոյելը Վահան Բահարյանին, խիստ վիրավորելով նրան, վարչությունը խիստ նկատողություն արեց Մանվել Մարաշլյանին, վերջին նախազգուշացումով, որ նման արարքի կրկնողության դեպքում, նա կհեռացվի վարչությունից:

Սույն որոշման ընդունումից հետո, Մանվել Մարաշլյանը ժողովականների առաջ հայտարարեց, որ ինքը պիտի չմասնակցի վարչության աշխատանքներին, մինչև Վ. Բահարյանի ատենապետության ավարտը: Իր խոսքերով՝ «Ես բացակայում եմ մինչև Վահանի դուրս գալը վարչությունից»:

Իհարկե, նա երբեք չպահեց իր խոստումը, ինչպես իր նախօրոք արած բոլոր հայտարարություններից հետո:

Մանուկ Տոնոյանը և Հովսեփ Գասպարյանը առաջարկեցին ընդհանուր անդամական ժողով գումարել, որի հետ ոչ մի վարչական համաձայն չեղավ: Մանուկ Տոնոյանը նաև նշեց.

Քեզ, անձնուրաց աշխատանքի համար, կպատվենք որպես «Պատվավոր ատենապետ»ի, Էքշիյանը իր վրա կվերցնի ատենապետի պարտականությունը, իսկ դու վարչության մեջ մնա և մեզ հետ աշխատիր:

Մի լրացում եմ ՎՆ-ի սույն արձանագրությունից.

Ժողովը նկատի ունենալով ... Մանուկ Տոնոյանի առաջարկը՝ Վահան Բահարյանին «Պատվավոր ատենապետ»ի կոչում շնորհելու մասին որոշեց հնարավորություններ մշակել վերոհիշյալի իրականացումը համապրեղելու նոյեմբեր 18-ին սպասվող ԸԺ-ի կայացման հետ միասնաբար:

8-04-2000 թ. ՎՆ-ում քննարկվեցին դաշտահանդեսի հարցերը: Որոշվեց դաշտահանդեսի մասին, առաջին անգամ լինելով, ծանուցում տալ նաև Սեդա Հայրիյանի «Կարկաչ» հեռուստածրագրով, որ զարմանալիորեն Գրիգորը առաջինն ընդունեց առաջարկը, ա՛յն Գրիգորը, որը ժամանակին, Մեծ Եղեռնի նահատակներին նվիրված Պարույր Սևակի միջոցառման ցուցադրման համար այս նույն կայանով 200 դոլար վճարելու համար որքա՜ն մեծ աղմուկ բարձրացրեց: Եզրակացությունը մեկն էր. Մանվել-Գրիգոր-Հարություն եռյակը գործում էին ըստ Նուբար Մխսի-Գևորգյանի ցուցմունքների և հրամանի: Որոշվեց նաև, որ դաշտահանդեսի հանդիսավարությունը կատարի Սեդան:

Սույն նիստին քննարկման ներկայացրեցի երկու գրքերիս հրատարակության հարցը՝ «Աքսորյալի Գողգոթան» և «Հայաստան-Սփյուռք համաժողով և հայաստանյան օրագիր»: Առաջինը ներկայացնում էր բեյլանցի Կարապետ Բոյաջյանի ականատեսի վկայությունը 1915 թ. ջարդի ժամանակ, իսկ երկրորդը իմ հաշվետվությունն էր ՊՀՄ-ի վարչության, տվյալ համաժողովին իմ օրինական մասնակցության առթիվ: Այս հարցը տհաճություն պատճառեց Գրիգորին, Մանվելին, Հարությունին և ի վերջո հետաձգվեց վարչության հաջորդ նիստին:

Նիստին ներկայացրեցի «Armenian Assembley Tree Project»

կազմակերպության կարևոր նամակը, որը կոչ էր անում մասնակցել ծառատնկման ծրագրին Հայաստանում, որի համար նախատեսված էր նվիրատվություն ըստ տնկվելիք ծառերի քանակի՝ 1 ծառի համար 17, 5 ծառի՝ 50, 10 ծառի՝ 100, 50 ծառի՝ 500 դոլար և այլն:

Միությունը կարող էր օգնել թեկուզ 200 դոլարով՝ 20 ծառ տնկելով, որից, դժբախտաբար, հրաժարվեցին վարչության անդամները: Նրանք չեն կարող հասկանալ առաջարկված նպատակի էությունը, երբ մի քանի դոլար է պետք այն իրագործելու համար, իսկ ծանուցման 15-20 վայրկյանի համար կվճարեն 100 դոլար (ներվարչական անհամերաշխ մթնոլորտը արգելակում էր ամեն մի ազգային գործունեություն):

8-25-2000 թ. վարչության նիստում նորից դրվեց գրքերիս հրատարակման հարցը, բայց նորից հետաձգվեց հաջորդ նիստին..., երևի այլևս չշոշափելու համար այն: Նույնիսկ Գրիգորը ռեպլիկա բաց թողեց, ասելով. «Դու տպի, մենք կգնենք մեկ համար»: Ահա նրանց հասկացողությունը նաև գրքի մասին:

Դաշտահանդեսի նախօրյակին Մանվելը գնացել է Գրիգորի տունը և ասել է. «Ո՞վ պիտի գա դաշտահանդեսին...», իսկ Գրիգորը հարցրել է. «Արդեն կազմակերպել ես, որ չգա՞ն...»:

Դաշտահանդեսից բացակայում էին Սյուզին, Սեդան, Մանվելը, Մանուկն ու կինը: Սյուզին նախօրոք ասաց, որ ինքը չպիտի կարողանա գալ, որովհետև ամուսինը ընկերներով պայմանավորվել է այդ օրը ընտանիքներով Լաս Վեգաս գնալ, և ինքը ստիպված է ամուսնու հետ գնալ...: Միաժամանակ նա ասաց, որ Սեդան էլ պիտի չգա (վերջինս երբես չուներ, որ ինքը զանգահարեր և ասեր), Երևանից հյուր ունի և քաղաքից դուրս են գալու այդ օրը: Մանուկը մի ուրիշ պատճառ բերեց ասելով, թե երկար ժամանակ է, որ ընկերը հյուր է գալու և հազիվ դաշտահանդեսի օրն է կարգադրել, իսկ Մանվելի մասին ընդհանրապես չարժի խոսել, քանի որ այդ բոլորի կազմակերպիչն ինքն է իր խորհրդատուի հետ: Իսկ Գրիգորը դաշտահանդեսում միկրոֆոնով ժողովրդի վրա է գոռում, թե ինչո՞ւ բոլորը իրենց բարեկամներին չեն բերել հետները, փոխանակ իր «գործակից» ընկերոջը՝ Մանվելին հասկացնի այդ բոլորը:

Այս տողերը, որ գրում եմ հիմա, զգում եմ, ինչու մարդկանց մոտ ազնվություն, սրբություն ու անկեղծություն չի մնացել: Նրանք միայն իրենց շահերի մասին են մտածում: Կարևոր չէ, Սյուզին ու Սեդան միասի՞ն են գնացել քաղաքից դուրս, թե ոչ: Կարևորը երևույթն է: Բոլորի պատճառաբանված բացակայու-



թյուններն էլ ոչ մի արդարացում չունեն և ենթակա են խիստ պարսավանքի, որովհետև վարչությունը դաշտահանդեսի համար դաշտը վարձում է համարյա մեկ տարի առաջ, որպեսզի բոլոր վարչականներն էլ կարողանան նախօրոք կարգավորել իրենց գործերը և դաշտահանդեսի օրը մի մարդու նման ներկա լինել այնտեղ՝ կատարելու իրենց պարտականությունները: Ուստի, այս առթիվ սուտ խոսելը ստորություն ու աններելի հանցանք է:

Սա՞ է արդյոք ազգային գործունեության հանդեպ ունեցած նրանց պատասխանատվությունը, և այդպիսիք ի՞նչ ազգային գործունեություն կարող են կատարել:

Դաշտահանդեսում ներկաների թիվը իրոք այն չէր, ինչ որ անցած տարիներին: Չի բացառվում, որ Մանվելը կատարել էր իր սև գործը, Գրիգորին էլ գցելով ներվային վիճակի մեջ:

Հոկտեմբերի 23-ին նախատեսված էր ՎՆ (վարչականների ներկայության պարտականությունը հանձնարարված էր Հարություն Հարությունյանին): Հարությունը նիստի օրը զանգահարեց հայտնելով, որ Մանվելի կինը՝ Մաքրուհին է մահացել, որի պատճառով բոլորին զանգահարել է, որ նիստը հետաձգվում է: Իմ հարցին, թե ինչո՞ւ նախօրոք չհարցրեցիր ինձ, պատասխանը եղավ. «Ի՞նչ պիտի հարցնեմ, մահ կա, վերջացա՛վ: Ինչպե՞ս վարչության նիստ կանենք: Ե՛ս որոշեցի, ե՛ս զանգեցի...»: Իմաստ չուներ նրա հետ վիճելը: Նիստը տեղափոխեցինք հոկտեմբերի 30-ին, որտեղ օրակարգի նյութ դարձրեցի Հարությունի ինքնագլուխ արարքը վարչության նիստը հետաձգելու մասին և ավելացրեցի, որ դա սխալ էր նաև այն առումով, որ այդ օրը, նիստից հետո բոլորս միասին կգնայինք Մանվելի մոտ և ցավակցություն կհայտնեինք նրան: Ոչ մի արձագանք ...:

Վարչության երեք անդամներ՝ Մանվելը, Հարությունը և Գրիգորը դարձել էին անկառավարելի, իսկ մյուսները, իրենց բարեկամական ու ընկերական հարաբերությունները չփչացնելու համար, բոլորովին անտարբեր էին վարչությունում քննարկվող հարցերի նկատմամբ: Բայց մտքովս չանցած անակնկալ էր սպասում ինձ: Հաջորդ օրը Գրիգորը հեռախոսով հայտնեց, Մանվելը չի ցանկացել, որ կնոջ թաղման արարողության մասնակցեմ: Սրանից ավելի ստորություն դժվար է պատկերացնել:

Նիստում Գրիգորը վարչությանը հանձնեց ՃՊ-ի համար տպված տոմսերը: Դիմենք այդ նիստի (10-30-2000 թ., No. 131) արձանագրությանը.

Ժողովում պարզվեց, որ ՃՊ-ի տոմսերի վրա նախապես ներկայացված ծայրագրի բովանդակությունը փոփոխության է ենթարկվել. այնտեղից հանվել էր

Վ. Բահարյանի մեծարման մասին եղած պարբերությունը: Գրիգոր Դովլաթյանը հավաստում էր, որ դա կդժվարացներ տոմսերի վաճառքը, որ մարդիկ նախապատվությունը տալիս են պարել-ուրախանալը, քան թե մեծարանքի արարողությունը լսել: Այս երևույթը դժկամությամբ ընդունվեց որոշ մարդկանց կողմից որպես ներքին կանոնագրի խախտում:

Սա Գրիգոր Դովլաթյանի հերթական ինքնագլուխ արարքն էր: Նշենք որ մեծ մասամբ իմ բարեկամներն էին ներկա ճՊ-ին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ծանուցումների գրքի համար նյութերը առնվազը 15 օր առաջ պետք է հանձնել տպարան, որպեսզի վերջինս հասցնի դրանք տպել ժամանակին և այդ հարցով ոչ-ոք չի զբաղվում, ստիպված եղա նախագահողի և իմ մասին ինքս գրել դրանք ու ներկայացնել սույն նիստին միաժամանակ ներողամտություն խնդրելով այդ կապակցությամբ նշելով նաև, որ ոչ-ոք չզբաղվեց այդ հարցով, իսկ այդ ուշացնել չէր կարելի: Վարչության բազմաթիվ նիստերից բացակայելուց հետո, վերջապես այս նիստին ներկա գտնվող Մանուկ Տոնոյանը ասաց, որ դա վարչության գործն էր, մենք պետք է անեինք, ինչո՞ւ դու արեցիր, դա քո կողմից անհամեստություն է: Նրան հիշեցրեցի, որ դրա համար ներողություն խնդրեցի, և եթե դուք անող լինեիք, այդ նյութերը հիմա սեղանի վրա կլինեին: Փոխանակ իրենք ամաչեն, դեռ ինձ են մեղադրում, որ իրենց անելիք գործերն եմ անում: Համենայն դեպս, շատ համեստ գրություն էի ներկայացրել իմ մասին.

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ

Վահան Բահարյանը ծնվել է 1934 թ. հոկտեմբերի 14-ին Սանջաքում (Կիլիկիա), Բեյլանի շրջանի Ամանոս լեռների ստորոտում գտնվող Աթըգ (Աթըկ) գյուղում:

1939 թ. Ֆրանսիան Սանջաքը հանձնում է Թուրքիային, և նա իր ծնողների հետ բնակություն է հաստատում Լիբանանում:

1946 թ. ընտանիքի հետ ներգաղթում է Խորհրդային Հայաստան: Երևանում ավարտում է Կ. Մարքսի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկական ֆակուլտետը: 20 տարի իր ուժն ու կարողությունը նվիրաբերում է հայրենիքի վերակառուցման ու բարգավաճման աշխատանքներին:

1978 թ. դեկտեմբերին տեղափոխվում է ԱՄՆ՝ Կալիֆորնիայի նահանգի Լոս Անջելես քաղաքը, որտեղ և սկսում է իր ազգային ու հասարակական բուռն գործունեությունը:

1986 թ. Լոս անջելեսում հիմնադրվում է ՊՀՄ-ն, որի առաջին քարտուղարն է ընտրվում նա: 1989 թ. ընտրվում է նույն միության ատենապետը և այդ պաշտոնը վարում է առ այսօր: Նա 7 տարի եղել է ՀՄՄՄ-ի փոխատենապետ:

Անցած 15 տարիներին միությունը ունեցավ բուռն գործունեություն և Լոս Անջելեսի հայ համայնքում ճանաչվեց ու հարգվեց որպես ազգային գործունեությանը նպաստող միություն: Այդ տարիներին միությունը, հիմ-



նականում նեցուկ ունենալով Լոս Անջելեսում բնակվող բեյլանցիներին, անսակարգ օգնություն ցուցաբերեց և՛ Լոս Անջելեսում հայապահպանման գործին, և՛ Հայրենիքի կառավարական կառույցներին ու ժողովրդին, մանավանդ 1991-1993 թթ. դժվար տարիներին:

Միությունը շարունակում է և պիտի շարունակի իր ազգային ու հայապահպանման գործունեությունը, որպեսզի օտար ափերում հայը չկորցնի իր ինքնությունը և օգնի Հայրենիքի վերակառուցման աշխատանքներին:

Վահան Բահարյանը զբաղվել է նաև գրական գործունեությամբ, ինչպես նաև Լոս Անջելեսի հայ մամուլում հրապարակել է բազմաթիվ հոդվածներ: Նրա գրվածքները՝ չորս գիրք, պատրաստ են տպագրության և շուտով լույս կտեսնեն:

Վարչությունը շնորհավորում է Վահան Բահարյանին իր ծննդյան 65-ամյակի և ազգային-հասարակական գործունեության 15-ամյակի առթիվ, ցանկանալով իրեն քաջառողջություն և հաջողություններ, հատկապես իր ազգային գործունեության մեջ:

Կազմել էի նաև ճՊ-ի հայտագիրը և որոշ փոփոխություններ կատարել եղած ծանուցագրքում: Նյութերը հանձնեցի Գրիգորին, որ տպարան հանձնի, որը մոտիկ էր իրեն:

Նախքան Գրիգորին հանձնելը, հայտագրի մասին նախօրոք խոսել էի Արա Պետրոսյանի հետ, որպեսզի հանդիսավարությունը ինքը վարի: Երկար խոսեցինք: Այն ժամանակ խանութ ուներ: Գիշերը մի անկոչ մեքենա մտել էր խանութը և բավական նյութական վնաս պատճառել: Նա ասաց, որ այս պայմաններում ոչ մի տրամադրություն չունի հանդիսավարության: Մտնելով հանդերձ դրության մեջ (դեռ մեկ ամիս կար ճՊ-ին), ասացի «Հո մեկ ամիս այդ տրամադրությամբ չես մնալու»: Դժկամությամբ համաձայնվեց նշելով, որ մի ուրիշին էլ նկատի ունենամ: Սա փաստորեն մերժում էր, բայց շնորհակալություն հայտնեցի: Այնուհետև նույն հարցով զանգահարեցի Սեդա Հայրիյանին: Նա ասաց, որ եթե իմ մեծարման երեկոյի համար պիտի չանի, էլ ո՞ւմ համար պիտի անի հանդիսավարությունը, անպայման կանի, այնպիսի ոգևորությամբ, որ մեջս հպարտություն և հարգանքի գնահատանք զգացի իր հանդեպ: Մի քանի լավ խոսքեր էլ ասաց, և հարցը լուծվեց:

11-08-2000 թ. ՎՆ-ում քննարկվեցին ճՊ-ի հարցերը: Արձանագրության 2-րդ կետում գրված է.

2. Ժողովն անդրադարձավ ատենապետ՝ Վ. Բահարյանի մեծարման հարցի քննարկմանը, այն է. պարահանդեսի օրը (18 նոյեմբեր 2000 թ.) նրան «Պատվո ատենապետի» կոչում շնորհելու և միաժամանակ նրա 65-ամյակի և ազգային-հասարակական գործունեության 15-ամյակի առնչությամբ հնարավոր մանրամասնությունների մշակման:...

Նախկինում հաճախակի շոշափված, բայց դրա իրականացման մասին արդյունավետ հիմքեր բացահայտելու միտումով Մ. Տոնոյանը շեշտեց, որ ինքը Արա պետրոսյանի հետ, իր ժամանակին, եղել է Վ. Բահարյանի մոտ: Ներվարչական փոխհարաբերություններն ու եղած տարաձայնությունները մեղմացնելու

*և վարչության բնականոն աշխատանքը չվնասելու միտումով, կրույցի ընթացքում, Արա Պետրոսյանը խուսափեց «Պատվավոր ատենապետ»-ի կոչում շնորհել ու մեծարել նրան:*

*Գր. Դովլաթյանը, Հարություն Հարությունյանը, Մանվել Մարաշյանը և Մանուկ Տոնոյանը դեմ քվեարկեցին Վահան Բահարյանին «Պատվո ատենապետ»-ի կոչումը շնորհելու իրականացմանը:*

*Վ. Բահարյանը շեշտեց, որ վարչությունը իր նախկին որոշումից հրաժարվեց: Չմոռանանք ասելու, որ Հովսեփ Գասպարյանը ժողովի ավարտից առաջ դուրս էր եկել չտապողականության պատճառով:*

Վարչությունը կազմված էր 10 հոգուց՝ Վահան Բահարյան, Արա Պետրոսյան, Մարտիրոս Էքշիյան, Մանուկ Տոնոյան, Գրիգոր Դովլաթյան, Մանվել Մարաշյան, Հակոբ Խորշիդյան, Սյուզի Հեքիմյան, Հովսեփ Գասպարյան, Հարություն Հարությունյան, որոնցից նիստից բացակայում էին 3-ը՝ Արա Պետրոսյանը, Հակոբ Խորշիդյանը և Սյուզի Հեքիմյանը: Երկրորդ՝ ըստ Մանվել Մարաշյանի հայտարարության և դրա հիման վրա վարչության ընդունած որոշման (07-03-2000 թ. No 131 ՎՆ), նա իրավունք չուներ վարչության նիստերին մասնակցելու և քվեարկելու մինչև իմ դուրս գալը վարչությունից, երրորդ՝ Հովսեփ Գասպարյանը նիստից շուտ գնալով, չմասնակցեց քվեարկությանը: Փաստորեն նիստին մասնակցում էին 5 հոգի (վարչականների 50%), հետևաբար, անկախ մնացած հանգամանքներից, քվեարկության արդյունքն անվավեր է (ըստ ԾԿ-ի քվեարկությունը օրինական է միայն վարչականների 2/3-ի ներկայությամբ): Կարող էի պահանջել, որ Մանվելը հեռանար նիստից, բայց նորից չգնացի մթնոլորտի շիկացման, որն էլ օգտագործեցին նրա ընկերները:

Այս ընթացքում Սյուզի Հեքիմյանը ինձ հետ հեռախոսով խոսելիս պատմեց, որ թատրոն էին գնացել և, երբ թատրոնից դուրս են եկել, բակում հանդիպել են Նուբարին, Սեդային և Մանվելին՝ իրենց ընտանիքներով: Սյուզին Նուբարին հարցրել է, թե ՊՀՄ-ի ՃՊ-ին գալո՞ւ են: Ըստ Սյուզիի, Նուբարը բորբոքվել ու սկսել է գոռգոռալ, թե «Ի՞նչ ՃՊ, Վահանի 65-ամյակն են տոնելու, ո՛չ ոք պիտի չգնա» և այլ տհաճ խոսքեր...: Աղմուկը շրջապատի մարդկանց ուշադրությունն է գրավում: Սյուզին ամաչելով այդ տհաճ երևույթից սուս ու փուս հեռանում է ամուսնու հետ:

11-15-2000 թ. ՎՆ-ին շատ անտրամադիր գնացի, արդեն որոշած լինելով, որ պիտի հրաժարվեմ ՃՊ-ից: Այնտեղ ներկա գտնվող Մանվելին չհիշեցնելով նույնիսկ, որ իրավունք չունի մասնակցելու նիստին, շեշտեցի. «*Մանվե՛լ դու ինչո՞ւ ես եկել, չէ՛ որ սուգի մեջ ես*» (Նրա կնոջ՝ Մաքրուհու քառասունքը չէր լրացել): Նա պատասխանեց. «*Ես ո՛չ մի սուգի մեջ էլ չեմ...*»: Չգիտեմ ի՞նչ անուն կարելի է տալ մարդուն...:



Հարություն Հարությունյանը, առանց հարգանք ունենալու ներկաների հանդեպ, սկսեց ավել-պակաս խոսել (այդպիսիներից հարգանք չի կարելի սպասել), որ ՃՊ-ն կազմակերպելը սխալ էր, քանի որ Մանվելի կինն է մահացել և իրենք էլ մահ են ունեցել, իբր թե սուգի մեջ են ու պիտի չմասնակցեն ՃՊ-ին: Որքան ընկերասիրություն, երբ մահացողի ամուսինը ասում է սուգի մեջ չէ, նրա փոխարեն «նվիրված» ընկերն է սգում: Բացի այդ, երբ Հարությունը հարսանիք և թոռնիկի նշանդրեքն արեց, սուգը չազդեց դրանց վրա, ՃՊ-ին մասնակցելու համար հիշեց իր և Մանվելի սուգը (քանի որ նախօրոք ծրագրված էր չգալը):

Վարչության նախորդ նիստում որոշվել էր, որ ՃՊ-ում Մարտիրոսը պիտի ներկայացնի ինձ, որի համար պիտի գրեր իր խոսքը: Սույն նիստում նա հրաժարվեց ելույթ ունենալուց՝ ասելով, որ մի քանի հոգիներ զանգահարել են իրեն և ահ են տվել, որ կխանգարեն: Գրիգորն ասաց, որ թող Մարտիրոսը պատրաստի, ինքը կկարդա: Նա էլ այդ անում էր ոչ թե ինձ համար, այլ շահագրգռված էր ՃՊ-ի կայացումով, որպեսզի սրահին տրված 500 դոլար կանխավճարը փրկի: Նա իր բարեկամներին ոչ մի տոմս չէր վաճառել: Երբ հարցրեցի պատճառը, շատ անտարբեր ասաց, որ մի անգամ ասել է, ուզում են գան, ուզում են չգան: Պարզ էր, որ նա նրանց գալն էլ չէր ուզում: Նրանց փոխարեն իմ բարեկամներին էր տոմս վաճառել և ինքը կնոջ, ընկերոջ և Արայի ընտանիքների հետ նստած էր մի սեղանի շուրջը:

Ես պնդեցի Մարտիրոսին ասելու, թե ո՞վ է իրեն ահ տվել, չասաց: Այն ժամանակ հուշեցի նրան. «*Վախենում ե՞ս ասելու, որ Մանվելն ու Նուբարն են կանգահարել*»: Ելք չունենալով՝ խոստովանեց, որ նրանք են զանգահարել ու ահ տվել իրեն, և նաև ավելացրեց, որ սրահում էլ պիտի խանգարեն: Ի՞նչ է կարծում ընթերցողը, Մանվելն ամոթ զգա՞ց, բոլորովին: Այստեղ են ասում. «*Անամոթի երեսին թքում են, ասում է անձրև է գալիս*»:

Այդ մասին արձանագրության 2-րդ կետում գրված է.

*Գրիգորը նկատողություն արեց Մանվելին՝ շեշտելով, որ այսքան երկար ժամանակ լարվերով Վահանի դեմ, շատ հարցերում առաջացան անլուծելի խնդիրներ, կարծես ոխերիմ թշնամիներ լինեինք: Հարությունը ավելորդ արտահայտություններ արեց Վահանի հասցեին: ...*

*Անդրադառնալով Վահանի մեծարման մասին խոսելու հարցին, նշենք, որ վեր-ջին շրջանում ստեղծված ներվարչական փոխադարձ անառողջ իրավիճակի պայ-մաններում, նոյեմբեր 18-ի նշանակված պարահանդեսը խափանելու և կամ առնվազն ի վնաս նրա բնականոն կայացման տեղի ունեցան որոշ արտաքին ճնշումներ: Հարցը կայանում էր հետևյալում: Ըստ նախատեսված ծրագրի, ես պետք է խոսեի Վահան Բահարյանի մեծարման, միության նկատմամբ նրա*

*կապարած գնահատելի գործունեության և այլ հարցերի, ինչպես նաև նրան «Պատվավոր ատենապետ»ի կոչում շնորհելու մասին։ Մանվել Մարաշլյանը իր հեռախոսազանգով, ինչպես նաև մեկ ուրիշը ինձ ստիպում էին հրաժարվել այդ ծրագրից, այլապես իրենք տարբեր միջոցների կդիմեն և նույնիսկ մարդ կուղարկեն ՃՊ-ի սրահ՝ խանգարելու համար։*

*Նկատի ունենալով այդ ահապանգերը, վարչության սույն նիստում ես հրաժարվեցի ներկայացնելու Վահան Բահարյանին։ Սակայն հարցը քննարկվելուց հետո Գրիգորն առաջարկեց, որ ինքը կկարդա Վահան Բահարյանի մասին գրվածը։ Բայց ես մտածելով, որ իմ գրածն էլ պիտի աղավաղվի Գրիգորի կարդալով և ի հարգանք Վահան Բահարյանի, որոշեցի ինքս ելույթ ունենալ նրա մասին։*

*Ահապանգերի մասին վարչության անդամները ոչ մի միջոց չձեռնարկեցին։*

*Որոշվեց, որ պարահանդեսի ընթացքում Մարտիրոս Էքշիյանը պետք է ներկայացնի Վահան Բահարյանի մեծարման մասը՝ այսինքն խոսի նրա գործունեության և արժանիքների մասին, վարչությունում կատարած նրա հիմնահարցերի կարևորության մասին։*

*Նշվեց նաև, որ Վ. Բահարյանի գործունեության մասին պետք է անդրադառնալ ավելի հարմար ժամանակներում, այլ առիթով։*

Այս Առիթով, եթե Հակոբ Պարոնյանը ողջ լիներ, հաստատ պիտի ասեր. «Վրա՛ս գրէ...»։

Մարդ արարածը որքան անբարո պետք է լինի, որ այդպիսի քայլերի դիմի։ Սա ուղղակի փողոցային խուլիգանություն, ստորություն էր Նուբարի ու Մանվելի կողմից։

Մանվելին քաջալերողները և հետո էլ այդ գործընթացին մասնակցողները եղան նաև Գրիգորն ու Հարությունը։

Այս բոլորը լսելուց հետո որոշեցի չմասնակցել ՃՊ-ին և վեր կացա քայլերս ուղղելով դեպի դուռը, բայց պահեցին ինձ։ Մարտիրոսը ստանձնեց իմ մասին ելույթ ունենալը ՃՊ-ում։

Սեդան չեկավ ՃՊ-ին։ Սրահում, Մարտիրոսը մի անգամ ևս խնդրեց Արային հանդիսավարությունը վարելու, նա նորից հրաժարվեց, որովհետև իր հարաբերությունները «կփչացներ» Մանվելի հետ։ Իսկ Սեդայի բացակայության պատճառը ՃՊ-ից (ինչպես նաև դաշտահանդեսից) պարզվեց Սյուզիի միջոցով, որ Նուբար Մխսի-Գևորգյանը նյութապես օգնում է Սեդայի «Կարկաչ» հեռուստածրագրին, ուստի նրա խոսքը օրենք լինելով Սեդայի համար, վերջինս չմասնակցեց ՃՊ-ին և նույն պատճառով էլ, պարզ է, չէր մասնակցել դաշտահանդեսին։

Ցավում եմ, բայց ստիպված եմ նշելու, որ Սեդան իր արժանապատվությունը, իր հարգանքը ծախեց մի քանի դոլարով, որը մանավանդ արվեստագետի համար խորթ և անթույլատրելի արարք է։ Դե՛, ի՞նչ արած, Աստված իրեն հետ։ Ես շատ էի հարգում, բայց հարգանքը հօդս ցնդեց։

Երբ Գրիգորը ՃՊ-ի ծանուցման գրքույկները բերեց սրահ, մի անակնկալ էլ այստեղ պատահեց։ Դրանց մեջ հայտագիրն ու



իմ ուղղումները չէին կատարված։ Երբ հարցրեցի Գրիգորին այդ մասին, շատ հանգիստ պատասխանեց, որ մոռացել է, այնինչ՝ ուղղված փոփոխություններով գրքույկը տպվածների կողքին դրված էր։ Անփութությու՞ն, թե կանխամտածված և ուրիշ տեղից եկած հրամանի համապատասխան կատարում...,

ՃՊ-ի հանդիսավարությունը վարեց Գրիգոր Դովլաթյանը։ Դա խեղկատակություն էր։ Հազար անգամ փոշմանեցի, որ համաձայնվեցի մեծարվելու և ուզում էի մի րոպե շուտ հեռանալ սրահից...։

Մարտիրոսի խոսքից հետո ահա թե ինչպես շնորհավորեց ինձ Գրիգոր Դովլաթյանը.

*Վահան Բահարյանը 12 տարի է մեր ատենապետն է և 15 տարուց ավելի ծառայում է հայ ազգին։*

*Սիրելի հայրենակիցներ, մեր վարչության մեջ խոսեցինք, թե Վահան Բահարյանի 65-ամյակի առթիվ մի նվեր գնենք։ Ամեն մեկը մի կարծիքի էր։ Մեկն ասում էր ծաղկեփունջ գնենք, ես ասացի վիսկի գնենք, ընդհանուր կարծիքի եկանք, որ մեր շնորհակալություններն ու շնորհավորանքները, կարծեմ, ամենաբարձրագույն նվիրատվությունն է Բահարյանի համար։*

Այս խոսքերը վերցված են տեսաերիզից բառ առ բառ, միայն «խմբագրված» են։

Գրիգորը բացարձակորեն սուտ էր խոսում նվեր գնելու համար վարչության մեջ հարցը քննարկելու մասին, որովհետև վարչության ոչ մի արձանագրության մեջ չկա այդ հարցի քննարկումը, և, երկրորդ՝ նվեր տալու չտալու հարցը որոշողները եղել են Գրիգորը, Մանվելը և Հարությունը։ Մանուկին ու Հովսեփին չեն էլ հարցրել, իսկ ըստ Սյուզիի, Մարտիրոսի ու իր հորդորանքները անպատասխան են մնացել։

ՃՊ-ի վերջում անհրաժեշտ չեքերը գրելուց ու ստորագրելուց հետո, չեքբուքը տվի Գրիգորին (որը, կարծեք, սպասում էր դրան, անմիջապես վերցրեց) և անաղմուկ հեռացա սրահից։

ՃՊ-ից հետո Սարգիս Խորշիդյանն ինձ ասաց.

*Եթե առաջ գիտնայի, որ քեզ այդպես պիտի գնահատեին, 100 դոլարը չէի տար, միությանը նվիրեցի ի հարգանք գործունեությանդ և ծննդյանդ 65-ամյակի։*

Հաջորդ օրը զանգեցի Մարտիրոսին և ասացի, որ այլևս վարչականներից ոչ-ոք թող չզանգի ինձ, Աստված ձեզ հետ...։ Բայց որոշ ժամանակ անց Գրիգորը զանգեց, թե ե՞րբ գումարենք վարչության նիստը ՃՊ-ի հաշվետվության համար, ուզո՞ւմ ես ձեր տուն գանք։ Պարզ է, որ Մարտիրոսը արդեն ասել էր նրան մեր խոսակցության մասին։ Ջկարողցա ինձ զսպել և սաստիկ վրդովված պատասխանեցի, որ ո՛չ ուզում եմ տունս գաք, ո՛չ էլ ուզում եմ հաշվետվություն կատարել, միայն մի բան եմ ուզում,

որ սրանից հետո ո՛չ մեկդ չանհանգստացնեք ինձ և հարաբերություն չունենաք հետս: Գրիգորը միայն դրամների մասին էր մտածում՝ ինչ ընկերություն, ինչ բարեկամություն..., ամեն ինչ մոռացվել էր արդեն:

Այսքանով ավարտած էի համարելու միության գործունեության մասին գրելը, եթե չկարդայի 12-20-2000 թ. No 135 ՎՆ-ի արձանագրության նյութերը, որը ստիպեց ինձ լրացումներ կատարել:

Տվյալ նիստում քննարկվել է երկու հարց՝ ՃՊ-ի հաշվետվությունը և ատենապետի հարցը, ըստ 07-03-2000 թ. No 128 ՎՆ-ի ընդունած որոշման: Տվյալ նիստի արձանագրության քննարկման և որոշման մեջ գրված է.

Այսօրվա ժողովը վերաքննության ենթարկեց հուլիս 3, 2000 թ. 4-10-128 նիստի ընթացքում ընդունված որոշման բովանդակությունը, որտեղ թելադրվում էր այս տարվա (2000 թ.) վերջերին հայտարարել Վահան Բահարյանի Ատենապետության ժամկետի ավարտը, շեշտը դնելով նրա արտասովոր երկարաժամկետ պաշտոնավարության վրա:

Հետևաբար ժողովի մասնակիցները զբաղվեցին բացառապես այդ հարցի վերանայման և հաջորդ գործողությունների մշակման հարցերով:

Մանրակրկիտ քննարկումներից հետո, մասնակիցների միաձայն հավանությամբ մշակվեց հետևյալ մոտեցումը. ներկա վարչությունը բարձր է գնահատում Վահան Բահարյանի ատենապետության 12 տարիների անընդմեջ պաշտոնավարությունը, գոհ է նրա անբասիր, անաչառ աշխատանքից: Սրա հետ մեկտեղ, ցավով հայտնում է, որ նույն պաշտոնավարության շարունակումը անհամատեղելի է տվյալ վարչության ներքին օրինաչափությունների հետ, հետևաբար, վարչության կայունությունը պահպանելու և կարգ ու կանոնի անխախտելիությունը երաշխավորելու նկատառումով որոշեց՝

1) Վահան Բահարյանի ատենապետության ժամկետը ավարտված համարել 2000 թ. դեկտ. 20-ից: Նրա մասնակցությունը վարչության հետագա աշխատանքներին թողնել նրա սեփական հայեցողության և ցանկության:

Շատ ցավալի է, որ երբեմն սխալ արտահայտություններ են տեղ գտնում արձանագրությունների մեջ: Ի՞նչ է նշանակում «... շեշտը դնելով նրա արտասովոր երկարաժամկետ պաշտոնավարության վրա»:

Ստիպված եմ մի անգամ ևս հիշեցնելու, որ իմ ատենապետության ժամանակ երկու անգամ վերընտրություն է կատարվել և 7-08-98 թ. ՎՆ-ում, բացի Սարգիս Գյոզալյանից և Մանվել Մարաշյանից, որոնք իրենց անձնական նպատակները հետապնդելով, դեմ են արտահայտվել ինձ, վարչության մնացած բոլոր անդամները նշել են ատենապետի դրական գործունեությունը և երաշխավորել են, որ նա շարունակի իր աշխատանքը:

Եթե մեկը երկար ժամանակ պաշտոնավարում է օրենքով, արդյո՞ք դա «արտասովոր» է: Սա զարմանալի արտահայտություն և ՄԿ-ին ծանոթ չլինելու հետևանք է:



Այնուհետև, ինչպես նշել եմ, նոյեմբեր 18-ի ՃՊ-ից հետո, ես ինքս չեքբուքը տվի Գրիգորին և հրաժարվեցի մասնակցելուց վարչության հետագա գործունեությանը, ուստի ինչպես կարող էին գրել արձանագրության մեջ «Վահան Բահարյանի ատենապետության ժամկետը ավարտված համարել 2000 թ. դեկտ. 20-ից ...», քանի որ ես ինքս հեռացել եմ վարչությունից 2000 թ. նոյեմբերի 18-ից:

Բացարձակապես սխալ է նաև՝

... նույն պաշտոնավարության շարունակումը անհամատեղելի է տվյալ վարչության ներքին օրինաչափությունների հետ, հետևաբար վարչության կայունությունը պահպանելու և կարգ ու կանոնի անխախտելիությունը երաշխավորելու նպատակով ... արտահայտությունը:

Ստացվում է, որ վարչության կայունությունը ես եմ խախտել, ոչ թե Մանվելը, Գրիգորն ու Հարությունը: Ստիպված եմ նշելու, որ «տվյալ վարչության ներքին օրինաչափությունները» ՄԿ-ի դրույթներն են, որոնցից երբեք շեղում չի եղել իմ ատենապետության երկար տարիների ընթացքում: Միության կարգ ու կանոնը և կայունությունը խախտողները վերոնշյալ անձնավորություններն էին, որոնք չպատժվեցին իրենց կատարած խախտումների համար և վարչությունը հասցրեցին կործանման եզրին: Հետևաբար, ի՞նչ «կարգ ու կանոնի անխախտելիությունը երաշխավորելու...» մասին է խոսքը:

Ուղղակի կարելի է զարմանալ Մարտիրոսի միամտորեն գրած այս տողերի վրա: Նա լավ գիտի իմ գործունեությունը, որ երբեք կարգ ու կանոնի խախտում թույլ չեմ տվել: Նա գիտի նաև, որ որոշ վարչականներ, կարգ ու կանոնը խախտելով, ՄԿ-ի դրույթներին անտեղյակ, անգրագիտության պատճառով վարչությունը հասցրել են այդ վիճակին:

Ինչո՞ւ 12 տարի հետո նկատեցիք իմ պաշտոնավարության շարունակության անհամատեղելիությունը «տվյալ վարչության ներքին օրինաչափությունների հետ», մինչև այդ ո՞ւր էիք ընկեր վարչականներ: Ամեն ինչ լավ էր: Հանկարծ ի՞նչ փոխվեց: Բոլորդ մի Մանվելի չափ խելք չունեցա՞ք: Շատ ցավալի է, որ Մանվելը կարողացավ բոլորիդ ենթարկել իրեն...:

Ժամանակը ամենաարդար դատավորն է, յուրաքանչյուրին կգնահատի ըստ իր գործունեության ու արժանիքի:

Մարտիրոսին հանձնեցի 12-23-2000 թվակիր մի գրություն, որն ամբողջությամբ մեջբերվում է.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆՈՅԵՄԲԵՐ 18-Ի ՃՊ-Ի ԱՌԹԻՎ ԵՎ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

32 տոմսX 30 դոլար=960 դոլար:

Վարչությունը մասնակցեց Արցախին նվիրված՝ 1994 թ. հունիս 26-ի ՃՊ-ին: Տոմսի արժեքն էր 75 դոլար: Մանվել Մարաշյանն ու Սարգիս Կապուտյանը ևս ցանկություն հայտնեցին մասնակցել, բայց տվյալ պահին դրամ չունեին: Վարչությունն առաջարկեց միության հաշվից ամեն մեկին տալ 150 դոլար (երկու հոգու տոմսերի համար) վերադարձնելու պայմանով: Որպեսզի միության դրամին ձեռք չտրվի, առաջարկեցի 300 դոլարի իմ անձնական չեքը տալ և իրենց 4 տոմսերը ապահովել:

Մանվել Մարաշյանը վերադարձրեց 150 դոլարը: Երբ Գրիգորը Երևան գնաց հայրենակիցներին դրամ բաժանելու, Սարգիս Կապուտյանը խնդրեց, որ իր բարեկամներից մեկին էլ դրամ տա, որը Երևանից հեռու էր ապրում: Երբ Գրիգորը վերադարձավ, պարզվեց, որ Սարգսի բարեկամը վերջին օրերին է եկել, երբ դրամները արդեն բաժանված-վերջացած են եղել: Գրիգորը դրամ չի տվել նրան, և այդ հողի վրա տհաճ խոսակցություններ են եղել: Այդ պատճառով, Սարգիսը ոչ միայն հեռացավ վարչությունից, այլ իմ 150 դոլարն էլ չտվեց, որի պատճառը, փաստորեն Գրիգորն էր: Ուստի վերոհիշյալ գումարից ես իմ 150 դոլարը վերցնում եմ: Եթե միությունը տար այդ դեամը նրան, դարձյալ ետ չէր ստանալու Գրիգորի թույլ տված սխալի հետևանքով:

Բացի այդ, Մայրերի օրվա, դաշտահանդեսի և ՃՊ-ի առթիվ՝ նեկատիվների, նկարների և ֆիլմերի դրամները ես եմ վճարել և մտքովս էլ չէր անցնում վերցնել, ինչպես այդպիսի շատ գումարներ և 150 դոլարը:

Բայց վարչության անդամների անհարգալից և անմարդկային վերաբերմունքն իմ նկատմամբ, ինձ ստիպեց այդ քայլին դիմելու: Հետևաբար, լուսանկարչական բոլոր ծախսերը (որոնց ստացականների մի մասը չեմ պահել, որովհետև մտքովս էլ չէր անցնում փող վերցնել միությունից դրանց համար), գումարած Նոր Տարվա առթիվ գնված և ուղարկված շնորհավորական բացիկների գումարը կազմում է.

1. Լուսանկարների համար– 50 դոլար:

2. Շնորհավորական բացիկների համար –16 դոլար:

Հետևաբար ծախսերի ընդհանուր գումարը = 150+50+16=216 դոլար:

960–216=744 դոլար:

Վարչությունը խաղաց իմ արժանապատվության և հեղինակության հետ, չկատարելով իր իսկ ընդունած որոշումները: 15 տարի շարունակ միությունը ղեկավարելուց և նրա հեղինակությունը բարձրացնելուց հետո, անգամ 65-ամյակիս առթիվ մի շնորհավորական բացիկի էլ չարժանացրեց ինձ:

Բնական է, որ տգետ, անկիրթ և անգրագետ վարչականները երբեք պիտի չկարողանան հասկանալ, թե ի՞նչ են միության գործունեությունն ու նպատակը, երբ դրանք չափում են միայն ՃՊ-ում ներկաների թվով:

Հետևաբար, քանի որ վարչությունը իր վերջին նիստերում ընդունած որոշումները չկատարեց և արժանապատվությանս հետ խաղաց, մինչև որ իր սխալը չուղղի, վերոնշյալ գումարը՝ 744 դոլարը չի ստանա: Նշեմ նաև, որ ես այդ գումարին կարոտ չեմ (այդ գիտեն բոլոր վարչականները): Չեքբուքում միշտ կար Գրիգորի կողմից ստորագրված 5 չեքեր, որպեսզի պետք եղած ժամանակ օգտագործեմ և երբևիցե մտքովս անգամ չի անցել դրանք օգտագործել իմ անձնականի համար: Ընդհակառակը, վարչության անդամները բոլորն էլ լավ գիտեն, որ հաճախ իմ գրպանից ավելի շատ եմ ծախսել միության համար:

Վահան Բահարյան



Այս բոլորը մի անգամ ևս մանրամասն բացատրեցի Մարտիրոս Էքշյանին, որն առանց այն էլ գիտեր այդ մասին: Այնուհետև անհրաժեշտ փաստաթղթերն ու տարկաները հանձնեցի նրան 12-26-2000 թ.:

Այս գրության հետ կապված հիշատակման արժանի է մի դեպք, որը տհաճ երևույթ էր:

2001 թ. հունիսի 17-ին Կարո Պողոսյանի տղայի՝ Հովհաննեսի տարելիցի առթիվ, «Քեսապ» ճաշարանում, հոգեճաշի ժամանակ, մի սեղանի շուրջ նստած էինք Վահան Գևորգյանը իր կնոջ՝ Ալիսի հետ, եղբայրս՝ Վարդավառը իր կնոջ՝ Արաքսիի հետ և ես, երբ Գրիգոր Դովլաթյանը ևս եկավ և նստեց մեզ մոտ: Խոսակցություն էր գնում սեղանի շուրջը: Ալիսը Գրիգորին ասաց. «Ամոթ չէր, որ Վահանին մեկ հատ նվեր չտվիք, տղան այդքան երկար տարիներ աշխատեց միության համար»: Գրիգորի պատասխանը եղավ. «Վարչության որոշումն էր»: Թե վարչության ո՞ր որոշումն էր և ո՞ր արձանագրության մեջ էր գրված այդ: Այն ժամանակ վարչության հարցերը որոշում էին երեք հոգի՝ Գրիգոր Դովլաթյանը, Մանվել Մարաշյանը և Հարություն Հարությունյանը, որոնց «խորհրդատուն» Նուբար Մխո-Գևորգյանն էր: Իսկ վարչության մնացած անդամները (բացառությամբ մի քանիսի, որոնք անուժ էին), բոլորովին անտարբեր էին նրա մեջ տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ, իրենց համար միևնույնն էր, թե ինչ են անում այնտեղ: Իմ ստուգումներից պարզվեց, որ ոչ մի արձանագրության մեջ այդ հարցը չի շոշափված, նույնիսկ քննարկման չի դրված, իսկ գրիգորները կեղծ տեղեկություններ են տարածում ժողովրդի մեջ, վարչականին ոչ վայել կերպով:

2001 թ. օգոստոսի 2-ի երեկոյան ժամը 10-ին Հարություն Հարությունյանը զանգեց, թե Երևան է գնում, որևէ բան ո՞ւնեմ ասելու կամ ուղարկելու քրոջս և շարունակեց, թե քո մոտ եղած փողը ուզում ենք քեզ նվիրել, ինչպե՞ս ձևակերպենք: Կտրուկ պատասխանեցի, որ ինձ այդ հարցը բոլորովին չի հետաքրքրում: Անմիջապես զանգեցի Մարտիրոսին: Նա ժողովի էր: Հաջորդ առավոտյան ժամը 8:30 նա զանգեց: Պարզվեց, որ ՎՆ-ն գումարել են Մանվելի տանը: Մարտիրոսին ասել են, որ ինձ զանգի և նշված փողը ուզի: Նա ասել է, որ իր գրությունը կա, ինչո՞ւ իզուր անհանգստացնեմ նրան: Հարությունը ասել է, որ ինքը կզանգի և գիտի, թե ինչ պիտի ասի: Նշանակում է, որ վարչությունը անկառավարելի է դարձել: Ով ինչ մտածում է, անում է, որևէ մեկին հաշիվ չի տալիս, կարծես, թե գլուխ չկա...:

***

Ընթերցողին եմ ներկայացնում կազմված ամփոփագիրը: Նպատակն է ցույց տալ վարչականների «կարողությունը» կամ ակտիվությունը ԾՊ-ում հայրենակիցների ներկայությունը ապահովելու, բարեկամական կապերը սերտացնելու գործում, միջոցառումների ժամանակ բեյլանցիների համախմբվածությունը որպես ենթահամայնք Լոս Անջելեսի ծավալուն հայ համայնքում:

Ինչպես երևում է ամփոփագրից, որոշ վարչականներ նույնիսկ տոմս չեն վաճառել ԾՊ-ի համար՝ ունենալով մեծ բարեկամություն, իսկ որոշ դեպքերում իրենք էլ չեն մասնակցել: Բայց պատճառն ի՞նչ է, որ նրանք չեն կարողանում իրենց գերդաստանի հայրենակիցների մասնակցությունը ապահովել կազմակերպված միջոցառումներին, երբ որևէ հարսանիքի, նշանդրեքի, կամ ուրիշ արժանահիշատակ երևույթի առթիվ 300-500 հոգի են հավաքում:

Պարզվում է, որ շատ գերդաստաններ իրար հետ հարաբերություններ չունեն, գերդաստաններում էլ շատ հարազատներ իրար հետ չեն խոսում: Սա հիմնական պատճառներից մեկն է, որի մասին հաճախ էին բողոքում որոշ վարչականներ, բայց...:

Ամփոփագիրը ներկայացնելու մի ուրիշ հիմնական պատճառ էլ կար: Մանվել Մարաշյանը տժվժիկ էր դարձրել իր այն արտահայտությունը, թե միայն ինքն է ապահովում ԾՊ-ում հայրենակիցների ներկայությունը: Հարություն Հարությունյանի նման մարդիկ էլ ձայնակցելով նրան, գոռգոռում էին, որ առանց Մանվելի ոչ մի միջոցառում չենք կարող իրականացնել, որովհետև նա է հիմնականում տոմս վաճառում ժողովրդին: Եթե նկատի չունենանք 1994 թ. ԾՊ-ի ժամանակ Գրիգորի խռովելն ու դրա հետևանքով նրա բարեկամներին Մանվելի տոմս ծախելը, ինչպես նաև 1998 թ. ԾՊ-ի ժամանակ մարդկանց հետ սակարկության մեջ մտնելով խոստումներ տալով նրանց տոմս վաճառելը, ստացվում է, որ Մանվելը յուրաքանչյուր ԾՊ-ի ժամանակ միջին հաշվով վաճառել է մոտավորապես 25 տոմս: Տոմսեր իրացնելու և ծանուցումներ հավաքելու գործում, ըստ ամփոփագրի, Մանվելը երրորդ տեղումն է: Նա երբեմն ակտիվորեն կատարում էր իր պարտականությունները, բայց այդ նույն ժամանակ էլ արտահայտում էր, ինչպես տարբեր առիթներով նշվել է, խարդախության իր սովորույթը: Հաշվետվության ժամանակ, չվաճառված տոմսերը վարչությանը հանձնելիս, դրանց մի մասը կամ տանն էր մոռացած լինում կամ էլ՝ կորցրած...:

Չնայած յուրաքանչյուր տարվա վերջում ներկայացրել ենք վարչականների ՎՆ-ի հաճախելիության վերլուծությունը, բայց



որպեսզի ավելի ակնառու լինի, ընթերցողին ենք ներկայացնում բոլոր տարիների վարչության նիստերին հաճախելիության տեղեկագիրը առանց մեկնաբանության: Թող ընթերցողը ինքը որոշի՝ ինչպե՞ս կարող է վարչականը գործիմացությամբ աշխատել, երբ նա շարունակաբար բացակայում է նիստերից և անտեղյակ է աշխատանքային անցուդարձից:

Ահա այս ձևով ենք աշխատել ու գոյատևել...:

ԱՄՓՈՓԱԳԻՐ
1989-1998 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՃՊ-ՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՎԱՐՉԱԿԱՆՆԵՐԻ ՎԱՃԱՌԱԾ ՏՈՄՍԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՔԱԾ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԻ

ՏԱՐԵԹԻՎ

| ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | 1989 | | 1990 | | 1991 | | 1993 | | 1993 | | 1994 | | 1996 | | 1996 | | 1997 | | 1998 | | ԸՆԴՀ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Տ | Ծ | Տ | Ծ | Տ | Ծ | Տ | Ծ | Տ | Ծ | Տ | Ծ | Տ | Ծ | Տ | Ծ | Տ | Ծ | Տ | Ծ | Տ | Ծ |
| ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ | 55 | 6,0 | 54 | 5,0 | 33 | 6,0 | 99 | 9,0 | 49 | 6,5 | 36 | 7,5 | 41 | 11,5 | 17 | 0 | 48 | 8,5 | 21 | 6,0 | 453 | 66 |
| ԳՐԻԳՈՐ ՂՈՎԼԱԹՅԱՆ | 36 | 5,5 | 13 | 4,5 | 18 | 3,0 | 65 | 8,0 | 95 | 4,0 | 22 | 7,0 | 59 | 4,5 | 35 | 0 | 36 | 3,5 | 30 | 6,5 | 409 | 47 |
| ՄԱՐՏԻՐՈՍ ԷՔՇԻՅԱՆ | 5 | 2,0 | 16 | (1,5)[2] | | | | | | | | | | | | | 9[1] | 0,5 | 7 | 0 | 37 | 4,0 |
| ԱՇՈՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ | 5 | 0,5 | 23 | (0,5)[2] | | | | | | | | | | | | | | | | | 28 | 1,0 |
| ԱՐՄԵՆԱԿ ՀԵՔԻՄՅԱՆ | 20 | 0,5 | 26 | 1,0 | 9 | 1,0 | 0 | (0,5)[2] | | | | | | | | | | | | | 55 | 3,0 |
| ՄԱՆՎԵԼ ՄԱՐԱՇՅԱՆ | 25 | 0,5 | 34 | 1,0 | 105 | 6,5 | 4 | 0 | 27 | 2,0 | 28 | 1,5 | 14 | 0 | 18 | 0 | 26 | 4,0 | 56 | 10,0 | 337 | 26 |
| ՎԱՀԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ | 11 | 0[2] | | | | | | | | | | | | | | | | | | | 11 | 0 |
| ՍԱՐԳԻՍ ԽՈՐՇԻԴՅԱՆ | 16 | 0 | 13 | 1,0 | 14 | 0,5 | 4 | 0,5 | 0 | 0,5 | 7 | 0 | 9 | 1,0 | 9 | 0 | 20 | 1,0 | 18 | 0 | 101 | 4,5 |
| ՍԱՐԳԻՍ ԳՅՈՂՉԵԼՅԱՆ | 4 | 0 | 15 | 0,5 | 0 | 0 | 12 | 0,5 | 0 | 0,5 | 4 | 0,5 | 38 | 1,0 | 15 | 0 | 5 | 1,0 | 0 | 0 | 93 | 4,0 |
| ՄԱՐՏԻՐՈՍ ԳՅՈՂՉԱԼՅԱՆ | 0[1] | 0[2] | | | | | | | | | | | | | | | | | | | 0 | 0 |
| ԳԵՎՈՐԳ ԳԱՋՋՅԱՆ | | | 2[1] | 0 | 0 | 0 | 0 | 0 | 9 | 0 | 0 | 0[2] | | | | | | | | | 11 | 0 |
| ՍԵԴԱ ԳՎՐՅԱՆ | | | | | | | 0[1] | 0 | 0 | 0 | 2 | 0[2] | | | | | | | | | 2 | 0 |
| ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | | | | | 20[1] | 1,0 | 17 | 1,0 | 21 | 1,0 | 18 | 2,0 | 20 | 0 | 33 | 1,0 | 0 | 0 | 129 | 6,0 |
| ՍԱՐԳԻՍ ԿԱՊՈՒՏՅԱՆ | | | | | | | | | 0[1] | 0[2] | | | | | | | | | | | 0 | 0 |
| ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | | | | | | | | | | 2[1] | 0,5 | 7 | 0 | 14 | 0 | 17 | 1,0 | 6 | 0 | 46 | 1,5 |
| ՄԱՆՈՒԿ ՏՈՆՈՅԱՆ | | | | | | | | | | | | | | | | | 0[1] | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| ՀՈՎՍԵՓ ԳԱՍՊԱՐՅԱՆ | | | | | | | | | | | | | | | | | 18[1] | 1,0 | 4 | 0 | 22 | 1,0 |
| ՅՈՒՐԻ ՀԵՔԻՄՅԱՆ | | | | | | | | | | | | | | | | | | | 24[1] | 0 | 24 | 0 |

Տ-Տոմս
Ծ-Ծանուցման էջերի քանակը:
1-Վարչականի գործունեության սկիզբը վարչության մեջ:
2-Վարչականի գործունեության ավարտը վարչության մեջ:



Տեղեկագիր
1989-1998 թվականներին վարչականների վարչության նիստերից բացակայության

Տարեթիվ

| Անուն Ազգանուն | 1989 | 1990 | 1991 | 1992 | 1993 | 1994 | 1995 | 1996 | 1997 | 1998 | 1999 | ընդհ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 15ն[1] | 16ն | 23ն | 14ն | 24ն | 15ն | 8ն | 20ն | 17ն | 18ն | 17ն | |
| 1.ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | | 0 |
| 2.ԳՐԻԳՈՐ ՂՈՎԼԱԹՅԱՆ | 1 | 3 | 1 | 0 | 3 | 0 | 1 | 1 | 0 | 1 | 0 | 11 |
| 3.ՄԱՐՏԻՐՈՍ ԷՔՇԻՅԱՆ | 0 | 7 | | | | | | | 1 | 0 | 2 | 10 |
| 4. ԱՇՈՏ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ | 6 | 10 | | | | | | | | | | 16 |
| 5.ԱՐՄԵՆԱԿ ՀԵՔԻՄՅԱՆ | 1 | 1 | 0 | 1 | | | | | | | | 3 |
| 6.ՄԱՆՎԵԼ ՄԱՐԱՇՅԱՆ | 4 | 4 | 5 | 3 | 3 | 3 | 3 | 5 | 0 | 1 | 4 | 35 |
| 7.ՎԱՀԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ | 4 | 14 | | | | | | | | | | 18 |
| 8.ՍԱՐԳԻՍ ԽՈՐՇԻԴՅԱՆ | 2 | 1 | 0 | 4 | 7 | 2 | 1 | 0 | 1 | 1 | 1 | 20 |
| 9.ՍԱՐԳԻՍ ԳՅՈՂՉԵԼՅԱՆ | 4 | 5 | 7 | 2 | 7 | 0 | 0 | 0 | 2 | 6 | 15 | 48 |
| 10.ՄԱՐՏԻՐՈՍ ԳՅՈՂՉԱԼՅԱՆ | 2 | 10 | | | | | | | | | | 12 |
| 11.ԳԵՎՈՐԳ ԳԱՋՋՅԱՆ | | | 9 | 8 | 9 | 7 | 4 | 17 | | | | 54 |
| 12.ՍԵԴԱ ԳՎՐՅԱՆ | | | | 0 | 11 | 7 | | | | | | 18 |
| 13.ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | | 1 | 7 | 0 | 2 | 3 | 5 | 10 | 6 | 34 |
| 14.ՍԱՐԳԻՍ ԿԱՊՈՒՏՅԱՆ | | | | | | 6 | | | | | | 6 |
| 15.ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | | | | | 3 | 0 | 2 | 1 | 2 | 10 | 18 |
| 16.ՄԱՆՈՒԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | | | | | | | | 6 | 12 | 6 | 24 |
| 17.ՀՈՎՍԵՓ ՊԵՏՐՈՍՅԱՆ | | | | | | | | | 0 | 4 | 7 | 11 |
| 18.ՅՈՒՐԻ ՀԵՔԻՄՅԱՆ | | | | | | | | | | 4 | 3 | 7 |

1. 15ն,16ն,23ն,....- Տարվա մեջ տեղի ունեցած վարչության նիստերի թիվը:

# ՎԵՐՋԱԲԱՆ

*1999 թ. Հայաստան-Սփյուռք խորհրդաժողովից հոկտեմբերի 10-ին վերադարձա Լոս Անջելես:*

*Մի քանի օր հետո սանիկիս՝ Հակոբ Թորոսյանի մայրը՝ Միրարփին, զանգեց և որպիսությունս հարցնելուց հետո, նշեց, որ Վիկտորիա Գյոզալյանի մոր փեսակցության ինձ չի նկատել և ենթադրելով, որ հիվանդ եմ, զանգահարել է: Ասացի, որ հանգիստ եմ, բայց Վիկտորիայի մոր մահվան մասին լուր չունեի (վարչականներից ոչ ոք լուր չի տվել ինձ, նույնիսկ Վիկտորիայի վարչական ամուսինը՝ Սարգիս Գյոզալյանը: Հաջորդ օրը թաղման գնացի, որտեղ, բնականորեն շատ ծանոթների հանդիպեցի, որից հետո մոտեցա միասին կանգնած եռյակին՝ Ռուբենին (Մարտիրոս Էքշիյանի եղբորը), Պետրոս Բեքեքյանին և Մանվելին: Հերթով ձեռնվեցի երկուսի հետ,և երբ հերթը հասավ Մանվելին, երեսը շուռ տվեց, իբր ինձ չի տեսնում: Բարձր ձայնեցի՝ «Մանվել, չե՞ս տեսնում ինձ»: Նա՝ հանկարծակիի եկած, բարևեց դժկամությամբ:: Դեպքից որոշ ժամանակ անց Գրիգորը եկավ տունս: Ես պատմեցի նրան Մանվելի արարքի մասին: Մանվելը նրան այդ պահի շուրջ ակնարկել էր՝ «Վահանը բարևեց, ես հինգ րոպե հետո երկարացրեցի ձեռքս»...:*

Նոյեմբերի 8-ին Օրինջ Քաունթիում 2 օր հիվանդանոց պառկեցի և լուրջ գործողության ենթարկվեցի, նոյեմբերի 10-ին եկա տուն:

Համահայկական «Հայաստան» հիմնադրամի Լոս Անջելեսի մասնաճյուղի նոյեմբերի 11-ի ժողովին՝ կապված թելեթոնի հետ, հրավիրված էր նաև ՊՀՄ-ն: Զանգահարեցի Գրիգորին և ասացի, որ Արայի ու Մարտիրոսի հետ գնան, ես ի վիճակի չեմ:

Հաջորդ օրը, նոյեմբերի 12-ին (ուրբաթ) ինձ այցելության եկան Գրիգորը, Արան, Մանվելը, մի նամակ բերին հիմնադրամի կողմից միության թելեթոնին մասնակցելու և մի շիշ էլ «Staraya Moskva» օղի, որից ժամանակին արկղով էի գնել Ջոնսից (հատը 7 դոլար) միության ՃՊ-ի համար:

Որոշեցինք 1000 դոլար նվիրել հիմնադրամին: Չնայած դիվանն էր որոշողը, բայց քանի որ Մանվելը դեմ էր, հետո բոլոր վարչականներին զանգահարեցի, համաձայնությունները ստացա և անունները գրեցի հիմնադրամի նամակի վրա: Երբ որոշում էինք, թե ովքեր պետք է գնան, անմիջապես Մանվելը միջամտեց հրամայաբար. *«Վահանը թող չգնա, Արան թող գնա և չեքն էլ թող ինքը հանձնի»:* Քանի որ իմ հյուրն էր, չընդդիմախոսեցի, միայն ասացի, որ Արան, Գրիգորը և ես կգնանք: Այս ընթացքում նրանց հյուրասիրեցի նաև Հայաստանյան ընտիր կոնյակով, միայն Գրիգորը վայելեց հաճույքով, իսկ ինձ չէր կարելի խմել: Այնուհետև հիվանդությանս ու բուժման մասին խոսեցինք:

Եկան երեկոյան ժամը 7:45 և գնացին 9:10:



Նրանց գնալուց հետո նվաստացած զգացի ինձ...

Երբ վարչականներով մի հիվանդի էինք այցելում, Գրիգորի ձեռքին թանկանոց վիսկիի շիշ էր լինում, Մանվելի ձեռքին՝ մի սինի խմորեղենի տեսականի (իհարկե միության հաշվին)և բազմամարդ: Ինչպե՞ս եղավ: Կարիք չկար ինձ այցելեին օղիի շշով, երբ ինձ արգելված էր ալկոհոլը, ավելի լավ էր գային դատարկաձեռն, բայց վարչության հավաք կազմով: Դա ուշադրության լավագույն արտահայտությունը կլիներ Միության վարչության հիվանդ ատենապետի նկատմամբ: Այդ օրը երախտամոռության ատելի հեքը զգացի...:

Մեկ ժամից հեռանալն էլ էր վիրավորանք, քանի որ մենք ո՛չ միայն երկար տարիների հայրենակցական գործունեություն իրագործող ընկերներ էինք, այլ նաև հին բարեկամներ: Մանվելը պատճառաբանում էր, որ հյուրեր ունի, մյուս կողմից էլ Արայի մասին էր մտածում, թե նա առավոտյան ժամը 4-ին աշխատանքի է գնալու: Ինչպիսի՜ հոգատարություն...: Միայն Գրիգորն ասաց, որ մինչև առավոտ էլ կարող է նստել: Նույնիսկ հուշեցի, որ հաջորդ օրը շաբաթ է, և Արան չի աշխատում: Բայց Մանվելը կարողացավ տանել նրանց... Ինչո՞ւ այս անգամ նրան հաջողվեց...

Կարևոր նշում կա հուշերիս մեջ, որը արձանագրել էի, երբ հեռախոսով Արայի հետ խոսելիս իմացա, որ Մանվելն էլ է գալու.

*Լավ է, Մանվելն էլ է գալու: Մանվելին մի քանի խոսք կասեմ, դեռ հավատում եմ, նա կուղղվի, վերջ կտա իր քյալլագյոզություններին, ամեն ինչ կմոռանանք ու կշարունակենք աշխատել միասին:*

Բայց չարաչար սխալվել էի: Երևանում եղածս ժամանակ նա իր նախաձեռնությամբ Նուբար Միսսի-Գևորգյանի տունն է հավաքել բոլոր վարչականներին, և ատենապետի հարց են քննարկել:

Գրիգորը, որ ժամանակին լսել իսկ չէր ուզում Նուբարի անունը, նրա դեղարանից դեղ գնելուց էլ էր հրաժարվել, այսօր այնքան են քաղցրացել, որ Գրիգորը խորովածի համար միսը իր տանը նախապատրաստելով (պաստուրմա անելով) տանում է Նուբարի տունը, և այնտեղ «համախոհները» հավաքվելով ուտում-խմում և իրենց միակ «հիվանդության»՝ ՊՀՄ-ի վարչության ատենապետի հարցն են քննարկում: Գրիգորը մոռացել է Նուբարի պատճառած բոլոր տհաճությունները...:

Մանվելը շողոքորթությամբ կարող է համոզել իր շրջապատի ցանկացած մարդուն և նրանից կորզել իր համար անհրաժեշտ տեղեկությունները մարդկանց սևացնելու համար: Իր ատելի մարդուն հասարակության միջավայրում հանդիպելիս կեղծա-

վորությամբ կհավատացնի, թե հարգում է նրան: Նա կյանքում այս ստոր ու արգահատելի կեցվածքով է քայլում:

Մանվելը հմուտ գրպարտիչ է: Նա բոլորին հավատացնում էր, որ վարչականներին հեռացնում եմ վարչությունից: Մինչդեռ ընդհակառակը: Ազգային գործին նվիրված և անշահախնդիր վարչականների նկատմամբ ուշադիր եմ եղել, աշխատել եմ անել հնարավորը, որպեսզի նրանք չհեռանան վարչությունից: Այսպես՝ Սեդա Կվրյանի նկատմամբ բացառիկ որոշում է ընդունվել՝ նրա որոշ բացակայություններ հարգելի համարելու մասին՝ նկատի ունենալով ընտանիքի տնտեսական պայմանները, իսկ Մարտիրոսի դիմումի վրա իմ մակագրությունը հիշում է երևի ընթերցողը, որ նա կարող է մնալ վարչության մեջ և ցանկացած ժամանակ մասնակցել նրա նիստերին, մինչև անձնական հարցերը կարգավորվեն: Սարգիս Կապուտյանը ուզում էր հեռանալ վարչությունից (նոր անդամ էր և դեռ ոչ մի օգուտ էլ չէր տվել), նրա նկատմամբ էլ զիջողական մոտեցում ցուցաբերվեց:

Հովսեփ Գասպարյանը կարծում է, որ վարչության մեջ եղած լարվածությունը անհատական հարցերի հետևանք է՝ մոռանալով, որ վարչության մեջ անհատական հարցեր չկան: Դրանք առաջանում են, երբ վարչականը սկսում է չկատարել իրեն հանձնարարված պարտականությունները և ստեղծում լարվածություն հիմնականում ատենապետի և իր միջև, քանի որ ատենապետն է կարգավորում վարչության մեջ եղած բոլոր հարցերը որպես պատասխանատու: Ահա այս հողի վրա էլ, վարչության կողմից տրված հանձնարարությունները չկատարելու առիթներով արված բազմաթիվ դիտողություններից հետո, քանի-քանի անգամներ քննարկման դրի Մանվել Մարաշյանի հարցը ՎՆ-ում, որպեսզի խիստ որոշում կայացվի: Բայց վարչական ներողամիտ իր ընկերները՝ հովսեփները, գրիգորները, հարությունները չարձագանքեցին և ընթացք չտվին՝ վախենալով, որ Մանվելը տնից-տուն այցելող քահանայի նման եւ իր սովորությամբ հայրենակիցների միջավայրում հազար գրպարտություններով կնվաստացնի իրենց: Մանվելը վարչության մեջ արծարծված հարցերը տարածում էր և առաջին հերթին՝ Նուբար Մխսի-Գևորգյանի ընտանիքում, որտեղ միայն և միայն բամբասանքներով են զբաղվում: Հենց իր՝ Մանվել Մարաշյանի հավաստմամբ (Նուբարի կինը՝ Տիգրանուհին է ասել), որ միության ատենապետին մայր, քույր են հայհոյում: Բայց ատենապետի ո՞ր մեղքի համար: Նուբարը առհասարակ խիղճ ունի՞:

Վարչության նիստերում արծարծվող հարցերը դրսում



տարածելու փաստ է նաև «Վարչականին անվայել՝ փողոցային արարք» գրության մեջ հետևյալը հերյուրանքը.

... Դեռ վարչության ատենապետի մասին ոչ մի որոշում չկայացած, Մանվելը Ջորջ Մարգպանի ՀՄ-ի վարչության ատենապետ Նուպար Հակոբյանին ասում է, որ Վահանը հեռացել է ատենապետությունից, ինչպե՞ս դիմում գրենք (կամ նման մի բան), որ նորից անդամ դառնանք ՀՄՄ-ին:

Մանվելի միջոցով հասնող ինֆորմացիայի հիման վրա ՀՄՄ-ի ատենապետ Գրիգոր Շենյանը 02-09-01 թվակիր ձեռագիր նամակ է գրել և ուղարկել ՊՀՄ-ի վարչության նորընտիր ատենապետին ՀՄՄ-ի «գործակատար» Տիգրան Գալուստյանի ձեռամբ (բնագիրը տե՛ս հավելված էջ 512), որը եւ հրապարակում եմ:

8-09-01

Պատուարժան Վարչութիւն Պէյլանի Հայրենակցական Միութեան

Մեծայարգ Տիարք,

Այսու կը հրաւիրենք Ձեզ, որ շարունակէք մաս կազմել մեր մարմնին և սատարել մեր կազմակերպութեան, որպէսզի ավելի եւս աշխուժանան հայրենակցական միութիւնները:

Մեր կեդրոնին մէջ կրնաք ձեր ժողովները գումարել և փոքր ձեռնարկներու համար գործածել միութեանդ ձեռնարկները:

Մեր ժողովները սովորաբար տեղի կ'ունենան ամէն ամսուան երկրորդ Հինգշաբթի օրերը, երեկոյան ժամը 8-ին, կեդրոնին մէջ:

Ուստի ջերմապես կխնդրենք, որ ձեր ատենապետն ու մէկ ներկայացուցիչը հաճէիք ներկայ ըլլալ, յառաջիկայ Մարտ 8-ի նիստին:

Յուսալով Ձեզ տեսնել Մարտ 8-ին

Մնամ յարգանօք, Գրիգոր Շենեան (ատենապետ ՀՄՄ-ի):

Գրիգոր Շենյանը, մտածելով, որ ՊՀՄ-ն ես հեռացրեցի ՀՄՄ-ից, շտապել է նամակ գրել ՊՀՄ-ի նոր վարչությանը ակնկալելով վերջինիս անմիջական վերադարձը ՀՄՄ:

Միաժամանակ, ՀՄՄ-ից իմ հրաժարվելու պատճառի մասին լոսանջելեսահայ համայնքում և ամբողջ Ամերիկայով լուրեր է տարածում, թե ցանկացել եմ ՀՄՄ-ի ատենապետությունը «առնել» ձեռքից՝ մոռացության տալով այն պատճառները, որոնք երկփեղկեցին համայնքը եւ ՀՄՄ-ում բարձրացրեցին ատենապետի վերընտրության հարցը:

Եթե նա կարծում է, որ զորբայությամբ և իր արբանյակների շնորհիվ ատենապետության պաշտոնում կմնա ցկյանս, սխալվում է: Այդ կերպ ժողովրդականություն ու հարգանք չի կարող ունենալ հայ համայնքում: Վերջապես ՀՄՄ-ն ստեղծվեց ազգաշահ ծրագրեր իրականացնելու համար, ուստի հանցագործություն և ազգայնադավություն է համագործակցությունը օգտագործել անձնական նպատակներով:

ՊՀՄ-ի վարչության նոր ատենապետը, կողմնորոշվելով,

Հետևյալ հստակ պատասխան նամակն է ուղարկել (10 ամիս ուշացումով) ՀՄՄՄ-ին (բնագիրը տե՛ս հավելված էջ 513):

11-05-2001

ՀՄՄ-ի պատվարժան ատենապետին

Ի պատասխան Ձեր 02-09-01 թվակիր նամակին, որտեղ առաջարկվում է վերամիանալ ՀՄՄ-ի կազմին, ՊՀՄ-ի վարչությունն իր պարտքն է համարում, ներողամտաբար, հայտնելու, որ վերոհիշյալ հարցի ներվարչական քննարկումի արդյունքում նպաստավոր շարժառիթներ չհայտնաբերվեցին մեր նախկին որոշումը բեկանելու առնչությամբ:

Վարչությունը որոշեց, անշեղորեն շարունակել մեր ինքնուրույն գործընթացը, որը համապատասխանում է մեր ԾԿ-ի առանձնահատուկ թելադրանքներին:

Հարգանքներով՝
Պեյլանի Հայրենակցական Միության Վարչություն
Ատենապետ՝ (ստորագրություն) Մ. Էքշիյան
Քարտուղար՝ (ստորագրություն) Վ. Մարգարյան

Նամակի բովանդակությունը վկայում է, որ ՊՀՄ-ի վարչությունը ժամանակին ճիշտ որոշում է ընդունել ՀՄՄՄ-ից հեռանալու, որը շարունակվում է, անկախ ատենապետի փոխվելուց: Սա նշանակում է, որ ՀՄՄՄ-ն պետք է անդրադառնա իր գործունեությանը և գտնի ուժ ազգաշահ ուղի վերադառնալու:

Վարչության մեջ հաճախ է վիճելի նյութ դարձել միության ՃՊ-ին վարչականների և նրանց կանանց հրավիրատոմս հատկացնելու հարցը: Ես միշտ դեմ եմ եղել: Միության առաջին ՃՊ-ին բոլոր վարչականներն էլ տոմս գնեցին և՛ իրենց, և՛ իրենց կանանց համար, 1987 թ.՝ նույնպես: Բայց սկսած 1989 թ. ամեն ՃՊ-ի ժամանակ այդ հարցը դրվում էր, հատկապես Մանվելի կողմից՝ վրդովմունք հայտնելով, որ ձրի է աշխատում միության համար և, եթե իրեն ու իր կնոջը հրավիրատոմս չտրվի, չի գա ՃՊ-ին:

Իմ ամբողջ ազգային գործունեության ընթացքում, Լոս Անջելեսում չհանդիպեցի մի միության, որի վարչականները հրավիրատոմսերով մտնեն իրենց ՃՊ-ին:

Ահա քեզ վարչականի դատողություն և տրամաբանություն: Մանվելն իր շահամոլությունից երբեք չհրաժարվեց: Անգամ այն ցուցաբերում էր Միության հաշվին լուսանկարչական ապարատի համար մարտկոցներ գնելիս: Նկարում էր 1-2 ֆիլմ յուրաքանչյուրով և առաջարկում նորը գնել: Նրան հազվադեպ էր վստահվում միության դրամի հետ կապված հարցեր: ՃՊ-ների ժամանակ հատուկ հանձնարարվում էր ուշադիր լինել Մանվելի տոմսերին:

ԾԿ-ում նախատեսված «5. Պատժական միջոցներ»ը երբեք չկիրառվեց վարչության կողմից նրա նկատմամբ, որովհետև որոշ վարչականներ, միշտ կոծկելով նրա անթույլատրելի արարքները, համարժեք որոշումներ կայացնելուց խուսափեցին:



Ընդառաջելով Մանվելի առաջարկներին, մեր միջոցառումներին վարչությունը հաճախ էր հրավիրում արվեստագետների, որոնք միայն ֆիզիկապես էին ներկա լինում, նույնիսկ երկու խոսք գլանում էին ասել միության մասին, իսկ նրանցից շատերին չէին ճանաչում վարչականները: Պարզվում է, որ Մանվելը լավություն էր անում միության հաշվին և նրանց մոտ իր հեղինակությունն էր բարձրացնում:

Կարգապահության, կարգ ու կանոնի հարցերը հաճախ են քննարկման նյութ դարձել ՎՆ-ում: Բայց, ինչպես ժողովրդական առածն է ասում «Կարմիր կովը կաշին չի փոխի», նույնպես էլ վարչականների մեծ մասը երբեք չփոխեցին իրենց բնավորությունները, որի հետևանքով էլ առաջանում էին տհաճ երևույթներ: Նրանք չէին ըմբռնում, որ եթե կամավոր ցանկություն են հայտնել աշխատելու վարչության մեջ, պետք է հարգեն նրա կարգն ու կանոնը, հակառակ դեպքում վարչությունը իր նպատակները չի կարող իրագործել անթերի:

Երբ հավաքվում էինք ՎՆ-ի, 5-10 րոպե ուշ էինք սկսում, որպեսզի վարչականները հաղորդակցվեն իրար հետ և հարցերի քննարկման ժամանակ չխանգարեն նիստի ընթացքը: Բայց, երբ նիստը սկսում էր, հատկապես Գրիգոր-Հարություն-Մանվել եռյակը անընդհատ զրուցում էր, շատ դեպքերում թուրքերենով, որի համար անընդհատ զգուշացնում էի նրանց: Աշխատում էի նրանց իրարից հեռու նստեցնել: Գրիգորը սովորություն ուներ հաճախ խոսողին ընդհատելու և անժամանակ խոսելու: Երբ նկատողություն էի անում, թե թող մարդը խոսքը վերջացնի, արդարանում էր, որ ասելիքը կմոռանա: Նույնը անում էին մյուսները: Որքան էլ հորդորեցի, որ նշումներ կատարեն, ձայն խնդրելով խոսեն, օգուտ չտվեց: Վերջապես հասկացա, որ մարդիկ նշումներ չեն կարող կատարել, քանի որ գրագետ չեն:

Միության հիմնական գործունեությունից բացի, վարչությունը մասնակից էր դառնում հայրենակիցների ուրախություններին ու տխրություններին, ծնունդներին, հոբելյանական տարեթվերին՝ անհատի կամ ամուսնության, այցելություններին, հարսանիքներին, ընդհանուր հավաքույթներին: Ես իհարկե ի վիճակի չէի այդ բոլորին մասնակից դառնալ, որովհետև աշխատում էի և բացի ՊՀՄ-ի, ՀՄՄՄ-ի աշխատանքներից, գործունեություն էի բերում նաև գաղութի ազգային կյանքի գրեթե բոլոր իրադարձություններին, որոնք թեև խլում էին ժամանակիս մեծ մասը, բայց դրա շնորհիվ էլ բարձրացավ մեր միության հեղինակությունը համայնքում: Բավական է նշել, որ աշխատանքի գնալ-գալու

համար մեքենաս վարում էի մոտ 50 մայլ, իսկ դրա երեք քառորդի չափ (35–38 մայլ) վարում էի ազգային գործունեության համար:

Հսկայական ժամանակ էի ծախսում տոների առթիվ: Վարչության անունից միշտ շնորհավորական բացիկները ես էի գրում և ուղարկում, հատկապես, Լոս Անջելեսից դուրս գտնվող հայրենակիցներին: Լոս Անջելեսի հայրենակիցներին շնորհավորանք էր հղվում Հայ մամուլի միջոցով: Այս լավ ավանդույթը քննադատության նյութ դարձավ Գրիգորի և այլոց կողմից: Ավելորդ ծախս համարվեց և դադարեցվեց: Նրանք չէին կարողանում զանազանել կարևորը անկարևորից: Ամանորներին բոլոր վարչականներին զանգահարել, շնորհավորել եմ, բայց որևէ վարչական, գոնե, մի ագամ զանգահարեր ու ինձ շնորհավորեր՝ որպես վարչության ատենապետի, չի եղել:

Մեր միության ՃՊ-ին հրավիրված ՀՄ-ի ներկայացուցիչների սեղանին խմիչքն ու ջրեղենը միշտ ձրի են դրվել, իսկ երբ մենք ենք գնացել նրանց ՃՊ-ին որպես հրավիրվածներ, միշտ մենք ենք գնել դրանք: Եվ եկողները հիմնականում Հաճընի և հետագայում ստեղծված Զորք-Մարզպանի ՀՄ-ի ներկայացուցիչներն էին: Մյուս ՀՄ-ները մեր հրավերներին չեն արձագանքել, իսկ իրենց ՃՊ-ին ընդհանրապես չեն հրավիրել: Այս հարցը մի քանի անգամ քննարկման նյութ դարձրեցի ՀՄՄՄ-ի նիստերում առաջարկելով, որ յուրաքանչյուր միության ՃՊ-ին մասնակցեն ՀՄՄՄ-ի մեջ մտնող բոլոր ՀՄ-ները, որոնք, եթե նվիրատվություն էլ կատարեն, չեն վնասվի, որովհետև փոխադարձորեն կհատուցվեն: Կարևորը հաճախակի շփումն է, որն ամրապնդում է ՀՄ-ների միջև եղած կապերը, որոնց արդյունքում կստեղծվեն նաև ընտանեկան բարեկամություններ, որոնք կնպաստեն հայապահպանման և ՀՄՄՄ-ի ազգային գործունեությանը: Բայց այդպես էլ հարցը չլուծվեց, ու ՀՄ-ները մեկուսացված մնացին: Նրանց միասնությունը երևում էր միայն ՀՄՄՄ-ի նիստերի ժամանակ: Մի քանի անգամ էլ ՀՄՄՄ-ն կազմակերպեց ընդհանուր հավաքույթ, հովանավորությամբ Ջանգու Զիրըն հաստատության սեփականատերեր՝ տեր և տիկին Մարտիրոս և Ռիտա Իսկենդերյանների, որը դրական երևույթ էր տարբեր համայնքների հայրենակիցների որոշակի մասի միմյանց հետ ծանոթացման առումով:

Մեր միության դաշտահանդեսներին այցելող ՀՄ-ների վարչականների համար միշտ էլ առանձին սեղան ենք դրել, հյուրասիրել բեյլանցու հյուրասիրությամբ, բայց փոխադարձը տեսել ենք միայն Զորք-Մարզպանի և Մարաշի ՀՄ-ների կողմից: Որպես ՀՄՄՄ-ի փոխատենապետ, մի անգամ Սարգիս Խորշիդյանի հետ



այցելեցինք Ուրֆայի ՀՄ-ի դաշտահանդեսը, բարևով ամեն ինչ ավարտվեց, ուշադրության իսկ չարժանացանք: Հերթի կանգնեցինք, ճաշ գնեցինք, համտես արեցինք, հեռացանք:

«Փոխան ծաղկեպսակի», բարի նպատակով նվիրատվություն կատարելը բարեգործություն է: ՊՀՄ-ի վարչությունը չկարողացավ իրականացնել այդ հայրենակիցների մեջ: Ժողովուրդը, հեռու լինելով այդ հասկացողությունից, շարունակեց ծաղկեպսակներ պատվիրել, իր դրամը քամուն տալ: Ծաղկեպսակի կյանքը մինչև հանգուցյալի թաղումն է:

Մի փորձ կատարվեց այս ուղղությամբ, երբ Արմենակ Հեքիմյանի քույրը՝ Զարուհին, վթարի ենթարկվելով մահացավ: Նա ուսուցչուհի էր եղել: Այդ դժբախտ առիթով, Արմենակի կինը՝ Մարին իր մտահղացումը հայտնեց ինձ, որ փոխան ծաղկեպսակի նվիրատվություններ կատարվեն, և հավաքված գումարը հատկացվի Երևանում որևէ որբանոցի կամ ծերանոցի: Պատրաստ էի օգնելու նրան այդ հարցում, բայց ընտանիքի հարազատները չէին համաձայնվել:

Միության դրամական եկամուտները բանկ հանձնելու պարտականությունը 1989-ից ազնվորեն կատարեց Գրիգոր Դոլլաթյանը: Այդ հարցում նա այնքան վստահելի էր, որ երբեք իրենից ստացական չի պահանջվել գումարների բանկ մտնելը ստուգելու համար:

Մեծ Եղեռնից վերապրող բեյլանցիներին միշտ հրավիրատոմսեր են հատկացվել վարչության կողմից ՃՊ-ի ժամանակ: Մեծ Եղեռնի նահատակներին նվիրված հոգեճաշի և ՃՊ-ի ժամանակ նրանցից շատերը միշտ գնահատելի նվիրատվություններ են կատարել միությանը: Իրենց զգալի նվիրատվությունով հիշատակության են արժանի հանգուցյալ տեր և տիկին Կարապետ և Վիկտորիա Բոյաջյանները (Մարի Թերջանյանի ծնողները), որոնք յուրաքանչյուր ՃՊ-ի ժամանակ միությանը նվիրել են 200 դոլար:

Ես հպարտ եմ ՊՀՄ-ի պատմության մեջ թողած իմ ծառայությամբ: Թե ո՞րքանով է այն արժևորվում, թողնում եմ պատմությանը: Հայրենակիցը այս գիրքը կարդալուց հետո, եթե որոշ ծանոթություն ունի ազգային կյանքից, ճիշտ գնահատական կտա:

Վստահություն ունենալով ՎՆ-ի արձանագրությունները կազմողների վրա՝ չեմ ստուգել դրանք, հետևաբար որոշ արձանագրություններ պատշաճ չեն ձևակերպված:

Վարչության անդամների՝ Հարությունի, Գրիգորի, Արայի և մյուսների այն համոզումը, թե Մանվելի ջանքը չլինի, միության միջոցառումներում մարդ չի գա, ինձ ստիպեց կազմել յուրաքան-



Տեր և տիկին Կարապետ և Վիկտորիա Բոյաջյանները:

նագրությունններ պատշաճ չեն ձևակերպված:

Վարչության անդամների՝ Հարությունի, Գրիգորի, Արայի և մյուսների այն համոզումը, թե Մանվելի ջանքը չլինի, միության միջոցառումներում մարդ չի գա, ինձ ստիպեց կազմել յուրաքանչյուր տարվա ԾՊ-ի համար վարչականների կողմից վաճառված տոմսերի քանակի, ծանուցումների և վարչության նիստերին վարչականների հաճախելիության աղյուսակը և գրքի վերջում՝ այդ ցուցանիշների բոլոր տարիների հանրագումարը: Այս աղյուսակները, թվում է, ավելորդ էջեր են գրավում, բայց այլ կերպ հնարավոր չէր ներկայացնել իրական պատկերը:

Ինչո՞ւ որոշեցի գրել ՊՀՄ-ի պատմությունը այսպիսի բացությամբ, այն դեպքում, երբ ինքս բացարձակորեն դեմ էի, որ միության ներքին հարցերը ընդհանրապես հրապարակվեն: Միության գործունեության անցած 15 տարվա վերջին տարիներին վարչու-թյան մեջ տեղի ունեցած իրադարձությունները դրդեցին ինձ դի-մել այդ քայլին: Ոչ ոք չէր կարող գրել այդ մասին համարձակորեն, գրել Միության վարչության կենսագրությունը ցուցադրելի անա-չառությամբ ինչպես ես, ոչ ոք այնքան ծանոթ չէ տեղի ունեցածի ծալքերին, որքան ես: Որոշեցի պարզորոշ ներկայացնել ՊՀՄ-ի կենսագրությունը, որպեսզի մեր հայրենակիցները, իրոք, կարո-



***

11-30-2000 թ. (No. 134) ՎՆ-ին Մարտիրոս Էքշիյանը ներկայացրել է Վարդուհի Ֆողուլյանի 8-29-2000 թվակիր նամակը և իր պատասխանը: Նա այդ մասին հայտնել էր ինձ նախապես: Բացատրել էի, որ նամակը պետք է քննարկվի ՎՆ-ում և որոշում կայացվի, այնուհետև միայն պատասխանվի: Իսկ նա՝ թե նամակը իրեն է ուղղված և մինչև պատասխանը չգրի, չի ներկայացնի վարչության նիստին: Չկարողացա համոզել, որ միության հարցերը շոշափող յուրաքանչյուր գրություն կամ նամակ, ում էլ հասցեագրված լինի, վարչության սեփականությունն է: Նա անդրդվելի մնաց՝ իհարկե խախտելով Միության ԾԿ-ն:

Այս նախաբանով ներկայացնում ենք երկու նամակները բնագրային բովանդակությամբ, հետո կնշենք մեր դիտարկումները:

ՎԱՐԴՈՒՀԻ ՖՈՂՈՒԼՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ

Հարգելի ՊՀՄ-ի վարչության քարտուղար Էքշիյան Մարտիրոս,

Ձեզ ճանաչում եմ որպես ՊՀՄ-ի հայտնի դեմքերից մեկը, որի համար էլ դիմում եմ Ձեզ:

Սույն թվի օգոստոսի 26-ի երեկոյան հեռուստացույցի էկրանի վրա տեսա համաշխարհային մի դեմքի՝ հայ ազգի պարծանք՝ դիրիժոր Օհան Դուրյանին, որը հարցազրույց էր ունենում երիտասարդ մի օրիորդի հետ: Ես մոտիկից ծանոթ լինելով նրա կյանքին և գործունեությանը, կլանված ունկնդրեցի ամբողջ հաղորդումը: Նա պատմեց Հայաստանի ներկա կացությունից, կառավարության գործունեությունից: Պատմեց նաև երաժիշտների, երգիչների փորձի ժամանակ ուշագնացությունից, որովհետև 5 ամիս է չեն ստացել աղքատավարձ (աշխատավարձ) և անոթի են:

Նա ոչ թե ողորմություն էր խնդրում, այլ թելադրում էր յուրաքանչյուր հայի, որ գիտակցի, թե ինչ օրհասական օրեր և տարիներ է ապրում մեր հայ ազգը: Եթե այսօր ձեռք չմեկնենք միմյանց, ապա երբ պիտի օգնենք:

Խեղճ ծերունին աչքերը կկոցելով և մտքերը ի մի բերելով, մազերը գզգզված, այդ րոպեին նա իմ աչքին երևում էր ինքը՝ Տեր Աստվածը:

Եթե ուզում ես մի ազգ ոչնչացնել, խլիր նրանից իր մշակույթը և տես, որ ոչինչ չի մնա:

Հաջորդ օրը կիրակի էր: Ինձ հեռաձայնեցին և հարցրեցին, թե ինչո՞ւ ներկա չէի մեր միության դաշտահանդեսին: Իսկ ես լուր չունեի, ահա, թե ինչու որոշեցի գրել այս նամակը, որը բողոքի ձայն է կարծես:

Մոտավորապես 12-13 տարվա պատմություն ունի այս միությունը: Ես անշուշտ ներկա չեմ եղել բոլոր միջոցառումներին, բայց կարողությանս սահմաններում մասնակցել եմ:

Զարմանալին այն է, որ փոխանակ ընդլայնվեն, քանի գնում նոսրանում են Ձեր շարքերը: Ո՞վ է պատասխանատու այս բոլորի համար: Առաջին հերթին ոչ մի ծրագիր չունեք: Եթե մի բան էլ կազմակերպում եք, բոլորովին հետաքրքրություն չի ներկայացնում: Հարցը մի փոր կշտացնելը չէ, փառք աստծո, այս երկիրը հոգում է այդ հարցերը:

Մենք՝ մեծահասակներս, գիտակցելով ուզում ենք ներկա լինել: Մի քանի տարի հետո մեր երիտասարդությունը կամ գալիք սերունդը պիտի շարունակի՞ արդյոք, թե

պիտի կորցնենք մեր մշակույթը, սովորությունները:

Ամենից առաջ պետք է երիտասարդներ ներգրավել, որ շարունակեն զբաղվել միության պահպանման գործով, իսկ դրա համար անհրաժեշտ է կազմակերպել երիտասարդությանը հետաքրքրող միջոցառումներ:

Կարելի է կազմակերպել խաղեր, մրցույթներ, շահողին քաջալերել փոքրիկ նվերներով: Մենք ունենք համբարձման տոն, որի ժամանակ կարելի է վիճակ հանել, կամ երիտասարդների հանդիպումներ կազմակերպել: Ես իհարկե նշում եմ միայն մի քանիսը, բայց դուք ուրիշ շատ միջոցներով կարող եք երիտասարդներին գրավել ձեր շարքերը:

Ինչո՞ւ միության որևէ ձեռնարկ չի ցուցադրվում հեռուստատեսությամբ, ինչո՞ւ որևէ հաշվետվություն, բացատրություն չի տրվում ժողովրդին, ձեր կատարած աշխատանքների և արդյունքների մասին:

Միությունը շատ ակտիվ է մահվան կամ այլ տխուր առիթների դեպքում ցավակցություններ հայտնելու հանգուցյալի հարազատներին և ուրիշ ոչինչ:

Խնդրում եմ Ձեր ներողամտությունը Ձեզ անհանգստացնելու համար:

Վարդուհի Ֆոդուլյան (Աղապարյան), 8-29-2000:

## ՄԱՐՏԻՐՈՍ ԷՔՇԻՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ազնիվ Տիկին,

Ստացա Ձեր 08-29-00 թվակիր նամակը: Չափազանց կգացված և նույնքան էլ երախտապարտ եմ սույնը անձամբ ինձ հասցեագրելու Ձեր անկեղծ կողմնորոշման կապակցությամբ: Անչափ գոհ եմ նաև Ձեր հեղինակությամբ շոշափված տարբեր հանգամանքներին վերաբերող խորհուրդների, դիտողությունների և նկատողությունների համար, որոնք, համոզված եմ, կօգնեն ինձ և իմ գործընկերներին, անհրաժեշտ ուղիներ որոնելու, մատնանշված սխալները ուղղելու (եթե այդպիսիք կան):

Առանց նախաբանի հայտնեմ, որ նամակում թվարկված հարցերը՝ հայրենի մտավորականության (տվյալ դեպքում, երգիչ-երաժիշտների) օրհասական անմխիթար վիճակը և այստեղ, մեր միության գործունեության հետ առնչվող Ձեր մատնանշած, վերջին շրջանի տհաճ դերակատարումները, ինձ համար նույնքան ցավալի երևույթներ են, որոնց բարեհաջող լուծումը օրվա անհապաղ պահանջ է:

Հարգարժան տիկին Վարդուհի. ես կատարելապես պատկերացնում եմ Ձեր հուսմունքը, բաժնեկից եմ ազգի ցավալի ճակատագրով տառապող խղճի անհանգստության: Սա ընդհանրական է պէյլանցի մեր ներկա փաղանգի որոշ հատվածի մոտ, մեր ծնողներից ժառանգաբար փոխանցված ազնիվ արարք: Մենք, ցեղասպանությունից վերապրած սերնդի, քավության նոխազ, հաջորդներն ենք: Մեկ բաժին հասած կյանքի ժամանակահատվածում հարատև պայքար ենք մղել չարյաց անվերջանալի հանգույցների դեմ, ենթարկվել ենք բազմատեսակ զրկանքների: Խղճմտանքի և կարեկցության կողմնակիցներիս համար արտասովոր է, օգնության ձեռք երկարելու փոխարեն, անտարբերությամբ հեռվից դիտելը: Պիտի անենք մեր կարելին: Տա՛ Աստված, որ օր առաջ Հայաստանում վերահաստատվի բնականոն կյանքը: Ներկա վիճակում այդ նպատակի համար պայքարելը համարվում է՝ հորձանուտին հակառակ ուղղությամբ թիավարել, այս տարօրինակ երևույթը անկառավարելի է դարձնում ղեկը, տեղի տալով կանացան այլանդակությունների: Ցանկանք՝ մեր լավագույնը հայրենի ժողովրդին:

Այժմ պատասխանեմ նամակում տեղ գտած հարցերին, իմ կարողության սահմաններում և իմ տեսանկյունից:

Ես, առաջին իսկ հնարավորության առիթով (մեր վարչության հերթական, հաջորդ ժողովին), Ձեր թույլտվությամբ, օրակարգի նյութ կդարձնեմ նամակում



արծարծված հարցերը և քվեարկության կներկայացնեմ դրանք:

1. Մենք, հայրենիքի մտավորականության նյութական օգնություն հասցնելու հարցը երբեք չենք շոշափել մեր ժողովներում: Առաջին հերթին մտածել ենք հայրենիքում բնակվող մեր հայրենակիցներին (պէյլանցիներին) օգնության ձեռք մեկնելու մասին և այդ նպատակով հասցրել ենք անհրաժեշտ ֆինանսական օգնություն, նախորդող տարիներին (ունենք համապատասխան փաստաթղթեր և ձևակերպումներ): Իմ կարծիքով, առաջարկված հարցը պետք է իրականացնել գաղութի համընդհանուր ուժերի մասնակցությամբ, այլ ՀՄ-ի և բարեգործական կազմակերպությունների հետ միասին. այդպես ավելի արդյունավետ և շոշափելի կլինի: Սպասենք ընդհանուրի կարծիքին:

2. Ցավում եմ, որ դուք չեք իմացել դաշտահանդեսի մասին: Այս տարի (և նախորդ տարիներում) Ա. Մուրադյանի «Հայկ. հեռուստատեսությամբ» հայտարարվեց հինգ (5) տարբեր օրերին: Հայտարարվեց նաև Ա. Կվրյանի «Կարկաչ» հեռուստաժամով: Ընդհանրապես, ամեն տարի, դաշտահանդեսը կայանում է օգոստոսի վերջերին կամ Սեպտեմբերի սկզբին: Չմոռանամ հայտնելու, որ այս տարվա ՃՊ-ն տեղի կունենա նոյեմբերի վերջին (կհայտնեմ անպայման):

3. ՊՀՄ-ն հիմնադրվեց 1986 թ. մայիսի 6-ին: Ի միջի այլոց, հիմնադիրներից էր նաև Հարությունը: Տարբեր ժամանակներ տարբեր ուժգնությամբ ցնցումներ ունեցանք և թե ինչպե՞ս կանգուն պահեցինք միության գոյությունը, այդ միայն ներկա վարչության երկու հոգուս է հայտնի: Ես համաձայն չեմ Ձեր որոշ արտահայտությունների հետ, ինչպիսիք են «ոչ մի ծրագիր չունեք», «Ո՞վ է պատասխանատու այս բոլորի համար», «կազմակերպված միջոցառումները հետաքրքիր չեն» և այլն: Ներողամիտ կլինեք, կարճ ձևով պիտի պատասխանեմ: Եթե ծրագիր չունենայինք վաղուց տապալված կլինեինք, այլ բան է, թե այդ ծրագիրը ի՞նչ մակարդակով է իրականացվում, իսկ մակարդակը որոշվում է մարդկանց պատկերացման տարբեր չափանիշներով: Մենք կատարելագործված դերասաններ կամ արվեստագետներ չունենք, իսկ հրավիրվածներն էլ գործում են ըստ իրենց տրամադրություններին: Համեմատական պատկերացում կազմելու համար, ներկա եղեք այլ ՀՄ-ի ձեռնարկներին: Մեր միության ծրագրում կան պարտադիր տարեկան 4 (չորս) ձեռնարկներ. 1) ՃՊ, 2) ցեղասպանության տարելից, 3) Մայրերի օր և 4) դաշտահանդես: Եկող տարվանից ծրագրել ենք ունենալ ամսագիր կամ համապատասխան պարբերաթերթ, որտեղ կշոշափվեն հայրենակիցներին հետաքրքրող տարբեր բաղադրության հարցեր. սա կօգնի ժողովրդի հետ շաղկապվելու գործին:

4. Երիտասարդ կադրեր ընդգրկելու հարցը ծեծվում է համարյա բոլոր մեր հերթական հանդիպումներում: Սա կարծվածից, անհամեմատ, ավելի դժվար է: Ունենք 1 հոգի՝ Վարսեր Մարգարյան, որը 2001-ի սկզբից, մեր հետ կսկսի աշխատել քարտուղարի պարտականությունները ստանձնելով:

5. Ցավակցություն կարդալը հաճելի բան չէ, ինչպես դուք եք նշում, բայց ինչ որ չափով միության ներկայությունը հիշեցնող հանգամանք է:

6. «Ինչո՞ւ միության որևէ ձեռնարկ չի ցուցադրվում հեռուստատեսությամբ» հարցին կարող եմ պատասխանել՝ ուրեմն չենք հասել այդպիսի բյուրեղային բարձրության, ցույց տվեք Ձեր օգնությունը:

7. «Կատարված աշխատանքների մասին բացատրություն տալ, ինչպես նաև, հաշվետվություն» հարցին պատասխանեմ այսպես. յուրաքանչյուր ՃՊ-ին, ամեն տարի ներկայացնում ենք գրքույկ, որտեղ մեծ մասամբ ծանուցումներ են տարբեր մարդկանց կողմից (որոնք ցանկանում են տեսնել, ընթերցել իրենց հայտարարությունները, գովազդերը և այլն): Բացի դրանից այդ տարեգրքույկը պարունակում է նաև այլ տեղեկություններ (ի միջի այլոց, գրքույկին որպես ներդիր կա նաև այն

սխեմատիկ քարտեսը, որը ձևակերպել եմ տարիներ առաջ: Այս տարի ձևափոխության պիտի ենթարկեմ), առ այսօր դա հանդիսանում է միության գործունեությունը ժողովրդին ծանոթացնող եզակի աղբյուրը: Չմոռանամ ասելու, որ յուրաքանչյուր ձեռնարկից հետո, մամուլով անդրադառնում ենք տվյալ ձեռնարկի ընդհանուր գծերին, որոնք անհրաժեշտ են տվյալ թեմային: Ինչպես նշեցի 3.-ում, հունվ. 1-ից ամսագիր կամ պարբերաթերթ ենք լույս ընծայելու:

8. «Քանի գնում, նոսրանում են ձեր շարքերը, ո՞վ է մեղավորը» հարցին մանրամասնություններ չեմ կարող տալ առայժմ, որպես վարչության ներքին հարց: Այնքանը կարող եմ ասել, որ այդ «գորդյան հանգույցը» տանջում է մեկ ավելի քան երկու տարի: Հույսով եմ, տարեվերջում կգտնի իր վերջնական լուծումը: Գիտեք, մենք այստեղ բոլորս էլ կամավոր, ի մի հավաքվածներ ենք, մեր խղճի խայթի թելադրությամբ ընդհանուր գործին մեր մասնակցությունը բերելու համար չենք խնայում մեր աշխատանքը: Իրավասություն չունենք մեր կամքը որևէ մեկին թելադրելու: Յուրաքանչյուրի պարտականությունն է շարժվել ըստ նախատեսված ծրագրի: Կան մարդիկ, որոնք լարվածության չդիմանալով հեռանում են: Այս բոլորը ժամանակավոր երևույթ է, թեև մեր վրա ծանր անդրադարձավ: Ինչպես նշեցի, մինչև տարվա վերջը կլուծվեն հարցերը:

Կարծում եմ, ավելի կամ պակաս չափով, պատասխանեցի Ձեր հետաքրքրող հարցերին:

Մեր աշխատանքներին ծանոթանալու նպատակով, մեր ժողովներին ներկա գտնվելու ցանկության դեպքում, սիրով կընդառաջեմ:

Հարգանքներով՝ Մարտիրոս Էքշիյան, ստորագրություն

Հ. Գ.- Ձեր պատկերացումները համալրելու նպատակով պատմեմ հետևյալը. իմ շրջապատում կան մարդիկ, որոնք առ այսօր կասկածում են մեր միության գործունեությանը՝ ասելով. «Եթե շահ չունես մեջը, ախպեր ջան, էսքան տարի է, հազար ու մի չարչարանքով, ինչի՞ ես գնում հասնում էդ շան սատկած տեղը, մեկի՞ ես հարիֆի տեղ դնում»: Ձեր ներողամտությունն եմ խնդրում բառացի մեջբերման համար: Չմոռանամ ասելու, որ մեր վարչության ժողովներին մասնակցելու համար ես 20 մղոն տարածություն եմ կտրում, նույնքան և հակառակը: Միության համար արածս ծախսը, չհաշված մանր-մունրները, կազմում է տարեկան 850-900 դոլար, սա բազմապատկեցեք տարիների թվաքանակով, կստանաք ընդհանուր ծախսը, կասկածի դեպքում կարող եմ մանրամասնել: Այս բոլորը ընդունեցեք որպես անկեղծ զրույց: Մ. Է.

**Մեր դիտարկումները շոշափված հարցերի մասին:**

**1. Թեկուզ իր սխալ որոշումով կատարված, Մարտիրոս Էքշիյանի միամտորեն, ազնիվ ու անկեղծ պատասխանը, թերություններով հանդերձ, գնահատելի է: Բայց առանց վարչության համաձայնության, մեղայական ոճով վարչության և նրա առանձին ծրագրերի՝ ինչպես ամսագիր հրատարակելու կամ Վարսեր Մարգարյանին վարչության քարտուղար դարձնելու պատասխանատվությունը վերցնել իր վրա սխալ է, և այսօր, այս տողերը գրելիս (փետրվար 10, 2002 թ.) իրականացած չեն, այսինքն ձախողության են մատնված: Վարսեր Մարգարյանը ընդունվել ու հեռացել է վարչությունից:**

**Հետևաբար, միության վերաբերող որևէ հարց միայն վարչության կողմից կարող է քննարկվել լուրջ պատասխանատվությամբ և ճիշտ որոշում կայացնել: Վարչության ընդունած որոշման համաձայն և ըստ ԾԿ-ի, ՎՆ-ում քննարկվող հարցերը անձեռնմխելի են որևէ մեկի համար, եթե վարչության կողմից հատուկ որոշում չկա այդ մասին:**

**Խոսքն ուղղելով տիկին Վարդուհի Ֆողուլյանին, հարցնենք, թե ձեզ ո՞րտեղից են հայտնի, այդ մանրամասն տեղեկությունները, երբ դուք հազվադեպ եք ներկա լինում միության միջոցառումներին և, մանավանդ, Մարտիրոսը, չխորանալով հարցերի մեջ և, թեկուզ, ինձ հետ չխորհրդակցելով, ձեզ ուղղած նամակում միամտորեն գրում է.**

«Մեր միության գործունեության հետ առնչվող Ձեր մատնանշած, վերջին շրջանի դերակատարումները, ինձ համար նույնքան ցավալի երևույթներ են, որոնց բարեհաջող լուծումը օրվա հրատապ պահանջ է»:

**Ցավալի է, որ Մարտիրոսը փոխանակ հերքելու այդ տեղեկությունները, որոնք վարչության խոհանոցինն են, անկախ դրանց տարածողներից, խոստովանություն է կատարում: Իսկ դուք, տիկ. Վարդուհի, որպես առողջ դատողության տեր, այդ տեղեկությունները հաղորդողներին գոնե մի անգամ հարցրեցի՞ք, թե ինչու են այդ բոլորը պատմում ձեզ ու համոզում, որ նամակ գրեք միության քարտուղարին, որպես «միության հայտնի դեմքերից մեկի»ն, որը համարյա չի ճանաչում ձեզ: Դուք Ձեր նամակը կարող էիք ուղղել միության բոլոր հայտնի դեմքերին, այդ թվում՝ Ձեզ լավ ծանոթ ատենապետին, այսինքն վարչությանը, քանի որ նամակի հարցերը միության գործունեության մասին է: Բայց կարծում եմ, որ ինչպես նամակ գրելը, այնպես էլ այն ո՞ւմ հասցեագրելը ևս պատվիրված է եղել Ձեզ:**

**2. ՊՀՄ-ն 15 տարի է, որ գոյություն ունի: Ինչո՞ւ հարգելի Վարդուհի Ֆողուլյանը այսօր է մտածել եւ նամակ գրել Մարտիրոս Էքշիյանին և ոչ թե Վահան Բահարյանին կամ նախքան նամակը գրելը, ինչո՞ւ չի բարեհաճել Վահանի հետ քննարկել այդ հարցերը թեկուզ հեռախոսով, ինչպես եղել է առաջներում: Հիշեցնե՞մ: Միության հոբելյանական 10-ամյակի առթիվ, Ձեր տղայի՝ Հարությունի հուշատախտակը հանձնեցի Ձեզ, իսկ ժամանակ անց Հարությունին հանդիպեցի, և նա անկեղծորեն խոստովանեց, որ եթե իմանար հուշատախտակ էր ստանալու, ներկա կլիներ միջոցառմանը...:**

**Շատ եմ ցավում, եթե Ձեզ ուղղված տողերս տհաճություն պատճառեն: Կյանքում անկեղծությամբ, արդարամտությամբ եմ առաջնորդվել: Չեմ մտածել, կվնասե՞ն «արարքներս» ինձ, թե...**

Ինչպես նշեցի, որոշ հարցերին տեղյակ չլինելով՝ Մարտիրոսը ազնվորեն գրել է դրանց մասին: Բայց ես տեղյակ եմ եւ չեմ կարող թաքցնել, որ բեյլանցիների ընտանիքների ազնվագույն ու մաքուր զգացմունքները պղտորում են Մանվելի նման մարդիկ, իրենց «անմեղ» տեսքով, «մեղրաքաղցր» լեզվով:

3. Զանց առնենք Ձեր նամակի նախաբանը: Միայն նշենք, որ երբեք ՊՀՄ-ն Ձեր լուման չի տեսել իր գործունեության գանձարանում: Դուք ակնարկում եք մտավորականության օգնելու մասին, երբ բոլորովին տեղյակ չեք միության գործունեությանը: Գրում եք, որ դաշտահանդեսի մասին կիրակի օրն եք իմացել, ինչ որ մեկի զանգից, անձի անունն էլ չեք գրում, նա կարող էր զանգել Ձեզ նաև նախորդ օրը և հայտնել այդ մասին:

Միության դաշտահանդեսի առաջին իսկ կազմակերպման օրից բեյլանցիներին պարբերաբար հայտարարվում է դրա հաջորդ տարվա օրը, որը երկար ժամանակ հաստատուն է եղել՝ սեպտեմբերի առաջին կիրակին: Այդ մասին բոլոր բեյլանցիները գիտեն, երևի բացի ձեզանից: Բայց ինչո՞ւ: Արդյոք վարչական Սարգիս Գյոզալյանը Ձեր ազգականը չէ: Դաշտահանդեսի օրվա մասին կարող է իմանայիք նաեւ հեռուստատեսության հայտարարությունից և հայկական մամուլից: «Նոր Հայաստան» օրաթերթում այդ մասին շաբաթներով տպագրվում է ազդագիրը: Դուք թերթ էլ չեք կարդո՞ւմ...: Մեկուսացած կյանք եք վարո՞ւմ: Իհարկե ոչ: Նամակի հարուստ բովանդակությունը ասում է, որ Ձեզ տեղեկություններ բերողներ շատ կան, որոնց հետևելով դուք ևս վարչությունը զրպարտողի անուն եք վաստակում: Այդպիսի էժան պատվերներ մի՛ կատարեք...:

4. Ցավում եմ, որ ներկայանում եք վարչության գործունեությանը անտեղյակ անձ եւ Ձեզ հայտնաբերում եք ծուղակում և զրպարտում եք: Հետաքրքիրն այն է, որ Ամերիկա գալուծ նման, հանկարծ հիմա պարզեցիք, որ միությունը «ծրագիր չունի», կազմակերպած միջոցառումն էլ «բոլորովին հետաքրքրություն չի ներկայացնում»: Միության 10-ամյակը հիշեցնեմ ձեզ, որին ներկա էիք, երբ այն վերածվեց մշակութային երեկոյի՝ բարձր գեղարվեստական բաժինով: Ինչպե՞ս գրեցիք ինձ վարքաբեկող տողերը:

Վարչությունը բազմաթիվ ծրագրեր ուներ: Նրանք, ովքեր Ձեզ չեղեցին ազնիվ հարաբերությունից և համոզեցին գրել սույն նամակը, խոչընդոտեցին դրանց իրականացմանը, փորձեցին քայքայել միությունը: Այդ մարդկանց մասին անկանխակալ գրված է այս գրքում:

5. Դուք տեղյակ չեք միության գործունեությանը և չգիտեք,



որ ամեն տարի ՃՊ-ի ժամանակ, ատենապետը հաշվետվություն է ներկայացնում հայրենակիցներին վարչության տարեկան գործունեության մասին:

6. Եթե վարչությունը անհրաժեշտ է գտնում, միության ձեռնարկը ցուցադրվում է հեռուստատեսությամբ, ինչպես ցուցադրվեց Մեծ Եղեռնի առթիվ կազմակերպված Պարույր Սևակի «Անլռելի Զանգակատուն»ը: Նախքան միջոցառումը Արա Պետրոսյանն ու ես ելույթ ունեցանք Սարգի Մուրադյանի հեռուստածրագրով: Ըստ խոստովանության, Դուք տեղյակ չեք եղել:

Այս հարցում Մարտիրոս Էքշյանը սխալ է թույլ տվել՝ նշելով «...ուրեմն չենք հասել այդպիսի բյուրեղային բարձրության...»

Բավարար է, ես Ձեր նամակի նկատմամբ խիստ մոտեցում ցուցաբերեցի, որովհետև ուզեցի՝ արդարությունը ապահով լինի, և ժողովուրդը չապակողմնորոշվի, միության երկար տարիների ունեցած դրական վաստակին ու հաջողությանը հարգանքով նայի, գնահատի վարչության գործունեությունը: Այդ հաջողությունները՝ վարչականի, վարչության, ոչ թե լինեն թղթի վրա գրված, այլ՝ իրական:

Այս չեչտեցի, որովհետև ատենապետության պաշտոնից իմ հեռանալուց հետո, վարչության գործունեության մեջ սկսեցին կատարվել անթույլատրելի արարքներ, որոնց մի մասը այս կամ այն կերպ արծարծված են Ձեր նամակում:

ա. Վարչությունը սկզբնական շրջանում ծաղկեպսակ էր պատվիրում բեյլանցիների հանգուցյալների թաղման արարողության ժամանակ: Երբեմն, տեղեկացված չլինելով մահացողի մասին, ծաղկեպսակ չէր պատվիրում, հետևաբար արդարացի դժգոհություններ առաջացան ժողովրդի շրջանում, թե ինչո՞ւ մեկի համար պատվիրվում է, մյուսի համար՝ ոչ: Այս պատճառով վարչությունը որոշեց հայրենակցի մահվան կապակցությամբ միայն ցավակցական ներկայացնել նրա տեսակցության ժամանակ:

Վարչությունից իմ հեռանալուց հետո, Մարտիրոս Քեջեջյանի՝ Նուբար Մխսի-Գևորգյանի ազգականի, մահվան կապակցությամբ ՊՀՄ-ի վարչության անունից ցավակցական էր տրված մամուլում[1] Մանվելի միջոցով, որը ՊՀՄ-ի վարչության որոշման խախտում էր արդեն: Հանգուցյալների մեջ «ընտրյալներ» չկան, որ վարչությունը մեկի համար ծաղկեպսակ պատվիրի, մյուսին ցավակցական կարդա:

ՊՀՄ-ի վարչության կողմից դարձյալ մի անզգուշտ ցավակ-

1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Ուրբաթ, Դեկտեմ. 15, 2000, թիվ 223:

ցություն էր տրված Հանգուցյալ Հակոբ Գասպարյանի մահվան առթիվ[1]: Երբ զանգահարեցի Մարտիրոս էքչիյանին և նշեցի այդ մասին, Մանվելի ինքնագլուխ գործից ինքն էլ դժգոհեց: Եթե այսպես շարունակվի, կարճ ժամանակում մանվելները կփոշիացնեն ՊՀՄ-ի հեղինակությունն ու հարգանքը համայնքում:

բ. Ինձ զարմացրեցին նաև Թեքեյան մշակութային միության Կենտրոնական վարչության անդամ՝ դոկտ. Գևորգ Քեշիշյանի «Պեյլանի Հայրենակցական Միության Գովելի Մեկ Ձեռնարկին Առթիվ» լույս տեսած հոդվածում[2] «պատվերով» գրված որոշ մտքեր, որոնք թույլատրելի չեն այդպիսի ազգային-հասարակական գործչին, եթե նա ապակողմնորոշված չէ:

Հավաստի աղբյուրներից ինձ հասած տեղեկությունների համաձայն, հարգելի հեղինակը Փայլակ Ահարոնյանի և Մանվելի հետ մեկտեղ գտնվել են Նուբար Միսսի-Գևորգյանի տանը, որտեղ Մանվելը փորձել է պարտադրել հեղինակին՝ իրեն ցանկալի ոճով գրվի հոդվածը: Իհարկե պարտադրանքը միանշանակ չի ընդունվել հոդվածագրի կողմից:

Մարտիրոս էքչիյանի, որպես վարչության նորընտիր ատենապետի, վրդովմունքը տեղին ու հասկանալի էր գրված հոդվածի կապակցությամբ: Նախքան լույս ընծայելը պետք է համաձայնեցվեր վարչության ատենապետի հետ: Հոդվածի որոշ հարցերի շուրջ Մարտիրոսը վերապահորեն խոսեց, թե ինչպես կարելի է մի քանի կտոր փայտերով սոսնձված Բեյլանի զանգակատան «ձեռակերտ կրկնօրինակը» ներկայացնել գլուխգործոց «Պեյլանցի վաստակավոր արվեստագետ Մանվել Մարաշլյանի»: Սա չափ չեղավ ոչ մասնագետի համար, ի՞նչ անուն տալ իսկական արվեստագետներին...: Եթե այս ձևով են ձգտում «սվաղել» Մանվելի անցյալը և համայնքում «լավ» կարծիք ստեղծել նրա մասին, հակադրվում են իրականությանը, վաղ, թե ուշ կեղծիքը պարզվում է:

Կարծում ենք, «վաստակավոր» կոչումը չի կարելի շռայլել տեղի-անտեղի, մանավանդ տվյալ դեպքում՝ մարդուն գովաբանելու հասարակության մեջ, նրա եսասիրությանը ու փառասիրությանը տուրք տալու նպատակով:

Ժողովրդական առածն ասում է. «Ագռավին սիրամարգի փետուրներ կպցնելով, սիրամարգ չի դառնա»: Կեղծ գովասանքներով մարդու հեղինակությունը չի բարձրանում: Դա նման է թղթե դդյակի, որը զեփյուռն անգամ կարող է փլել, մանավանդ, երբ

1.- Տե՛ս «Նոր Հայաստան», Հինգշ., Ապրիլ 19, 2001, թիվ 72:
2.- Տե՛ս «Նոր Կեանք», թիվ 24, մայիս 31, 2001:



համայնքը տեղյակ է ապաշնորհի գործունեությանը:

գ. Դեռ 7-01-91 թվակիր նամակով, որպես ՊՀՄ-ի վարչության ատենապետ, դոկտ. Գևորգ Քեշիշյանին բավարար տեղեկություններ հաղորդեցի ՊՀՄ-ի մասին և ԾԿ-ի կարևոր հոդվածներն էլ ուղարկեցի նրան 4 էջի վրա՝ խնդրելով նախագահել կամ հովանավորել միության ԾՊ-ն: Նույնիսկ պատասխան չստաց: Ի՞նչ փոխվեց, որ նա այսօր գեղեցիկ հոդված է գրում ՊՀՄ-ի մասին, որը իհարկե ուրախալի է, բայց ավելի գնահատելի կլիներ, եթե հոդվածագիրը չկենտրոնանար անհատի վրա, և նրա մասին նյութը մատուցվեր իրականությանը համապատասխան:

դ. Ինձ զարմացրեց նաև «Նոր Օր»ում[1] ««Նոր Օր»ի բարեկամներու շրջանակ-նուիրատուներու ցանկ»ում ՊՀՄ-ի անունը, որը թերթին նվիրել է 200 դոլար:

ՊՀՄ-ի ԾԿ-ով Միությունը կարող է գործակցել կուսակցությունների հետ հանուն համազգային և պետական շահերի: Բայց նա հանուն ինչի՞ պետք է նվիրատվություն անի կուսակցական թերթին, երբ հայրենակիցները ծով կարիքի մեջ են Հայաստանում: Վարչությունը, վերջերս առանց ծանր ու թեթև անելու հարցը, մոտ 9000 դոլար բաժանեց Հայաստանում (գումարը հավաքվել էր 4-5 տարվա ընթացքում, 5-10 դոլարի նվիրատվությամբ)՝ մի քանի հոգու քմահաճույքին զոհ գնալով: Նկատի առնվե՞ց, որ այդ դրամները լոսանջելեսահայ մեր հայրենակիցները նվիրաբերել էին ատենապետության ժամանակ՝ տեղում Միության կարևոր ծրագրերի կենսագործման, այդ թվում համամասնորեն Հայաստանի հայրենակիցներին օգնելու համար:

Լինելով «Նոր Օր»ի թղթակիցը, հարգանք ունեմ նրա խմբագրական կազմի և խմբագրի նկատմամբ, բայց ՊՀՄ-ի վարչությունը պետք է իմանա իր գործունեության շառավիղը և չպետք է ենթարկվի կողմնակի ազդեցությունների՝ Նուբար Միսսի-Գևորգյանի և այլոց: Նա չպետք է շեղվի իր ուղուց, որը մենք տարիներով և սերունդներով դարբնել ենք:

Վերջաբանը ավարտում եմ ինձ հաջորդող, վարչության նոր ատենապետ ընտրված Մարտիրոս էքչիյանի 12-20-2000 թ. թիվ 135 ՎՆ-ի արձանագրության Հ.ԳՐՈՒԹՅԱՄԲ, որի մասին տեղեկություն չունեի: Շնորհակալություն եմ հայտնում նրան, որ մեր համատեղ գործունեության ընթացքում, սկզբնական շրջանի թյուրիմացություններով հանդերձ, եղավ գաղափարակից, ազնիվ ու անկեղծ գործընկեր, խորապես ընկալելով միության գործու-

1.- Տե՛ս «Նոր Օր», Շաբաթ, Մարտ 23. 2002, էջ 6:

նուլթյան կարևորությունը՝ օտար ափերում Հայապահպանման և Հայրենիքի կողքին գտնվելու Հարցերում:

Գրությունը կարդացի (տե՛ս հավելված էջ 514-516): Զնայած Համամիտ չեմ արտահայտած որոշ մտքերի Հետ, բայց չեմ վերլուծում դրանք, քանի որ գրությունը անկեղծ գնահատականի խոսք է մեր երկար տարիների Համատեղ աշխատանքի մասին: Իհարկե, նա որոշ վերապահումով է գրել այն, չի նշել տՀաճություն սերմանող անուններ, բայց Հոգ չէ, այդ անունները շատ ու շատ անգամներ են Հանդիպում իմ ընդարձակ խոսքում: Հետևաբար դրանով գրության արժեքը չի նսեմանում, և չաՀեկանությունից ելնելով ընթերցողին ենք ներկայացնում այն ամբողջությամբ:

## ԱՐԴԱՐԱՄԻՏ ԱՆԴՐԱԴԱՐՁ ԱՏԵՆԱՊԵՏԻ ԱՆՏԵՍՎԱԾ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԻՆ

Վերջին տարիների ընթացքում ՊՀՄ-ի ներվարչական փոխհարաբերություններում նկատելի դարձան որոշ տարաձայնություններ, որոնք ժամանակի ընթացքում աստիճանաբար սրվեցին և վերածվեցին փոխադարձ անհանդուրժողականության: Ստեղծված կացության գլխավոր պատճառն էր համատեղ աշխատանքով քննարկվող հարցերի նկատմամբ առաջացած մոտեցումների և համոզվածությունների տարբերությունը, որոնց ընդհանուր հայտարարի բերելն անհնարին էր:

Ատենապետ Վահան Բահարյանն աշխատեց օրենքի ուժով կարգի հրավիրել հանցավորներին և վերականգնել բնականոն անդորրությունը, սակայն հակառակ կողմն, իր հերթին, դիմեց արտաքին ուժերի օգնությանը, որոնց կորակցությունը կործանարար ազդեցություն ունեցավ վարչության անդամների հոգեվիճակի վրա,որի պատճառով առաջացան տարբեր շերտավորումներ:

Անբնական այս երևույթն ավարտվեց 2000 թվականի վերջավորության՝ վատթարագույն արդյունքով. Վարչությունից հեռացան նրա գլխավոր ուժերը՝ Վահան Բահարյանը (ատենապետը) և Արա Պետրոսյանը (փոխատենապետը), իսկ ավելի ուշ՝ երկու հոգի ևս կրճատեցին իրենց մասնակցությունը: Այս բոլորը տեղի ունեցան ընդհանուր վրդովմունքի գերլարված պայմաններում, որը ցավ պատճառեց թե՛ գնացողներին և թե՛ մնացողներին:

Այստեղ ես ուզում եմ խոսել վերոհիշյալներից Վ. Բահարյանի մասին, տարիների ընթացքում վարչությունում կատարած անփոխարինելի աշխատանքի մասին: Տարբեր առիթներով արտահայտվել եմ, որ նրա անունը սերտորեն կապված է մեր միության գոյության և գործունեության հետ՝ սկզբնավորումից առ այսօր:



Որպես երկարամյա գործընկեր, խղճիս պարտքն եմ համարում ստվերի տակ մնացած մանրամասնությունները հանրության սեփականության հանձնելը:

Առանց նախաբանի կարող եմ ասել, որ Վահանը օժտված է հիմնական այն հատկանիշներով, որոնք անհրաժեշտ են նման կազմակերպություններ ղեկավարելու հարցում , ինքը ներկայանալի և տպավորիչ անձնավորություն է իր գրագետ կեցվածքով, աշխատասեր է ընդհանուր գործի սիրույն:

1986-ին միության հիմնադրման սկզբից, նա անսակարկ անաչառությամբ նվիրվեց իր պարտականություններին (մեր աշխատանքը շաղկապված լինելու պատճառով միշտ միասին էինք): Նորակազմ միության ներքին օրինաչափությունների, նրա ԾԿ-ի մշակման, պատասխանատու թղթակցությունների և նման հարցերի ասպարեզում նրա ունեցած մասնակցությունն իր ուրույն տեղն ունի այդ ժամանակահատվածում (հաճախակի կզալի ժամեր էինք հատկացնում միասնաբար, անհետացել էին նախկին ճառախոսները ): Այսպես շարունակվեց հետագա տարիներին:

Հաճախակի ականատես եմ եղել նրա բովանդակալից ելույթնորին, երբ հնարավոր առիթները ճշգրտորեն օգտագործելով, միության շահերն արտահայտող խնդիրները ներկայացրել է վերադաս մարմինների ուշադրությանը: Այս երևույթներն, անկասկած, օգտակար հանդիսացան մեր միության հեղինակությունը բարձրացնելուն նման կազմակերպությունների համակարգության ոլորտներում :

Կարծում եմ արդարացի կլինի նաև նշել, որ միության հիմնադրումից մեկ տարի անց կայացած վերընտրության ընդհանուր ժողովում, կազմակերպված դիտումնավոր խարդավանքի հետևանքով Վահանը դուրս մնաց վարչության կազմից: Հետագայում, 1989-ի ապրիլին, վարչության որոշման համաձայն, Գ. Դովլաթյանի և Ա. Հեքիմյանի խնդրանք-հրավերով վերադարձավ և ստանձնեց վարչության ատենապետի պարտականությունը:

Վահանի անկեղծ և արդարադատ վրաբերմունքը հաստատող երկու դեպքեր եմ հիշում. հիմնադիրների (1986 թ.) ընդհանուր ժողովից դուրս գալով, մի պահ մտածում էի հրաժարվել հետագա մասնակցությունից աշխատանքային ծանրաբեռնվածությանս պատճառով: Վ. Բահարյանը առաջ նետվելով (դեռևս, հազիվ էինք իրար ճանաչում) այնպիսի ոգևորիչ և խրախուսող ճառ կարդաց գլխիս, որ տեղնուտեղը կղզացի.նրա աչքերում և սրտի խորքում եղած անկեղծ ազգասիրությունը ցնցեց ինձ:

Միության 10-ամյակի առթիվ (երբ ես բացակայում էի վարչության կազմից), Վահանը իր անկեղծ և արդարամիտ ըմբռնումով,

գնահատելով իմ անցյալ տարիների աշխատանքը, ինձ պատվո տախտակ էր հատկացրել: Անկեղծ ընկերոջ անբիծ վերաբերմունքն ինձ ստիպեց վերադառնալ և վերսկսել հանրօգուտ աշխատանքը:

Վ. Բահարյանի ներդրած անշահախնդիր գործունեությունը, նրա բազում կոհողություններով իրականացած մեր միությունը, այսօր գտնվում է այլ կազմակերպությունների շարքին իրեն հատուկ հեղինակությամբ:

Ըստ ինձ, մեր ներկա վարչության պարտականությունն է, նկատի ունենալով և գնահատելով Վ. Բահարյանի ատենապետության երկար տարիների ընթացքում ներդրած բեղուն աշխատանքը, ինչպես նաև նրա 15-ամյա գործունեության հանգամանքը, նրան շնորհել խոստացված «Պատվո Ատենապետ»ի կոչումը:

Վերոհիշյալը իմ անձնական մոտեցումն ու գնահատանքն է:

Պէյլանի Հայրենակցական Միության
Վարչության ատենապետ՝ Մարտիրոս Էքշիյան
(ստորագրություն):
16 հունվար, 2001: Միության կնիքը:

Սույնը հանդիսանում է ՊՀՄ-ի վարչության դեկտ. 20, 2000 թ. No 135 արձանագրությունից բխած իմ մտորումները:
Ս. Է.

Ազգային գործունէութիւնը մարդուն Աստծուց տրված կոչում չէ, ձեռք բերված շնորհք, նվիրում է: Այդ պարգեւը մարդը բազմապատկում է, երբ գիտակցում է որպես պարտականութիւն եւ գործադրում անհատույց հայրենիքի ու ազգի համար:

Հայ անհատը այսպես է կերտում իր պատմութիւնը:

Հայը չպիտի ուրանա իր հայութիւնը, ազգային պատկանելութիւնը, ինչ պայմաններում էլ գտնվի: Նա պիտի հայտարարի հպարտութեամբ, որովհետեւ այդ անունը չմոռանալու պարտադրանքով մեր նախահայրերը ժառանգել են մեզ՝ գոյատեւելու ճանապարհին:

Ես որտեղ էլ եղա, որպես հայ միշտ գլուխս բարձր պահեցի, իմ հայ անունով հպարտացա և ապրում եմ հայ ազգիս համար:



## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Ալիշան Պայրամյան, Ալեքսանդրետի Սանջաքի հարցը և Միջազգային դիվանագիտութիւնը 1936-39 թթ., Երեւան, 1998 թ. «Նոյյան Տապան» հրատարակչութիւն:
2. «Ասպարեզ» Պաշտօնաթերթ, Հ. Յ. Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի, Լոս Անջելես:
3. «Բնօրրան». ՀՀՄԽ-ի հանդես, Երեւան:
4. «Հայ Կեանք» շաբաթաթերթ, Լոս Անջելես:
5. ՀՀՄԽ-ի Կանոնադրութիւն, Երեւան, 1998 թ.:
6. «Հայրենիքի Ձայն» շաբաթաթերթ, Երեւան, 1987թ.
7. «Հայք» օրաթերթ, Երեւան:
8. «Մասիս» շաբաթաթերթ, պաշտօնաթերթ Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի, Լոս Անջելես:
9. «Նոր Կեանք» շաբաթաթերթ, Լոս Անջելես :
10. «Նոր Հայաստան» Անկախ օրաթերթ, Լոս Անջելես:
11. «Նոր Օր» շաբաթաթերթ:
12. «Նոր Օր Եռօրեայ», Ռամկավար Ազատական Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի պաշտօնաթերթ, Լոս Անջելես:
13. Վ. Բահարյան, Աքսորյալի Գողգոթան, Երեւան, 2001 թ. «Զանգակ-97» հրատարակչութիւն:
14. Վ. Բահարյան, Տարունակվող Մեղեդի, Երեւան, 2001 թ. «Զանգակ-97» հրատարակչութիւն:
18.- «California Courier»:
15. «Փարոս» երկշաբաթաթերթ, Լոս Անջելես:
16. «Armenian Observer»:
17. «California Courier»:
18. International Armenian Magazin, USA:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

*ԲՀԿ – Բեյլանի հուշարձան-կոթող:*
*ԲՀԿՀ – Բեյլանի հուշարձան-կոթողի հանձնախումբ:*
*ԽԾԲ – Խնամի-ծանոթ-բարեկամ:*
*ԽԾԲ – Խնամի-ծանոթ-բարեկամ:*
*ԾԿ – Ծրագիր-կանոնագիր:*
*ԿԳԲ – Պետական անվտանգության բյուրո (KGB):*
*ՀՀՄԽ – Հայաստանի հայրենակցական միությունների խորհուրդ:*
*ՀՄ – Հայրենակցական միություն:*
*ՀՄՄ – Հայրենակցական միությունների միացյալ մարմին:*
*ՃՀ – Ճաշկերույթ-հավաքույթ:*
*ՃՊ – ճաշկերույթ-պարահանդես:*
*ՄՀՄ – Մարաշի հայրենակցական միություն:*
*ՊՀՄ – Պէյլանի հայրենակցական միություն:*
*ՎՆ – Վարչության նիստ:*
*IRS - Internal Revenue Services*



# ՀԱՎԵԼՎԱԾ




Ստացականի լուսապատճենը:


SARKIS SOGHANALIAN
P.O. BOX 522613
MIAMI, FLORIDA 33152

Dec/18/ 196

PAY TO THE ORDER OF BEYLAN COMPATRIOTIC UNION $ 100,000.00

One Hundred Thousand only DOLLARS

701 BRICKELL AVENUE
MIAMI, FLORIDA 33131

MEMO Donation

Չեքի լուսապատճենը:

Ա.Մ.Ն., Լոս Անճելըս. Գալիֆորնիա.

Յուլիս 16, 1986.

Պատուարժան Յանձնախումբի Անդամներ,
Մալաթիոյ Նահատակներու Յուշարձան-Կոթողի՝ Մայր Հայրենիքի Մէջ՝

Եղբայրական ողջոյններ ձեր բոլորին:

Այսու կուզենք տեղեկացնել ձեզի թէ Ա.Մ.Ն.ու Լոս Անճելըս քաղաքի մէջ հիմնուած Մալաթիոյ Հայրենակցական Միութեան վարչութիւնը համաձայնութիւն ընծայած է Սարգիս Գ. Կիւլլէճեանի, իր Մայր Հայրենիքի այցելութեան առիթով, որպէսզի ան "յուշաքար" մը զետեղել տայ Յուշակոթողի Մալաթիոյ Նահատակներուն շիրիմին վրայ, ի գնահատութիւն անոր աշխատանքներուն՝ Յուշարձան-կոթողի:

Այս "յուշաքարը" պէտք է պարունակէ գրութիւն մը թէ ան նուիրուած է:- Ա.Մ.Ն. Լոս Անճելըս քաղաքի Մալաթիոյ Հայրենակցական Միութեան կողմէ:

Ձեր աջակցութիւնը հայրենակից Կիւլլէճեանի ձեռնարկին շատ պիտի գնահատուի:
(Ծախսերը պիտի հոգացուին մեր կողմէ):
Ի դիմաց՝ Մալաթիոյ Հայրենակցական Միութեան, հիմնուած Յունիս 7, 1986 Ա.Մ.Ն.ու Գալիֆորնիա Նահանգի Լոս Անճելըս քաղաքի մէջ:

Ատենապետ՝ Գանձապահ՝

[signature] [signature]

Նորայրի կողմից ԲՀԿՀ-ին ուղարկված նամակի լուսապատճենը:





Տվչության մեդալի նկարը:

## ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԹԵՐԹԻԿ

BEYLAN COMPATRIOTIC UNION

**VAHAN BAHARIAN**
7310 KESTER AVE., APT. #101
VAN NUYS, CA 91405, USA
PHONE : (818) 997-8845

Թվական ____________

| ԱՆՈՒՆ | ԱԶԳԱՆՈՒՆ | ՀԱՅՐԱՆՈՒՆ | |
|---|---|---|---|
| ____________ | ____________ | ____________ | ____________ |

Ծննդավայրը ____________ Ծննդյան Թիվը ____________

Հոր Ծննդավայրը ____________ Ծննդյան Թիվը ____________

Մոր Անունը և օրիորդական ազգանունը ____________

Մոր Ծննդավայրը ____________ Ծննդյան Թիվը ____________

Ընտանեկան դրությունը Ամուսնացած ☐ Ամուրի ☐

Տիկնոջ Անունը ____________ Օրիորդական Ազգանունը ____________

Ծննդավայրը ____________ Ծննդյան Թիվը ____________

Զավակները (Անուն Ազգանուն) ____________ Ծննդավայրը ____________ Ծննդյան Թիվը ____________

1 ____________

2 ____________

3 ____________

4 ____________

5 ____________

6 ____________

Մասնագիտությունը ____________ Պաշտոնը ____________

Կրթական մակարդակը՝ Բարձրագույն ☐ Թերի-Բարձրագույն ☐ Միջնակարգ ☐

Ավարտած Թվականը ____________

Տան Հասցեն ____________

Վարձու ☐ Սեփական ☐ Տան Հեռախոսի Թիվը ____________

Աշխատանքի տեղի հասցեն ____________

Աշխատանքի տեղի հեռախոսի թիվը ____________

Թվական ____________ Ստորագրություն ____________

*Մարդահամարի թերթիկի լուսապատճեն։*



BEYLAN COMPATRIOTIC UNION

Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

Թվական 11-18-91

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
## ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի Նախագահ

Պեյլանի Հայրենակցական Միության Վարչությունը ջերմորեն շնորհավորում է Ձեզ Հայաստանի Անկախության և Ձեր՝ Անկախ Հայաստանի առաջին նախագահ ընտրվելու առթիվ։

Հայրենիքը ապրում է դժվարին օրեր անտեսապես և քաղաքականապես և այդ դժվարին օրերին դուք ստանձնելով չափազանց պատասխանատու այս պարտականությունը, որը ժողովուրդը վստահեց Ձեզ, համոզված ենք, որ Ձեր ամբողջ ուժն ու եռանդը չպիտի խնայեք մեր ժողովրդի հույսն ու հավատքը ամրապնդելու և ստեղծելու տնտեսապես և քաղաքականապես հզոր մի Հայրենիք-Հայաստան, որը իր ուրույն տեղը գրավի Աշխարհի պետությունների միջազգային ընտանիքում։

Մենք մեր ամբողջ հնարավորությունները պիտի օգտագործենք օգնելու մեր Հայրենիքին արագացնելու համար նրա վերականգնումը։

Մենք կոչ ենք անում բոլոր կուսակցություններին և կազմակերպություններին համախմբվել Ձեր շուրջը, որպեսզի միասնական ուժով հաղթահարենք Ձեր առջև ծառացած դժվարությունները։

Մաղթելով Ձեզ քաջառողջություն, ցանկանում ենք ավելի մեծ ուժ ու կորով մեր պատմության այսօրվա դժվարին արահետներով Հայրենիքի ցավերը ամոքելու և լուսավոր ապագա ստեղծելու մեր ժողովրդի համար։

Լավագույն մաղթանքներով
Ատենապետ՝ Վահան Բահարյան

*Լևոն Տեր-Պետրոսյանին ուղարկված հեռագրի լուսապատճեն։*

Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական October 31, 1991

Attorney Neal Sonnet
2 S. Biscayne Blvd. Suite 2600
Miami, Florida, 33131-1802

TO WHOM IT MAY CONCERN :

On behalf of 413 families of Beylan Compatriots, we the Committee Members of this union, are writing to you to express our displeasure in finding out that Mr. Sarkis Soghanalian, the son of our President for life, an himself the most respected and liked benefactor of the Armenian nation, has been taken under federal custody and that the judge has refused setting a bail bond for him before the judgement on Dec. 20, 1991.

Sarkis Soghanalian is a person well known to almost each and everyone of our compatriots as they have enjoyed his moral and financial assistance for any activity undeertaken by the Union whether it was cultural, educational and or humanitarian purposes.

We would like you to please relay to the judicial authorities that we believe Sarkis Soghanalian is not guilty of the charges alleged to him.

It will be only fair that he is allowed to join his family and the care and attention of his mother, wife, son, daughter, brothers, sister, grandsons, nephews and nieces.

Very truly yovrs,

Krikor Dadelian, Secretary.          Vahan Baharian, President.

*Սարգիս Սողանալյանի համար ուղարկված նամակի լուսապատճենը։*



Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական April 8, 1992

Attorney Neal Sonnet,
c/o Mrs. Shirley Soghanalian,
Pan Aviation, Inc.
Miami, Florida.

Dear Mr. Sonnet,

The enclosed clipping in Armenian is from the most widely circulated weekly of the Armenian Diaspora, i.e. NOR GYANK, meaning New Life.

The writer of the article is Mr. Vahan Baharian, the Chairman of the Committee of Beylan Compatriotic Union, whose President for life is Sarkis' mother, Mrs. Maritza Soghanalian.

I was requested by Mr. Baharian to translate the article into English to send copies to you for future use if needed, to Mrs. Shirley Soghanalian and to an Armenian weekly the "Observer" which is published in English.

Mr. Baharian wishes to advise you that the Committee after discussing the article in Armenian, decided to have it translated into English and sent to you.

We wish you the best in your efforts to defend and take care of our great and dear benefactor and hope that your endeavors on his behalf will bear fruit and have our dear Sarkis returned to his family, to his compatriots and to the society where he rightfully belongs.

Yours,

NORAYR MELKISETIAN.

V. Baharian

4-12-92

*Սարգսի փաստաբան Սոնետին ուղարկված նամակի լուսապատճենը։*

**IN THE DEFENSE OF NATIONAL BENEFACTOR MR. SARKIS SOGHANALIAN.**
**The Great Compatriot, the Great Benefactor,**
**The Great Patriot.**

Few persons in this world become fortunate to whom destiny smiles and makes them successful persons and permits them to occupy their worthy place in the community. As well, few are destined to reach heights of success by their own personal efforts and toil becoming a part of the public and incorporating themselves in its entirity. By living with its life trend, caring for its worries, its joys and sorrows and consequently merit its sympathy, respect and honor.

It is to this second category that Mr. Sarkis Soghanalian belongs, the man born from the bosom of the Armenian nation and who has obtained the respect and honor of the highest circles and of the media of the american society but ironically, those who respected and honored him accused him lately of wrong doing in order to cover up for those persons in the highest, untouchables, liable to indictment and sentencing rather than the Great Benefactor of the Armenian nation.

In my opinion, laws and legislation of each country has been so flexibly written and accepted that always the individual is at fault and guilty, regardless of his innocence, when counter balanced to the interest of the government. I am emphasizing this point because the same opinion was expressed years ago by Napoleon Bonaparte. After he became emperor, when the imperial constitution was composed and presented to him, he returned it to the commission saying the constitution should be composed in such a flexible launguage that the Authorities can always make use of it for the protection of its interests.

And why should Sarkis Soghanalian be the accused ? Going back a little time to the past, let us refresh our memories of the facts and events.

When the Iran/Iraq war started, U.S.A. interests required that Iran be the losing party in the conflict. As it was well known to the U.S.A Authorities that Sarkis Soghanalian was a good friend of Saddam Hussein, he was given full authority and a free hand (within the limits of the law) to use his good offices and expertise to supply Iraq with all necessary war materiel. And so it happened. I remember seeing a T.V. interview (many do as well) I think on Channel 2, during which the question was put to Sarkis Soghanalian as to the value of the quantity of war materiel supplied to Iraq and what was his profit-sharing in the whole deal. He replied that he had sold one billion dollars worth of arms and his share was 10% of the total worth. This was then. And now ?

When few years ago the Iran/Contra affair popped out and key position persons involved in it were investigated to pin-point the culprits, which took years, but without concrete results, it was followed by the Gulf War and the victory of the Allies over Iraq. Sarkis Soghanalian happened to appear on the opposite pole. It was then that he was made to become the scapegoat of the Iran/Contra affair instead of the real culprits. With the sentencing of Sarkis Soghanalian, the Administration, the Pentagon and the C.I.A. decided that that chapter of foreign politics was closed.

My personal acquaintance with Sarkis Soghanalian has been most recent, December of 1990, when Sarkis Soghanalian sponsored our Beylan Compatriotic Union's annual banquet. During our conversation

*Սարգիս Սողանալյանի փաստաբանին ուղարկված հոդվածի լուսապատճեն (2 էջի վրա)։*



when the subject became 'arms sale', he said that not one piece of arms was sold by him without the proper and legal documents were obtained for export by the government Agencies.

I noticed at our banquet that he, as a human being, was a sensitive person. When in his hotel room we were getting ready to go to the banquet hall, he told me that he won't be able to stay long with us because he had an important telephone conversation to make at 9 o'clock and he should be in his hotel room at that hour. I replied that we would be pleased to drive him to his hotel whenever he wished. When Sarkis Soghanalian entered the banquet hall, the joy and enthusiasm of the audience had no limit. Seeing the teenagers dance to the music of armenian folklore, I could notice in his expression that he was overjoyed and may be in his silence contemplating that the new generation is growing in the armenian traditions and virtues. After my lecture, he told me that he was very touched by the knowledge that the concerns of the motherland was of first priority to us as it was for him and others. He went from table to table meeting and conversing with his compatriots who considered it to be a privilege. Then in appreciation to our efforts of keeping up with our traditions and ancestral virtues, he donated U.S. $ 10,000 on the spot and hoped that we would continue our efforts. He reiterated his pledge of $125,000 to Beylan Compatriotic Union regretting it could not have been fulfilled as yet because of unforseen reasons and unexpected business developments. He left the banquet hall at 2:30 a.m. telling me that he could not leave earlier as he thoroughly enjoyed the warmth of the entourage.

In reality, Mr. Sarkis Soghanalian is a national great benefactor and the man of his nation. That man, who never did put a difference between the armenian political parties and organizations when reaching out to help them, a fact that elevated his value, respect and honor as an armenian, a benefactor and a patriot.

No one has been more helpful and useful to the Armenian nation after the earthquake by disposing himself, his staff and aircrafts to uplift the thousands of tons of aid to Armenia.

Therefore, it is time that we all raise our voices, help the Attorney of Sarkis Soghanalian, Mr. Neal Sonnet, by whatsoever means possible, for the return of Sarkis Soghanalian to his status to continue his beneficial and patriotic efforts and activities for the preservation and continuity of our nation.

/than him

Translated by :
N.M.

VAHAN BAHARIAN
CHAIRMAN,
BEYLAN COMPATRIOTIC UNION.

VAHAN BAHARIAN
7310 Kester Ave.Apt#101
Van Nuys, CA 91405
Phone: (818) 997-8845

Թուական *4-21-92*

OFFICE OF ARMENIA'S REPRESENTATIVE
122 C STREET #360
WASHINGTON, D.C. 20001

Մեծահարգ Դր. Ալեքսանդր Արզումանյան

Պեյլանի Հայրենակցական Միության Վարչությունը իր միջոցներից հատկացնում է $1000 Հայաստանի հյուպատոսարանների հիմնադրման ֆոնդին:

Բնականաբար մեզ համար շատ ավելի հաճելի կլիներ, եթե կարողանայինք ավելի շատ ուղարկել ի թարգմանություն մեր Հայրենիքի բարգավաճման եվ իր տեղը գտնելու համար ազգերի միջազգային ընտանիքում:

Անկասկած է, որ սփյուռքի օգնությունը Հայրենիքին պիտի լինի անընդհատ մինչեվ որ մեր Հայրենիքը կարողանա ոտքի կանգնել եվ մեր ժողովրդի փնտրած տնտեսական վիճակը բարելավվի:

Մենք ուշի-ուշով հետեվում ենք մեր Հայրենիքում տեղի ունեցող հսկայական փոփոխություններին եվ մեծ հույսով սպասում ենք մոտիկ ապագայում տեսնել նրա բարգավաճումը, իհարկե, չմոռանալով մեր օգնությունը արագացնելու այն:

Ուրախ ենք, որ այսօր ունենք Անկախ Հանրապետություն: Պետք է այն պահպանենք աչքի լույսի պես իրականացնելու համար համայն Հայ Ժողովրդի վարդագույն երազանքները:

Հարգանքներով՝
Վարչության Ատենապետ՝ [signature] Վահան Բահարյան

*Վաշինգտոնում՝ ՀՀ հյուպատոսարանին ուղարկված նամակի լուսապատճեն:*



VAHAN BAHARIAN
7310 Kester Ave.Apt#101
Van Nuys, CA 91405
Phone: (818) 997-8845

Թուական *4-21-92*

Արցախի Գերագույն Խորհրդին
Արցախի ժողովրդին
Հայաստանի Հանրապետության Նախագահ Լեվոն Տեր-Պետրոսյանին
Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհրդին
Հայաստանի ժողովրդին

Պեյլանի Հայրենակցական Միության Վարչությունը իր խորին ցավակցություններն է հայտնում համայն հայ ժողովրդին Նորընծա Արցախի Անկախ Հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահ Արթուր Մկրտչյանի չարանենգ սպանության առթիվ 1992 թ. ապրիլի 14-ին մութ ուժերի կողմից, եվ ցասումով է լցված ամեն մի հայրենադավ արարքի դեմ, որը թուլացնում է Ազգային-Ազատագրական շարժումը Արցախում, ավելի եվս բեժացնելով հայ եվ ադրբեջանցի ժողովուրդների առանց այն էլ բեժացած թշնամությունը, խանգարելով միջազգային մարմինների խաղաղության հաստատման երթին Արցախում:

Հայ ժողովուրդը ավելի քան երբեք համախմբված է իր Հայրենիքի շուրջը եվ աշխատում է ամեն ինչ անել, որպեսզի պահի ու պահպանի նրան մեր ապագա սերունդների երջանկության համար եվ մութ ուժերը հող չունեն իրենց ոտքերի տակ վնասելու համար Հայաստանի եվ Արցախի Նորընծա անկախ հանրապետություններին:

Մենք հավաքսված ենք, որ մեղավորները իհարկե կգան եվ կարժանանան Հայ Ժողովրդի արդարացի դատին իրենց արժանի պատիժը ստանալու համար գործած հանցագործության դիմաց:

Մենք կոչ ենք անում ամբողջ հայ ժողովրդին ավելի եվս համախմբվել եվ միասնական ուժով ոչնչացնել ամեն մի շարժում, որը նպատակադրված է վնասելու մեր Սուրբ Հայրենիքին:

Հիմա ժամանակն է միասնությունը ամուր պահելու համար, որից եվ կախված է Հայ Ժողովրդի ճակատագիրը: Սա պետք է լինի մեր այսօրվա ապրելու ամբողջ նպատակը, որի համար էլ ինչպես մեր միությունը, այնպես էլ ամբողջ սփյուռքը վայրապած է ու նորից ու նորից դատապարտում է դավադիրներին:

Մենք միշտ մեր Հայրենիքի հետ ենք եվ հավատում ենք նրա պայծառ ապագային:

Կեցցէ Արցախի Անկախ Հանրապետությունը:
Կեցցէ Հայաստանի Անկախ Հանրապետությունը:

Վարչության Ատենապետ՝ [signature] Վահան Բահարյան

*Արթուր Մկրտչյանի համար ուղարկված ցավակցականի լուսապատճեն (2 էջի վրա):*

# EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA

122 C STREET, N.W. #360, WASHINGTON, D.C. 20001 Tel: 202.628.5766, Fax: 202.628.5769

May 15, 1992

Beylan Compatriotic
1015 N. Normandie, # 3
Los Angeles, CA 90029

Dear Friends:

On behalf of the Government of Armenia I would like to extend my gratitude for your donation of $1,000.00 to the Armenian Fund for Foreign Affairs.

The new Republic of Armenia is embarking on a bold new course as a free sate. One of its greatest challenges is to take its rightful and permanent place among the nations of the world. To do so it must have embassies, a trained diplomatic corps and funds to provide both. Your gift will go far in realizing this and many other urgent needs of our newly free homeland.

With deep appreciation for the commitment and vision your gift reflects, I remain

Yours sincerely,

Alexander Arzoumanian
Charge d'Affaires

Հյուպատոսարանի շնորհակալական նամակի լուսապատճեն։



Նախահաշիվ

[illegible]

1. Խողովակներ. Փ324(մ). 70(մ)×750(դ) = 52500 ր.

Փ219(մ). 50(մ)×550(դ) = 27500 ր.

2. [illegible]-խողովակներ. Փ219(մ). 50(մ)×1000(դ) = 50000 ր.

3. [illegible] Փ146(մ) [illegible] խողովակ. 70(մ)×500(դ) = 35000 ր.

4. [illegible] խողովակներ Փ324(մ). 20(մ)×750(դ) = 15000 ր.

5. [illegible]. 5(հատ)×2000(դ) = 10000 ր.

6. [illegible]. 4(հատ)×2000(դ) = 8000 ր.

7. [illegible] ~ 2000 ր.

8. Հորատում. 120(մ)×1500(դ) = 180000 ր.

9. Պոմպ ([illegible]). ЭЦВ-6-16 [illegible] (ЭЦВ-10; ЭЦВ-12) ТУ 34-13-10803-44. = 120000 ր.

10. [illegible] (22 [illegible])

Հուշարձանը ջրով ապահովելու նախահաշվի լուսապատճեն (2 էջի վրա)։

Վերմակ՝ 50 հ/գ. 50(հ) × 22 × 5(դ) = 5500 ռ.

Բարձ՝ 10 հ/գ 10(հ) × 40(դր) × 25(դ) = 10000 ռ.

11. Փոխադրություն. ~ 15000 ռ.

12. [illegible] ծախսեր. 5(օր) × 1700(ռ) = 8500 ռ.

13. [illegible] 1(օր) × 1500(ռ) = 1500 ռ.

14. Վառելիք Ծ = 150 (կգ) – 1000 ռ.

Ընդամենը՝ 541500 ռ.

([illegible])

«Կիլիկիա-91»

[illegible] նախագահ՝ [signature] Հ.Գ. [illegible]




հաշվապահ՝ [signature] [illegible]

14.06.1992թ.

[illegible] 541500 ռ. [illegible] $5000, [illegible] 6-22-92



VAHAN BAHARIAN
7310 Kester Ave.Apt#101
Van Nuys, CA 91405
Phone: (818) 997-8845




Թուական 7-02-92

[illegible]

[illegible] $2000 [illegible]

Անդրանիկ Դովլաթյանին ուղարկված նամակի լուսապատճեն (2 էջի վրա):






| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. [illegible] | 5 | 5000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 2. [illegible] | 3 | 3000 | [illegible] | [illegible] № 4 | [illegible] |
| 3. [illegible] | 4. | 4000 | [illegible] | [illegible] № 1 | [illegible] |
| 4. [illegible] | 5. | 5000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 5. [illegible] | 5 | 5000 | [illegible] | [illegible] № 10 | [illegible] |
| 6. [illegible] | 7. | 3000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 7. [illegible] | 4 | 4000 | [illegible] | [illegible] № 16 | [illegible] |
| 8. [illegible] | 1. | 1000 | [illegible] | [illegible] № 17 | [illegible] |
| 9. [illegible] | 3 | 3000 | [illegible] | [illegible] № 42 | [illegible] |
| 10. [illegible] | 2 | 3000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 11. [illegible] | 1. | 1000 | [illegible] | [illegible] № 7 | [illegible] |
| 12. [illegible] | 2 | 2000 | [illegible] | [illegible] № 36 | [illegible] |
| 13. [illegible] | 4 | 4000 | [illegible] | [illegible] № 4 | [illegible] |
| [illegible] | 1. | 1000 | [illegible] | [illegible] 66; [illegible] 29 | [illegible] |
| 15. [illegible] | 4. | 4000 | [illegible] | [illegible] 20; [illegible] 45 | [illegible] |

*. 1992 թ. Հայաստանի հայրենակիցներին տրված նյութական օգնության ցուցակի լուսապատճեն (էջ 437-441):*

7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

05-1992 թ.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 16. [illegible] | 4 | 4000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 17. [illegible] | 5 | 5000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 18. [illegible] | 5 | 5000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 19. [illegible] | 5 | 5000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 20. [illegible] | 1. | 1000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 21. [illegible] | 4 | 4000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 22. [illegible] | 4. | 4000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 23. [illegible] | 4. | 4000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 24. [illegible] | 2 | 2000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 25. [illegible] | 3 | 3000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 26. [illegible] | 3 | 3000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 27. [illegible] | 3 | 3000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 28. [illegible] | 4 | 4000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 29. [illegible] | 5 | 5000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 30. [illegible] | 4. | 4000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 31. [illegible] | 6. | 6000 | [illegible] | [illegible] | [illegible] |



7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

05-1992 թ.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 32. [illegible] | 2. | 2000 | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 33. [illegible] | 2 | 2000 | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 34. [illegible] | 1 | 1000 | | Երևան | [illegible] | [illegible] |
| 35. [illegible] | 5. | 5000 | | Երևան | [illegible] | [illegible] |
| 36. [illegible] | 4 | 4000 | | Երևան | [illegible] | [illegible] |
| 37. [illegible] | 6 | 6000 | | Երևան | [illegible] | [illegible] |
| 38. [illegible] | 4. | 4000 | | [illegible] | [illegible] | [illegible] |
| 39. [illegible] | 5. | 5000 | | Երևան | [illegible] | [illegible] |
| 40. [illegible] | 4 | 4000 | | Երևան | [illegible] | [illegible] |
| 41. [illegible] | 3 | 3000 | | Երևան | — — — | [illegible] |
| 42. [illegible] | 1. | 1000 | | Երևան | [illegible] | [illegible] |
| 43. [illegible] | 4 | 4000 | | Երևան | [illegible] | [illegible] |
| 44. [illegible] | 1 | 1000 | | Երևան | [illegible] | [illegible] |
| 45. [illegible] | 4. | 4000 | | Երևան | [illegible] | [illegible] |
| 46. [illegible] | 4. | 4000 | | Երևան | [illegible] | [illegible] |
| 47. [illegible] | 3 | 3000 | | Երևան | [illegible] | [illegible] |

-4-

| [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
|---|---|---|---|---|---|
| 48. [illegible] | 6 | 3000 [illegible] | [illegible] | [illegible] 27 [illegible] | [illegible] |
| 49. [illegible] | 5 | 4000 [illegible] | [illegible] | [illegible] № 116 | [illegible] |
| 50. [illegible] | 2 | 2000 [illegible] | [illegible] | [illegible] № 32 | [illegible] |
| 51. [illegible] | 4 | 4000 [illegible] | [illegible] | [illegible] 3022 [illegible] 23 | [illegible] |
| 52. [illegible] | 5 | 5000 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 53. [illegible] | 1 | 1000 [illegible] | [illegible] | [illegible] № 2 | [illegible] |
| 54. [illegible] | 3 | 3000 [illegible] | [illegible] | [illegible] № 25 | [illegible] |
| 55. [illegible] | 3 | 3000 [illegible] | [illegible] | [illegible] № 18 | [illegible] |
| 56. [illegible] | 3 | 3000 [illegible] | [illegible] | [illegible] 26 | [illegible] |
| 57. [illegible] | 1 | 1000 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 58. [illegible] | 3 | 3000 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 59. [illegible] | 2 | 2000 [illegible] | [illegible] | [illegible] № 57 | [illegible] |
| 60. [illegible] | 2 | 2000 [illegible] | [illegible] | [illegible] 32 [illegible] | [illegible] |
| 61. [illegible] | 2 | 2000 [illegible] | [illegible] | [illegible] 27 [illegible] | [illegible] |
| 62. [illegible] | 3 | 3000 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 63. [illegible] | 1 | 1000 [illegible] | [illegible] | [illegible] 27 | [illegible] |
| 64. [illegible] | 3 | 3000 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 65. [illegible] | 3 | 3000 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 66. [illegible] | 4 | 4000 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 67. [illegible] | 5 | 5000 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |



-5-

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 68. [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 68. [illegible] | 1 | 1000 [illegible] | [illegible] | [illegible] № 125 [illegible] | [illegible] |
| 69. [illegible] | 1 | 1000 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 70. [illegible] | 2 | 2000 [illegible] | [illegible] | [illegible] | [illegible] |
| 71. [illegible] | 1 | 1000 [illegible] | [illegible] | [illegible] № 60 | [illegible] |

[illegible] 230000 ռ.

([illegible])

[illegible]

1. [illegible] [illegible] [illegible]
2. [illegible] [illegible] [illegible]
3. [illegible] [illegible] [illegible]
4. [illegible] [illegible] [illegible]

... COMPATRIOTIC UNION

[illegible]
6-22-92

VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-8845

ԲԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 17-05-1993

| Ազգանուն Անուն Հայրանուն | Անդ. թիվ | Գումար | Քաղաք | Հասցեն | Ստորագրութիւն |
|---|---|---|---|---|---|
| 1. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 2. [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 3. [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 4. [illegible] | 1 | 5000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 5. [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 6. [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 7. [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 8. [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 9. [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 10. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 11. [illegible] | 6 | 30000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 12. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 13. [illegible] | 1 | 5000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 14. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 15. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 16. [illegible] | 4<br>51 | 20000<br>255,000 | Երևան | [illegible] | [illegible] |

1993 թ. Հայաստանում ՊՀՄ-ից օգնություն ստացողների ցուցակի լուսապատճեն (էջ 442-454:)



VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-8845

ԲԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 17-05-1993

| Ազգանուն Անուն Հայրանուն | Անդ. թիվ | Գումար | Քաղաք | Հասցեն | Ստորագրութիւն |
|---|---|---|---|---|---|
| 17. [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 18. [illegible] | 1 | 5000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 19. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 20. [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 21. [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 22. [illegible] | 5 | 25000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 23. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 24. [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 25. [illegible] | 1 | 5000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 26. [illegible] | 1 | 5000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 27. [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 28. [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 29. [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 30. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 31. [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 32. [illegible] | 3<br>44 | 15000<br>220,000 | Երևան | [illegible] | [illegible] |

VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թվական 17.05.1993

| | Ազգանուն, անուն, հայրանուն | Անդ. թիվ | Գումար | Քաղաք | Հասցե | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|---|
| 33 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 34 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 35 | [illegible] | 5 | 25000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 36 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 37 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 38 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 39 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 40 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 41 | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 42 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 43 | [illegible] | 1 | 5000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 44 | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 45 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 46 | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 47 | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 48 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| | | 49 | 245,000 | | | |



VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թվական 17.05.1993

| | Ազգանուն, անուն, հայրանուն | Անդ. թիվ | Գումար | Քաղաք | Հասցե | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|---|
| 49 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 50 | [illegible] | 5 | 25000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 51 | [illegible] | 5 | 25000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 52 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 53 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 54 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 55 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 56 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 57 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 58 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 59 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 60 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 61 | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 62 | [illegible] | 5 | 25000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 63 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 64 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| | | 60 | 300,000 | | | |

VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-5845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թվական 18.05.1993

| Ազգանուն Անուն Հայրանուն | Անդ. թիվ | Գումար | Վայրը | Հասցե | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|
| 65. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 66. [illegible] | 6 | 30000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 67. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 68. [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 69. [illegible] 32 [illegible] | 32 | 160000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 70. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 71. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 72. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 73. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 74. [illegible] | 5 | 25000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 75. [illegible] | 6 | 30000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 76. [illegible] | 5 | 25000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 77. [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 78. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 79. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 80. [illegible] | 5 / 96 | 25000 / 480,000 | Երևան | [illegible] | [illegible] |



VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-5845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թվական 19.05.1993

| Ազգանուն Անուն Հայրանուն | Անդ. թիվ | Գումար | Վայրը | Հասցե | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|
| 81. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 82. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 83. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 84. [illegible] | 4 | 2,0000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 85. [illegible] | 5 | 25000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 86. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 87. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 88. [illegible] | 4 | 20000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 89. [illegible] | 5 | 25000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 90. [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 91. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 92. [illegible] | 1 | 5000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 93. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 94. [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 95. [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 96. [illegible] | 4 / 59 | 20000 / 295,000 | Երևան | [illegible] | [illegible] |

VAHAN BAHARIAN
7340 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թվական 19.05.1993.

| | Ազգանուն Անուն Հայրանուն | Ընտ. թիվ | Գումար | Վայրը | Հասցե | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|---|
| 97. | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] 14-րդ [illegible], [illegible] 57. | [illegible] |
| 98 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] 5-րդ [illegible], [illegible] 41. | [illegible] |
| 99. | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] 5-րդ [illegible], [illegible] 47. | [illegible] |
| 100. | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] 5-րդ [illegible], [illegible] | [illegible] |
| 101. | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible], [illegible] 43. | [illegible] |
| 102. | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] 2-րդ [illegible], [illegible] 19. | [illegible] |
| 103. | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] 2-րդ [illegible], [illegible] 17. | [illegible] |
| 104. | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] 2-րդ [illegible], [illegible] | [illegible] |
| 105. | [illegible] | 7 | 35000 | Երևան | [illegible] 33, [illegible] 5 | [illegible] |
| 106. | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] 14-րդ [illegible], [illegible] 7. | [illegible] |
| 107. | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] 13-րդ [illegible], [illegible] 3 | [illegible] |
| 108. | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] 2, [illegible] 4. | [illegible] |
| 109. | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 110. | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] 91. | [illegible] |
| 111. | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] 77; [illegible] 73 | [illegible] |
| 112. | [illegible] | 3<br>57 | 15000<br>285000 | Երևան | [illegible] 222, [illegible] 23 | [illegible] |



VAHAN BAHARIAN
7340 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թվական 20.05.1993.

| | Ազգանուն Անուն Հայրանուն | Ընտ. թիվ | Գումար | Վայրը | Հասցե | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|---|
| 113. | [illegible] | 6. | 30000 | [illegible] | [illegible], [illegible] 15 | [illegible] |
| 114. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] 9. | [illegible] |
| 115. | [illegible] | 4. | 20000 | [illegible] | [illegible] 15 | [illegible] |
| 116. | [illegible] | 3 | 15000 | [illegible] 2 | [illegible], [illegible] 2. | [illegible] |
| 117. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible], [illegible] 4. | [illegible] |
| 118. | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible], [illegible] 30 | [illegible] |
| 119. | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible], [illegible] 22 | [illegible] |
| 120. | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] 26 | [illegible] |
| 121. | [illegible] | 1 | 5000 | Երևան | [illegible] 42. | [illegible] |
| 122. | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible], [illegible] 14 | [illegible] |
| 123. | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] 10-րդ [illegible], [illegible] 79 | [illegible] |
| 124. | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible], [illegible] 60. | [illegible] |
| 125. | [illegible] | 4 | 20000 | [illegible] | Զ. [illegible] 25 | [illegible] |
| 5 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] 42-րդ [illegible], [illegible] 23 | [illegible] |
| 127. | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible], [illegible] 123. | [illegible] |
| 128. | [illegible] | 4<br>46 | 20000<br>230000 | Երևան | [illegible] 6-րդ [illegible], [illegible] 7. | [illegible] |

VAHAN BAHARIAN
7210 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-8845

ԲԵՅԼԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 21.05.1993

| | Ազգանուն, անուն, հայրանուն | Անդ. թիվ | Գումար | Քաղաք | Հասցե | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|---|
| 129 | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] 28, բն. 35 | [illegible] |
| 130 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] 13, [illegible] 3 | [illegible] |
| 131 | [illegible] | 5 | 25000 | Երևան | [illegible] 148, բն. 75 | [illegible] |
| 132 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] 20 | [illegible] |
| 133 | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] 30 | [illegible] |
| 134 | [illegible] | 1 | 5000 | Երևան | [illegible] 14 | [illegible] |
| 135 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] 13, [illegible] 9 | [illegible] |
| 136 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] 49, բն. 14 | [illegible] |
| 137 | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] 46 | [illegible] |
| 138 | [illegible] | 1 | 5000 | Երևան | [illegible] 8 | [illegible] |
| 139 | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] 60 | [illegible] |
| 140 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 141 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] 128 | [illegible] |
| 142 | [illegible] | 2 | 10000 | Երևան | [illegible] | [illegible] |
| 143 | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 144 | [illegible] | 2<br>42 | 10000<br>210,000 | [illegible] | [illegible] | [illegible] |



VAHAN BAHARIAN
7210 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-8845

ԲԵՅԼԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 26.05.1993թ.

| | Ազգանուն, անուն, հայրանուն | Անդ. թիվ | Գումար | Քաղաք | Հասցե | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|---|
| 146 | [illegible] | 5 | 25000 | Գյումրի | [illegible] 14 | [illegible] |
| 147 | [illegible] | 2 | 10000 | Գյումրի | [illegible] 14 | [illegible] |
| 148 | [illegible] | 3 | 15000 | Գյումրի | [illegible] 16 | [illegible] |
| 149 | [illegible] | 1 | 5000 | Գյումրի | [illegible] 13 | [illegible] |
| 150 | [illegible] | 4 | 20000 | Գյումրի | [illegible] | [illegible] |
| 151 | [illegible] | 2 | 10000 | Գյումրի | [illegible] 42 | [illegible] |
| 152 | [illegible] | 3 | 15000 | Գյումրի | [illegible] 43 | [illegible] |
| 153 | [illegible] | 2 | 10000 | Գյումրի | [illegible] 8 | [illegible] |
| 154 | [illegible] | 1 | 5000 | Գյումրի | [illegible] 48 | [illegible] |
| 155 | [illegible] | 1 | 5000 | [illegible] | [illegible] 60 | [illegible] |
| 156 | [illegible] | 3 | 15000 | Երևան | [illegible] 28 | [illegible] |
| 157 | [illegible] | 1 | 5000 | Երևան | [illegible] 28 | [illegible] |
| 158 | [illegible] | 4 | 20000 | Երևան | [illegible] 28 | [illegible] |
| 159 | [illegible] | 2 | 10000 | Գյումրի | [illegible] 57, բն. 1 | [illegible] |
| 160 | [illegible] | 3 | 15000 | Գյումրի | [illegible] 57, բն. 1 | [illegible] |
| 145 | [illegible] | 4<br>41 | 20000<br>225,000 | Երևան | [illegible] 13, [illegible] 31 | |

| № | Ազգանուն, Անուն, Հայրանուն | Թիվ | Գումար | Վճար | Հասցեն | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|---|
| 161. | [illegible] | 3 | 15000 | [illegible] | [illegible] | |
| 162. | [illegible] | 1 | 5000 | [illegible] | [illegible] | |
| 163. | [illegible] | 3 | 15000 | [illegible] | [illegible] | |
| 164. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 165. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 166. | [illegible] | 3 | 15000 | [illegible] | [illegible] | |
| 167. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 168. | [illegible] | 1 | 5000 | [illegible] | [illegible] | |
| 169. | [illegible] | 1 | 5000 | [illegible] | [illegible] | |
| 170. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 171. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 172. | [illegible] | 3 | 15000 | [illegible] | [illegible] | |
| 173. | [illegible] | 3 | 15000 | [illegible] | [illegible] | |
| 174. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 175. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 176. | [illegible] | 1 | 5000 | [illegible] | [illegible] | |
| 177. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 178. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 179. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 180. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 181. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 182. | [illegible] | 3 | 15000 | [illegible] | [illegible] | |
| 183. | [illegible] | 3 | 15000 | [illegible] | [illegible] | |
| 184. | [illegible] | 4 | 20000 | [illegible] | [illegible] | |
| 185. | [illegible] | 3 | 15000 | [illegible] | [illegible] | |
| 186. | [illegible] | 2 / 56 | 10000 / 280000 | [illegible] | [illegible] | |



| № | Ազգանուն, Անուն, Հայրանուն | Թիվ | Գումար | Վճար | Հասցեն | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|---|
| 187 | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 188. | [illegible] | 1 | 5000 | [illegible] | [illegible] | |
| 189 | [illegible] | 4 | 20000 | [illegible] | [illegible] | |
| 190. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 191. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 192. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 193. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 194. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 195. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 196. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 197. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | |
| 198. | [illegible] | 1 | 5000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 199. | [illegible] | 1 | 5000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 200. | [illegible] | 2 | 10000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 201. | [illegible] | 2 | 7000 | [illegible] | [illegible] | [illegible] |
| 202. | | 2 | 7000 | | | |

232 [illegible] - 632 [illegible] 2000 [illegible]
203. (1 [illegible] 5000 [illegible]) [illegible] 3,157,000 [illegible]

204. [illegible] 3180000
205. ([illegible])
206.
207. [illegible]
208. [illegible]
209.
210. 1. [illegible] [signature] [illegible] [illegible] [signature]
211. 2. [illegible] [signature] [illegible] [illegible]
212. 3. [illegible] [signature] [illegible] 5. [illegible] [signature]

VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-3845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 4-30-1993

[illegible]

1– [illegible]
2– [illegible]
3– [illegible]
4– [illegible]
5– [illegible]

[illegible]

6-25-93



Հայաստանի Հանրապետություն
«ՖԻԴԱՅԻ»
Բարեգործական կազմակերպություն
Երևան - 375047
Մարաշ. 9-րդ փող.
ԵրՔՕՏԻ
5-րդ հարկ. 519 սենյակ
Հեռ. 65-30-60
Tel: 58-51-64

Republic of Armenia
Society of humaniar help
«FIDAI»
Yerevan 375047
Marash 9 Str.
RITO of Yerevan
floor 5, room 519

Республика Армения
Благотворительная организация
«ФИДАИ»
Ереван - 375047
Мараш 9-ая ул.
ЕрНИИТО
5 этаж, комн. 519

№ ________ ________ 19 թ. № ________ ________ 19 y. № ________ ________ 19 г.

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՊԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ [illegible] ԵՎ [illegible] ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈԼԵԿՏԻՎԸ, [illegible] ԱԶԳԻ ՍԵՐՏ ՄԱՐԴՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ,,ՖԻԴԱՅԻ,, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՆԱՏԱ Ա-ՏԱՇԵՍԻ ՄԽԻԹԱՐՅԱՆԸ

Խորին շնորհակալություն ենք հայտնում այն մարդասիրական օգնության համար, որն ստացանք վերջերս՝ Ձեր ընկերության կողմից:

Չհայտարարված պատերազմի պատճառով Երևանի բոլոր կլինիկաներում բուժվում են բազմաթիվ վիրավոր ազատամարտիկներ: Շնորհիվ Ձեր և նման ընկերությունների օգնության, բոլոր ազատամարտիկները և՛ նյութական, և՛ հոգեկան, և՛ սոցիալական պաշտպանություն են գտնում, որի համար իրենց երախտագիտությունն ու գոհունակությունն են հայտնում:

Այսպիսի ընկերությունների համախակի օգնությունը բարելավում է նրանց վիճակը և կազդուրիչ ազդեցություն թողնում: Հիվանդներն այնքան գոհացուցիչ են, որ նրանց զգում են հեռավոր երկրներում գտնվող իրենց եղբայրների օգնությունը և խնդրել են անձամբ իրենց շնորհակալությունը հայտնելու: Կրկին անգամ ազատամարտիկների և մեր կոլեկտիվի անունից շնորհակալական խոսք ենք հղում մեր հայրենակիցներին՝ ցուցաբերած ջերմ վերաբերմունքի համար:

,,ՖԻԴԱՅԻ,, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ
ՆԱՏԱ ԱՐՏԱՇԵՍԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԵրՔՕՏԻ-ի ՏՆՕՐ. [illegible] ԱՅՎԱԶՅԱՆ

*«ՖԵԴԱՅԻ» բարեգործական կազմակերպության նամակի լուսապատճենը:*

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Պէյլանի Հայրենակցական Միության Վարչության անունից եւ անձամբ շնորհաւորում եմ մեր ամենասիրված բանաստեղծներից մեկի՝ Վահան Տերյանի «Միթե Վերջին Պոետն Եմ Ես» պոետիկ ներկայացման դերասանական քառյակին, հանձինս Նունէ Ավետիսյանի, Ալիս Կապլանջյանի, Գրիգոր Օգարյանի և Ալեքսանդր Խաչատրյանի, որոնք մեր սիրելի պոետին ավելի մոտիկից ծանոթացնելու համար սփյուռքի մեր հայրենակիցներին, չափազանց ծանր և պատասխանատու գործ են վերցրել իրենց վրա։

Վահան Տերյանը մեր ժողովրդին ավելի շատ ծանոթ է իր քնքուշ, երազային, մելամաղձոտ երգերով։ Իսկ իր հայրենասիրությունը, իր պոեզիան ու կյանքը իր ապրած ժամանակի վտանգավոր պայմաններում քչերին է հայտնի։ Հետևաբար քաջալերելի է դերասանական քառյակի մտահղացումը եւ նրա համարձակությունը, ներկայացնելու Վահան Տերյանի կյանքը իր ամբողջությամբ և ես հաջողություն եմ մաղթում նրանց և համոզված եմ, որ ներկայացումը պիտի լինի բարձր մակարդակով, քանի որ բոլորն էլ փորձված դերասաններ են՝ Երևանի Սունդուկյանի անվան թատրոնի հետևորդները, որոնք դեռ վերջերս «Վարդան Աճեմյան» թատրոնի հետ միասին ներկայացրեցին Հակոբ Պարոնյանի «Շողոքորթը», որը, ինչպես գիտեք, շատ մեծ հաջողություն ունեցավ։

Նունե Ավետիսյանը բոլորի կողմից սիրված ասմունքող է։ Ալեքսանդր Խաչատրյանը, Ալիս Կապլանջյանը և Գրիգոր Օգարյանը թատրոնին զուգահեռ նկարվել են նաև հայկական մի շարք շարժանկարներում։ Ցանկանանք նրանց նորանոր հաջողություններ իրենց լուման ներդնելու համար մեր մշակույթի պարգացման գործում։

Թատերգության հեղինակն է Սուրեն Հարությունյան, բեմադրությունը՝ Ալեքսանդր Խաչատրյանի, նկարչական ձևավորումը՝ Key Art Award Winner Սահակ Էքշիյանի և երաժշտությունը՝ կոմպոզիտոր Արամ Նապարյանի (Հայաստան)։

Պէյլանի Հայրենակցական Միությունը հովանավորելով այս ձեռնարկը, շնորհակալություն է հայտնում մեր ժողովրդին իր ներկայությամբ գնահատելու համար մեր մշակույթը, քաջալերելու մեր արվեստագետներին, ըմբոշխնելու Տերյանին և մի քիչ էլ Տերյանացած հեռանալու դահլիճից հետագայում նորից վերադառնալու պայմանով։

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՑԱՆ
Պեյլանի Հայրենակցական Միության
Վարչության Ատենապետ

«Միթե վերջին պոետն եմ ես»-ի գրքույկի «Երկու խոսք»-ի լուսապատճենը։




ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ՄԱՐՄԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ ՄԵԿ ԴՈԼԱՐ ՖՈՆԴ

Պատվոգիր

Պատվոգրի լուսապատճենը։



ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ ՄԷԿ ՏՈԼԱՐ ՖՈՆԴ

ԾՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Շնորհակալութեամբ ստացանք ______________________

______________________ դոլար

Նուիրուած ______________________ տարիով

«Հայաստան-Արցախ Մէկ Տոլար Ֆոնդ»ի համար։

Սոյն նուիրատուութեամբ Ֆոնդի ընդհանուր գումարը հասաւ .................... տոլարի։

Կը հաւատանք, որ ձեր ջանքերը չէք խնայեր մեզի հետ միասին ընդլայնելու համար այս բարի ու սուրբ գործին շրջանակը յանուն մեր հայրենիքի գոյատեւման։

Ֆոնդի հիմնադիր՝ ՆՈՒԲԱՐ ՄԽՍԻ-ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ - Փոխ-ատենապետ ԳԱԼՈՒՍՏ ՔՐԻՍՏԻԱՆԵԱՆ - Գանձապահ

Շնորհակալագրի լուսապատճենը։





Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. 0101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-6845



Թուական 22 Փետրուար, 1994

ՀՈԳԵՒՈՐ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգեն Ա.-ի մահվան առթիվ ուղարկված հեռագրի լուսապատճենը։

## ԵՂԵՌՆԻ 80 ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ՄԱՐՄԻՆ

Սեպտեմբեր 24, 1994

Յարգարժան Վարչութիւն
Պէյլանի Հայրենակցական Միութեան

Սիրելի հայրենակիցներ,

Մեծ Եղեռնի Ութսունամեակը պատշաճօրէն եւ համազգային տարողութեամբ ու ծիսերով նշելու հրամայականէն թելադրուած, Արեւմտեան Ամերիկայի հոգեւոր պետերն ու ազգային կուսակցութեանց ներկայացուցիչները ի մի գալով առաջարկեցին՝

Ա.- Նախաձեռնող հանդիսանալ Եղեռնի 80 ամեակը միացեալ ջանքերով եւ ուժերու բացարձակ մէկտեղումով ծրագրելու եւ նշելու աշխատանքներուն, 1995ի Ապրիլ ամսուան ընթացքին:

Բ.- Հրաւիրել գաղութիս բոլոր միութիւնները ու կազմակերպութիւնները, անմիջականօրէն մասնակցելու ծրագիրներու մշակումին եւ գործադրումին:

Այս առիթով, Նախաձեռնող Մարմինը կը հրաւիրէ ձեր կազմակերպութեան ներկայացուցիչը, ներկայ գտնուելու անդրանիկ կազմակերպչական հանդիպումի մը, որ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի 4, Հոկտեմբեր 1994ի երեկոյեան ժամը 8:00ին, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ սրահին մէջ՝ 500 S. Central Ave., Glendale:

ԵՂԵՌՆԻ 80 ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ
ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ՄԱՐՄԻՆ՝

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄ

ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵՑԻ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

*«Եղեռնի 80-ամյակի ոգեկոչման Մարմին»ի նամակի լուսապատճեն:*



ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Vahan Saharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

Թուական 9-05-94

MRS. MARITZA SOGHANALIAN
8 GRAND BLVD.
BINGHAMTON, N.Y. 13905

[illegible]

Յունիս 22, 1994 [illegible]

[illegible]

[illegible]

*Մարիձա նենեին գրած նամակի լուսապատճեն (2 էջի վրա):*

-2-

բաւական է, [illegible] Հայ-Հայ [illegible] [illegible] կը [illegible]:

Այս [illegible] Մեր [illegible] [illegible] Դեկտեմբերի 17-ին [illegible] Ա. [illegible] [illegible] մէջ, [illegible] VAN NUYS քաղաքի մէջ, SHERMAN WAY պողոտայի վրայ:

Մեր Սարգիս եղբայր ([illegible]) [illegible] [illegible] [illegible]:

[illegible] [illegible], [illegible] [illegible]: [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]:

[illegible] [illegible] [illegible]: [illegible]:

[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]: [illegible] [illegible] [illegible] [illegible] $3000-ի [illegible]:

[illegible] [illegible] "Հայ Երիտ"-[illegible] [illegible] "Հ.Յ.Դ.Ա. [illegible]", "[illegible]", "ՄԵԾ Եղեռնի [illegible] ՀՄՄՄ-ի [illegible] ([illegible]) [illegible]" ([illegible] 15 [illegible]), "[illegible]", "[illegible]", "Հ.Յ.Դ.Ա. "Հայ Երիտ"-ը [illegible]" և "[illegible]":

[illegible] [illegible]:

[illegible] [illegible], [illegible] և Սարգիս եղբայր, ՏԸՐԻՆՀ, [illegible]: [illegible] [illegible] [illegible]



ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

UNITED ARMENIAN COMPATRIOTIC SOCIETY of L.A.

825 E. COLORADO ST., GLENDALE, CA 91205 TEL: 818-240-9996

14 Օգոստոս, 1994

1995 թուականին Հայաստանի եւ Սփիւռքի մէջ հայ ժողովուրդը պիտի նշէ 1915-ի Մեծ Եղեռնի 80-ամեակը:

Թուրքիոյ կառավարութիւնը եւ անոր կարգին յծուած վարձկան գրիչներ կը շարունակեն անտեսել եւ ուրանալ Հայոց դէմ կատարուած ցեղասպանութիւնը, աղաւաղելով եւ նենգափոխելով պատմութիւնը զանազան միջոցառումներով:

Միւս կողմէ, մեծ պետութիւնները, մնալով իրենց շահերէն, կրաւորական եւ անտեսումի քաղաքականութիւն կը վարեն հայկական ցեղասպանութեան ճանաչման եւ հայ ժողովուրդի արդար հատուցում տալու հարցին նկատմամբ:

Նկատելով այս զոյգ իրականութիւնները, հայ ժողովուրդը պէտք է գիտնայ օգտուիլ 1915-ի Մեծ Եղեռնի 80-ամեակի առիթէն, համախումբ եւ միասնական աշխատանքով աշխարհը համոզելու, որ ի վերջոյ ընդունի եւ Թուրքիոյ ընդունիլ տայ հայկական ցեղասպանութեան իրողութիւնը, ի հարկին պարտադրելու, որպէսզի Թուրքիա կատարէ անհրաժեշտ հատուցումը հայ ժողովուրդի նկատմամբ:

1915-ի Մեծ Եղեռնի 80-ամեակի նշումին համար ծրագրուած է հրաւիրել ԱՄՆ-ի պետական բարձրաստիճան դէմքեր՝ սկսած Նախագահէն մինչեւ ծերակուտականները, Գալիֆորնիոյ Նահանգապետէն մինչեւ նահանգային դիւանային անձնաւորութիւնները, ինչպէս նաեւ միջազգային համբաւ վայելող եւ հայ ժողովուրդի բարեկամներ:

Նման ծրագրի իրականացման համար ՀՄՄՄ-ը կ'առաջարկէ ստեղծել Համազգային Գերագոյն Մարմին մը, բաղկացած՝ հայ յարանուանութեանց հոգեւոր պետերէ, կուսակցութեանց, բարեսիրական, մշակութային, հայրենակցական եւ մարզական միութիւններու ներկայացուցիչներէ:

Համազգային Գերագոյն Մարմինը իր աշխատանքները պէտք է սկսի կարելի եղածին չափ շուտ: ՀՄՄՄ-ը կը գտնէ որ յիշեալ Մարմինը պէտք է կազմուի 1994 Սեպտեմբերին եւ գործի անցնի Հոկտեմբերին իսկ, կարենալ պատրաստելու համար ցեղասպանութեան ոգեկոչման համապարփակ ծրագիրը:

Առ այդ, ՀՄՄՄ-ը կը խնդրէ պատասխանել նամակով իրեն յայտնել ձեր 2 ներկայացուցիչներուն անունները, որպէսզի ժամ առաջ Գերագոյն Մարմինը գործի անցնի:

ՀՄՄՄ-Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յաւելեալ մանրամասնութիւններու համար կրնաք հեռաձայնել հետեւեալ թիւերուն.
(818) 240-9996/7 Ատենապետ
(818) 997-8845 Փոխ-ատենապետ
(818) 246-2070 Ատենադպիր

Նախագահ՝
ՎԱՀԱՆ ՃԱՄԼԵԱՆ

Ատենապետ՝
ԳՐԻԳՈՐ ՇԷՆԵԱՆ

Ատենադպիր՝
ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ

*Մեծ եղեռնի 80-ամյակը կազմակերպելու առթիվ ՀՄՄՄ-ի Լոս Անջելեսի կազմակերպություններին ուղարկած նամակի լուսապատճեն:*



ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

UNITED ARMENIAN COMPATRIOTIC SOCIETY OF L.A.

**ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ**

825 E. COLORADO ST., GLENDALE, CA 91205 TEL: 818-240-9996

ԱՅՆԹԱՊ
ԵՕԶՂԱԹ ԵՒ ՇՐՋ.
ԶԷՅԹՈՒՆ
ԷՎԵՐԷԿ-ՖԷՆԷՍԷ
ԿԵՍԱՐԻԱ ԵՒ ՇՐՋ.
ՀԱՄԱՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
ՀԱՃԸՆ
ՄԱՐԱՇ
ՄՈՒՍԱ ԼԵՌ
ՈՒՐՖԱ
ՇՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ
ՊԷՅԼԱՆ
ՏԱՐՕՆ-ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ
ՔԻԼԻՍ

AINTAB
YOZGATH
ZEITUN
EVEREG-FENESSE
GUESARIA
PAN-VASBOURAGAN
HADJIN
MARASH
MOUSSA LER
OURFA
CHORK-MARZBAN
BEYLAN
DARON-DOUROUPERAN
DIKRANAGERT
KILIS

11-18-94

ARMENIA FUND, INC.
P.O. BOX 1403
GLENDALE, CA 91205
PHONE: (818) 242-3038

[illegible]



-2-

[illegible]

«Հայաստան» հիմնադրամին ուղարկված նամակի լուսապատճենն (2 էջի վրա):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն Խորհրդի Նախագահ
Chairman of Supreme Council of the Republic of Mountainous Karabagh

Ստեփանակերտ 3. V 1994
Stepanakert 02-01-412

ՀՅԴ ,,Արցախ,, Ֆոնդի վարչությանը

ԼՂՀ իշխանությունները բարձր են գնահատում ,,Արցախ,, Ֆոնդի կողմից իրականացվող տնտեսական, սոցիալական, շինարարական և այլ բնագավառների գործունեությունը: Ընդգծելով, որ ,,Արցախ,, Ֆոնդի ծրագրերը համաձայնեցված են ԼՂՀ իշխանությունների հետ, ԼՂՀ իշխանությունների անունից շնորհակալություն եմ հայտնում Ֆոնդի նվիրատուներին և պատասխանատու անձանց:

Տեղյակ լինելով, որ ,,Արցախ,, Ֆոնդը պատրաստվում է նոր հեռուստամարաթոնի. ԼՂՀ իշխանությունները հավաստում են, որ Ֆոնդը լիազորված է ԼՂ Հանրապետության անունից դրամահավաք կազմակերպել՝ ի նպաստ ԼՂՀ ժողովրդի բարօրության և երկրի վերականգնման:

ԼՂՀ իշխանությունների անունից՝

Գխ նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյան Կ. ԲԱԲՈՒՐՅԱՆ

*Թելեթոնի առթիվ ԼՂՀ-ի ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար՝ Կարեն Բաբուրյանի նամակի լուսապատճենը։*



# ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ, ՔԱՋԱԼԵՐԵՑԷՔ MEDICAL OUTREACH-Ի ՂԱՐԱԲԱՂԻ Ի ՆՊԱՍՏ ԹԵԼԵԹՈՆԸ

Այսու կոչ կ'ընենք մեր բոլոր հայրենակիցներուն, որ լիաբուռն եւ անվերապահօրէն մասնակցին Medical Outreach-ի կողմէ Նոյեմբեր 24-ին՝ Գոհաբանութեան Օրը կազմակերպուած ԹԵԼԵԹՈՆին, որ ամբողջութեամբ պիտի յատկացուի Հայաստանի եւ Ղարաբաղի կարիքներուն:

Կան հարիւրաւոր անդամահատուածներ, վիրաւորներ որոնք կարիքը ունին մեր բոլորի օժանդակութեան:

Հայաստանի եւ Արցախի հիւանդանոցները անհրաժեշտօրէն կարիքը ունին բարելաւելու. դեղորայքով եւ բժշկական սարքերով օժտուելու:

Ազատագրական հերոսական մարտնչումներով ռազմաճակատներուն վրայ պանծալի յաղթանակներ արձանագրած ղարաբաղցի մեր եղբայրները ու քոյրերը, արժանի են ամբողջ հայութեան նիւթական եւ բարոյական օժանդակութեան:

Ղարաբաղը մեր պատիւն է, մեր արժանապատուութիւնն է:

Ղարաբաղը մեր ազատ ու անկախ ապրելու հզօր կամքն է:

Ղարաբաղը մեզ 21-րդ դարին կամրջող հրաշագօր ույժն է:

Տա'նք Ղարաբաղին այսօր լիաբուռն, տա'նք անմոռաց որպէսզի Հայաստանն ու Արցախը պինդ մէջքով, բաց ճակատով, երջանիկ ու ապահով ապրին այսօր, վաղը եւ յաւիտեան:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

*Կոչ հայրենակիցներին։*

Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 2-11-95

Սրտի խոսք
Պէյլանի հայրենակցական միության կողմից
Արմենուհի Պետրոսյանին
իր 100-ամյա հոբելյանի առթիվ

Պէյլանի հայրենակցական միության [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Հարգանքներով՝ Վարչություն
Ատենապետ՝ Վահան Բահարյան

*ՊՀՄ-ի վարչության սրտի խոսքը Արմենուհի Պետրոսյանի 100-ամյակի առթիվ (լուսապատճեն)։*



MEDICAL OUTREACH-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1994-1995

MEDICAL OUTREACH FOR ARMENIANS հիմնվելով 1986-ին մինչեւ այսօր Հայաստանին եւ Արցախին կատարած օգնությունը կազմում է մոտ 25 - միլիոն դոլար։

1994-ին ուղարկված է 49 CONTAINER 3,369,978 դոլար արժեքով։ 1987-ից Մնջոյան ինստիտուտի մեջ սկսված է դեղորայքի արտադրությունը, (ASPIRIN, ANTIACID, ANTI-FUNGAL եւայլն), եւ այդ դեղերի համար շիշ արտադրող մեքենա։

1994-ին Բժ. Հրայր Հովակիմյանի գլխավորությամբ սրտի վիրահատում է կատարված 250 երեխաների։ Հիմնականում Բժ. Հովակիմյանի ղեկավարությամբ, հայրենի բժիշկներ մեծ հաջողությամբ են հասել այդ ուղղությամբ։

CATHETERIZATION-ի լաբորատորիայում առուցված են մոտ 100 սրտի հիվանդներ։ MEDICAL OUTREACH-ի միջոցով կահավորված է Ստեփանակերտի զինվորական հիվանդանոցի վիրահատության 2 սենյակներ արդիական սարքավորումներով։

Ծրագրեր։ -
1. Վերանորոգել Երեւանի Զինվորական Հիվանդանոցի վիրաբուժարանը, կահավորելով 2 նոր վիրահատության սենյակներ 50 անկողինով, բուժողը Ամերիկյան չափանիշով։ (նախնական աշխատանքը սկսվել է։)
2. Բժ. Նաջարյանի եւ մի շարք վիրաբույժների այցելումը Հայաստան վիրահատություն կատարելու եւ աշխատանքային փորձ փոխանցելու։
3. Մանուկների հոգեբուժական կենտրոն Երեւանի մեջ։
4. Սարքել մանկական բժիշկներին ժամանակակից մեքենաներով։
5. Մեծերի համար սրտի վիրահատության կենտրոն Միքայելյան հիվանդա-նոցի մեջ։ (Արդեն սկսված է վիրահատությունների շարքը)
6. Հրավիրել Ա.Մ.Ն. հայ բժիշկներ մասնագիտանալու համար։

Այս ծրագրերը իրագործման համար MEDICAL OUTREACH-ի եկամուտը գոյացել է 1994 թվի Նոյեմբեր 25 -ի TELETHON-ից, որտեղ խոստացված է եղել 687,793 դոլար եւ հավաքված է 504,077 դոլար։

Այսօր MEDICAL OUTREACH-ը գործակից է կանգնում Համա-Հայկական Հիմնադրամին։

Այս առիթով ընդունեցեք MEDICAL OUTREACH-ի շնորհակալությունը ձեր նվիրատվությունների համար, որը ամբողջությամբ հատկացվում է Հայաստանի եւ Արցախի սուր կարիքների համար։

Միշտ երախտապարտ ենք մեր կազմակերպության հանդեպ ձեր ունեցած վստահության համար։

MEDICAL OUTREACH-ի Գործադիր Մարմին

*Medical Outreach-ի գործունեությունը 1994-1995 (լուսապատճեն)։*

## ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

825 E. COLORADO ST., GLENDALE, CA 91205 TEL: 818-240-9996

Նոյ. 14, 1995

Պատուարժան պարոնութիւն

[illegible]

Հայրենակցական Միութիւններու Միացեալ Մարմինը կազմակերպած է ընկերային խրախճանք մը Կիրակի, Դեկտ. 3, 1995, կէսօրէ ետք ժամը 3-էն սկսեալ Մարաշի Հայրենակցական Միութեան կեդրոնին մէջ,— 463 N. Martelo, Pasadena.

Հանելով օգտակարին միացնելով հայրենակցական միութիւններու փոխյարաբերութիւնները սերտացնելու, ջերմացնելու եւ աշխուժացնելու միտող այս ճաշկերոյթ-խրախճանքին հովանաւորն է Զանգու հաստատութեան հիմնադիր, տէր եւ տնօրէնուհի Տիկ. Մարգրիտ Բոնէճունեան, որ սիրայօժար ստանձնած բոլոր ծախսերը, ներառեալ սիրուած երգիչ Լեւոն Հարմանտեանի եւ իր նուագախումբին մասնակցութիւնը:

Հաւաքոյթը իր ներկայութեամբ պիտի պատուէ, Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր հիւպատոս Տէր եւ Տիկ. Արմէն Բայբուրդեանը:

Մեր ժողովուրդին արմատներէն եկող, անոր հոգիին տաքուկ, հարազատ ապրումներուն եւ հայրենասիրական զգացումներուն արտայայտիչը եղող հայրենակցական միութիւնները, Սփիւռքի մէջ իրենց անկիւնը ունին ազգապահպանման առաջին գիծերուն վրայ՝ ինչ գաղափարի կամ ազգային ինչպիսի՛ հանգամանքներու ալ հետամուտ ըլլան: Եկէք ձեռք-ձեռքի, սիրտ-սրտի, միասնական ոգիով աշխատինք յանուն Հայրենիքի եւ Ղարաբաղի բարգաւաճման ու զօրացման՝ վեր բարձրանալով ճղճիմ ըմբռնումներէ եւ կեցուածքներէ: Մենք կը հաւատանք, որ մեծ գաղափարներ ու երազներ իրականացնելու համար միասնական ոգին առաջին պայմանն է: Իսկ ջերմին մթնոլորտի մէջ մշակուած այսպիսի փոխադարձ ծանօթացումները, իրար մօտէն ճանչնալը, նախապաշարումները կը փարատեն եւ դրական ու շինարար ներշնչումներով հայ ազգին, հայ հայրենիքին ծառայելը կարելի ու կենսունակ հունի մը մէջ կը դնեն: Ահա թէ ինչո՛ւ Ձեր մասնակցութիւնը խիստ անհրաժեշտ կը նկատենք.

Արդ, հրամեցէք Ձեր տիկիններով կամ ամուսիններով ուրախ օր մը անցընենք՝ երգ ու երաժշտութեամբ, բանաւոր խօսքով եւ հայկական ջերմ շունչով յագեցած շէնշող մթնոլորտի մը մէջ: Նիւթական ո՛չ մէկ յանձնառութիւն կամ ակնկալութիւն:

Հայրենակցական ջերմ բարեւներով

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

Յ.Գ. Կը խնդրուի Ձեր դրական թէ ժխտական պատասխանին համար հեռաձայնել մինչեւ Նոյեմբեր 30, 1995 Սարգիս Մահսուդեանին (818) 246-2070: — Շնորհակալութիւն:

ՀՄՄՄ-ի շրջաբերական նամակի լուսապատճենը



2-28-96

Ներկայ է վարչութեան (A) (պաշտօնը)
(B) (անուն ազգանուն) (C) թուականը

[illegible]

[illegible]
[illegible] 23, 1996 թ.

| (B) Անուն ազգանուն | (A) պաշտօն | (C) թուական |
|---|---|---|
| 1. [illegible] | Ատենապետ | 1989 — |
| 2. [illegible] | Ատենապետ | 1986-1988 |
| 3. [illegible] | Փոխատենապետ | 1986-1987 |
| 4. [illegible] | —»— | 1987-1988 |
| 5. [illegible] | —»— | 1989 — |
| 6. [illegible] | [illegible] | 1989 — |
| 7. [illegible] | —»— —»— | 1986-1988 |
| 8. [illegible] | —»— —»— | 1986-1988 |
| 9. [illegible] | Գանձապահ | 1986-1988 |
| 10. [illegible] | Քարտուղար | 1986-1990 |
| 11. [illegible] | Խորհրդական | 1988-1990 |
| 12. [illegible] | —»— | 1989 — |
| 13. [illegible] | Քարտուղար | 1992-1995 |

Ատենապետ՝ [illegible]

Հուշատախտակ տրվելիք վարչականների ցուցակի լուսապատճենը:

Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

ԲԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 04-05-96

MR. VAHAN CHAMLIAN
2360 S. ORANGE AVE
FRESNO, CA 93725

Մեծարգոյ պր. Վահան Ճամլեան

1995 թ. [illegible] 3000-[illegible]

[illegible]

[illegible] 10-[illegible] $3000:

[illegible]

[illegible] Payable to: Beylan Compatriotic Union [illegible]

[illegible]

[illegible] Վահան Բահարեան

Վահան Ճամլյանին ուղարկված նամակի լուսապատճեն:



Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

ԲԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 03-11-96

[illegible]

Դիմում

[illegible]

[illegible]

[illegible] V. Baharian [illegible]
[illegible]

ԲԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

ԲՀՄ-ի ՀՀՄԽ-ին անդամակցելու դիմումի լուսապատճեն:

Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 03-11-96

Հայաստանի
Հայրենակցական
Միությունների խորհրդին

Քաղվածք արձանագրությունից

1996 թ. մարտի 11-ին [illegible]

[illegible]

1. Վահան Բահարյան — ատենապետ
2. [illegible] — փոխ. ատենապետ և գանձապահ
3. Հրաչ [illegible] — քարտուղար
4. [illegible]
5. Սարգիս [illegible] — խորհրդական
6. Սարգիս [illegible] — խորհրդական
7. [illegible] — խորհրդական

[illegible]

Ատեն. Վահան Բահարյան
Քարտ. Հրաչ [illegible]

*ՊՀՄ-ի ՀՀՄԽ-ին անդամակցելու դիմումին կից արձանագրութեան քաղվածքի լուսապատճէն:*



VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL: (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 10-25-1996

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈՅ ՊՐՆ. ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ

Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ, Հայաստանը առաջինը բարձրացրեց անկախութեան դրօշը, Հայաստանի ժողովուրդը ԱՑՈ ասաց Հայաստանի անկախ Հանրապետութեան ստեղծմանը և կառավարութեան ղեկը վստահեց Ձեզ:

Նկատի ունենալով այն ժամանակուայ Խորհրդային Միութեան ներքաղաքական վիճակը, անկախութեան ձգտող ժողովուրդների ցանկութիւնները, երկրաշարժի արհաւիրքները, քաղաքական պայմանները ստիպեցին մեր ժողովրդին կանգնեցնել ատոմակայանի աշխատանքը և «Նաիրիտ»ի արտադրութիւնը, որը հսկայական վնաս հասցրեց անկախ Հայաստանի տնտեսութեանը: Սրան գումարուեց նաև Արցախի լինել-չլինելու հարցը, Ադրբէջանից հարիւր-հազարաւոր փախստականների հարցը: Անկախութեան անցած 5 տարիները Հայաստանի համար եղան փորձութեան, զրկանքների, դժուարութիւնների տարիներ և Դուք Ձեր խոհեմ ու իմաստուն քաղաքականութեամբ կարողացաք մեր երկիրը հանել այդ նեղ, դժուարին վիճակից:

Գլխաւոր խնդիրների մեծ մասը իրագործուել են, ինչպէս՝ կայուն քաղաքական վիճակ, հզօր բանակ, Արցախում յաղթանակներ, ժամանակաւոր խաղաղութիւն և հզօր բանակ, հիւպատոսարաններ և այլ դիւանագիտական գրասենեակներ աշխարհի տարբեր երկրներում, ճկուն արտաքին քաղաքականութիւն, որի հետեւանքով, աշխարհի բոլոր երկրները յարգանքով են խօսում Հայաստանի, որպէս դեմոկրատական երկրի և նրա ժողովրդի մասին, «Հայաստան» Հիմնադրամ և բազմաթիւ այլ իրագործումներ, որոնք նպաստեցին ամրապնդելու Հայաստանի խաղաղութիւնը, կայունութիւնը և սահմանների ապահովութիւնը՝ յանուն մեր ժողովրդի գոյատեւման:

*Լ. Տէր-Պետրոսյանին՝ շնորհավորական հեռագրի լուսապատճէն (2 էջի վրա):*

Այս բոլորը, բազմաթիւ լուծուած այլ խնդիրների հետ, 5 տարուայ պատմական կարճ ժամանակում, նորաստեղծ պետութեան համար կարելի է անուանել Հրաշք:

Բայց դեռ մնում են գլխաւոր անլուծելի հարցեր, որոնցից հիմնականը ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակի բարելաւումն է, որպէսզի նա աւելի փաստօրէն կանգնի պետականութեան կողքին, նրա ամրապնդման, կայունացման, առաջխաղացման ու գոյատեւման ճանապարհին:

Պէլլանի Հայրենակցական Միութեան վարչութիւնը իր ժողովրդի հետ շնորհաւորում է Ձեզ, Ձեր երկրորդ շրջանի նախագահական պաշտօնում վերընտրութեան առթիւ: Նա միշտ եղել է և մնում է հայրենի պետականութեան կողքին, չխնայելով իր օգնութիւնը նրա վերականգնման ու ամրապնդման ճանապարհին:

Չմոռանալով անցած տարիների դժուարութիւնները, Ձեր նախագահական նոր շրջանում Ձեր առջեւ ծառացած են առկայ և չնախատեսուած աւելի մեծ դժուարութիւններ՝ ժողովրդի սոցիալ-տնտեսական մակարդակի բարելաւումը, երկիրը հզօրացնելու և բազմաթիւ այլ հարցեր, որոնց լուծումը կախուած է Ձեզանից և մենք հաւատացած ենք, որ Դուք հայրենիքի և Սփիւռքի մեր ժողովրդի միասնականութեամբ ու օգնութեամբ կ'աշխատէք շուտափոյթ կերպով իրականացնել դրանք յանուն մեր ժողովրդի ու հայրենիքի հարատեւման՝ չընդհատուող պատմութեան արահետներով:

ԱՏԵՆԱՊԵՏ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱ ՊԵՏՐՈՍԵԱՆ



ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ
UNITED ARMENIAN COMPATRIOTIC SOCIETY of L.A.
825 E. COLORADO ST., GLENDALE, CA 91205 TEL: 818-240-9996

01-10-96

Հայաստան Համահայկական Հիմնադրամի տնօրինութեանը

Հայրենակցական Միութիւնների Միացեալ Մարմինը (ՀՄՄՄ) շնորհակալութիւն է յայտնում Ձեզ Նոր Տարուայ եւ Ս. Ծննդեան առթիւ ուղղած շնորհաւորանքների համար: Առաւել եւս գնահատելի է Ձեր աշխատանքը Հայաստան Համահայկական Հիմնադրամի աշխատանքների ակտիվացման գործում Ձեր ներդրած ջանքերի համար, ինչպէս նաեւ Ձեր առաջարկը ՀՄՄՄ-ի մասնակցութեան այդ մարմնի մէջ որպէս խորհրդատու:

ՀՄՄՄ այս տարուայ Յունուարի 9, 1996 թ. իր վարչութեան լիակատար նիստում քննարկեց Ձեր առաջարկը, եղաւ կարծիքների լայն փոխանակութիւն:

Հարցը քննարկուեց մանրամասն բազմաթիւ առաջարկներով եւ վերլուծութեան ենթարկուեցին այն բոլոր դրական եւ բացասական կողմերը, որոնք մինչեւ հիմա գոյութիւն են ունեցել Հայաստան Համահայկական Հիմնադրամի կազմակերպչական աշխատանքներում եւ առաջարկուեցին ուղիներ, որոնք կարող են ակտիվացնել Հիմնադրամի աշխատանքները եւ բաւարար արդիւնքների հասնել:

Ցաւոկապէս շեշտուեց այն հանգամանքը, որ Հիմնադրամի Գործադիր Մարմնին մաս կազմող այնպիսի կազմակերպութիւններ, որոնց հնարաւորութիւնները շատ աւելի մեծ են եւ որոնք աւելի մեծ մասշտաբով են ներկայացնում հայ համայնքը: Այս կէտի վրայ առաջարկ եղաւ, որ այն անձնաւորութիւնները, որոնք Գործադիր Մարմնի կազմում իրենց պաշտօններով պիտի լինեն եւ պիտի չմասնակցեն դրամահաւաքի աշխատանքներին, չլինեն Գործադիր Մարմնին անդամներ որպէս պատուոյ անդամներ (օր. հայ եկեղեցիների թեմերի պետերը), իսկ Գործադիր Մարմնի մէջ եղող կազմակերպութիւնները իրօք աշխատեն Հիմնադրամի նպատակների իրագործման համար: Իսկ մինչեւ որ Գործադիր Մարմնին մասնակցող կազմակերպութիւնները պաշտօնապէս չյայտարարուեն եւ չմիացուեն թէ ովքեր են նրանք, շատ դժուար է համընդհանուր դրամահաւաքի իրականացումը:

Այս հարցերը աւելի մանրամասնօրէն քննարկուեցին Հայաստան Համահայկական Հիմնադրամի ընդհանուր տնօրէն Տիկ. Մանուշակ Պետրոսեանի հետ Լոս Անջելոսի Հայաստանի հիւպատոսարանում մի շարք կազմակերպութիւնների հետ նրա վերջին այցելութեան ընթացքում: Այնտեղ ՀՄՄՄ-ը մասնակցում էր 5 հոգիով եւ նրա ատենապետ Դր. Գրիգոր Ծէմեանը յատկապէս պարզաբանեց վերոյիշեալ հարցերը յատկապէս շեշտելով, որ Գործադիր Մարմնում իրօք ընդգրկուեն գործարար կազմակերպութիւններ, որոնք պէտք է իրականացնեն դրամահաւաքը:

Լոս Անջելոսի հայկական գաղութի ազգային դէմքերու համաձայն, ՀՄՄՄ-ը, որ Լոս Անջելոսի հայ համայնքի կարեւոր մէկ մասն է ներկայացնում, Medical Outreach-ը, որ թէլեթոն կազմակերպելու մեծ փորձառութիւն եւ յաջողութիւն ունի, Լոս Անջելոսի 4 տիկնանց՝ Ֆլորա Դոանայեանցի, Սալի Թիւֆէնքճեանի, Էլիզաբեթ Աղպապեանի եւ Հերմինէ Ծանոյեանի ղեկավարած միաւորումը, որը հնչա-

ՀՄՄՄ-ի «Հայաստան» Հիմնադրամի տնօրինությանը ուղարկած նամակի լուսապատճեն (2 էջի վրա):

յակած աշխատանքն է տանում Հայաստանին օգնութեան գործում, առաջարկում ենք որպէս Հայաստան Համահայկական Հիմնադրամի լուկ խորհրդատուներ, որը բուն ՀՄՄՄ-ի ճիշտ չէ:

Ուստի, ՀՄՄՄ-ը առաջարկում է այս հարցը մի անգամ եւս քննել իր ամբողջ էութեամբ եւ վերոյիշեալ կազմակերպութիւններին առաջարկել որպէս Հայաստան Հիմնադրամի Մարմնի լիիրաւ անդամներ եւ որքան հնարաւոր է շուտ վերջացնել այս աշխատանքը, որից էլ կախուած է դրամահաւաքի յաջող աշխատանքները:

Ըստ ՀՄՄՄ-ի, Գործադիր Մարմնի անդամ պէտք է լինի նաեւ Հայաստանից ներգաղթած հայերի գաղութին հանրաժանօթ մի ներկայացուցիչ, քանի որ Թեյթոններին մասնակցողների եւ նուիրատուների մի ստուար խումբը հայաստանցիներ են: Բացի դրանից, ՀՄՄՄ-ը գտնում է, որ Հայաստան Հիմնադրամը ունենայ նաեւ մի ընդհ. տնօրէն հայերէն եւ անգլերէն լեզուներին քաջածանօթ, որ ունենայ նաեւ վարչական կարողութիւն ու լաւ ծանօթ լինի գաղութի հին ու նոր բոլոր խաւերին, որպէսզի կարողանայ դիւրացնել դրամահաւաքի համար տարուող անհրաժեշտ աշխատանքները:

Մինչ այդ ՀՄՄՄ-ը Ձեզ ցանկանում է յաջողութիւններ, ուժ ու եռանդ այս մեծ նպատակի իրագործման ճանապարհին:

Յարգանքներով`

Գրիգոր Շէնեան - Ատենապետ

[signature]

Վահան Բահարեան - Փոխ ատենապետ

[signature]

Նուպար Յակոբեան - Վարչութեան անդամ

[signature]

Սարգիս Սահառեան - Ատենադպիր

[signature]

[illegible]



4-10-96

[illegible] (WATER COOLER)
[illegible] (WALL FURNACE)
[illegible]

I [illegible]

[illegible].

1. [illegible]
2. [illegible] WATER COOLER-[illegible] (3 [illegible]), [illegible] (WALL FURNACE [illegible]), [illegible]
3. [illegible]

II [illegible]

1. [illegible]
2. [illegible]

III [illegible]

1. [illegible]

[illegible]

VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., #101
VAN NUYS, CA 91405
(818) 997-8845

[illegible] — (213) 962-1436:

[illegible] V. Baharian

Էտապային ծրագրի լուսապատճէն:

Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

ԲԷՅԼԱՆ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 7-12-96

ՑԱՒԱԿՑԱԳԻՐ

[illegible]

[illegible]

ՊՀՄ-ի վարչության կողմից Ալեք Մանուկյանի մահվան առթիվ գրված ցավակցականի լուսապատճենը (2 էջի վրա):





[illegible]

Հայ ժողովուրդը խոնարհւում է նրա յիշատակի առաջ:

Ատենապետ՝ Վահան Բահարեան
Ատենադպիր՝ [illegible]

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ
UNITED ARMENIAN COMPATRIOTIC SOCIETY of L.A.
825 E. COLORADO ST., GLENDALE, CA 91205 TEL: 818-240-9996

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Այս տարուայ 8 Դեկտեմբերին, ՀՄՄՄ-ն պիտի մեծարէ 80 եւ բարձր տարիք ունեցող այն երախտաւորները, որոնք վաստակ ունեցած են կրթական ասպարէզում (գիր եւ գրականութեան), եղած են գրողներ, բանաստեղծներ, ուսուցիչներ, ուսուցչուհիներ եւ ծառայած են հայապահպանման գործին, 1915 թ. մեծ եղեռնից յետոյ՝ թերթով, դասախօսութեամբ, հայրենասէր ոգի սերմանելով, ազգը կանգնեցնելով նաեւ այդ երեխաներին, որպէսզի նրանք չմոռնան իրենց ինքնութիւնը, հայ մնան եւ շարունակեն իրենց գործունէութիւնը ազգապահպանման գործում: Նրանցից շատերը այսօր նախանձելի պայմաններ են հասել, պատմելով միաժամանակ իրենց անցեալի պատմութիւնը:

Հետեւաբար ՀՄՄՄ-ը կոչ է անում Լոս Անջելըսի բոլոր հայրենակցական միութիւններին, անմիջապէս ներկայացնել ՀՄՄՄ-ի վարչութեան դիւանին, ներկայացնել իրենց թեկնածուների կենսագրականները (նկարով միասին), մինչեւ Նոյեմբերի 15-ը՝ ներառեալ ամփոփ, որ ատեանին յատուկ գրքոյկ պիտի պատրաստի նրանց կենսագրականներով մեծարման օրուայ առթիւ:

Ձեռնարկը տեղի պիտի ունենայ 1996 թուականի Դեկտեմբերի 8-ին, կիրակի երեկոյեան ժամը 6-ին, United Community Church, 333 E. Colorado, Glendale.

Մանրամասնութիւնների համար զանգահարել 818-240-9996 Գրիգոր Շէնեան, 818-246-2070 Սարգիս Մաճառեան, 818-997-8845 Վահան Բահարեան:

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

[illegible]

80 և բարձր տարիք ունեցող կրթական մշակների մեծարանքի առթիվ եղած Հաղորդագրության լուսապատճենը:

ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

## ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

UNITED ARMENIAN COMPATRIOTIC SOCIETY U.S.A.

825 E. COLORADO ST., GLENDALE, CA 91205 TEL: 818-240-9996

ՆՈՅԵՄԲԵՐ 14, 1996

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ**
**ԽՈՐՀՐԴԻ ԱՏԵՆԱՊԵՏ**
**ՊԱՐՈՆ ԺՈԶԷՖ ԱՒԵՏԻՍԵԱՆԻՆ**

1996 թուականի Դեկտեմբերի 8-ին, Կիրակի օրը, Հայրենակցական Միութիւնների Միացեալ Մարմինը (ՀՄՄՄ) պիտի մեծարէ 80 և բարձր տարիք ունեցող այն երախտաւորներին, որոնք վաստակ են ունեցել կրթական ասպարէզում (գիր և գրականութիւն), եղել են գրողներ, բանաստեղծներ, ուսուցիչ-ուսուցչուհիներ և նպաստել են հայապահպանման գործին 1915 թուի Մեծ Եղեռնից յետոյ՝ կրթելով, դաստիարակելով, հայաշունչ ոգի պարգեւելով, տէր կանգնելով նաեւ որբ երեխաներին, որպէսզի նրանք չկորցնեն իրենց ինքնութիւնը, հայ մնան և շարունակեն իրենց գործունէութիւնը ազգապահպանման գործում: Նրանցից շատերը այսօր հասել են նախանձելի պաշտօնների, կատարելով միաժամանակ իրենց ազգային պարտականութիւնը:

Մեծարման օրուայ առթիւ պիտի պատրաստուի նաեւ յատուկ գրքոյկ նրանց կենսագրականներով:

Ուրախ կը լինենք, եթէ ձեռնարկը քաջալերի նաեւ Հայաստանի Հայրենակցական Միութիւնների Խորհուրդը իր ներկայութեամբ (եթէ հնարաւոր է) կամ էլ իր խօսքը փոխանցելով նրան:

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ
ՀՄՄՄ-Ի ՓՈԽԱՏԵՆԱՊԵՏ

*Ժոզեֆ Ավետիսյանին ուղարկված նամակի լուսապատճենն:*



Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

ԲԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 4-21-97

Հայաստանի
Հայրենակցական Միությունների
Խորհրդի Ատենապետ
պր. Ժոզեֆ Ավետիսյանին

Սիրելի Ժոզեֆ!

Ահա քեզ ուղարկում եմ երկրորդ նամակը վերջին 15 օրվա ընթացքում [illegible] [illegible] Հայաստանի Հայրենակցական [illegible]:

Այս [illegible] [illegible] [illegible] [illegible] "[illegible]" [illegible] մեր [illegible] 10-ամյա [illegible] [illegible] [illegible] Հայրենակցական Միությունների [illegible] [illegible] [illegible] [illegible]:

Սիրելի Ժոզեֆ, դու հիշում ես երբ մեր [illegible] [illegible] [illegible] Հայրենակցական

*Ժոզեֆ Ավետիսյանին ուղարկված նամակի լուսապատճենն (2 էջի վրա):*

[illegible]



Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 05.21.1997

**ԵՐԵՒԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՆ. ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻՆ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Ձեր եղբօր՝ Թելման Տէր-Պետրոսեանի վաղաժամ մահուան կապակցութեամբ, Պէյլանի Հայրենակցական Միութեան Վարչութիւնը և ժողովուրդը իրենց խորազգաց ցաւակցութիւններն են յայտնում Ձեզ, հանգուցեալի ընտանիքին և բոլոր հարազատներին։

Նա իր կեանքը անսակարկ նուիրեց հայրենիքին, նրա անկախական վերականգնման ու հզօրացման մեծ գործին, կրկնապատկելով իր ջանքերը Հայաստանի անկախացումից յետոյ եւս։ Նա իր բոլոր հնարաւորութիւնները օգտագործում էր գործարար կապերը ուժեղացնելու համար նախ Թրքական գործարար շրջանակների հետ, նպաստելով հայրենիքի տնտեսութեան արագ վերականգնման և երկու հարևան՝ հայ և թուրք ժողովուրդների միջև յարաբերութեան մերձեցման ու յարաբերութիւնների բարելաւման գործին։ Այդ գործընթացը նպաստում էր պետական շրջանակների իրար մօտեցման՝ ի շահ մեր հայրենիքի։ Նա չկարողացաւ աւարտին հասցնել իր նախաձեռնած ծրագրերը, բայց վստահ ենք, որ նոր Թելմաններ աւարտին կը հասցնեն դրանք։ Վստահ ենք նաև, որ նրա գործունէութիւնը պատշաճօրէն կը գնահատուի հայրենի պետութեան ղեկավարների և ժողովրդի կողմից։

Մեր Միութիւնը այսուհետեւ էլ կը շարունակի իր լուման ներդնել անկախ Հայաստանի Հանրապետութեան բարգաւաճման աշխատանքներին, վստահ լինելով հայ ժողովրդի կամքին ու ներուժին՝ կերտելով մեր երազած հայրենիքը։

Հանգստութիւն նրա աճիւններին։

Թող լոյս իջնի նրա հոգուն։

ԱՏԵՆԱՊԵՏ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱ ՊԵՏՐՈՍԵԱՆ

*Թելման Տեր-Պետրոսյանի մահվան առթիվ Լևոն Տեր-Պետրոսյանին ուղարկված ցավակցականի լուսապատճեն:*

Vanan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 12-17-97

[illegible]
[illegible]
[illegible] 77-72-52

[illegible]

[illegible]

Հայկազ և Նաթալի Սարգսյաններին ուղարկված ցավակցականի լուսապատճեն:



NOUBAR'S
EL ADOBE PHARMACY
5207 HOLLYWOOD BOULEVARD
LOS ANGELES, CALIF. 90027
Tel. (213) 461-9451 • 461-9452

Դեկտեմբեր 27, 1997

[illegible]

[illegible]

Նուբարի շնորհակալական գրի լուսապատճեն::




Ժ. Ավետիսյանին ուղարկված նամակի լուսապատճեն (2 էջի վրա)



Vahan Baharian
7310 Keeler Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 987-8845

ԲԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 7-16-97

ԼՈՍ ԱՆՋԵԼԸՍ

Սիրելի Ժողէֆ!

[illegible]

Ժողեֆ Ավետիսյանին ուղարկված նամակի լուսապատճեն (2 էջի վրա):





[illegible]

11-15-97

Վահան Բահարյան
Հայրենակցական Միությունների Միացյալ Մարմնի
գործադիր մարմնի և Սփյուռքի Հայրենակցական Միության [illegible]

Թելեթոն-97

Որպես Հայրենակցական Միությունների Միացյալ Մարմնի գործադիր մարմնի և Սփյուռքի Հայրենակցական Միության ատենապետ, ես մեր միությունների անունից կոչ եմ անում բոլոր հայրենակիցներին, [illegible] ակտիվորեն մասնակցեն թելեթոնին: [illegible]

Այս հանգամանքով էլ Հայրենակցական Միությունների Միացյալ Մարմնի և Սփյուռքի Հայրենակցական Միության [illegible] Արցախին, թելեթոնին [illegible] 1,000.00 դոլար:
Շնորհակալություն ուշադրության համար:

Վահան Բահարյան
11-15-97
Լոս Անջելես

Նոյեմբեր 27-ի Թելեթոնի առթիվ նվիրատվության լուսապատճենը:



Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 02-20-98

**Երեւան, Պրն. Լեւոն Տէր-Պետրոսեանին**

Հարգելի Տեր-Պետրոսյան,

Ձեր անսպասելի հրաժարականը Նախագահության պաշտոնից, 1998 թվականի փետրվարի 3-ին, խորը ցավ պատճառեց սփյուռքի հայությանը, այդ թվում մեր միությանն ու ժողովրդին:

Որպես ՀՀ Նախագահ Ձեր ներդրումը Հայաստանի պետականության կայացման գործում անգնահատելի է և համոզված ենք, որ մեր պատմության մեջ Դուք պիտի ունենաք Ձեր արժանի տեղը:

Ղարաբաղյան շարժումը, «Ղարաբաղ» կոմիտեն, առաջնորդվելով Արցախի անկախությունը իրականացնելու համար, ուժ գտավ իր մեջ անկախացնել նաև Հայաստանը, որը մեր ժողովրդի դարավոր երազանքն էր: Առանց հիմքի շենք չի կարող կառուցվել, և Դուք՝ «Ղարաբաղ» կոմիտեի Ձեր գործընկերների հետ, կառուցեցիք այդ հիմքը, անցնելով դժվարին մի ճանապարհ, սկսելով զրոյից, չունենալով նույնիսկ հաց ու վառելիք, բայց ունենալով մեր ժողովրդի միասնությունը, կամքն ու հավատը, «Ղարաբաղ» կոմիտեն Ձեր ղեկավարությամբ ազատագրեց Արցախը, սկսեց ՀՀ պետականության ամրապնդման գործը, առնելով և՛ Արցախում, և՛ Հայաստանում ուժեղ բանակներ, որոնք երաշխավորեցին և երաշխավորում են մեր սահմանների անձեռնմխելիությունը, հետևաբար՝ մեր ժողովրդի անվտանգությունը:

Ձեր վարած արտաքին ճկուն քաղաքականության հետևանքով, Հայաստանը մեծ հարգանքի արժանացավ միջազգային հանրության կողմից և սկսեց ժողովրդավարական կարգերի ամրապնդումը Հայաստանում: Դժբախտաբար պատմության մեջ Ձեզ ընկավ շատ դժվարին ժամանակ՝ Արցախի ազատագրության համար մղվող պատերազմ, Ադրբեջանից Հայաստան եկած հարյուրավոր-հազարավոր փախստականների հոգսեր, ողբերգական երկրաշարժ, որոնք անհնարին կդարձնեին անգամ մի հզոր երկրի ուժ ունենալուն այդ միջոցին ղեկավար պաշտոնում մնալու անհնարինության վիճակը: Բայց Դուք մնացիք Ձեր նվիրված ընկերներով, դիմացաք և կարողացաք Ձեր Նախագահության ութ տարիների ընթացքում որոշ չափով սպիացնել մեր հայրենիքի վերքերը:

Ձեր կառավարության գործունեության ընթացքում իհարկե եղան նաև սայթաքումներ և սխալներ, որոնք բնորոշ չեն միայն չաշխատողին: Ինչ խոսք, որ ղեկավարելու փորձի պակասը նույնպես ազդեց պետականության կայացման վրա, հատկապես սկզբնական շրջանում:

Մեր միությունը, մենք չենք կասկածում նաև ամեն մի առողջ դատող միություն կամ կուսակցություն միշտ կանգնած է մեր պետականության կողքին, նրա կայացումը իրականացնող կառավարության հետ միասին, եթե այդ կառավարությունը օրինական ճանապարհով է եկել իշխանության, և պիտի աշխատենք մեր փոքրիկ լուման ներդնել մեր ժողովրդի բարօրության համար: Մենք բարձր ենք գնահատում Ձեր ներդրած ճիգերը Հայաստանի պետականության կայացման գործում: Հույս ունենք, որ ժողովրդավարական հիմունքներով ու խաղաղ պայմաններում ընտրվելիք նոր կառավարությունը կշարունակի Ձեր գործը, այն հասցնելով ավարտին հանուն մեր ժողովրդի հաղթանակի:

Մենք հույս ունենք նաև, որ Դուք չեք խնայի Ձեր ուժերն ու միջազգային բարեկամական կապերը՝ նոր կազմված կառավարությանը օգնելու գործում, դարձյալ ի բարօրություն մեր ժողովրդի:

Գնահատելով Ձեր ութ տարիների գործունեությունը, մեր միությունը իր շնորհակալությունն է հայտնում Ձեզ՝ ցանկանալով քաջառողջություն, նոր ավյուն՝ շարունակելու համար Ձեր ազգային գործունեությունը նաև ապագայում:

ԱՏԵՆԱՊԵՏ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Լևոն Տեր-պետրոսյանին ուղարկված նամակի լուսապատճենը:

Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

Թվական 4-20-98

# ԿՈՉ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻՆ !

1915 թ. Եղեռնից հետո Կիլիկիայի, Ալեքսանդրետի Սանջակում՝ իր մեջ մտնող Պէյլան, Իսկենտերուն, Գըրքխան, Անտիոք, Ջորք Մարզպան և նրանց շրջակա գյուղերում հայերը ապրեցին Ֆրանսիայի հովանավորության տակ մինչև 1939 թ., երբ նա այդ հողակտորն էլ հանձնեց Թուրքիային և մի բուռ հայերը հեռացան իրենց պապենական հողերից, իսկ վերապրողների մեծ մասն էլ հեռանալով մեզանից, եղեռնի սարսափների ու իրենց բնակավայրերի մասին հուշերը տարան իրենց հետ։ Այսօր շատ քչերն են ապրում։ Գոնե նրանց հուշերը փրկելու նպատակով վարչությունը որոշեց մի գիրք հրատարակել, որտեղ կամփոփվեն բոլորի հուշերը, նշելով նաև պատմողների անունները։ Գրքում պիտի լինի նաև բոլոր բնակավայրերի քարտեզները։ Այսպիսով մեր գերդաստանների շառավիղները չեն մոռանա իրենց բնօրրանը։

Վարչությունը խնդրում է բոլոր հայրենակիցներին, որոնք վերոհիշյալ քաղաքների ու գյուղերի մասին հուշեր ունեն, իրենց ընթեռնելի հուշագրերը ուղարկեն վերևում նշված հասցեով։

Նյութերը պետք է պարունակեն.

1. Բնակավայրերի (Գյուղերի) հիմնադրման մասին տեղեկություններ։
2. Որտեղի՞ց են եկել և հաստատվել այդ բնակավայրերում։
3. Կենցաղը – ապրելակերպը (հագուստ-կապուստ, ձեռագործ, իլիկ և այլն,) առօրյա ընտանեկան կյանք):
4. Սովորույթներ՝ ծնունդ (ինչ միջոցով), մկրտություն, աղջիկտես, խոսքկապ, նշանտուք, ամուսնություն, կատարվող երգերով ինչ լեզվով որ երգվել են։ Ընտանիքի անդամներ-հարս-ծնող հարաբերությունները։
5. Եկեղեցիներ, կոլեջներ, դպրոցներ, մանկապարտեզներ, խանութներ, բաղնիքներ, հասարակական կառույցվածքներ, (շենքեր, զբոսայգիներ և այլն):
6. Մտավորականներ (անունները, կենսագրականները և նկարները):
7. Մշակութային կյանք (նաև եկեղեցիներին, դպրոցներին ներս):
8. Հոգեվորականի ընտրություն, եկեղեցական արարողություն, եկեղեցի ինչպես էին գնում (հագնվածքը)։ Կրոնական ծիսակատարությունների և տոների նկարագրությունները։
9. Ապրուստի միջոցները, կերակուրներ։
10. Առողջապահական հարցեր։
11. Երևելի մարդկանց անունները կենսագրականներով և նկարներով։
12. Գյուղերը, Ճանապարհները (Հետիոտն, մեքենայի), հեռավորությունները միմյանցից (կիլոմետրերով), նրանց հարաբերությունները։

*«Կոչ Հայրենակիցներին»ի լուսապատճեն (2 էջի վրա):*



13. Քաղաքական վիճակը (կառավարում) տարբերկրյա դեսպանատներ և այլն։
14. Ժողովրդի զբաղմունքը (արհեստ, երկրագործություն, անասնապահություն, անտառատնտեսություն և այլն):
15. Կլիման, բուսական և կենդանական աշխարհ (արխիվային):
16. Հանքային հարստություններ և ջերմուկներ (արխիվային):
17. Բերդեր և տեղեկություններ նրանց մասին (հուշեր և արխիվային):
18. Գետեր, լճեր (արխիվային):
19. Շրջակա թրքական գյուղեր, տեղեկություններ նրանց մասին, հայ-թուրք (ժողովուրդ) հարաբերություններ։
20. Արխիվային նյութեր նշված բնակավայրերի մասին։
21. Տեղի ունեցած նշանակալի դեպքեր (լավ կամ վատ):
22. 1915 թ. Եղեռնի վկայություններ (պատմողի անուն ազգանուն), նկարներ հին թերթերի հավաքածուներ և այլն։
23. Երիտասարդական առօրյա, հայրենակցական, բարեսիրական, երիտասարդական միություններ, ինքնապաշտպանություն, զինվորագրություն, կամավորական շարժում և սրանց հետ կապված իրադարձություններ։ Վիճակագրական, պատմական, աշխարհագրական ու քաղաքական իրադարձությունների վերաբերյալ նյութեր։
24. Տարբեր հարանվանությունների (կաթոլիկ, բողոքական, նրանց մուտքը) նյութեր։
25. Քարտեսներ, նկարներ (որևէ ժամանակի) այդ տեղերի մասին։
26. Եվ այլ նյութեր, որոնք մի գուցե մեր կողմից մոռացված են։

Գրքի հրատարակումը պահանջում է ժամանակ և աշխատանք՝ ուսումնասիրել հայկական և օտար արխիվներ, որը մեծ ծախսերի հետ է կապված, ու վարչությունը կարիք ունի ձեր նյութական օժանդակության։ Բոլոր նվիրատուների անունները իրենց նվիրած գումարներով պիտի ընդգրկվեն հրատարակվելիք գրքում։

Գրքի հրատարակման ֆոնդի համար բանկում հատուկ հաշիվ պիտի բացվի և ձեզ մանրամասն հաշվետվություն պիտի տրվի ծախսերի մասին։

Ձեր չեքերի վրա խնդրում ենք գրել՝

**BCU BOOK FUND**

Նախօրոք բոլորից շնորհակալություն ենք հայտնում ձեր նվիրատվության և օգնության համար, հատկապես ձեր հուշագրերով, առանց որոնց հրատարակվելիք գիրքը թերի կլիներ։

Գրքի հրատարակման համար պիտի կազմվի նաև հանձնախումբ, որի մասին ձեզ տեղյակ կպահենք։

Ատենապետ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ
Քարտուղար՝ ՄԱՐՏԻՐՈՍ ԷՔՇԻՅԱՆ

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

*Պէյլանի Հայրենակցական Միութիւնը, 1986 թուականին առաջնորդուելով Լոս Անջելըսում, շարունակում է իր ազգային գործունէութիւնը մեր համայնքից ներս, սատարելով հայապահպանման և մեր պետականութեան կայացման ազգօգուտ գործին։*

*Մեր նախնիների երկրի՝ Կիլիկիայի պէյլանցիների բնօրրանը եկող սերունդների մէջ վառ պահելու նպատակով, վարչութիւնը ծրագրում է Պէյլանի և նրա շրջակայ բնակավայրերի մասին մի գիրք հրատարակել, որը առանց մեր ժողովրդի աջակցութեան հնարաւոր չէ։*

*Ուստի, վարչութեան խնդրանքն է բոլոր պէյլանցիներին և ոչ պէյլանցի հայրենակիցներին, որտեղ էլ որ լինեն նրանք, իրենց ունեցած յուշերն ու տեղեկութիւնները, առանց ծուլանալու թղթին յանձնել և ուղարկել հետեւեալ հասցէով*

*VAHAN BAHARIAN*
*7310 KESTER AVE., #101*
*VAN NUYS, CA 91405, USA,*
*TEL: (818) 997-8845:*

*Մի մոռանաք, որ այդ գիրքը պիտի լինի մի յուշամատեան մեր բոլոր բնակավայրերի մասին, որտեղ պիտի գտնէք ձեզ հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները։*

**ՑԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ՝ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Կարեւոր Ազդի լուսապատճէն։



Vahan Baharian
7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 02-20-98

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ
ԳԵՐԱՊԱՏԻՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՆԵՐՍԷՍ ԱՐՔ. ՊՈԶԱՊԱԼԵԱՆԻՆ

Հայր Սուրբ,

Պէյլանի Հայրենակցական Միութեան վարչութիւնը որոշեց մի գիրք կամ երկասիրութիւն հրատարակել Պէյլանի և իր շրջակայ գիւղերի մասին, ընդգրկելով նաև Ալեքսանտրէթը (Իսքենտերուն), Չորք Մարզպանը, իրենց շրջակայ գիւղերով և այդ նպատակով ձեռնարկել է այդ շրջանների վերաբերեալ նիւթերի հաւաքման։

Նկատի ունենալով, որ ձեր արխիւներում այդ շրջանների վերաբերեալ կը լինեն հարուստ նիւթեր՝ սկսած նրանց առաջնեան պատմութիւնից, խնդրում ենք ձեզ անհրաժեշտ օգնութիւնը ցուցաբերել մեզ այդ նպատակով, այդ նիւթերով տրամադրելու գործում։

Խնդրում ենք ուղարկել նաև Ձեր կենսագրութիւնը և գործունէութեան վերաբերեալ նիւթերը, որոնք կը ընդգրկենք հրատարակուելիք գրքի մէջ։

Մեր խնդրանքն է Ձեզ նաև, որ օգտակար լինէք մեզ վերոյիշեալ շրջաններին վերաբերող նիւթերը Երեւանի Մատենադարանից ձեռք բերելու համար։

Միութիւնը ի վիճակի չէ արխիւների ուսումնասիրութեան համար մարդ ուղարկելու՝ նիւթական միջոցների սղութեան պատճառով, բայց ի վիճակի է ձեր համեստ ծախսերը հոգալ, եթէ նախօրօք յայտնէք մեզ անհրաժեշտ գումարը, որը վարչութեան կողմից փոխհատուցուելու է արագ։

Գնահատելով ձեր երկարամեայ ազգային գործունէութիւնը, յոյս ունենք, որ օգտակար կը լինէք մեզ այս հարցում, որպէսզի մեր բնօրրանը գտնէ պատմութեան մէջ լիարժէք արժանի հայկական պատկանելիութիւնը։

Նախապէս շնորհակալութիւն յայտնելով Ձեզ, սպասում ենք ձեր դրական պատասխանին։
Յարգանքներով

| | |
|---|---|
| ԱՏԵՆԱՊԵՏ | ՎԱՀԱՆ ՊԱՀԱՐԵԱՆ |
| ՔԱՐՏՈՒՂԱՐ | ԱՐԱ ՊԵՏՐՈՍԵԱՆ |

Էջմիածնի կաթողիկոսարանին ուղարկուած նամակի լուսապատճէն։

ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
ARMENIAN PATRIARCHATE
34480 KUMKAPI - ISTANBUL

18 Մարտ 1998

000363

Մեծայարգ
Տիար Վահան Պահարեան
Ատենապետ՝ Պէյլանի Հայրենակցական Միութեան
Գալիֆորնիա-Միացեալ Նահանգներ

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր 20 Փետրուար 1998 թուակիր գրութիւնը, որով արխիւային նիւթեր կը խնդրէիք Աղեքսանդրէթի, Պէյլանի, Ջորք Մարզպանի եւ շրջակայից մասին:

Հաթայի շրջանը այժմու Թուրքիոյ սահմաններուն մէջ մտած է, ինչպէս գիտէք, 1938 թուականին: Իսկ Պատրիարքական Աթոռս սոյն տարածքին վրայ կրցած է հոգեւոր մատակարարութեան պաշտօնին լծուիլ հազիւ 1950-ական թուականներուն Երջանկայիշատակ Գարեգին Ա Պատրիարքի (Տրապիզոնցի Խաչատուրեան) շրջանին:

Ուստի, պէտք առաջարկել, որ դիմէք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, որոնց արխիւներուն մէջ հարուստ նիւթ պէտք է գտնուին տուեալ վայրերուն մասին:

Աղօթարար՝

Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆեան
Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ

*Ստամբուլի պատրիարքարանից ստացված նամակի լուսապատճեն:*



20 Մարտի 1998

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible] Գրիգոր Գոնսթուրեան

Գրիգոր Գոնստուրյանի նամակի լուսապատճեն:

VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
PHONE: (818) 997-8845
FAX: (818) 785-3734

Թվական 07-14-98

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ORIENTAL STUDIES
24"G" MARSHAL BAGHRAMIAN AVE.
YEREVAN 375019, ARMENIA

ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի
Տնօրեն՝ մեծարգո պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյան

Դուք արդեն տեղյակ եք, որ Պեյլանի Հայրենակցական Միությունը հանձն առավ Ալիշան Պայրամյանի «Ալեքսանդրեթի Սանջակի Հարցը և Միջազգային Դիվանագիտությունը 1918-1939 թթ.» աշխատության հրատարակման ծախսերը հոգալու գործը: Հազար դոլարը վճարելու է միությունը, իսկ մնացած հազար դոլարը՝ իր զավակները:

Մինչև տպագրության գործը սկսելը ցանկալի է.

Ա) որ, մեր միությանը և հեղինակին խոստացվի մոտ 150 օրինակ գիրք:
Բ) որ, գրքի անվանաթերթի հաջորդ էջում նշվի. «Գիրքը հրատարակվում է Պեյլանի Հայրենակցական Միության մեկենասությամբ» և հեղինակի զավակների աջակցությամբ:
Գ) իմանալ, թե ի՞նչ տպաքանակով է լույս տեսնելու աշխատությունը և դրամը ուղարկելուց հետո մոտավորապես որքա՞ն ժամանակում պատրաստ կլինի այն:
Դ) իմանալ, թե ի՞նչ որակի թղթի և ինչ շրիֆտով է տպագրվելու գիրքը:

Այս նամակի պատասխանը ստանալուց հետո, կուղարկենք Ձեզ պահանջված գումարը:

Պրն Հովհաննիսյան կներեք, որ մի քիչ մանրամասնությունների մեջ ընկա, որովհետև միայն ինձանով չի վերջանում հարցի լուծումը, քանի որ այն քննարկվեց վարչության նիստում և որոշում կայացվեց վերոհիշյալ հարցերը ներկայացնել Ձեզ: Խնդրում եմ այս բոլորը նկատի ունենաք և ներողամիտ լինեք:

Հարգանքներով՝

Ատենապետ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ
Քարտուղար՝ ՄԱՐՏԻՐՈՍ ԷՔՇԻՅԱՆ

*Ալիշան Պայրամյանի գրքի տպագրության հարցով, Նիկոլայ Հովհաննիսյանին ուղարկված նամակի լուսապատճեն:*



VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE. # 101
VAN NUYS, CA 91405
PHONE: (818) 997-8845
FAX: (818) 785-3734

Թվական 7-24-98

ARARAT HOME
MR. BOB SHAMLIAN
15105 MISSION HILLS RD.
MISSION HILLS, CA 91345

Հարգելի պրն. Շամլյան

Վարչությունը քննարկեց մեր միության Տիկնանց Հանձնախմբի ատենապետուհի՝ Տիկին Սրբուհի Ներիմյանի միջոցով ուղարկված Ձեր առաջարկը՝ միության կողմից «Արարատ Տան» Ծերանոցի, Սեպտեմբեր 1, 1998 թ. ցերեկվա ճաշկերույթը (տոմսի գին 38) հովանավորելու կապակցությամբ և որոշեց հովանավորել այն:

Սույն նամակով Ձեզ ուղարկում ենք ճաշացման համար պահանջված գումարը՝ $300-ի չեք (#473) և Ձեր խնդրանքով՝ ամփոփ տեղեկություններ միության գործունեության մասին:

Պեյլանի Հայրենակցական Միությունը ստեղծվեց 1986 թ. Մայիսի 7-ին 17 հիմնադիր անդամների կողմից և հիմք դրվեց հայապահպանման գործընթացին սատարող մի կազմակերպության ես:

Հիմնականում Պեյլանցիները Կիլիկիայի Իսկենդերունի Սանջակի շրջանի ժողովուրդն են՝ Պեյլան վարչական կենտրոնով, որոնք 1939 թ. մեր «բարեկամ» Ֆրանսիայի «հոգատարության» հետևանքով, թողնելով իրենց պապենական հողերը, հաստատվեցին հիմնականում Լիբանանի Սուր քաղաքի մոտակայքում, իսկ նրանց մեծամասնությունը 1946 թ. ներգաղթեցին Հայաստան և այնտեղից էլ վերջին տասնամյակներում արտագաղթեցին Ամերիկա:

1996 թ. միությունը նշեց իր հիմնադրման տասնամյակը ճաշկերույթ-պարահանդեսով, որը վերածվեց մշակութային երեկոյի, որտեղ ելույթ ունեցան հայրենի հայտնի արվեստագետներ Աննա Նշանյան, Հայկ Թումանյան և այլք: Այստեղ ներկա էր նաև Հայաստանի Հայրենակցական Միությունների Միացյալ Խորհրդի ատենապետ Պրն. Ժոզեֆ Ավետիսյանը, որը հիացավ մեր միության աշխույժ գործունեության վրա իր ունեցած դժվարին պայմաններում և դրվատեց նրա աշխատանքները, քաջալերելով նրան:

Իր գործունեության ընթացքում միությունը կազմակերպում է ճաշկերույթ-պարահանդեսներ, դաշտահանդեսներ, ապրիլյան հուշատոն, ինչպես նաև հովանավորում է մշակութային և արվեստի միջոցառումներ: Միշտ Հայաստանի պետականության հետ է և օգնում է նրան նյութապես ու բարոյապես: Նյութական օգնություն է ցույց տալիս Հայաստանի կարիքավոր ընտանիքներին, ինչպես նաև Լոս Անջելոսի Դպրոցներին ու եկեղեցիներին:

Իր ամբողջ գործունեության ընթացքում նա սատարել է, սատարում է և պիտի շարունակի սատարել հայապահպանման ու հայրենիքին օգնելու Սուրբ գործին:

Ատենապետ՝

Վահան Բահարյան

*Պապ Շամլյանին ուղարկված նամակի լուսապատճեն:*

ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
BEYLAN COMPATRIOTIC UNION

VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., #101
VAN NUYS, CA 91405
PHONE: (818) 997-8845
FAX: (818) 785-3734

Թուական 08-18-98

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ORIENTAL STUDIES
24"G" MARSHAL BAGHRAMIAN AVE.
YEREVAN 375019, ARMENIA

Հարգելի Պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյան,

Ստացանք 03-08-98 թ. Ձեր fax-ով ուղարկած նամակը, որի բովանդակությունը գոհունակություն պատճառեց Վարչության անդամներին, և Ալիշան Բայրամյանի զավակներին:

Շնորհակալություններ նամակում մեր արծարծած հարցերի հստակ ու բավարար պարզաբանման համար:

Այս նամակը նույնպես ուղարկվում է Ձեզ fax-ով նախօրոք պայմանավորվածության համաձայն խոստացված $2.000-ի հետ միասին, Ալիշան Բայրամյանի գրքի տպագրության համար (700 օրինակով): Հուսով ենք, որ գիրքը կհրատարակվի Ձեր խոստացած պայմանաժամում (երեք ամսում):

Երբ դրամը ստանաք, խնդրում եմ մեզ հայտնեք այդ մասին իմ fax-ով:

Հաջողություններ ենք ցանկանում գրքի շուտափույթ հրատարակության համար:

Խորին հարգանքներով՝

Ատենապետ

[signature]

Վահան Բահարյան

*Ա. Պայրամյանի գրքի հրատարակության համար ուղարկված դրամի նամակի լուսապատճեն:*



ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ
UNITED ARMENIAN COMPATRIOTIC SOCIETY of L.A.
825 E. COLORADO ST., GLENDALE, CA 91205 TEL: 818-240-9996

ԱՅՆԹԱՊ
ԵՕԶԿԱԹ ԵՒ ՇՐՋ.
ԶԷՅԹՈՒՆ
ԷՎԷՐԷԿ-ՖԷՆԷՍԷ
ԿԵՍԱՐԻԱ ԵՒ ՇՐՋ.
ՀԱՄԱՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
ՀԱՃԸՆ
ՄԱՐԱՇ
ՄՈՒՍԱ ԼԵՌ
ՈՒՐՖԱ
ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ
ՊԷՅԼԱՆ
ՏԱՐՕՆ-ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ
ՔԻԼԻՍ

AINTAB
YOZGATH
ZEITUN
EVEREG-FENESSE
GUESARIA
PAN-VASBOURAGAN
HADJIN
MARASH
MOUSSA LER
OURFA
CHORK-MARZBAN
BEYLAN
DARON-DOUROUPERAN
DIKRANAGERT
KILIS

Փետրուար 11, 1998

Դր. Լեւոն Տէր-Պետրոսեանին
Երեւան.

*Յարգելի Դր. Տէր-Պետրոսեան,*

*Հայաստանում տեղի ունեցող վերջին իրադարձութիւնները, յատկապէս Արցախի հարցի կապակցութեամբ և Ձեր հրաժարականը 1998 թ. Փետրուարի 3-ին, շփոթութեան մատնեց ամբողջ Սփիւռքը, այդ թւում և Հայրենակցական Միութիւնների Միացեալ Մարմինը (ՀՄՄՄ), որը անկախութեան անցած ութը տարիների ընթացքում եղաւ մեր պետականութեան և օրինաւոր կերպով ընտրուած կառավարութեան կողքին, յանուն նրա կայացման ու ամրապնդման:*

*ՀՄՄՄ-ը պիտի շարունակէ իր այս ուղին պետութեան բոլոր ղեկավարների հետ, որոնք ըստ սահմանադրութեան օրինաւոր կերպով կ'ընտրուեն: Այսօր առաւել ևս զգացւում է խոհեմ ղեկավարի կարիքը, քանի որ Արցախի հարցի լուծումը յանգում է նոր արհեստածնութիւնների հասցէի, այլ խաղաղ ճանապարհով լուծում:*

*Անցած ութը տարիների գործունէութեան ընթացքում, Արցախի Կոմիտէի Ձեր մինակիցների հետ դուք բազում դժուարութիւններ յաղթահարեցիք, ինչպիսին էին Արցախի պատերազմական պատերազմը, Հայաստանի ահաւոր երկրաշարժը, Ադրբեջանից հարիւր հազարաւոր հայ փախստականների Հայաստանում պատսպարելը, և կարողացաք ապահովել Արցախի յաղթանակը պաշտպանելով մեր պապենական հողերը, ինչպէս նաև մեր ժողովրդի ապահովութիւնը, ստեղծելով հզօր բանակներ Արցախում և Հայաստանում:*

*Ձեր ծնունդ առածին քաղաքականութեան շնորհիւ, Հայաստանը յարգանքի արժանացաւ միջազգային բոլոր պետութիւնների կողմից և տարածաշրջանում ճանաչուեց ամենաժողովրդական պետութիւնը, որի արդիւնքն էր նրանց աջակցութիւնը Հայաստանի տնտեսութեան վերականգման գործին:*

*Այսօր չենք կարող ուրանալ, որ դարեր շարունակ երազած մեր անկախութիւնը իրա-*

*Լևոն Տեր Պետրոսյանին ուղարկված նամակի լուսապատճեն (2 էջի վրա):*

**ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ**

UNITED ARMENIAN COMPATRIOTIC SOCIETY of L.A.

825 E. COLORADO ST., GLENDALE, CA 91205 TEL: 818-240-9996

ԱՅՆԹԱՊ
ԵՕԶԿԱԹ ԵՒ ՇՐՋ.
ԶԵՅԹՈՒՆ
ԷՎԵՐԷԿ-ՖԵՆԵՍԷ
ԿԵՍԱՐԻԱ ԵՒ ՇՐՋ.
ՀԱՄԱՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
ՀԱՃԸՆ
ՄԱՐԱՇ
ՄՈՒՍԱ ԼԵՌ
ՈՒՐՖԱ
ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ
ՊԷՅԼԱՆ
ՏԱՐՕՆ-ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ
ՔԻԼԻՍ

*կանգնած Ղարաբաղ Կոմիտէի միջոցաւ Ձեր ղեկավարութեամբ, մի նոր էջ բանալով հայ ժողովրդի պատմութեան մէջ և իրաւունք յունենք այդ կարգնելու, որպէսզի շարունակենք մեր դարերից եկող երթը դէպի նոր դարերը։*

*Խորհրդային Միութեան փլուզումից յետոյ, ԱՊՀ-ի երկրներից Հայաստանը առաջինը սկսեց իրագործել սեփականաշնորհման գործընթացը, որը շարունակւում է։*

*Ձեր գործունէութեան ընթացքում եղան նաև յաջողումներ ու սխալներ. այդ էլ չէր կարող չլինել, որովհետև ստեղծուեց նոր անկախ պետականութիւն անփորձ ղեկավարներով, գումարած տնտեսական անմխիթար վիճակը, էներգիայի չգոյութիւնը եւայլն։ Այս բոլոր դժուարութիւնները յաղթահարելու համար անհրաժեշտ էր պողպատէ կամք, որը դուք ունեցաք և նրա արդիւնքում սկսուեց Հայաստանի տնտեսութեան վերականգնումն ու պետականութեան կայացումը։*

*ՀՄՄՄ-ը գնահատում է Ձեր նուիրուած գործունէութիւնը անցած տարիների ընթացքում, շնորհակալութիւն յայտնելով Ձեզ և համոզուած է, որ դուք պիտի շարունակէք Ձեր ապագային գործունէութիւնը ի բարօրութիւն հայ ժողովրդի։*

*Յարգալից բարևներով և արևշատութեան մաղթանքներով՝*

*ՀՄՄՄ-ի ցկեանս նախագահ՝ Վահան Շամլեան*
*Ատենապետ՝ Գրիգոր Շէնեան*
*Փոխ-ատենապետ՝ Վահան Բահարեան*
*Ատենադպիր՝ Սարգիս Մաճառեան*

AINTAB
YOZGATH
ZEITUN
EVEREG-FENESSE
GUESARIA
PAN-VASBOURAGAN
HADJIN
MARASH
MOUSSA LER
OURFA
CHORK-MARZBAN
BEYLAN
DARON-DOUROUPERAN
DIKRANAGERT
KILIS



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀ ՊՐՆ. ՌՈԲԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆԻՆ

Յարգելի նախագահ,

Հայաստանի ժողովուրդը հաւատալով Ձեր՝ հայրենիքի նուիրուածութեանը, Երկուշաբթի, Մարտ 30, 1998 թ., երկրորդ քուէարկութեամբ Ձեզ վստահեց Հայաստանի Հանրապետութեան ղեկը, վստահելով, որ դուք Պրն. Լեւոն Տէր-Պետրոսեանից յետոյ դառնալով մեր նորընծայ անկախ Հանրապետութեան երկրորդ նախագահը, պիտի շարունակէք նրա գործը և մեր ժողովրդին հասցնէք 21-րդ դար իր նորանոր նուաճումներով, աւելի հզօրացնելով այն և՛ քաղաքականապէս և՛ տնտեսապէս:

Պրն. Լեւոն Տէր-Պետրոսեանը «Ղարաբաղ Կոմիտէի» իր գաղափարական վինակիցների հետ ստեղծեց Հայաստանի անկախ Հանրապետութեան ամուր հիմքը: Դուք ևս Ձեր լուման ունեցաք այդ գործում: Այժմ Ձեզ բաժին է ընկել աւելի ծանր պարտականութիւն՝ Ձեր վինակիցներով շարունակել և պատուով աւարտին հասցնել այն:

Մեր ժողովուրդը արժանի է բարւոք կեանք ապրելու, ինչպէս աշխարհի շատ ժողովուրդներ և նա Ձեզ ընտրելով որպէս նախագահ, Ձեր վրայ դնում է շատ մեծ պարտաւորութիւններ, որոնցից յատկապէս երկուսը՝ Արցախի հարցը և Հայաստանի տնտեսական վիճակը հրատապ հարցեր են, վճռորոշ դեր են խաղալու Ձեր նախագահութեան ընթացքում և հայ ժողովուրդը մեծ հաւատքով ու յոյսով սպասում է նրանց արագ լուծմանը:

Արցախի հարցի արդար լուծումը չափազանց կարևոր է լինելու մեր ժողովրդի հետագայ ճակատագրի համար: Հետևաբար, նրա արագ և ճիշդ լուծումը խաղաղութիւն կը բերի մեր ժողովրդին, արագացնելով նրա տնտեսական կեանքի բարելաւումը:

Այս հարցում Սփիւռքի դերը ևս շատ մեծ է, հետևաբար պէտք է ջանալ ամէն կերպ սերտացնելու Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները, նպաստելով մեր հայրենիքի վարգացմանն ու հզօրացմանը:

Հայրենակցական Միութիւնների Միացեալ Մարմինը (ՀՄՄՄ) միշտ կանգնած է մեր պետականութեան կողքին և պիտի աշխատի ամէն կերպով նեցուկ կանգնել ժողովրդի կողմից օրինաւոր ճանապարհով ընտրուած Հայաստանի Հանրապետութեան բոլոր նախագահներին, չխնայելով իր ուժերը նրանց օգնելու գործում աւելի լաւ հայրենիք կերտելու գործում:

ՀՄՄՄ-ը իր ողջ ժողովրդով շնորհաւորելով Ձեզ՝ որպէս Հայաստանի Հանրապետութեան նորընտիր նախագահը, ցանկանում է Ձեզ քաջառողջութիւն, առաւել ուժ ու եռանդ, զօրաւոր կամք, որպէսզի 21-րդ դարը դիմաւորենք մեր իղձերը իրականացած տեսնելով:

Յարգանօք՝

ՀՄՄՄ-ի ցկեանս նախագահ՝ ՎԱՀԱՆ ՇԱՄԼԵԱՆ
Ատենապետ՝ ԳՐԻԳՈՐ ՇԷՆԵԱՆ
Փոխ-ատենապետ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ
Ատենադպիր՝ ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ

*Ռոբերտ Քոչարյանին ուղարկված նամակի լուսապատճեն:*

ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

UNITED ARMENIAN COMPATRIOTIC SOCIETY of L.A.

825 E. COLORADO ST., GLENDALE, CA 91205 TEL: 818-240-9956

ԱԴԱՆԱ
ԽԱՐԲԵՐԴ ԵՒ ՇՐՋ.
ԶԷՅԹՈՒՆ
[illegible]
ԿԵՍԱՐԻԱ [illegible]
[illegible]
ՀԱՃԸՆ
ՄԱՐԱՇ
[illegible]
[illegible]
ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ
ՊԷՅԼԱՆ
[illegible]
[illegible]
ՔԻԼԻՍ

AINTAB
YOZGAT
ZEITUN
[illegible]
GUESARIA
[illegible]
HADJIN
MARASH
[illegible]
[illegible]
CHORK-MARZBAN
BEYLAN
[illegible]
[illegible]
KILIS

4-11-98

Սիրելի Ժոզեֆ!

[illegible]

*Ժոզեֆ Ավետիսյանին ուղարկված նամակի լուսապատճեն (3 էջի վրա):*



-2-

[illegible]

- 3 -

[illegible] 600 [illegible] 50-60 [illegible] 500 [illegible] 1000 [illegible]

[illegible]

Սիրով՝

Վահան Բահարյան

Լոս Անջելես

Յ.Գ. [illegible]



VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 6-25-98

Սիրելի Ժորժ!

[illegible] 05-06-98 [illegible] 40 [illegible] 25-[illegible]

[illegible]

Ժ. Ավետիսյանին 6-25-98 Թ. ուղարկված նամակի լուսապատճեն (2 էջի վրա):







KÉVORK K. BAGHDJIAN Ph.D
(VAZKÈNE AYKOUNI)
DOCTEUR EN SOCIOLOGIE JURIDIQUE
MEMBRE DE L'ORDRE DU CANADA
OFFICIER DANS L'ORDRE DES PALMES ACADÉMIQUES
MÉDAILLE DE L'INSTRUCTION PUBLIQUE

ADRESSE POSTALE:
5300, AVENUE DÉCELLES
MONTRÉAL, QUÉBEC
CANADA H3T 1V8
TÉLÉPHONE: (514) 739-8808

Գևորգ Պաղճյանի նամակի լուսապատճենը:

VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
PHONE: (818) 997-8845
FAX: (818) 785-3734

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԲԵՅԼԱՆԻ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 01-06-99

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ORIENTAL STUDIES
24G MARSHAL BAGHRAMIAN AVE.
YEREVAN 375019, ARMENIA
TEL. 58-33-82
FAX: (374) 2-58-50-75

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության Ինստիտուտի տնօրեն
Հարգելի Պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյան

Ստացա Ձեր 6-11-98 թվակիր նամակը: Պատասխանի ուշացման պատճառը գրքի շնորհանդեսի կազմակերպման հարցն էր, որն արդեն համարյա լուծված է:

Բեյլանի Հայրենակցական Միության Վարչության անունից և անձամբ նախ՝ շնորհավորում եմ Ձեր և Ձեր հաստատության բոլոր աշխատողների 1999 թ. Նոր Տարին և Ս. Ծնունդը, ցանկանալով Ձեզ քաջառողջություն, ընտանեկան երջանիկ կյանք և գիտության բարձունքների նորանոր նվաճումներ:

Երկրորդ՝ շնորհակալություն եմ հայտնում Ձեր տարած աշխատանքների դրական արդյունքի համար Պրոֆ. Ալիշան Բայրամյանի «Ալեքսանդրետի Սանջաքի Հարցը եվ Միջազգային Դիվանագիտությունը 1936-1939 թթ.» գրքի հրատարակության առթիվ և մեզ առաքված օրինակների համար: Դժբախտաբար ուղարկված 150 օրինակից ստացել ենք միայն 140 օրինակ: Հուսով ենք, որ հետագայում մնացածն էլ կստանանք: Վարչությունը որոշեց գրքերի առաքման Ձեր ծախսը վերադարձնել Ձեզ, որը, հավանական է, այս ամսում կստանաք:

Լոս Անջելեսում սանջաքցիները շատ են և գրքի շնորհանդեսն էլ նշանակված է այս տարվա՝ 1999 թ. փետրվարի 4-ին: Եթե մեզ մոտ եղած գրքերի քանակը չբավարարի, Դուք հնարավորություն կունենա՞ք արդյոք լրացուցիչ օրինակներ ուղարկել մեզ, որպեսզի ըստ այնմ էլ մենք այստեղ ցանկացողներին ցուցակագրենք (ըստ մեր ենթադրության 50 օրինակի սահմաններում, եթե անշուշտ կարիքը լինի):

Քանի որ գրքի շնորհանդեսը համընկնում է նաև Ալիշան Բայրամյանի ծննդյան 85-ամյակի և Սանջաքը Թուրքիային հանձնելու 60-ամյակի հետ, այս կապակցությամբ շատ շնորհակալ և ուրախ կլինեինք, եթե շնորհանդեսին ուղղված Ձեր շնորհավորական խոսքն ունենայինք:

Ընդունելով, որ մեր համատեղ աշխատանքը, առանց բարդությունների, հաջողությամբ պսակվեց, ինչպես նաև Դուք եք գրում այդ մասին Ձեր նամակում, հուսով ենք, որ այդ համագործակցությունը կշարունակվի:

Հարգանքներով՝

Ատենապետ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ

Ն. Հովհաննիսյանին ուղարկված 01-06-99 թվակիր նամակի լուսապատճեն:



VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
PHONE: (818) 997-8845
FAX: (818) 785-3734

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԲԵՅԼԱՆԻ
BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 01-28-99

Mr. NOUBAR MARTAYAN
223 RUE DU Fbg. ST. ANTOINE
PARIS-75011, FRANCE

Հարգելի Նուպար,

Քեզ ուղարկում եմ Պրոֆ. Ալիշան Բայրամյանի «Ալեքսանդրետի Սանջաքի Հարցը եվ Միջազգային Դիվանագիտությունը 1936-1939 թթ.» գրքից մի օրինակ: Կարծում եմ, որ քեզ կուրախացնի այդ իրողությունը իր հետ բերելով նաև ՄԵԾ տխրություն մեր պապենական բնօրրանը կորցնելու առթիվ: Գրքի շնորհանդեսը (գինեձոնը) մեր միության կազմակերպությամբ ու հովանավորությամբ, նախատեսված է սույն թվի Փետրվարի 4-ին, որը զուգադիպում է Սանջաքը Ֆրանսիայի կողմից Թուրքիային հանձնելու 60-ամյակի հետ: Բնական է, որ այդ մասին նույնպես պիտի խոսվի այդ օրը: Ուրախ կլինեմ քո կարծիքը ունենալ գրքի մասին՝ ուղղված հեղինակին:

Երեկ Զարեհը զանգահարեց: Բարևներ է ուղարկում քեզ: Գրքի մասին խոսեցինք մի քիչ ( իրեն մի քիչ ավելի շուտ էի ուղարկել գիրքը): Դիտողություն արեց, թե հայերի մասին քիչ է գրված գրքում ու շատերի անունները չկան, միայն կոմունիստների և ռամկավարների անուններն են նշված: Դիտողությունը տեղին է, բայց գիրքը գրված է 30 տարի առաջ, խորհրդային շրջանում, ուստի, դժբախտաբար, հնարավոր չէր մյուսների մասին գրել այն ժամանակ, իսկ հեղինակի 85 տարին լրացավ Հունվարին և պարզ է, որ հիմա նա ի վիճակի չէ այն վերամշակել: Այս բացատրությունից հետո նա հանգստացավ:

Բեյլանի մասին գրվելիք գրքի աշխատանքները՝ նյութերի ու հուշերի հավաքումը շատ դանդաղ է ընթանում: Քեզ խնդրում եմ, որ նույնպես հուշերդ գրես և ուղարկես ինձ:

Զարեհն ասաց, որ Փարիզի մեջ մի ազգական ունի՝ Հակոբ Պայլան, որը հայկական ռադիոկայանի ղեկավարն է:

Ես քեզ ուղարկում եմ մի նամակ-հարցաթերթիկ եւ, եթե քեզ համար դժվար չէ, հանձնիր իրեն և խնդրիր, որ ինքն էլ իր հուշերը գրի ու եթե իրեն հասցեն էլ ունենամ, շատ ուրախ կլինեմ: Միգուցե այս ձևով կարողանանք մի քիչ աշխուժացնել այս գործը:

Հարգանքներով՝

Ատենապետ՝

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ V. Baharian

Նուպար Մարթայանին[1] ուղարկված նամակի լուսապատճեն:

1.- Նուպար Մարթայանը Զարեհ Պայլանի (Նյու Ջերսի) ընկերն է: Զարեհը ինձ բավական նյութ ուղարկեց Բեյլանի մասին: Նա նաև միությանը նվիրեց մի տեսաերիզ Սանջաքի մասին, որը նկարահանելիս Նուպարի հետ են եղել: Տեսաերիզը գտնվում է Գրիգոր Դովլաթյանի մոտ, որը, նույնիսկ միության 10-ամյակի ժամանակ չտվեց, որպեսզի օգտագործեի այդ նպատակով միության համար պատրաստած տեսաերիզի մեջ:

**ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ**

UNITED ARMENIAN COMPATRIOTIC SOCIETY of L.A.
825 E. COLORADO ST., GLENDALE, CA 91205 TEL: 818-240-9996

ԱՅՆԹԱՊ
ԵՕԶԿԱԹ ԵՒ ՇՐՋ.
ԶԷՅԹՈՒՆ
ԷՎԷՐԷԿ-ՖԷՆԷՍԷ
ԿԵՍԱՐԻԱ ԵՒ ՇՐՋ.
ՀԱՄԱՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
ՀԱՃԸՆ
ՄԱՐԱՇ
ՄՈՒՍԱ ԼԵՌ
ՈՒՐՖԱ
ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ
ՊԷՅԼԱՆ
ՏԱՐՕՆ-ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ
ՔԻԼԻՍ

AINTAB
YOZGATH
ZEITUN
EVEREG-FENESSE
GUESARIA
PAN-VASBOURAGAN
HADJIN
MARASH
MOUSSA LER
OURFA
CHORK-MARZBAN
BEYLAN
DARON-DOUROUPERAN
DIKRANAGERT
KILIS

Պրն. Վահան Բահարեան
Ատենապետ Պէյլանի
Հայրենակցական Միութեան,

Յարգարժան Պարոն Ատենապետ և Վարչութիւն,

Հայրենակցական Միութիւններու Միացեալ Մարմնի ժողովը, որ գումարուեցաւ Հինգշաբթի, Սեպտեմբեր 10, 1998 թուականին, միաձայնութեամբ որոշեց սոյն նամակը յղել Ձեզ, առ ի տեղեկութիւն։ Ինչպէս գիտէք, Հինգշաբթի, 10 Օգոստ. 1998 թուականին ՀՄՄՄ-ի ժողովը, ձայներու մեծամասնութեամբ ատենապետ վերընտրեց Գրիգոր Շէնեանը՝ 1998-ին վերապատրաստուած իր Ծրագիր-Կանոնագրի հիման վրայ, որ ներկայիս միակ ի զօրու կանոնագիրն է։ Սոյն նամակին հետ կը ներփակենք նաև մէկական օրինակ՝ հին և նոր կանոնագիրներէն, որպէսզի դուք առիթ ունենաք բաղդատելու և հաստատելու եղած ընտրութեան օրինականութիւնը։

Կ'ուզենք յայտնել նաև, որ Միութեանս ժողովները, ըստ սովորականի, կը գումարուին իւրաքանչիւր ամսուայ երկրորդ Հինգշաբթին։ Ուրախ պիտի ըլլանք, եթէ Պէյլանի Հայրենակցական Միութիւնը նոր ներկայացուցիչով մասնակցի ՀՄՄՄ-ի ժողովներուն։

Յարգանօք և բարեւներով՝
Գրիգոր Շէնեան, ատենապետ
Սարգիս Մաճառեան, ատենադպիր

Սեպտ. 11, 1998

*ՀՄՄՄ-ի նամակը ՊՀՄ-ի վարչության:*



VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., # 101
VAN NUYS, CA 91405
TEL. (818) 997-8845

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 3-24-99

## ՀՄՄՄ-Ի ՀԱՐԳԵԼԻ ՎԱՐՉԱԿԱՆՆԵՐ

Վարչությունը քննարկելով ՀՄՄՄ-ի Սեպտեմբեր 11, 1998 թ. Պէյլանի Հայրենակցական Միության ուղղված նամակը և ՀՄՄՄ-ում իր ներկայացուցիչ ու նրա փոխ-ատենապետ Վահան Բահարյանի տեղեկատվությունը ՀՄՄՄ-ում տեղի ունեցող իրադարձությունների մասին նշում է, որ Պէյլանի Հայրենակցական Միությունը չխնայելով իր ջանքերը ՀՄՄՄ-ի կազմավորման գործում և նրա ստեղծման առաջին օրից (1991 թ.) մինչև այսօր շատ ակտիվ մասնակցություն է ունեցել նրա աշխատանքներին՝ միասնական ուժերով սատարելու հայապահպանման գործունեությանը Սփյուռքում և հատկապես Լոս Անջելեսում ու օգտակար լինելու մեր հայրենիքին:

Վերջին ժամանակաշրջանի ՀՄՄՄ-ի գործունեության հետևանքով համախմբում տեղի ունեցած իրադարձությունները անհանգստություն են պատճառում Պէյլանի Հայրենակցական Միության վարչությանը:

Վարչության համար շատ դժվար էր համակերպվել իրականության հետ, մանավանդ որ նա երկար տարիների աշխատանքային լումա ունի ՀՄՄՄ-ի գործունեության մեջ: Նա հերթական մի քանի ժողովներում մանրամասնորեն քննարկեց հարցը:

Վարչությունը համոզվեց ատենապետի բերած փաստերի ճշտությանը, ինչն էլ պատճառ լինելով ՀՄՄՄ-ի քայքայմանը և նրա հետ համայնքի կազմակերպությունների միասնության քայքայմանը (մի շարք հայրենակցական միությունների ՀՄՄՄ-ի կազմից հեռանալը-մոտ 50%, կազմակերպությունների առանձին-առանձին ապրիլյան հուշատոն կազմակերպելը, ՀՄՄՄ-ի դիվանի անօրինական վերընտրությունները): Նա նշեց նաև, որ ՀՄՄՄ-ը չի որոշում և իրավունք չունի մեր վարչությանը թելադրելու, թե վարչության կողմից ով պիտի մասնակցի ՀՄՄՄ-ի ժողովներին, եթե վարչությունը որոշի իր մասնակցությունը շարունակել նրա աշխատանքներին:

Քննարկման արդյունքում վարչությունը նկատի ունենալով, որ ՀՄՄՄ-ի վերջին ժամանակաշրջանի գործունեությունը չի համապատասխանում Պէյլանի Հայրենակցական Միության ծրագրին ու կանոնագրին, հեռանում է նրա գործունեությանը մասնակցելուց:

Հարգանքներով՝

Ատենապետ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ

Քարտուղար՝ ՄԱՐՏԻՐՈՍ ԷՔՃԻՅԱՆ

*ՊՀՄ-ի վարչության նամակը ՀՄՄՄ-ին:*

VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., #101
VAN NUYS, CA 91405
PHONE: (818) 997-8845
FAX: (818) 785-3734

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ORIENTAL STUDIES
24G MARSHAL BAGHRAMIAN AVE.
YEREVAN 375019, ARMENIA
TEL. 58-33-82
FAX: (374) 2-58-50-75

Թուական 04-11-99

ՀՀ ԳԱԱ Արևելագիտության Ինստիտուտի տնօրեն
Հարգելի Պրոֆ. Նիկոլայ Հովհաննիսյան

Պրոֆ. ԱԼԻՇԱՆ ԲԱՅՐԱՄՅԱՆԻ «Ալեքսանդրեթի Սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը 1936-1939 թթ.» գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ Հինգշաբթի, փետրվար 4, 1999 թ., որը անցավ մեծ հաջողությամբ: Այդ մասին գրվեցին Լոս Անջելեսում հրատարակվող մի շարք հայկական թերթերում: Ես չեմ ուզում մանրամասնություններ գրել այդ մասին, այլ ուղարկում եմ գրքի և շնորհանդեսի մասին թերթերում գրված բոլոր նյութերը, որոնք կհետաքրքրեն Ձեզ և կտեսնեք Ձեր աշխատության որպես ազգային մեծարժեք արժեքներ, որոնցից կօգտվի յուրաքանչյուր ցանկացող, իր լուման բերելով մեր ընթերցողի պատմական հշմարտության իրականության մասին:

Նամակիս ուշացման պատճառը թերթերում տպված նյութերի հավաքումն ու ի մի բերելն էր:

Շատ շնորհակալություն Ձեր ուղարկած բովանդակալից ու իմաստալից հեռագրի համար, որը ոչ միայն ուրախացրեց հեղինակին և իր հարազատներին, այլ բոլոր ներկաներին, որոնք այսօրվա ավելի բարձր գնահատեցին հեղինակին և իր աշխատությունը: Հեռագիրը որպես անակնկալ ներկայացվեց իրեն:

Ձեր ուղարկած 60 օրինակ գրքերը ստացանք: Շատ շնորհակալ ենք: Դժբախտաբար մեր ակնկալիքները չարդարացան շնորհանդեսին ավելի շատ մասնակցողների և գրքերի տարածման մասին: Շատ ցավալի երևույթ է: Կարծես թե Սփյուռքի հայը իր դեմքը կորցնում է: Այս մասին ինչպե՞ս կարող ենք խոսել պատասխանատվության մասին: Համոզված եմ Ամերիկայում նոր սերունդ մայրենի լեզվից զուրկ է և եթե չկանխվի ձուլման վտանգը, արդեն կկորցնենք մի հսկա համայնք (մոտ մեկ միլիոն հայ): Այս տեսակետից մեզ՝ հայերիս համար շատ ավելի լավ էր, եթե կարողանայինք այս համայնքով նորից ամրացնել Միջին Արևելքի (Լիբանան, Սիրիա և այլն) հայկական գաղութները: Աստված տա ու հրաշք կատարվի և մեր ժողովուրդը փրկվի ձուլումից:

Համենայն դեպս լինենք լավատես և ապրենք հույսով, իրականացնելու համար մեր նվիրական իղձերը:

Հարգանքներով՝

Ատենապետ՝ ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ

Նիկոլայ Հովհաննիսյանին ուղարկված նամակի լուսապատճեն:



VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., #101
VAN NUYS, CA 91405
TEL. FAX (818) 997-8845

MR. BERG FENERGI
COLLECTOR OF THE
ARMENIAN OLD POSTCARDS
2285 DE MONTREUIL
MONTREAL, QUEBEC
H3M 1X4, CANADA

ԹՎԱԿԱՆ 6-12-99

Հարգելի Պերճ Ֆեներճի,

Ստացա Պէյլանի մասին Պրն. Սարգիս Պալյանի ուղարկած Ալեքսանդրեթի և շրջակայքի մասին փոքրիկ քարտեզը (տպագրման տարեթիվ չկա վրան), փոստային քարտը ու Պէյլանի նկարները (մեկի վրա տպագրման տարեթիվը չկա), որոնք պատճենահանված ձևով Ձեր կողմից նվիրված են մեր՝ Պէյլանի Հայրենակցական Միությանը:

Անձամբ իմ և վարչության անունից խորին շնորհակալություններս Ձեզ այս առթիվ:

Բնական է, որ նկարները արժեքավոր են և ավելի արժեք պիտի ներկայացնեն իրենցից, եթե Աստծո զորությամբ Պէյլանի մասին գիրքը գրվի ու դրանք այդ գրքի մեջ զետեղվեն:

Ձեր կատարած գործը հայ ժողովրդի համար անգնահատելի գործ է, քանի որ մեր բնօրրանների կորած մասունքները հատ-հատ գտնելով և հավաքելով, մեր ժողովրդի կորած պատմությունն եք վերակենդանացնում:

Այս նամակային ծանոթությունից հետո, Աստված տա, որ մի օր անձամբ ծանոթանանք և միացյալ ուժերով աշխատենք օգտակար լինել մեր ժողովրդին:

Անկեղծ բարևներս Ձեր ընտանիքին և Պրն. Սարգիս Պալյանի ընտանիքին:

Հարգանքներով՝
Ատենապետ՝

Վահան Բահարյան

Պերճ Ֆեներճիին ուղարկված շնորհակալական նամակի լուսապատճեն:

## Սիրելի ՉԱՎԵՆ

Վարչության անդամներս սրտանց շնորհավորում ենք քեզ համալսարանը հաջողությամբ ավարտելու կապակցությամբ, ցանկանում քաջառողջություն և հաջողություններ կյանքում: Այս առիթով շնորհավորում ենք նաև ծնողներիդ, տատիկիդ՝ ԱՂԱՎՆԻԻՆ և բոլոր հարազատներիդ:

Մենք հավատում ենք, որ մի օր էլ այսպիսի գեղեցիկ մի սրահում, քեզ կշնորհավորենք հայկական տիպար ընտանիք կազմելիս, որը բնականորեն կերջանկացնի քեզ քո հարազատներին և բոլոր քեզ բարի կամեցողներին:

Այսօր քո ավարտական ուրախության հանդեսին ներկա են վարչության հետևյալ անդամները իրենց ընտանիքներով.

1. ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ - ատենապետ
2. ԳՐԻԳՈՐ ԴՈՎԼԱԹՅԱՆ - հաշվապահ-գանձապահ
3. ՀՈՎՍԵՓ ԳԱՍՊԱՐՅԱՆ - ընկերային հարցերի պատասխանատու
4. ՀԱԿՈԲ ԽՈՐՇԻԴՅԱՆ - գեղարվեստական մասի պատասխանատու
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - խորհրդական

Հարգելի պատճառով բացակայում են. ՄԱՐՏԻՐՈՍ ԷՋԻՅԱՆ - առաջին քարտուղար, ՄԱՆՈՒԿ ՏՈՆՈՅԱՆ երկրորդ քարտուղար, ՄԱՆՎԵԼ ՄԱՐԱՇՅԱՆ գեղարվեստական մասի պատասխանատու, ՅՈՒՐԻ ՀԵՔԻՄՅԱՆ - Տիկնանց հանձնախմբի ատենապետուհի:

Հավատում ենք, որ դու քո ինքնությունը կպահպանես Հայրենիքից հեռու, այս օտար ափերում, նաև այդ և ցանկացած ուրիշ հարցերում օգտակար լինելով հայ համայնքին:

Հարգանքներով՝ ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍ
Վարչություն 06-13-99

*Չավեն Պետրոսյանին տրված շնորհավորական գրի լուսապատճեն:*



VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., #101
VAN NUYS, CA 91405
TEL. FAX (818) 997-8845

ԹՎԱԿԱՆ 9-02-99

*Հայաստանի*
*Հանրապետության Նախագահ*
*Պրն. Ռոբերտ Քոչարյանին*

*Հարգելի նախագահ,*

*Օգտվելով այս տարվա սեպտեմբերի 22-23-ին կայանալիք համահայկական խորհրդաժողովին մասնակցելու առիթից, մեր վարչության ընդունած որոշման հիման վրա, դիմում ենք Ձեզ հետևյալ հարցով:*

*1946 թ. Հայաստան ներգաղթած Պէյլանի և նրա շրջակայքի հայ բնակչության մեծ մասը հաստատվեցին Մալաթիայում և նրա մասը կազմող ժողովրդական լեզվով «Ախպարաշեն» կոչված թաղամասում:*

*Նրանք 1975 թ. միացյալ ուժերով կառուցեցին Պէյլանի Հուշարձան-կոթողը Էջմիածնի շրջանի չորրորդ Սովխոզի տարածքում:*

*Հանգամանքների բերումով վերոհիշյալ բնակչության մեծ մասը արտագաղթեցին ԱՄՆ:*

*1986 թ. մայիսի 7-ին Լոս Անջելոսում նրանք ստեղծեցին Պէյլանի Հայրենակցական Միությունը:*

*Միության գործունեության ընթացքում, նրա միջոցներով խնամվել և պահպանվել է Հուշարձան-կոթողը և նրա տարածքը:*

*Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող իրադարձությունների հետևանքով վերոհիշյալ հարցում առաջացել են որոշ դժվարություններ:*

*Ելնելով վերոհիշյալ իրականությունից միության վարչությունը դիմում է Ձեզ.*

*1. Հանձնարարել համապատասխան գերատեսչություններին, վերանայել Հուշարձան-կոթողի և նրա տարածքի օրինականության և անձեռնմխելիության հարցերը:*

*2. Երևանի «Ախպարաշեն» թաղամասը վերանվանել Նոր Պէյլան:*

*Միությունը պատրաստ է ցուցաբերելու իր օգնությունը բոլոր հարցերում:*

*Այս կապակցությամբ վարչության նիստի No. 113 որոշումը կցվում է նամակին:*

*Ատենապետ՝* [signature] *Վահան Բահարյան*

*Քարտուղար՝* [signature] *Մարտիրոս Էջիյան*

*Ռոբերտ Քոչարյանին գրված նամակի լուսապատճեն:*

Ժողովատեղի
Ս. Հովհաննես-Կարապետ եկեղեցի
1201 N. Vine St., Hollywood, CA 90038

Տարեթիվ 08-30-99

ՔԱՂՎԱԾՔ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ
(Վարչության նիստ No. 113)
Ներկա էին (վարչության անդամներ)

1. ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ – ատենապետ
2. ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ – փոխ ատենապետ
3. ՄԱՐՏԻՐՈՍ ԷՔՇԻՅԱՆ – առաջին քարտուղար
4. ՄԱՆՈՒԿ ՏՈՆՈՅԱՆ – երկրորդ քարտուղար
5. ԳՐԻԳՈՐ ԴԻՎԼԱԹՅԱՆ – հաշվապահ-գանձապահ
6. ՀԱԿՈԲ ԽՈՐՇԻԴՅԱՆ – գեղարվեստական մասի պատասխանատու
7. ՍՅՈՒԶԻ ՀԵԹՈՒՄՅԱՆ – տիկնանց հանձնախմբի ատենապետուհի
8. ՀՈՎՍԵՓ ԳԱՍՊԱՐՅԱՆ – հասարակական հարաբերությունների պատասխանատու
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ – խորհրդական

Օրակարգ

1. Համահայկական խորհրդաժողովը նախապատրաստող կազմակերպական հանձնաժողովի՝ միության անունով ուղարկած նամակի քննարկումը:

Որոշում

Ատենապետ Վահան Բահարյանը նիստին ներկայացրեց օգոստոս 20, 1999 թվակիր վերոհիշյալ նամակը, որով միությունից մեկ պատվիրակ հրավիրվում է մասնակցելու սեպտեմբեր 22-23-ին Երևանում կայանալիք Հայաստան-սփյուռք հարաբերություններին նվիրված առաջին համահայկական խորհրդաժողովին:

Նիստի մասնակիցները լրջորեն քննարկեցին նամակում շոշափված հարցերի կարևորությունը, կապված Հայաստան-սփյուռք հարաբերությունների հետագա զարգացման հետ: Նրանք միաձայն որոշեցին ատենապետ Վահան Բահարյանին գործուղել Երևան, միության կողմից իր աշխույժ մասնակցությունը բերելու վերոհիշյալ խորհրդաժողովի աշխատանքներին:

Լիազորել Վահան Բահարյանին՝ Հայաստանում իր կեցության շրջանին զբաղվելու նաև 1915 թ. զոհված պեյլանցիների հիշատակը հավերժացնող՝ 1975 թ. կառուցված Պեյլանի հուշարձան-կոթողի հարցով և այլ հարակից հարցերով:

Փոխ ատենապետ [signature] Ա. Պետրոսյան

Քարտուղար [signature] Մ. Էքշիյան

«Քաղվածք արձանագրությունից»-ի լուսապատճեն:



VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., #101
VAN NUYS, CA 91405
TEL. FAX (818) 997-8845

Թվական 10-28-99

Լոս Անջելեսում
ՀՀ Գլխավոր Հյուպատոս
Պրն. Արմեն Մելքոնյանին
50 LA CIENEGA BLVD, #210
BEVERLY HILLS, CA 90211
FAX: (310) 657-7419

Լոս Անջելեսում ՀՀ Գլխավոր Հյուպատոս
Պրն. Արմեն Մելքոնյանին

Սույն թվի հոկտեմբերի 27-ին Երևանում տեղի ունեցած ողբերգությունը խորը անհանգստություն պատճառեց ինչպես ողջ հայ ժողովուրդին, այնպես էլ մեր միության վարչությանը և միության անդամներին:

ՀՀ Վարչապետ՝ Վազգեն Սարգսյանի, ԱԺ Նախագահ՝ Կարեն Դեմիրճյանի և խորհրդարանի մյուս պատգամավորների եղեռնական մահվան առթիվ, Պեյլանի հայրենակցական միության վարչությունն իր խորազգաց ցավակցություններն է հայտնում կառավարությանը և հանգուցյալների հարազատներին:

Մենք վստահ ենք, որ կատարված վայրագ ողբերգությունը չի կարող սասանել Հայաստանի ներքին կայունությունը:

Հարգանքներով

Վարչություն
Ատենապետ՝ [signature] Վահան Բահարյան

Հոկտեմբեր 27-ի առթիվ Գլխավոր հյուպատոսին ուղարկված ցավակցականի լուսապատճեն:

**VAHAN BAHARIAN**
**7310 KESTER AVE., #101**
**VAN NUYS, CA 91405**
**TEL. FAX (818) 997-8845**

**Date: 05-18-2000**

**HONORABLE RONALD S.W. LEW**
**UNITED STATES DISTRICT COURT**
**312 NORTH SPRING STREET**
**LOS ANGELES, CA. 90012**

I, Mr. **Vahan Baharian**, am the chairman of the **BEYLAN COMPATRIOTIC UNION** of Los Angeles, whose president for life is non other than Mrs. Soghanalian, mother of Mr. Sarkis Soghanalian.

This honor was given to Mrs. Soghanalian for the generous donations Mr. Sarkis Soghanalian has given to our organization. Every time we have approached Sarkis for a charitable donation, he has never refused and gladly donated for the cause as long as it was for the good of humanity.

I am shocked and so our 550 member families to hear about Mr. Soghanalian's imprisonment. We wish that a fair trial will be conducted. But we can not comprehend why a man of Mr. Soghanalian's caliber can not got out on bail.

Mr. Soghanalian is an asset to our community, to the human race. His imprisonment is nothing but an unfair torture to his health and a great distress to the whole Armenian community. At his age with his poor health I wonder how long he will last in jail.

We, the 550 families of Beylan Organization request that a fair trial be conducted and meanwhile, Sarkis is let out on Bail.

Sincerely,

Vahan Baharian
Chairman of Beylan Compatriotic Union

*Սարգիս Սողանալյանի համար ուղարկված նամակի լուսապատճենը:*



7310 Kester Ave. Apt. #101
Van Nuys, CA 91405 U.S.A.
Phone: (818) 997-8845

Թուական 14-8-95

Հարգարժան Վարչություն Հայաստանի, Պէյլանի Հայրենակցական Միության:

Սույն գրությամբ տեղեկացնում ենք Ձեզ, որ Հուշարձան Կոմիտէի հողատարածքը որ 1970 թվերին հատկացված էր էմիգրանտների գործկոմի կողմից: Մեզ հայտնի չէ թե այդ փաստաթուղթը ո՞ւմ մոտ է գտնվում: Մեզ Լոս Անճելըսի ավելի քան 5000 Պէյլանցիներս, չատ է ժամանակ, որ էմիգրանտների շրջանի չորրորդ գյուղի Դյուզ Թարհոզի Նախագահը, ապառնացել է վերցնելու Հուշարձան Կոմիտէի շրջանը հողատարածքը, եվ այդ դարձնել գերեզմանոց: Ուստի խնդրում ենք ձեզանից՝ գրել մեզ Ա. – Հայաստանի Պէյլանի Հայրենակցական Միության Վարչության: Ընդհանուր Կազմի, Անուն, Ազգանուն, Հասցե: Նախագահ, Փոխ Նախագահ, Քարտուղար եվ Խորհրդականներ: Բ. – Այդ հողակտորի ընդհանուր չափը, լայնք X երկարություն, քառակուսի մետրերով: Գ. – Եթե խնդրանք չհարգելու դեպքում, նոր փաստաթղթի պատճեն հանել էմիգրանտի գործկոմից: Եվ այս ամենը ուղարկել մեզ, որպեսզի կարողանանք պահանջ ներկայացնել Հայաստանի իշխանություններին:

Առաջինը գալը Հայաստանում գտնվող Պէյլանցիներդ պիտի տեր կանգնեք Հուշարձան Կոմիտէին, իր հողատարածքին գալը պիտի պահանջեք իշխանություններից որ, ոչ մի ապառնալիք չստեղծվի ոչ մեկի կողմից: Պէյլանցիներդ Հայաստանում, ավելի քան 500 ընտանիք եք կազմում: Իրավունքը ունեք վարչության առաջնորդությամբ, պահանջ ներկայացնելու, այդ հողատարածքը Հուշարձան Կոմիտէին պատկանելության համար: Լոս Անջելըսի, Պէյլանի Հայրենակցական Միության Վարչությունը, այդքան էլ իրավունքը չունի Հայաստանի իշխանություններից հողատարածք պահանջելու: Բայց եվ այնպես, հարկ եղած դեպքում, մենք մեր հերթին կխնդրենք Հայաստանի պատկան մարմիններից, որպեսզի Հուշարձանի շրջապատը մնա որպես ժողովրդի գրասենյակ եվ ուխտատեղի: Չմոռնենք նաեվ թե, այդ Հուշարձան Կոմիտէը, օրհնված է, յուսահոգի Վեհափառ Վազգեն Առաջինի կողմից: Անձամբ գալով Հուշարձանի մոտ, իր շրջախումբով, օրհնելով այդ վայրը, անվանեց ուխտատեղի, եվ իր կողմից նվիրեց 1000 ամյա խաչքար մը, որը տեղադրվեց Հուշարձան Կոմիտէի ներքեվի մասում:

Այսքանից հետո, ինչպե՞ս է որ Դյուզ Թարհոզի Նախագահ մը սպառնում է այդ հողակտորը վերածել անհատական գերեզմանոցի, որը կառուցված է ի հիշատակ մեր ընդհանուր նահատակների՝ 1909–1915 թ.թ. զոհվածներին:

Արդյո՞ք Դյուզ Թարհոզի Նախագահը չի կարդացել Հուշարձան Կոմիտէի վրայի փորագրությունը: Այս թուղթը գալը, Սիրելի Բարեկամներ, կարող եք հաստատել, որինակին կամ թարգմանել: Այս գործին մեզ մոտ են գտնվում մեր վարչության, ծրագրի անդամներից ՄԱՐՏԻՐՈՍ ԳՅՈՒԶԵԼՅԱՆԸ եվ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ, որոնք անհրաժեշտության դեպքում, կարող են միջնորդել վերահիշյալ հարցի շուրջ: Այս 2 վարչականները ընտրված են վարչության կողմից: Եվ իրավունք ունեն, մեզ հետ միասին միջամտելու թույլ վերահիշյալ հարցերուն:

Հարգանքներով, Պէյլանի Հայրենակցական Միության Վարչություն:

*«Հայաստանի Պէյլանի Հայրենակցական միության վարչության» ուղարկված նամակի լուսապատճենը:*

Խոր վշտով ցավակցում ենք Ասատուրի
մահվան առթիվ
Բեյլանի հայրենակցական Միություն VA
Լոս Անջելես Վարչություն
Երևան 32 Վանդյան փ. N. 13
Գյուզելյան Քրիստինե

KHOR VSHDOV TZAVAGTZOUM YENK
ASADOURI MAHVAN ARTIV
BEYLANI HAYRENAGTZAGAN MIUTUNE
VARCHUTUN LOS ANGELOS
YEREVAN 32 VANDYAN. AVE. №15
GUZELYAN CHRISTINEH

733 (DERET) $25
325.6

Գրիգորի ուղարկած «հեռագրի» լուսապատճեն:



VAHAN BAHARIAN
7310 KESTER AVE., #101
VAN NUYS, CA 91405
TEL. FAX (818) 997-8845

Date: 06-29-98

## Վարչության անդամների պատասխանատվությունը

Հաճախ է պատահում, որ Վարչության անդամները վարչության նիստերից բացակայում են առանց հայտնելու կամ էլ վարչության նիստի օրը, նիստի գալու ժամանակ որևէ մեկ անդամին են զանգահարում, թե այդ օրը նիստի չեն կարող գալ: Մի քանի անգամ խոսվել է այդ մասին, բայց ապարդյուն:

Նկատի ունենալ, որ Վարչությունում աշխատելը կամավոր է, բայց վարչության օրենքներին ենթարկվելը պարտադիր է: Սա բոլորի համար հստակ պետք է լինի:

Վարչության նիստերին պետք է ներկա լինել ժամանակին: Վերջին նիստին Հունիսի 22-ին վարչության 11 անդամներից ներկա էին միայն 6-ը. Սուքի Հեքիմյանը նախօրոք հայտնել էր, Արա Պետրոսյանը հիվանդ էր ու նորից նախօրոք հայտնել էր, Մանուկ Տոնոյանը նիստի գալու ժամանակ զանգահարել էր Հովսեփ Գասպարյանին, որ նիստին չի կարող գալ, իսկ Սեդրակ Հարությունյանը և Սարգիս Գյոզալյանը բացակա էին անհայտ պատճառներով, հետևաբար նիստը չկայացավ:

Մյուս կողմից Վարչության նիստերը վերածվում են շուկայի, որը վայել չէ մեր միության Վարչության:

Ելնելով վերոհիշյալներից, Վարչության բոլոր անդամները պետք է.

1. Երկու (2) օր առաջ հայտնեն Վարչության ատենապետին կամ վարչության նիստին անդամների ներկայությունը համադրողին, որպեսզի, եթե անդամների զգալի մասը չեն կարող մասնակցել այդ օրվա նիստին, այն տեղափոխել մի ուրիշ հարմար օրվա, հարգելով եկողներին, որոնք իրենց գործերը թողած գալիս ու իզուր սպասելով, անարդյունք վերադառնում են տուն:

2. Վարչության նիստերը ունենան կարգ ու կանոն: Ըստ կանոնադրության, Վարչության բոլոր նիստերը ղեկավարում է ատենապետը և, որպեսզի նիստերը արդյունավետ լինեն, պետք է թույլտվություն վերցնել խոսելուց առաջ և խոսողին չխանգարել՝ մտածելով, որ եթե հիմա չասի, ապա կմոռանա: Բոլորն էլ պետք է վարժվեն նշումներ անելու իրենց մոտ, եթե նոր հարցեր ծագեն և թույլտվություն վերցնելով խոսել, առանց աղմուկի ու գոռգոռոցների:

Այսպիսով մենք հարգած կլինենք իրար, վարչության նիստերը արդյունավետ կլինեն, ու շուտ էլ կգնանք մեր տները:

Խնդրում եմ բոլոր անդամներին, որպեսզի այս կարգ ու կանոնը պահպանվի:

Ատենապետ՝ Վահան Բահարյան

«Վարչության անդամների պատասխանատվությունը»ի լուսապատճեն:

02-10-99

ՊԵՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ Վարչության
ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԵՐԻ ՕՐԱԿԱՐԳԵՐԻ
ՆԱԽԱԳԻԾ

Վարչությունը իր նախորդ նիստերում հարց բարձրացրեց պարբերաբար լսելու վարչության անդամների հաշվետվությունը վարչության մեջ իրենց կատարած գործունեության մասին և առաջինը լսվեց ու քննարկվեց ատենապետի գործունեությունը։

Հիմնվելով այս սկզբունքի վրա վարչությունը առաջարկում եմ մի շարք օրակարգեր, որոնց վարչության նիստերում լուսաբանումը քննարկման կարիքն ունեն։

Վարչության անդամների գործունեության քննարկումը ընդհատվեց Պրոֆ. Ալիչան Բայրամյանի «Ալեքսանդրետի Սանջակի հարցը և միջազգային դիվանագիտությունը 1936-1939 թթ.» գրքի շնորհանդեսի կազմակերպման պատճառով։ Այժմ կարող ենք շարունակել այդ գործընթացը։

Նախագծի օրակարգերն են.

1. Լսել վարչության գեղարվեստական մասի պատասխանատուի գործունեության հաշվետվությունը։ Պատասխանատու - Մանվել Մարաշյան։ 02-18-99
2. Քննարկել ՀՄՄՄ-ի նամակը և անհրաժեշտ որոշում կայացնել (միության մասնակցության հարցը ՀՄՄՄ-ի գործունեությանը)։ 02-25-99
3. Լսել վարչության հաշվապահ-գանձապահի գործունեության հաշվետվությունը։ Պատասխանատու - Գրիգոր Դովլաթյան։ 03-04-99
4. Լսել վարչության տիկնանց հանձնախմբի գործունեության հաշվետվությունը։ Պատասխանատու - Սեդա Հեքիմյան։ 03-11-99
5. Լսել վարչության բոլոր խորհրդականների գործունեության հաշվետվությունը։ Պատասխանատու - խորհրդականներ։ 03-18-99
6. Քննարկել վարչության բոլոր անդամների փոխհարաբերությունները աշխատանքային մթնոլորտում կամ պայմաններում։ 03-25-99
7. Քննարկել պեյլանցի ուսանողներին կրթաթոշակ հատկացնելու հարցը։ 04-01-99
8. Վերանայել 1989 թ. հաստատված Ծրագիր-կանոնագիրը, նկատի ունենալով վարչության 10-ամյա գործունեությունը և համապատասխանեցնել այն ժամանակի պահանջներին։ 04-08-99
9. [illegible] 04-15-99 Վարչության [illegible]

Ատենապետ՝
Վահան Բահարյան

10. [illegible]
04-22-99

ՊՀՄ-ի հաջորդ ՎՆ-երի օրակարգերի նախագծի լուսապատճեն։



ՍԻՐԵԼԻ ՄԱՆՈՒԿ ԵՎ ԱԻՏԱ,

Վարչության և Տիկնանց Հանձնախմբի անդամներս շնորհավորում ենք ձեզ նոր տուն գնելու ու բնակարանամուտի առթիվ, մաղթում ենք ձեզ քաջառողջություն, հաջողություններ, ընտանեկան երջանկություն և ձեր բոլոր իղձերի իրականացում։

Մենք վստահ ենք, որ ձեր երեխաները մեծանալով պիտի շարունակեն հայապահպանման գործունեությունը։

Այսօր այս ուրախության սեղանին ներկա են Վարչության և Տիկնանց Հանձնախմբի հետևյալ անդամները իրենց ընտանիքներով.

1. ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ - Ատենապետ
2. ԱՐԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ ----Փոխատենապետ
3. ՄԱՐՏԻՐՈՍ ԽԵՇԻՅԱՆ-Առաջին քարտուղար
4. ՄԱՆՈՒԿ ՏՈՆՈՅԱՆ -- Երկրորդ քարտուղար
5. ՄԱՆՎԵԼ ՄԱՐԱՇՅԱՆ - Գեղարվեստ. մասի պատասխանատու
6. ՍԵԴՈՒՋԻ ՀԵՔԻՄՅԱՆ - Տիկն. Հանձնախմբի ատենապետուհի
7. ՀՈՎՍԵՓ ԳԱՍՊԱՐՅԱՆ-Ընկերային հարցերի պատասխանատ.
8. ՀԱԿՈԲ ԽՈՐՇԻԴՅԱՆ-Գեղարվեստ. մասի պատասխանատու
9. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Խորհրդական
10. ՄԱՐԳԱՐԻՏ ՔԱՐԱՅԱՆ - Տիկնանց Հանձնախմբի անդամ
11. ԼՈՒՍԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ --- Տիկնանց Հանձնախմբի անդամ
12. ՄԱՐԻ ԹԵՐՋԱՆՅԱՆ ---- Տիկնանց Հանձնախմբի անդամ

Հարգելի պատճառով բացակա են.

Վարչության անդամ ԳՐԻԳՈՐ ԴՈՎԼԱԹՅԱՆ-հաշվապահ-գանձապահ, Տիկնանց Հանձնախմբից՝ ՍԵԴԱ, ՊԱՅԾԱՌ և ԼՈՒԻԶԱ ՔՎՐՅԱՆՆԵՐ, ԱՆԱՀԻՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ, ԵՂԻՍԱԲԵԹ ՄԱՐՈՆՅԱՆ-անդամներ։

Համոզված և վստահ ենք, որ այս գրությունը ձեր ընտանիքում կմնա միության մասին որպես մի պատմական փաստաթուղթ։

Հարգանքներով՝
Վարչություն

ԼՈՍ ԱՆՋԵԼՈՍ
04-11-99

Վարչության շնորհավորանքը Մ. Տոնոյանի տան բացմանը։

3/3-118

Ստացված է 02-01-00-ին

ԳԼԵՆԴԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԻՆ
Նույն Վարչության Անդամ
ՄԱՆՎԵԼ ՍԱՐԱՇՅԱՆԻՑ

Հարգելի Վարչականներ,

Ես բողոքում եմ ձեր անարդար աշխատանքային ընթացքի դեմ. Մի քանի անգամ, մեր ժողովներում, ատենապետի վերընտրության մասին հարց եմ ներկայացրել ձեզ, մինչև այսօր պատասխան չեմ ստացել:

Այս նամակով մեր վարչության անդամներին առաջարկում եմ հետևել ընդունված օրինաչափություններին: Հիշեցնում եմ, որ. Վահան Բահարյանը մեր վարչության (միության) ատենապետն է, ավելի քան 10 տարի: Նա վաղուց իր տեղը պետք է զիջեր մեկ այլ արժանի գործընկերոջ: Խոսքը իր լավ կամ վատ աշխատանքի մասին չէ, այլ իր ատենապետության երկարաժամկետ ղեկավարության մասին է, որը հայրենակցական միությունների կյանքում անօրինի է:

Ես առաջարկում եմ կատարել մեր վարչության կազմի անհապաղ վերընտրություններ, այդ թվում նաև՝ ներկա ատենապետի:

Հարցը պետք է քննարկել անհապաղ

Սատարողությամբ

Նոյեմբեր 11, 1999

*Մանվելի ներկայացրած գրության լուսապատճեն:*

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄԻՆ

UNITED ARMENIAN COMPATRIOTIC SOCIETY of L.A.

825 E. COLORADO ST., GLENDALE, CA 91205 TEL: 818-240-9996

08-09-01

[illegible]

*ՀՄՄՄ-ի ՊՀՄ-ի վարչության գրած նամակի լուսապատճեն:*

BEYLAN COMPATRIOTIC UNION

Թուական 11-05-2001

[illegible]

ՊՀՄ-ի վարչության ՀՄՄՄ-ին գրած նամակի լուսապատճեն:



[illegible]

էջ 1/3

Մարտիրոս Էջլեանի գրության լուսապատճեն (3 էջի վրա):

[illegible]

1986-ին [illegible]

[illegible]

[illegible]

[illegible] 1989-ի [illegible]

[illegible]

[illegible]

էջ 2 / 3



[illegible]

Միության 10-ամյակի առթիվ [illegible]

[illegible]

[illegible]

[illegible] 15-ամյա գործունեության [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

16 ապրիլ, 2001

[illegible] 20. 2000 թվականի № 135 [illegible]

[illegible]

էջ 3 / 3

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Երկու խոսք ........ 3
Նախաբան ........ 5
Ներածություն ........ 9
**Ա. ՊՀՄ-ի հիմնադրումը** ........ 17
Միության անունը և ծրագիր-կանոնագիրը ........ 21
Առաջին ճաշկերույթ-պարահանդեսը ........ 29
Համառոտ տեղեկություններ Բեյլանի մասին ........ 31
**Բ. Վարչության գործունեությունը 1987 թ.** ........ 34
Հոգեհանգստյան-հոգեճաշ Մեծ Եղեռնի ........ 34
Վարչության վերընտրություն ........ 37
Բեյլանցիների համար ........ 42
**Գ. Վարչության գործունեությունը 1988 թ.** ........ 49
**Դ. Վարչության գործունեությունը 1989 թ.** ........ 50
Ծրագիր-կանոնագրի փոփոխությունները ........ 51
**Ե. Վարչության գործունեությունը 1990 թ.** ........ 57
100 000 դոլարի չեքի թնջուկը ........ 60
Երազա՞նք թե՞ իրականություն ........ 65
ՀՄՄՄ-ի ստեղծումը ........ 69
**Զ. Վարչության գործունեությունը 1991 թ.** ........ 71
Հայաստանն անկախ ........ 80
ՀՄՄՄ-ի գործունեությունը ........ 81
**Է. Վարչության գործունեությունը 1992 թ.** ........ 87
ՀՄՄՄ-ի գործունեությունը ........ 98
ՀՄՄՄ_ի նախաձեռնությամբ Հայրենիքին ........ 99
Շնորհակալանք՝ Սարգիս Սողանալեանէն ........ 101
**Ը. Վարչության գործունեությունը 1993 թ.** ........ 102
Նամականի ........ 105
Հուշատոն նվիրված Մեծ Եղեռնին ........ 109
ՊՀՄ-ի ազգասիրական արարքը ........ 113
Միթե վերջին պոետն եմ ես... պոետիկ ........ 119
Արցախ ........ 122
Սարգիս Սողանալյան ........ 123
Մեծ մարդը և մեծ բարերարը ........ 123
Սարգիս Սողանալյան Ազգային բարերարը ........ 125
Սարգիս Սողանալյանին նվիրված երեկո ........ 129
ՀՄՄՄ-ի գործունեությունը ........ 135





Վահան Շամլեան ՀՄՄՄ-ի նախագահ ........ 138
**Թ. Վարչության գործունեությունը 1994 թ.** ........ 144
ԺԱ-Պէյլանի Հայրենակցական Միութիւն ........ 144
Գնա՞նք, թե՞ մնանք ........ 149
Վա՜յ մեզ, էս ո՞ւր ենք ընկել ........ 152
Լուսանկարչական ցուցահանդես ........ 157
ՊՀՄ-ի ՃՊ-ն ........ 166
ՀՄՄՄ-ի գործունեությունը ........ 169
Աննախընթաց ձեռնարկ ........ 173
Օգնենք Արցախին՝ նույնիսկ... առանց լիազորագրի... 183
**Ժ. Վարչության գործունեությունը 1995 թ.** ........ 185
ՀՄՄՄ-ի գործունեությունը ........ 189
Նահատակների հիշատակն անմար է: ........ 191
Հայրենասիրությունը մենաշնորհ չէ: ........ 200
ՀՄՄՄ-ն միասնության սիմվոլ ........ 204
**ԺԱ. Վարչության գործունեությունը 1996 թ.** ........ 206
ՊՀՄ-ի ՃՊ-ն ........ 209
ՊՀՄ-ի ՃՊ-ն ........ 218
ՀՄՄՄ-ի գործունեությունը ........ 218
ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին ........ 226
Ազգավնաս արարքներ ........ 227
**ԺԲ. Վարչության գործունեությունը 1997 թ.** ........ 233
Մեծար. երեկո Տեր Վարդան Թադևոսյանին ........ 233
Ինչո՞ւ արատավորել պատիվը ........ 237
ՀՄՄՄ-ի գործունեությունը ........ 244
Հարցազրույց Կամո Տեր-Պետրոսյանի հետ ........ 248
Նոր ՀՄ-ներ Հայաստանի մեջ ........ 255
**ԺԳ. Վարչության գործունեությունը 1998 թ.** ........ 256
Գայիա Նովենցին նվիրված մեծարանքի երեկո ........ 259
Հուշ-երեկո Մեծ եղեռնի 83-րդ տարելիցի առթիվ .. 267
ՊՀՄ-ն զորավիգ Արարատ տարեցներու տան ........ 270
Ի նպաստ Արարատ տան ........ 272
Հարգելի վարչականներ ........ 274
ՀՄՄՄ-ի գործունեությունը ........ 280
ՀՄՄՄ-ի հանդիպումը Արմեն Մելքոնյանի հետ ........ 280
**ԺԴ. Վարչության գործունեությունը 1999 թ.** ........ 287
Ալեքսանդրետի Սանջաքի հարցը և միջազգային .. 287
Բնօրրանի կարոտով ........ 290
ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին ........ 293

Մայրը ազգի գոյության խորհրդանիշ ........ 295
ԺԵ. **Վարչության գործունեությունը 2000 թ.** ........ 300
Փառք հայ մոր ........ 301
Մայրը ընտանիքի սյունն է ........ 302
Պէյլանի ՀՄ-ի դաշտահանդեսը ........ 303
Մարտիրոս Էքշիյանի խոսքը ........ 306
ԺԶ. **Ներվարչական խնդիրներ** ........ 308
Մանվել Մարաշյանի խառնակիչ ........ 342
Պէյլանի հայրենակցական միության 15-ամյակը ........ 356
Վարչականին անվայել արարք ........ 358
Վահան Բահարյան ........ 364
Հաշվետվություն նոյեմբեր 18-ի ԾՊ-ի առթիվ ........ 372
**Վերջաբան** ........ 378
Վարդուհի Ցոդույանի նամակը ........ 387
Մարտիրոս Էքշիյանի պատասխանը ........ 388
Արդարամիտ անդրադարձ ........ 396
Օգտագործված գրականություն ........ 399
Օգտագործված հապավումներ ........ 400
Հավելված ........ 401



ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆ

# ՊԷՅԼԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1986-2001ԹԹ.)

Խմբագիր՝ ԺՈՂԵՖ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Շարվածքը, ձեւավորումը, էջադրումը՝
ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐՅԱՆԻ

Սրբագրիչ՝ ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ

«Հայրենակցական միությունների խորհուրդ» Հ/Կ-ի
«Բնօրրան» հանդեսի խմբագրություն
Երեւան, Հայաստան

Տպագրվել է «Զանգակ-97» հրատարակչության տպագրատանը